

ISSN 0321-0340

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎՈՆԵՐԻ

ՏՕ-ՏԱՐՆԻ

N 1 (103)
2004

ԲՈՒՆԻՔԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎԱԿԱՆԵՐԻ

Գիտահանրամատչելի հանգես

Вестник архивов
Армении

Научно-популярный журнал

Bulletin of Armenian
Archives

Scientific practical journal

1 (103)
2004

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

YEREVAN

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆՓԱՄ

Գլխավոր խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան

Խմբագրական խորհուրդ
Արմեն Բաղալյան (պատասխանատու քարտուղար)
Ալբերտ Կիրիմյան, Ավագ Հարությունյան, Էմմա Հովսեփյան,
Սոնյա Միրզոյան, Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան,
Հարություն Ֆելեքյան

© Բանբեր Հայաստանի արխիվներ, 2004թ.

ԵՆԱՆՍԱՎՈՐ ՏԱՐԵՒԻԿ - ՏՕՄԿԱԿ

**ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱՐԽԻՎԻ 80-ԱՄՅԱ ՀՈՒՅԵԼՅԱՆԸ**

Քաղաքակրթության պատմությունը սերունդներին է ներկայանում պատմության նյութական եւ գրավոր հուշարձանների միջոցով:

Նյութական հուշարձանների թվին են պատկանում անցյալի աշխարհիկ, հոգեւոր եւ պայտական կառույցները, գերեզմանաքարերը, կամուրջները, արձանները... Քաղաքակրթ աշխարհին վաղուց հիացրել են մեր ժողովրդի նյութական հուշարձանները՝ Անին, Զվարթնոցը, Գառնին ու Գեղարզը, Սանահինի, Տաթևի ու Էջմիածնի համալիրները, մեր եզակի ու անզուգական խաչքարերը եւ բազում այլ կոթողներ, որոնք մեր ժողովրդի՝ բարուն, գեղեցիկին ու կատարյալին ձգտող ստեղծագործ ոգու եւ արարչագործության վկաներն են:

Ինչ վերաբերում է ժողովրդի գրավոր հուշարձաններին, ապա դրանք պետական, տնտեսական, մշակութային, հասարակական ու քաղաքական մարմինների գործունեություն արդյունքում ստեղծված փաստաթղթերն են, հազվագյուտ գրքերը, կինոյի, լուսանկարչության ու ձայնագրության բնագավառներում ստեղծված արժեքները:

Վաղ միջնադարից Հայ գրիչների անձնուրաց աշխատասիրությունը ստեղծվել է մեր ձեռագիր մատենագրության ստվարածավալ ամբողջությունը, որ կենտրոնացված է Երեւանի, Վենետիկի ու Երուսաղեմի մատենադարաններում, եւ որոնցով կարող է հպարտանալ ցանկացած քաղաքակրթ ժողովուրդ:

Մեր ժողովրդի անցած պատմական ուղու նկարագրությունն ամբողջական չէր լինի, եթե վաղ միջնադարից մինչեւ նոր դարերն ընկած ժամանակաշրջանի գրավոր հուշարձանների կենտրոնացումն ու պահպանումը չզուգակցեինք նոր եւ նորագույն ժամանակաշրջանի գրավոր հուշարձանների հայտնաբերման ու հավաքման աշխատանքներին:

Այդ նպատակով էլ 80 տարի առաջ Հայաստանում ստեղծվեց կենտրոնական արխիվը, որը կոչված էր պետական մակարդակով իրականացնելու այս խնդիրը:

Արխիվային նյութը ժողովրդի ներքին եւ արտաքին կյանքի մանրանկարն է, ժողովրդի հիշողությունը, որ փոխանցվում է սերնդեսերունդ: Չպետք է մոռանալ, որ ժողովրդի քաղաքակրթության աստիճանը որոշվում է նաեւ նրանով, թե ինչպես է նա պահում իր անցյալի փաստաթղթերը, իր հիշողությունը:

80 տարի առաջ, հիրավի շատ ծանր պայմաններում, նկուղային Հարկի մեկերկու սենյակում, Հայ մտավորականների մի խումբ, մեծ երախտավոր Խաչիկ Սամվելյանի ղեկավարությամբ մեր ժողովրդի պատմության սկզբնաղբյուրների կենտրոնացման, հաշվառման ու պահպանման ազգանվեր գործի հիմքը դրեց:

Պատմության մեծ գետը կաթիլ-կաթիլ կուտակվում է, ծավալվում ու հզորանում Հարյուրավոր, երբեմն հազարավոր աղբյուրներից ու վտակներից: Երբեմն աննշան թվացող մեկ կաթիլի կորուստն անգամ կարող է խաթարել պատմության ամբողջական ու ճշմարտացի պատկերը:

Հայ արխիվագետների 80-ամյա տքնաջան աշխատանքի շնորհիվ այժմ Հայաստանի ազգային արխիվը ժողովրդի հոգեւոր կյանքում իր զբաղեցրած դիրքով, վավերագրային հարուստ հավաքածուով, նորակառույց շենքերով, գիտահետազոտական եւ գիտահրատարակչական աշխատանքներով, բարձրորակ կադրերով բնավ ետ չի մնում ժամանակակից առաջավոր երկրներից:

Ավելին, ես հավատում եմ, որ Հայաստանի ազգային արխիվը՝ հետզհետե ավելի հզորանալով, կդառնա գիտություն ու մշակույթի համահայկական մի օջախ:

Խորին շնորհակալություն Հայաստանի ազգային արխիվի բոլոր աշխատակիցներին կատարած ազգանվեր աշխատանքի համար եւ հետագա Հաջողություններ:

ՈՂՁՈՒՆՈՒՄ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ 80-ԱՄՅԱԿԸ

Մարդկային հասարակութեան առաջացումն եւ զարգացումը, նրա անցած պատմական վերընթաց ուղու լուսաբանումը անփոխարինելի հզոր գործոն է արդի ժամանակաշրջանի երեւութիւնները հասկանալու եւ ապագան կանխատեսելու համար: Մարդկութեան պատմութեան հնագույն ժամանակաշրջանի մասին, եթե պատկերացում ենք կազմում նյութական մշակույթի ու վիճակագրութեան հիմնարկներին, հետագա շրջանի մասին՝ ձեռագիր մատյաններին, տպագիր գրքերի միջոցով, ապա նրա ավելի զարգացած նոր եւ նորագույն պատմափուլի մեր իմացութեան հիմնական աղբյուրները արխիվներն են:

Հայաստանի Հանրապետութեան ազգային արխիվում են ամբարված մեր ժողովրդի դարերի պատմութեան գանձերը՝ վավերագրերը: Հայ արխիվագետները դժվարին պայմաններում ջանք չեն խնայում եւ մեծ նվիրումով ժողովուրդ, կորստյան վտանգից փրկում են արխիվային փաստաթղթերը եւ ապահովում դրանց մասնագիտական մշակումն ու պահպանումը:

Այդ ամենը խիստ պատասխանատու եւ պատվավոր, մեծ գնահատութեան արժանի համազգային նշանակութեան գործ է:

Սրտանց շնորհավորում եմ Հայաստանի ազգային արխիվի 80-ամյա հոբելյանը եւ բոլոր արխիվագետներին ցանկանում հաջողութիւններ եւ բեղմնավոր գործունեութիւն:

ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ
Հումանիտար բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

Վ.Բարխուդարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՏՆՕՐԵՆ ԱՎԻՐԱԲՅԱՆԻՆ

ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրինութիւնը, գիտական խորհուրդը եւ ողջ անձնակազմը ողջունում են Հայաստանի ազգային արխիվի բոլոր աշխատակիցներին՝ Հայաստանում արխիվային գործի կազմակերպման եւ Հայաստանի ազգային արխիվի հիմնադրման 80-ամյակի առթիվ:

Այս տասնամյակների ընթացքում Հայաստանի արխիվագետները մեծ գործ են կատարել արխիվային վավերագրերի հավաքման, պահպանման եւ ուսումնասիրութեան բնագավառում: Արխիվային գործը դրվել է գիտական հիմքերի վրա եւ լավագույն ձեւով ծառայել պատմագիտութեան զարգացմանը, նրա աղբյուրագիտական հիմքերի ընդլայնմանը եւ խորացմանը: Անհնարին է պատկերացնել Հայոց պատմութեան նոր եւ նորագույն ժամանակաշրջանի որեւիցէ լուրջ աշխատութիւն, առանց արխիվային համապատասխան փաստաթղթերի օգտագործման:

Տասնամյակների ընթացքում կատարված շնորհակալ գործը, արխիվային ֆոնդերի հարստացումը, գիտական շրջանառութեան մեջ դրված հարյուրավոր ու հազարավոր արխիվային փաստաթղթերի եւ ժողովածուների հրատարակումը ապացույց են այն մեծ ու շնորհակալ աշխատանքի, որ կատարվել ու կատարվում է պատմական օժանդակ գիտութիւնների զարգացման ասպարեզում:

Նորանոր Հաջողություններ մաղթելով, կրկին շնորհավորում ենք Հայաստանի բոլոր արխիվագետներին՝ նշանակալից տարեգարձի առթիվ:

ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն

Ա.Մեկրոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՏՆՕՐԵՆ ԱՎԻՐԱԲՅԱՆԻՆ

Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոսական ողջ անձնակազմը ի խորոց սրտի ջերմորեն ողջունում է Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվի բոլոր աշխատակիցներին՝ Պետական արխիվի հիմնադրման 80-ամյա հոբելյանի առթիվ:

Հին ճշմարտություն է, որ առանց արխիվային նյութերի անհնարին է ստեղծել գիտական որեւէ լուրջ ուսումնասիրություն: Հայտնի է նաեւ, որ պատմաբանների բազում սերունդներ իրենց հետազոտական աշխատանքներն իրականացրել են գլխավորապես Հայաստանի ազգային արխիվի տարբեր մասնաճյուղերում: Մեր պատմաբաններն ականատես են եղել, թե անցյալի պատմության վավերագրերը ինչպիսի հատուկ խնամքով ու հոգատարությամբ են պահպանվում, ինչպիսի հատուկ ուշադրության կենտրոնում են ու ինչպիսի գուրգուրող ձեռքերում են: Անկախ մեր կյանքի դժվարություններին ու անակնկալներին, արխիվները միշտ էլ մնացել են իրենց պատվավոր տեղում, միշտ էլ անմնացորդ ծառայել են բոլոր նրանց, ովքեր ձեռնամուխ են հայրենի պատմության մշակման վեհ գործին եւ, եթե այդ աշխատանքները պսակվել են նշանակալից արդյունքներով, ապա դրանցում իրենց մեծագույն դերն ունեն արխիվների այն համեստ ու նվիրված աշխատակիցները, որոնք չնչին վարձատրությամբ, սակայն նվիրումով իրենց անձն ի սպաս են դրել այդ աշխատանքներին:

Պատիվ ու երախտագիտություն Հայաստանի ազգային արխիվի բոլոր աշխատակիցներին՝ իրենց սքանչելի, անձնվեր գործունեության համար:

Ի դիմաց Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ղեկան

Հ. Ավետիսյան

Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ

Բ. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՏՆՕՐԵՆ ԱՎԻՐԱԲՅԱՆԻՆ

Մեծարգո Ամատուհնի Սասունիկի.

Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորատը, պատմության եւ աշխարհագրության ֆակուլտետի ղեկանատը եւ հայոց պատմության ամբիոնը ջերմորեն շնորհավորում են Ձեզ՝ Հայաստանում արխիվային գործի հիմնադրման 80-ամյա հոբելյանի առթիվ:

Անդերազնահատելի է Ազգային արխիվի դերն ու նշանակությունը Հանրապետության կյանքում: Երկրի փաստական անձնագիրը լինելուց զատ՝ այն նաեւ կրթամշակութային առաջնահերթ նշանակության կենտրոն է, ուր ամբարված են եւ մեծագույն հոգատարությամբ պահպանվում են Հայաստան աշխարհի պատմության

տարբեր ժամանակաշրջաններին ու զանազան բնագավառներին վերաբերվող մեծարժեք պաշտոնական փաստաթղթեր, արխիվային գործեր ու փաստավավերագրական այլազան նյութեր: Անհնարին է պատկերացնել հայ պատմագիտութեան առաջընթացն առանց ազգային արխիվի, հաստատութուն, որտեղ իրենց գիտա-ստեղծագործական ուղին են սկսել հանրապետութեան այսօր արդեն հանրաճանաչ շատ պատմաբաններ, հասարակական-քաղաքական գործիչներ ու այլ մասնագետներ: Առիթից օգտվելով՝ ցանկանում ենք խորին շնորհակալություն հայտնել այն ջերմ ու հոգատար վերաբերմունքի համար, որ Դուք ցուցաբերում եք Ազգային արխիվում պրպտումներ կատարող մեր համալսարանի գիտաշխատողների, ասպիրանտների, ուսանողների ու հայցողների նկատմամբ:

Ձեր հրատարակած «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտագործնական հանգեսը, որն արդեն 45-ամյա պատմութուն ունի, հուսալի ուղեցույց է յուրաքանչյուր գիտաշխատողի համար:

Հոբելյանի առթիվ, թանկագին Ամատունի Սասունիկի, անձամբ Ձեզ եւ Ձեր ղեկավարած Ազգային արխիվի կոլեկտիվին մաղթում ենք քաջաուղջութուն, աշխատանքային եւ ստեղծագործական նորանոր հաջողութուններ:

Ռեկտոր

Ա. Ղուկասյան

Պատմութեան եւ աշխարհագրութեան ֆակուլտետի ղեկան

Պ. Սիմոնյան

Հայոց պատմութեան ամբիոնի վարիչ

Մ. Կարապետյան

ՇՆՈՐ ՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ

Հայաստանի արխիվների բոլոր աշխատողներին հանրապետութունում արխիվային գործի կազմակերպման 80-ամյակի առթիվ:

Ակամայից հիշում եմ կենտրոնական արխիվների աշխատանքային պայմանները, երբ 1950-ական թվականների սկզբին ոտք դրեցի այդ հիմնարկութուն՝ թեկնածուական ատենախոսութեանս վրա աշխատելու համար: Արխիվները տեղավորված էին Կառավարական տան նկուղային հարկում, սուղ պայմաններում, առանց հատուկ ընթացասրահի: Այլևհետ, եթե չասենք շատ խիստ էին արխիվային գործերից օգտվելու հնարավորութուններն ու իրավունքները: Շատ ֆոնդեր փակի տակ էին: Իսկ ուսումնասիրութուն կատարողի նշումները ենթակա էին վերահսկողութեան ու վերադարձման: Շատ բանի մասին է խոսում նաև այն փաստը, որ արխիվների ղեկավարումը տնօրինում էր ներքին գործերի գերատեսչութունը:

Բոլորովին այլ է վիճակն այսօր, երբ ստեղծված են բոլոր պայմանները ինչպես արխիվային գործերի պահպանութեան, այնպես էլ դրանք գիտական շրջանառութեան մեջ դնելու, բարձրորակ գիտական ուսումնասիրութուններ կատարելու համար:

Անձամբ եւս՝ շատ բարձր եմ գնահատում արխիվների, նրանց աշխատողների տեղն ու դերը մասնավորապես իմ գիտական հաջողութուններում, որի համար ինձ պարտավորված եմ համարում շնորհակալութուններս հայտնել բոլորին, ովքեր ոչինչ չեն խնայել օգնելու ինձ իմ գրքերի ու հոդվածների պատրաստման գործում: Արխիվի ընկերներին ես դիտել եւ դիտում եմ նաև որպես իմ գործընկերները համատեղ գիտական հետազոտութուններ պատրաստելու կամ նրանց գիտական որակավորումը բարձրացնելու գործում: Արխիվային աշխատողների հետ միասին ես ուրախանում եմ արխիվային գործում ունեցած հաջողութունների, ինչպես նաև մտահոգվում թերութունների համար (ասենք՝ որոշ ֆոնդերի պահպանութեան անմխիթար վիճակը):

Ութսուն տարին մեծ ժամանակաշրջան չէ պատմութեան առումով, սակայն այդ ընթացքում շատ բան է արված արխիվային գործի կազմակերպման ու զարգացման ուղղութեամբ: Մաղթում եմ նորանոր հաջողութուններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ 80 ՏԱՐԻՆ

Հայաստանում արխիվային գործը, որպես պետական գործունեություն ճյուղ, սկզբնավորվել է 1923 թվականին եւ անցել ութ տասնամյակների փառավոր ուղի:

Յարական Ռուսաստանում եւ ապա նրա ազգային ծայրամասերում, խորհրդային իշխանություն հաստատումից հետո, օրակարգում գրվեց պետական մարմինների, գերատեսչությունների կողմից ստեղծված արխիվային փաստաթղթերի ու նյութերի պետական պահպանության կենտրոնացման խնդիրը, որի իրականացման հիմնաքարը դարձավ ՌՍՖՍՀ Ժողովրդի հիմնադրումից 1918թ. ապրիլի 1-ի դեկրետը:

Հետեւելով խորհրդային Ռուսաստանի օրինակին, 1920թ. դեկտեմբերի 15-ին Պետական կենտրոնական արխիվներ ստեղծվեցին Ադրբեջանի, իսկ 1921թ. հուլիսի 1-ին՝ Վրաստանի խորհրդային Հանրապետություններում:

Հայաստանի խորհրդային Հանրապետությունում պետական կենտրոնական արխիվի հիմնադրման համար դեռեւս բարենպաստ պայմաններ չկային: Դարեր շարունակ գրվված լինելով պետականությունից, Հայ ժողովուրդը գրվվել էր նաեւ իր նյութական եւ հոգեւոր գանձերը, պատմաճակովային հուշարձաններն ամբողջականորեն պահպանելու հնարավորությունից: Իսկ առաջին աշխարհամարտի եւ ապա քաղաքացիական կռիվների հետեւանքով առաջացած սովը, հիվանդությունները, տնտեսական քայքայվածությունը եւ ֆինանսական ծանր կացությունը, բնականաբար, լուրջ դժվարություններ էին ստեղծել նաեւ մշակութային օջախների հիմնադրման ճանապարհին:

Խորհրդային Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի 1920թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով պետականացվեցին Հանրապետության գրադարաններն ու թանգարանները, Ս.Ա.Թոռ Մայր էջմիածնի մատենադարանը: Հենց վերջինիս հիմքի վրա էլ հիմնվեց պատմաճակովային գիտական ինստիտուտը, որի հիմնական խնդիրներից մեկն աշխարհի տարբեր մասերում սփռված Հայ գրչագիր վավերագրերի ի մի հավաքումն էր: Հայտնի է, որ ՀՍՍՀ լուսժողովատին առընթեր ստեղծված հեղափոխության թանգարանն ունեցել է արխիվային բաժին: Հիշյալ դեկրետով, պետական հաստատություններին պարտավորեցվեց մեկամսյա ժամկետում թանգարանի արխիվային բաժնին հանձնել այն բոլոր գործերն ու գրադրությունները, որոնք ավարտվել էին մինչեւ երկրի խորհրդայնացումը (1920թ. դեկտեմբերի 2), իսկ «Խորհրդային Հայաստան» թերթի 1922թ. հունվարի 7-ի համարում գետեղված կառավարական շրջաբերականով, խստիվ արգելվում էր արխիվային նյութերի ապօրինի ոչնչացումը: Այնուհետեւ, հրապարակում եղած համապատասխան ակտերի հիման վրա, մշակվեց մեկ այլ հիմնարար չափորոշիչ ակտի՝ «Արխիվային բաժնի կառավարման ներքին կարգավորման մասին» հրահանգի նախագիծը, որտեղ տրվեց արխիվային նյութերի կենտրոնացման, պահպանման եւ ոչնչացման սկզբունքների մանրամասն շարադրանքը: Այսպես, քայլ առ քայլ, հոգ էր նախապատրաստվում Հանրապետության պետական կենտրոնական արխիվի ստեղծման համար:

Ձեռնարկված միջոցառումների հանգուցալուծումը 1923թ. սեպտեմբերի 26-ի Հայկենտգործկոմի նախագահության որոշումն էր կենտգործկոմին առընթեր պետական կենտրոնական արխիվ հիմնելու մասին: Իսկ 1924թ. փետրվարին հաստատվեց Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության պետական կենտրոնական արխիվի կանոնադրությունը՝ արխիվային գործի վերաբերյալ առաջին օրենսդրական ակտը: 1924թ. հաստատված կանոնադրությամբ երեւանի պետական թանգարանի արխիվային բաժնի եւ մի քանի այլ արխիվային ֆոնդերի հիման վրա,

ստեղծվեց պետական կենտրոնական արխիվը: ՀՍԽՀ Կենտգործկոմի քարտուղարութեան 1924թ. մարտի 17-ի հրամանով, նորաստեղծ արխիվի վարիչ նշանակվեց պրոֆ. Խաչիկ Սամվելյանը, որի ղեկավարութեամբ, հանրապետութեան առաջին արխիվագետները ձևավորվեցին եղանակներով, սենյակներում եւ այլուր սփռված անմշակ արխիվային նյութերի հայտնաբերման եւ դրանց պետական կենտրոնական արխիվում կենտրոնացման հաշվառման եւ մշակման աշխատանքներին:

Հայկենտգործկոմի 1924թ. ապրիլի 22-ի որոշմամբ, պետականացված շենքերից մեկը (Երեւանի Ալավերդյան փողոցի վրա, թիվ 21) հանձնվեց պետական կենտրոնական արխիվին: Շենքի մի մասի հանձնումը տեղի ունեցավ Հուլիսին, որի վերանորոգումից եւ աշխատողների հասարքացուցակի հաստատումից հետո, մի քանի ֆոնդերի հիման վրա, 1924թ. հոկտեմբերի 1-ին պաշտոնապես սկսվեց ՀՍԽՀ պետական կենտրոնական արխիվի գործունեությունը:

Այսպիսով, մեր ժողովրդի մշակութային կյանքի ոլորտներից մեկի՝ արխիվների հավաքագրման, պահպանման, հաշվառման եւ օգտագործման գործը դրվեց պետական հիմքերի վրա:

1923-1924թթ., ձևավորվեց նաեւ ՀԿ(բ)Կ Կենտկոմի արխիվը, որի հիման վրա հետագայում, ստեղծվեց կուսակցական արխիվը: ՀԿԿ Կենտկոմի քարտուղարութեան 1923թ. մայիսի 14-ի եւ 1924թ. հունիսի 6-ի որոշումներով, արխիվի վարման աշխատանքը դրվում է մի պատասխանատու աշխատողի, ապա արդեն արխիվավարի վրա:

Եվ այժմ, ութսունամյա բարձունքից հետագարձ հայացք նետելով հանրապետությունում արխիվային գործի վերընթաց ուղուն, հպարտութեան ու երախտի զգացումով պետք է արձանագրել, որ առաջին հայ արխիվագետները, ովքեր առաջին իսկ օրվանից հավատքով ու նվիրումով լծվեցին նորաստեղծ հաստատությունում առջեւ ծառայած առանցքային հիմնարկների լուծմանը, կարճ ժամանակամիջոցում, ակնհայտ ձեռքբերումների հասան հայրենյաց երկրում եւ աշխարհում մեկ սփռված հայ գրչագիր վավերագրերի հայտնաբերման ու հավաքագրման նպատակով կազմակերպական միջոցառումներ իրականացնելու եւ գործնական լուրջ քայլեր կատարելու առումով: Համակողմանի ջանադիր աշխատանքի առաջին համեստ արդյունքներն ավելի քան ոգեւորիչ էին: 1925թ. հունիսի 19-ին՝ ՀՍԽՀ ՊԿԱ վարիչ Խ.Սամվելյան, զեկուցեց Հայկենտգործկոմի նախագահ Ա. Կարինյանին, որ արխիվում կենտրոնացված են «Նախահեղափոխական ժամանակաշրջանի 21 եւ խորհրդային 27 հիմնարկությունների արխիվային ֆոնդեր, եւ որ «հաշվառման են վերցված Երեւանի եւս 7 հիմնարկությունների փաստաթղթային նյութերը»: Դրա հետ մեկտեղ, իրազեկվում էր նաեւ առաջիկայում Բաքվից, Աստրախանից, Մոսկվայից, Լենինգրադից եւ այլ հայաշատ վայրերից Հայաստանի ու հայ ժողովրդի պատմությունն առնչվող արխիվային արժեքավոր փաստաթղթեր եւ նյութեր ստանալու սպասումների մասին: Նման սպասումների հիմքում տարբեր վայրերից ստացված հուսադրող նամակներն էին՝ պատասխան մինչ այդ Հայաստանի կառավարության եւ պետական կենտրոնական արխիվի անունից ուղարկված նամակների:

Ուշագրավ է 1927թ. նոյեմբերի 5-ի թվակիր գրությունը, որում ՀՍԽՀ ՊԿԱ վարիչ Խ.Սամվելյանը՝ ՌՍՖՍՀ կենտրոնական արխիվի առջեւ, առաջին անգամ, հարց բարձրացրեց Լենինգրադում գտնվող Պետրոգրադի հայկական եկեղեցական խորհրդի եւ ԱբաՄելիք-Լազարեւի արժեքավոր ֆոնդերը Հայաստանի պետարխիվին հանձնելու մասին: Առանձնապես սուր էր դրվել հայ հասարակական գործիչ, պատմաբան Կարապետ Եղյանի հարուստ արխիվը ստանալու հարցը: Փակագծերի մեջ նշեք, որ Կարապետ Եղյանը ցարական Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարարի՝ Ի.Դելյանովի, որ ազգութեամբ նույնպես հայ էր, մերձավորներից էր, նույն նախարարության պաշտոնյա եւ միաժամանակ էջմիածնի կաթողիկոսության քաղաքական խորհրդատու: Հայ հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող եւ առաջնակարգ նշանակություն ունեցող բազմաթիվ արխիվային նյութեր, սկսած 19-րդ դարի 80-ական թվականներից, Թիֆլիսից, էջմիածնից եւ այլ վայրերից, ուղարկվել

էին Դելյանովին եւ Եղյանին: Դրանք կուտակվել էին վերջիններս մոտ եւ դարձել Կ.Եղյանի անձնական արխիվի հիմնական մասը:

ՀՍԽՀ պետական կենտրոնական արխիվի պարտականությունների մեջ էին մտնում նաեւ Հանրապետության արխիվային գործի տնօրինությունն ու ընդհանուր ղեկավարումը, ինչպես նաեւ ոլորտի հիմնահարցերի վերաբերյալ գիտամեթոդական ձեռնարկների ու հրահանգների, փաստաթղթերի հավաքածուների ու ժողովածուների պատրաստումն ու հրատարակումը:

Պետական կենտրոնական արխիվի վարիչ Խ.Սամվելյանը, արխիվի գործունեության 1930թ. տարեկան հաշվետվության մեջ, հրատապ որոշ այլ խնդիրների հետ միասին բոլոր առաջնակարգ հիմնարկներում ու ձեռնարկություններում արխիվային աշխատողների հաստիքներ ստողծելու պահանջ դրեց, որպիսիք այն ժամանակ ունեին միայն հողօդկոմատը եւ Երեւանի ու Լենինականի քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեները, իսկ մյուս գործող պետհիմնարկներում՝ արխիվային աշխատողների պաշտոնները չկային:

1931թ. հոկտեմբերի 1-ին ՀՍԽՀ պետական կենտրոնական արխիվի վարիչի պաշտոն է ստանձնում Լեւոն Յաղուբյանը:

1929-1931թթ. ՀՍԽՀ ՊԿԱ-ն հիմնականում ղեկավարվում էր նախկին ԽՍՀՄ կենտրոնական արխիվային վարչության, իսկ մի կարծ ժամանակաշրջան՝ Անդրֆեդերացիայի կենտրոնական արխիվների խորհրդի կողմից: Եվ միայն Հայկենտգործկոմի 1931թ. հոկտեմբերի 31-ի թիվ 23 որոշմամբ ստեղծվում է Հայաստանի կենտրոնական արխիվային վարչությունը՝ որպես արխիվային գործի կառավարման պետության կողմից լիազորված պետական մարմին: 1930-ական թվականների առաջին կեսին, որոշ չափով, ընդլայնվեց նաեւ Հանրապետության արխիվային ցանցը: Կենտրոնական արխիվային վարչության նոր կանոնադրության համաձայն՝ ստեղծվելու էին երկու՝ ՀՍԽՀ պատմական եւ Հոկտեմբերյան հեղափոխության պետական կենտրոնական արխիվներ: Քաղաքաշտրկներում կազմակերպվեցին արխիվային բյուրոներ, իսկ առաջնակարգ հիմնարկներում՝ արխիվային բաժիններ, որոնք կարելու էր ու նշանակություն ունեցան ՀՍԽՀ-ում արխիվային գործի հետագա ծավալման ու զարգացման համար:

ՀՍԽՀ կենտրոնական արխիվային վարչության կանոնադրության հաստատման կապակցությամբ, ՀՍԽՀ պետական կենտրոնական արխիվի վարիչի 1932թ. հուլիսի 1-ի հրամանով, ՀՍԽՀ պետական կենտրոնական արխիվը վերանվանվեց ՀՍԽՀ կենտրոնական արխիվային վարչության:

Հարկ է նշել, որ Հանրապետությունում արխիվային գործի առաջին տասը տարում (1923-1933թթ.), պետական կենտրոնական արխիվի գործունեությունը չի սահմանափակվել միայն արխիվային, սակ է թե արժեքավոր փաստաթղթերի համալրման ու կենտրոնացված պահպանության իրականացման հետ կապված աշխատանքներով: Բանն այն է, որ այդ փաստաթղթերն ու նյութերն արխիվ էին բերվում գրեթե ամբողջությամբ չմշակված, խառնիխառն վիճակում եւ ենթակա էին շուտափուլ կարգավորման: Այդ ժամանակաշրջանի տասնյակ փաստաթղթերում կարելի է գտնել բազմաթիվ փաստեր նման իրավիճակի մասին, ինչի շտկման, կարգավորման ուղղությամբ մինչեւ 1930-ականների վերջը՝ շատ քիչ աշխատանք էր արված:

Հանրապետության կենտրոնական արխիվային վարչության 1933թ. փետրվարի 3-ի նիստում, քննարկվեց հավաքված արխիվային նյութերի գիտատեխնիկական մշակման եւ հրատարակման հարցը:

Նույն տարվա փետրվարի 15-ին, կենտրոնական արխիվային վարչության եւ պետական կենտրոնական արխիվի վարիչ Լ.Յաղուբյանը այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ ազատվեց զբաղեցրած պաշտոնից եւ նրա փոխարեն նշանակվեց Սուրեն Մարկոսյանը, իսկ 1935թ. օգոստոսի 1-ից վերջինիս պաշտոնը զբաղեցրեց Կարապետ Ստեփանյանը:

1930-ական թվականների ընթացքում, երկրում կատարվող սոցիալ-տնտեսական տեղաշարժերին համընթաց, մի շարք էական բարեփոխումներ կատարվեցին նաեւ

արխիվային ոլորտում, որոնք կոչված էին նպաստելու Հանրապետության արխիվային հիմնարկների գործունեության աշխուժացմանն ու կատարելագործմանը:

1935թ. սեպտեմբերի 22-ին, ՀՍՍՀ պետական կենտրոնական արխիվը վերակազմավորվեց եւ ստեղծվեցին Հոկտեմբերյան հեղափոխության եւ Պատմական արխիվները: Կոմունիստական կուսակցության փաստաթղթերի պահպանության հետագա բարելավման համար, ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն, 1936թ. ապրիլի 1-ին, որոշում է ստեղծել կենտրոնական կուսակցական արխիվ:

1938թ. օգոստոսին, ՀՍՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ, կենտրոնական արխիվային վարչությունն իրեն ենթակա հիմնարկներով, անցավ ներքին գործերի ժողկոմատի իրավասությանը եւ նույն թվականի մեկ այլ հրամանագրով վերակառուցվեց ՆԳԺԿ արխիվային բաժնի: Վերջինիս վրա դրվեց Հանրապետությունում գործող պետական կենտրոնական ու շրջանային, ինչպես նաեւ դերատեսչական (հիմնարկ-ձեռնարկությունների) արխիվների հսկողությունն ու նրանց աշխատանքի կազմակերպական-մեթոդական ղեկավարումը: Ըստ վիճակագրական առկա տվյալների, այդ ժամանակ պետարխիվներ ունեին Հայաստանի 38 վարչական շրջաններից 26-ը (որոշ աղբյուրների համաձայն՝ 33-ը):

1938թ. սեպտեմբերից սկսած՝ ՀՍՍՀ պետական կենտրոնական արխիվները, մեծ պատասխանատվությամբ, ձեռնամուխ եղան ճշգրտելու պետպահպանության կենտրոնացված արխիվային ֆոնդերի փաստաթղթերի ծավալը եւ դրանց ընդգրկման տարեթվերը: Կատարված աշխատանքների արդյունքների համաձայն, այդ ժամանակահատվածում արխիվներում կենտրոնացված էր մոտ 350 արխիվային ֆոնդ՝ ընդհանուր 190 000 պահպանման միավորով:

Հիշյալ տարիներին, համակարգի լուրջ մտահոգության առարկա էր արխիվային շենքերի պակասը: Բանն այն է, որ գործող արխիվների զգալի մասն ապահովված չէր հարմարավետ շենքերով կամ ներկայացվող նվազագույն պահանջները բավարարող շենքային տարածքներով, ինչը հնարավորություն չէր ընձեռում կենտրոնացնելու պահպանման ենթակա բոլոր փաստաթղթերը: Նույնիսկ պետական կենտրոնական արխիվների փաստաթղթային նյութերը, արխիվային հատուկ շենք չլինելու պատճառով, պահվում էին իրարից հեռու գտնվող 4 տարբեր, մոլթ, խոնավ նկուղներում:

ՀՍՍՀ Ժողկոմխորհը, 1939թ. օգոստոսի 23-ին լսեց Հանրապետության ժողկոմատներում, կենտրոնական հիմնարկներում ու շրջաններում արխիվային գործի մասին հարցը եւ արձանագրեց փաստաթղթային նյութերի պահպանման ծայրահեղ անբավարար վիճակը: Բոլոր հիմնարկների ղեկավարներին եւ շրջագործկոմիտեի նախագահներին առաջարկվեց արխիվներն ապահովել հարմարավետ սենյակներով, համապատասխան կահավորմամբ, հաստիքային պահանջվող միավորներով եւ մեկ ամսվա ընթացքում գիտատեխնիկական մշակման ենթակել արխիվներում կուտակված չկարգավորված փաստաթղթերը:

Ի դեպ, նույն որոշման մեջ, առաջ քաշվեց նաեւ պետական կենտրոնական արխիվների համար հատուկ շենքի կառուցման անհրաժեշտությունը:

Մինչպատերազմական տարիներին, ոլորտի մեթոդական աշխատանքների կազմակերպման համար, հիմնական ձեռնարկ հանդիսացավ «Ժողկոմատների, հիմնարկությունների, ձեռնարկությունների եւ կազմակերպությունների արխիվային աշխատանքի վերաբերյալ հրահանգը» (1940թ.): Հաջորդ՝ 1941թ. մարտին, միութենական կառավարության կողմից հաստատվեց «ԽՍՀՄ պետական արխիվային ֆոնդի մասին» կանոնադրությունը, որով սպառիչ ձեւակերպումներ տրվեցին հիմնարկների գործավարությունում արխիվային փաստաթղթերի ու նյութերի հետ տարվող աշխատանքների կազմակերպման, դրանց գիտագործնական փորձագիտական արժեքավորման, պետհիմնարկների արխիվային փաստաթղթերի նկատմամբ արխիվային մարմինների ունեցած իրավունքների, որպես պատմագիտական աղբյուրների՝ այդ նյութերի օգտագործման ձեւերի ու մեթոդների մասին: Համաձայն ԽՍՀՄ պետական կենտրոնական արխիվների ցանցի՝ ՀՍՍՀ-ն կարող էր ունենալ երկու ՊԿԱ՝ պետական կենտրոնական եւ կինոֆոտոֆոնո փաստաթղթերի արխիվներ:

Հանրապետությունում արխիվային գործի վերաբերյալ մինչպատերազմական տարիներին ընդունված որոշումները, մեթոդական ձեռնարկները, փաստաթղթերի պահպանության ապահովման ուղղությունները ձեռնարկված միջոցառումներն, ինչպես նաև Հաստիքային միավորների եւ բյուջեի ավելացումն, արժեքավոր փաստաթղթերի հայտնաբերման ու հրատարակման առաջին փորձերը, հուսադրող երաշխիքներ էին ՀԽՍՀ արխիվային գործի մեջ որոշակի բեկում առաջացնելու խնդրում, եթե չսկսվեր Հայրենական մեծ պատերազմը:

1941թ. մարտի 29-ին, ԽՍՀՄ Ժողովուրդների կողմից հաստատված «ԽՍՀՄ պետական կենտրոնական արխիվների ցանցի» մասին որոշման համաձայն, ՀԽՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության եւ Պատմական արխիվները միավորվեցին ու վերստեղծվեց ՀԽՍՀ պետական կենտրոնական արխիվը:

Մեծ Հայրենականը նոր խնդիրներ եւ պահանջներ ներկայացրեց երկրին: Առաջին իսկ օրերին, Հանրապետությունից գործող բանակ մեկնեցին նաև շատ արխիվագետներ (Հարություն Կարապետյան, Գոհար Նահապետյան, Մուշեղ Գրիգորյան, Մարտին Մխիթարյան եւ այլք): Իսկ թիկունքում մնացածների առջև խնդիր ծառայավ արխիվային փաստաթղթերն օգտագործել գերմանական ֆաշիզմի դեմ մղվող քարոզչական նպատակների համար:

Նշենք, որ այդ շրջանի հիմնական խնդիրներից մեկն արխիվային փաստաթղթերի անվնաս ու անկորուստ պահպանության ապահովումն էր, ինչպես նաև ընձեռված Հնարավորությունների սահմաններում այդ նյութերի համակողմանի օգտագործման աշխատանքների կազմակերպումը: Հատկապես կարեւորություն էր տրվում ռազմական ու ժողովրդատնտեսական նշանակություն փաստաթղթերի վերհանման գործին:

Նորահայտ փաստաթղթերի զգալի մասը մերկացնում էր 1915թ. հայկական Մեծ եղեռնի կազմակերպիչներին, բացահայտում գերմանական իմպերիալիստական շրջանների հանցավոր մեղսակցությունն այդ հարցում: Հայտնաբերված այդպիսի նյութերի հիման վրա հրատարակվեցին ժամանակահատված աշխատություններ, այդ թվում՝ «Գերմանական իմպերիալիզմի գալթողական պլաններն Անդրկովկասում եւ նրանց խորտակումը 1918թ.» եւ նման այլ ուսումնասիրություններ: Ակնհայտ էր, որ անգամ պատերազմական ծանր պայմաններում, երկրի արխիվային գործը դուրս չէր մնում կառավարական մարմինների ուղադրությունից, ինչի մասին վկայող բազմաթիվ փաստերից մեկ համար կարեւորվում է մասնավորապես Հայաստանի Ժողովուրդների 1943թ. հոկտեմբերի 8-ի որոշմամբ ՀԽՍՀ կինոֆոտոֆոնո փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվի հիմնադրումը: Որոշման մեջ նշվում էր, որ նոր արխիվը կազմակերպվելու է Երեւան քաղաքում՝ հինգ հաստիքային միավորով:

Շուրջ երկամյա գործունեությունն ծավալելուց հետո, ՀԽՍՀ ԿԾՖՓ ՊԿԱ-ն Հայաստանի Ժողովուրդների կարգադրությամբ, դասվեց Հանրապետության գիտահետազոտական Հաստատությունների շարքը, որով էլ ավելի մեծ հնարավորություններ ստեղծվեցին արխիվի գործունեության շրջանակներն լայնօրեն ընդլայնելու համար:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, ինչպես ողջ երկրի, այնպես էլ ՀԽՍՀ արխիվային հիմնարկությունների գործունեությունը սկսեց աշխուժանալ: Վերստին բարձրացվեց պետարխիվների հատուկ շենքի կառուցման հարցը: Ընդհատ է, 1946-ին կազմվեց շենքի նախագիծը, սակայն ֆինանսական միջոցների սղություն պատճառով, շինարարությունը չձեռնարկվեց: Իսկ ոլորտի շենքային պայմանները խիստ անբավարար էին, որի հետեւանքով էլ պետական արխիվների համալրում, այդ շրջանում, գրեթե չէր կատարվում: 1945թ. տարեկան հաշվետվությունից երեւում է, որ պետական կենտրոնական արխիվում առ 1-ը հունվարի 1946թ., հաշվվում էր ընդամենը 475 ֆոնդ՝ 235.700 պահպանման միավորով: Այդ ցուցանիշները հետագա 10 տարիների ընթացքում որոշակիորեն աճեցին՝ ֆոնդերի թվաքանակն ավելացավ 279-ով, պահպանման միավորները՝ 23.505-ով: Իսկ 1957թ. վերջին՝ ֆոնդային մատյանում արդեն գրանցված էր 765 ֆոնդ՝ 269.840 միավորով: Մինչդեռ կինոֆոտոֆոնո փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվում 1944-

1957թ. ընթացքում Հավաքագրվել էին 30.351 պոզիտիվ-նեգատիվ միավորներ, որոնցից 21.808-ը՝ արդեն կարգավորված էին: Միայն 1958թ. ընթացքում համալրվել էր 8920 նեգատիվ-պոզիտիվ պահպանման միավոր ֆոտոփաստաթուղթ, որոնցից նույն տարում լրիվ մշակման էին ենթարկվել 4962-ը:

1951թ. օգոստոսի 4-ին՝ ՀԽՍՀ ՆԳՆ արխիվային բաժնի պետ Կ.Ստեփանյանի երկարատեւ Հիվանդութեան պատճառով, բաժնի պետի պաշտոնակատար նշանակվեց Մ.Նիկիֆորովան, իսկ 1952թ. մայիսի 29-ին, արխիվային բաժնի պետ նշանակվեց Վարդգես Կարթմյանը:

1958թ. հունվարի 29-ին, ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը հանրապետութեան արխիվային գործի հետագա բարելավման նպատակով, որոշեց ՀԽՍՀ ՆԳՆ արխիվային բաժինը վերանվանել նախարարութեան արխիվային վարչութիւն, իսկ պետական կենտրոնական արխիվը վերակազմակերպել, վերջինիս հիման վրա ստեղծելով երկու՝ ՀԽՍՀ պատմական (հետագայում պատմութեան) ու Հոկտեմբերյան հեղափոխութեան եւ սոցիալիստական շինարարութեան պետական կենտրոնական արխիվներ: Նույն թվականի փետրվարի 21-ին, ՆԳ նախարարի հրամանով, Աբրահամ Մկրտչյանը՝ ՊԿԱ-ի վերակազմակերպման կապակցութեամբ, ազատվեց արխիվի պետի պարտականութիւններէ եւ ՀԽՍՀ պատմական պետական կենտրոնական արխիվի պետ նշանակվեց Գրիգոր Հարութիւնյանը, իսկ 15 օր անց՝ ՆԳ նախարարի՝ մարտի 6-ի հրամանով, Հոկտեմբերյան հեղափոխութեան եւ սոցիալիստական շինարարութեան ՊԿԱ-ի պետ նշանակվեց Միքայել Բաբաջանյանը:

Հայաստանի կառավարութիւնը՝ 1959թ. փետրվարի 10-ին ընդունեց «Հայկական ԽՍՀ գերատեսչական արխիվների աշխատանքը բարելավելու մասին» որոշումը: Նրանում արձանագրվեց, որ մի շարք նախարարութիւններ ու գերատեսչութիւններ անհրաժեշտ ուղղորդութիւն չեն դարձնում իրենց արխիվների փաստաթղթերի կարգավորմանը, պատշաճ պահպանութեան կազմակերպմանը: ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը պարտավորեցրեց հանրապետութեան բոլոր նախարարութիւններին, գերատեսչութիւններին, քաղաքացիական ղեկավարներին՝ մշակել ու իրականացնել ուղորտում տեղ գտած թերութիւններն ու բացերը շտկելու միջոցառումներ: Եվ գերատեսչական արխիվների նկատմամբ հսկողութիւնն ու օժանդակութիւնն էլ ավելի ուժեղացնելու նպատակով, ՆԳՆ արխիվային վարչութեան կառուցվածքում ստեղծվեց գերատեսչական եւ տեխնիկական արխիվների բաժին:

ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը, ԽՍՀՄ եւ միութենական մյուս հանրապետութիւնների օրինակով, 1962թ. հուլիսի 22-ին որոշեց Ներքին գործերի նախարարութեան արխիվային վարչութիւնը վերակազմել ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր արխիվային վարչութեան: Այս վերակառուցումը, ինչպէս փորձը ցույց տվեց, անչափ կարեւոր էր եւ արմատական նշանակութիւն ունեցավ երկրի արխիվային գործի հետագա բարելավման ու աննախագէտ զարգացման համար:

1963թ. ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ, ՀԽՍՀ արխիվային վարչութեան պետ նշանակվեց Աշոտ Հարութիւնյանը:

Կառավարութեան հաջորդ, ոչ պակաս կարեւոր, ակտը, որ ընդունվեց 1963թ. մայիսի 25-ին, արխիվային վարչութեան նոր կանոնադրութեան հաստատումն էր: Քննարկվող շրջանի հիշարժան միջոցառումներից է այդ օրերին արխիվային վարչութեան կողմից կառավարութեանը ներկայացրաց գեկուցագիրը, որտեղ շարադրված էր հանրապետութեան արխիվային գործի առկա վիճակը՝ ուղորտի առջեւ ծառայած լուրջ խնդիրներով ու մտահոգութիւններով: Այդ գեկուցագրի հիման վրա է, ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը, 1963թ. հունիսի 11-ին հրապարակեց «Հանրապետութեան արխիվային գործի վիճակը եւ նրա բարելավման միջոցառումների մասին» կարեւոր որոշումը: Վերջինիս արձանագրային մասում նշված էր հանրապետութեան արխիվային գործի անբավարար վիճակը, պետական արխիվներն արժեքավոր փաստաթղթերով համալրելու, դրանց պահպանումն ապահովելու, պատմագիտական սկզբնաղբյուրները տնտեսութեան, գիտութեան ու

մշակույթի զարգացման, երկրի բարգավաճման շահերին ծառայեցնելու աշխատանքների ոչ գոհացուցիչ լինելը:

Ի դեպ, կառավարությունն իր 1963թ. հունիսի 11-ին ընդունած որոշման կատարման ընթացքի մասին հարցին անդրադարձավ 1970թ. հուլիսի 23-ին: Նշվեց, որ անցած շուրջ յոթ տարիներին, հանրապետության պետարխիվները համալրվել են հայոց պատմության նոր եւ նորագույն ժամանակաշրջանների արժեքավոր փաստաթղթերով, բարելավվել են արխիվային ֆոնդերի հաշվառումը, կենտրոնացված փաստաթղթերի գիտատեխնիկական մշակումը, գիտատեղեկատվական համակարգի ստեղծումն ու կատարելագործումը, ինչպես նաեւ արխիվային փաստաթղթերի օգտագործման եւ հրատարակչական աշխատանքների կազմակերպումը: Բացի այդ, կառավարության որոշմամբ, վերացվեցին Լեւինականի, Կիրովականի, Ղափանի եւ Էջմիածնի քաղաքային պետական արխիվները եւ դրանց փաստաթղթային նյութերի բազայի վրա, այդ քաղաքներում ստեղծվեցին ՀԽՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության եւ սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվի չորս մասնաճյուղեր: Հետագայում այդ թիվը կրկնապատկվեց. մասնաճյուղեր ստեղծվեցին Հրազդանում, Իջևանում, Կամոյում եւ Արարատում: Այնուհետ՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1973թ. հունվարի 24-ի որոշմամբ, ստեղծվեց հայ պարբերական մամուլի պետական կենտրոնական արխիվը (ՀՊՄ ՊԿԱ), որը խորհրդային Միության արխիվային շինարարության պատմության մեջ բացառիկ երեւույթներից էր: Այդ տարիների կարեւոր իրողություններից է նաեւ կինոֆոտոֆոնո արխիվի չորս հարկանի շենքի շահագործումը: Այն ապահովված էր այդ տեսակի փաստաթղթերի հետ աշխատանքների իրականացման համար առաջին անհրաժեշտության ժամանակակից սարքավորումներով ու նյութերով:

Ոլորտում կատարված ակնհայտ տեղաշարժերը հրամայաբար առաջ քաշեցին հանրապետության արխիվային վարչության ու ՊԿԱ-ների կառուցվածքային կատարելագործման պահանջը: Ուստի ժամանակին վերանայվեցին ու ճշգրտվեցին արխիվային հիմնարկների բաժինների, ծառայությունների, լաբորատորիաների, արհեստանոցների գործունեության հստակ կազմակերպման հարցերը:

Ինչպես միշտ, հանրապետության արխիվային գործի զարգացման այդ շրջափուլում՝ 70-ական թվականներին եւ դրանց հաջորդող տարիներին եւս, առավել մեծ ուշադրություն է հատկացվել փաստաթղթային նյութերով արխիվների համալրման թիվ մեկ խնդրին: Եվ հանուն ճշմարտության պետք է նշել, որ հանրապետության արխիվագետներին հաջողվել է իմի հավաքել զգալի քանակությամբ փաստաթղթային արժեքներ, որոնք լույս են սփռում մեր ժողովրդի պատմության տարբեր ժամանակահատվածների բազմաթիվ ու բազմապիսի հարցերի վրա:

Պետական կենտրոնական պատմական արխիվն առավելապես համալրվում էր խորհրդային երկրի հայաշատ վայրերում գտնվող մեր ժողովրդի պատմության նոր շրջանի, իսկ ՀՀՄԾՊԿԱ-ն՝ նորագույն շրջանին վերաբերող փաստաթղթերով, ԿՖՖՓ եւ ՀՊՄ ԿՊԱ-ները՝ համապատասխանաբար կինոֆոտովավերագրերով եւ թերթերի ու ամսագրերի համալիրներով, տարբեր խմբագրությունների արխիվներով:

Հանրապետության Գլխարխիվը, հաշվի առնելով համակարգի արխիվային հիմնարկների արդարացի պահանջները, օժանդակել է Ռուսաստանից, Վրաստանից, Մոլդովայից, Ուկրաինայից եւ այլ հանրապետություններից ստանալու տասնյակ արխիվային ֆոնդեր ու հազարավոր արխիվային միավորներ: Բացի այդ, 1960-70-ական թվականների ընթացքում, ԽՍՀՄ երկու տասնյակից ավելի արխիվներից ստացվել են փաստաթղթերի միկրոպատճեններ, ի հաշիվ որոնց մեր ունեցած արխիվային ֆոնդերը զգալիորեն համալրվել ու ամբողջացվել են:

Նշված ժամանակաշրջանում եւ դրանից հետո, այդ ընդհանուր ձեռքբերումների ֆոնի վրա, աշխուժացավ նաեւ սփյուռքահայ գաղթօջախներից բազմապիսի արխիվային փաստաթղթերի եւ (կամ) դրանց պատճենների ստացման գործը:

Անցած տասնամյակներում, արխիվներում պահանջվող ուշադրություն է դարձվել նաև կենտրոնացված հոգեևոր արժեքների կազմն ու բովանդակությունը բացահայտող գիտատեղեկատվական համակարգի ստեղծման ու կատարելագործման հարցերին: Ծրագրավորված լուրջ աշխատանքներ են տարվել արխիվային տարատեսակ տեղեկատուների, մասնավորապես ֆոնդային ու թեմատիկ տեսությունների, ցանկերի եւ թեմատիկ, սիստեմատիկ ու այլ տիպի քարտարանների ստեղծման, իսկ նորօրյա ժամանակներում նաև տեղեկատվության ավտոմատացման (համակարգչայնացման) ուղղություններ:

1980 թվականի նորամուտը հայոց պատմության անդաստան, նշանավորվեց Հանրապետության արխիվային համակարգի թվով 5-րդ պետական կենտրոնական արխիվի ծննդով. հունվարի 1-ից Հայկական ԽՍՀ-ում սկսեց գործել գիտատեխնիկական փաստաթղթերի մասնագիտացված արխիվը:

1980թ. որոշումը ընդունվեց նաև Երեւան քաղաքի պետական արխիվ ստեղծելու մասին, որը սկսեց գործել հաջորդ տարվա սկզբից:

Բացի այդ, 1980-ական թվականների՝ ոլորտի հետ կապված կարեւորագույն իրադարձություններից է համակարգում ծավալված շինարարական-վերանորոգչական աշխատանքների իրականացումը, որոնց արդյունքում շարք մտան արխիվային նոր կառույցներ, ինչպես նաև բարեկարգվեցին հնեերը: Այսպես, 1983-ի մարտին նոր շենք տեղափոխվեց Երեւանի քաղաքային արխիվը, ակնհայտորեն բարելավվեցին ՀՀՄԵՊԿԱ-ի Լենինականի մասնաճյուղի ու մի շարք շրջպետարխիվների շենքային պայմանները: Այդ տասնամյակի ծնունդներից էր նաև պետարխիվների ապահովագրական ֆոնդի պահպանության համար նախատեսված ստորգետնյա արխիվադարանների եզակի կառույցը, որն առ այսօր, ցավոք, նպատակին չի ծառայեցվում՝ թերավարտ լինելու պատճառով:

Արխիվային շինարարության առաջին իսկ օրերից՝ Հանրապետության արխիվագետների գլխավոր խնդիրներից մեկն է ի շահ հասարակության, քաղաքացիների ու պետության՝ արխիվային փաստաթղթերի օգտագործումը եւ այդ գործընթացի նպատակասլաց կազմակերպումը:

Իսկ այն, որ փաստաթղթերի օգտագործման կարեւորագույն մաս է դրանց հրապարակումն ու հրատարակումը, ասել է թե հայ ժողովրդի պատմության կարեւորագույն փուլերը լուսաբանող, խնամքով ընտրված եւ պատշաճ կարգով հրատարակված փաստաթղթերի թեմատիկ համալիրների ստեղծումը, ինքնին հասկանալի ու պարզ ճշմարտություն է:

Ճիշտ է, հայ արխիվագետների հրատարակչական արարումները (ինքնուրույնաբար կամ համատեղ) երկրում արխիվային շինարարության վաղ շրջանից են սկիզբ առնում, սակայն անկարելի է այս տեսանկյունից տարբերություն չտեսնել գործունեության առաջին եւ վերջին մի քանի տասնամյակների միջև:

Տակավին 1930թ. մայիսի 6-ին հրավիրված լուսաշխի արհմիության գիտաշխատողների սեկցիայի նիստում, պետական կենտրոնական արխիվի վիճակի մասին հարցի քննարկման ժամանակ՝ առաջարկվեց նաև կազմակերպել պետական արխիվային հրատարակություն, լույս ընծայել տպագիր մեթոդական ուղեցույցներ, ինչպես նաև սերտ կապերի մեջ մտնել եւ համագործակցել երկրի այլ գիտահետազոտական հաստատությունների հետ:

Հիշատակություն կա նաև այն մասին, որ Հանրապետության արխիվագետները՝ Ջանքեր են գործադրել լույս ընծայելու «Կարմիր արխիվ» հանդեսը: Սակայն այդ հարցը մի քանի տարի ձգձգվեց եւ, այնուամենայնիվ գլուխ չեկավ: 1930-ական թվականների հրապարակումներում արխիվային վավերագրերի օգտագործման առաջին փորձերից է Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության կողմից 1938թ. նոյեմբերին տպագրված երկու հանրահայտ գրքուկները՝ «Հայաստանը 19-րդ դարում» եւ «Պայքարի ու հաղթանակի 18-րդ տարեդարձը»:

1940-ական թվականների հրատարակումներից հիշատակության է արժանի ՀԽՍՀ պետական (հեղափոխական) թանգարանի գիտաշխատող Վ.Ավետիսյանի «Գերմանական իմպերիալիզմի զավթողական պլանները Անդրկովկասում եւ նրանց

խորտակումը 1918թ.» աշխատությունը՝ շարադրված արխիվային փաստաթղթերի հիման վրա: Այն լույս տեսավ 1941-ի աշնանը: 1948-ին Հայաստանի ԳԱ հրատարակչությունը լույս ընծայվեց պրոֆեսոր Վ.Ֆիտուռուու եւ Ն.Գ.Ն արխիվային բաժնի պետ Կ.Ստեփանյանի կողմից արխիվային բազմաքանակ փաստաթղթերի օգտագործմամբ պատրաստված «Գյուղացիական շարժումները Հայաստանում 19-րդ դարում» ժողովածուն: Ի դեպ՝ ժողովածուում գետեղված են երեւանի, Թիֆլիսի եւ Լենինգրադի պետական արխիվների ֆոնդերում հայտնաբերված 350-ից ավելի փաստաթղթեր:

Դրանից երեք տարի անց, 1951 թվականին, հիշյալ հեղինակների համատեղ ջանքերով, լույս ընծայվեց մեկ այլ՝ «Ցարիզմի ազգային քաղաքականությունը եւ գյուղացիական շարժումները Հայաստանում 20-րդ դարի սկզբում» փաստաթղթերի մեծածավալ ժողովածուն, որի մեջ ընդգրկված փաստաթղթերի գերակշիռ մասը հայտնաբերվել էին ՀԽՍՀ ՊԿԱ-ում:

1955-1958թթ. ընթացքում, հաջորդաբար, արխիվային ոլորտի աշխատողների մասնակցությամբ հրատարակվեցին «Հեղափոխական շարժումները Հայաստանում 1905-1907թթ.» (ՀԿԿ կուսպատմության ինստիտուտ, ՀԽՍՀ ՊԿԱ), «Միքայել Նալբանդյան» (ՀԽՍՀ ՊԿԱ, Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ), «Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսության վերականգնումը. 1921-1928թթ.» (Արխիվային վարչություն, ԳԱ. Էկոնոմիկայի ինստիտուտ) ստվարածավալ համահեղինակային ժողովածուները եւ այլն: Այսպիսով, 1938-1978 թվականների ընթացքում, Հայաստանի արխիվային աշխատողների եւ գիտական հաստատությունների գիտաշխատողների համատեղ ջանքերով մոտավոր հաշվարկներով, նախապատրաստվել ու լույս են ընծայվել 355 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով ժողովածուներ ու «Գիտարկնաֆորմացիոն բյուլետենի»՝ 21, «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի՝ 49 համարներ (երկուսը միասին՝ 948,5 տպ.մամուլ) եւ 85 տպ.մամուլ ծավալով ուղեցույցներ, հրահանգներ, կանոնադրություններ... (բոլորը միասին վերցրած՝ 1468 տպագրական մամուլ):

Հայաստանի արխիվագետների հրատարակչական գործունեությունը փոքր-ինչ ընդմիջումներով շարունակվեց 20-րդ դարի վերջին տասնամյակում՝ անկախացման տարիներին: «Անդրանիկ Օդանյան», «Հայոց համախորհրդակցությունը», «Նախիջևան - Շարունը 1918-1921 թթ.», «Եղիշե Չարենցի դատավարությունը» - ահա 1991-1995թթ. ընթացքում ընթերցող-հետազոտողների սեղանին դրված փաստաթղթային ժողովածուների շարքը:

Ի ամփոփում վերլուծվող ուղղությունում ոլորտի աշխատողների ձեռքբերումների, նշենք, որ 2000 թ. լույս ընծայվեց հայ խոշոր ճարտարապետ Մ. Ռուսնյան,, փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն եւ այս առումով արգասաբեր են եղել նաեւ նորամուտ 21-րդ դարի առաջին երեք տարիները: 2001թ արխիվային գործի վարչությունը լույս ընծայեց «Բրիտանյա Հայաստան-1700» վերտառությունում փաստաթղթերի ժողովածուն, 2002-ի վերջին ՀՀ արխիվային գործի գործակալության մասնակցությամբ հրատարակվեց հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, գորավար եւ փիլիսոփա Գարեգին Տեր-Հարությունյանի՝ Նժդեհի հարուստ գրական ժառանգության հիմնական մասն ընդգրկող երկհատորյակը, իսկ 2003թ. դարնանը տպագրվեց ՀՀ նախկին պատմության արխիվի կազմած «Հայերի կոտորածները Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.» փաստաթղթերի ու նյութերի մեծածավալ (468 փաստաթուղթ, 32.75 տպ.մ.) ժողովածուն (կազմողներ՝ գիտությունների ակադեմիայի թեկնածուներ Ա.Միրզոյան, Ա.Ղազարյան, պատասխանատու խմբագիր՝ պատմագիտության դոկտոր՝ Ա.Վիրաբյան): Ի դեպ, ժողովածուի նախապատրաստմանն աջակցել է «Գարգման» հայրենակցական միությունը, իսկ տպագրությանը՝ Հանրապետության առաջին տիկին Բելա Քոչարյանը:

Արխիվային պարբերական ունենալու հարցը պետական ու գերատեսչական արխիվների լայն ցանց ստեղծած Հայաստանի համար հասունացել էր տակավին 1940-ական թվականների գրությունում: Սակայն հայ արխիվագետների այդ ցանկությունը

իրականացավ Հաջորդող տասնամյակի՝ 1950-ականի կեսերին: Արխիվային առաջին պարբերականի՝ «Գիտաինֆորմացիոն բյուլետենի» անդրանիկ Համարը լույս տեսավ 1956 թվականին, վերջին՝ 21-րդ Համարը՝ 1962-ին, երբ արդեն 3-րդ տարին էր, զուգահեռաբար սկսել էր լույս տեսնել «Բանբեր Հայաստանի արխիվներին» Հանդեսը՝ տարեկան մեկ Համար պարբերականութամբ: Ասենք, որ մինչ օրս Հրապարակվել է Հանդեսի 102 Համար:

Այսօր, 40-ամյա բարձունքից քննական Հայացք նետելով Հանդեսի անցած ուղուն, որն, ի դեպ, հարթ ու ուղղաձիգ չի եղել, վստահորեն կարելի է ասել՝ «Բանբերը» առավել քան կատարել է իրեն վերապահված խնդիրները: Հանդեսի խաղացած դերը գնահատելիս ամենից առաջ պետք է նկատի ունենալ, որ ասպարեզ իջնելով, այն կարճ ժամանակամիջոցում դարձավ Հանրապետության պատմամշակութային կյանքի անբաժանելի մասը՝ ուրույն, միայն իրեն ներհատուկ ասելիքով: Պարբերականը Համարից Համար հրապարակ է Հանել Հայ ժողովրդի նոր եւ արդի ժամանակաշրջանի պատմութային ամենատարբեր Հիմնահարցերին, անցքերին, նշանավոր անձանց կյանքին ու գործունեությունը վերաբերող բազմաթիվ նորահայտ փաստաթղթեր, փաստաթղթերի Հիման վրա գրված մեկնություններ ու հոդվածներ եւ, իհարկե, արխիվային ոլորտին առնչվող հաղորդումներ, տեսություններ, արխիվագիտական մշակումներ ու այլ հրապարակումներ:

Ի փաստումն «Բանբերի» արդյունավետության աստիճանի, ասենք նաեւ, որ այն եկավ Համայրելու Հայագիտական Հանդեսների սովոր ընտրանին եւ որ նրա այդ որակի ապահովման մեջ իրենց մեծ դերն են խաղացել պարբերականի խմբագիրներ Վ. Գ. Կզարթմյանը (1960-1962թթ.), Ա. Հ. Հարությունյանը (1962-1986թթ.), Պ. Գ. Սաֆյանը (1986-1991թթ.), Հ. Հ. Ֆեյեքյանը (1991-1996թթ.), շուրջ երեք տասնամյակ Հանդեսի խմբագրի տեղակալ Ռ. Ա. Գրիգորյանը, արխիվային ոլորտի բազմաթիվ առաջատարներ ու Հանրապետություն անվանի պատմաբաններ:

Հետագարձ Հայացք նետելով անցած ութ տասնամյակների արարումների ու մաքառումների ուղուն, անկարելի է չհիշել նախկին Խորհրդային Միության ազգային Հանրապետությունների ու արտերկրի արխիվագետների, ինչպես նաեւ Սփյուռքի Հայկական Համայնքների ներկայացուցչությունների Հետ ստեղծագործական կապերի, բարեկամական շփումների մասին, որոնք խիստ բազմազան, բայց եւ փոխադարձ Հետաքրքրական ու նպաստավոր են եղել երկուստեք:

Այս տեսակետից Հանրապետության արխիվային շինարարության տարեգրության առավել արդյունավետ ժամանակաշրջանը 1960-1980-ական թվականներն էին. առաջավոր փորձի ընդօրինակման, արխիվագիտական Հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովներին, գիտագործնական սեմինար խորհրդակցություններին ու միջնուղային այլ միջոցառումներին մասնակցության, արտերկրի արխիվներում Հայ ժողովրդի պատմության առնչվող փաստաթղթերի Հայտնաբերման ու դրանց պատճեններով Հանրապետության պետարխիվների Համայրման ու նման կարգի այլ խնդիրներով ու նպատակներով Հայաստանի արխիվային ոլորտի աշխատողների Մոսկվա, Լենինգրադ, Կիեւ, Լվով, Սուխումի, Ազով, Թբիլիսի, Դոնի Ռոստով, Բուլղարիա, Ռումինիա, Լեհաստան, Ֆրանսիա ու այլուր այց-գործուղումներ եւ այլն:

Բարեկամական շփումների ու փոխայցելությունների այդ շղթայում Հիշարժան են ՀնՍՀ նախարարների խորհրդին առընթեր արխիվային վարչության պետ Ա. Հարությունյանի 1965-1981 թվականներին կատարած պաշտոնական այցերը Ռումինիա (1965թ. դարուն) եւ Չեխոսլովակիա, ապա նաեւ Ֆրանսիա, Գերմանիա եւ այլուր, ՀնՍՀ գլխարխիվի պետի տեղակալ Հ. Շաթիրյանի ու Արվեստի եւ գրականության ՊԿԱ-ի տնօրեն Ս. Բեհրուդյանի Հյուրընկալվելը Բուլղարիայում (1988թ. Հոկտեմբեր), Հանրապետության արխիվային վարչության մի խումբ պատասխանատու աշխատողների ու մասնագետների մասնակցությունը Մոսկվայում կայացած արխիվների միջազգային 7-րդ կոնգրեսի աշխատանքներին (1972թ. օգոստոս), ինչպես նաեւ փորձի փոխանակման նպատակով Հայաստանի շրջապետարխիվների վարիչների 10 հոգուց բաղկացած խմբի գործուղում-էքսկուրսիան

Սուբսուբի քաղաքային, Ազովի շրջանային եւ Դոնի Ռոստովի մարզային արխիվներ (1967թ. հունիս), եւ նույն թվականի հուլիսի վերջերին Հայաստանի գերատեսչական արխիվների վարիչներից կազմված 12 հոգանոց խմբի այցը Լենինգրադ եւ այլն:

Անշուշտ, հիշատակման արժանի են նաեւ 1965-ին Ռուսիայի ազգային արխիվների գլխավոր տնօրեն Ն.Իինուևի եւ ազգային արխիվի ավագ գիտաշխատող, Հայ մշակույթի մեծավաստակ գործիչ, պրոֆեսոր Ա.Սիրունու, 1972-ի օգոստոսին՝ արխիվների միջազգային 7-րդ (մոսկովյան) կոնգրեսի աշխատանքներին մասնակցած Ա.Մն-ի, Մեծ Բրիտանիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի արխիվային Հաստատությունների ներկայացուցիչների 14 հոգանոց պատվիրակության, 1975թ. ամռանը՝ Միացյալ Նահանգների ազգային արխիվի տնօրեն Ջեյմս Ռոուզսի, 1977-ին մայիսի երկրորդ տասնօրյակում՝ Լեհաստանի պետական արխիվների գլխավոր տնօրեն Լեոն Խայնի, 1980թ. ապրիլի 21-24-ը՝ Բուլղարիայի արխիվների գլխավոր վարչության պետ Մ.Կոստովի, 1988թ. մարտի կեսերին՝ Անգլիայի ազգային արխիվի տնօրեն, դոկտոր Մարտինի ու Փեմբերլի համալսարանի դոկտոր Բարբերի գլխավորած բրիտանական արխիվագետների պատվիրակության պաշտոնական այցով Հայաստան ժամանումը:

Հայ արխիվագետների հետ նրանց հանդիպում-հավաքները, աշխարհի տարբեր երկրների արխիվային աշխատողների միջեւ բարեկամական կապերի ու ստեղծագործական շփումների հաստատման եւ փոխշահավետ համագործակցության պատրաստակամության դրսևերման փայլուն օրինակներ են:

Խորհրդային Միության փլուզումից հետո, նորանկախ պետությունների համագործակցությանը (ԱՊՀ) մասնակից երկրների միջեւ ստեղծված նոր փոխհարաբերությունները դրականորեն անդրադարձան նաեւ արխիվային գործում միջազգային համագործակցության հաստատման ու զարգացման վրա: Այդ են վկայում 1990-ական թվականների կեսերից սկսած՝ տարբեր երկրների արխիվային Հաստատությունների մակարդակով համատեղ խորհրդակցությունների, գիտաժողովների, համախորհրդակցությունների եւ համանման այլ միջոցառումների անցկացումը:

Այսպես, 1995թ. սեպտեմբերի 25-29-ին, ԱՊՀ անդամ պետությունների արխիվագետների համագործակցության նպատակով Այմա-Աթայում տեղի ունեցած ԱՊՀ ու Մերձբայթյան երկրների պետական արխիվային ծառայությունների ղեկավարների հերթական հանդիպման ժամանակ, համատեղ քննարկման առարկա դարձան քաղաքացիների սոցիալ-դրամական հարցումների բավարարման նպատակով արխիվային ծառայությունների համագործակցության մեխանիզմի մշակմանը մոտեցումների համաձայնեցման, ինչպես նաեւ արխիվային գործի լրատվական կենտրոնի կանոնադրության նախագծի մասին հարցերը: Այդտեղ ՀՀ կառավարության առընթեր արխիվային գործի վարչության պատվիրակությունը միանշանակ իր համաձայնությունը հայտնեց Կանոնադրության պահանջներին համապատասխան համագործակցելու վերաբերյալ:

1996թ. հունիսի 7-ին, Մոսկվայում կնքվեց համագործակցության համաձայնագիրը Ռուսաստանի պետական արխիվային ծառայության եւ Արխիվների միջազգային խորհրդի (ԱՄԽ) միջեւ՝ Կոմիտերնի արխիվների համակարգչայնացումը համատեղ իրականացնելու նպատակով: Նշենք, որ այդ աշխատանքում ընդգրկվեցին նաեւ Շվեյցարիայի ու Գերմանիայի դաշնային արխիվները, Իսպանիայի մշակույթի նախարարությունը եւ այլ համակատարողներ: Ավելացնենք, որ 1994թ. մայիսի 30-ից սկսած՝ ԱՄԽ-ի անդամ է նաեւ ՀՀ արխիվային գործի վարչությունը:

1997թ. նոյեմբերի 29-ին կայացած ԱՄԽ-ի եվրասիական բյուրոյի հերթական նիստի քննարկման հիմնական թեման արխիվների մատչելիության ապահովումն էր: Ի դեպ, այդ կարգի հանդիպում-միջոցառումներ կազմակերպվել են նաեւ 1998-1999թթ., որոնց Հայաստանի արխիվագետները ֆինանսական ուղղության պատճառով գործուն մասնակցություն ցուցաբերել, ցավոք, չեն կարողացել: Այդուհանդերձ, որոշակի քայլեր այդ դեմարին ժամանակներում իրականացվել են՝ կապված հատկապես ԱՊՀ մասնակից պետությունների արխիվային ծառայությունների հետ

փոխգործողութիւնները երկկողմանի համաձայնագրերի կնքման հետ: 1997թ. հուլիսի 22-ին, Կիեւում միջգերատեսչական համաձայնագիր է կնքվել Ուկրաինայի նախարարների կաբինետին առընթեր գլխավոր արխիվային վարչութիւնը եւ ՀՀ կառավարութիւնն առընթեր արխիվային գործի վարչութիւնը, իսկ նույն թվականի նոյեմբերի 17-ին Թբիլիսիում՝ Վրաստանի արխիվային ղեկավարամեծներին ու ՀՀ արխիվային վարչութիւնի միջեւ, որոնք վավերացվել են համապատասխանաբար ՀՀ վարչապետի 1998թ. հունվարի 12-ի N6 եւ 1998թ. հունվարի 17-ի N350 որոշումներով:

1998-2000թթ. ընթացքում արխիվային գործի բնագավառում համագործակցութիւնի համանման համաձայնագրեր ստորագրվեցին նաեւ Հայաստանի արխիվային գործի վարչութիւնը եւ Ռուսաստանի (վավերացվել է ՀՀ վարչապետի 1998թ. հոկտեմբերի 15-ի N 592 որոշմամբ), ապա ՀՀ արխիվային գործի վարչութիւնը եւ Բելոռուսի արխիվների եւ գործավարութիւնի պետական կոմիտեի միջեւ (վավերացվել է ՀՀ վարչապետի 2001թ. մարտի 31-ի N260 որոշմամբ):

ԱՊՀ մասնակից երկրների արխիվային ծառայութիւնները համագործակցութիւնի շրջանակներում 1992-ից ի վեր տեղի ունեցող խորհրդաժողովներից պակաս հիշարժան չէ նաեւ ՀՀ վարչապետի 02.05.2000թ. NN 245 եւ 246 որոշումների համաձայն ՌԴ-ում ՀՀ դեսպանատանը նույն թվականի հուլիսի 4-6-ը կայացած խորհրդաժողովը, որի աշխատանքին մասնակցեցին ՀՀ արխիվային գործի վարչութիւնի պետի տեղակալ Յու.Լալայանը, բաժնի պետ Ս.Ամիրջանը եւ ՀՔԿՓ ԿՊԱ-ի տնօրենի տեղակալ (ներկայումս՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի տնօրեն) Ա.Վիրաբեյանը:

ԱՄՆ-ի 2000թ. սեպտեմբերին Սեւիլիայում կայացած հերթական 14-րդ համաժողովը հայ արխիվագետների համար առանձնակի կարեւորվում է այն առումով, որ ՀՀ արխիվային գործի վարչութիւնը, որպէս Արխիվների միջազգային խորհրդի «Ա» կարգի անդամ ընտրվեց խորհրդի «Եվրասիկա» տարածաշրջանային բաժանմունքում, իսկ նրա ներկայացուցիչը՝ գործադիր բյուրոյի կազմում: Ի դեպ՝ Արխիվային գործի վարչութիւնը հնարավորութիւն ունի ունեցել մասնակցելու նաեւ «Եվրասիկա»-ի կազմավորման համաժողովին, որտեղ վարչութիւնը ներկայացրել է ՌԴ-ում ՀՀ դեսպանութիւնի առաջին քարտուղարը:

ՀՀ արխիվային գործի վարչութիւնի ներկայացուցիչները գործունէ մասնակցութիւն են ունեցել Արխիվների միջազգային խորհրդի «Եվրասիկա» տարածաշրջանային բաժանմունքի 2001 թվականի նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը Մոսկվայում (Ա.Վիրաբեյան, Ս.Ամիրջան), ինչպէս նաեւ 2002թ. սեպտեմբերի 24-29-ը Աստանայում (Ա.Վիրաբեյան) եւ 2003թ. նոյեմբերի 9-14 Բելառուսի մայրաքաղաք Մինսկում անցկացված ամենամյա կոնֆերանսներին (Ա.Վիրաբեյան, Ս.Ամիրջան): Հավելում կարգով նշենք, որ Հենց Աստանայում անցկացված խորհրդաժողովի եւ հարակից մյուս միջոցառումների օրերին էլ ստորագրվեց ՀՀ մշակույթի, երիտասարդութիւնի հարցերի եւ սպորտի նախարարութիւնի աշխատակազմի արխիվային գործի գործակալութիւնը ու Մոլդովայի Հանրապետութիւնի պետական արխիվային ծառայութիւնի միջեւ արխիվային գործի բնագավառում երկկողմ համագործակցութիւնի մասին հերթական համաձայնագիրը:

2002 թվականից սկսած՝ աշխատանքներ են տարվում նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը եւ Իրանի Իսլամական Հանրապետութիւնի արխիվային հաստատութիւնների միջեւ համագործակցութիւնի հաստատման նպատակով: Գործընթացն ավարտական փուլում է՝ քննարկվում ու փոխհամաձայնեցվում են համաձայնագրի նախագծային հիմնադրույթները:

Հայ արխիվագետների ու հայկական սփյուռքի գիտամշակութային հաստատութիւնների եւ սփյուռքահայ ականավոր գործիչների, մտավորականութիւնի ներկայացուցիչների հետ փոխհարաբերութիւններն ու երկկողմ փոխայցելութիւնները Հայրենիք-Սփյուռք կապերի ընդհանուր շղթայի անքակտելի օղակն են կազմում:

Անցյալ դարի 70-80-ական թվականներից սկսած՝ հայ արխիվագետները տասնամյակներ շարունակ սերտ կապերի ու համագործակցութիւնի մեջ են

պատմագիտություն, Լոս-Անջելեսի Կալիֆորնիայի Համալսարանի Մերձավոր արևելքի ռեսուրսների գծով կենտրոնի տնօրեն Ռիչարդ (Տիգրան) Հովհաննիսյանի, մյուսին հարևան սփյուռքահայ հասարակական գործիչ Հակոբ Ազարյանի, ֆրանսահայ հանրաճանաչ նկարիչ Արտավազ Բերբերյանի եւ սփյուռքահայ այլ նշանավոր գործիչների ու ազգային բարերարների հետ:

1990-ական թվականների կեսերից սկսած՝ Հայաստանի նորանկախ երրորդ Հանրապետության արխիվագետները սերտ կապերի ու համագործակցության մեջ են ամերիկահայ համայնքի հետ: Ազգային արխիվի տնօրենի տեղակալ Սոնյա Միգոյանի (նախկին պատմության կենտրոնական պետական արխիվի տնօրեն) եւ համայնքի առանձին ներկայացուցիչ բարերարների փոխադարձ այցերի եւ այդ ընթացքում ծավալած քարոզչական աշխատանքների արձագանքները շատ չուշացան: Բոստոնաբնակ Արա եւ Պեգի Ղազարյանների, որոնք, ի դեպ, համայնքից մայր Հայրենիք այցելած առաջնեկ-բարերարներն են, ակտիվ գործունեություն չնորհիվ էլ միախմբվեցին արխիվային ոլորտի հոգսերով ու մտազբաղ խնդիրներով հետաքրքրվող հայրենանվեր անձինք:

Ամերիկահայ բարերարների առաջին նվիրատվությունը Հայ արխիվագետներին ստացվեց 2000թ. դարնանը, Բոստոնից եւ Կալիֆորնիայից (գրենական պիտուկներ, արտահագուստ, գույք...): Սփյուռքի աջակցության հարվում մեծ ներդրում ունեն թագուհի եւ Միսաք Թեբելեկյանները, որոնց շնորհիվ Հայաստանի արխիվները ձեռք բերեցին մի շարք բարերարներ:

2001-ին Լոս-Անջելեսի բնակիչներ Անահիտ եւ Հերոս Քաջբերունիներն արխիվին նվիրաբերեցին համակարգիչներ, տպիչ եւ տեխնիկական այլ ժամանակակից միջոցներ, որոնց ստացմամբ էլ, ի դեպ, արխիվում տեղեկատվության ավտոմատացման, ինչպես նաեւ կենտրոնացված արխիվային լուսանկարների համակարգչայնացման գործընթացը սկսելու հնարավորություն ընձեռվեց:

Վերջին տարիներին, հանրապետության արխիվագետներն, ամերիկահայ համայնքի բարերարներից նաեւ բավականաչափ ֆինանսական աջակցություն ստացան՝ ի նպաստ մայր Հայրենիքում արխիվային շինարարության ծավալման, ինչի արգասիքներն այսօր ակնհայտորեն տեսանելի են եւ՝ մեզ՝ ոլորտի աշխատողների, եւ՝ շատ-շատ այցելուների համար: Այսպես, 2003 թ. ամռանը, ի շնորհիվ վարդանանց ասպետների Ղեւոնդ դահլիճի ներկայացուցիչ Սեմ Սասունյանի, փոխվեցին ՀԱԱ-ի եռահարկ շենքի բոլոր պատուհաններն ու մի քանի դռներ:

Ներկայումս Հայ արխիվագետների կողմից նպատակամետ աշխատանքներ են տարվում արտերկրի հայրենակիցների հետ ստեղծագործական կապերի ու համագործակցության զարգացման ի նպաստ, խորապես համոզված լինելով այն բանում, որ հնարավոր ու փոխհասկանալի է համատեղ իրականացնել նաեւ փաստաթղթերի ժողովածուների, գիտական ուսումնասիրությունների, մենագրությունների պատրաստման ու ազդագրում այլ աշխատանքներ, հիմքում ունենալով Հայաստանի ազգային արխիվում հավերժ հանգրվանած փաստաթղթային տեղեկատվության հարուստ պաշարները:

20-րդ դարի եզրափակից տասնամյակում նորանկախ Հայաստանի Հանրապետության արխիվագետները լուրջ ձեռքբերումների հասան ոլորտի վերաբերյալ օրենսդրական դաշտի ձեւավորման ու կատարելագործման բնագավառում:

Տակավին 1991թ. փետրվարի 7-ին, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը հրամանագիր ընդունեց «Հայաստանի Հանրապետության արխիվային ֆոնդի պահպանության մասին», որից ելնելով, հանրապետության տարածքում գտնվող հիմնարկ ձեռնարկություններին եւ կազմակերպություններին արգելվեց կամայականորեն, ապօրինաբար ոչնչացնել, փոխանակել, տեղափոխել, վաճառել եւ կամ նվիրել որեւէ մեկին պատմամշակութային արժեք ներկայացնող արխիվային վավերագրեր՝ անկախ դրանց պահպանության սահմանված ժամկետից:

Պատշաճ ուշադրություն է դարձվում նաեւ լուծարված ձեռնարկությունների, կազմակերպությունների փաստաթղթերի պահպանության ապահովման հիմնախնդրին, առանձնակի կարեւորություն է տրվում նախկին ԽՍՀՄ

Հանրապետության մարմինների ու դրանց ենթակառուցյների փաստաթղթերի կենտրոնացմանը, մշակմանը եւ Հաշվառմանը: Առանցքային այս խնդրի լուծման նպատակով էլ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության 1991թ. օգոստոսի 29-ի «Հայաստանի կոմկուսի գույքի եւ արխիվի մասին» որոշման համաձայն, Հայաստանի կառավարության նույն թվականի օգոստոսի 30-ի N 469 որոշմամբ, ՀԿԿ ԿԿ Հասարակական-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի ենթակայության գործող արխիվը (կուսարխիվ) Հանձնվեց Արխիվային գործի վարչության ենթակայությանը, որը հետայնու՝ ՀՀ կառավարության 1991թ. դեկտեմբերի 26-ի որոշմամբ վերանվանվեց ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի ԿՊԱ-ի, որտեղ պետք է կենտրոնացվեին Հանրապետության բոլոր Հասարակական կազմակերպությունների գործունեությանը առաջացած արխիվային փաստաթղթերը:

Հարկավ, նորանկախ Հայաստանում արխիվային գործի կազմակերպման եւ զարգացման համար առավել արգասաբեր եղավ 1992 թվականը: ՀՀ կառավարության Հանձնարարության մարմնի կողմից վարչությունը ձեռնարկեց «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որը երկրի բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից ընդունվեց 1992թ. դեկտեմբերի 14-ին, իսկ ՀՀ նախագահի կողմից վավերացվեց 1993թ. հունվարի 8-ին: Դրան հաջորդեց ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը սույն օրենքը կիրարկելու մասին, որով ՀՀ կառավարության տրվեցին կոնկրետ հանձնարարականներ՝ կապված վարչության կանոնադրության, կառուցվածքի ու համակարգի հաստատման, արխիվային գործի բնագավառում միջպետական համագործակցության համաձայնագրերի կնքման գործընթացի նախապատրաստման, արխիվային կազմակերպության պատրաստման եւ համանման այլ խնդիրներին ընթացք տալու հետ:

Այսպես 1993թ. երկրորդ կեսից եւ մինչեւ 1995թ., արխիվային գործի վարչության հիմնական միջոցառումների ամենամյա ծրագրերում առաջնահերթության սկզբունքով նախատեսվեցին ու մշակվեցին արխիվային ծառայության որոշակի ոլորտները (ՀԱԱՖ փաստաթղթերի պահպանությունն իրականացնող արխիվների գրանցում, արխիվային գործի եւ գործավարչության կազմակերպման հսկողություն, ՀԱԱՖ փաստաթղթերի պահպանության ապահովում, Հաշվառում եւ այլն) կարգավորող կառավարչակազմակերպչական բնույթի նորմատիվ ակտեր (կարգեր):

1996 թվականին մեր երկրում տեղի ունեցան վարչատարածքային բաժանման սկզբունքային փոփոխություններ: Լուծարվեցին Հանրապետության 37 շրջանները եւ ստեղծվեցին վարչական 10 նոր միավորներ՝ մարզեր (չհաշված Երեւան քաղաքը, որին նույնպես մարզի կարգավիճակ վերապահվեց):

Հաշվի առնելով ՀՀ վարչատարածքային սույն բաժանումները, ինչպես նաեւ կառավարման համակարգում արխիվային ծառայության կարգավիճակը որոշելու անհրաժեշտությունը, ՀՀ վարչապետի 1996թ. սեպտեմբերի 26-ի N 536 որոշմամբ հաստատվեց Արխիվային գործի վարչության նոր կանոնադրությունը եւ ՀԱԱՖ փաստաթղթերի պահպանությունն իրականացնող արխիվների համակարգը: Այդ որոշման համաձայն, Արխիվային գործի վարչության համակարգում սկսեցին գործել 6 կենտրոնական եւ Երեւան քաղաքի ու Հանրապետության 10 մարզերի պետական արխիվներ՝ իրենց 41 մասնաճյուղերով:

Սակայն Հասարակական-քաղաքական կյանքի հարափոփոխություն պարագայում, ինչը, ի թիվս այլ հանրապետությունների, բնութագրական էր նաեւ Հայաստանի նորանկախ երրորդ Հանրապետության համար, գործող օրենսդրական դաշտը շարունակաբար կատարելագործելու անհրաժեշտություն է ծագում: Իրավիճակն ու ժամանակն ինքնին գործող օրենսդրական ու նորմատիվ ակտերի վերանայման ու նորոգման հրամայականն են առաջադրում, ինչին եւ ձեռնամուխ եղավ ՀՀ արխիվային ծառայությունը նորօրյա պայմաններում:

Շատ սեղմ ժամկետում, համակարգի փորձառու եւ գործիմաց արխիվագետ-մասնագետների համատեղ ջանքերով, մշակվեց «Հայաստանի ազգային արխիվային

Ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը եւ ուղարկվեց ՀՀ կառավարութեանը՝ ի ներկայացումն Ազգային ժողովի Հաստատման:

Ազգային արխիվային ֆոնդի մասին նոր օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց 1997թ. նոյեմբերի 17-ին, իսկ ՀՀ նախագահի կողմից ստորագրվեց նույն թվականի դեկտեմբերի 12-ին:

«Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» ՀՀ նոր օրենքն օրենսդրոեն մի նոր, ավելի բարձր մակարդակի վրա դրեց Հանրապետութեանում արխիվային գործի կազմակերպումը, անհամեմատ ավելի ճկուն դարձրեց ու արդիական պահանջների ոգուն համապատասխանեցրեց առաջնահերթ մի շարք խնդիրների լուծումը՝ կապված մասնավորապես պետական արխիվների համալրման աղբյուր-կազմակերպութեանների ցուցակների հաստատման իրավասութեան վերալիազորման, լուծարվող եւ (կամ) մասնավորեցվող (սեփականաշնորհվող) ձեռնարկութեանների, կազմակերպութեանների փաստաթղթերի պետապահպանութեան կենտրոնացման եւ որոշ այլ հիմնահարցերի հստակեցման հետ:

Հիշյալ օրենքը կյանքի կոչվելուց անմիջապես հետո, վարչութեան կողմից լուծարվեց ու հաստատվեց սույնից բխող միջոցառումների 11 կետից բաղկացած բովանդակալից ծրագիր՝ օրապահանջ գիտամեթոդական մշակումների լրացարքով եւ դրանց իրականացման կոնկրետ ժամանակացույցով եւ ամրագրված պատասխանատու կատարողներով:

1998-1999թթ. ընթացքում, ի կատարումն նշված ծրագրի, կազմվեցին եւ գործողութեան մեջ դրվեցին արխիվային գործի վերաբերյալ մեկ տասնյակից ավելի նորմատիվ իրավական նոր ակտեր (կարգեր), որոնք ամբողջութեամբ բխում էին «ՀԱԱՖ-ի մասին» ՀՀ 1997թ. օրենքի պահանջներից ու հիմնադրութեաններից: Հետագա տարիներին նույնպես ծրագրավորված աշխատանք տարվեց գործող օրենսդրական դաշտն ընդլայնելու, այն նորմատիվ նոր ակտերով հագեցնելու ուղղութեամբ: Միայն ընթացիկ՝ 2003 թվականին ոլորտի օրենսդրական դաշտը համալրվեց եւս չորս նորմատիվ ակտով, որոնք վերաբերում են ՀԱԱՖ պետական սեփականութեան Հանդիսացող փաստաթղթերի պահպանութեան, դասակարգման, դրանք պետական արխիվներին ի պահ հանձնման եւ օգտագործման կազմակերպման ընթացակարգերի՝ ներկա պահանջների հաշվառմամբ կանոնակարգմանը:

2004 թ. նշանավորվեց Հանրապետութեան արխիվային գործի օրենսդրական դաշտի հետագա կատարելագործմամբ՝ Ազգային ժողովը ընդունեց «Արխիվային գործի մասին», ՀՀ նոր օրենքը:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ կառավարութեան կողմից ոլորտում իրականացվեցին նաեւ ներհամակարգային արմատական բարեփոխումներ: Հանրապետութեան գործադիր իշխանութեան համապատասխան որոշումներով նախ՝ 2002թ. մարտի 6-ի ՀՀ կառավարութեանն առընթեր արխիվային գործի վարչութեանը վերակազմավորման ձեւով վերակազմակերպվեց ՀՀ մշակույթի, երիտասարդութեան հարցերի եւ սպորտի նախարարութեան աշխատակազմի արխիվային գործի գործակալութեան՝ հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով, ապա՝ հաստատվեց վերջինիս կանոնադրութեանը, ըստ որի գործակալութեանը հանդիսանում էր ՀՀ գործադիր իշխանութեան հանրապետական մարմին: 2003թ. օգոստոսի 8-ի որոշմամբ գործակալութեանը վերակազմակերպվեց նախարարութեան կառուցվածքային ստորաբաժանման:

Բարեփոխումների հերթական փուլում՝ 2002թ. օգոստոսի 22-ին ՀՀ կառավարութեան համապատասխան որոշումով՝ Արխիվային գործի գործակալութեան ենթակայութեան պետական արխիվները վերակազմակերպվեցին պետական ոչ առեւտրային կազմակերպութեանների, իսկ 2003թ. մարտի 20-ին ընդունված կառավարական մեկ այլ որոշումով՝ դրանք (իրենց սպասարկող ծառայութեան հետ միասին) միաձուլման ձեւով վերակազմակերպվեցին ՀՀ մշակույթի, երիտասարդութեան հարցերի եւ սպորտի նախարարութեան ենթակայութեան «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առեւտրային կազմակերպութեան: Նույն որոշմամբ գործակալութեան ենթակայութեան մարզերի (երեւան քաղաքի)

պետական արխիվները վերակազմակերպվեցին ազգային արխիվի մարզային մասնաճյուղերի, իսկ մարզպետարխիվների նախկին մասնաճյուղերը՝ նրա տարածքային ներկայացուցչությունների:

Թվարկված բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետության արխիվային համակարգն այսօր այդպիսին է՝

«Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ու նրա անմիջական ենթակայությունը գործող 11 մարզային (այդ թվում՝ Երեւան քաղաքի) մասնաճյուղեր եւ 30 տարածքային ներկայացուցչություններ, ուր 2003թ. հունվարի 1-ի դրությամբ կենտրոնացված են ամբողջությամբ վերցրած 4249 ֆոնդ՝ 3058522 պահպանման միավորներով:

Հետընթաց հայացք նետելով ՀՀ արխիվային շինարարության չորս քսանամյակների բարձունքից եւ մտովի ի մի բերելով անցած ժամանակաշրջանի արարումների արգասիքները, դժվար չէ համոզվել ակներեւ ձեռքբերումներում, նաեւ այն բանում, որ ոլորտի բոլոր ժամանակների աշխատողների գործադրած ջանքերը զուր չեն անցել՝ ճյուղը 0-ական մակարդակից 80-ամյա ակնհայտ բարձունքի է հասել:

Կասկածից վեր է, որ այդ նվաճումները զարգացնելու եւ նոր լուրջ ձեռքբերումների հասնելու համար, կարելուր նախապայման է նաեւ այն, որ մենք՝ արխիվագետներս, ոլորտի գործունեությունը չդիտենք որպես ինքնանպատակ, համազգային ու համապետական խնդիրներից տարանջատ գործողությունների շարան: Պետական արխիվային ծառայության աշխատանքը պետք է ի սպաս դրվի երկրում անկախ պետականության կայացման ու ամրապնդման, սերունդներին մեր ժողովրդի անցյալի համար հպարտության, ներկային՝ նվիրումի եւ ապագային՝ հավատքի ոգով դաստիարակության վեհ նպատակներին, ծառայած համապետական ու համազգային խնդիրների լուծմանը:

Ալբերտ Կիրիմյան
ՀԱԱ բաժնի վարիչ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ՝ ԽԱԶԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

«...Բոլոր արխիվային նյութերը, մտնելով կենտրոնական արխիվ, արգեն դառնում են պատմական: Կենտրոնական արխիվները համարվում են պատմական-քաղաքական հաստատություններ, որոնք իրենց արխիվային նյութերով կոչված են սպասարկելու պետական եւ հասարակական հիմնարկներին: Կենտրոնական արխիվները հանդիսանում են այն գերագույն օրգանը, որ կազմակերպում, կանոնավորում ու հսկում են արխիվային գործը հանրապետական մասշտաբով...»

Խ.Սամվելյան

Գոյություն ունեն բազմաթիվ հիշատակություններ ու փաստեր, արձանագրություններ, ձեռագիր մատյաններ, որոնք վկայում են, որ դեռևս Հնագույն ժամանակներում Հայաստանում եղել են յուրօրինակ արխիվներ արքունի պալատներում, դիվանատներում, կաթողիկոսական դիվաններում, վանքերում եւ այլուր: Այդ արխիվներից օգտվել են մեր պատմիչներն ու պատմագիրները: Հայ ժողովրդի ճակատագրի կրողներն են եղել նաև արխիվային փաստաթղթերը. դրանք հայրերի նման ցրվել են աշխարհով մեկ: Հայկական արխիվները ոչնչացումից ու կորստից փրկելու ու դրանք հայրենիքում պահելու գործին ինչ-որ չափով նպաստեց Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեի 1920թ. դեկտեմբերի 17-ի դեկրետը, ըստ որի պետականացվեցին Հայաստանի ազգագրական թանգարաններն ու գրադարանները¹: Սրան հաջորդեցին կառավարական մի շարք այլ որոշումներ ու շրջաբերականներ, որոնցով խստիվ արգելվում էր արխիվային նյութերի ապօրենի ոչնչացումը: Ձեռնարկված միջոցառումները Հայաստանում արխիվային գործի կազմակերպման առաջին քայլերն էին: Հայ շատ գիտնականներ ու անվանի գործիչներ ձեռնամուխ եղան այդ դժվարին, բայց կարեւոր գործի իրականացմանը: Եվ սրանց շարքում իր նշանակալից ու անգնահատելի տեղն ունի Հայ խոշոր գիտնական, ազգագրագետ, իրավագետ, պատմաբան, թարգմանիչ, հնէաբան, բանասեր-լրագրող պրոֆեսոր Խաչիկ Ստեփանի Սամվելյանը:

Ռուսաստանի (Սանկտ-Պետերբուրգ) ու Գերմանիայի (Իեն) համալսարաններն ավարտած ու իր գիտական աշխատություններով արգեն ճանաչում գտած ականավոր գիտնականը մեծ սրտացավություններ ու եռանդով է սկսում իր արխիվային գործունեությունը:

1923թ. սեպտեմբերի 26-ին Հայաստանի Կենտգործկոմը որոշում է ընդունում պետական արխիվի հիմնադրման վերաբերյալ: Իսկ այդ արխիվի ղեկավարման ու կազմակերպման դժվարին ու պատասխանատու գործը ՀՍԽՀ Կենտգործկոմի 1924թ. մարտի 15-ի որոշմամբ ու քարտուղարություն մարտի 17-ի հրամանով դրվում է Խաչիկ Սամվելյանի վրա՝ նրան նշանակելով նորաստեղծ պետական կենտրոնական արխիվի տնօրեն²: Իր այս խիստ պատասխանատու գործը Խ.Սամվելյանը սկսեց Հայաստանի համար չափազանց ծանր՝ սովի, համաճարակի, քայքայված տնտեսական պայմանների տարիներին: Նրա համար առաջնային խնդիր է դառնում արխիվային նյութերի հայտնաբերումն ու հավաքագրումը ինչպես այլ վայրերից, այնպես էլ կենտրոնական, գավառային եւ տեղական հիմնարկներից: Եվ երկրորդ՝ այդ նյութերի կենտրոնացումն ու ամբողջացումը պետական արխիվում:

¹ Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների ու հրամանների ժողովածու, պր. 1, էջմխածին 1921թ., էջ 16:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 228, ց. 1, գ. 16, թ. 10:

Ի դուր չէ, որ Հայաստանի կառավարությունն արխիվային գործի կազմակերպման ու Հիմնադրման բարդ գործը հանձնարարում է անխոնջ գիտնականին: Խ.Սամվելյանի գիտական գործունեությունն մասին գրվել են բազմաթիվ գիտական հոդվածներ³, գրախոսականներ, կարծիքներ, ուր Հիմնավոր ու մանրամասն գնահատվել ու վերլուծվել են նրա աշխատանքները իրավագիտության, ազգագրության ու բանասիրության բնագավառներում: Սկզբնական շրջանում միայնակ (դեռևս չկային համապատասխան հաստիքներ) ուսումնասիրում է գործի ընդհանուր վիճակը, հնարավորինս հաշվառում բոլոր գավառներում դեռևս առկա արխիվային նյութերը, տեղեկություններ հավաքում Հայաստանից դուրս գտնվող արխիվային նյութերի մասին եւ այդ կապակցությամբ զեկուցագիր ներկայացնում ՀՄՆՀ Կենտգործկոմ: Այդ զեկուցագրում նա նշում է. «Տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի սահմաններում, չնայած բազմաթիվ արխիվային նյութեր անվերադարձ կորել են, այնուամենայնիվ ներկայումս կան բազմաթիվ արխիվային նյութեր, որոնք անհրաժեշտ են անմիջապես կենտրոնացնել եւ անհապաղ ձեռնարկել արխիվային գործի կազմակերպումը: Մեր խնդիրն է հավաքել մնացած հնարավորը, գիտատեխնիկական մշակման ենթարկել, ապահովել դրանց պահպանությունը եւ հնարավորություն ստեղծել ուսումնասիրման համար⁴»:

Սկսվում է Խ.Սամվելյանի տքնաջան, բարդ, բայց եւ հետաքրքիր ու շատ կարեւոր աշխատանքը՝ արխիվային փաստաթղթերն ու նյութերն անդարձ կորստից փրկելու, հայ ժողովրդի սեփականությունը այլ երկրներից տուն դարձնելու, անհայտության մեջ կորչելու ու ոչնչացման վտանգից փրկելու շնորհակալ գործը:

1924թ. ՀՄՆՀ Կենտգործկոմի որոշմամբ, պետական կենտրոնական արխիվին է տրամադրվում Երեւանի Այվերդեյան փողոցի N1 շենքը եւ նույն թվի հոկտեմբերի 1-ին, ընդամենը 4 արխիվային ֆոնդերի Հիման վրա տեղի է ունենում Հայաստանի պետական կենտրոնական արխիվի պաշտոնական բացումը⁵:

Սկսվում է արխիվային նյութերի ու փաստաթղթերի հավաքագրման դժվարին աշխատանքը Հայաստանի ու նրա սահմաններից դուրս գտնվող տարածքներից: Խ.Սամվելյանն անթույլատրելի է համարում, որ Հայաբնակ նահանգների վերաբերյալ արխիվային նյութերը դուրս են տարվել այդ նահանգներից ու պահվում են Ռուսաստանի ու Թիֆլիսի արխիվներում: Նա միանգամայն արդարացիորեն գտնում է, որ Երեւանի կենտրոնական գիվանի նյութերի բովանդակությունն իր կարեւորությամբ ոչնչով չի տարբերվում Ռուսաստանի նահանգային արխիվներից, այդ արխիվները դասում է նրանց շարքը: Գտնում է ոչ ճիշտ, անընդունելի ու անհասկանալի, որ տվյալ ազգի համար կարեւոր նշանակություն ունեցող արժեքավոր պատմական վավերագրերն այլ տեղերում, հեռավոր երկրներում պահվեն: Ուստի ճիշտ է համարում այդ նյութերի հավաքագրումն ու պահպանումը Հայաստանի պետական կենտրոնական արխիվում, ուր դրանք պիտի ուսումնասիրվեն, մշակվեն ու գրվեն շրջանառության մեջ. «Սակայն այն առաջադրում է իր պետական շինարարության, իր սոցիալ տնտեսական զարգացման տեսակետներից, իր քաղաքական ու պատմագրական ուսումնասիրություններից համար ավելի լայն նպատակներ ու պահանջներ, ավելի մեծ հորիզոններ, քան կարող էր ունենալ մի որեւէ նահանգական նախկին վարչություն: Ցարական կառավարության յուրաքանչյուր նահանգի ու նրա ազգաբնակչության վերաբերյալ, մանավանդ այնպիսի ծայրագավառների, ինչպիսին Երեւանն է, բոլոր պետական-ազգային, նահանգային Հայացքները, ձեռնարկված միջոցները, օրենսդրական ու վարչական ծրագրերը հղանում, ուսումնասիրվում, մշակվում եւ կյանք են առնում ոչ թե տեղերում, այլ հեռավոր վայրերում՝ կենտրոններում, այն է՝

³ Կ.Մելիք-Փաշայան, «Ականավոր ազգագրագետ, պատմաբան Խ.Սամվելյանի կյանքն ու գործունեությունը», ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 550, թթ. 1-18:

⁴ Տե՛ս. ՀԱԱ, ֆ. 228, ց. 1, գ. 1, թ. 3:

⁵ Տե՛ս. նույն տեղում, գ. 51, թ. 2 եւ գ. 12:

Թիֆլիսում եւ ավելի, մեծ մասամբ, Լենինգրադում (նախկին Պետերբուրգում): ՆաՀանգական վարչություններն այս դեպքում Հանդիսանում էին Կովկասի վերաբերյալ պետական այդ երկու կենտրոնների սոսկ կամակատարները, այդ երկու կենտրոնների մշակված ու վարչական գաղտնարաններում Հորինված գիտական-վարչական Հայացքների, ծրագրերի տեղական ավտոմատիկ կիրարկողները: Ուստի Երեւանի նահանգի ու ժողովրդի կյանքի վերաբերյալ ուսումնասիրական ու պատմագրական նյութերը, որոնք էական ու թանկարժեք նշանակություն ունեն մեզ Համար եւ որոնք ընդգրկում են գրեթե 100 տարվա ուսուսական ցարական տիրապետության մի ժամանակաշրջան մեր երկրում, ապա գտնվում են ոչ թե Երեւանի նահանգի վարչական արխիվներում, այլ Թիֆլիսի եւ Լենինգրադի մինիստրական ու այլ կենտրոնական պետական Հիմնարկությունների արխիվներում»⁶: Այնուհետեւ, իրավամբ Համարում, որ. «Հայաստանը Հանդիսանում է այն Հնոցը, դեպի որն են ձգվում եւ բեւեռվում Հայաստանի սահմաններից դուրս եղած Հայության մտայնություններն ու զգացումները: Սա մի փաստ է, որ աՀագին նշանակություն է ստանում Հայերի Հին՝ վերջին տարիների (գար) կուլտուրայի ուսումնասիրության եւ նոր կուլտուրայի կառուցման գործում»⁷:

Նրա կարծիքով կարելու է ոչ միայն արխիվային նյութերի Հավաքագրումը, այլեւ դրանց ուսումնասիրությունն ու օգտագործումը, քանի որ պատմագրական այդ նյութերում «ամբարված» են Հայ եւ ուսուսական պետությունների ներկայացուցիչների միջեւ եղած քաղաքական, առեւտրական, տնտեսական, մշակութային եւ այլ Հարաբերությունների Հետեւանքով առաջացած փաստաթղթերը: Հայաստանի պետարխիվի նպատակն է ոչ միայն լինել «սոսկական պահեստ» արխիվների, այլեւ ամենատարբեր բնագավառների ուսումնասիրությունների Համար արխիվային նյութերի տրամադրումը եւ այդ նպատակին Հասնելու Համար արխիվային վավերագրերի ծավալի մեծացնելը. «Պետք է դուրս գալ նախկին Երեւանի նահանգային մասշտաբով արխիվային պարտականությունից եւ իրոք դառնալ Հայաստանի պետական կենտրոնական արխիվ լայնարձակ ծավալով՝ թե՛ ըստ նոր պետության սահմանների եւ թե՛ ընդհանրապես ըստ Հայ ժողովրդի կյանքի վերաբերյալ պատմագրական նյութերով: Այդ նպատակին Հասնելու Համար ոչ միայն պետք է կենտրոնացնել Հայաստանի նախկին եւ արդի արխիվները, այլեւ դրսում Հավաքագրելով՝ բերել Երեւան Հայաստանի եւ Հայ ժողովրդի վերաբերյալ արտասահմանյան, գլխավորապես Ռուսաստանի արխիվներից նյութերը: Ուստի, Հայաստանի պետարխիվն անհրաժեշտ Համարեց պատշաճ մարմինների միջոցով ձեռնարկել Թիֆլիսից եւ Լենինգրադից, Մոսկվայի արխիվներից Հայաստանի վերաբերյալ արխիվային նյութերը ստանալու գործը»⁸:

Այն տալիս է իր արդյունքը: Առաջին արձագանքը գալիս է Թիֆլիսից, այնտեղ արխիվային ֆոնդերից գատվում են Համապատասխան նյութերը եւ Հանձնվում Հայաստանին: Հայկենտգործկոմի որոշմամբ (որի ենթակայության տակ էր Հայաստանի պետարխիվը) Թիֆլիսում նշանակվում է Հատուկ լիազոր-արխիվիստ, որը Վրաստանի կենտրոնական արխիվի Հանձնաժողովի Հետ ձեռնամուխ էր լինելու Հայաստանի վերաբերյալ նյութերի առանձնացման ու ստացման աշխատանքներին: Բարդ էր Ռուսաստանի արխիվներից նյութեր ստանալու Հարցը: Գրվում են մի շարք պաշտոնական գրություններ, կայացվում որոշումներ, որպեսզի Ռուսաստանում եղած Անդրկովկասյան Հանրապետությունների նյութերը Հանձնվեն իրենց: Այդ նպատակով հսկանքներին Թիֆլիսում տեղի է ունենում երեք Հանրապետությունների կենտրոնական արխիվների աշխատանքների Համախորհրդակցություն: Վերջապես նրանց առաջարկով Մոսկվայում կազմակերպվում է մի Հանձնախումբ-ժողով Ս.Տեր-Փարբիելյանի նախագահությամբ եւ երեք Հարապետությունների ներկայացուցիչների

⁶ Տե՛ս. ՀԱԱ, ֆ. 740, ց. 1, գ. 186, թ. 2-4:

⁷ Տե՛ս. նույն տեղում, թ. 3, 4, 8:

⁸ Տե՛ս. նույն տեղում, թ. 9:

մասնակցութեամբ: Հայաստանի կողմից ներկայացուցիչ է նշանակվում պրոֆ. Ներսիսյանը, որին միաժամանակ հանձնարարվում է Հայաստանի վերաբերյալ արխիվների գաղտնի ու հավաքման գործը Ռուսաստանում, որ ինքնին բարդ ու պատասխանատու գործ էր⁹:

Այսպիսով, իրականացվում է Հայաստանի կենտրոնական պետական դիվանի ձգտումը՝ դուրս գալ ներկա սահմանափակ ու նախկին նահանգային մասշտաբների արխիվի վիճակից ու ծառայել իրեն առաջադրած նպատակներին՝ մի կողմից պետական շինարարութեան եւ զուտ վարչական կարիքների եւ մյուս կողմից պատմագրական ուսումնասիրութեան ուղիներում: Խ.Սամվելյանը դրանում համոզված էր, քանի որ ակնկալիք ունենալով, թե մոտ ապագայում Հայաստանի պետարխիվը պիտի «մեծ չափերով Հարստանար ու ճոխանար»:

Պետական արխիվի մեկ տարվա գործունեությունից հետո Խ.Սամվելյանը գրում է. «Հայաստանի պետական կենտրոնական արխիվը, որ մեկ տարի է ինչ գոյություն ունի, կարողացել է արդեն որոշ չափով կենտրոնացնել իր մեջ այն բոլոր արխիվային նյութերը, որոնք մնացել էին նախկին ցարական ու դաշնակցական կառավարություններից: Դեռեւս կան պետական ու հասարակական այս ու այն հիմնարկներում պահվող արխիվային նյութեր, որոնք մնացել են նախախորհրդային շրջանից եւ որոնք մոտիկ ապագայում անշուշտ կտեղավորվեն իրենց պատկանելի տեղում, այն է՝ պետական կենտրոնական դիվանում. կան նաեւ թաքցված կամ անհայտ մնացած նույնպիսի արխիվային նյութեր, որոնց նկատմամբ հետախուզական միջոցներ են ձեռնարկվում: Առաջին տարվանից պետական կենտրոնական սկսել են կենտրոնանալ նաեւ Հայաստանի խորհրդային շրջանի պետական հիմնարկությունների արխիվները, որոնք, ըստ արխիվային կանոնադրության, միայն հինգ տարի կարող են պահվել իրենց հիմնարկներում¹⁰...» Այդ դժվարին մեկ տարին սովեց իր արդյունքը. պետական արխիվն ունենալ 27 ֆոնդ: Իսկ 1930թ. հաշվվում էր արդեն 225 արխիվային ֆոնդ, ընդամենը 24 արխիվային գործի նվիրյալ աշխատողներ:

Անչափ կարեւորելով էջմիածնի կաթողիկոսական դիվանի արխիվային փաստաթղթերի պատմագրական արժեքն ու նշանակությունը, ՀՍԽՀ կենտգործկոմին ներկայացրած իր մի զեկուցագրում Խ.Սամվելյանը գրում է. «...էջմիածնի կաթողիկոսական դիվանի բոլոր արխիվային նյութերն ըստ իրենց բովանդակության կրում են քաղաքական, պատմահասարակական, սոցիալ-տնտեսական եւ զուտ կրոնահոգեւորական բնույթ: Մեծ կարեւորություն չտալով վերջին կատեգորիայի նյութերին այն չափով, ինչ չափով նրանք առնչություն չեն կարող ունենալ քաղաքական հարցին, մենք պետկենտարխիվի համար մեծ նշանակություն ենք տալիս հիշածս մնացյալ կատեգորիաների արխիվային նյութերին: Այդ նյութերը չպետք է մնան մեռած կապիտալ, այլ, ինչպես եւ այլ բոլոր արխիվային ֆոնդերը, պետք է ուսումնասիրութեան նյութ դառնան եւ ծառայեն մեր պետության քաղաքական ու հասարակական նպատակներին պատմագրական տեսակետից: Իսկ քանի որ ներկայումս այդ ուղղության բոլոր թանկարժեք արխիվային ֆոնդերը կենտրոնացված են պետական կենտրոնական արխիվում, որպես քաղաքական-պատմական մի հաստատություն մեջ, եւ քանի որ արխիվային նյութերի ուսումնասիրութեամբ զբաղվողները բնականորեն միշտ դիմել են եւ դիմելու են պետկենտարխիվին, ուստի նպատակահարմար ենք գտնում եւ պետական կենտրոնական արխիվի ըստ կանոնադրության առաջադրած նպատակների միանգամայն համապատասխան ենք համարում հետեւյալ կերպով վարվել էջմիածնի կաթողիկոսական արխիվի հետ.-

1. Մինչեւ 1912թ. այն բոլոր արխիվային նյութերը, որոնք այժմ պահել ենք էջմիածնի մատենադարանում, պետք է բերել Երեւան եւ զետեղել պետական կենտրոնական արխիվում, որպեսզի կատարենք այդ արխիվային գործերի

⁹ Տե՛ս. ՀԱԱ, ֆ. 740, ց. 1, գ. 186, թ. 10, 11:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 1,2:

կարգավորումն, գտումն, դասավորումն եւ ցուցակագրումը, մի բարդ ու պատասխանատու աշխատանք, որ հնարավոր է անել միայն մեր փորձված արխիվարիտուսների ձեռքով: Այդ աշխատանքների ընթացքում կարելի է գտել մեզ համար անպետք ճանաչված (հոգեւորականների ձեռնագրության, ամուսնալուծական եւ այլ նման նյութերը) գործերը եւ փոխանակ ոչնչացնելու իբրեւ մակուլատուրա՝ այդ վերագործնել կաթողիկոսական դիվանին:

2. 1912-1929թ.թ. արխիվային գործերի մեջ, որոնք թողել ենք կաթողիկոսական դիվանում, կան խիստ արժեքավոր վավերագրեր.

ա) Քաղաքական բնույթի էջմիածնի գրագրությունները նախապատերազմական շրջանում Պողոս Նուբար փաշայի ու եվրոպական եւ ուսուսական պետությունների ներկայացուցիչների հետ. իմպերիալիստական պատերազմի շրջանի վերաբերյալ դեպքերը, նաեւ դաշնակցական կառավարության ու Հայաստանի խորհրդայնացման առաջին տարիների վերաբերյալ նյութերը:

բ) Հասարակական-տնտեսական բնույթի, էջմիածնի կալվածքներին, եկամուտներին եւ զանազան կտակների վերաբերյալ նյութեր. «Եղբայրական օգնության կոմիտեներին» գործունեությունը:

Այս երկու կարգի արխիվային գործերը մեր կարծիքով նույնպես պետք է հանել կաթողիկոսական դիվանից եւ կենտրոնացնել մեր պետական կենտրոնական արխիվում՝ ուսումնասիրական նպատակներով, քանի որ նրանք քաղաքական-պատմական խիստ մեծ նշանակություն ունեն:

Իսկ եթե հարց ծագի այդ ամբողջ արխիվը կենտրոնացնել էջմիածնի մատենադարանում, այդ դեպքում մենք գտնում ենք դա անկարելի՝ երկու տեսակետներով.

1) Ակզբունքային, այն է, որ համապետական նշանակություն ունեցող, մանավանդ քաղաքական բնույթի արխիվային նյութերը, ըստ արխիվային կանոնների, չպետք է գտնվեն գավառներում, այլ կենտրոնացվելու են պետական կենտրոնական արխիվում:

2) Գործնական, այն է, որ այդ արխիվային նյութերի կարգավորման համար պետական կենտրոնական արխիվի կողմից եւ, որ գլխավորն է, նրանց օգտագործման եւ ուսումնասիրության համար շահագրգռված հաստատությունների ու հանձնարարված անձերի կողմից ավելի նպատակահարմար է կենտրոնում ունենալ բոլոր այդ նյութերը:

Ձեկուցանելով Ձեզ վերաբերյալի մասին՝ խնդրում ենք Ձեր տնօրինությունն ու որոշումը հետագայի նկատմամբ մեր հարուցած սույն խնդրի առթիվ¹¹»:

Նա իրազեկ էր պետարխիվի բոլոր աշխատանքներին, խորապես ուսումնասիրել էր ու գիտեր արխիվային ֆոնդերն ու դրանց պարունակած նյութերը ու, բնականաբար, հեղինակը կամ մասնակիցն էր այն բոլոր որոշումների ու հրահանգների, որ օգնում ու աջակցում էին արխիվային գործի կազմակերպմանն ու իրականացմանը Հայաստանում: Միաժամանակ վճռական ու կտրուկ էր արխիվային փաստաթղթերի պահպանության հարցում իր հարցադրումների մեջ: Սրա հետ կապված անչափ մտահոգված էր արխիվի շենքի հարցով: Բազմիցս համապատասխան ատյաններին արխիվի շենքից մի քանի կենվորների դուրս հանելու կապակցությամբ արված ահազանգերին հաջորդում է 1927թ. Երեւանի քաղաքավործկոմի նախագահությանը հղած մի գրություն, ուր գրում է. «...Այն բոլոր պատճառաբանությունները, որ երկու տարի Երեւանի քաղաքավործկոմի կոմունալ բաժինը կրկնել է եւ անշուշտ այսուհետեւ էլ կրկնելու է, թե բնակարանային կրիզիս է, եւ այլն, չեն կարող այնքան էլ հարգելի հիմք հանդիսանալ՝ արդարացնելու համար այդ տեսակ վերաբերմունքը դեպի մի պետհիմնարկ, որ ներկայումս ծայր աստիճան կրիտիկական վիճակում են գտնվում անվերջ կուտակվող արխիվային նյութերը: Բնակարանային կրիզիսը Երեւանում, իհարկե, մոտակա տարիներում էլ բնավ չի

¹¹ Տե՛ս. ՀԱԱ, ֆ. 113, ց. 43, դ. 839, թ. 76 եւ հակ.:

վերանայու, եւ տարօրինակ կլինեն անվերջ սպասել անորոշ ապագայում այդ կրիզիսի վերանայուն եւ ապա հեռավոր այդ ապագայում միայն հուսալ, որ մեր դիմումներն ուղարկութեան կարծանան: Մինչդեռ, եթե կոմունալ տնտեսութեան բաժանմունքը բարեհաճեր փոքրիկ ուղարկութեան ունենալու եւ հոգար այս 3 տարիների ընթացքում գեթ տարեկան մեկական սենյակ տրամադրելու, որ միանգամայն հնարավոր բան էր նույնիսկ ներկա բնակարանային ճգնաժամի հանգամանքներում, համոզված ենք, որ այդքան երկարատեւ, քաջքշուկի ենթակա չարաբաստիկ հարցը վերջիվերջո լուծված կլինեն մինչեւ այսօր:

Արդ՝ նորից հիշեցնելով ահա 3-րդ տարին իր լուծումն սպասող վերահիշյալ հարցի մասին, խնդրում եմ նախագահութեանը՝ Ձեզից կախյալ կարգադրութեան անել, որ կոմունալ տնտեսութեան բաժինը վերջ տա այդ հարցի շուրջ ստեղծված ճգճգմանը եւ իրական կտրուկ միջոցներ ձեռնարկի՝ վերջապես հեռացնելու պետական կենտրոնական արխիվի շենքից 3 տնկեցիներին՝ տրամադրելով վերջիններին սենյակներ¹²»:

Հետեւողական ղեկավարի պահանջն այս անգամ տալիս է իր դրական արդյունքը, ինչի մասին է վկայում փաստաթղթի վրայի մակագրութեանը, թե հարցն իրոք բավականին ձգձգվել է եւ հարկավոր է լուծել այն:

Թերթում ես արխիվային փաստաթղթերը, Խ.Սամվելյանի անձնական ֆոնդը, որ պահվում է ՀԱԱ-ում եւ տասնյակ այլ ֆոնդերի գործեր. անչափ շատ են արխիվային գործի մեծ երախտավորի ձեռքով գրված կամ նրան բնութագրող բազմաթիվ փաստաթղթերը, որոնք խոսում են նրա աշխատասիրութեան, բանիմացութեան, սրտացավութեան ու պահանջկոտութեան մասին: Ջարմանում ես, որ դեռեւս 1920-ական թվականներին ինչպիսի հեռատեսութեամբ ու մտահոգութեամբ է նա կազմել արխիվային գործի վերաբերյալ ցուցումներ ու հրահանգներ՝ փաստաթղթերի պահպանութեան, արխիվադարակներում դրանց դասավորվածութեան, գործերի տեղադրման, կազմման, հաշվառման, գործավարութեան, ընթացիկ արխիվներում դրանց պահպանութեան, մշտական պահպանութեան հանձնման կարգի, արխիվային պարտականութեաններին եւ այլնի մասին: Ջարմանում ես, ինչպիսի մանրագնին ուսումնասիրութեան է կատարված ու ինչ կարեւոր նբութեաններ են պարունակում յուրաքանչյուր աշխատանքի վերաբերյալ նրա հրահանգները, արժեքավոր փաստաթղթերի ցանկերը, աշխատակիցների պարտականութեաններին պաշտոնեական հրահանգները, արխիվային շենքի ու սարքավորումների վերաբերյալ նրա առաջարկները, արխիվի վերաբերյալ կանոնադրութեանը¹³:

Անվերապահորեն կարելի է ասել, որ Խաչիկ Սամվելյանը համարվում է Հայաստանի արխիվային գործի հիմնադիրը: Արխիվի դիվանապետի (տնօրեն) պաշտոնը ստանձնած տարիներին, որոնք արխիվային գործի շինարարութեան առաջին կարեւոր 10 տարիներն էին արխիվային գործի ստեղծման, հիմնման, զարգացման ու գիտական հիմքերի վրա դնելու նրա կատարած աշխատանքների ներդրումը իրավամբ անգնահատելի է:

ՀԱԽՀ Կենտգործկոմը 1932թ. օգոստոսի 10-ին որոշում է ընդունում արխիվային ֆոնդերի Հայտնաբերման, փոխադրման ու օգտագործման մասին: Փաստաթղթում մասնակիորեն նշվում է. «...Մինչեւ այժմ լուրջ աշխատանք չի կատարվել Հայտնաբերելու, փոխադրելու եւ օգտագործելու այն արխիվային ֆոնդերը, որոնք գտնվում են Խորհրդային Հայաստանում:

Արխիվային գործին զուգընթաց կազմակերպել արխիվա-պատմական գրադարանը՝ օգնութեան ստանալով կենտրոններից:

¹² Տե՛ս. ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 88, թ. 65 եւ հակ.:

¹³ Տե՛ս. ՀԱԱ, ֆ. 740, ց. 1, գ. 187, թ. 9, 12-14, 22:

Գտնել, որ արխիվային նոր ֆոնդերի ավելանալով եւ փոխադրելով, ինչպես եւ Հին շենքի քանդման վտանգը, հրատապ են դարձնում նոր շենքի կառուցման արագացումը, առաջարկվում է այն մտցնել շինարարական ծրագրի մեջ՝...»

Նշանակալի է այն փաստը, որ արխիվային գործի վերաբերյալ բազմաթիվ դեկրետներ, կառավարական որոշումներ ու կարգադրություններ կյանքի են կոչվել շնորհիվ փորձառու ղեկավարի անհատական հոգածու վերաբերմունքի, հետեւողական, անխոնջ, պահանջկոտ աշխատանքի: Այդ մասին է վկայում ՀՍԽՀ Կենտգործկոմի 1932թ. հոկտեմբերի 21-ի եւս մի որոշում՝ կենտրոնական արխիվի վարչությունը կից պատմական ու արխիվագիտական գրադարան հիմնելու մասին.

«...Այն պիտի ընդգրկի Հայաստանի եւ Հայկական կյանքի Անդրկովկասյան, Ռուսաստանի եւ Մերձարեւելյան երկրների պատմությունը, կուլտուրայի, բնության, տնտեսական եւ այլ հարակից խնդիրները: Գրադարանն ունենալու է նաեւ արխիվագիտական տեղեկատվական բաժին՝ հնագիտական, բառարանական, տեղատվական, տարեգրային եւ նման բովանդակ հրատարակություններ...»¹⁵

Այս որոշման կապակցությամբ, համապատասխան հանձնարարականներ են տրվում ՀՍԽՀ լուսժողովմատին, գրապայատին, ԶԱԳՍ-ի Հայկական բաժանմունքին՝ անվարձահատույց Հայաստանի կենտրոնական արխիվի վարչությունը տրամադրելու իրենց բնագավառների գծով լույս տեսած, հրատարակված պարբերական հրատարակություններ: Միաժամանակ նախանշվում է բյուջեյում հատուկ գումար նախատեսել գրադարանային կարիքների համար, նշանակել ինքնուրույն կամ համատեղությամբ աշխատող գրադարանագետ:

Հմուտ ու սրտացավ արխիվագետի աչքից չեն վրիպել արխիվային գործի հետ կապված, արխիվային բոլոր բնագավառների հետ առնչվող հարցերը: Դրա վառ վկայություններն են նրա ձեռքով ստեղծված բազմաթիվ գրությունները, ցուցումները, հրահանգներն ու զեկույցները: Ստորեւ մի շարք մեջբերումներ ենք ուզում ներկայացնել նրա մի զեկույցագրից՝ առանց մեկնաբանությունների.

«...Արխիվների այդ նշանակությունն աչքի առաջ ունենալով, երբ մոտենում ենք խորհրդային Հայաստանի իրականությունը, այստեղ տեսնում ենք մի վերին աստիճանի անմխիթար պատկեր. չէ թե միշտ թերագնահատվել է կենտրոնական արխիվի դերն ու նշանակությունը, այլ, որ գլխավորն է, մեր հիմնարկներն անհանդուրժելի վերաբերմունք են արտաբերել դեպի արխիվային նյութերը՝ թողնելով այն անխնամ ու անապաստան վիճակում: Եվ այսօր մենք կանգնած ենք աղաղակող փաստերի առաջ, որոնք վկայում են, թե որքան արժեքավոր նյութեր Հենց խորհրդային շրջանից, էլ չենք ասում նախախորհրդային շրջանից, անգարձ փչացել ու կորել են: Ենթադրվում է, որ այդօրինակ դատապարտելի անփութություն մենք այսօր շատ աղքատ ենք խորհրդայինացման առաջին տարիների 1920, 1921, 1922 թվականների արխիվային գործերով՝...»

Լրջորեն, գիտականորեն մոտենալով արխիվային գործի յուրաքանչյուր անգամ փոքր թվացող հարցերին, մեծ գիտնականը դեռեւս 1920-ական թվականներին սխալ «թյուրիմացություն» է համարել արխիվային գործի թերագնահատումը. «...այն, որ արխիվը մի նկուղ է, հնության փոշով ծածկված, ուր առանց տարբերության ի պահ են նետվում միջվարչական գրագրություններից կուտակված պիտանի ու անպետք նյութերը՝...» Գտնում է, որ արխիվը չպետք է ծառայի սոսկ միայն մասնավոր անհատներին տեղեկանք տալով, այլ պիտի սերտ համագործակցություն ծավալի ու մասնակցի պետական-հասարակարարական մարմինների աշխատանքներին, հանդես գա նախաձեռնողի դերում. «...Նա սպասելու է, որ իրեն դիմեն այս կամ այն հարցախնդիրներով, անհրաժեշտ վավերագրերի հայտնաբերման առաջադրանքներով,

¹⁴ Տե՛ս. ՀԱԱ, ֆ. 740, ց. 1, դ. 187, թ. 38:

¹⁵ Տե՛ս. նույն տեղում, թ. 40:

¹⁶ Տե՛ս. նույն տեղում, թ. 92:

¹⁷ Տե՛ս. նույն տեղում, թ. 93:

այլ ինքը նախագգալու, կանխատեսելու է որոշ չափով այն առաջադրանքները, սոցիալիստական շինարարութեան համար կարեւոր փաստագրերն ու նյութերը, որոնք պարունակվում են իր մեջ: Մեր խորհրդային հիմնարկները շատ անգամ չեն կարող տեղյակ լինել, թե իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ ի՞նչ նյութեր կան արխիվներում: Այդ կարող են իմանալ եւ պետք է իմանան արխիվային մարմինները, որոնց ձեռքին են կենտրոնացված բոլոր արխիվային նյութերը, եւ ոչ միայն իմանալ, այլեւ ուսումնասիրել եւ մատակարարել պատրաստի նյութեր շահագրգռված հիմնարկներին¹⁸...»

Նա մեծ կարեւորութիւն է տալիս արխիվային գործի օրենսդրական դաշտին եւ գտնում, որ պետարխիվի կանոնադրութեան հաստատումից հետո է՛լ ավելի է հաստատվում ու որոշակիանում արխիվային գործի իրավական «գրութիւնը», ավելի շեշտակի դառնում նրա նշանակութիւնը: Կանոնադրութեան հիման վրա Հայաստանի 28 շրջաններում ստեղծվում են շրջանային կենտրոնական արխիվներ, որոնք պիտի կենտրոնացնեն տեղական բոլոր արխիվային նյութերը. «...Այդպիսով, մի կողմից մենք փրկում ենք արխիվային նյութերը այն անապաստան ու անխնամ վիճակից, կորստից ու փչացումից, որին մինչեւ օրս նրանք ենթակա են եղել շրջաններում, իսկ մյուս կողմից՝ Հնարավորութիւն ենք ընձեռում, կարգավորելով ու համախմբելով որոշ սիստեմի տակ, այդ արխիվային նյութերն էլ մատչելի դարձնել ուսումնասիրութիւնների համար¹⁹...»

Խ.Սամվելյանը կարեւոր նշանակութիւն էր տալիս գիտական հիմնարկների հետ համագործակցելուն ու արխիվային վավերագրերի հրատարակման աշխատանքներին. «...Սրանով մենք Հնարավորութիւն ենք ստեղծում քաղաքական ու պատմական ակտուալ բնույթ ունեցող վավերագրերը արխիվների անմերձենալի դարակներից լույս աշխարհ հանել, մի կողմից մասսայականացնելով այդ ուսանելի նյութերը խորհրդային լայն հասարակական խավերին, իսկ մյուս կողմից՝ անմիջական աղբյուրից չու՞մ նյութ մատակարարելով մեր պատմագիրներին եւ այլ ուսումնասիրներին իրենց գիտական աշխատութիւնների համար²⁰...»

Չափազանց կարեւոր ու կարծում ենք նաեւ հիմա էլ արդիական են նրա մի շարք հարցադրումներն ու ծրագրերն արխիվային կազմեր պատրաստելու հարցում: Դեռեւս 1930-ական թվականներին նա առաջարկութիւն է անում Հայաստանի բուհերից մեկում մտցնել «Արխիվաշինարարութիւն» առարկան: Հայաստանի կառավարութեան ուշագրութիւնն է հրավիրում անընդհատ զարգացող արխիվային գործի համար անհրաժեշտ բարձրորակ արխիվային կազմեր պատրաստելու հրատապ հարցին. «...Կազմերի բացակայութիւնից չարաչար տուժել է մեզնում արխիվային գործը եւ ենթակա է եղել այն վտանգներին, որոնց շնորհիվ մեր արխիվային նյութերը, մանավանդ շրջաններում գտնվել են անմխիթար ու անհանդուրժելի վիճակում: Արխիվային գիտելիքներով զինված, մասնագիտորեն պատրաստված արխիվային աշխատակիցներն են լինելու այն ուսուցիչները, որոնք լծվելու են արխիվային շինարարութեանը²¹...»

Այդպիսի «ուսուցիչ» ու արխիվային գործի մեծ նվիրյալ էր հենց ինքը՝ Հայաստանում արխիվային գործի ողջ համակարգի հիմնադիր ու կազմակերպիչ Խաչիկ Սամվելյանը, որից այսօրվա արխիվագետներս շատ բան ունենք ընդօրինակելու ու սովորելու:

Մ.Մարտիրոսյան
ՀԱԱ բաժնի վարիչ

¹⁸ Տե՛ս, ՀԱԱ, 740, ց. 1, գ. 187, թ. 94:

¹⁹ Տե՛ս, նույն տեղում, թ. 97:

²⁰ Տե՛ս, նույն տեղում, թ. 98:

²¹ Տե՛ս, նույն տեղում, թ. 98:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(1986-2003թթ.)***

ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1986թ. փետրվարի 21-ի N 106 որոշումը՝ «Հայկական ՍՍՀ-ում արխիվային գործի վիճակի եւ նրա հետագա զարգացման միջոցառումների մասին»:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1991թ. դեկտեմբերի 26-ի N 652 կարգադրությունը «Հայաստանի Հանրապետության Հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ ստեղծելու մասին»:

ՀՀ կառավարության 1992թ. հունվարի 26-ի N 54 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության նոր կառուցվածքի հետ կապված միջոցառումների մասին», համաձայն որի ՀՀ նախարարների խորհրդին առընթեր գլխավոր արխիվային վարչությունը վերանվանվում է ՀՀ կառավարության առընթեր արխիվային վարչության:

ՀՀ Գերագույն խորհրդի 1992թ. դեկտեմբերի 14-ի որոշումը ««Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառման կարգի մասին»:

1993թ. հունվարի 8-ին ՀՀ Նախագահի կողմից վավերացվում է «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

ՀՀ կառավարության 1993թ. հունիսի 2-ի N 291 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային վարչությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչության վերանվանելու, վարչության կանոնադրությունը, կենտրոնական ապարատի կառուցվածքը եւ Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի պետությունը պատկանող փաստաթղթերի մշտական պահպանումն իրականացնող արխիվների համակարգը հաստատելու մասին:

ՀՀ կառավարության 1994թ. փետրվարի 9-ի N 72 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության արխիվների գրանցման կարգը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 1994թ. օգոստոսի 16-ի N 376 որոշումը՝ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի կազմում փաստաթղթերի ընդգրկման կարգի հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 1995թ. մայիսի 25-ի N 284 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետությունում արխիվային գործի եւ գործավարության կազմակերպման պետական հսկողության կարգը հաստատելու մասին»:

* Նախորդ (1920-1976թթ.) եւ (1977-1982 թթ.) ժամանակազրույթները տես «Բանբեր Հայաստանի արխիվները» հանդես, Երեւան, 1977թ., N 1 եւ 1983թ. N 2:

ՀՀ կառավարության 1996թ. սեպտեմբերի 26-ի N 536 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր արխիվային գործի վարչության կանոնադրության եւ ապարատի կառուցվածքը հաստատելու մասին»:

1997թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունում է «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» ՀՀ նոր օրենքը:

ՀՀ կառավարության 1998թ. ապրիլի 6-ի N 229 որոշումը՝ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի մասին»:

ՀՀ կառավարության 1998թ. ապրիլի 22-ի N 246 որոշումը՝ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 եւ 18 հոդվածների կիրառվումն ապահովող միջոցառումների մասին»:

(Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի փաստաթղթերի պետական հաշվառման կարգը, Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի պետական սեփականություն հանդիսացող փաստաթղթերի օգտագործման եւ հրապարակման ընդհանուր կարգը):

ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 13-ի N 501 որոշումը՝ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի պետական սեփականություն հանդիսացող փաստաթղթերի մշտական պահպանությունն իրականացնող պետական արխիվների համակարգը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 1998թ. սեպտեմբերի 18-ի N 573 որոշումը՝ «Պետական ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների լուծարման եւ (կամ) մասնավորեցման (սեփականաշնորհման) դեպքում Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի փաստաթղթերը պետական արխիվներ հանձնելու կարգի մասին»:

ՀՀ կառավարության 1998թ. սեպտեմբերի 18-ի N 577 որոշումը՝ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի փաստաթղթերը հատկապես արժեքավոր եւ հազվագյուտ ճանաչելու կարգը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 1998թ. հոկտեմբերի 29-ի N 671 որոշումը՝ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի ոչ պետական սեփականություն հանդիսացող փաստաթղթերի պահպանությունն իրականացնող, տնտեսական գործունեություն վարող ոչ պետական արխիվների արտոնագրման կարգը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի N 833 որոշումը՝ «Փաստաթղթերի՝ ըստ տեսակների, պահպանության ժամկետների նշումով ցանկը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 1999թ. մարտի 17-ի N 157 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. ապրիլի 22-ի N 246 որոշման մեջ փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին»:

ՀՀ կառավարության 1999թ. մարտի 18-ի N 163 որոշումը՝ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի ոչ պետական սեփականության ու հաշվառման նկատմամբ պետական վերահսկողության իրականացման կարգը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 1999թ. օգոստոսի 4-ի N 496 որոշումը՝ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի պետական սեփականությունն Հանրապետության փաստաթղթերի պահպանությունն իրականացնող պետական եւ գերատեսչական արխիվների պետական գրանցման կարգը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 1999թ. սեպտեմբերի 4-ի N 559 որոշումը՝ «Փաստաթղթերի փարձագիտական արժեքավորման եւ Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի կազմում ընդգրկման կարգը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 22-ի N 168 որոշումը՝ «Պահպանման ժամկետները լրացած, պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող, գաղտնագերծված տեղեկությունները պետական արխիվ Հանձնեիու կամ ոչնչացնելու կարգը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 2002թ. մարտի 6-ի N 202 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության համակարգի բարեփոխումների ու մի շարք պետական մարմինների վերակազմակերպման մասին»:

ՀՀ կառավարության 2002թ. Հունիսի 13-ի N 847-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. սեպտեմբերի 18-ի N573 որոշման մեջ փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին»:

ՀՀ կառավարության 2002թ. Հուլիսի 4-ի N 973-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության արխիվային գործի գործակալության կանոնադրությունը եւ կառուցվածքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 22-ի N 1406-Ն որոշումը՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին»:

ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 12-ի N 1499-Ն որոշումը՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»:

ՀՀ կառավարության 2003թ. մարտի 20-ի N 291-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. օգոստոսի 22-ի N 1406-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու եւ սեպտեմբերի 12-ի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՀՀ կառավարության 2003թ. Հունիսի 17-ի N 818-Ա որոշումը՝ «Արխիվային ծառայությունների կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության լուծարումն ապահովելու մասին»:

ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի N 999-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության արխիվային գործի գործակալությունը վերակազմակերպելու մասին»:

ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 21-ի N1063-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. օգոստոսի 22-ի N 1406-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»:

**ДОКЛАД НИКОГАЙОСА АДОНЦА ЧИТАННЫЙ НА
СЪЕЗДЕ ИНОРОДЦЕВ
(ноябрь, 1905г.)**

Крупный историк, арменовед Никогайос Геворгович Адонц помимо трудов, посвященных истории армянского и соседних народов, написал ряд исследований, освещающих проблемы Армянского вопроса. Ниже публикуемый доклад, /Национальный Архив Армении, личный фонд Геворга Мелик-Каракозова (1873-1940гг.) ф.502, оп. 1, д.103, лл.1-6/ прочитанный им на съезде инородцев в ноябре 1905г., является кратким курсом истории армянского народа с древнейших времен до 1905 года, и связана с ведением местного самоуправления на Кавказе.

**Соня Мирзоян
Алвард Газиян**

ДОКЛАД

Едва-ли найдется другая из индо-европейских наций, к числу которых, как известно, принадлежат армяне, которая с самого начала своей истории очутилась бы в столь невыгодных условиях. Заняв территорию, нуждающуюся в обороне со всех сторон, нация принуждена была вести вечную борьбу за свою самостоятельность, за свою самобытность. По временам ей удавалось преодолеть препятствия и развернуться в сильную державу, но неблагоприятное географическое положение Армении, лежащей между странами, постоянно выдвигавшими могущественные, конкурирующие между собою державы: Персии и Рима, Сассанидов и Византии, Арабов и Византии, истощало ее силы в неравной борьбе. Роковым моментом в истории не только Армении, но и всей Передней Азии, является разведение двух родственных племен: армян и другого народа индо-европейской расы-персов-на почве религиозной, с принятием армянами христианства и персами ислама; после этого порывистый натиск монгольских народностей, не имея более оплота против себя, обрушился на Персию, Армению и Малую Азию и проник в Европу, уничтожая всюду плоды тысячелетней цивилизации. Наступила мрачная эпоха для армян: вместе с потерей политической самостоятельности нация сильно сократилась, вследствие непрерывных поголовных избиений, совершавшихся монголами и вызывавшихся этим переселений; с принятием же монголами ислама, история армян превратилась в сплошной мартиролог за христианство. Казалось бы армяне должны были исчезнуть при таких условиях существования и слившись с покорителями. Но самоотверженная преданность христианской религии и глубоко внедрившаяся в сознании народа основы христианской культуры спасли армян, поддерживая в них надежды на лучшее будущее. В одно время, когда появились в Азии крестоносцы, блеснул луч надежды. Образовавшееся тогда в Киликии армянское царство приняло участие в их миссии, но борьба кончилась

печально не только для крестоносцев, но и для армян, поплатившихся в этой борьбе своим самостоятельным царством. Это было в 14-м столетии. После этого армянам не удалось создать самостоятельную политическую жизнь, если не считать мелких княжеств, просуществовавших в Карабаге (Елизаветпольской губ.) до 18-го столетия. Благодаря такому печальному положению вещей, взоры армян обратились на север и они воспрянули духом при появлении русских у кавказских ворот. Армяне надеялись, что с утверждением христианской русской власти улучшатся условия жизни на Кавказе. В естественном и заранее намеченном поступательном движении своем русские были встречаемы восторженно местным христианским населением. Достаточно сказать, что в рядах русской армии появился армянский легион, имея во главе известного епископа Нерсеса, будущего католикоса. Движение русских кончилось присоединением к России известной части армянской территории. В завоеванной области водворился сравнительно лучший порядок. С этого времени начинается умственное возрождение в восточной половине Армении, открываются школы, появляются издания и основываются просветительные учреждения. В деле просвещения и пробуждения национального самосознания среди армян громадную роль играли ученые конгрегации венецианских и венских Мхитаристов, которые занимались разработкой истории армян по грудам армянских рукописей, и изданием армянских литературных памятников, появление которых вызвало большой интерес в европейском ученом мире, благодаря тому, что они содержали богатый материал и по общей истории. В древнеармянской литературе оказались ценные памятники и переводы греческих классиков, из которых некоторые не сохранились в оригинале. Историческая культурность нации выразилась особенно в усиленном стремлении к высшему образованию. Появилась интеллигенция, которая служила проводником культуры и гражданственности на Кавказе.

Настали 60-ые годы. Они нашли свой отзвук и в армянской интеллигенции: Назарьянц и Налбандяни, друг Герцена, положили начало новым веяниям в армянской жизни и литературе. Благодаря деятельности преемника их, покойного публициста Арируни, эти новые веяния сделались достоянием всего мыслящего армянского общества. Стремление к образованию, к переустройству своей жизни на новых началах захватило все слои армянского народа. Армянские провинции покрылись сетью народных школ для детей обоего пола, образовались общества с широкими образовательными задачами, появились газеты, журналы, целая литература; было положено начало постоянному национальному театру. Началась русско-турецкая война [18] 77-78 гг. под флагом освобождения христиан. Турецкие армяне восторженно встретили русские войска, ожидая от них своего освобождения из под тяжелого турецкого ига. Война окончилась 16-ой статьей Сан-Стефанского договора Россия требовала реформ в Турецкой Армении. Требование это было внесено в 61¹-ую статью Берлинского договора: реформы должны были быть введены под контролем великих держав, но они не пошли дальше бумажного признания. А между тем взоры всего армянского народа были обращены на обещанные реформы, на которые Турция ответила всевозможными мерами, направленным к искоренению, к ослаблению армянского элемента в Турции.

¹ В тексте ошибочно 16.- (С. М., А.Г.)

Со смертью Александра II резко изменилась политика русского правительства, как по отношению к армянам в России, так и армянскому вопросу в Турции. В русской Армении началась обрусительная политика в самой острой форме. Правительству казалось, что соседняя культурная нация-грузины уже совершенно поглощены церковным объединением и уничтожением всех самостоятельных национальных учреждений, и что это надо сделать также и с армянами, и потому оно все удары своей обрусительной политики направило главным образом на армян, сохранивших по его мнению еще слишком много самостоятельности: в автокефальной армянской церкви, в армянских школах и просветительных учреждениях правительство начало усматривать признаки сепаратизма. В попытках армян к улучшению положения своих братьев в Турции, оно начало подозревать стремление к восстановлению армянского царства. Была выдумана и приписана армянам идея о восстановлении великой Армении из русских, турецких и персидских провинций, несмотря на очевидный факт, что этнографическое распределение населения в этих областях не давало никакого повода к таким подозрениям. Начались жестокие преследования на два фронта: в русской Армении были закрыты школы и другие просветительные учреждения; начались ужасные гонения против деятелей партии "Дашнакцутюн", основанной в девяностом году с единственной целью осуществления реформ в Турецкой Армении-реформ, проектированных правительством Александра II-го. Все попытки великих держав к осуществлению этих реформ встречали неодолимые препятствия со стороны русского правительства. Когда английское правительство пожелало своим вмешательством приостановить резню армян в Турции в [18] 95 году, тогда русский министр иностранных дел, кн. Лобанов-Ростовский, заявил, что такое вмешательство в турецкие дела будет принято за *casus belli*². Резня была доведена до конца и стоила жизни сотне тысяч людей. Железная рука кн. Голицына легла своею тяжестью на все проявления армянской жизни; остальные чиновники почти все копировали своего сатрапа. Между тем кн. Голицын готовил новый тяжелый удар-закон об отобрании всех имуществ армянской церкви или вернее народа, так как армянская церковь крайне демократична, основана всецело на выборном начале, а в распоряжении ее имуществами постоянно принимали участие выборные представители народа. Фактическое осуществление этого закона вызвало повсеместное сопротивление народа с оружием в руках защищавшего свое достояние, свои права. Начались новые аресты, новые гонения. Армянофобство заполонило всю атмосферу. При таких условиях революционная партия "Дашнакцутюн" нашла необходимым распространять свою деятельность также на русскую Армению и выдвинуть свой террор против террора правительства.

Рабочее движение, начавшееся и окрепшее к этому времени в России, проявилось и в Баку; здесь армяне-рабочие, как культурный элемент, приняли также широкое участие в этом движении. Представители правительственной власти решили задуть народившееся освободительное движение: они прибегли к осуществлению неоднократно высказывавшейся ими ранее мысли-натравить татар на армян: началась гнусная полицейская провокация, и свершилось каиново

² Начало войны.- (С. М., А.Г.)

дело, которое и до сих пор продолжается по всему Закавказью с массой жертв с обеих сторон.

И в то время, когда все народы России на всевозможных съездах и митингах выясняют свои нужды и свои отношения к будущей, новой, России, все помыслы, все активные силы армянского народа направлены к одной цели, к одной задаче-к разрешению вопроса о самообороне, самозащите народа. При таких условиях армяне, шедшие всегда в первых рядах культурного движения на Кавказе, не могли естественно отзываться активно на современное движение в России. Единственный съезд представителей армян в Тифлисе, состоявшийся в марте текущего года, принял программы, в основу которой также положены все главные основные требования русского освободительного движения. Настаивая на самом широком местном самоуправлении, программа эта не выставила однако требования об автономии и сделала это вполне сознательно: при разноплеменности населения Кавказа, крайней пестроте этнографического распределения этого населения, отдельные части которого находятся на разных, резко, часто до взаимного непонимания, отличающихся друг от друга ступенях культуры, -вопрос об автономии для Кавказа является вопросом крайне сложным, запутанным и требующим для своего разрешения серьезного предварительного изучения и продолжительной совместной культурной работы народов Кавказа.

Когда будет исполнена эта работа, когда взаимное понимание и сознание общности интересов сделается достоянием всех, по крайней мере главных народов Кавказа, тогда, и лишь только тогда, требование автономии Кавказа может сделаться общим жизненным лозунгом края.-

ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԵՐԱՀՍԿԻՉ ԻՍԱՀԱԿ
ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վանի ազատագրումից երեք օր անց, 1915թ. մայիսի 7-ին ռուսական հրամանատարութիւնը Վանի եւ նահանգի ազատագրված գավառների ժամանակավոր նահագապետ է նշանակում հայ ազգային-ազատագրական շարժման ակնավոր գործիչ, քաղաքի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանութան կազմակերպիչներից եւ ղեկավարներից մեկին՝ Արամ Մանուկյանին (Սարգիս Հարությունյան):

Մայիսի 8-ին, Արամի հրամանով, կազմվում են նահանգային կառավարման մարմիններ՝ նահանգային խորհուրդ եւ վարչութիւն, տնտեսական մարմին, քաղաքապետարան, ոստիկանութիւն, դատարան, դատախազութիւն եւ այլն:

Վերը նշված մարմիններում ընդգրկվում են ոչ միայն արեւմտահայ, այլեւ արեւելահայ մտավորականներ: Ա. Մանուկյանը՝ մարդկանց ղեկավար պաշտոնների նշանակելիս, առաջնորդվում էր ոչ թե նրանց կուսակցական պատկանելութեան սկզբունքով, այլ այդ անձանց մասնագիտական ունակութիւններով եւ կարողութիւններով:

Նորաստեղծ, կառավարման գրեթե փորձ չունեցող, հիմնականում հայերով համալրված Վանի հայկական իշխանութիւնը, երբեմն այդպես էին կոչում նահանգապետութիւնը, գերծ չէր թերութիւններից: Դրանց բացահայտմանն ու վերացմանն էր ուղղված ընդհանուր քննչութեան վերահսկիչ Իսահակ Տեր Ղազարյանի ստուգայցի համառոտ հաշվետվութիւնը: Նշենք, որ Վանի նահանգապետարանում ընդհանուր քննչութիւնն իրականացրել է բոլոր մարմինների հսկողութիւնը:

Ռուբեն Սահակյան
պատմական գիտութիւնների
թեկնածու

ՀԱՄԱՌՈՏ ԶԵԿՈՒՑՈՒՄ

ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 1915թ. ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ 8-Ը
ԿԱՏԱՐԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

08 Հուլիսի 1915 թ.
Վան

1. Ընդհանուր գիտողութիւններ

Վերահսկողութեան ենթարկվելիք մարմինների գործունեութեան հետ ծանոթանալու ժամանակ ես այն գիտումով եմ առաջնորդվել, որ այդ մարմինները ծնունդ են առել ու գործում են շատ բացառիկ պայմաններում, Վանի շրջանային վարչութիւնը իր ստորագաս աջակից մարմիններով նոր է կազմակերպվում, որ պատրաստված, հմուտ պաշտոնյաների մեծ կարիք կա, որ գործն օրեցօր մեծանում, բարդանում է, որ պատերազմի արհավիրքներն այս երկրում կրկնապատիկ են եւ ժողովրդին օգնելու, նրան հանգստացնելու, կյանքին բնական ընթացք տալու պայմանները ավելի քան բացառիկ են:

Հիշյալ պայմանները ստիպելու են բոլոր հիմնարկութիւնների ծառայողներին հարկավոր զգուշավորութիւնը ներկա կացութեան հանդեպ, ազնվութիւն եւ բարեխղճութիւն, բացի այդ բացառիկ պայմանների առաջադրած պահանջների հնարավորութեան չափ բավարարելու համար կրկնապատիկ աշխատասիրութիւն:

Յուրաքանչյուր նորակազմ մարմնի գլխավոր վարիչ պատասխանատու ու պաշտոնյա պիտի լինի ստեղծագործող ու ձեռներեց անձ, որ կարողանա դեռեւս առանց որոշ, հաստատված օրենքի եւ հրահանգի աշխատող մարմնի թե գործունեութեան սահմանները կանոնավորել եւ թե առավել եւս բեղմնավոր դարձնել այդ մարմնի գործունեութիւնը: Այդ մարմինների նախագահները վրա պիտի ծանրանա ըստ իս նաեւ իրենց ենթակա պաշտոնյաներին աջակցելու հսկողութեան տակ

առնելով նրանց պատրաստել նոր պաշտոնի համար, ներշնչել նրանց իրենց պաշտոնի եւ ներկա բացառիկ դրուժյան լրջությունը եւ նրանց եւս ընդհանուր կազմակերպչական գործին աջակից դարձնել:

Վերոհիշյալ նկատալույթներով առաջնորդելով, վերահսկողության եւ ենթարկել հիշյալ մարմինները եւ ընդհանրապես նկատել հետեւյալ պահասները:

Նախ հիշյալ երեք մարմիններն էլ ծնունդ են առել եւ գործունեության կոչվել առանց իրենց գործունեության համար ունենալու որոշ մշակված օրինագիծ եւ իմանալու, թե ի՞նչ իրավասության եւ պարտականության սահմաններ ունեն: Մարմինների բոլոր պաշտոնյաներն էլ այժմ չգիտեն թե ամեն մեկը ի՞նչ իրավասության տեր է, ի՞նչ գործեր, ի՞նչ չափերով իրեն ենթակա է, իրեն կից եւ իրենից բարձ իշխանության հետ ի՞նչ հարաբերություն է ունենալու:

Երկրորդ. Գործունեության համար որոշ օրինագիծ չլինելը պատճառ է դարձել, որ այդ մարմինները համաձայն իրենց նախագահների կամ մյուս պաշտոնյաների անձնական հասկացողության այնպիսի գործեր վճռեն եւ քննության ենթարկեն, որ ավելի շուտ այլ մարմինների իրավասության տակ են, ուստի եւ գործերի խճողում է առաջացել:

Երրորդ. Այս խճողման հետեւանքն եղել է այն, որ մարմիններից մեկը իր գործունեությունը չափազանց ընդլայնել է ի հաշիվ մյուսի /տնտեսական մարմինը/, երկրորդը գրեթե չեզոքացրել է /քաղաքապետարան/, երրորդը դարձել է առաջին երկուսի եւ մնացյալ մարմինների գործակատար եւ իր բուն գործունեությունը գրեթե թողել է /ստիկանություն/:

Չորրորդ. Թեեւ նահանգապետությունից հրահանգված է եղել առայժմ վարվել օսմանյան օրենքներով, որոշ հապավումներով եւ փոփոխություններով, բայց որովհետեւ այդ մարմինների պաշտոնյաներն իրենք հաճախ լավ ծանոթ չեն եղել այդ օրենքներին կամ տաճկական [թուրքական] օրենքը ներկա գրության անհամապատասխան է եղել, ուստի այդ մարմինների կատարած գործողությունների մեջ առավելապես անձնական տրամադրություն- հասկացությունն է իշխել եւ առաջացել է քառսային վիճակ:

Հինգերորդ. Մարմիններում պաշտոնակատարները ընդհանրապես /բացառություններ կան/ ավելի շուտ կարծես մարմնի մեջ որոշ ժամերում ներկա գտնվելու պարտականությամբ եւ ուժիկ ստանալու իրավունքով ծանրաբեռնված անձինք են: Այն սրտացավությունն ու անձնագոչությունը, որ հատկապես ներկա բացառիկ պայմանները պահանջում են պաշտոնյաներից, շատերի մեջ չկան:

Վեցերորդ. Մարմինների նախագահները մեծ մասամբ հարկավոր խստությամբ աջալուրջ հսկողություն չեն ունեցել պաշտոնյաների գործունեության, ճշտագահության վրա: Պաշտոնեի [պաշտոնյայի] ուշ կամ շուտ գործի գալը, գործը ժամանակին կատարելը կամ ուշացնելը կանոնավոր գնահատության չի արժանացել: Եթե պաշտոնյաները ցայսօր էլ չեն կարողացել որոշել իրենց անելիքի սահմանները, դրա պատասխանատուն մասամբ մարմնի նախագահն է:

Յոթերորդ. Գրեթե բոլոր մարմիններում էլ իշխողը թղթեր գրելը [եւ] ստանալն է, քան գրածները աշխատել իրագործելը: Առհասարակ մարմինները միջոցներ չեն ձեռք առնում հանուն ամենախիստ պատժի, տուգանքի իրենց արած [ընդունած] որոշումները իրագործելու, ուստի եւ հասարակությունը կարծես սովորել է լսել սպառնալիք եւ չհավատալ, որ այդ սպառնալիքը կկատարվի:

Կան եւ այլ երկրորդական պահասներ, որոնց համար առտեղյան հարկավոր նկատողությունն եմ արել եւ, որոնք հատուկ են առանց հսկողության եղող մեն մի մարմնի:

Ըստ երեւութի, այսպիսի բացառիկ ժամանակում եւ պայմաններում գործող մարմինների առաջ այսպիսի պահանջներ դնելը տեղին չէ, սակայն, ըստ իս հենց այդ բացառիկ պայմաններն են, որ ստիպում են պահանջել նոր ծնված հիմնարկությանը լավ հիմքերի վրա դնել հենց սկզբից, ապագա բարդությունների առաջն առնելու:

Այս ընդհանուր դիտողություններից հետո կարելու է համարում ասածներին լուսաբանութան համար հիշյալ մարմինների գործունեությունից մի քանի օրինակներ բերելու:

2. Քաղաքապետարան

Մանրամասն ծանոթանալ Քաղաքապետարանի գործունեության հետ դժվար է, որովհետեւ քաղաքային վարչությունը իր ժողովներին արձանագրությունների մատյան չի պահել: Ունի միայն վարչական որոշումների տոմար, որից երեւում է, թե վարչությունը սակացույցից ավելի վաճառողներին տուգանքի է ենթարկել եւ դանձել, թեեւ ոչ բոլորը շինվող խանութների եւ տներից տուրքեր է ստացել: Ունի իր ճարտարապետը, որը հատկապես նոր շինվող տներից ու խանութներից առնվելիք տուրքն է որոշում: Գործունեության երկու ամսվա պատկերը ցույց է տալիս, որ քաղաքային վարչությունը գրեթե առավելապես տուգանքների եւ քաղաքին պատկանող ծառերի վաճառումով է զբաղվել, [եւ] վերջերս միայն սկսել են ուշք դարձնել քաղաքի բարեկարգության վրա՝ ճանապարհները հարթել տալ, փոքրիկ կամուրջներ շինել տալ եւ այլն: Վարչությունն ինքն էլ խոստովանում է, որ անելիք այժմ քիչ ունի, որովհետեւ եկամուտները պակասել են, եղածներն էլ իրենց իշխանությունից հանել են, իսկ առանց գրամի ոչինչ անել չի կարելի:

Սույն գրության կցում եմ քաղաքի կալվածքների ցուցակը¹, կազմված 4-ին հուլիսի 1915թ. եւ տաճկական օրենքով հօգուտ քաղաքի առնվելիք տուրքերի ցուցակը², կազմված 3-ն հուլիսի 1915թ.: Այս ցուցակներից երեւում է, որ քաղաքապետարանի մուտքը բավականին մեծ կլինի, եթե թե՛ տուրքերի դանձումը կանոնավոր լինի եւ թե՛ խլած կալվածքների շահագործումը վերսկսելու միջոցներ ձեռք առնվեն:

Քաղաքապետարանը մայիսի 8-ից մինչեւ հունիսի վերջը մուտք ունեցել է 42359 զրշ. [ղուրուշ], որպիսի գումարը դանձվել է սպանդանոցների շենքերի, խանութների տուրքերից, Քեշիշ Գյոյ, Սիկա եւ Տոնիա լճերի ջրերի վաճառումից, ծառերի վաճառումից տուգանքներից եւ այլն: Ծախք նույնքան ժամանակամիջոցում եղել է 6837 զրշ. [ղուրուշ]: Ծախքեր եղել են՝ 1) դիակներ վերցնող բանվորների, 2) դիվանական ծախքերի, 3) չբավոր մարդկանց թաղելու պատանի, 4) ծառերը գնահատելու համար վարչության երկու անգամ ստացել են 390 զրշ. [ղուրուշ] /օրական գումար ել եւ մտից հունիսի 6, նո. 12/, նույնպիսի նպատակի՝ 60 զրշ. [ղուրուշ] /տե՛ս հունիսի 9, N13/, 5) փողոցները մաքրող բանվորների, 6) դիակներ թաղելու եւ անկարգ փողոցները նայելու, կառքի վարձ 132 զրշ. [ղուրուշ] /տե՛ս հունիսի 26, N33/: Քաղաքապետարանը իր գործունեությունը կանոնավորելու համար սույն տարվա հունիսի 25-ին N124 գրությամբ նահանգային վարչությանն իր գործունեության [մասին] մի կանոնագիր է ներկայացրել, բայց քաղաքապետարանի մինչեւ այժմ կատարածի եւ կանոնագրի ուրվագծի մեջ մեծ տարբերություն կա: Ըստ իս, քաղաքապետարանը ամբողջ քաղաքի բարեկարգության, կանոնավորման պատասխանատուն է, [եւ] պիտի ունենա եվրոպական քաղաքի կազմակերպություն մոտավորապես, ուստի անհրաժեշտ է վերակազմել այդ մարմինը հիմնավորապես, հատկապես քաղաքի ֆինանսները կանոնավորել, մուտքի աղբյուրները ավելացնել, կազմել հատուկ հանձնախումբ այդ նպատակի համար, վարչության ենթակա:

Քաղաքապետարանն ունի ճարտարապետ եւ երկրաչափ: Ըստ իս, վերջինս հնարավորություն ունի կատարելու նաեւ առաջինի պաշտոնը, այդ պաշտոնի [պաշտոնյայի] կատարածը քիչ բան է եւ պատասխանատու էլ չէ: Քաղաքապետարանն ունի եւս 5 գործակատարներ, որոնք ոստիկանների պաշտոն են կատարում, ըստ իս, սրանց էլ կարելի է կրճատել, որովհետեւ ոստիկանատունը կարող է տրամադրելի անել ոստիկաններ, մանավանդ, եթե այժմ մի քանի ոստիկաններ ավելացնենք:

¹ Նշված ցուցակը բացակայում է:-Ռ.Ա.

² Նշված ցուցակը բացակայում է:-Ռ.Ա.

Ընդհանրապես պետք է ուժեղացնել թե պաշտոնյաների եւ թե մանավանդ ել եւ մուտքի հսկողութիւնը:

3. Տնտեսական մարմին

Ցայսօր տնտեսական մարմինը ժողովներ չի ունեցել: Նախագահն իր բարի Հայեցողութեամբ վճռել է գործերը իր պատասխանատվութեամբ: Այս մարմինն եւս չունի օրինագիծ եւ կառավարվում է իր անդամների, առավելապես նախագահի հրահանգներով: Մարմինը 9-ն մայիսի սուլն տարի, նահանգային վարչութեան գրած մի թղթով Հայտնում է, որ իր գործունեութիւնը պիտի լինի՝ 1. կենտրոնացնել վանի շրջանի եկամուտները եւ նորեր ստեղծել, 2. կենտրոնացնել շրջանի արմտիքի եւ զանազան ուտելիքների եկամուտը:

Եկամուտները կազմում են՝ 1) քոլոր մարմիններին տրվող պաշտոնական խնդրագրերի, կապալի, մուրհակի եւ պայմանագրութիւնների թղթերի եկամուտները: Այդ թղթերի գներն են՝ 8-80 կ[ոպեկ]: 2) Լքված արտերի, ծառերի ատաղձի վաճառք:

3) Տասնորդի եկամուտ՝ 100-ին՝ 12½:

Առաջներում վաճառելի [վաճառվող] ծառերի գները որոշելու համար հատուկ պաշտոնյաներ են վարձել, ցուցակներ կազմել տվել, 8-10 օր աշխատել են, մոտ 1000 զրշ. [դուրուշ] վարձ ստացել, բայց այդ աշխատանքն ապարդյուն է անցել:

Փանձապահի մոտ գտնվող դրամարկղի մատյանից հանում եմ հետեւյալը նմուշի համար.

Մուտք

N45, պ[արոն] Արմենակ Եկարյան¹ եւ լքված տան մը վարձ -----108դրշ [դուրուշ]

N39, 119 գերանների արժեք, Հովհաննիսյան եղբայրներ -----540 " "

N50, 37 բարդիներու [արժեքը] -----1080 " "

N52, Խաչիկ Փասպարյանեն այգիի մը վարձք -----60ռ[ուբլի]

N46, Արծրուն Միրզախանյանին հերկելու արտոնագիր -----20ռ[ուբլի]

Ելք

Մայիսի 14, 300 խնդրագրերի ծախու չեկ -----7ռ[ուբլի]

50կ[ոպեկ]

" " պ.Տեր Հակովբյանի միջոցով դրական պիտույք ---133 զրշ. [դուրուշ]

35[պիաստ]

" " երկու[սու]կես օզմե թուղթ -----85 " "

Մայիսի 23, պ.Տեր-Հակովբյանից դրական պիտույքի արժեք -----139, 25 " "

" " Ղեւոնդ Շալճյանին նուշնպիսի բանի համար 262 " "

" " " " " " " " " " 70 " "

Մայիսի 28, Արշավիր Փանքանյանին 12 տակառ[ի] Հյուսնութեան համար 225

զրշ. /զուրուշ/:

" " " " Փաբրիել Թորգոմյանին 2 օրվա վարձ քննչութեան -----180 " "

Եւ այլն:

Թե ելքի, թե մուտքի մասերում չեն նշանակված, թե ի՞նչ պատշաճ ստացագրերով են տրված թղթերը, համապատասխան թղթերը պահվում են առանձին եւ այն էլ ոչ որոշ համարների տակ եւ ոչ կանոնավոր:

Առհասարակ այս մարմնում եւս դիվանական մասն անկանոն է, մատյանները կանոնավոր չեն, թղթերը ցրված են զանազան պաշտոնյաների մոտ:

Այս մարմնի մեջ ամենազովար հարցը աճուրդները, վաճառքի հարցն է: Թե եւ աճուրդները որոշելու համար կա հատուկ մարմին, որի անդամներից են

¹ Արմենակ Եկարյան (1870-1925), Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: 1915թ. ապրիլի 7-ից մինչեւ մայիսի 4-ը Վան քաղաքի Այգեստան թաղամասի Հայ բնակչութեան ինքնապաշտպանութեան կազմակերպիչներից եւ ռազմական ղեկավար:-Ռ.Ս.

պ.պ.քաղաքապետը¹ եւ երկրագործական մարմնի նախագահը², սակայն վերջիններս աճուրդների ժամերին հնարավորութիւն չեն ունենում ներկա լինելու: Իրենք իսկ՝ վարչութիւն անդամներն ասում են, որ 1000 ղուերուշանոց ծառերը մի քանի հարյուրով են վաճառվում, կամ եթե վաճառում են 20 ծառ, գնողը կտրում է 40-50: Հնարավորութիւն չկա լավ հսկելու:

Քանի որ տնտեսական մարմնում է կենդրոնացած վանի շրջանային եկամուտների ամենամեծ մասը եւ քանի որ այդ եկամուտների կանոնավորումից է կախված մյուս մարմինների եւ հասարակական հիմնարկութիւնների կանոնավորումը, ուստի անհրաժեշտ է հատկապէս այդ մարմնի հսկողութիւնն ուժեղացնել, եկամուտների աղբյուրները կանոնավորող Հանձնախումբ կազմել եւ համոզված եմ, որ եկամուտները կիրկնապատկվեն եւ հասարակական գումարները կանոնավոր կգանձվեն:

4. Ոստիկանութիւն

Ոստիկանութիւնն եւս ցայսօր կառավարվում է առանց օրինագծի եւ հրահանգների: Ոստիկանութիւնում ծառայում են տաճկական [օսմանյան] իշխանութիւն ժամանակ ոստիկանութիւն մեջ ծառայածներ, որոնք իրենց հիշողութիւն եւ փորձութիւն հիման վրա աշխատում են գործերին ընթացք տալ: Իսկ յուրաքանչյուր պատասխանատու պաշտոնյա գրեթե յուրատեսակ է բացատրում խնդիրը: Որոշել ներկա ոստիկանութիւն գործունեութիւնը ճշտորեն դժվար է, որովհետեւ ոստիկանութիւնն այժմ առավելապէս այս ու այն հիմնարկութիւն, երբեմն էլ պաշտոնյայի հանձնարարութիւններ կատարող է, մի բան, որ ոստիկանապետարանն իսկ խոստովանում է:

Հարցուփորձից այն եզրակացութիւն եկա, որ ոստիկանութիւն կազմը ընհանրապէս չգիտե իր անելիքը: Ոստիկաններից մեծագուշտ մասը առանց հասկանալու ի՞նչ պարտականութիւն է ծանրանում ոստիկանի վրա, այլ տեղ գործ չգտնելով մտել են ոստիկան, իրենց հացը հայթայթելու: Ներկա ոստիկանները անգիտակ են իրենց պաշտոնին: Հարկավոր են լավ պատրաստված ու պահանջկոտ ոստիկանապետ եւ շրջանապետ, որ կարողանան հետզհետե պատրաստել, կրթել ոստիկաններին, հասկացնել իրենց պարտականութիւնները:

Հսկողութիւն եւ պատշաճ հրահանգների բացակայութիւն պատճառով ոստիկանապետարանը եւ շրջանապետութիւնները տարբեր ձեւով են վճռում հարցերը, տարբեր ձեւով պահում դիվանը, մատյանները: Հատկապէս տուգանքների խնդրում քառս է իշխում շրջանապետութիւններում: Ոմանք տուգանք են առնում եւ տեղական ոստիկանական պահանջների համար գործադրում, ոմանք [տուգանք] չեն առնում, ոմանք այս չափով, մյուսները նույն բանի համար այլ չափով են առնում, ոմանք իրենց իրավասու են համարում այս ու այն հարցը վճռելու, մյուսները դիմում են ոստիկանապետարանին:

Քաղաքի մաքրութիւն, կանոնավոր հսկողութիւն, կարգապահութիւն խնդիրներում ցայսօր ոստիկանատները շատ քիչ բան են կատարել, որովհետեւ մի կողմից այլ հարցերով են զբաղված եղել, մյուս կողմից հսկողութիւնը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար առանձին աշխատանք չեն թափել:

Քաղաքի ճաշարանները, փոքրը, շուկաները, մանավանդ սպանդանոցները, փողոցները մաքրութիւն տեսակետից շատ աննախանձելի վիճակի մեջ են, գարշահոտութիւնը, աղբը, աղտոտութիւնները թափված են հրապարակներում եւ ոստիկանութիւնը խիստ միջոցներ ձեռք չի առել տուգանելու, պատժելու հանցավորներին:

Այս ամենի մեղավորը միայն ոստիկանութիւնը չէ, որովհետեւ նրա վրա նախ պակասում է խիստ հսկողութիւնը, երկրորդ՝ ոստիկանութիւնը ցայսօր չունի համազգեստ եւ զենք, առանց որոնց թե ժողովուրդը, թե մանավանդ ուսուցիչները

¹ Քաղաքապետը Պետրոս Մոզլյանն էր: -Ռ.Ա.

² Երկրագործական մարմնի նախագահը կամ տեսուչը Խաչիկ Զենոբյանն էր: -Ռ.Ա.

նրանց ուստիկան չեն համարում եւ չեն լսում: Ուստիկանների ուղևերեն չիմանալն եւս վերջին դեպքում բավական նպաստում է ուստիկանի գործունեության թուլացմանը: Անհրաժեշտ է օր առաջ նրանց համազգեստ եւ ղենք տալ, որոշ տեղերում պահակներ նշանակել եւ հսկողությունն ուժեղացնել նրանց վրա:

Ասածներին պարզաբանության համար բերեմ մի քանի օրինակներ ուստիկանության գործունեությունից:

Ուստիկանապետը շրջանապետերից կազմել է ժողովներ, ուր քննության են առել ուստիկանության տարազը, ղենք ունենալու հարցը եւ այլ մանր հարցեր: Ուստիկանապետի գրություններից. N3 գրությամբ խիստ պատիժ է սպառնում անասունները եւ շարժական իրերը հափշտակողներին: N4 գրությունից երեւում է, որ գաղտնի ուստիկանություն է եղել, բայց հուլիսի 1-ից դադարել է գոյություն ունենալուց: N42 գրությամբ 50-ական փայտե ծեծի է ենթարկում երկու հոգու: Այլ ուստիկաններ եւս ծեծի գոյության ունենալը հաստատում են: N63 [հրամանով] արգելվում է գինի վաճառել, բացի սպաներից:

Ուստիկանապետարանը 1915թ. մայիսի 8-ից [մինչեւ] հուլիսի 1-ը ունեցել է մուտք եւ ելք.

Մուտք

Տուգանք օդի ծախելու համար -----10 դրչ [ղուրուչ]

" " գինի " " " " -----100 " "

" " փայտ գողանալու " " -----15 " "

" " գողացած կենդանու " " -----108 " "

եւ այլն: Ընդամենը -----1382,20 [ղուրուչ]

Քաղաքապետարանի հաշվին գանձված տուգանքներ -----316,20 [ղուրուչ]

Տնտեսական խորհրդի հաշվին ծախած փայտեղեններ -----614 [ղուրուչ]

Հունիսի 1-13-ը ունեցել է -----596,10 [ղուրուչ]

Ելք մայիսի 8-ից հունիսի 1-ը

Նվեր ուստիկանին աչալը շրջանի համար -----10 դրչ. [ղուրուչ]

Բ. շրջանապետության մանր ծախքերի համար -----40 [ղուրուչ]

Դ. " " " " " " -----60 " "

Ուստիկանապետին կառքի դրամ մայիսի 8-16-ը -----206 դրչ. [ղուրուչ]

Շրջանապետարաններից մի քանիսի մեջ տուգանքներ են առել, մի քանիսում՝

ոչ:

Ե. շրջանապետության մեջ քաղաքի մաքրության համար շրջանապետը իր բարի հայեցողությամբ ժողովել է 600 դրչ. [ղուրուչ], [որից] 36 դուրուչը ծախսել է, [իսկ] մնացածը դեռ մնում է շրջանապետի մոտ: Իմ գնալուց հետո միայն գրավոր հայտնել է ուստիկանապետին: Այստեղ տուգանքներ են առել 7-62 1/2 դրչ. [ղուրուչ]: Ինչպես լսեցի, Ե. շրջանի շրջանապետը, տնտեսական մարմնի կարգադրությամբ փայտեղեններ, ծառեր է վաճառել, գումարը հանձնել մարմնին եւ դրա համար ստացել ծառայության վարձ: Այն սենյակները, ուր տեղավորված են ուստիկանները, առավելապես կահավորությունից զուրկ են: Բոլոր ուստիկանատներում էլ դիվանները պահվում են ոչ մի օրինակ եւ անխնամ:

Ընդհանրապես վերոհիշյալ մարմինների գործունեության արդյունավետության եւ կանոնավորման համար անհրաժեշտ է որոշ օրինագիծ, հրահանգ տալ նրանց, մարմինը կազմակերպելու վարչական ընդունակություն ունեցող կառավարիչներ նշանակել, սրտացավ պաշտոնյաներ ունենալ եւ խիստ հսկողություն նշանակել մարմինների ամենատեսակ գործողությունների, հատկապես դրամական հաշիվների վրա:

Վան քաղաքի քաղաքապետարանի, տնտեսական
մարմնի եւ ուստիկանության վերահսկիչ՝ Իսահակ Տեր-Ղազարյան

ՀԱԱ, Ֆ.Պ-24, ց. 1, գ. 14, թթ. 169-176: Ինքնագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ
ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ 1919Թ.

1919թ. ապրիլի սկզբին Անդրկովկասում բրիտանական զինված ուժերի հրամանատարությունը, աչքի առջև ունենալով Անդրկովկասից հեռանալու իր ծրագրերը, ինչպես նաև համոզված լինելով, որ տարածաշրջանում չի կարող անվտանգություն նպաստել, համաձայնում է Կարսի եւ Շարուր-Նախիջևանի շրջանների կառավարումը հանձնել Հայաստանի Հանրապետության իշխանություններին:

Մայիսի 3-ին, անգլիական զեներալ Դեւինը եւ Երեւանյան զորաջոկատի հրամանատար Դրոն, ստորագրեցին Նախիջևանի շրջանի բնակչությանն ուղղված հրաման՝ շրջանը Հայաստանի Հանրապետությանը միացնելու եւ տեղում կարգ ու կանոն հաստատելու մասին¹:

Մայիսի 12-ին, հայկական զորքերը սկսում են շարժվել դեպի Շարուր-Նախիջևան, իսկ հաջորդ օրը, ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ա.Խատիսյանը, Նախիջևանի նահանգապետ նշանակված Գ.Վարչումյանը, զեներալ Դեւին, մի քանի անգլիացի սպաների եւ վարչապետի օգնականների հետ, մեկնում են Նախիջևան:

Մի քանի օր շրջելով երկրամասում եւ ծանոթանալով տեղի իրավիճակին, Ա.Խատիսյանը մայիսի 19-ին ՀՀ կառավարության նիստում զեկուցում է Շարուր-Նախիջևանի դրուժյան մասին:

Մայիսի 20-ին հայկական զորքերը մուտք են գործում Նախիջևան, ապա՝ շարժվում Զուլֆա:

Հայկական իշխանությունները երկրամասում սկսում են կառավարման մարմինների եւ միլիցիայի ձեւավորումը, հայ գաղթականության ընդունումն ու տեղավորումը:

Սակայն, Հայաստանին հանձնելով երկրամասը, անգլիացիներն արգելում են Հայաստանի Հանրապետության կառավարությունը երկրամասում բավականաչափ զորք կուտակել եւ մահմեդական բնակչությանը զինաթափել: Նման պայմաններում, հայկական իշխանությունը տեղում կրում էր ձեւական բնույթ:

Զգուշացնելով երկրամասում ազգային համերաշխություն հաստատել, հայկական իշխանությունները զերծ էին մնում մահմեդական բնակչության ցանկացած անօրինական գործողություններին հակազդելուց եւ այդ իսկ պատճառով չեն կարողանում չեզոքացնել նրանց պարագլուխներին: Օգտվելով այդ հանգամանքից, տեղական ուժերը, հուլիսի կեսին, Թուրքիայի եւ Ադրբեջանի գործուն օժանդակությամբ, հակահայկական ապստամբություն են բարձրացնում եւ կրկին տեղ դառնում երկրամասին:

Հրապարակվող փաստաթղթերը Նախիջևանի նահանգապետ Գ.Վարչումյանի եւ Գողթան գավառի կոմիսար Ա.Մելիք-Մուսյանի նամակներն ու զեկուցագրերն են՝ երկրամասում ՀՀ կառավարման մարմինների ձեւավորման, ՀՀ իշխանությունների նկատմամբ տեղի ազգաբնակչության վերաբերմունքի, հայ գաղթականության վերադարձի ու տեղավորման, նախապատրաստվող հակահայկական ապստամբության մասին:

Փաստաթղթերից երեքը (N 2, 3, 5) հրապարակվել են «Նախիջևան-Շարուրը 1918-1921թթ.», փաստաթղթերի եւ նյութերի ժողովածուում, սակայն, հիմնախնդիրն ամբողջական ներկայացնելու նպատակով, դրանք ընդգրկվել են նաև ներկայացվող Հավաքածուում: Փաստաթղթերը տպագրվել են պահպանված բնագրերի տեքստերը:

Արմինե Եփրեկյան

¹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.171, թ.28:

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԳՎԱՐՇԱՄՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝
ԵՐԿՐԱՄԱՍԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

[25 մայիսի 1919թ.]
Նախիջևան

Ձեր գնալուց երկու օր հետո ես գնացի թուրքերի ազգային խորհրդի նիստին, ուր քննվեցին հետևյալ հարցերը.

1. Քաղաքում գտնվող թուրք միլիցիոներների - 20 հոգու պաշտոնի ընդունելը եւ նոցա ուժիկի խնդիրը: Ազգային խորհուրդը խնդրում էր բոլորին ընդունել եւ ուժիկը տալ մայիսի 1-ից, առարկելով, որ իրենք փող չունեն: Ես խոստացա:

2. Նահանգապետի օգնականի եւ մյուս պաշտոնյաների ընդունելութեան խնդիրը. այս հարցն էլ որոշվեց այսպես. նախ՝ ոչ ոք չհամաձայնվեց օգնական լինել: Սուլթանովն էլ հրաժարվեց, իսկ մյուս պաշտոնյաների համար որոշվեց, ով որ ուզում է ծառայութեան մտնել, պետք է նահանգապետին խնդրագիր ներկայացնի: Այդ մտքով թուրքերեն եւ հայերեն հայտարարութեան տարածեցինք: Բայց ոչ ոք ցանկութեան չհայտնեց մտնել պաշտոնի, բանից դուրս է գալիս, որ գիշերը քաղաքում թուղցիկներ են տարածել թուրքերեն, որ ով որ կհամաձայնվի հայկական կառավարութեան մոտ ծառայութեան մտնի, անմիջապես կսպանվի: Իրենք էլ ժողով են ունեցել եւ որոշել են բոլորտ անել, գլխավորապես հաց չծախել, այդ որոշումը նոքա հայտնել են շրջանի բոլոր թուրքերին:

Պետք է ասել, որ այստեղ երկու խումբ կա, որոնք դեմ են մեր իշխանութեանը: Մեկը՝ մի խումբը, իբր թե տեղորիստներ են, իրոք ղոչիններ, որոնք անցյալում այստեղ այն դերն են կատարել, ինչ որ մեր մաուզերիստները եւ մեր գալը նոցա գործունեութեանը խանգարում է:

Ես գաղտնի հսկողութեան եմ դրել եւ շուտով պարագլուխներին կբանտարկեմ ու կաքսորեմ, տեղական թուրքերն էլ եթե ազատվեն դրանցից՝ կուրախանան:

Երկրորդը մի խումբը նույնպես ազդեցիկ թուրքեր են, որոնց մոտ մեծ քանակութեամբ հայերից թալանված գույք կա, նրանք էլ վախենում են, որ իրենցից բոլոր ապրանքները հետ կառնենք:

Վատ դեր է խաղում եւ Ջաֆար Կուլի խանը, իսկ Ռահիմ խանը, ոչինչ, լավ է, կարծես հաշտվել է դրութեան հետ եւ ավելի բարեկամբար է վերաբերվում:

Այստեղ, իրենց թուրքերի մեջ երկու միմյանց թշնամի խմբեր կան, որոնք իրար դեմ կատաղի կռիվ են մղում եւ նույնիսկ սպանութեաններ են տեղի ունեցել: Դրանցից մեկը բոլորովին հակառակ է մեզ, իսկ մյուսը կարծես ուզում է մեզինց օգտվել, այն ժամանակ, երբ մյուսները բոլորտ էին հայտարարել, նրանց շեֆերը եւ գինվորականները դիմեցին ինձ, պաշտոն խնդրեցին, ես իսկույն ընդունեցի գլխավորին, որը համարվում է առհասարակ ամենաազդեցիկը եւ որից բոլորը վախում են, վերջին ինձ մոտ իբրեւ առանձին հանձնարարութեան պաշտոնյա, իսկ մյուսներին տեղավորեցի զանազան հիմնարկութեանների մեջ անպատասխանատու պաշտոններով:

Այստեղ դրութեանը համարյա ամեն օր փոխվում է, մի օր կարծես բարեկամանում են, մյուս օրը թշնամանում: Երեկ Սուլթանովը, ազգային խորհրդի նախագահը, դիմեց, որ իրեն վերցնեմ ինձ օգնական, մյուս անգամ [էլ խնդրեց վերցնել] մի անգրագետ նախկին ստարշինայի¹ գավառական կոմիսար եւ մի երեք հոգու էլ ուչաստկովի² կոմիսար, այդ ծրագրով ամբողջ ադմինիստրացիան³ պետք է թուրքերից կազմած լիներ: Եթե դրա վրա ավելացնենք եւ այն, որ քաղաքի

¹ Ավագ
² Տեղամաս
³ Վարչութեան

միլիցիայի պետք է լինի թուրք, մնում էր, ուրեմն, Հայ միայն մի նախնադաս պետք է: Ես մերթեցի, նախ պատճառաբանելով, որ արդեն ուշ է, ձեր համաձայնությունը ես հայտարարում եմ և արդեն այդ տեղերը, ուր առաջարկում եք դուք, բռնված են թուրքերով, իսկ իմ օգնականին խնդրել կարող է միայն պառլամենտը որոշել, իսկ դա էլ դժվարանում է, որովհետև երբ դուք պառլամենտի խոստովանելի հետո հրաժարվեցիք, ես անմիջապես Հայտնեցի Երեւան այդ մասին եւ խնդրեցի կառավարությունում եւ պառլամենտում այդ հարցը չմտցնել, այժմ երկրորդ անգամ այդ խնդիրը հարուցել դժվար կլինի: Նրանք դիմել էին անգլիական նախնադաս պետին, ես նույն բացատրությունը տվի նրան, նա համաձայնվեց ինձ հետ եւ ես կարծում եմ հարցը առայժմ փակված կարելի է համարել:

Բայց այդ բոլորը ունեցավ իր հետեւանքը, թուրք միլիցիաները, որոնց ես ընդունել էի, խմբովին հրաժարական տվին: Առհասարակ պետք է նկատեմ, որ մեր դրությունը շատ աննորմալ է, մենք իբրեւ հաղթողներ չենք մտել այստեղ եւ չենք կարողանում ուժեղ կերպով մեր կամքը թելադրել, մտել ենք իբրեւ բարեկամներ, բայց այնքան ուժ չունենք, որ նոցա հետ կտրուկ վարվենք, գեներալի* գալով այժմ այստեղ ունենք երկու ռոտա, մի դիվիզիոն 170 հոգով առանց արտիլերիայի, այդ բանը շատ վատ է ազդում, նամանավանդ նոքա միշտ հիշում են Դոլուխանովի նահանջը** : Այստեղ գոնե մի քանի ամսով պետք է մի սովիդ ուժ ունենալ, որի առաջ նոքա խոնարհվեն: Իրենց ուժերը՝ երկու թնդանոթ եւ 6 պուլիմյոտ նոքա կենտրոնացնել են Նախիւեւանի գավառի Սեյրիք գյուղում, ինձ հասած տեղեկությունները շատ տարբեր են, ոմանք սոցա գինվորական ուժը նույն տեղում հասցնում են 4000-5000, իսկ ոմանք էլ 500-600: Գեներալին խնդրեցի այդ ուղղությամբ ռազմաբանական կատարի եւ խոստացավ: Մեր կոնտրառազմակիցն⁵ ոչ միայն թույլ է, այլ չկա, ինձ ասել էին Երեւանում, որ այդ ճյուղը հանձնված է գինվորական իշխանությունը, որոնք այստեղ ներկայացուցիչ չունեն, իսկ ես չեմ կարող գաղտնի ագենտներ⁶ ունենալ, որովհետև դա կապված է ծախսերի հետ, որ ես իրավունք չունեմ անելու, այդ պատճառով խնդրում եմ թույլ տաք գոնե սկզբնական շրջանում ունենալ իմ ագենտներս եւ այդ գործին որոշ գումար հատկացնել: Ինձ թվում է, որ վերջի վերջո մենք մի քանի մարդ պետք է կաշառենք, ուրիշ կերպ այն պոլիտիկան, որ մենք ենք ուզում տանել, անկարելի է:

Ես ուղարկեցի Ձեզ մոտ պ.Չիլինգարյանին, որը մանրամասն բերանացի տեղեկություն կտա, ես այստեղ ուզում եմ կրկնել երկու բան՝ նախ Շահթախտում եղած անգլիական լեյտենանտ Ջոնսոնի գործունեությունից մասին, իհարկե, իբրեւ եռանդուն եւ օգտակար, հայտնել գեներալի. Բիչին եւ երկրորդ, մի քանի շքանշան ուղարկել, մեկ նրան, մեկ երկուսն էլ այստեղ. դա անհրաժեշտ է:

Անգլիական միսիան եկավ եւ ապրում է Ռահիմ խանի մոտ, դա մեզ համար շատ բացասական հետեւանք կունենա, ամբողջապես թուրքերի ազդեցություն տակ կլինի, դա այժմվանից է երեւում, միսիայի գլուխը մինչ այժմ ոչ ինձ եւ ոչ էլ գեներալի մոտ չի եկել:

Գաղթականներն արդեն սկսել են գալ, այս քանի օրս սպասվում է Ջանգեղուրի մոտ 25000 գաղթականություն, միջոցներ ենք ձեռք առնում նոցա ընդունելու, բայց ոչ ուժ ունենք, որ ապահովենք ճանապարհները եւ ոչ էլ հաց: Ծանապարհների ապահովություն համար ես տեղական ամենաազդեցիկ խաներից մեկին ժամանակավորապես նշանակել եմ այն շրջանի կոմիսար եւ հայտնել եմ, որ ճանապարհներին եթե մի բան պատահի գաղթականություն հետ, պատասխանատուն նա է, այդ խանին գաղթականներն էին բերել իրենց հետ:

Ուղարկում եմ Ձեզ Սուլթանովի խնդիրը եւ խնդրում եմ ինձ տեղեկացնեք նրա բարձրացրած խնդիրների վճռի մասին, որովհետև այդպիսի դիմումներ շատ կան:

⁴ Հետախուզություն

⁵ Հակահետախուզություն

⁶ Լրտեսներ

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 170, թ. 16-18: Բնագիր: Ինքնագիր:

N 2

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐԸ ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻՆ, ՆԱԽԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 մայիսի 1919թ.
Նախիջևան

N 246

Մրանով Հաղորդում եմ, որ այսօր ներկայացավ ինձ տեղիս քաղաքագլուխը եւ ողջունեց Հայերի մուտքը Նախիջևանի նահանգում, Հայտնելով տեղիս ազգաբնակչության եւ քաղաքային ինքնավարության խորին հարգանքը եւ պատրաստակամությունը հպատակություն հայկական ինքնավարությանը:

Նա խնդրեց պարզել քաղաքային ինքնավարության գրուկները:

Ես առաջարկեցի շարունակել իրենց գործունեությունը մինչեւ նոր քննությունները, միայն այն պայմանով, որ 8 թուրք ձայնավորների հետ նշանակվելու են քաղաքային ինքնավարության գործում նաեւ 8 Հայ ձայնավորներ:

Միաժամանակ նա խնդրեց քաղաքային ինքնավարության կողմից Հատկացնել 15.000 ռուբլի՝ քաղաքի հայկական թաղամասի ջրանցքը, որը կիսատ է մնացել, վերսկսելու:

Հայտնելով ի գիտություն, խնդրում եմ հարգել քաղաքային ինքնավարության խնդիրը, Հատկացնելով վերոհիշյալ գումարը, որը կգործադրվի իմ հսկողության տակ:

Նահանգապետ՝
Քարտուղար⁷

Գ.Վարչամյան

ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.171, թ.25: Բնագիր: Ձեռագիր:

N 3

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀՀ ՆԵՐՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅ
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ
ԻՐԱՎԻ ՃԱԿԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

29 մայիսի 1919թ.
Նախիջևան

Իբրեւ լրացումն իմ նախկին զեկուցումների, կարեւոր եմ համարում Հայտնել Ձեզ մի քանի տեղեկություններ:

Ինչպես գրել էի, այստեղ հասարակության մեջ երկու խմբեր կան, մեկը՝ թույլ, Հաշտվել է մեր տիրապետության հետ, ծառայության է մտնում եւ աշխատում է ամեն կերպ ցույց տալ իբրեւ մեզ բարեկամ: Այդ խմբակին ես աշխատում եմ ուժեղացնել:

⁷ Ստորագրությունն անընթեռնելի է:

Երկրորդ խումբը դա ամենաուժեղն ու ազդեցիկն է, դեմ է մեր քաղաքականությանն ու Նախընտրված Հայաստանին կցվելուն, ուժեղ պրոպագանդա է մղում մեր իշխանության դեմ ու հայտարարել է մեզ բոյկոտ:

Այդ խմբի ղեկավարը՝ Ջաֆար Կուլի խան Նախընտանսկին է: Վերջերս սա մի ժողով էր գումարել, ուր վճռել են մեզ տնտեսական բոյկոտ հայտարարել, ոչինչ չծախել եւ ամեն կերպ խույս տալ մեզ հետ հարաբերություն ունենալուց: Հիմնել են իրենց դատարանները եւ պատվիրել են՝ ոչ մի մոսուլման մեր դատարաններին ու իշխանությանը չդիմի: Տնտեսական բոյկոտը շատ ուժեղ կերպով տանում են: Ես Ագուլիսի եւ Օրդուբադի շրջանից գրություն ստացա, որով հայտնում են, թե վերջերս, իրենց անհասկանալի պատճառներով, թուրքերը ոչ մի փուլից ցորեն չեն ծախում, եւ, առհասարակ, հարաբերությունը փոխվել է:

Ջաֆար Կուլի խանի կարգադրությունը է Հայկական տների մեծ մասը քանդված, նա ակտիվ մասնակցություն է ունեցել կոտորածներին եւ այժմ էլ մեծ քանակությամբ հայերից թալանած ապրանք ունի: Սա ամենավտանգավոր մարդն է եւ հարկավոր է այստեղից հեռացնել:

Երկրորդ ամենավտանգավոր մարդը մեզ համար նրա որդին՝ Քալբալա Ալի խանն է: Մի քանի գյուղերում, ուր մենք ուզեցինք գյուղական տանուտերեր ընտրել, հակառակվեցին եւ հայտնեցին, որ հայկական կառավարությունը չեն ընդունի, մինչեւ որ Քալբալա խանից հրաման չլինի:

Գավառում գինված ուժերը բոլորը նրա հրամանատարություն տակ են գտնվում եւ, ինչպես երեւում է գաղթականների տված տեղեկություններից, նրանք շարունակ գինավարություններ են անում: Գավառում մենք դեռեւս թույլ ենք, այնտեղ չընթացնեն գինված խմբեր՝ իբր միլիցիոներներ, որոնք նույնպես գործում են Քալբալա խանի անունից եւ, ինչպես երեւում է, մինչեւ օրս էլ հաշվվում է գինվորական ընդհանուր հրամանատար:

Անցյալ օրը խոսակցության ժամանակ անգլիացիների ներկայությամբ ասաց. «Նախընտանի նկատմամբ կատարվեց մեծ անարդարություն: Նա պետք է կազմեր կամ Ադրբեջանին եւ կամ Պարսկաստանին, հայերը երբեք չեն կարող կառավարել այս երկիրը: Սա լինելու է երկրորդ Մակեդոնիա եւ շատ շուտով դժգոհ էլեմենտները չեթաներ են կազմելու ու հարձակումներ գործելու»: Այս վերջին նախագասությունն ասված էր շատ լուրջ ու տաք վիճաբանություն ժամանակ, այդ պատճառով ես ենթադրում եմ, որ դրա մեջ ճշմարտություն կա եւ երեւի այդ գործունեությունը նորքա կդիմեն:

Պետք է այստեղ ասեմ, որ եթե դա իրականություն դառնա, դրա ղեկավարը լինելու է Քալբալի խանը: Բացի այս բոլորից, ակտիվ պրոպագանդա է մղում մեր դեմ ու ամենավտանգավորն է, պետք է հեռացնել: Մենք մեր միջոցներով անկարող ենք անելու, որովհետեւ նա անգլիական միսիայի կցորդն է: Պետք է խնդրել Ալեքսանդր Իվանովիչին,^{***} որ դիմի անգլիացիներին՝ սրան այստեղից հեռացնելու: Կան այստեղ ուրիշ անհատներ մեր դեմ գործող, բայց նոցա մեր միջոցներով չեզոքացնելը շատ հեշտ է: Ես սպասում եմ մի փոքր ամրանանք, եւ ժողովուրդը հանգստանա, այն ժամանակ սրանց հետ հաշիվ կտեսնենք:

Նահանգի գրությունը շատ անմխիթար է. փաստորեն մեր իշխանությունը այնտեղ չկա: Անգլիական զորքերը գյուղերից քաշվեցին, տեղը մենք չկարողացանք գործասեր ուղարկել: Գեներալը հայտնեց, որ այդքան ուժեր չունի, չի կարող զորքերը ցրել: Միլիցիա չկա, տեղացի հայերը չեն մտնում ծառայություն: Կյանքը շատ թանկ է, իսկ ուժերը քիչ: Դրսից ոչ ոք չի գալիս, թեեւ ես գրել եմ Թավրիզ, Դարալագյազ, Ջանգեզուր ու Սիսիան, բոլորը հրաժարվում են ուժերից՝ քշված լինելով պատճառով:

Գավառը հանգիստ պահելու եւ գաղթականության մուտքը ապահովելու համար ես ամեն մի շրջանից ուժեղ, ազդեցիկ թուրքերի կանչում եմ, պրիստավ կամ հասարակական կոմիսար եմ նշանակում շրջանի պահպանությունն ու գաղթականների ճանապարհի ապահովությունը հանձնում եմ նրանց, հայտնելով, որ ամեն մի դեպքի համար պատասխանատուն իրենք են: Ենթադրվում էր մինչեւ այժմ ոչ մի դեպք տեղի չի

ուկնեցել, չնայելով, որ արդեն 10.000-12.000 գաղթականութուն է եկել, վերջիններս վկայում են, որ ճանապարհները ապահով են, պաշտոնյանները իրենց ուղեկցում են ու գյուղութուններ տալիս: Այս սիստեմը կախված է որոշ ծախսերի հետ, պետք է նրանց ուժերի տամ, իսկ դա ինձ հանձնված սմետի մեջ չկա: Ես, ի նկատի ունենալով դրութունը, իմ երաշխավորութամբ արել եմ, հույս ունենալով, որ դուք, պարոն մինիստր, կհաստատեք այդ: Պաշտոնյանները նշանակել եմ ամսի 20-ից: Մայիսի 18-ին Սիսիանից վերադարձող գաղթականների վրա նախընտանի սահմաններում թուրքերը հարձակվել էին: Սպանել էին 7 մարդ, 4-ին վիրավորել եւ 3 [մարդ] անհայտ կորել, տարել էին 12 եւ 2 ձի: Մենք ոչինչ չկարողացանք անել, նախ՝ որ գեներալը ուժ չունենալու պատճառով զորք չկարողացավ ուղարկել, իսկ ես՝ միլիցիա: Քննութունը կատարում են:

Մեր ուղբուկ կուրսը օրեցօր ընկնում է, դառել է 30 [ուղբուկ], եւ ժողովուրդը չի ընդունում: Խնդրում եմ շտապեցնել КАЗНАЧЕЙСТВО-ի⁸ բացումը:

Փողերս վերջացել են, փող չկա մայիսի ուժերի լրիվ բաժանել[ու], դա մեր գործին եւ հեղինակությանը կվնասի:

Ձանազան մինիստրությանց ծառայողները գալիս են առանց փողի, ստիպված եմ լինում ես օգնելու:

Խնդրում եմ, գրութուններին ու պահանջներին ավելի ուշադրութամբ վերաբերվեք:

Նահանգապետ՝ Գ.Վարչամյան

ՀԱԱ, Ֆ. 201, ց.1, գ.171, թ.28-29: Բնագիր: Ինքնագիր:

N 4

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Գ.ՎԱՐՇԱՄՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍՄԱՆԱՍՅԱՆԻՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

30 մայիսի 1919թ.
Նախիջեւան

Սիրելի Սարգիս

Այս անգամ ուզում եմ քեզ ոչ պաշտոնական նամակ գրել, մասնավոր նամակով Հայտնել այն կարիքների եւ հակասութունների մասին, որ այստեղ զգացվում է:

Ես չեմ ուզում նկարարգել այն հիմար գրության մասին, որի մեջ ես ընկա այստեղ առաջին 6 օրը, մենակ, առանց զորքի ու միլիցիայի, ես միայն հանդիսատես էի լինում, թե ինչ անցանկալի գործողութուններ են տեղի ունենում այստեղ եւ թե որքան ես անուժ եմ, այդ մասին մի անգամ երեւի կպատահենք, կխոսենք:

Սկսենք խնամատարության մինիստրութունից. ամեն օր Հարյուրավոր գաղթականութուն է գալիս նախընտանի շրջանի գյուղերը ու Շարուր, մեր ագմինիստրացիան ամբողջովին զբաղված է նրանց կերակրելով, ճանապարհելով ու տեղավորելով, մինիստրության ագենտները, ինչպես օրինակ Շարուրում, անփորձ, անձեռնահաս մարդիկ են: Նախընտանում Սողոմոնյանը լավ է, բայց նա էլ զբաղված է միայն ճաշ [տալով]: Բոլոր կայարաններում թափված է գաղթականութունը, սոված, մերկ, էս բոլորի հոգսը տանում եմ ագմինիստրացիայի միջոցով եւ իմ փողերով: Գլխավոր լիազոր Մակարյանը մի քանի ժամով եկավ գաստրոլի ու վերադարձավ, այնինչ նրա գերակատարութունը այստեղ անհրաժեշտ է եւ ինձ թվում

⁸ Գանձապետարան

է, որ նրան Երեւանում անելու գործ չունի, եւ միշտ այստեղ պետք է գտնվի: Շարուրի Խանուխար գյուղում որբանոց կա 200 որբերով, պետք է դրա մասին մտածել:

Ամբողջ նահանգում մի հատ անասնաբույժ չկա, իսկ դրա կարիքը շատ է զգացվում, չկա բժիշկ: Նախիջեւան ուղարկել են բժիշկներ Հիվանդանոց բանալու, եւ ես ստիպված եմ դրանց համար ոչ միայն բնակարան ճարել, այլեւ մահճակալներ, ծառայողներ, հաց, աթոռներ, սեղաններ եւ հագար ու մի կապրիզները կատարել: Իսկ այստեղ պետք է ասեմ, որ ոչ մի բան չկա եւ ոչինչ չի ճարվում:

Եկել եմ փոստ-հեռագրատան ծառայողները, հետները ոչինչ են բերել, մինչեւ անգամ թողթ ու թանաք, այդ բոլորը ես եմ տալիս, փող չունեն, ես եմ ավանս տալիս: Սեղան չեն կարողանում ճարել, որ գրեն: Փոստային մարկա, հեռագրական անդորրագիր չունեն, մի խոսքով ոչինչ չեն բերել, ինչի են եկել այդ պայմաններում, ես չեմ հասկանում:

Այստեղ եւ Զուլֆայում բավականին պետական ապրանքներ է մնացել, ես բոլորը գրանցեցի, մեծ քանակութեամբ հեռագրական թել կա ու ցեմենտ:

Կարգադրել եմ, ում մոտ որ պետական իրեր գտնեն, կոնֆիսկացիա անեն:

Քաղաքի դեղատանը ռեկվիզիցիա արի եւ հանձնեցի Հիվանդանոցին:

Շարուրի համար դատավոր, քննիչ մինչեւ հիմա չկա, թեեւ արդարադատութեան նախարարը խոստացել է նշանակել:

Казначейство-ի շինութիւնը այստեղ մնացել է կահարասիով, բայց մինչեւ հիմա ֆինանսների մինիստրը մարդ չի ուղարկել եւ դանձարանը չի բացել, իսկ դա շատ անհրաժեշտ է, առանց դրան գործել շատ ու շատ դժվար է:

Մանաս[յան], պետք է լուրջ ուղադրութիւն դարձնել ծառայողների վրա, այստեղ գալիս են, մտնում ծառայութեան, մի շաբաթ հետո չեն հավանում, թողնում ու գնում: Մեկին ես ստիպված եղա բանտարկելու, բայց մյուսները փախան: Ինձ թվում է, պետք է մի որոշ սիստեմ մշակել, որ եթե մի ծառայող ինքնակամ թողնում է, հեռանում, նրան ոչ մի պաշտոնով եւ ոչ մի տեղ այլեւ չպետք է ընդունել: Այդ մասին պետք է հայտարարել, թե չէ գաստրոլիորների նման շրջում են, դրանից գործը կաղում է:

Որպեսզի դահլազ չտանեմ, առայժմ բավականանում եմ այսքանով:

Քո Գ.Վարչամյան

ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.171, թ.26-27: Բնագիր: Ինքնագիր:

N 5

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ
ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ԵՐԿՐԱՄԱՍԻ
ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ԱՆՀԱՋՈՂ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

25 Հունիսի 1919թ.
Նախիջեւան

Ամսույս 12-ին թուրք ագենտներից մեկը հայտնեց ինձ, Բուլղան գյուղում տեղացիները պահած ունեն մարագում երկու թնդանոթ, մի գնդացի է սնարյադներ: Որոշեցինք դիմել խուզարկութեան: Գործի ղեկավարութիւնը հանձնվեց Երեւանից եկած կոնտրադպեղի⁹ պետ Խան-Կոտուրսկուն: Գյուղը գտնվում [է] կայարանից մոտավորապես 4-5 վերստ հեռավորութեան [վրա] եւ ունի 150 տուն բնակիչ:

13-ին ժամը 5-ին պորուչիկ Կոտուրսկին գավառական կոմիսարի օգնական թուրք Կենգերլինսկու եւ 35 զինվորների հետ ճանապարհվեց դեպի վերոհիշյալ գյուղը:

⁹ Հակահետախուզութիւն

իսկ որպեսզի ոչ ոքի ուշադրութիւնը չգրավի նրանց շարժումը, լուր էինք տարածել, որ նրանք գնում են դիտելու մաքսատուներ: Պետք է ասել, որ այդ գյուղի մոտ, Արաքսի ափում ուռուց կառավարութեան ժամանակ գոյութիւն են ունեցել մաքսատուներ եւ կազարմարներ, որոնք այժմ քանդված են սահմանապահ պահակների համար: Գյուղին դեռ չմոտեցած՝ կոմիսարի օգնականը առաջ մտնում է գյուղը եւ հայտնում գյուղացիներին, որ Հանգիստ մնան, իրենք եկել են մաքսատուներ նայելու ու, առանց գյուղ մտնելու, հյուսիսային կողմից անցնում են դեպի մաքսատուներ:

Կոտուրսկին տեսնելով, որ գյուղացիները զինված են եւ թյուրիմացութիւն կարող է պատահել, որոշում է խուզարկութեան չգիմել:

Վերադառնալիս որոշում են գյուղի միջոցով անցնել, նախ, որ գյուղի միջով ճանապարհն ավելի կարճ է եւ, երկրորդ, որ գյուղումն էլ պիկետներ կան:

Խումբը երբ մոտենում է գյուղին, նկատում է, որ գյուղամիջում հավաքվել են մի խումբ մարդիկ: Կոտուրսկին, կոմիսարի օգնականը եւ մի միլիցիոներ առաջ են անցնում՝ իմանալու հավաքվելու պատճառը: Թուրքերը բացատրում են, որ նրանց երեխաները եւ կանայք վախենում են զինվորներից, ուստի խնդրում են գյուղի միջոցով չանցնել: Կոտուրսկին համաձայնում է եւ կարգադրում է անմիջապես հետ դառնալ:

Հենց որ մերոնք հետ են դառնում, թուրքերը նրանց հետեւից զալպ են տալիս: Բարեբախտաբար միմիայն մի ձի է վիրավորվում: Մերոնք առանց պատասխանելու վերադառնում են: Այդ առթիվ ես, Կոտուրսկին եւ շտաբի պետ Մուսայելյանը զիմեցինք գեներալ Շելկովնիկովին եւ խնդրեցինք համապատասխան միջոցներ ձեռք առնի՝ պատժելու այդ գյուղը: Գեներալը որոշեց վիրավորված ձիու փոխարեն պահանջել նորը եւ հանցավորներին 100.000 ռուբ. տուգանքի ենթարկել, միեւնույն ժամանակ պահանջել ներկայանալու գյուղի աղստակալներին:

Այդ գործին խառնվեցին Քայբալի խանը, նրա հայրը եւ մի քանի Նախիջևանի պատվավորներ: Մենք գեներալին խնդրեցինք ոչ մի զիջում չանել, նամանավանդ, որ նրանք զիմել էին մյուս թուրք գյուղերին, որ իրենց օգնեն եւ ստացել էին բացարձակ մերժումն, եւ ինձ հասած տեղեկութիւններից երեւում է, որ թուրք գյուղերում շարժում է սկսվել մեր օգտին, որ մեծամասնութիւնը հակառակ է դիմադրութիւն ցույց տալուն: Նրանք մի քանի անգամ զիմեցին ինձ եւ խնդրեցին միջնորդել ուր հարկն է՝ զիջելու, բայց ես մերժեցի: Իսկ գեներալը դժբախտաբար զիջեց, նույնիսկ հակառակ նրա դրած ուլտիմատումին, գյուղի պատվավորները չներկայացան:

Այդ դեպքը շատ բացասական ազդեցութիւն կունենա Նախիջևանի կառավարութեան նկատմամբ: Թուրքը այդ զիջումը վերագրում է մեր թուլութեան: Այդպիսի դեպքերը, անկասկած, գցում են մեր հեղինակութիւնը նրանց աչքում եւ դժվարացնում երկրի կառավարութիւնը: Իմ կարծիքով, ամեն ինչ կարելի է ներել, բայց այդ դեպքը՝ ոչ, որ գործի վրա կրակ բաց անել, այն էլ թիկունքից, երբ բնակիչները թալանել էին Զանգեզուրի գաղթականներին, խլել էին 37 ձի, ջորիներ եւ 5 հոգի գերի էին վերցրել:

Ես ուղարկել էի գավառական կոմիսարին թուրքաց ազգային խորհրդի կողմից 2 ներկայացուցիչ եւ 3 բարձր պաշտոնյաներ այդ գործը խաղաղ միջոցներով վերջացնելու, բայց նրանք դիմադրել էին եւ թույլ չէին տվել նույնիսկ ներկայացուցիչներին գյուղ մտնելու:

Ես խնդրեցի գեներալից տալ 50 զինվոր մեր 40 միլիցիոներների հետ ուղարկելու Քյուլանի: Նա ինձ մերժեց: Երկրորդ անգամ զիմեցի գրավոր, բայց նորից մերժումն ստացա: Ստիպված եղա երրորդ անգամ զիմելու եւ ասացի՝ եթե դուք չտաք, կզիմեմ գանգեզուրցիների օգնութեանը, նամանավանդ, որ նրանք հայտնել էին, որ եթե ես միջոցներ ձեռք չառնեմ, նրանք կաշխատեն իրենց միջոցներով գործը վերջացնել: Ի նկատի պետք է ունենալ, որ այդ ժամանակամիջոցում նույն գյուղացիները սպանել էին 3 գանգեզուրցիների եւ մի քանիսին թալանել: Վերջին կտրուկ զիմումից հետո վերջապես գեներալը համաձայնվեց տալ 50 զինվոր, որոնք միլիցիոներների հետ անմիջապես ճանապարհվեցին դեպի Քյուլանի: Դեռ չմոտեցած գյուղին՝ դուրս են գալիս գյուղի աչքի ընկնող մարդիկ եւ խնդրում են չպատժել, որ նրանք խոստանում

են կատարել պետութեան բոլոր պահանջները, կվերադարձնեն թալանած իրերը եւ կվերադարձնեն գերիներին: Քննութեան ընթացքում, որ այդ 3 հոգու սպանողները ոչ թե դրանք են եղել, այլ ուրիշ գյուղացիներ, որոնց դեմ արդեն միջոցներ են ձեռք առնված:

Շահախառնութեամբ երկու վաշտ զինվոր կա. մեր կողմից նշանակված է մի կոմիսար եւ 6 միլիցիոներ: Հարեւան թուրք գյուղացիները բառիս բուն նշանակութեամբ թալանում են կայարանի հարստութեանը՝ շալալ, երկաթեղեն եւ այլն: Կոմիսարը երբեմն անզոր է լինում խիստ միջոցների դիմելու, քանի որ թալանողները զինված են խմբով, իսկ զիմումները զինվորականներին՝ մնում են անհետեւանք: Ես նույնիսկ մի քանի անգամ թե՛ բերանացի եւ թե՛ գրավոր դիմել եմ միջոցներ ձեռք առնել, որոնք դարձյալ մնացել են անհետեւանք, այժմս էլ զինվորների աչքի առաջ թալանում են, իսկ նրանք անտարբեր նայում են եւ ոչ մի միջոցի չեն դիմում:

Ինձ համար մինչեւ հիմա չի պարզվում զինվորականների բռնած դիրքը Նախիջևանի նկատմամբ:

Պետք է ասել, որ այժմ Նախիջևանի շրջանում մասսայական ապստամբութեան թուրքերի կողմից անկարելի է եւ անհիմն, ինչպես եւ գրել էի առաջ: Այնպես որ գնդապետ Կարաքեչիչովի հեռագիրը ինձ համար միանգամայն անսպասելի էր, նախ՝ որ դա շատ հին էր եւ երկրորդ՝ բոլորովին անհիմն: Մեզ դա վաղուց հայտնի էր, եւ ես այդ մասին Երեւանում եղածս ժամանակ բացատրել եմ Դրոյին, ուստի այդ բանի առթիվ առանձին միջոցների չենք դիմել: Գնդապետ Կարաքեչիչովը այդ մասին իմացել էր պատահամբ, Ջանգեզուրի կոմիսար Հովսեփյանի միջոցով, որը Երեւանից գալուց նորաչենում լսել էր այդ բանը եւ խնդրել էր հայտնել գնդապետին:

Հեռագրում գրված էր, որ ապստամբութեան գլուխն է անցել Սուլթանովը, իսկ այսօր նույն Կարաքեչիչովը հեռագրում է, որ Սուլթանովը բանտարկված է, եւ նրա դեմ ոչ մի մեղադրանք չկա: Ինչպես կարելի է անձնական լուրերի հիման վրա պաշտոնապես հեռագրել եւ հետո հերքել: Նա խնդրում է ազատել, չգտնելով ոչ մի մեղադրական փաստ նրա դեմ:

Ես հեռագրեցի, որ ոչ մի պայմանով չազատել, այլ ուղարկել Երեւան: Սուլթանովը, անկասկած, վտանգավոր մարդ է եւ երբ մի անգամ բանտարկվել [է], այլեւս ազատել անկարելի է, պետք է աշխատել հեռացնել նրան Նախիջևանի սահմաններից:

Բուլղան գյուղի մասին, որ գրել եմ շիֆրով,¹⁰ հայտնված է եղել զինվորական շտաբին, իսկ այսօր նրանից ստացվեց հեռագիր «Оперативная сводка»¹¹ վերնագրով, որտեղ նկարագրված է նույն դեպքը առանց շիֆրի: Դա շատ անհարմար է: Մենք այստեղ հասկացել ենք, թե մաքսատուն ենք գնացել նայելու, իսկ նրանք հեռագրում են, որ գնացել են գեները խուզարկելու:

Այստեղի գրութեան մասին շատ բան կարելի է գրել, բայց ավելի լավ կլինի, եթե Դուք կանչեք Ձեզ մոտ պարուհիկ Խան-Կոտուրսկուն, որը կարող է մանրամասն տեղեկութուն տալ Ձեզ:

Նահանգապետ Գ.Վարչամյան

Ուղարկում եմ Ձեզ նովրոզովի եւ Ռզանեի մասին իմ գրութեան պատճենը՝ երկուսն էլ ուղարկված են Երեւանի բանտը, եւ խնդրում եմ, ոչ մի պայմանով բաց չթողնեք:

Գ.Վարչամյան

ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.171, թ.15-17: Բնագիր: Ձեռագիր:

¹⁰ Ծածկագիր

¹¹ Մարտավարական ամփոփագիր

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Գ.ՎԱՐՇԱՄՅԱՆԻ
ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝
ԵՐԿՐԱՄԱՍԻ ԼԱՐՎԱԾ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

11 Հունիսի 1919թ.
Նախիջևան

Իմ Երեւանում եղած ժամանակ դրուժյունը մի քիչ լարված է եղել: Թուրքերը բացարձակապես հայտնել են, որ չեն ճանաչում հայկական իշխանութիւնը, որի դրդապատճառներից մեկն է եղել պ.Շելկովնիկովի արած սխալ քայլը: Նա եղել էր անգլիական միսիայի գլխավորի մոտ եւ Քալբալի խանի ներկայութեամբ խոստացել էր վերադարձնել թուրքերից խլված գեներալը՝ 4 ատրճանակ եւ 2 մոսիւն հրացան, որը տեղիք էր տվել թուրքերին [դա] բացատրելու մեր թուլութեամբ: Քաղաքում եւ գյուղերում հատուկ մարզիկ հայտարարել էին, որ իբր թե Քալբալի խանը հրամայել է զինվել եւ սրանից հետո այլեւս կառավարութիւնը իրավունք չունի գեներալը խլելու, ուստի սկսում են բաց գեներալով շրջել քաղաքի փողոցներում: Գեներալի հրամանը՝ որ գեներալը վերադարձնել եւ այլեւս չխլել նորերը, մեր ազմիստրացիային շատ նեղ դրութեան մեջ էր գցել, բայց նոքա հայտնել էին, որ խլված գեներալը չեն վերադարձնի, իսկ եթե ինքը գեներալը վերադարձնի եւ թույլ տա ազատ կրելու, բոլորն էլ կհրաժարվեն ծառայելուց:

Նույն օրը, որ գեներալի խոստման վրա պետք է գեներալը վերադարձվեին, ես հասա Նախիջևան եւ բացատրեցի, որ դա անհնար է, քանի որ դա ոչ միայն մեր պրիստիժը կզցի նրանց աչքում, այլեւ միանգամայն հակառակ է ներքին գործերի պ.նախարարի վերջին հրամանին: Նա հայտնեց, որ դա անգլիական ներկայացուցչի պահանջն է:

Ես անմիջապես դնացի անգլիական ներկայացուցչի մոտ եւ մանրամասն բացատրեցի իրերի դրութիւնը, համոզեցի, որ դա անկարելի է, հասկացնելով, որ ոչ թե մեր նպատակը ժողովրդին զինաթափ անել [է], այլ առանց իշխանութեան թուլյութեամբ բացարձակ գեներալը կրելը արգելել: Իսկ ցանկացողները առանց խորութեան կարող են ինձնից իրավունք ստանալ: Նա խնդրեց ինձնից թույլ տալ միսիայի կողմից հայտարարել, որ ոչ ոք իրավունք չունի առանց թուլյութեամբ գեներալը կրելու, հակառակ դեպքում բոլորը կխլվեն: Ես, իհարկե, համաձայնեցի: Այդ բանը, իհարկե, թուրք ղեկավարներին դուր չեկավ, մանավանդ Քալբալի խանին, որը հայտարարել էր բոլոր մուսուլմաններին զինվել, համաձայն անգլիական միսիայի խոստման:

Ամսույս 9-ին, մի դեպքից հետո, որ միլիցայետի հրամանով հանված է եղել նախկին փոստատան սեղաններից մեկը, հրաման էր արձակված փակել բոլոր խանութները եւ համախմբվել Ջաֆար Կուլի խանի տան առաջ, որտեղից ամբոխին ղեկավարները ուղարկել էին անգլիական միսիային հայտնելու, որ եթե հայերը չդադարեն ռեկվիզիցիան, նոքա գեներալ կգրմեն: Միսիայի գլխավորը եկավ ինձ մոտ եւ հայտնեց այդ. ես պարզեցի, որ մեր կողմից ամբողջ ժամանակ գրավված են եղել միսիայն 4 կամ 5 սեղան, որոնք պատկանելիս են եղել նախկին պետական հիմնարկներին (չհաշված այն պետական գույքերը, որոնք մենք վերցրել ենք քաղաքային եւ նախկին Շուրայի**** պահեստներից), համենայն դեպս ես խոստացա առ ժամանակ դադարեցնել:

Այս բոլոր բարդութիւնները, բացի տեղական բնույթ կրելուց, կապ ունեն Դենիկիին եւ Ղարաբաղի շարժումների հետ: Ղեկավարներն ուզում են մի որեւէ խլրտում գցել, ուստի հայտարարել են գորահավաք (կամավորական): Երեւի ուզում են ցույցեր անել եւ հետո խնդրել Դենիկիինին, որ նա վերցնի իր հովանավորութեան տակ, կամ դաշնակիցներին ստիպեն, որ մեր կառավարութիւնն այստեղից հեռացնեն: Այդ բոլորը 8-10 մարդու գործ է, եթե նոցա չեզոքացնենք, ամեն ինչ կհանգստանա:

Քաղաքի մեր ուժը բավական է խիստ միջոցներ ձեռք առնելու համար, բանտարկելու ցեցերին, բայց ես վախենում եմ գավառից, որտեղ մեր գաղթականությունը նոր է տեղափոխվել եւ մենք անկարող կլինենք այս ուժերով ապահովել նոցա: Նրանցից մեկին (Հասան Քյազիմ օղլի), արդեն բանտարկել եւ ուղարկել եմ Երեւանի բանտը, որտեղ խնդրում եմ կարգադրելու խիստ պաշել: Նա համարվում է տեռորիստների գլխավորներից մեկը:

Պետք է հեռացնել նաեւ անպայման Քալբալի խանին: Խնդրում եմ միջամտեք, որ անգլիացիները իրենք ուղարկեն Երեւան, հակառակ դեպքում, ես ստիպված կլինեմ ուժ ստանալուն պես անմիջապես ձերբակալել:

Պետք է խնդրել Դրոյին ուղարկելու շատով խոստացած ուժերը: Ղզլբողազում^{***} սկսել են թալանել գաղթականներին, միջոցներ ենք ձեռք առել, բայց պետք է ասել, որ նույնը կատարվում է նաեւ թուրքերի նկատմամբ, այս երեւույթը բացատրվում է իբրեւ պատասխան այս կողմի թալանի:

Նահանգապետ Գ.Վարչամյան

ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.171, թ.22-23: Բնագիր: Զեռագիր:

N 7

ՆԱԽԻԶԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԳՈՂԹԱՆ ԳԱՎԱՌԻ ԿՈՄԻՍԱՐ Ա.ՄԵԼԻԻՔ-ՄՈՒՍՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՆԱԽԻԶԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Գ.ՎԱՐՇԱՄՅԱՆԻՆ՝ ԹՈՒՐԳԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

14 Հունիսի 1919թ.
Վերին Ազգային

Գաղտնի եւ շտապ

Օրգուբադ եկած Ազրբեջանի օֆիցերների¹² մասին գրել էի անցյալ անգամ:

Ամենահաստատ տեղեկություն ունեմ, որ այդ օֆիցերների մեկը (գուցե եւ օֆիցեր չէ) Սամար Բեգ անունով, իրեն հայտարարել է Շարուրի, Նախիջևեանի եւ Գողթանի գեներալ-գուբերնատոր եւ տրամադրության տակ ունի շատ մեծ քանակություն կովկասյան բռնեք, ասում են մի քանի միլիոն:

Ամսույս 11-ին Օրգուբադում տեղի ունեցավ մեծ ժողով. ներկա են եղել ինչպես շրջանի՝ Գողթանի, նույնպես եւ Նախիջևեան ու Շարուրի ամենահայտնի թուրք գործիչներ: Հաստատ գիտեմ, որ դրանց մեջ են եղել Յայլի, Նեհրամ, Նախիջևեանի, Ղարաչուխ գյուղերի ներկայացուցիչները: Ժողովի մանրամասնությունները գաղտնի են պահվում, ըստ լուրերի այնտեղ քննվել են ընդհանուր դրությունը, կազմվել է ապստամբության ծրագրեր եւ ռազմական մի շարք խնդիրներ: Մոտավոր ճշտությամբ հաղորդում են, որ ընդհանուր ապստամբության նախաձեռնությունը թողնված է Օրգուբադի եւ Նեհրամի վրա: Թուրք լրտեսների պատմածների եւ մի շարք երեւույթների տպավորությունների հիման վրա երկրի դրությունը պատկերանում է մոտավորապես հետեւյալ ձևով.-

Ազրբեջանը ծրագրում է ընդհանուր ապստամբություն նախիջևեանի նահանգում, այդ առումով նա բաց է թողել 25 միլիոն, գործի գլուխ է կանգնած մի խոշոր տաճիկ գեներալ: Նախիջևեանի գավառի մի քանի կետերում, ինչպես Օրգուբադում, Յայլիում, Նեհրամում, Շահթախում, Ջահրիում, Ենգիջայում եւ Վիդիայում կենտրոնացված են տեղական ուժեր տաճիկ օֆիցերների ղեկավարությամբ: Այս գործունեությունը սերտ կապ ունի Ղարաբաղում տեղի ունեցող դեպքերի հետ: Մտադիր են գրավել Մեղրիի (Գենվազի) եւ Գեղվաձորի շրջանները, վերացնել Ղափանը եւ Ջանգեղուրի՝ թրքությունը մի գծով կապել

¹² Սպաներ

Օրգուբազրի, իսկ մյուսով Զահրիի հետ: Այս շարժմանը նպաստելու էին շահակները, զոջաբեյլիցիները, դարադաղցիները եւ Մակվա թուրքերն ու քրդերը: Հարձակումը տեղի կունենա անակնկալ եւ միաժամանակ: Անգլիացիներից թուրքերը չէին վախենում, որովհետեւ տաճիկ ազենտները համոզել են նրանց, թե Անգլիան այժմ ամբողջապես զբաղված է Հնդկաստանում ապստամբութեամբ եւ ներքին խռովութեաններով: Թուրքերի (Նախիջեւանի նահանգում) մի մեծ հոսանք հակառակ է այս շարժմանը: Նրանք ամեն մեկը կնպաստեն Հայոց կառավարութեանը, թե այս վերջինս ցույց տա իր ուժը եւ դիմեր կտրուկ միջոցների: Սակայն հայերը դանդաղում են եւ շատերը այդ բանը նրանով են բացատրում, թե Հայաստանում ուժ չկա, մի ուշագրավ երեւույթ, որ խիստ նպաստում է հակահայկական պրոպագանդի հաջողութեանը: Հայասիրութեանից չէ, որ թուրքերի մի մասը ցանկանում է հանրապետութեան ամրապնդումը նահանգում եւ այս ուղղութեանը բռնողները կակառուցում են Աղբրեջանի հաջողութեանը եւ վախենում են ապագա կոտորածներից: Այդ իսկ պատճառով մի շարք թուրքական գյուղերի ներկայացուցիչներ հայտարարել են, որովհետեւ սկզբում իրանք շատ են տուժել, ուստի այժմ հերթը Օրգուբազրին է ու Նեհրամինը եւ իբր թե նախահարձակման գործը իրանց վրա են վերցրել օրգուբազրիներինը եւ ներհամցիները:

Օրգուբազրի «գեներալ-գուբերնատորը» այս քանի օրը Գողթանի հայերից պիտի պահանջե հպատակութեան եւ զինաթափութեան, ըստ երեւույթին սա կլինի սկիզբը ընդհանուր գործի: Օրգուբազրիները ենթադրում են, որ Ագուլիսը չի դիմադրի եւ չի էլ կարող դիմադրել: Իմ գլուխը գնահատված է 50000 ուրբի անձակ նիկոլաեւսի գրամով^{*****}:

Օրգուբազրիները համոզված են, որ Գողթանի միացումը Հայաստանի Հանրապետութեանը, իմ եւ Աշոտիս գործն է եւ եթե ես այստեղ չլինեմ, Գողթանն ընկած է:

Վերոհիշյալները պարզաբանելու համար կթվեմ մի քանի ճշտված տեղեկութեաններ.

1. Երեկ Օրգուբազրից Յայլի եւ գնում մի խումբ զինված թուրքեր, ինչ-որ «մեծավորի» առաջնորդութեամբ: Հասնելով Դաստակ եւ Աղա մեր պոստերին, մեր միլիցիոներներին հրամայում են շարք կանգնել եւ պատիվ տալ գեներալ-գուբերնատորին: Գերազաս ուժի առաջ մերոնք մասսամբ կատարում են այս հրամանը:

2. Երկու օր առաջ մի խումբ զինված թուրքեր խուզարկում են երեք երիտասարդ հայ ճամփորդների, փնտրելով գեներ ու նամակներ, ոչինչ չեն գտնում եւ ազատ են թողնում, հայտնելով, թե նահանգապետը հրամայել է ձերբակալել միայն Աշոտի մարդկանց:

3. Երեք օր է, որ թուրքական գյուղերում տեղ է ունենում ուժեղ մոբիլիզացիա եւ գեներերի ու ռազմամթերքների տեղափոխութեան դեպի Օրգուբազր:

4. Ամեն մի թուրքի վրա դրված է ցորենի տուրք, գանձվող ցորեններն առ այժմ հայտնի է, որ Օրգուբազր են փոխադրում եւ ամբարում գորքի համար:

5. Այսօր Յայլից Օրգուբազր մեկնեցին 150 հոգի զինված թուրքեր:

6. Մի շաբաթից ավել է, որ Օրգուբազր շուրջը գտնվող բարձրունքների վրա իրիկուններին ուղիղ ժամը 8^{1/2} լույսեր են երեւում, երբեմն 1, երբեմն 2 եւ երբեմն 3 անգամ, եւ տեւողութեամբ 2 րոպեից ոչ ավելի:

7. Յայլիի մոտ, մի բլրի վրա, ահա 4 օր է, որ անընդհատ մի պահապան է երեւում:

8. Պահապաններ են նշանակված եւ ուրիշ տեղեր, սակայն ամեն տեղ 1-2 մարդ:

9. Թուրքերի սովորական երթեւեկութեանը, հայերի գյուղերում, համարյա դադարած է:

10. Թուրքերի նախկին կռուկա վերաբերմունքը դեպի հայերը փոխվել է արհամարանքի:

11. Ագուլիսի թուրքերը, որոնք ինչպես ինձ, նույնպես եւ նահանգապետին [կ]գրեմամբս կոմիսարիատների հետ, այժմ ոչ մեկը մեզ մոտ չի գալիս:

12. Յայջի խանութպանները հեռացել են Ջուլֆայից:

13. Ագայի թուրքերը, որ սկզբում համաձայնվել էին Հայերի հողերում ցանած Հացը կիսել, այժմ հնձել են եւ չեն ծեծում:

14. Օրդուբադ ելումուտ ունենալու համար պահանջում է «գեներալ-գուբերնատոր»-ի հատուկ թույլտարութունը:

15. Մեղրիի տանող ճանապարհը միանգամայն կողպած է. իմ Գողթան գալու օրից նա բաց էր եւ ամբողջ գաղթականութունն այդ ճամփով եկավ Գողթան:

16. Օխչի եւ Շաբադին գյուղերի (գրանք Գողթանին սահմանակից են եւ գտնվում էին Ջանգեզուրի գավառում) թուրքերը Օրդուբադ էին գալիս, զինվում ու վերադառնում:

17. Քաջարանց Հայ գյուղը (միակ հայկական գյուղը Օխչիի մոտ), որ մինչեւ օրս թուրքական երկյուղ չէ գրացել, այժմ խիստ վտանգավոր է համարում իր դրութունը եւ նույնիսկ գաղթելու պատրաստութուններ է տեսնում:

18. Ջանգեզուրը, որ նույնիսկ խալիլյան օրերին անառիկ էր համարում, այժմ ինչ որ օգնության լուրեր ենք լսում:

Այս բոլորից հետո իմ եւ տեղի բոլոր ընկերների ընդհանուր համոզումն է, որ 1) թուրքերը շուտով կառաջարկեն մեզ ընդունել Ադրբեջանի հպատակութունը. 2) մի քանի օրից հետո կփակվեն մեր բոլոր ճանապարհները եւ կկտրվեն արտաքին աշխարհից. 3) կռիվն անխուսափելի է. 4) մեր թույլ կետերն են Ագուլիսը եւ Ագան. 5) պաշտպանողական դիրք բռնելու համար Ագուլիսի եւ Ագայի համար անհրաժեշտ է, առնվազն 300 հոգի դրսի ուժ (Գողթանի տեղական ուժը 300-ից ավել չէ). 6) 300 հոգի դրսի ուժ, անհրաժեշտ քանակությամբ ուղարկված, մեր եղածների հետ միասին կարող է Գողթանը պաշտպանել բավական երկար ժամանակ. 7) Գողթանը մատնված է սովի, մեր թույլ կողմերից մեկն էլ Հացն է:

Վերջացնելով նամակս, վերջին անգամ Հայտնում եմ, որ Գողթանի փրկութունը, մոտալուտ վտանգից, կախված է հետեւյալ երկու միջոցներից, կամ անմիջապես, մի քանի օրվա ընթացքում, պատկառելի ուժով տիրել երկրին, կամ էլ գոնե 300 հոգի օժանդակ ուժ ուղարկել, նույնպես առանց բոլոր կորցնելու, որ մենք հնարավորութուն ունենանք դիմելու ինքնապաշտպանության:

Հակառակ դեպքում կարող եք Գողթանի վրա խաչ դնել:

Գողթան գավառի կոմիսար Ա.Մելիք-Մուսյան

ՀԱԱ, Ֆ.200, ց.1, գ.212, թ.114-115: Բնագիր: Ձեռագիր:

Ծանոթութուններ

* Այստեղ եւ հետագայում խոսքը գեներալ Գ.Շելկովնիկովի (Շելկովնիկյան) մասին է:

** Խոսքը 1919թ. Հունվարին Շարուրից Հայկական զորքերի նահանջի մասին է:

*** Խոսքը ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ա.Խատիսյանի մասին է:

**** Խոսքը 1918թ. վերջին - 1919թ. սկզբին Նախիջևեանում գյուղացիներն ունեցած այսպես կոչված «Արաքսյա հանրապետության» մասին է, որին անվանում էին նաև Շուրա:

***** Լեռնանց Նախիջևեանի եւ Ջանգեզուրի միջև, որտեղով Ջանգեզուրից Նախիջևեան էին անցնում Հայ գաղթականները:

***** 1917թ. Հեղափոխութունից հետո նախկին Ռուսական կայսրության թղթադրամները ծակոտվում էին տարբեր մոնոգրամներով:

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ ԿՈԱԼԻՑԻՈՆ
ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՆՈՅԵՄԲԵՐ 1920թ.)**

1920թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում, ի թիվս այլ քաղաքական ուժերի, հայրենիքի պաշտպանության գործին լծվեց նաև Հայ ժողովրդական կուսակցությունը:

Հրապարակվող փաստաթուղթը ՀԺԿ Հայաստանի Կենտրոնական Կոմիտեի նամակն է, ուղղված կուսակցության Վրաստանի ԿԿ-ին: Այն հնարավորություն է տալիս նորովի մեկնաբանել միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության ավարտափուլում: Բացակայում է ամսաթիվը, բայց բովանդակությունից կարելի է ենթադրել, որ գրվել է 1920թ. նոյեմբերի 24-28-ը: Փաստաթուղթը պահվում է Հայաստանի Ազգային Արխիվում, Փ.Պ- 200, ց. 1, դ. 497, թ. 42-46: Ներկայացվող հարցի հետ չառնչվող փաստաթղթի վերջին մասը կրճատել ենք, որը ցույց է տրված բազմակետով: Տողատակի ծանոթագրությունները կատարվել են մեր կողմից:

Վանիկ Բաբաջանյան

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ**

[24-28. նոյեմբերի 1920 թ.]

Հայաստանի Կենտրոնական Կոմիտեն վաղուց արդեն հնարավորությունից զուրկ է եղել կապ պահպանելու կոմիտեի հետ վերջին քաղաքական իրադարձությունների հետեւանքով: Պատեհ առիթից օգտվելով հաղորդում ենք Ձեզ մի շարք տեղեկություններ, թե ի՞նչ դեր է կատարել մեր կուսակցության Հայաստանի Կոմիտեն վերջին ամսվա ընթացքում:

Անցյալ հոկտեմբերի 31-ի իր նիստում Կենտրոնական Կոմիտեն մշակեց մի Հուշագիր¹, որը միջկուսակցական² միջոցով որոշեց ներկայացնել Հայաստանի կառավարությանը (պատճեն ուղարկվում է):

Մի քանի օր անց ստացվեց Դաշնակցության Բյուրոյի պատասխանը այս Հուշագրին: Նա գտնում էր մեր պատճառաբանությունները կոալիցիայի անհրաժեշտության մասին անհիմն (ուրիշ կերպ, իհարկե, նա պատասխանել չէր կարող), բայց նա ընդունում է սկզբունքով կոալիցիան եւ դա կիրականացվի, երբ այլևս թշնամու հետ պատերազմել ներկա կառավարությունը անկարող կլինի:

Մյուս կուսակցություններից եւ ոչ մեկը սկզբում չարտահայտվեց հօգուտ կոալիցիայի: Սոցիալիստ-հեղափոխականները պահանջում էին, որ անմիջապես կառավարությունը փոխվի եւ կազմվի նորը, բայց ի՞նչ հիմունքներով, այդ չէին պարզել:

¹ Հուշագրում ՀԺԿ-ն առաջարկում էր շարունակել պայքարը արտաքին թշնամու դեմ, կազմել կոալիցիոն կառավարություն, պայմանով, որ ՀՀԴ-ն լինի փոքրամասնություն մեծվարչապետը լինի ոչ դաշնակցական, բոլոր կուսակցությունների (ՀՀ անկախությունը ընդունող) մասնակցությամբ պետական խորհրդի ստեղծում՝ բարձրագույն օրենսդիր մարմնի լիազորություններով, (տե՛ս ՀԱԱ, Փ. Կ-4033, ց. 7, դ. 21, թ. 3):

² Միջկուսակցական մարմինը ստեղծվել էր 1920թ. հոկտեմբերի սկզբին: Նրա մեջ ընդգրկված էին ՀՀԴ-ն, ՀԺԿ-ն, Հայ Ռամկավարների կուսակցությունը, Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցությունը (ՀՄԴԲԿ), Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը եւ Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը (ՍԴՀԿ):

Սոցիալ-դեմոկրատները³ ոչ միայն դեմ էին կոալիցիայի, այլ պահանջում էին մի որեւէ դաշնակցականի անձնական գերատուրա: Ռամկավարները նույնպես չէին պահանջում կոալիցիա, որովհետեւ մարդ չունեին Հայաստանում, ինչպես իրենք էին պատճառաբանում:

Բայց մի քանի օր անց միջկուսակցականի մեջ մտնող բոլոր կուսակցությունները Հանգեցին մեր եզրակացությանը կառավարության ձեւի մասին, իսկ պետական խորհրդակցության գաղափարը գանազան նկատառումներով չընդունեցին:

Ապա ստացվեց Բյուրոյի գրավոր պատասխանը մեր հուշագրին⁴, որով նրանք առաջարկում էին յուրաքանչյուր կուսակցությանը ուղարկել մեկական ներկայացուցիչ մասնակցելու Համար խորհրդակցական ձայնի իրավունքով կառավարության քաղաքական եւ գինավորական հարցերը քննելիս: Բացի դրանից դաշնակցականները պատրաստակամություն էին հայտնում տալ պատասխանատու պաշտոններ (ոչ մի նիստրական) գանազան կուսակցությունների ներկայացուցիչներին:

Մեր կուսակցության մեջ այս հարցի առթիվ ստեղծվեց երկու Հոսանք, որոնցից մեկը կանգնած էր հուշագրի պահանջների վրա, իսկ մյուսը առաջարկում էր որոշ լրացումներով ընդունել Դաշնակցության առաջարկությունը: Ի վերջո, կոմիտեն ձայների մեծամասնությամբ որոշեց առաջարկել, որ կուսակցությունների ներկայացուցիչները մասնակցեն խորհրդակցական ձայնի իրավունքով կառավարության բոլոր նիստերին բոլոր հարցերը քննելիս, այդ ներկայացուցիչները կազմում են Հատուկ մարմին իր սեփական գիվանով, նրանք իրավունք ունեն ծանոթանալու պետական բոլոր գործերին սկզբնական աղբյուրներից եւ իրենց ծախսերը ստանում են պետական գանձարանից:

Այս հակաառաջարկները ընդունվեցին բոլոր կուսակցությունների կողմից (բացի էսէններից) եւ հաղորդեցին կառավարությանը:

Մինչ այդ Դաշնակցությունը որոշեց ընդունել թուրքական գինադադարի պայմանները եւ, որպեսզի իր կրած լիակատար պարտության պատասխանատվությունը ձգի եւ մյուս կուսակցությունների վրա, որոշեց, փոխանակ հիշյալ հակաառաջարկները ընդունելու, ձեռնարկել անմիջապես կոալիցիոն կառավարության կազմություն: Այս նպատակով վարչապետի պաշտոնի թեկնածու Քաջագունին⁵ հրավիրեց իր մոտ Ա. Խոնդկարյանին⁶, Բ. Իշխանյանին⁷, Գ.Ջաղեթյանին⁸ եւ Հ. Մելիքյանին⁹ եւ առաջարկեց նրանց որպես կուսակցությունների ներկայացուցիչների մեկական պորտֆել: Գլխավոր պորտֆելները (վարչապետ, արտաքին գործերի, ներքին գործերի) Դաշնակցությունը պահում էր իր ձեռքում, ինչպես նաեւ երկրագործությունը, մնացած պորտֆելները ստանում էին մյուս կուսակցությունների ներկայացուցիչները այս կերպով՝ Հ. Մելիքյան՝ խնամատարության, Գր. Ջաղեթյան՝ ֆինանսների, Ա. Խոնդկարյան՝ արդարագատության եւ Բ. Իշխանյան՝ լուսավորության, իսկ գինավորականը՝ գեն.Հախվերդյանը¹⁰:

³ Խոսքը ՀՍԴԲԿ-ի (նախկին սպիցիֆիկներ) մասին է:

⁴ Բյուրո-կառավարության 1920թ.նոյեմբերի 11-ի 355-րդ նիստում լավել է վարչապետի գեկուցումը ՀԺԿ հուշագրի մասին՝ վերջինիս լիազորելով ըստ իր Հայեցողության կառավարության նիստերին հրավիրել կուսակցությունների ներկայացուցիչներին(տե՛ս ՀԱԱ,Փ.Պ-199,ց.1,դ.118,թ.257):

⁵ ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջագունին նոր էր վերադարձել արտասահմանից եւ ստանձնել էր խորհրդարանի նախագահի պաշտոնը:

⁶ Արշամ Խոնդկարյան- սոցիալիստ-հեղափոխական, խորհրդարանի պատգամավոր:

⁷ Բախչի Իշխանյան- ՀՍԴԲԿ նշանավոր գործիչ:

⁸ Գրիգոր Ջաղեթյան- կոալիցիոն կառավարությունում վարել է ֆինանսների փոխնախարարի, կոալիցիայի խզումից հետո՝ նախարարի, ապա՝ պետական վերահսկիչի պաշտոնը:

⁹ Հովհաննես Մելիքյան- ՀԺԿ Հայաստանի ԿԿ-ի անդամ:

¹⁰ Հովհաննես Հախվերդյան (Հախվերդով)- գեներալ, ՀՀ առաջին գինավորական նախարարը:

Այս մասին Հ. Մելիքյանը գեկուցեց Կենտրոնական Կոմիտեին, որը միաձայն որոշեց չհամաձայնվել այդ պայմաններին եւ, եթե Մելիքյանը մտնի կառավարութեան մեջ, հայտարարել նրան կուսակցութեան չհեռացված: Կոմիտեն հանձնարարեց Հ.Մելիքյանին հետեւյալ հակաառաջարկները Քաջագնունուն, որոնք ձեւակերպում էին Կոմիտեի մաքսիմալ զիջումները.

1) Կառավարութեան 9 պորտֆել, երկուսը ստանում է Ժողովրդական կուսակցութեանը՝ Փինանաների եւ մեկ ուրիշը, մեկը տրվում է էսէսներին, մեկը էսդեկներին, զինվորականը՝ անկուսակցականի,

2) Իր կազմավորումից հետո կառավարութեանը հատուկ օրենքով նշանակում է նոր պառլամենտական ընտրութեաններ ոչ ուշ, քան 1921թվի ապրիլ ամիսը,

3) Նոր կառավարութեանը մնում է անփոփոխ մինչեւ նոր պառլամենտի հավաքվելը,

4) ներկա պառլամենտը ստանում է դադար մինչեւ նոր պառլամենտի հավաքվելը:

Այս հակաառաջարկները չընդունվեցին Դաշնակցութեան կողմից: Ընդհակառակը, նա, ըստ երեւույթին, որոշեց հակվել Ռուսաստանի կողմը, կազմելով ձախակողմյան կառավարութեան էսէսների մասնակցութեամբ, որը պիտի աշխատի օգտվել հաշտութեան բանակցութեանների ժամանակ Լեզրանի¹¹ միջնորդութեամբ եւ աջակցութեամբ: Պնդում են, որ Լեզրանը պայման է դրել Դաշնակցութեանը մի այդպիսի կառավարութեանը: Նոր կառավարութեան կազմը Ս.Վրացյանի գլխավորութեամբ ձեռք հայտնի կլինի:

Բայց, այնուամենայնիվ, ներկա կառավարութեանը հազիվ թե մի ամսից ավելի գոյութեան ունենա, եւ նա, հավանական, է նորից փոխարինվի կոալիցիոն կառավարութեամբ:

Հայտնում ենք Ձեզ, որ Կենտրոնական Կոմիտեն բացի Հ. Մելիքյանից, որին հրավիրում էր Քաջագնունին, առաջարկել էր որպէս թեկնածու երկրորդ պորտֆելի համար Արշ. Բարխուդարյանին¹²: Առհասարակ ներկա մոմենտում կազմվելիք կոալիցիոն կառավարութեան համար կոմիտեն որոշել է տալ միայն Հայաստանում ապրող կուսակիցներից: Կոմիտեն, քննութեան առնելով այս հարցը, դտավ, որ ապագայում նույնպէս ցանկալի է միանիստրներ ընտրել միայն այն ընկերներին, որոնք ապրել են Հայաստանում եւ այստեղ հաստատվել...

ՀԺԿ Հայաստանի ԿԿ.¹³

¹¹ Բորիս Լեզրան- Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը:

¹² Արշակ Բարխուդարյան- ՀԺԿ Հայաստանի Կոմիտեի անդամ:

¹³ Ստորագրված է Կոմիտեի երկու անդամների կողմից: Ստորագրութեաններն անընթեռնելի են:

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Հարցն այն մասին է, թե Ակսել Բակունցը, ապագա նշանավոր գրող-արձակագիրը, որը 1920-1923թթ. սովորել է ավարտել էր Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտը, Հայաստան վերադառնալուց անմիջապես Հետո ինչպե՞ս ներգրավվեց Հայաստանի նախկին դաշնակցականների ինքնակազմացման համագումարի նախապատրաստութանը, այնուհետև ղեկավարեց համագումարի աշխատանքները՝ անձամբ չլինելով դաշնակցական, բայց ներկայանալով որպես այդպիսին, իսկ մեկ տարի անց ընդունվեց կոմունիստական կուսակցութան մեջ:

Դաշնակցության կազմացումը (ինքնավերացումը) ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, եղել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի կարեւոր քաղաքական խնդիրը 1920-ական թվականների առաջին կեսին: Ոչ պրոլետարական, հակակոմունիստական կուսակցությունների վերացումը իրականացվում էր ամբողջ խորհրդային երկրում եւ էական նշանակություն ունեւր ԽՍՀՄ-ում բոլշեւիկների կուսակցության մենատիրութան ամրապնդման համար: Տեղի էին ունենում մենշեւիկների, էսեռների, մուսավաթականների կուսակցությունների կազմացման, ընդ որում՝ «ինքնավերացման», համագումարներ: Անխուսափելի էր նաեւ դաշնակցականների նման համագումարը:

Հայաստանում աշխատանքը ղեկավարում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմը, օգտագործելով իրեն սովորում պաշոյ Արտակարգ Հանձնաժողովին: Կենտկոմը համագումարի նախապատրաստութան եւ անցկացման գործընթացների մեջ ներգրավեց Հենց իրենց՝ դաշնակցականներին: Սրանք յուրայինների մեջ կազմակերպական եւ բացատրական մեծ աշխատանք ծավալեցին ինքնաբացահայտվելու եւ համապատասխան համագումարի անհրաժեշտութունն ընդունելու համար¹:

Ստացվեց այնպես, որ գործը նախապատրաստող եւ անցկացնող «նախկին դաշնակցականներին» մեջ Հայտնվեց նաեւ Ալեքսանդր (Ակսել) Բակունցը: Նրան այդ բանի մեջ ներգրավեց իր բարեկամ Երեմիա Բակունցը: Վերջինս Զանգեզուրի Հայտնի ղեկավար բոլշեւիկներից էր, խորհրդային տարիներին եղել է Զանգեզուրի գավազեղկոմի նախագահ, ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավկոմի, ապա ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար, այնուհետեւ ղեկավար աշխատանքներ կատարել Հանրապետութունից դուրս:

Չնայած Ալ.Բակունցը գրում է, որ գործի մեջ իր ներգրավման մասին գոյություն ունի Կենտկոմի գաղտնի որոշում, որպիսին մենք չենք հայտնաբերել մեր որոնումների արդյունքում, այնուամենայնիվ հնարավոր է, որ այդպիսի որոշում չի էլ կայացվել:

Ինչեւէ, Ալ.Բակունցը մտավ գործընթացի մեջ եւ բավական գործուն դեր խաղաց 1923-1924թթ. Հայաստանում Դաշնակցության, ապա երիտասարդ դաշնակցականների միութան «ինքնավերացումը» գլուխ բերելու խնդրում:

ՀԿ(բ)Կ Կենտկոմը Ալ.Բակունցին, նրա ծառայութան դիմաց, հատուկեց ՀամԿ(բ)Կ-ի մեջ ընդունելով: Քանի որ Ալ.Բակունցը Հայաստանում արդեն հայտնի էր դարձել որպես «նախկին դաշնակցական» եւ անկարող էր դա թաքցնել հասարակութունից, ուստի փաստաթղթերում հիշվում է նախկինում Դաշնակցություն կուսակցությունը պատկանելը: Այս հանգամանքը Բակունցի համար դժվարութուններ ստեղծեց նախ Կոմկուսի մեջ ընդունվելու ժամանակ, որը ձգձգվեց, բայց լուծվեց դրականորեն: Ղեկավարութանը հայտնի էր, որ Բակունցին իրենք էին գրել կեղծ դաշնակցականի դերում: Դրա լրացուցիչ ապացույց է նաեւ այն հանգամանքը, որ 1936-1937թթ. Բակունցի հարցաքննութուններում եւ մեղադրական եզրակացութան մեջ խոսք չկա նրա դաշնակցականութան մասին: Հրապարակորեն Բակունցի դեմ հանդես էին գալիս նաեւ նրա գրական հակառակորդները՝ ինչպես

¹ Տես «Հայ Յեղափոխական Դաշնակցությունը եւ խորհրդային իշխանութունը» (փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու): Երեւան, 1999:

մինչև նրա ձեռքհանումը, առավել եւս դրանից հետո: Սա առիթ դարձավ, որ բանտարկուծի մեջ գտնվող Ակսել Բակունցը իր դաշնակցութեան անդամ չլինելու մասին հատուկ նամակ ուղղի հանրապետութեան ներքգործօղկոմին: Բակունցը ստիպված էր խոստովանել այն, ինչը հավանաբար չէր անի սովորական պայմաններում:

Ի վերջո հարցի մեջ (ուղղակի ձեռով) լիակատար պարզութիւն է մտցնում ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախկին 1-ին քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը (Իոսաննիսյանը), որը Բակունցի քաղաքական-իրավական արդարացման առիթով 1954թ. դրավոր ներկայացրել է իր պարզաբանումները: Նրա ղեկավարման ժամանակ է տեղի ունեցել Դաշնակցութեան «ինքնավերացման համազումար» կոչվածը եւ Ակսել Բակունցին դրա հետ կապելը: Նույնպիսի վկայութիւն է տվել զանգեղուրցի Մորուս Հասրաթեանը:

Հարցի լուծման (անուղղակի ձեռով) համար նշանակութիւն ենք տալիս նաեւ կուսգտման եւ կուսփաստաթղթերի փոխանակման Բակունցի համար դրական արդյունքներին: Իսկ ամենազլխավորն ինքն է՝ իրադարձութիւնների կենտրոնում գտնվող անձը, իր 1937թ. Հուլիսի 2-ի դիմումով:

Եւ վերջապես ներկայացնենք մի կարեւոր հանգամանք եւս: Բնավ պատահական չէ Բակունցի կուսակցական փաստաթղթերում այն հարցի պատասխանի բացակայութիւնը, թե ովքեր են նրան երաշխավորել ՀամԿ(Բ)Կ-ի մեջ ընդունվելու համար: Կանոնադրութեան համաձայն, որպէս այլ կուսակցութիւնից ելածի, որպիսին ձեւացել էր Բակունցը, նրան պետք է երաշխավորեին 5 տարվա ստաժ ունեցող 5 կուսակցականներ: Կանոնադրութեան պահանջը կատարելու դեպքում կառավարանային լուրջ բարդութիւններ: Խուսափելով դրանից, փաստորեն կատարվել է կանոնադրութեան խախտում: Ընդ որում երաշխավորութեան նույն պահանջներն էին դրվում նաեւ ծառայողների կատեգորիայի համար, որին սակայն դիմել չէր կարելի, քանի որ Բակունցը հենց նոր էր հասարակայնութեանը ներկայացել որպէս «նախկին դաշնակցական», այսինքն այլ կուսակցութիւնից ելած:

Տվյալ հարցի լուծումը ոչ այնքան Բակունցի, որքան կուսակցական մարմինների հոգան էր, որոնք, ինչպէս ասվեց վերը, Բակունցին պետք է հատուցեին նրա կատարած ծառայութեան համար, եւ որը նրանք իրականացրին, չնայած ձգձգմանը, երբ 2 տարվա փոխարեն Բակունցի կուսանդամ դառնալը տեւեց 6 տարի:

Գրող Ակսել Բակունցի կենսագիրները համեմատաբար քիչ ուշադրութիւն են նվիրել նրա կյանքի ու գործունեութեան տվյալ կողմին: Ներկա հրատարակումը ինդիւր ունի համակողմանի պարզութիւն մտցնել տվյալ հարցում: Տպագրվում է թվով 25 փաստաթուղթ եւ նյութ, որոնց մի մասն է անտիպ: Ընդգրկվում են նաեւ արդեն հայտնի վավերագրեր, հարցը ամբողջական ներկայացնելու նպատակով: Առաջին 11 վավերագրերը ներկայացնում են Ակսել Բակունցի «դաշնակցականութիւնը», մյուս 14-ը՝ կոմունիստականութիւնը:

Տպագիր փաստաթղթերը տեղ են գտել «ՀՅ Դաշնակցութիւնը եւ խորհրդային իշխանութիւնը» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուում (Երեւան, 1999) եւ այլ հրատարակութիւններում: Պահպանվել են վավերագրերի վերնագրերը: Մեր կողմից կազմած վերնագրերը վերցված են սուբանկյուն փակագծերի մեջ: Կրճատումներն արտահայտված են բազմակետերով:

Վլադիմիր Ղազարեցյան
Պատմական գիտութիւնների
դոկտոր, պրոֆեսոր

N1
ԿՈՉ

5 սեպտեմբերի 1923թ.
Գորիս

Մենք, Գորիսի նախկին դաշնակցականներս մեր հեղափոխական պարտքն ենք համարում հայտնել Զանգեզուրի գավառի նախկին դաշնակցականներին ու համակրողներին հետեւյալը.

-Այսու հայտարարում ենք, որ մենք խզում ենք կապերը անցյալի հետ, դուրս ենք գալիս Դաշնակցությունից եւ հայտարարում այդ կազմակերպությունը լուծված:

*ՀՅԴ Զանգեզուրի նախկին կենտրոնական կոմիտեի անդամներ²
նախկին դաշնակցականներ՝ Աղլեքսանդր³*

«Խորհրդային Հայաստան», 16 սեպտեմբերի 1923թ.

N 2
ՀԱՐԳԵԼԻ ԸՆԿ. Ա.ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆՑ

8 սեպտեմբերի 1923թ.
Գորիս

Կոմիտեի անդամներից եւ ճանաչված անդամներից չորսին ուղարկեցի Ղափանի, Բուն Զանգեզուրի, Հալիճորի եւ Դարաբասի շրջանները, որոնք մինչեւ մի քանի օր կվերադառնան եւ ինձ կհանձնեն շրջանների ղեկավարացիաները: Ես էլ վաղը անցնում եմ Սիսիան, որտեղ ինքս անձամբ կտանեմ այդ աշխատանքները եւ շուտով կլինեմ Երեւանում:

Ուղարկում եմ մի քանի օրինակ կոչ⁴, շուտով տպագրել կտամ եւ, երկրորդը, որով կհայտարարվի համագումարի համար ընտրված 22 դաշնակցական ներկայացուցիչների ցուցակը եւ որոնց ձայն պիտի տան բոլոր շրջանները:

Իմ աշխատանքների մեջ ինձ օգնեց իմ ամենամոտ ընկերս՝ Աղլեքսանդր Բակունցը, որը նոր է վերադարձել Խարկովի համալսարանից:

Դեռ այժմ այսքանը:

Հարգանք Ն.Կրմենանց

ՀԱԱ, Ֆ. 1, ց. 3, գ. 14ա, թ. 23 եւ հակ.:

N 3
ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

28 սեպտեմբերի 1923թ.

...Անշուշտ նրանք, որոնք թերահավատ են, պիտի բամբասեն, ստահոգ լուրեր տարածեն, թե այդ արձանագրությունների կազմելը եղել է որոշ ճնշման տակ: Անատամ բամբասանքը չէ, որ զբաղեցնում է մեզ այժմ: Այդպիսի թերահավատ վերաբերմունք ունեն եւ մի շարք անկուսակցականներ, որոնք կարծում են, թե այդ շարժումը, որ վարից է գալիս, վերի թելադրանքով է եղել:

² Երեք ստորագրություն:

³ Յոթ այլ ստորագրություններ:

⁴ Նկատի ունի թիվ 1 փաստաթուղթը:

Միայն մեր չարամիտ թշնամիները կարող են Հավատալ ու տարածել նման լուրեր: Ես, որ շատ մոտից ծանոթ եմ Դաշնակցութեան քայքայմանը Զանգեզուրում, իմ պարտքն եմ համարում հայտնել այդ թերահավատներին, որ ոչ մի ճնշում չի եղել մեզ վրա, այդ ամբողջ շարժումը տարերային թափ ունի, հետեւաբար անհատական եւ ոչ մի ուժ չէր կարող պատնեշ կանգնեցնել այդ հոսանքի դեմ...

Ադ.Բակունց

«Խորհրդային Հայաստան», 28 սեպտեմբերի 1923թ.

N 4

ԲՈԼՈՐ ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻՆ

20 նոյեմբերի 1923թ.

Ընկերներ, այսօր, նոյեմբերի 20-ին բացվում է Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը՝ նա ասելու է յուր վճռական խոսքը դաշնակցութեան ղեկավարներին, վերագնահատելու է նրանց անցյալ գործնեութիւնն ու որոշելու նոր ուղի նախկին դաշնակցական մասսայի համար...

Միայն հրաժարվելով հին մտայնութիւնից եւ կանգնելով Կոմունիստական կուսակցութեան պլատֆորմայի վրա, դաշնակցական մասսան կարող է լինել այս երկրում ոչ իբր վարձու պաշտոնյաների կամ քաղաքականութիւնից հեռու մի զանգված, այլ Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան ակտիվ հեղափոխականների մի բանակ, որ երկրի վերաշինումից զատ զիմադրելու է նոցա, որոնք կփորձեն մեր երկրի խաղաղութիւնը վրդովել զրսից կամ ներսից:

Կե՛ցցե 3-րդ Ինտերնացիոնալը:

Կե՛ցցե համաշխարհային հեղափոխութիւնը:

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար
նախաձեռնող Բյուրոս
Ա.Ադ.Բակունց⁵

«Լրաբեր Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի»: Թիվ 1, 20 նոյեմբերի 1923թ.:

N 5

ՈՎՔԵՐ ԵՆ ՀԵՌԱՆՈՒՄ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ

20 նոյեմբերի 1923թ.

Մոտ 4 ամիս է, որ Դաշնակցութեան նախկին կուսակիցների բանակը Հայաստանում քայքայման ուղին է բռնել՝ անհատական, թե խմբովին գեկլարացիաներով, գավառական ու շրջանային համագումարներով միեւնոյն միտքն ասում՝ հեռանում ենք Դաշնակցութիւնից, որովհետեւ այդ կուսակցութեան վարած քաղաքականութիւնն աղետաբեր է մեր ժողովրդի համար, որովհետեւ տարիներից ի վեր նա իր քաղաքական վարքագիծը զուգադիպել էր եվրոպական իմպերիալիզմի հաղթանակին, որովհետեւ Դաշնակցութեան իշխանութիւնը Հայաստանում տնտեսական ավերի, ազգամիջյան կռիւների, ժողովրդյան հարստութեան քայքայման դուռը բացեց...

⁵ Հետեւում է 15 այլ ստորագրութիւն:

Այն հարցին, թե ինչու են հեռանում Դաշնակցությունից, պատասխաններ չատկան, բայց հիմնականը մի է՝ հեռանում են ոչ թե լինելու սոսկական քաղաքացիներ, այլ տրամադրելով իրենց բովանդակ ուժերը երկրի վերաշինման, միեւնույն ժամանակ եւ սոցիալիստական հայրենիքի խաղաղության, դիմադրելով այն բոլոր սեւ ուժերին, որոնք երբեմնից կփորձեն վրդովել երկրի անդորրը՝ դրսից, թե ներսից:

Աղ.Բակունց

«Լրաբեր Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի»: Թիվ 1, 20 նոյեմբերի 1923թ.:

N 6

<Ա.ԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ
ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ >

20 նոյեմբերի 1923թ.

Ընկերներ, Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը հայտարարում են բացված:

Ապագա պատմագիրը կգնահատի մեր համագումարի պատմական նշանակությունը: Սակայն մեզ համար, որ չորս ամիս շարունակ նախաձեռնող ենք հանդիսացել այս համագումարին եւ ականատես եղել բազմաթիվ փաստերի, պարզ է մի բան, որ մենք այլեւս անկարող ենք մնալ Դաշնակցության մեջ:

«Նախկին շարքային դաշնակցականների Համահայաստանյան համագումարի արձանագրությունները: Ստենոգրաֆիական հաշվետվություն: Երեւան, 20-23 նոյեմբերի 1923թ.»։ Երեւան, 1924, էջ 3:

N 7

<ԲԱՆԱՁԵՎ ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ >

20-23 նոյեմբերի 1923թ.

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը լսելով նախաձեռնող բյուրոյի նախագահ ընկ. Աղ.Բակունցի ղեկուցումը նախաձեռնող բյուրոյի ամբողջ գործնեություն մասին, որոշեց հաստատել նախաձեռնող բյուրոյի ամբողջ գործնեությունը, այդ գործնեությունն ընդունել պատմական մի անհրաժեշտություն Դաշնակցության քայքայման պրոցեսում եւ անցնել օրակարգի մյուս խնդիրներին:

ՀԱԱ, Ֆ. 4047, ց. 1, գ. 220, թ. 23: Բակունցի ինքնագիր օրինակը: «Գործնեություն», ինչպես նաեւ «Աղեքսանյուր», «քցել», «ոեւէ» եւ այլ ձեւերը Ակսել Բակունցի եւ ժամանակի ոճի առանձնահատկությունն են:

ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ⁶

25 նոյեմբերի 1923թ.

Մեծ խանդավառութեամբ վերջացավ նախկին դաշնակցականների Հայաստանի Համագումարը, որի ընդունած պատասխանատու բանաձեւերը կտրոււմ են բոլոր Հին կապերը եւ գծոււմ նախկին դաշնակցական բանվորների ու գյուղացիների առաջ նոր ուղիներ...

Հայաստանի խորհրդային հեղափոխութեան երրորդ տարեդարձին Հոյակապ նվեր է Դաշնակցութեան լիկվիդացիան հանրապետութեան սահմաններում...

«խորհրդային Հայաստան», 25 նոյեմբերի 1923թ.

ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ՝ 2-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՑԻՆ

17 դեկտեմբերի 1923թ.

1923թ. նոյեմբերի 20-24 Երեւանում կայացած Հայաստանի նախկին դաշնակցականների Համագումարը, որին մասնակցում էին 4032 շարքային դաշնակցականներից ընտրված 247 պատգամավոր, ՀՅԴաշնակցութեան անցյալ գործունեութունն ու նրա ներկա քաղաքական ընթացքը վերադասահատելով, ընդունել է հետեւյալ բանաձեւեր...

Ի հետեւումն վերոհիշյալի Համագումարը որոշում է.

1. Լիկվիդացիայի ենթարկել ՀՅԴաշնակցութեան բոլոր կազմակերպութիւնները Հայաստանում:

2. Հաստատել գաղառական եւ շրջանային կոնֆերենցիաների որոշումները դաշնակցական տեղական կազմակերպութիւնների լիկվիդացիայի մասին:

3. Առաջարկել Ադրբեջանի, Վրաստանի եւ խորհրդային հանրապետութիւնների սահմաններում, այլեւ Տաճկաստանի եւ գաղութահայ մյուս վայրերում գտնվող դաշնակցական աշխատավոր շարքերին մեր օրինակով լուծել դաշնակցական կազմակերպութիւնները ու ցրել ղեկավար մարմինները տեղերում:

4. Անվավեր համարել ՀՅԴաշնակցութեան բարձր կուսակցական մարմինների կողմից տված կուսակցական մանդատներն ու հանձնարարութիւնները:

5. Վճռական կերպով արգելել ՀՅԴաշնակցութեան արտասահմանում գտնվող բարձրագույն մարմիններին հրապարակ գալ կամ հայտարարութիւններ անել Հայաստանի կազմակերպութիւնների անունից:

6. Սույն որոշումներն ուղարկել 2-րդ Ինտերնացիոնալի միջազգային բյուրոյին ի գիտութիւն:

7. Դնել մեր բովանդակ ուժերը միջազգային բանվորագյուղացիական հեղափոխութեան եւ նրա մարտական շտաբ 3-րդ Կոմինտերնի տրամադրութեան տակ եւ լինել պատրաստ նրա ղեկավարութեամբ պաշտպանելու Հոկտեմբերյան մեծ հեղափոխութիւնը եւ նրա ծնունդ խորհրդային իշխանութեան նվաճումները բոլոր Հակահեղափոխական ուժերից եւ վտանգներից՝ լինեն դրսից, թե ներսից:

⁶ Պահպանվել է Ա.Բակունցի «Նոյեմբերի 20-ի Համագումարը» վերնագրով ամփոփող (ինքնագիր) հոդվածը, որը թերթում տպագրված հոդվածի տարբերակն է:

Համաձայն բանաձևերի 6-րդ կետի՝ Հայտնելով այս մասին ձեզ ի դիտումովս, խնդրում ենք անվավեր համարել ՀՅ Դաշնակցության մանդատը, տված Հայաստանի դաշնակցական կազմակերպության կողմից, մասնակցելու 2-րդ Ինտերնացիոնալի միջազգային բյուրոյի աշխատանքներին:

Հայաստանի նախկին դաշնակցականների Համագումարի նախագահություն 1.Ալեքսանդր Բակունց⁷

ՀԱԱ, Ֆ. 4047, ց. 1, դ. 223, թ. 1-4 (թ. 5-8՝ անգլերեն թարգմանությունը):

N 10

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՉԸ ԲՈՒՈՐ ՇԱՐՔԱՅԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻՆ

19 դեկտեմբերի 1923թ.

...Այդ բոլոր ընկերներին կոչ ենք անում հեռանալ Դաշնակցությունից, լուծել Դաշնակցության կազմակերպությունները, ազատագրվել Դաշնակցության հակաաշխատավորական մտայնությունից եւ, ընդունելով 3-րդ Ինտերնացիոնալի մարտական պատճառման, հարել տեղական այն կազմակերպություններին, որոնք պայքարում են 3-րդ Ինտերնացիոնալի դրոշի տակ կապիտալիզմի դեմ, մի պայքար, որի հաղթանակից է կախված Համաշխարհային աշխատավորության հետ նաեւ Հայաստանի բանվորի ու գյուղացու բարտը...

Հայաստանի նախկին դաշնակցականների Համագումարի նախագահություն 1.Բակունց Ալեքսանդր⁸

«Նախկին շարքային դաշնակցականների Համահայաստանյան Համագումարի արձանագրությունները: Ստենոգրաֆիական հաշվետվություն»: Երեւան, 1924, էջ 129-132:

N 11

ՆԱԽԿԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ (ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ-ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1-3 փետրվարի 1924թ.

Նախագահության անդամներ են ընտրվում. Բակունց Ալեքսանդր (նախագահ)... Ալեքսանդր: Ընկերներ, սովորաբար ընդունված է, որ հասարակական որեւէ շարժում լուսաբանելու համար ընթացիկ մոմենտի մասին է զեկուցվում: Ուրեմն այս Համագումարի արժեքն էլ լուսաբանելու համար պիտի նկատի ունենանք, թե միջազգային ինչ պայմաններում է կայանում: Մեր եւ ձեր Համագումարի միջեւ թեեւ երկու ամիս ժամանակ է անցել միմիայն, բայց մեծ տարբերություն կա քաղաքական պայմանների տեսակետից...

ՀԱԱ, Ֆ. 4047, ց. 1, դ. 229, թ. 1-76:

⁷ Հետեւում է 14 այլ ստորագրություն:

⁸ Հետեւում է 13 այլ ստորագրություն:

N 12
ԻՄ ՀԱՄԱՌՈՒՑ ԿԵՆՍԱԳԻՐԸ⁹

24 փետրվարի 1924թ.

1917թ. փետրվարյան հեղաշրջումից հետո մինչև 1917թ. նոյեմբերը եղել էմ Ջանգեղուրում, դաշնակցության կոմիտեի անդամ, շրջիկ-հրահանգիչ, կոմիտեի քարտուղար: Ջանգեղուրի կողմից մասնակցել էմ 1917թ. ապրիլի վերջին Բագվի դաշնակցական կոմիտեի ռայոնական ժողովին: Ղեկավարել էմ Սահմանադիր ժողովի ընտրությունները Ղափանի շրջանում:

Մասնակցել էմ էրզրումի Դաշնակցության կոմիտեի աշխատանքին՝ մասնավանդ բանակի մեջ:

1923թ. դեկտեմբերին, ընկեր Գուրգեն Խարմանդարյանի աջակցությամբ, Խարկովում փորձել էմ նախաձեռնել լիկվիդացիոն շարժում դաշնակցականների մեջ: Այդ շարժումը, սակայն, հաջողության չհասնեց:

Աղեքսանդր Բակունց

ՀԱԱ, ֆ. 4, ց. 2, գ. 1218, թ. 5 եւ Հակ.-6: Ինքնագիր:
Այստեղ փաստաթուղթը բերվում է մասնակի:

N 13
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԻ)
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ
ԹԵՐԹԻԿ

29 օգոստոսի 1924թ.

3.Բակունց Աղեքսանդր Ստեփանի

18.եղե⁹լ էք արդյոք այլ կուսակցությունների կամ քաղաքական կազմակերպությունների մեջ (երբ, որքան ժամանակ, որտեղ, ինչու էք դուրս եկել) - 1915 թվականից անդամ Դաշնակցության, Գորիս, Երեւան, մինչև 1919թ., հրաժարվելու պատճառները հրատարակված են «Խորհրդային Հայաստանում» (տես «Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարի ստենոգրաֆիկ հաշվետվություն» գիրքը):

Բակունց Աղեքսանդր

ՀԿԿ Կենտկոմի որոշումը. Արձանագրություն N13, 15 նոյեմբերի 1924թ. Հաստատված է թեկնածու:

20.11.1924թ. ՀԿԿ ԿԿ-ի հաշվետու-վիճակագրական բաժնի վարիչ՝
(ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 4, ց. 2, գ. 1218, թ. 1-3: 3 եւ 8 կետերի հարցերի պատասխանները լրացված են Բակունցի կողմից: Բերվում են անձնական թերթիկի համապատասխան կետերը:

⁹ Փաստաթղթի վրա ՀամԿ(բ)Կ-ի մեջ ընդունող հանձնաժողովի կողմից օգոստոսի 16-ին արված է «Դնել բջիջի նիստին» մակագրությունը: Հետեւաբար Ա.Բակունցը կենսագրությունը գրել է ՀամԿ(բ)Կ-ի մեջ ընդունվելու առիթով:

N 14
ՑՈՒՑԱԿ

ԿՈՒՍԹԵԿԵԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԴԱՄ ՓՈԽԱԴՐՎԱԾՆԵՐԻ՝
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ N29 ՆՍՏՈՒՄ

3 Հունիսի 1927թ.

*3.Բակունց Ալեքսանդր Ստեփանի
Սեռը- արական
Ազգութիւնը- Հայ
Անդամատման համարը-
ԼԿԵՄ՝ անդամ է, թե ոչ- ոչ
Ուրիշ կուսակցութեան մեջ եղել է, թե ոչ- Դաշնակցութիւն
Սոցիալական ծագումը- գյուղացի
Սոցիալական դրութիւնը- ծառայող
Կրթութիւնը- բարձրագոյն
Ծննդյան թիվ- 1899
Որտեղ է աշխատում - Հողժողովմատ
Պաշտոն կամ զբաղմունք - Հողվարչութեան պետի օգնական
Որ բջիջում է փոխադրվել - Հողժողովմատի
Երբ է փոխադրել կամբջիջը - 31 Հունվարի 1927թ.
Որ թվից է թեկնածու - 24/12.2
Կենտկոմի կողմից Հաստատման ժամանակը -*

ՀԱԱ, Ֆ. 4, ց. 1, գ. 1158, թ. 33, 36:

N 15
ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

17 Հունիսի 1927թ.

*27դ. Ընկ. Ա.(Ակսել) Բակունցին փոխադրել անդամ եւ մտցնել Հաստատման
Անդրերկրկոմ, որպէս այլ կուսակցութիւնից ելած:*

Կենտկոմի քարտուղար՝ Հովսէփյան

ՀԱԱ, Ֆ. 1, ց. 7, գ. 32, թ. 66: Թարգմ. ուսու.:

N 16
ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄ ԸՆԿ. ԿՈՍՏԱՆՑԱՆԻՆ¹⁰

30 մայիսի 1928թ.

*ՀամԿ(Բ)Կ Անդրերկրկոմի կազմակերպական-բաշխիչ բաժինը ՀամԿ(Բ)Կ
Անդրերկրկոմի Նախագահութեան որոշման հիման վրա խնդրում է երկրորդ անգամ
Կենտկոմի քննարկմանը դնել ընկ-ընկ. Բակունցին, Ա.Հովյանին եւ Վ.Ամրաղյանին
կուսակցութեան մեջ ընդունելու մասին Հարցը, որից հետո նյութերը ներկայացնել
ՀամԿ(Բ)Կ Անդրերկրկոմի Հաստատմանը:*

ՀԱԱ, Ֆ. 4, ց. 2, գ. 1218, թ. 12: Թարգմ. ուսու.:

¹⁰ Հայկազ Կոստանյան - ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար:

N 17
ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

18 դեկտեմբերի 1928թ.

*Լսեցին. ընկ. Ակ.Բակունցի մասին:
Որոշեցին. ընկ.Ակ.Բակունցին փոխադրել ՀԿ(Բ)Կ անդամ եւ մտցնել
Անդրերկրկոմի հաստատմանը:*

Կենտկոմի քարտուղար՝ Հ.Կոստանյան

ՀԱԱ, Ֆ. 1, ց. 8, գ. 21, թ. 129: Թարգմ. ուռւս.:

N 18
ՀամԿ(Բ)Կ ԱՆԴՐԵՐԿՐԿՈՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

24 հուլիսի 1929թ.

*Լսեցին. ընկ. Բակունցին ՀԿ(Բ)Կ թեկնածուի թյունից անդամ փոխադրելու
մասին: (Ձեկ.՝ ընկ. Վարունց)
Արտահայտվեցին. ընկ.ընկ. Ռեդենսը, Ռուբենը, Վ.Ստուրուան:
Որոշեցին. Հարցը քննարկել կուսգտման արդյունքներից հետո:*

ՀԱԱ, Ֆ. 1, ց. 9, գ. 35, թ. 53: Թարգմ. ուռւս.:

N 19
ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՒՍԲՁԻՁԻ ԶՏՈՂ ԵՒ ՍՏՈՒԳՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ N7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ¹¹

24-25 հուլիսի 1929թ.

*Լսեցին. ընկ. Վարդանովի ներածական խոսքը կուսգտման մասին: Բջիջի
քարտուղար ընկ.Նաչատրյանի ղեկուցումը բջիջի դրուժյան մասին:*

*5.Բակունց Ալեքսանդր Ստեփանի. կուսթեկնածու 1924թ. հոկտեմբերից,
թեկնածուական քարտ N3646, 30 տարեկան, սոցիալական դրուժյունը ծառայող,
սոցիալական ծագումը գյուղացի, մասնագիտությամբ գյուղատնտես, սովորել է
հոգեւոր ակադեմիայում: Կարմիր բանակում չի եղել: Եղել է Դաշնակցություն
կուսակցության մեջ, դաշնակցականների Ձանգեզուրի կոմիտեի անդամ: 1923թ. եղել է
Դաշնակցություն կուսակցության վերացման գծով <նախկին դաշնակցականների
համագումարի նախաձեռնող բյուրոյի> նախագահ:*

*1924թ. ընդունվել է կուսակցության մեջ: Հողժողկոմատում աշխատել է
հողվարչությունում եւ Անասնաբուժական ինստիտուտում ուսումնական մասում:
Մինչեւ 1917թ. եղել է սովորող:*

*Հողժողկոմատի բջիջի աշխատանքներին թույլ է մասնակցում, թեքումներ
չունի: 1928թ. անտակտության համար բջիջի բյուրոն ի ցույց է դրել: Կուսանդամ
Սաֆարյանից բջիջի բյուրոն դիմում է ստացել այն մասին, որ ընկ.Բակունցը
հեղինակություն չի վայելում, եւ որ նա կուսակցության մեջ է ընդունվել հին
ղեկավարության կողմից:*

¹¹ Հողժողկոմատի կուսբջիջի ժողովը կայացել է 300 կուսակցականների, 75 կոմերիտականների
եւ 225 անկուսակցականների մասնակցությամբ:

Որոշեցին. Համարել ստուգված, թողնել կուսակցության շարքերում: Հողժողովման քննարկի աշխատանքներին թույլ մասնակցության համար հայտարարել նկատողություն:

ՀԱԱ, Ֆ. 91, ց. 4, դ. 5, թ. 136-14:

N 20

ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

23 փետրվարի 1930թ.

Լսեցին. Ընկ. Ա. (Ակսել) Բակունցին թեկնածու թյունից կուսանդամ փոխադրելու մասին:

Որոշեցին. Ընկ. Ալեքսանդր Բակունցին թեկնածու թյունից փոխադրել ՀԿ(Բ)Կ անդամ:

Կենտկոմի քարտուղար՝ Խանջյան

ՀԱԱ, Ֆ. 4, ց. 2, դ. 1218, թ. 13: Թարգմ. ռուս.:

N 21

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԿ(Բ)Կ ԵՐԵՎԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆ ՀԱՏԱԿԱՆ ԳԾՈՎ

ԿՈՒՍՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԵՎ

ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

14 դեկտեմբերի 1935թ.

44. Բակունց Ալեքսանդր Ստեփ. (Գրողների միություն), կուստոմսի N1314942: Կուստոմսը տրվել է ՀԿ(Բ)Կ Երեւանի կազմակերպության կողմից 1930թ. ապրիլի 6-ին:

Կուստոմսի ստուգման արդյունքները. կուսանդամ 1930թ. փետրվարից, ծննդյան թիվը 1899: Սոցդրու թյունը ծառայող: Կուստոմսում հայրանունը կրճատ գրված է «Ստեփ.»: Ճիշտ է «Ստեփանի»:

Հաշվառման քարտում կա նշում՝ «1917թ. մարտից մինչև հոկտեմբեր եղել է Դաշնակցության կուսակցության մեջ»:

Ստուգումով պարզվել է.

Ա.Ս.Բակունցը 1917թ. մարտից մինչև հոկտեմբեր Զանգեզուրում եղել է Հայ աշակերտական կազմակերպության մեջ, որը գտնվել է Դաշնակցության կուսակցության գաղափարական ազդեցության տակ: Կազմակերպության հեռացել է նույն թվականի նոյեմբերին:

Կուսփաստաթղթերը իրապես պատկանում են Ա.Ս.Բակունցին:

Նրա անձը եւ կուսակցականությանը կասկած չեն հարուցում:

ՀԱԱ, Ֆ. 88, ց. 1, դ. 60բ., թ. 958: Թարգմ. ռուս.:

N 22

ԲԱՆՏԱՐԿՅԱԼ Ա. Ս. ԲԱԿՈՒՆՑԻ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂԿՈՄԻՆ

2 հուլիսի 1937թ.

Երեւան

Իմ բանտարկությունից հետո հայ բանաստեղծներից Նաիրի Զարյանը կարծեմ «Խորհրդային Հայաստան» թերթում, որի խմբագիրը եղել է Եղիա Չուբարը, տպագրել

է Հողված, որում վերլուծելով իմ որոշ գործեր, անդրադառնալով անձիս, ինձ անվանել է «դաշնակցական», «դաշնակցական խմբապետ» եւ այլն: Այս հորինվածքին հարկ չէր լինի անդրադառնալ, եթե հողվածը տպագրված չլիներ «Խորհրդային Հայաստան» թերթում, որի խմբագիրն էր առանց չակերտների դաշնակցական Ե.Չուբարը:

Ես երբեք դաշնակցական չեմ եղել, Դաշնակցութուն կուսակցութեան մեջ չեմ գտնվել ո՛չ մինչեւ հեղափոխութունը, ո՛չ մինչեւ քաղաքացիական կռիվները, եւ երբեք: Այդ առասպելը հորինված է իմ գրական ախտանքներ, Ավերբախ-Բեգիմենսկու ժառանգորդներ Նաիրի Զարյանի եւ Նորայր Դաբաղյանի կողմից: Երբեք որեւէ կուսակցական հանձնաժողով ոչ կուսգտման, ոչ կուսստուգման ժամանակ ինձ չի մեղադրել դաշնակցականների կուսակցութեանը անցյալում պատկանելու մեջ: Կուստոմների փոխանակման կապակցութեամբ անցկացված վերջին ստուգման արձանագրութեամբ, 1936թ. ապրիլին, նշվել է, որ 1917թ., մինչեւ նոյեմբերը, ես եղել եմ Հայկական աշակերտական միութեան անդամ: Ստուգող հանձնաժողովում եղել են Ս.Ա.Կոպովը, Գ.Հանեսոյլյանը, Լ.Արիսյանը եւ, եթե հիշողութեանս չի օգտագործում, Աղասի Գալոյանը: Այն հարցը, թե ում գաղափարական ազդեցութեան տակ է գտնվել այդ միութեանը (եւ հայտարարեցի, որ միութեանը գտնվել է դաշնակցների ազդեցութեան տակ), պարզվել է ընկ. Ամատունու հետ կայացած զրույցից հետո, որը լավ գիտի այդ միութեանը:

Ինչ վերաբերում է Դաշնակցութեան վերացման համագումարին, ապա հայտարարում եմ հետեւյալը (ինչը եւ հայտնի է եղել նաեւ ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոյին կից հանձնաժողովին, Ա.Շահուովարյանի, Հ.Գյուլիքեխովյանի եւ Ս.Լուկաշինի կազմով). ՀԿ(Բ)Կ Լենինականի դավկոմի այն ժամանակվա քարտուղար Երեմիա Բակունցի միջոցով, ինձ, որպես ոչ դաշնակցականի, առաջարկվել է մասնակցել այդ համագումարի կազմակերպմանը: Համագումարի արխիվը Ձեզ մոտ է, եթե հարկ կա, ասացեք թող գտնեն ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոյի գաղտնի որոշումը, որտեղ թվարկված են ինձ վրա դրված խնդիրները: Հայտնի է, որ համագումարում շատ պատգամավորների համար իմ ազգանունը անծանոթ էր, իսկ արտասահմանյան դաշնակցական մամուլը այդ ընթացքում միանգամայն արգարացի կերպով գրում էր, որ Դաշնակցութուն կուսակցութունը Ալեքսանդր Բակունց անունով անդամ իր կազմում չի էլ ունեցել: Լինելով անկուսակցական, ես միանգամայն գիտակցաբար ընդունել եմ ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոյի առաջարկութունը, մասնակցել եմ համագումարին, կատարել եմ ընկ.Ս.Մելիք-Օսիպովի¹² հատուկ առաջադրանքները եւ իմ բոլոր քայլերը համաձայնեցրել ընկ.Շահուովարյանի հետ (կազմակերպչական հարցերը) կամ Գյուլիքեխովյանի ու Իոաննիսյանի հետ¹³ (տեսական հարցերը): Համագումարի հաշվետվութեան հրատարակութունը դրվել էր Գյուլիքեխովյանի վրա: Գիրքը տպագրվեց ՀԿ(Բ)Կ կենտկոմի փողերով, որը երեւում է գրքի կազմից եւ խմբագրվել է ՀԿ(Բ)Կ կենտկոմի հատուկ հանձնաժողովի կողմից: Նրանում շատ բան խիստ է խմբագրվել, իսկ Ֆոյյանի զեկուցումը դրվել է նորից:

Ի՞նչ է ստացվում: Ես չէ, որ պետք է գրեմ այն մասին, թե ով է կազմակերպել նախկին դաշնակցականների վերացման համագումարը, ով է այն ղեկավարել եւ այլն: Ձեզ հայտնի է, որ նման բաների մասին չեն գրում: Եւ ես չեմ գրել: ՀամԿ(Բ)-ի շարքերում եղած ընթացքում երբեք ինձ վրա դաշնակցականների կուսակցութեանը կեղծ պատկանելու մեղադրանք չի ներկայացվել, որովհետեւ այդ մասին գիտեին նրանք, ում պետք էր իմանալ: Ես անցել եմ կուսգտում եւ ստուգում, ինձ վրա չի եղել այդ բիծը, իսկ ներկայումս, իմ բանտարկութունից հետո, Ե.Չուբարի թելադրանքով նրա ընկեր Նաիրի Զարյանը լուտանք է թափում իմ վրա, դավաճանաբար խաբելով ե՛ւ կուսակցութեանը, ե՛ւ խորհրդային հասարակայնութեանը:

¹² ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի նախագահ:

¹³ Շահուովարյան, Գյուլիքեխովյան- ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղարներ, Իոաննիսյան (Հովհաննիսյան)- կենտկոմի 1-ին քարտուղար:

Անձամբ Դուք, ընկեր ժողկոմ, վաղուց եք աշխատում Հայաստանում: Արդյո՞ք Ձեզ հայտնի է որեւէ փաստ կամ փաստաթուղթ, որն ապացուցեր իմ ինչ որ կազմակերպական կապը դաշնակցականների կուսակցության հետ: Կարո՞ղ եք գտնել մեկ կենդանի կամ երկու մեռած դաշնակցական, որոնք ապացուցեին, որ ես երբեւէ լուսնի տակ դաշնակցական եմ եղել: Իմ կենսագրութեանը գաղտնիք չէ: Ձեզ մոտ, Հայաստանի ներքգործողկոմատում աշխատում են ինձ լավ ճանաչող ընկերներ՝ Սեդրակ Վարդանովը, Գոգա Պողոսյանը, Գեւորգ Մելքոնյանը, որոնք լավ գիտեն իմ կենսագրութեանը, մանկութեանից մինչեւ բանտարկութեանս օրը: Եւ մի՞թե միայն նրանց է հայտնի: Հանձնարարեք փորձել արխիվը եւ թող գտնեն թեկուզ մեկ ոչ թե կեղծ, այլ իսկական դաշնակցականի ցուցմունք, որը պնդեր, որ ես որեւէ առնչութիւն եմ ունեցել այդ կուսակցության հետ: Այդպիսի ցուցմունք չկա եւ չի կարող լինել, իսկ ես շարքային գյուղացի չեմ, որ ինձ թեկուզ մի գույք դաշնակցական չիմանար:

Երբ ավարտվի իմ գործը, ես մանրամասն կգրեմ եւ կնկարագրեմ այդ Համագումարի կազմակերպման ամբողջ աշխատանքը եւ գաղտնի ծրարով այդ նյութերը կներկայացնեմ ում հարկն է: Բայց եթե ամեն տեսակ Նաիրի Ջարյաններ անկարգաբար ընկնեն իմ հետեւից, զբաղվեն կեղտոտ զրպարտութեամբ, օգտագործելով կուսակցական մամուլը, ժողովները եւ այլն,- ես Հնարավորութեանից զրկված չեմ լինի ապացուցելու, թե ով է կազմակերպել այդ Համագումարը, ինչու է կազմակերպվել, ինչպիսի խոսակցութեաններ են եղել, իրականում ինչ է եղել այդ Համագումարում եւ ինչ չի եղել, ինչ է տպագրվել հաշվետվութեան մեջ: Դա հետաքրքրութեան է ներկայացնում պատմութեան համար եւ լրիվ կապացուցի իմ այիբին:

Ինձ Համար նորութիւն չէ, որ եթե մարդը որեւէ Հանցագործութիւն է կատարել, կարելի է ցեխ շարտել նրա վրա: Իմ գրքերն արգելված են, գտնվում եմ մի խղճուկ խցում, օրենքով զրկված եմ իմ շահերը պաշտպանելու իրավունքից: Որպես սցենարի հեղինակ,- այդ ամենը հասկանալի է,- բայց ինչու Նաիրի Ջարյանները պետք է ստորաբար ստեն: Ե՞ս եմ «Գնդապետ Մազմանյան» պոեմի հեղինակը, ե՞ս եմ մարդակեր ոտանավորների հեղինակը, ե՞ս եմ Ախտայի ճակատում դաշնակցական խմբի կազմում մասնակցել Կարմիր բանակի դեմ հարձակմանը: Այդ ոչ այլ ոք, քան Նաիրի Ջարյանն է Խանջյանի, Կարեն Միքայելյանի եւ Ազո Ադոյանի մատուցած օգնութեամբ անցել Կրեմլի շեմքով ներս¹⁴: Հանուն ինչի է այդ ամենը կատարվում՝ անհասկանալի է: Մի՞թե քիչ են իմ ցուցմունքներում եղած նյութերը՝ գրելու համար խիստ, բայց ճշմարիտ հոգված, եթե Նաիրի Ջարյանները իսկապես այրվում են կուսակցության թշնամիների դեմ սրբազան ատելութեամբ, եւ ոչ անձնական վրեժով մի մարդու նկատմամբ, որը ապտակել է նրա դեմքին, ոչ թե կեղծ, այլ հրապարակորեն, այն բանը համար, որ Նաիրի Ջարյանը համառորեն պաշտպանել է ջախջախված Խ.Ա.Պ-ի դիրքորոշումները: Այդ պատմութեանն այն ժամանակ գիտեին բոլորը, եւ ես զղջալով իմ անագնիվ արարքը, շտապեցի ՀԿ(բ)Կ Երեւանի քաղկոմի քարտուղար Հանեսօղլյանի մոտ: Հնարավոր է, որ դա բխում էր նրանից, որ ես «Պեպո» կինոնկարի մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ Միկոյանի նամակի¹⁵ կապակցութեամբ հրավիրված կինոաշխատողների խորհրդակցութեանում հարձակվեցի Նաիրի Ջարյանի վրա այն բանի համար, որ նա դաշնակ գեներալ Անդրանիկին համարյա համարեց կիսաբոլշեիկ եւ եռանդով առաջարկեց կինոնկար Հանել Անդրանիկի մասին: Դեռուներն, Վանյա Պողոսյանը, Գյուլիքեիվյանը եւ երկու տասնյակ գրողներ ու կինոգործիչներ վկա էին դաշնակցական հրեատիկոս Նաիրի Ջարյանի դեմ իմ ելույթին: Բայց այստեղ ի՞նչ գործ ունի իմ իբրեւ թե «դաշնակցական» անցյալը, ու՞մ է պետք այդ սուտը: Միայն հոգվածի համար

¹⁴ Խոսքը 1935թ. դեկտեմբերի 31-ին Հայաստանի պատվիրակութեանը Կրեմլում ընդունելու մասին է, երբ Նաիրի Ջարյանը ներկայացավ իր հատուկ զրկված «Ստալին» բանաստեղծութեամբ:

¹⁵ Նամակում Միկոյանը հայտնել է Ստալինի տավորութեանների ու դերտողութեանների մասին «Պեպո» կինոնկարի կապակցութեամբ, երբ այն դիտել են միասին:

Հոնորարի հեղինակներին՝ խմբագիր Չուբարին եւ նրա համահեղինակ Նաիրի Չարյանին:

Իմ «դաշնակցական» անցյալի մասին այդ զգայացունց ստի շուրջը սույն գիմուժը ես չէի ներկայացնի, եթե չլիներ խորհրդային ընթերցողի մասին հոգատարությունը, ընթերցողներ, որոնց մեջ կարող են լինել անտեղյակներ, ովքեր իրենց միամտության բերումով կարող են մտածել, թե Չուբար-Չարյանի նման լրագրողների բոլոր գրածները պարունակում են ճշմարտության նշույլ:

Հրամայեք, ընկ. ժողկոմ, որ ինձ ծեծեն, բայց հանցանքի համար, եւ ծեծեն մարդիկ, ովքեր աղտոտված չեն դաշնակցական ցեխով:

Ա.կսել Բակունց

ՀՀ Ազգային անվտանգության նախարարության արխիվ, կարճված գործերի ֆոնդ (Ա.Ա.ՆԱ, ԿԳՖ), գ.3036 (8 հատոր), Հ. 3, 212 եւ 213 թերթերի միջեւ կարված ծրարում երեք ինքնագիր թերթ: Թարգմ. ուսու.:

N 23

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԿԱ ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ

16¹⁶ սեպտեմբերի 1954թ.

Ա.կսել Բակունցին գրտեի 1914թ., Էջմիածնի Գեորգյան ճեմարանում նրա ուսանելու ժամանակից, որտեղ ես դասավանդում էի պատմություն, լատիներեն ու գերմաներեն լեզուներ, ինչպես նաեւ բարձր դասարաններում՝ քաղաքատնտեսություն:

1923թ. Բակունցը, որը նոր էր վերադարձել Խարկովից, ղեկավար մասնակցություն ունեցավ դաշնակցականների կուսակցությունը վերացնելու համագումարի հրավիրման եւ անցկացման գործում: Անցյալում չունենալով որեւէ կապ Դաշնակցություն կուսակցության հետ, չլինելով այդ կուսակցության անդամ կամ նրա գաղափարական հետեւող, Ա.կսել Բակունցը Հայաստանի կոմունիստական կուսակցության Լենինականի գավառային կոմիտեի քարտուղար Երեմիա Բակունցի միջոցով, որը նրա համերկրացին ու բարեկամն էր /ժամանակին մոտիկ մասնակցություն է ունեցել գրողի գաղափարական ձեւավորման մեջ/, ներգրավվել է դաշնակցականների համագումարի կազմակերպման գործում եւ բուն համագումարում հանդես եկել «զղջացող դաշնակցականի» գերում:

Այդ ժամանակ լինելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ես հետեւում էի այդ համագումարի նախապատրաստությանը: Այն անմիջապես ղեկավարում էր Կենտկոմի առանձնացրած հանձնաժողովը, Կենտկոմի քարտուղար Ա.Շահուվարյանի գլխավորությամբ: Հանձնաժողովի նախապատրաստական աշխատանքի մասին հարցը քննարկելու ժամանակ Կենտկոմը նպատակահարմար գտավ այդ գործի մեջ Բակունցի ներգրավումը, մի մարդու, որն ի վիճակի էր ղեկավարել համագումարը եւ նպաստել մտավորականների զգալի շերտերի հեռացմանը դաշնակցականներից, մտավորականների, որոնք անցյալում կապված էին եղել նրանց հետ: Բակունցի կատարած աշխատանքը հետագայում մեզ համոզեց, որ մեր հաշվարկները ճիշտ էին: Նա իրականացրեց ստանձնած առաքելությունը: Պատահական չէ, որ Բակունցը համագումարի այն մասնակիցների թվում էր, ովքեր շուտով ընդունվեցին մեր կուսակցություն մեջ:

Դժբախտաբար Բակունցն անձամբ դաժանորեն հատուցեց դաշնակցականների համագումարի կազմակերպմանը եռանդուն մասնակցելու համար: Հայ «ուսուպականների»¹⁷ խմբից նրա հակառակորդները հետագայում ամբողջովոր

¹⁶ Բնագրում արձանագրության վերջում գրված է այլ ամսաթիվ՝ 18:

¹⁷ РАПП- Российская ассоциация пролетарских писателей.

մատնացույց էին անում նրա «դաշնակցականութունը», մտածելով այդպիսի էժան եղանակով վարկաբեկել եւ նրան գցել գրական վեճերում գրաված դիրքից: Սակայն ո՛չ տրոցկիզմի ու աջերի դեմ պայքարի ժամանակ Բակունցի վարքագիծը, ո՛չ նրա գրական ելույթների բնույթն ու բովանդակութունը, ո՛չ նրա բողոքները Անգրկովկասում ժողովրդի թշնամի Լ.Բերիայի անցկացրած ազգայնական քաղաքականության դեմ, հիմք չէին տալիս կասկածելու Բակունցին՝ որպես դաշնակցականի կամ ազգայնականի: Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը, քարտուղար Ա.Նանջյանի գլխավորութամբ, նրան լրիվ վստահում էր: Բնորոշ է, որ 1930-ական թվականների կեսերին, երբ դաշնակցականներին մերկացնելու համար Ա.Միկոյանի առաջարկութամբ¹⁸ ձեռնարկվեց «Ջանգեզուր» կինոնկարի նկարահանումը, որի բովանդակութունը Հայաստանում քաղաքացիական պատերազմի ժամանակ դաշնակցականների կատարած դաժանութուններն էին, այդ կինոնկարի սցենարի հեղինակ առաջադրվեց Ա.Բակունցը: «Ջանգեզուր» կինոնկարը, որն իրականացվեց այդ սցենարով, փայլուն կերպով արդարացրեց իրեն:

Աշոտ Իոսանիսյան
Արդարադատության գնդապետ՝
Ա.Վիտիեւսկի

ՀՀ Ա.Ա.ՆԱ, ԿԳՖ, գ. 3036 (8 հատոր), Հ.8, թ. 302 եւ հակ. - 305 եւ հակ.:
Բնագիր: Ինքնագիր: Թարգմ. ուռւս.:

N 24

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԿԱ ՄԱՐԳԱՐ (ՄՈՐՈՒՍ) ՍՏԵՓԱՆԻ
ՀԱՍՐԱԹՅԱՆԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ¹⁹

18 սեպտեմբերի 1954թ.

Բակունցին գիտեմ 1924 թվականից: Այդ ժամանակ ես աշխատում էի ՀԿ(բ)Կ Կենտկոմում եւ ՀԼԿԵՄ Կենտկոմում, իսկ Բակունցը՝ որպես գյուղատնտես, եւ գրում ու տպագրում էր ակնարկներ: Բակունցը հայտնի էր որպես գյուղատնտես եւ գրող-արձակագիր: Նրան ճանաչում էի մոտիկից: Հիշում եմ, երբ հանկարծ 1923-1924 թվականներին, որպես գործուն դաշնակցական, նա մասնակցեց դաշնակցականների կուսակցության համագումարի հրավիրմանը եւ անցկացմանը:

Ես ապրել եւ աշխատել եմ Բակունցի հայրենիք Ջանգեզուրում եւ գիտեի բոլոր դաշնակցականներին, իսկ այդ ժամանակ քաղաքացիական պատերազմի ամբողջ ընթացքում, Բակունցը սովորում էր խարկովում, եւ ընդհանրապես չէր կարող մասնակցել դաշնակցականների գործունեությանը: Իմանալով, որ Բակունցը երբեք դաշնակցական չի եղել, 1923-1924 թթ. ես նրան հարցրեցի. «Ինչպե՞ս ես քեզ հայտարարել դաշնակցական»: Նա ինձ պատասխանեց, որ այդ մասին (որ նա դաշնակցական չի եղել) պետք է լռել, եւ որ այդ անհրաժեշտ է մեր բոլշևիկյան կուսակցության համար: Հետո Բակունցն ասաց, որ դաշնակցականների հետ կապված այդ գործը իրեն հանձնարարել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Երեմ Բակունցը: Վերջինս նրա բարեկամն էր եւ հին բոլշևիկ էր: Դաշնակցութուն կուսակցության ինքնալուծարման համագումարի ավարտից մեկ տարի կամ մի փոքր ավելի անց

¹⁸ Առաջարկութունը ոչ թե Միկոյանինն էր, այլ Ստալինինը: Այդ մասին հայտնել էր Միկոյանը Ա.Նանջյանին ուղարկած նամակում:

¹⁹ Հարցաքննութունը կատարել է ԽՍՀՄ գինվորական դատախազության քննիչ արդարադատության գնդապետ Ա.Ն.Վիտիեւսկին:

Բակունցն ընդունվեց ՀամԿ(բ)Կ անդամ եւ այդպիսին մնաց մինչեւ իր բանտարկությունը, 1936թ.:

ՀՀ Ա.Ա.ՆԱ., ԿԳՖ, գ. 3036 (8 հատոր), Հ.8, թ. 316 եւ հակ.- 319 եւ հակ.: Բնագիր: Ձեռագիր: Թարգմ. ուսու.:

N 25

ՀԱՅԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

27 հունիսի 1989թ.

Հսեցին. Ա.Ս.Բակունցի կուսակցական արդարացման (Հետմահու) մասին:

Որոշեցին. Դատական մարմինների կողմից 1937թ. ներկայացված մեղադրանքների դժով Ալեքսանդր Ստեփանի Բակունցի արդարացման եւ 1955թ. մարտի 2-ին քրեական գործը կարճելու կապակցութեամբ նրան կուսակցական առումով արդարացնել (Հետմահու):

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար՝
Օ.Լուբով

ՀԱԱ, Ֆ. 1, ց. 83, գ. 11, թ. 27-28:

ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ...
(Արմեն Տիգրանյանի ծննդյան 125-ամյակի առթիվ)

Հայկական ազգային օպերային արվեստի Հիմնաքարը, նրա չխամրող գոհարներից է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան:

Դեռ 1908 թվականին, «Անուշ» պոեմի առաջին ընթերցումից հետո, հրապուրված թուլմանյանի պոեզիայի բացառիկ երաժշտականությամբ, Ա.Տիգրանյանը սկսեց աշխատել համանուն օպերայի վրա: Իր իսկ խոստովանությամբ՝ «Առաջին ընթերցումից հետո, ես հանպարաստից հորինեցի օպերայի առաջին մեղեդին՝ «Համբարձում յայլա»-ն, որը հնչում է որպես օպերայի լեյտմոտիվներից մեկը: Հովհաննես թուլմանյանի «Անուշ» թեման ինձ ամբողջապես հափշտակեց...»

Տարիների ստեղծագործական պրպտումների եւ վառ ներշնչումների արգասիքը՝ թուլմանյանական ժողովրդայնությամբ հագեցած «Անուշ» օպերան, լույս աշխարհ եկավ 1912 թվականին: Նույն թվականի օգոստոսի 17-ին, Ալեքսանդրապոլի (Լենինական) աշակերտների եւ սիրող երաժիշտների ուժերով առաջին անգամ օպերան բեմադրվեց եւ արժանացավ ջերմ ընդունելության: Փաստորեն Արմեն Տիգրանյանն առաջին հայ կոմպոզիտորն էր, որը ժամանակի առաջավոր գաղափարների ազդեցությամբ, առաջ քաշեց ժողովրդական ոգով ու ոճով ազգային օպերա ստեղծելու դժվարին Հիմնախնդիրը եւ ի պատիվ իրեն եւ ի ուրախություն մեզ՝ այն լուծեց լավագույնս:

1935 թվականի մարտի 27-ին Երեւանի պետօպերայում, առաջին անգամ ներկայացվեց «Անուշ»-ը՝ տաղանդաշատ ռեժիսոր Արմեն Գուլակյանի բեմադրությամբ: Այսպիսով պրոֆեսիոնալ թատրոնն ընդունեց «Անուշ» օպերայի հաղթարշավի էստաֆետը, որը շարունակվում է մինչեւ օրս եւ դեռ շարունակվելու է...

Հայաստանի ազգային արխիվի լավագույն անձնական ֆոնդերից է կոմպոզիտորներ Արմեն եւ Վարդան Տիգրանյանների բնտանեկան ֆոնդը:

2004 թվականի դեկտեմբերին լրանում է Արմեն Տիգրանյանի ծննդյան 125-ամյակը:

Եւս մի առիթ, նորից ու նորից թերթելու ֆոնդի փաստաթղթերը, հուզական պաշեր ապրելու «Անուշ»-ի առաջին բեմադրության մասնակիցների, ներկայացման տարբեր տեսարանները պատկերող լուսանկարներն արդեն որերորդ անգամ նայելիս...

«Իմ դիտողություններն «Անուշ» օպերայի լիբրետոյի մեջ առաջարկված փոփոխությունների նկատմամբ» այսպես է վերնագրել Ա.Տիգրանյանն իր նկատառումներն օպերայի՝ Արմեն Գուլակյանի բեմադրության մասին: Թե ինչ տարածայնություններ են եղել կոմպոզիտորի եւ բեմադրող ռեժիսորի միջեւ, ինչպիսի ընդունելի կամ անընդունելի փոփոխություններ կատարելու առաջարկություններ են եղել, կարծում ենք այսօր էլ՝ տասնամյակներ անց, կհետաքրքրեն թե՛ երաժշտագետներին եւ թե՛ պարզապես հայ օպերային արվեստի երկրպագուներին: Այս համոզմունքով էլ, օգտվելով Հայաստանի ազգային արխիվի ընձեռած եզակի հնարավորությունից, «Բանբեր»-ի ընթերցողներին ենք ներկայացնում վերոհիշյալ «դիտողությունները», որ թվագրված են 1937 թվականի դեկտեմբեր, մասնակի կրճատումներով եւ խմբագրումներով:

Վարդիթեր Մանգասարյան
ՀԱԱ բաժանմունքի վարիչ

«ԻՄ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ «ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՅԻ ԼԻԲՐԵՏՈՅԻ ՄԵՋ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ»

Դեկտեմբեր 1937թ.

Փերիների տեսարանի նկատմամբ ռեժիսոր Արմեն Գուլակյանը կատեգորիկ չի արտահայտվում: Մեկ կողմից նա ասում է, որ փերիների տեսարանը պետք է շատ բարձրորակ տալ, որի համար մեր բեմը տեխնիկական հնարավորություններ չունի: Մյուս կողմից առարկում է, թե «Անուշը» գուտ կենցաղային նյութ է եւ այս պատճառով դեմ է խոսում փերիների տեսարանին:

Ես երկար տարիներ, կարելի է ասել, ապրել եմ Թումանյանի այդ գողտրիկ պոեմով: Օպերայի վերածելուց հետո շատ խնդիրներ բազմիցս անգամ քննության եմ առել եւ երբեք չեմ համոզվել, որ օպերայի միջից հարկավոր է հասնել փերիների տեսարանը, որ «Անուշ» պոեմը եւ համանուն օպերան կարելի է պատկերացնել առանց այդ ֆանտաստիկ մասերի, որ դա «Անուշ» օպերային խանդարող երեւույթ է եւ պետք է դուրս չպրտել նրա միջից:

«Անուշ» պոեմում Թումանյանը պատկերել է մեր հին գյուղը, գյուղի կենցաղն իր բոլոր դրական եւ բացասական կողմերով: Տալով հին կենցաղը, նա չի մոռացել պատկերել նաեւ չարքաշ գյուղացու գեղարվեստական ճաշակի, նրա ֆանտազիայի եւ էսթետիկական ինտուիտիվ ըմբռնումների նմուշները:

Ո՞ր ժողովուրդն իր ստեղծած հերոսների շուրջը, իր երգած սիրահարների շուրջը չի հյուսել նման ֆանտաստիկ հյուսվածքներ, ինչպես Լոռու գեղջուկն է հյուսել Անուշի եւ Սարոյի շուրջը բանաստեղծի բերանով:

Փերիները օրգանապես կապված են պոեմի հերոսների հետ: Մասան իր այդ չքնաղ բնության զավակ Անուշի եւ իգիթ Սարոյի արժեքը բարձրացնում է իր ֆանտազիայով ստեղծած «հուրի-փերիների» բերանով:

Ու փերիները երգում են.

...Ափսոս Անուշ, սարի ծաղիկ,

Ափսոս իգիթ քո յարին...

Չքնաղ Անուշը եւ ամբողջ գյուղում սիրված իգիթ Սարոն գեղջուկի աչքում այնքան թանկ էին ու բարձր, որ նա՝ այդ գեղջուկը այս դժբախտ սիրահարների շուրջը կապել է իր լավագույն գովքը մեր սիրելի բանաստեղծ Հովհաննես Թումանյանի բերանով: Ելնելով դարձյալ ռեալիստական սկզբունքից ես պնդում եմ փերիների տեսարանի պահպանման վրա: Փերիները ես համարում եմ դարձյալ կենցաղային մոմենտ. նա մինչհոկտեմբերյան մեռնող հայ գյուղի կենցաղի օրգանական մասն է: «Անուշը» մեր օպերաներից միակն է, որի մեջ նկարագրվում է մեր անցյալ գյուղը Թումանյանի բարձր գեղարվեստական գրչով, որին մենք պետք է շատ զգուշությամբ մոտենանք:

Չպետք է մոռանալ, որ Անուշը եւ Սարոն «Սոսն ու Վարդիթերը» չեն. խնդիրը միայն նրանում չէ, որ նրանք սիրահարներ են, այլեւ նրանում, որ նրանք սիրված էին ամբողջ շրջապատի կողմից: Եւ այս շրջապատը որոնում է գեղարվեստական բարձր ձեւեր՝ դժբախտ սիրահարների կորուստը ողբալու համար:

Ահա այս ձեւերից մեկն է փերիները մեր գյուղացու երեւակայության մեջ, մինչեւ հոկտեմբերյան շրջանները:

Իրավունք ունենք արդյոք այս ֆորմայի նկատմամբ անփույթ վերաբերվել. արդյոք չենք զղջալու հետագայում:

1.2-րդ գործողության մեջ ես ամենից առաջ կանգ կառնեմ այն հանգամանքի վրա, որ գործողություններ կատարելիս բոլորովին հաշվի չեն առնված գոյություն ունեցող երաժշտության շարահունսական եւ տրամաբանական կապն ու տեխնիկական խնդիրները:

Եթե այս նորամուծությունները ընդունվի այնպես, ինչպես կազմված էր, ապա գործողության երաժշտությունը պետք է ենթարկվեր հետեւյալ մասերի

տեղափոխված թվերին. օրինակ, էջ 25-ի մոտ, պետք է տեղափոխվեն անհիմք բերերինք էջ 33-ից սկսվող երաժշտությունը, հետո դրա մոտ բերերինք էջ 46-ը, հետո էջ 67-ը, հետո էջ 25-ը, հետո՝ 52-ը, հետո 70-ը եւ հետո 67-ը եւ այլն:

Հուսով եմ, որ սա ինքնին հասկանալի է իբրեւ անթույլատրելի եւ անհնարին գործ մի ստեղծագործության նկատմամբ, որն արդեն գրված է:

Լիբրետոն վերանայելիս ես այդ հավելումների ընդունելի մասերը կարողացա հավաքել իմի եւ մտցնել գործողությունների մեջ ամենանպատակահարմար կետում:

2. Այս գործողության մեջ մի անգամ եւս Սարոյի եւ Մոսիի կոխ բռնելուն ես դեմ եմ, որովհետեւ վերջի վերջո կոխ բռնելը դառնում է էթանագին ցիրկային տրյուկ: Մինչ այդ երկու երիտասարդներ կաշռում են, Սարոն ու Մոսին այս գործողության մեջ կաշեն եւ հետո էլ 3-րդ գործողության մեջ կաշեն, սա արդեն շատ է եւ կոխի տպավորությունը թուլացնում է:

Կենցաղային այն մոմենտը՝ թե «Ամբոխի առաջ իգիթին իգիթին գետին չի գցում», այս կոխ բռնելուց չի որ պիտի հասկացվի եւ դրա համար չարժե գերակատարներին մի ավելորդ անգամ գետին թավալել եւ շնչակտուր անել՝ թե տեսեք մենք թեեւ կոխ բռնվեցինք, բայց ինչպես վեր ընկանք, որ ոչ մեկս մյուսին չհաղթեց:

Այս կենցաղային մոմենտը շեշտվում է հարսանիքի տեսարանում, որտեղ Սարոյին եւ Մոսիին առաջարկում են կոխ բռնել, սրանք երկար ժամանակ հրաժարվում են կաշել եւ այդ ժամանակ ռելեֆ կերպով հնչում է նրանց ձայնը ամբոխի միջից՝ թե

«Ամբոխի առաջ իգիթն իր օրում՝

Գետին չի գցել ընկեր իգիթին»:

Այս բառերը նրանք մի քանի անգամ ելեւեջներով կրկնում են, որն անցնում է նաեւ ամբոխի բերանը թե՛

«Գետին չի գցի ընկեր իգիթը

Ամբոխի առաջ ընկեր իգիթին»:

Եվ չնայած այս բանին Սարոն հանկարծ, Մոսիի համար անսպասելի կերպով, գետին է տապալում վերջինիս:

Բացի այս, էջ⁶ որ կոխից հետո քյոխվան Մոսիին համոզում է նորից կաշել, որ Սարոն խաբել է, եւ Մոսին կրկնում է թե՛ նա ինձ խաբել է, վեր չի գցել դեռ, թող գա որ նորից բռնենք...

Խուճախ էլ նույնն է կրկնում՝ թե «խոզապարկուկ էր, Մոսին թուլ էլավ» եւ բանը երբ հասնում է լուրջ ըմբշամարտի, այլեւս չեն թողնում կաշելու:

Թվում է, որ այսքանը բավական է այդ կենցաղային մոմենտը ցույց տալու համար:

3. Այս գործողության վերջում, երբ Անուշին դժբախտ վիճակ է դուրս գալիս եւ մտնում է Մոսին ու կշտամբում քրոջը, բավական կոպիտ կերպով, այդ լաց ու կոծի համար, ես դեմ եմ Մոսիի հետ եւս Սարոյի երեւալուն: Սարոյի համար ստացվում է մի անհարմար կացություն՝ Մոսին անպատվում է իր քրոջը՝ Անուշին, իսկ Սարոն կանգնել է եւ խմբի հետ երգում է՝

Մի տրամիլ Անուշ,

Մի լինիլ համառ...

Եվ այս բոլորից հետո՝ բարկացած Մոսին մի կողմ է գնում, Սարոն վշտացած Անուշին թողնելով գնում է մի ուրիշ կողմ:

Այս տեսարանում Սարոն բոլորովին չպետք է երեւա, որպեսզի այդ կեղծ դրուժությունն էլ չստեղծվի: Նրա բացակայությունը գործողությանը ոչնչով չի խանգարի: Վերջապես պիեսի մեջ հերոսների հաճախակի հրապարակ գալը նվաստացնում է նրանց արժեքը:

Նամանավանդ այս գործողության մեջ եթե երկու ընկերների մեջ առաջ բերենք լուրջ կոնֆլիկտ, կխանգարի հաջորդ գործողության մեջ՝ հարսանիքում իբրեւ ընկերներ նրանց դուրս գալուն:

3-րդ գործողությունը ընկ. Գուլակյանը որոշել էր անջատել 2-րդ պատկերից, տալով մի ամբողջ գործողություն հարսանիքի տեսարանի եւ կոխի համար:

2-րդ պատկերի անջատումը զուտ տեխնիկական նկատառումներով է՝ ունենալ լայն տարածություն այդ գործողությունը հարուստ բեմադրելու համար:

Առաջին պաշին թվում է թե լավ է մտածված, սակայն դժբախտաբար պիեսի հետագա տրամաբանական զարգացման խզումն է առաջ գալիս:

Այս գործողության երկրորդ պատկերը մեխանիկորեն տարած միացրած է հետեւյալ գործողության հետ:

Մրա հետեւանքով ի՞նչ է ստացվել. Մոսին, ձմռան հարսանիքում անհաջող կոխից հետո անպատված հեռանում է, մարսում է այդ բոլորը եւ մի օր, /մյուս գործողության մեջ/ արդեն դարնանը, միտքն է ընկնում այդ անպատվությունը եւ վարագույրը բացվելիս նա երգում է.

«Դու շման դարձանք էս հարսանիքից

Ախպեր տղեք գեղի միջին... եւ այլն:

Կամ- Ամոթ քեզ Մոսի, թուք ու նախատինք

...Վրեժ, վրեժ նամարդից- եւ այլն:

Մոսին այս կենտրոնական արիան, որի մեջ նա մերթ հուսահատվում է եւ մերթ գայրույթն ու ցատումը ցուցաբերում, փոխանակ երգելու դեպքից անմիջապես հետո, ըստ Գուլակյանի, երգում է ամիսներ անցնելուց հետո, եւ Անուշին էլ այստեղ կարծես առաջին անգամն է հանդիպում հարսանիքից հետո, դաշույնը հանած հարձակվում է վրան:

Այս բոլորից հետո, շարունակվում է հոգեբանական սխալը.

Մոսիի գնալուց հետո Անուշը մենակ է, գալիս է Սարոն, («նա ամեն ինչ գիտի» գրում է ծանոթություն մեջ ընկ.Գուլակյանը) եւ առաջարկում է Անուշին հենց էս գիշեր փախչել:

Ակներեւ է այստեղ եւս հոգեբանական կապի խզումն, այսինքն՝ հետին թվով կատարված գործողություն:

Հարսանիքից անմիջապես հետո, ծաղրանքի ենթարկված Մոսին պիտի հարձակվեր քրոջ վրա. Անուշը, դեպքերի ճնշման տակ պիտի որ վճռեր փախչել Սարոյի հետ. Սարոն կատարված փաստի առաջ կանգնած, պիտի վճռեր Անուշին փախցնել հենց առաջին հարմար ընթացքին: (Իսկ այդ հարմար ընթացքն է, երբ բոլորը բարձրանում են սարը: Բնութային ծոցում, գիշերով Սարոն փախցնում է Անուշին): Ակներեւ է այս բոլորից, որ Մոսիի անպատվությունից հետո, նրա եւ Անուշի հանդիպումը պետք է լինի հենց հարսանիքից անմիջապես հետո եւ հուսահատված սիրահարները այստեղ որոշում են փախչել միասին, երբ որ սարը բարձրանան:

Այս բոլորից ելնելով, ես գտա որ անհրաժեշտ է 3-րդ գործողությունը դարձյալ թողնել երկու պատկերից, ինչպես որ կա:

Մի քանի խոսք 3-րդ գործողության առաջին մասի նկատմամբ մինչեւ կոխը:

1.Քյոխվի առաջին երգի (ռեչիտատիվ) տեքստը փոխված է եւ նույն երաժշտության տակ դրված է ուրիշ տեքստ, որը այդ երաժշտությանը ոչ շեշտով եւ ոչ էլ հոգեբանորեն չի համապատասխանում:

Ես վերականգնեցի նախկին տեքստը:

2.Օհանի դերը հանած է եւ նրա երաժշտությունը օգտագործված է խաչեղբոր համար ուրիշ տեքստով. դարձյալ անթույլատրելի է:

Ես Օհանի դերը վերականգնեցի, իսկ խաչեղբորը տվի նոր երաժշտություն, վերամշակելով տեքստը:

3.Տերտերի ելույթը կարեւոր չեմ համարել եւ հանել եմ:

Օպերայի մեջ տերտերի դեր կար. նախկին բեմադրության ժամանակ Գուլակյանը հանել էր, իսկ այժմ ինքն է ավելացրել:

Տերտերի բերանը դրած Գուլակյանի տեքստը ոչ կենցաղային մոմենտ է կրում իր մեջ եւ ոչ էլ երաժշտության մեջ մանավանդ աչքի ընկնող զվարճախոսություն, որն արժեր ցույց տալ:

4-րդ գործողություն. այս գործողության մասին, ինչպես եւ նախորդի, չի ասված թե տարվա որ եղանակին է կատարվում:

1. Այս գործողութիւնը կատարվում է գարնանը, ավելի ճիշտը՝ սար բարձրանալուց հետո, յայլայլում:

Այս գործողութիւնը ուզում են գյուղում տալ, որպեսզի տրվի հայկական գյուղի տեսարանը:

Դժբախտաբար գործողութիւնը չի թելագրում այդ: Փախուստը ըստ ամենայնի հարմար է քոչ գնալուց հետո, ազատ լեռներում:

2. Գործողութիւնի սկզբում ես տվել եմ Մոսիի գաղտագողի վրանից գիշերը դուրս գալը եւ թե ինչպէս նա Սարոյի հասցեին հոխորտում է՝ իջնել գյուղ եւ վառել նրա տուն ու տեղը:

Այս բանին, պատահամբ եւ աննկատելի Մոսիի կողմից, ներկա է լինում Օհանը, Հետեւում է Մոսիին եւ հետագայում բաց է անում նրա չարագործութիւնը:

Այս բոլորը կատարվում է հանդիսատեսի աչքի առջ, միայն հարկավոր է մի փոքր ավելի դինամիկա տալ եւ ավելի ռեփիֆ դարձնել տեսարանը-բեմագրութիւնն ու միզանսցենան շտկել:

Այս բոլորը հանված է իր երաժշտութիւնի հետ, որքան էլ սա կապ ունենար իր նախորդ եւ հետագա երաժշտութիւնի հետ: Օհանին դարձրել են պահապան եւ երկու պահապաններ, գործողութիւնի սկզբում, երկար ու բարակ խոսում են իրար հետ (16 տող տեքստ) թե ոչ Մոսին եւ ոչ Սարոն դեռ տուն չեն եկել, որ ով գիտի ինչ են մտածում եւ ինչ կարող են անել հենց այս գիշեր: Վերջը բաժանվում են, մեկը գնում է մի կողմ, մյուսը մի այլ, որպեսզի իգիթներին գտնեն, չլինի թե մի բան պատահի: Կարծես ամեն գիշեր նրանք հետեւում էին իգիթներին մինչեւ նրանց քուն մտնելը:

Այսպիսով, կենդանի գործողութիւնը- Մոսիի գեղ իջնելը եւ Օհանի հետամուտ լինելը- փոխարինված է ստատիկ խոսակցութեամբ. թե ինչու չգիտեմ: Ենթադրում եմ թե նրա համար է, որ հանդիսատեսը հասկանա Մոսիի ու Սարոյի իրար դուշման լինելը, որ հենց էս գիշեր էլ կարող է մի բան պատահել: Չգիտեմ ինչ կարիք կա նախապատրաստել առդիտորիան (եթե միայն այդ պահապանների խոսակցութիւնը երգի միջոցով հասնի առդիտորիային):

Որ Սարոն ու Մոսին դուշման են դարձել իրար «հենց էն հարսանիքից», հանդիսատեսը շատ լավ հասկացավ նույն հարսանիքի ժամանակ:

Նույնը շեշտեց Մոսին իր արիայի մեջ.

«Դուշման դարձանք էս հարսանիքից»... նույն պատկերում Մոսին հեռանալով գոռում է.

Վրեժ, վրեժ նամարդից...

Նույնպէս դժվար չէ գուշակել, որ էն հրդեհը, որի լույսը քիչ հետո լուսավորելու է երկինքը, նրանցից մեկի ձեռքի գործն է լինելու:

Վերոհիշյալ պահապանների դիալոգը ես հանել եմ եւ վերականգնել նախկին տեքստը:

Գործողութիւնը նպատակահարմար է կատարել (սար գնալուց հետո) յայլայլում, ինչպէս եւ պայմանավորվում են Սարոն եւ Անուշը՝ քոչի օրը փախչել:

Ինչ վերաբերում է հրդեհի տեղին, գյուղի փոխարեն, հրդեհը կարելի է տալ հանդում, որը քոչին կարող է ավելի մոտ լինել քան թե գյուղը:

5-րդ գործողութիւն, 1-ին պատկեր.

Սարոյի սպանութիւնի եւ Անուշի խելագարութիւնի տեսարանների մեջ անպայման պետք է վարագույր տալ: Այլ կերպ ասած, 5-րդ գործողութիւնը պետք է թողնել դարձյալ երկու պատկերից, ինչպէս որ կար:

Թումանյանը նույնպէս անջատել է այս երկու տեսարանները: Նա գրում է.

«Փարունը եկավ, հավքերը եկան,

Սարեր ու ձորեր ծաղիկներ հագած

Մի աղջիկ եկավ, մի մենակ քաղվոր...»

Այստեղից երեւում է, որ Անուշը երգում է ու լալիս («Երգերը անկապ, երգերը տխուր») ոչ թե Սարոյի դիակի ետեւից, այլ այն ժամանակ, երբ գյուղը վաղուց արդեն անցել էր իր առօրյային, երբ շատերը մոռացել են դեպքի սրութիւնը. Անուշն է մենակ թափառում, լալիս ու յարն է կանչում՝

Ետ դառ ետ, իգիթ, Ետ դառ անիրավ...

Պետք է զգայուն լինել եւ աչքաթող չանել այս պոետիկ մոմենտը, որը շեշտել է Թումանյանը եւ իր բարձր գեղարվեստական հմտությամբ պատկերել:

Թող ամեն մեկն ինքն իրան հարց տա՝ թե ո՞րն է ավելի գեղարվեստական ու վեհ. դիակի ետեւից ուժեղ ու ցնցող /նատուրալիզմ/ ողբն ու կանչը՝ «Ետ դառ ետ իգիթ», թե՞ Անուշի անհույս հեծկլտանքն այն վայրերում, ուր մի օր, անցյալում կատարվել է ոճիրը:

Մի՞թե չէր կարող հենց Թումանյանը ինքը միացնել խելագարության պատկերը սպանության հետ, բայց նա չի արել այդ, որովհետեւ այսպես ավելի գեղարվեստական է, հեռու է նատուրալիզմից ու գոեհկուլթյունից:

Հետո, ի պաշտպանություն այս պատկերների միացման, Անուշը իսկական խելագար չէ, նա կիսախելագար է: Ասում են՝ Թումանյանի սկզբնական խմբագրության մեջ Անուշը չի խելագարվում: Ոմանք էլ ասում են, թե վերջը նա մարդու է գնացել: «Ատումենները» ես հաշվի չեմ առնում, ես միայն առաջնորդվում եմ Թումանյանի վերջին պոեմով, որն հրատարակված է: Չգիտեմ, ինչպես հասկանալ կիսախելագար:

Թումանյանը Անուշի բերանով պարզ ցույց է տալիս հոգեկան հիվանդ իր յարը փնտրող անբախտ աղջկան, իր կորցրած սերը: Նա տեսնում է հարսանիք, նա տեսնում է ինչպես դիակ են բերում, որ այդ դիակն իր սիրած Սարոն է, նա տեսնում է, որ ոչ, դա իր յարը չէ, այլ մի դիակ է լուռ, հոտած:

Նա երգում է անկապ.

«Տեսեք տեսեք դափ ու գուռնով

Ինչ հարանիք է դուրս գալիս»

Եվ հանկարծ բացականչում է. (կոնտրաստ)

Բերում են հրեն, աման, մեր տան դեմ

Վեր դրեք վրեն հյուսերս քանդեմ.-

(Նորից կոնտրաստ)

Ախ չէ՛, ամա՛ն, ասում են դա

Մի դիակ է լուռ, հոտած

Այս տողերը ձայնագրող երաժիշտը եւ Անուշի դերակատար երգչուհին, իրավունք չունեն այլ կերպ մեկնաբանել (առաջինը այս մասի երաժշտական կոմպոզիցիան, իսկ երկրորդն՝ իր խաղն ու երգը), քան մի խելագարության պատկեր՝ հոգեկան խանգարում:

Մի ուրիշ ապացույց եւս այն մասին, որ այդ երկու պատկերները չպետք է միացնել եւ որը թե պոեմի եւ թե օպերայի մեջ կա. դա մոր կանչն է խելագար Անուշին.

«Անուշ, այ աղջի, Անուշ տու արի»:

Կանչում է մայրը, վերեւից կանչում:

Բնական է, որ այստեղ մոր կանչը դեպքի օրը չէր սազի: Մայրը իր խելագար աղջկան կանչում է սրտակտուր, ամեն օր էն ժամանակից, երբ Անուշը չկարողանալով տանել իր սիրածի կորուստը սարերն ու ձորերն ընկավ, իր յարը կանչելով:

Ոմանց կարծիքով Սարոյի մահով կարելի է վերջացնել օպերան: Դա եւս ճիշտ չէ: Պոեմը եւ «Անուշ» օպերան իրենց առանցքն ունեն ոչ թե Սարոն, այլ Անուշը եւ պոեմի վերնագիրը «Սարո» չէ, այլ «Անուշ»: Երգը սկսվում է Անուշով, նրա անբախտ վիճակով եւ վերջանում է նրա խելագարությամբ ու մահով:

Հաճախ կրկնում են թե մենք չպետք է կորուրեն հետեւենք Թումանյանին: Ճիշտ է, պետք է բաց աչքով հետեւենք եւ լավ ուսումնասիրենք այս բարձր գեղարվեստական գործը: Ես չեմ ասում, որ արտուրդ էլ լինի պետք է ընդունենք, սակայն չլինի թե ինքներս արտուրդի մեջ ընկնենք:

Շարունակ փոփոխելով ու կրճատելով «Անուշը», մենք Թումանյանից կհեռանանք, որի պատասխանատվությունը ես ինձ վրա երբեք չեմ ուզում վերցնել:

Վերջացնելով խոսքս, ես խնդրում եմ ինձ չկաշկանդել իմ ստեղծագործական աշխատանքի մեջ, թույլ տալ ինձ մոտենալ այս երկին այնպես, ինչպես ես ինքս եմ ըմբռնել:

Ռեժիսորական ցուցմունքներ եւ այլ բացատրութիւններ ես ընդունում եմ, ընդունում եմ իդեալոգիական խնդիրների քննարկում, ընդունում եմ նաեւ երաժշտական մասի քննադատութիւն, սակայն այդ օպերայի բարոյական ամբողջ պատասխանատվութիւնը մասսայի առաջ, ինձ վրա է ընկնում: Ինչ էլ որ գրի լիբրետիստը, ինչ էլ որ թելադրի ռեժիսորը, վերջին պատասխանատվութիւնը ընկնում է կոմպոզիտորի վրա, շատ արդարացի կերպով:

Կոմպոզիտորը չի կարող երաժշտագրել մի երկ, եթե նա չի հավանում. իսկ եթե երաժշտագրել է, ուրեմն հավանել է եւ ներշնչվել նրանով եւ պատասխանատու է այդ երկի համար:

Ի նկատի ունենալով այդ, ես իրավունք եմ համարում ինձ խիստ մոտենալ այդ բեմադրութեանը եւ մտցնել իմ դիտողութիւնները:

ՀԱԱ, Ֆ. Մ-52, ց. 1, դ. 2, թ. 1-12: Ինքնագիր:

КАРЕН МИКАЭЛЯН В ХАРАКТЕРИСТИКАХ АРМЯНСКИХ И РОССИЙСКИХ ДЕЯТЕЛЕЙ ЛИТЕРАТУРЫ И ИСКУССТВА 1940г.

Видный литературно-общественный деятель первой трети XX века Карен Микаэлян (1883-1941) был арестован 26 июля 1937 г. НКВД в Москве и переправлен в Ереван в качестве “особо опасного преступника”¹. Известный писатель, переводчик, член Союза писателей СССР и Комитета помощи Армении, обвинялся в том, что “являлся участником московской группы правотроцкистской националистической организации Армении, ставившей своей целью отторжение Армении от Союза ССР и создание армянского национально-буржуазного государства и по заданию организации проводил националистические установки в литературе...”²

15 марта 1940 г., было вынесено обвинительное заключение: направить следственное дело N 19114 на слушание Особого совещания СССР (ОСО).³ Свой приговор ОСО вынесло 19 октября 1940 г.: “Микаэляна Карена Сергеевича за участие в антисоветской националистической организации заключить в исправительно-трудовой лагерь сроком на пять лет, считая срок с 26 июля 1937г.”⁴

В течение марта – мая 1940 г. жена писателя Арфеник Аветовна Микаэлян обращается к некоторым армянским и русским поэтам и переводчикам за помощью и ходатайством спасти своего оклеветанного мужа от наветов врагов и неминуемой гибели в сталинских застенках.

Положительные и благоприятные отзывы на писателя написали Мариэтта Шагинян, Павел Антокольский, Мартирос Сарьян, Наири Зарян, Иоанна Брюсова, Александр Ильинский.

Предлагаемые вниманию читателей неопубликованные, в оригинале⁵ ходатайства названных деятелей культуры хранятся в Музее литературы и искусства им. Чаренца в Ереване, в фонде К.Микаэляна (NN 174-179).

Документы не озаглавлены из-за общности их содержания.

Роберт Багдасарян
кандидат филологических наук.

N1

1 марта 1940 г.
Ереван

Карена Микаэляна знаю с 1931 года, знаком с его литературной деятельностью. Он один из тех представителей армянской дореволюционной интеллигенции, которые после Октября и советизации Армении лояльно работают в области советской культуры. Микаэлян положил много труда для составления большой антологии армянской поэзии на русском языке. Эта книга сейчас уже выходит.

Наири Зарян.
N 176

N2

3 апреля 1940г.
Ереван

Беллетриста Карена Микаэляна я знаю очень давно, приблизительно с 1910 года, как молодого литератора, выступавшего с прогрессивной группой поэта Вагана Теряна, принимавшего также активное участие в издании "Поэзии Армении" под редакцией Валерия Брюсова. И в дальнейшем в послеоктябрьский период много работавшего в советских изданиях. Я его знал как честного, лояльного советского гражданина.

М. Сарьян.
N 179

N3

8 апреля 1940 г.
Москва

Армянского писателя Карена Микаэляна знала в течение нескольких лет (примерно с 1932 года); от каждой встречи с ним у меня оставалось впечатление его искренней лояльности в отношении советской власти, его большой любви к армянской литературе и культуре, его полезности в качестве культурного работника.

Мариэтта Шагинян.
N178

N4

30 апреля 1940г.
Москва

Карена Сергеевича Микаэляна я знал в течение нескольких лет с 1934 года, как редактора Антологии Армянской Поэзии. Он всегда производил на меня впечатление человека безусловно советского. Его энергия и способности в служении родной армянской, - и тем самым нашей общей, - культуре достойно самого лучшего отзыва. К.С.Микаэлян настоящий преданный работник советской культуры.

Павел Антокольский.
N 174

N5

14 мая 1940 г.
Москва

Валерий Брюсов в своем предисловии к сборнику "Поэзия Армении" писал: "...в июне прошлого года (1915) ко мне обратились представители Московского армянского комитета с просьбой принять на себя редактирование сборника...". Среди этих представителей был Карэн Сергеевич Микаэлян. Далее в том же предисловии Брюсов писал: "... один из представителей, любезно приняв на себя обязанность быть моим учителем, моим профессором, начал давать мне уроки языка и читать мне курс лекций по армянской литературе...". Этот представитель был тот же Карэн Сергеевич Микаэлян, который из скромности просил не упоминать его имени в данном случае.

Так познакомились мы, т.е. Брюсов, мой покойный муж, и я с К.С.Микаэляном.

Доля работы над сборником, доставшаяся К.С.Микаэлян, была немалая. Им было сделано много подстрочных переводов, пересказано много армянских книг, статей литературных и исторических. Во время общей работы с Брюсовым, К.С.Микаэлян дружески сошелся с Брюсовым, дружба эта тянулась до самой смерти поэта, ибо они не порывали знакомства и после выхода в свет "Поэзии Армении".

Что касается лично меня, я тоже не порывала знакомства с К.С.Микаэляном за все годы с 1915 года. Знаю я его и как моего учителя армянского языка и как литератора, никогда не прекращавшего своих литературных трудов. В 1928 году я переводила его рассказы, которые имели успех у публики (были напечатаны в 1929 г.). Мы постоянно совещались над переизданием тех или иных брюсовских переводов в разных изданиях.

Я с уверенностью могу засвидетельствовать, что Карэн Сергеевич неустанно работал на поле общественного труда, на который не жалел своих сил, что он любил родину превыше всего, что личные интересы никогда не превалировали у него над общественными.

Таким я знала Микаэляна, таким считал его Брюсов и в годы, когда Брюсов уже вступил в партию.

Иоанна Брюсова.

№ 175

№6

14 мая 1940 г.

Москва

Карена Микаэляна я знаю более двадцати лет. Наши литературные интересы и, в частности, армянская поэзия постоянно сближали нас.

Талантливо написанные Микаэляном новеллы неоднократно вызвали во мне желание сделать их достоянием русского читателя, и несколько из новелл Микаэляна я перевел с армянского языка на русский.

Наибольшую известность получила новелла "О хитрости женщин", передаваемая не один раз и с большим успехом по радио.

Но я знаю Микаэляна не только как писателя: я сумел узнать его как и человека. Чуждый каких-либо интриг, всегда прямой, он, как человек передовых идей, с первых же дней Советской власти, стал работать рука об руку с большевиками, и во всей своей работе, во всех своих поступках и высказываниях всегда лояльно и честно относился к Советской власти.

Александр Ильинский.

№ 177

П Р И М Е Ч А Н И Я

1 См.: Литературная Армения, 1991, № 11-12, с. 98.

2 Там же.

3 Там же, с. 99.

4 Там же.

5. На армянском языке приведены ранее отзывы М.Сарьяна, М.Шагинян, П.Антокольского в кн.: Դ.Գալստյանի Փակ դռները գաղտնիքը, Երևան, 1994, էջ 428-429.

Էջեր ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հարուստ ու գուճազեղ է Իսահակյանի ձեռագրերի աշխարհը, ձեռագրեր, որոնք նրա հոգու ու խոհերի թարգմանն են եղել, նրա բեղմնավոր ստեղծագործական ճանապարհի ուղեկիցներն ու այն մանրիկ վրձնահարվածները, որոնցով մեզ համար ամբողջացել է Վարպետի կյանքի եւ արարչագործության մեծ ու շքեղ կտավը:

Մոցատետրից պոկված մի թերթիկ է, թե հուշագրություն, մտերիմներին ու ընկերներին ուղղված նամակ թե օրագիր, միեւնույնն է, դրանցից յուրաքանչյուրը նրա ապրած շունդալից կյանքի մի փոքրիկ մասնիկն է, ամեն արարածի համար գահ ու աստղ ունեցող նրա երկինք սրտի մեկ զարկը:

Այս ամենի մեջ հատկապես հետաքրքիր են նրա նամակները, որոնք համեմված են Վարպետի՝ երբեմն զուսպ ու չափավոր, երբեմն մտերմիկ ու հարազատ, երբեմն էլ հումորով ու կատակով արված եւ զարմանալի անկեղծություններ ու շիտակություններ շնչող դիտողություններով ու խորհուրդներով, սեփական մտորումները զրուցակցի հետ անթաքույց կիսելու ու քննարկելու գերող անմիջականությունները:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող նամակների սույն փոքրածավալ հավաքածուն ընդգրկում է բանաստեղծ Աշոտ Գրաշուն¹ եւ նրա տիկնոջը՝ գրականագետ Մարգարիտա Աթաբեկյանին², ինչպես նաեւ Մոսկվայի մանկական հրատարակչություն («Детиздат») գրած Իսահակյանի նամակները, որոնք պահվում են ՀԱԱ-ի Աշոտ Գրաշուն ընտանեկան արխիվային ֆոնդում:

Նամակները տպագրության նախապատրաստելիս լեզվաոճական միջամտություններ չեն կատարվել, ուղղանկյուն փակագծերում լրացվել են միայն կրճատ գրված բառերը:

Կարծում ենք՝ հրատարակումը կհետաքրքրի ընթերցողին՝ մեկ անգամ եւս նրան պատճառելով մեծ բանաստեղծի հետ առնչվելու հոգեկան հաճույքը:

Էմմա Հովսեփյան
ՀԱԱ տնօրենի տեղակալ, բանասիրական
գիտությունների թեկնածու

N 1

24 մարտի 1940թ.

Երեւան

Սիրելի Գրաշի,

Իր ժամանակին ստացել եմ սիրալիր նամակդ եւ բայաթիներիդ³ չքնաղ գիրքը:

Շատ ու շատ շնորհակալ եմ քո հարգալից ուշադրության համար:

Վերջերս չափազանց զբաղված էի «Ընտիր երկերիս» հրատարակչության գործով: Վերջապես առաջին հատորը լույս տեսավ պահանջներն անհամապատասխան տիրաժով (5000), որ իրար գլուխ կոտրելով մի երկու օրում սպառվեց: II հատորը, որի մեջն է «Աբու-Ղալան», մի քանի օրից հետո լույս կտեսնի:

Դա ուղղած օրինակն է:

Ինչպե՞ս պիտի կազմակերպել «Աբու-Ղալայի» թարգմանությունը. արդյոք տողացի թարգմանությունը ինչպես պիտի լինի. ուսերե՞ն թարգմանել, թե՞ դու կամ մի ուրիշը՝ ուղղակի հայերենից աղբբեջաներեն լեզվի⁴: Այս հանգամանքները պիտի պարզել: Իհարկե, այստեղ կա լավ ուսերեն գիտցող: Բայց ո՞վ պիտի տա նրա հոնորարը: Թե՞ դուք Բաքվում այդ գործը կկատարեք: Գրի՛ր այս մասին:

Հիմա դառնանք քո թարգմանություններին՝ բայաթիներին: Բոլորը կարգացի եւ շատ-շատ հավանեցի, եւ մի հոգված եմ պատրաստում, մի գնահատական՝ «Գրական թերթի» համար⁵: Թարգմանություն չէ, այլ, շատերի նկատմամբ, կարող եմ ասել, որ

ստեղծագործութիւնն է, Հայացրած միանգամայն: Ապրես, գորանաս: Զգացված, ապրած, էմոցիոնալ Հագեցած գեղեցկութիւններ են դարձել:

Սիրելի՛ Գրաչի, ջերմագին կբարեես Ադրբեջանի մեր ազնիվ ընկերներին՝ Սամեդ Վուրդունին⁶, Ռասուլ Ռզային⁷, Զամանովին⁸, որ այդպես սրտով ուզում են «Աբու-լալան» մեր ադրբեջանական Հարագատ, եղբայր, սրտակից ժողովրդին Հասցնել, դարձնել այդ՝ գգացմունքերով վառ ու Հարուստ, սիրաշատ ժողովրդի սեփականութիւնը: Սա մեծ պատիվ է ինձ Համար, եւ երախտապարտ եմ ամենաանկեղծ կերպով, թող մեր Հարեւանները մեզ Հասկանան եւ սիրեն, մնացածները դատարկ բաներ են: Մեր արձանագործները ու նկարիչները, որ եկել էին մեծ նիզամու⁹ արձանի կոնկուրսի Համար, վերադարձան հիացած մեր ադրբեջանական ընկերներին ընդունելութիւնից, վերաբերմունքից. խոսք չէին գտնում արտահայտելու իրենց գուհունակութիւնը:

Բարեւներ մեր Հայ ընկերներին, բոլորին: Սպասում եմ նամակիդ եւ, մանավանդ, քո գալուն:

Սիրով եւ կարոտով՝

Ավետիք Իսահակյան

Ֆ. 401, ց.1, գ.129, թ.1-2: Ինքնագիր:

N 2

10 апреля 1940 г. Ереван

Глубокоуважаемая Маргарита Леоновна!

Ваше письмо от 14/II-с. г. я получил своевременно. Извиняюсь за долгое молчание. Был очень занят выходом моих сочинений в 2-х томах. И сейчас я крайне перегружен очередными своими работами, которые я обязан выполнять к сроку, так как правительство всячески идет мне навстречу.

Я весьма сожалею, что принужден отказаться от участия в сборнике¹⁰, но я уже беседовал об этом с Д. Демирчяном, который охотно согласился взять на себя составление вступительного слова и помочь Вам всячески. Он великоленно справится с этим делом, так как предмет ему и близок, и хорошо знаком.

Д. Демирчян¹¹вчера выехал в Москву. Вы можете договориться там с ним. Вероятно он остановится в гост[инице] «Москва», в противном случае адрес его можете добыть в Союзе писателей.

Снова извиняюсь за невольный отказ от своего слова. Мои лета и здоровье, к сожалению, не дают мне возможности быть столь перегруженным работой.

С сердечным приветом

Ваш Аветик Исаакян.

Ֆ.401, ց.1, գ.267, թ.1-2: Ինքնագիր:

N3

10 апреля 1940

Г.Ереван

Уважаемые товарищи!

Подтверждая получение вашего письма от 13/-с.г., я очень извиняюсь за задержку моего ответа, что можно объяснить моей чрезмерной перегруженностью работой.

К моему великому сожалению я принужден отказаться от вашего лестного для меня предложения, о чем более подробно и мотивированно я одновременно пишу тов. М.Л. Атабекян.

С искрен[ным] уважением

Аветик Исаакян

Ֆ.401, ց.1, գ.178, թ.1: Ինքնագիր:

N 4

12 սեպտեմբերի 1940թ.
Երևան

Սիրելի ընկեր Գրաչի,

Շնորհակալութեամբ միշտ ստանում եմ «Խորհրդ[ային] գրող»¹² Ձեր ամսագիրը: Կարծում եմ ավելի պերճախոս կերպով չպիտի կարողանայի ապացուցել իմ շնորհակալությունը, քան ոտանավորներ ուղարկելով: Հույս ունեմ, որ մեկ-մեկ նյութ կուղարկեմ Ձեզ, առայժմ այս երկու փոքրիկ ոտանավորներս «Խորհրդային» գրողի¹³ համար:

Ես նոր եմ վերադարձել Սեւանից, ուր ընկերներիս հետ լավ ժամանակ անցկացրինք: Նրանից առաջ մոտ երկու ամիս թափառեցի խորհրդային Վրաստանում: Երեւի մյուս տարի էլ կթափառեմ Ազրբեջանում, հատկապես Ղարաբաղում:

Ձերմ բարեւներ ընկերներին, Սեւոնցին¹⁴, նրա տիկնոջը, Հուրյանին¹⁵ եւ բոլորին: Բարեւեր նաեւ ընկեր Սամեդ Վուրդունին, Ռ. Ռդային եւ մյուսներին:

Սիրով միշտ քո

Ավետիք Իսահակյան

Ֆ.401, ց.1, գ.129, թ.3: Ինքնագիր:

N 5

2 октября 1940
г. Ереван

Ваше² письмо от 5 сентября 40 г. я получил довольно поздно, так как меня не было в Ереване.

Я очень сожалею, что вопреки моему желанию-быть Вам полезным-должен отказаться от Вашего лестного предложения написать вступительную

¹ Նամակն ուղղված է Մոսկվայի մանկական հրատարակչություն («Детиздат»):

² Նամակն ուղղված է Մոսկվայի մանկական հրատարակչություն («Детиздат»):

статью и взять на себя редактирование задуманной Вами антологии армянской литературы.

Я слишком занят своими текущими весьма срочными литературными делами, что лишает меня возможности взяться и за предложенную Вами работу, да к тому же мои лета уже дают себя чувствовать. Поэтому к великому моему сожалению я должен отказаться от Вашего предложения.

С тов[арищеским] приветом

Аветик Исаакян

Ֆ.401, ց.1, գ.178, թ.2: Ինքնագիր:

N 6

15 Հոկտեմբերի 1940թ.
Երևան

Սիրելի Գրաչի,

Այս առավոտ ստացա նամակդ, առաջ սպասում էի նամակիդ, բայց Հետո իմացա Հուրյանից, որ Բորժոմ ես, հանգստացա:

Լավ ես արել, գնացել ես. այս տարի ես էլ եղա թե՛ Բորժոմ, թե՛ Աբասթուման եւ թե՛ Ախալցխա, ոչ երկար ժամանակով, ամեն տեղ մի քանի օր միայն: Շտապում եմ գրչելու այս նամակը՝ Հայտնելով, որ «Հայրենի հող» պոեմաս, որ հավանել էք եւ ուզում էք տպել, կարծում եմ, որ լավ կլինի մի առ ժամանակ հետաձգեք: Այստեղ ինչ-ինչ պատճառներով, ինձ համար անհասկանալի եւ անհեթեթ պատճառներով, թերեւս ոմանց քմահաճությամբ, մերժեցին. կարծում եմ, որ գլխացավանք պիտի պատճառի նրա հրատարակումը թե՛ ձեզ եւ թե՛ ինձ: Անհարմար է, թերեւս, լավագույնն է թոեղնել առայժմ, եթե ուշ չէ արդեն:

Ուղարկում եմ նորից չորս ոտանավոր եւ թողնում եմ խմբագրությանդ բարեխճությանը:

Ասում ես, որ դալ տարի գնանք Ազրբեջան, Ղարաբաղ, Թափառենք; Լավ միտք է. ուրախությամբ. օրը դա, բարին հետը, կամ հին հասկացողությամբ եթե աստված կամենա: Գոնե լինեինք Նուխի, Շամախի եւ Ղարաբաղ:

«Կարոտ մանկության» բանաստեղծությունը շատ ու շատ լավն է. անկեղծ, էմոցիոնալ եւ նոր, ոչ շաբլոն. սա դասվում է «Ա՛խ, միտս ընկավի» կողքին: Ապրես:

Գրաչի ջան, հույս ունեմ, որ նամակս ստանալուդ պես՝ կպատասխանես:

Նկատում ես, անշուշտ, որ գրում եմ նորագույն ուղղագրությամբ. այս նորամուծումը՝ կիսատ-պռատ, լավ բան էր:

Ձեր թերթը (ամսագիրը) լավ է խմբագրվում: Հետաքրքրական է, եւ որ գնահատելի է ժամանակին է լույս տեսնում:

Ձերմագին բարեւներ ընկերներին՝ Գ. Սեւոնցին, Ս. Գրիգորյանին, Հ. Սահյանին¹⁶, Հ. Ամիրխանյանին¹⁷ եւ մյուսներին: Նաեւ Ռասուլին, Սամեղին եւ այլոց:

Արտագին բարեւներով

Ձեր Ավետիք Իսահակյան

Ֆ.401, ց.1, գ.129, թ.4: Ինքնագիր:

N 7

4 Հունվարի 1941թ.
Երևան

Սիրելի՛ Գրաչի,

Գնացիր եւ լռեցիր:

Այն խնջույքը, որ տեղի ունեցավ իմ տանը, շատ լավ անցավ, ափսոս, որ չմնացիր. կենացդ խմեցինք: Իսկ Մարգարիտը¹⁸ շարունակ քեզնից էր խոսում, կարծես զառանցում էր: Նա էլ մեկնեց, գնաց Մոսկվա:

Ես Հիմա լավ եմ, վաղը գնում ենք Լենինական՝ ներկա լինելու Հայրենի քաղաքում կազմված իմ Հոբելյանական Հանդեսին: Նրանից Հետո, կարծում եմ, որ կազատվեմ եւ կՀանգստանամ. շա՛տ Հոգնեցի. բանկետ, Հյուրասիրություններ:

Շնորհավոր նոր տարի բոլորիդ, մեր բոլոր ընկերներին, քեզ, Սեւունցին, Թաթուլին, Բ. Աղասյանին¹⁹, մի խոսքով՝ բոլորի:

Սիրելի՛ Գրաչի, մի նեղություն պիտի պատճառեմ քեզ եւ սա է՝ խնդրում եմ այն Համարները (Թերթերի), որոնց մեջ տպված կան իմ մասին, ուղարկես ինձ.«Առմունխստը», աղբբեջանական թերթերը, «Առվետ[ական] գրողը» եւ այլն:

Ջերմագին բարեկենդիվ

Ա.վ. Իսահակյան

Ֆ.401, ց.1, գ.129, թ.5: Ինքնագիր:

N8

2 ապրիլի 1941 թ.
Երեւան

Սիրելի Գրաչի,

Երկու նամակ ստացել եմ քեզնից. 1- երբ գնում էիր Մոսկվա, 11. վերջին նամակդ:

Լսել էի, որ նշանվել էիր Մարգարիտի Հետ, բայց լուրջ Հավատ չէի ընծայել, լուրն ինքը կասկածելի կերպով էր տարածված՝ ավելի շատ՝ ենթադրություն:

Շա՛տ, ուրախ եմ, կինս էլ նույնպես, եւ ես բոլոր սրտով շնորհավորում եմ ու բարեմաղթում անվերջ սեր, ներդաշնակութուն, երջանիկ կյանք եւ առողջություն. ապրեք, բախտավոր լինեք:

Բարեկներ եւ «աչքի լուսանք» տուր մայրիկին՝ Մարգարիտի, եւ ձերոնց :

Սիրելիս, քո առաջին նամակը ստացա այն պահին, Հենց այն օրը, երբ գնում էի (փետրվարի 5-ին) Թիֆլիս: Վրաստանի գրողների միությունը, վրացիները Հրավիրեցին ինձ, որ իրենք էլ տոնեն իմ Հոբելյանը: Գնացի. շատ մեծ սիրով, շքեղությամբ, անկեղծությամբ մեծարեցին ինձ. քեֆեր գրողների տները, բանկետ եւ փոքրիկ բանկետներ...

Ամբողջ 20 օր մնացի Թիֆլիս, վերադարձա Երեւան եւ նորից Հիվանդացա, վեր կացա եւ նորից Հիվանդացա. այսօր նորից ոտքի վրա եմ եւ Հույս ունեմ, որ լավացել եմ: Պատճառը ձմռան գրիպն էր, որ թողել էր Հետեւանքներ թոքերիս եւ ստամոքսիս վրա: Հիմա որ դարուն է, կարծում ենք, որ կկազդուրվեմ:

Ընկեր Ս. Խիթարովյան գիմել էր ինձ, որ մի քանի խոսք գրեմ քո Հրատարակվելիք ուսերեն թարգմանության մասին՝ իբրեւ ներածություն: Գրել, ուղարկել եմ արդեն, չգիտեմ՝ գոչ կլինես, թե ոչ²⁰:

Ոտանավորներիս մնացած Համեմատությունները այսօրվանից կսկսեմ եւ մի երկու օրից կուղարկեմ Ս. Խիթարովային եւ Հույս ունեմ, որ սրանով կարճ-երկային կվերջանա գրքիս գործը, եւ կտպագրեն, եւ թե՛ ես կազատվեմ եւ թե՛ նրանք այս բանից, որ խիստ երկար տեւեց. ես ձանձրացա, երեւի՝ նրանք էլ:

Գրաչի ջան, գրում ես, որ գամ Մոսկվա, որովհետեւ մտադիր ես ինձ մի գրական երեկո նվիրելու: Ավելացնում ես, որ դրանով ես Հեղինակություն ձեռք կբերեմ ուսու բանաստեղծների աչքում: Շնորհակալ եմ քո Հոգածության Համար իմ Հանդեպ, դա բխում է այն մեծ սիրուց, որ ունես իմ նկատմամբ, սակայն ես դա (Մոսկվա գալն ու...) ավելորդ եւ ապարդյուն եմ Համարում: Ինչի՞ս է պետք այդ

ամենը: Դժվար թե ես գամ Մոսկվա մեր գրական գաստրոլի թե դեկադայի հետ կամ դրա կապակցությունը: Ժամանակ չեմ ուզում կորցնել իզուր տեղը: Ինձ ոչինչ չի հետաքրքրում այլևս՝ ո՛չ փառք, ո՛չ պատիվ. ես ուզում եմ ապրել իմ գրական ծրագրերի համար, նրանց կենսագործելու համար եւ ցանկանում եմ, որ չխանգարեն ինձ իրենց անիմաստ ծափերով եւ ցուլցերով: Ես կուշտ եմ այդ բոլորից: Մի երկու հասկացող մարդու կարծիքը շատ ավելի արժեքավոր է ինձ համար, քան թե հազարների կարծիքը:

Սիրելի Գրաչի, ի՞նչ է մտադրությունդ, ուզում ես միշտ Մոսկվա մնալ, այդտեղ բնակվել ու գործել, թե նորից Բաքու կամ... Երեւան: Ի՞նչ է ծրագրում ձեր զույգը, հետաքրքիր է իմանալը:

Նորից սրտագին բարեւներ Մարգարիտին, մայրիկին եւ քեզ:

Միշտ ձեր Ավետիք Իսահակյան

Հ. Գ. Այստեղ ստացվել էր մի քանի օրինակ «Словарь поетичес[ких] ТЕРМИНОВ», բայց սպառվեց, կարծես լավ կազմված գործ է, խնդրում եմ մի օրինակ ինձ վերադիր վճարով ուղարկես:

Ավ. Իսահակյան

Ֆ.401, ց.1, գ.129, թ.թ.6-7: Ինքնագիր:

N 9

19 հունիսի 1941թ.
Մոսկվա

Սիրելի Մարգարիտ,

Կարգացի Գրաչիի պոեման: Անհավասար է, տեղ-տեղ լավ է գրված, հուզմունքով (էմոցիա, թարմ, ոչ շաբլոն): Սակայն, ընդհանրապես, երկար է, ձգձգված: Մյուսժեսը քիչ է, իսկ խոսքը՝ շատ:

Իմ կարծիքով պետք է մշակել, սեղմել, շաբլոն, սովորական տեղերը բաց թողնել: Ես այսքանը կարող եմ ասել, մնացածը Ձեր կամքն է:

Մնաք բարեւ, առավոտը վեջապես գնում եմ Մոսկվայից:

Բարեւներ մայրիկիդ եւ բարեկամներիդ:

Ձեր Ավետիք [ի.ք] Իսահակյան

Ֆ.401, ց.1, գ.267, թ.թ.3-4: Ինքնագիր:

N 10

22 օգոստոսի 1944թ.

Երեւան

Սրելի Աշոտ,

Ինչպես մեր երջանիկ պապերն են սկսել իրենց նամակները, այնպես էլ ես եմ սկսում. նախ եւ առաջ անեմ կարոտով բարեւ քեզ, սիրելի Մարգարիտին, մայրիկին, մեծին ու փոքրին եւ բոլոր հարցնողաց: Թե մեր կողմանե կհարցնեք՝ մենք ողջ եւ առողջ ենք եւ ձեր տեսությունն ենք կարոտ, ամեն:

Սիրելի, կարոտալի Աշոտ, շնորհակալությունք ստացել եմ գիրքդ՝ «Կուռնիկը»²¹ շատ ուրախ եմ, որ չես մոռացել ինձ եւ թանկագին գիրքդ ուղարկել ես ինձ:

Գիրքդ միշտ սեղանիս վրա է, կարդում եմ եւ վայելում, կարդում են եւ մերոնք, եւ բոլոր ինձ այցելողներին ցույց եմ տալիս իմ սիրած բանաստեղծությունները:

Գեղեցիկ են շատ «Ղարաբաղի կապույտ լեռներում» շարքի բանաստեղծություններից շատերը: «Վերադարձրեք իմ մանկությունը», «Ա՛խ, միտս ընկավ» սրանք գոհարներ են՝ զգացմունքով, գեղեցկությամբ, թարմությամբ լի:

Շնորհակալությունն ինձ նվիրած երկու սիրուն բանաստեղծությունների համար: Ապրես, զորանաս, ավելի ու ավելի առաջ գնաս, երգես նորանոր չքնաղ, լիրիզմով թաթախուն տաղեր, անսպառ լինես: Գիրքը վատ չի տպված՝ ի նկատի ունենալով պատերազմի պայմանները:

Շուտով պատերազմը կվերջանա, երկիրը շունչ կքաշի, եւ բախտ կունենանք լավ թղթի վրա կարգալու երգերդ:

Միրելիս, առողջությունս վատ չէ, բայց էնքան էլ փայլուն չէ. սիրտս լավ չի գործում: Բայց կգիմանամ մինչեւ խաղաղության բարիքները տեսնելու օրերը եւ վայելելու մեր երազների իրականացման ոսկե պահը, որ ուշ չէ: Անին տեսնելու եմ անպատճառ...

Վիգենը²² գալիս է մոտը, կպատմի իմ մասին, կօգնես տոմսակ առնելու մեջ: Երեւի այս տարի՝ աշնանը, ես Մոսկվա կգնամ, կանգ կառնեմ Բաքու եւ բոլորիդ կտեսնեմ:

Առայժմ ջերմ բարեկներ բոլորիդ, մեր՝ Բաքվի գրող ընկերներին եւ Ադրբեջանի գրող ընկերներին՝ Սամեդ Վուրդունին, Ռզային եւ այլն:

Բարեկներ մերոնցից՝ Սոֆիկից եւ Բելայից²³:

Քո Ավետիք Իսահակյան

/ Հ. Գ./ *Уважаемый т. Ашот !*

Не сумел зайти к Вам (пробыл в Баку всего час).

С приветом Виген Исаакян

Ֆ.401, ց.1, գ. 129, թ.թ.8-9: Ինքնագիր:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշոտ Գրաչի (Աշոտ Գրիգորյան) - Խորհրդահայ բանաստեղծ: Ծնվել է 1910թ.մայիսի 9-ին Բաքվում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում, այնուհետեւ սովորել է Երեւանի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում: Եղել է Ադրբեջանի գրողների միությունից հայկական բաժանմունքի քարտուղարը: 1946 թ. տեղափոխվել է Երեւան եւ մինչեւ կյանքի վերջը (1973թ.) ապրել եւ ստեղծագործել այնտեղ:

2. Մարգարիտ Լեւոնի Աթաբեկյան- գրականագետ: Ծնվել է 1913թ. Բաքվում, ավարտել է դպրոցը եւ կրթությունը շարունակել Մոսկվայի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում, այնուհետեւ՝ ասպիրանտուրայում: 1940թ. աշխատել է Մոսկվայի մանկական հրատարակչությունում: Տեղափոխվել է Երեւան, մինչեւ կյանքի վերջը (1994թ.) աշխատել է Վ.Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտում: Թարգմանել է Իսահակյանի որոշ բանաստեղծություններ:

3. Խոսքը Ա. Գրաչու՝ 1940թ. հրատարակած ադրբեջանական բայաթիների թարգմանությունների մասին է:

4. «Աբու-Լալա Մահարու» ադրբեջաներեն թարգմանությունը չի իրականացվել:

5. Գրախոսականը տպագրվել է «Գրական թերթի» 1940թ. ապրիլի 30-ի համարում:

6. Սամեդ Վուրդուն- Խորհրդային Ադրբեջանի բանաստեղծ:

7. Ռասուլ Ռզա - Խորհրդային Ադրբեջանի բանաստեղծ:

8. Զամանով - Ադրբեջանի պետական հրատարակչության գրական բաժնի

վարիչ:

9. Նիդամի - 12-րդ դարի պարսկալեզու բանաստեղծ:
10. Ի նկատի ունի Մոսկվայում տպագրութեան նախապատրաստվող «Հայ գրականութեան անթոլոգիա» ժողովածուն (տե՛ս N 5 նամակը):
11. Խոսքը անվանի վիպասան Դերենիկ Դեմիրճյանի մասին է: Մոսկվայում 1940թ. հրատարակված Հայ պոեզիայի անթոլոգիան լույս է տեսել Ս.Հարությունյանի եւ Վ.Կիրպոտիների խմբագրութեամբ:
12. «Խորհրդային գրող»- գրական ամսագիր, օրգան Ադրբեջանի խորհրդային գրողների միութեան Հայկական բաժանմունքի: Լույս է տեսել Բաքվում 1932 - 1940թ.թ.: Խմբագրել են Գարեգին Սեւունցը եւ Սերո Մանուկյանը:
13. Իսահակյանի 6 բանաստեղծութունների եւ երկու առակների ինքնագրերը պահվում են նույն ֆոնդի 112 գործում:
14. Գարեգին Սեւունց - Խորհրդահայ արձակագիր, 1938-40թ.թ. եղել է Բաքվում Հրատարակվող «Խորհրդային գրող» ամսագրի խմբագիրը:
15. Թաթուլ Հուրյան - Հայ բանաստեղծ, մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին եւ զոհվել Սեւաստոպոլի պաշտպանական մարտերում:
16. Համո Սահյան - Խորհրդահայ բանաստեղծ:
17. Համո Ամիրխանյան - գրականագետ, լրագրող; 1933 - 1944թ.թ. աշխատել է Բաքվի «Կոմունիստ» (Հայերեն) թերթում՝ որպես բաժնի վարիչ, պատասխանատու քարտուղար, խմբագրի տեղակալ, խմբագիր:
18. Խոսքը Աշոտ Գրաշու ապագա կնոջ՝ Մարգարիտ Աթաբեկյանի մասին է:
19. Վարսենիկ Աղասյան - բանաստեղծուհի, 1928-1929թ.թ. աշխատել է Բաքվի «Կոմունիստ» (Հայերեն) թերթի խմբագրութեանում՝ որպես գեղարվեստական գրականութեան բաժնի վարիչ, հետագայում աշխատել է Բաքվի ռադիոկոմիտեում՝ իբրեւ Հաղորդավար եւ ասմունքող:
20. Խոսքը 1941թ. Մոսկվայում Աշոտ Գրաշու հրատարակած «Карабахская весна» գրքի համար Ա.վ. Իսահակյանի գրած առաջաբանի մասին է (Տե՛ս նաեւ նույն ֆոնդում, գ.171, թթ.1-2):
21. Խոսքը Աշոտ Գրաշու «Կռունկը» ժողովածուի մասին է (Բաքու, 1944թ.):
22. Խոսքը Ա.վ. Իսահակյանի որդու՝ Վիգեն Իսահակյանի մասին է:
23. Խոսքը Ա.վ. Իսահակյանի տիկնոջ եւ Հարսի մասին է:

ՄԵԾ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԻ 100-ԱՄՅԱԿԸ

Լրացավ Հայ Հանճարեղ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, Հասարակական գործիչ Արամ Խաչատրյանի 100-ամյակը:

Խաչատրյանը դարի խոշորագույն կոմպոզիտորներից մեկն է, որի ստեղծագործութունները համաշխարհային ճանաչում ունեն: Նա Հակաթանական պայքարի ժամանակ է թողել ինչպես Հայ, այնպես էլ ալլադգի շատ ժողովուրդների

երաժշտութեան զարգացման վրա: Նրա շնորհիվ Հայ ազգային երաժշտութիւնը մի նոր մակարդակի հասավ:

Ժողովրդի արվեստի ընդերքից է արմատավորվել Արամ Խաչատրյանի ստեղծագործութիւնը եւ նրա՝ թարմ շնչով տոգորված համարձակ տաղանդը փայլուն զարգացում է ապրել մեր դարաշրջանում, դառնալով նրա պայծառ արտահայտչներից մեկը: Նրա ստեղծագործութիւնները կատարվում են աշխարհի բոլոր ծայրերում. մայրաքաղաքների թատրոնների ու համերգային բեմերում, կատարում են աշխարհահռչակ երաժիշտներ ու երաժշտախմբեր, ժողովրդական երաժիշտներ եւ ինքնագործ խմբեր:

Իր ստեղծագործութիւններում պահպանելով ժողովրդական մեղեդայնութիւնը, կոմպոզիտորը միաժամանակ ավել է ուրույն, զուտ խաչատրյանական տաղանդին հատուկ հնչեղութիւն, մտահղացումների ժամանակակից հուզող խնդիրների մարմնավորման անկրկնելի արտահայտութիւն: Հատկապէս ժողովրդական երաժշտութեան սիմֆոնիզացիայի շնորհիվ, Խաչատրյանը մեծ վարպետութեամբ կարողացավ արտահայտել Հայ ժողովրդի հուզերի խորութիւնը, ստեղծագործական հզոր թափը: Դրանով է բնորոշվում նրա ստեղծագործութեան նորարարական էութիւնը, ինչը նոր էջ բացեց համաշխարհային երաժշտական արվեստի պատմութեան մեջ:

Ներկա հրապարակումը մեր երախտագիտութեան արտահայտութիւնն է մեծ կոմպոզիտորին: Ստորեւ ներկայացնում ենք Հայաստանի ազգային արխիվում պահվող Արամ Խաչատրյանի վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթերի որոշ մասը, որոնք տպագրվում են բնագրի լեզվով:

Շուշան Պողոսյան
ՀԱԱ գլխավոր արխիվագետ

N1

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՍՆ ԺՈՂԿՈՄԻՏԻ ՀԻ
ՓՈՒՆԱԽԱԳԱՀ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ՝ 18-ՐԴ ԴԱՐԻ ԱՇՈՒՂ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ
ԽԱՉԱԳՐՎԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

24 հոկտեմբերի 1940թ.
Մոսկվա

Обращаюсь к Вам с просьбой помочь мне в следующей мероприятии: я договорился с некоторыми московскими музыковедами о том, чтобы была начата разработка всех имеющихся данных о музыкальной стороне творчества знаменитого ашуга 18 века Саят-Новы.

Большой интерес в этом отношении представляет сборник его 114 тюркских песен, записанных армянскими буквами и хранящийся в Ереванском государственном музее. Судя по некоторым данным, к текстам сборника даны мелодии, записанные невмами, т.е. очень древним способом.

Изучение этой рукописи представляет огромный интерес и в то же время огромные трудности, т.к. специалистов по расшифровке невм- нет, и здесь нужна коллективная работа многих музыковедов, а может быть даже в сотрудничестве с лингвистами и этнографами.

Я думаю, что это можно организовать только в Москве. Но необходима постраничная фотосъемка рукописи. Это я и прошу сделать для оргкомитета Союза советских композиторов.

Вначале /т.е. для пробы/ необходима фотосъемка за счет оргкомитета. Хотя бы нескольких страниц, где есть не только тексты песен, но и невмы /страниц 10-15/. Очень прошу Вас поручить эту работу соответствующей организации.

В зависимости от результатов расшифровки присланного материала, будет решен вопрос о дальнейшей фотосъемке.

Я думаю, что Вам понятна огромная ценность, которую может представить для всей музыкальной науки и особенно для армянской музыки, удачная расшифровка мелодий.

Само собой разумеется, что о результатах расшифровки немедленно будут поставлены в известность музыкальные и научные организации Армении.

Жду от Вас ответа.

С коммунистическим приветом А.Хачатурян

ՀԱԱ, Ֆ. 113, ց. 4, դ. 10635, թ. 1: Բնագիր: Մեքենագիր:

N2

ՀԵՍՀ ԺՈՂԿՈՄԻՏԻՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՀԵՍՀ ՀԻՄՆԸ ՍՏԵՂԾՈՂ
ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ ՈՒ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 Հոկտեմբերի 1945թ.
Երևան

В связи с завершением работы над созданием Государственного гимна Армянской ССР и последующим его утверждением вышестоящими органами, и в связи с тем, что поэты и композиторы Армении приняли активное участие в создании Государственного гимна Армянской ССР-возникает необходимость отметить и вознаградить работу группы поэтов и композиторов, отличившихся в деле создания Государственного гимна Армянской ССР.

В создании текста гимна приняли участие поэтов- 51 человек, представивших 88 проектов текста гимна.

В создании музыки гимна приняли участие 43 композитора, представившие 66 проектов музыки гимна.

Обобщая результаты работы комиссии по созданию Государственного гимна Армении, предлагается следующий проект вознаграждения авторов, а также отличившихся участников конкурса по созданию гимна:

1.Поэту Сармен /автору текста гимна/ - 50.000р.

2. Поэтам, наиболее отличившимся в создании текстов Гимна:

1)Аветику Исаакяну

2)Гургену Боряну

3)Деренику Демирчяну

4)Наири Заряну

5)Георгу Абову

6)Ованесу Ширазу

7)Гегаму Саряну

8) Азату Витунни

9)Сильве Капутикян

10) Агавни

11) Рипсима Погосян

12)Георгу Эмину

по 2.000р. каждому.

3. Композитору Араму Хачатуряну /автору музыки гимна/ -50.000р.

4. Композиторам, наиболее отличившимся в создании музыки Гимна:

- 1) Арно Бабаджаняну
- 2) Александру Арутюняну
- 3) Григорию Егиазаряну
- 4) Эдуарду Мирзояну
- 5) Артемию Айвазян
- 6) Христафору Кушнареву
- 7) Сергею Бархударяну
- 8) Анушавану Тер-Гевондяну
- 9) Ерванду Сааруни
- 10) Вардану Тиграняну
- 11) Гаяне Чеботарян
- 12) Мкртычу Иоаннисяну
- 13) Эдуарду Налбандяну-

по 2.000р. каждому

5. Считаю необходимым отметить работу хора, симфонического оркестра Госоперы и артиста Байрамяна Акопа, принимавших участие в разучивании и исполнении гимна.

6. Считаю также необходимым отметить работу членов комиссии по рассмотрению текстов и музыки Гимна:

- | | |
|----------------------|---------------------|
| 1) Григоряна Грация | 2) Абова Георга |
| 3) Тавризяна Михаила | 4) Будагяна Георгия |
| 5) Тиграняна Георгия | 6) Баяндуря Сергея |

наградив их почетными грамотами Верховного Совета АрмССР. Докладная о вышеизложенном, просим Вашей санкции.

Председатель комиссии по рассмотрению гимна 3. Григорян
 Ответственный секретарь комиссии 3. Варданян

ՀԱԱ, Ֆ. 113, ց. 18, գ. 829, թթ. 10-12: Բնագիր: Մեքենագիր:

№ 3

ՄՈՍԿՎԱԶՅՈՒՄ ՀԽՍՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԱՐՈՒԽԱՆՈՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՀՄ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐ ՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՕՍԿԻՆԻՆ՝ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐԹԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 մարտի 1947թ.
 Մոսկվա

Дом Культуры Армянской ССР в Москве организует 5 марта в своем помещении творческий вечер композитора Арама Хачатуряна.

В программе - камерные вокально-инструментальные произведения, а также произведения для оркестра.

В концерте принимают участие: Н.Шпиллер, С.Кнушевицкий, П.Лисицян, А. И М.Готлиб и ансамбль солистов Государственного симфонического оркестра п/у Л.Юрьева.

Куйбишевский райфинотдел относит этот творческий вечер к категории эстрадных концертов. Считаю это неправильным, просим Вашего разъяснения.

Директор

Саруханов

ՀԱԱ, Ֆ. 629, ց. 1, դ. 28, թ. 1: Պատճեն: Մեքենագիր:

N4

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ՝ ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀՍՍՀ 30-
ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱ ՉԳՏՆՎԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

19 նոյեմբերի 1950թ.
Մոսկվա

Дорогой Саак Карпович!

Նշանավոր գործիչների մեծ մասի Հավանությունը ստանալուց Հետո այս Հոգվածը պետք է անմիջապես տպագրվի Հինգ լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն եւ միջազգային ինտերլինգվոլալով), փոփոխված Հետեւյալ խորագրի ներքո՝ «Բաց նամակ թուրք մտավորականներին»:

Ենթահիվ այն գործիչների անունների կարեւորության, որոնք մասնակցում են այս աղցրային եւ այն սոցիալական շրջանակների, որոնք ներկայացնում են նրանք, իր այս նոր տեսքով սույն Հրատարակությունը կստանա շատ կարեւոր միջազգային փաստաթղթի ձեւ, որի նկատմամբ թուրքական իշխանությունները պետք է ցույց տան իրենց վերաբերմունքը: Դեռ ավելին, նամակը Հիմք կծառայի մեր կողմից նշված երկրների Հետ բանակցություններ վարելու Համար (մանրամասնությունների մասին կտեղեկանաք Հաջորդ նամակներով):

Մինչ այդ, թույլ տվեք Հավաստիացնելու, որ իմ բարեկամը կանի ամեն բան, որպեսզի այդ գործիչներին Համոզի իրենց ստորագրությունները «Բաց նամակի» տակ դնելու Համար եւ որպեսզի նրանք ստորագրեն Հետեւյալ Հայտարարությունը. «Մենք, ներքոստորագրողներս, այսինքն՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Լեհաստանի կաթոլիկ գրողները, սույնով լիազորում ենք «Բաց նամակ թուրք մտավորականներին» պամֆլետի Հեղինակ Բողոքան Գեմբարսկան, որ նա մեր անունից բանակցություններ վարի առանձին տերությունների ներկայացուցիչների Հետ, Հայերի՝ իրենց Հայրենիքը խաղաղ վերականգնելու արդար ցանկությունն օգտակար լինելու Համար: Մենք նաեւ պարոն Բողոքան Գեմբարսկուն լիազորում ենք նախնական բանակցություններ վարելու թուրքական իշխանությունների Հետ, եթե նրանք (Թուրքերիդ- Պ.Հ.) Հակված լինեն երբեւիցե փոխհատուցելու Հայերին պատճառած վնասները»:

Առաջիկա երկու տարիների Համար իմ նպատակն է Համոզել Յունեսկոյին, որ 1965 թվականը ընդունի որպես Հայկական տարի (ցեղասպանության 50-րդ տարեդարձի կապակցությամբ): Այս առաջարկի Հիմնական փաստարկումը տեղ է դրել «Բաց նամակ թուրք մտավորականներին» պամֆլետում եւ նրա Հեղինակների,

այսինքն՝ Արեւմուտքի եւ Միջին Եվրոպայի կաթոլիկ գրողների ազգանունները կնշվեն այդ նամակում, անձինք, որոնք միաժամանակ, վերը նշված լիազորութեամբ, ինձ թույլատրել են գործել իրենց անունից:

Որպեսզի սույն փաստաթուղթը արժանանա Յունեսկոյի ուշադրութեանը եւ այն դրվի քվեարկութեան, պետք է այն պաշտոնապես մի քանի պետութիւններին կողմից Հավանութիւն ստանա: Բնականաբար, այս դեպքում Հնարավոր է Հուլիսի 1-ին ինչպես սոցիալիստական, այնպես էլ կապիտալիստական երկրների վրա, քանի որ նրանք երկուսն էլ չեն ցանկանա թուրքիայի դժգոհութիւնն առաջացնել իրենց նկատմամբ: Կա մի գաղափար՝ այս գործողութեան մեջ ընդգրկել չեզոք երկրներից մի քանիսին, որոնք թուրքիայի հետ քաղաքական կապեր չունեն:

Ես մի քանի պատճառաբանութիւններ ունեմ ենթադրելու, որ Հնարավոր է այս գործընթացի մեջ ներառել Հնդկաստանը՝ ամենամեծ եւ ամենաազդեցիկ չեզոք երկիրն աշխարհում: Որպես Հնդկական գրականութեան թարգմանիչ եւ Հնդկաստանի մասին հրատարակած բազում նյութերի հեղինակ, ես այդ երկրում ունեմ մի քանի հեղինակավոր բարեկամներ, նույնիսկ Ջավահար Ներուին մոտ շրջանակներում եւ ես հավակնում եմ նրանց աջակցութիւնը: Այս եւ ուրիշ պատճառաբանութիւնների մասին ես կգրեմ մեկ ուրիշ անգամ: Իմ «Բաց նամակի» նոր խմբագրութեան հրատարակութիւնից հետո ես պատրաստվում եմ այցելել Հնդկաստան, ուր Հուլիս ունեմ Հանդիպել հատուկ ընտրյալ համագործակիցների հետ եւ նրանց ներկայացնել մեզ հուզող խնդիրը⁹:

Վերջացնելով թույլ տվեք շեշտել, որ Արեւմուտքի եւ Միջին Եվրոպայի կաթոլիկ գրողների կողմից Հայկական այս աղցրայի նախաձեռնումը չի նշանակում, թե բոլոր պարագաներում Հայ ժողովուրդը «պարտավորված է երախտապարտ լինել Հոռմեական կաթոլիկ եկեղեցուն»:

Պետք է իմանալ, որ կաթոլիկ եկեղեցին, որպես հաստատութիւն չի մասնակցում այս գործընթացին: Նույնիսկ ցանկութեան դեպքում այն չի կարող մասնակցել: Այնուամենայնիւ, պատճառ չկա, որ Դուք (Հայերդ- Պ.Հ.) չհամագործակցեք աշխարհական կաթոլիկների հետ, որոնք ներկա քաղաքական իրադրութեան պայմաններում բավականաչափ Հնարավորութիւններ ունեն անելու ավելի շատ, քան աշխարհում որեւէ ուրիշ հաստատութիւն:

Խնդրում եմ նամակը ստանալուց անմիջապես հետո տեղեկացնել, թե Դուք ե՞րբ եք մտադիր ինձ պատասխանել դրամական օգնութեան վերաբերյալ հարցումիս, որը նշանակում է պատասխան նամակում ներառել նաեւ այն անձերի հասցեները, որոնք Հոռմում, Փարիզում եւ Լոնդոնում պարոն Բրաունին կհանձնեն անհրաժեշտ գումարը: Բացի այդ, հիշեցնում եմ, որ Փարիզի եւ Լոնդոնի հաստատութիւններից մեկի (ո՛չ պարտադիր Հայկական) կամ անհատների կողմից հրավերը պետք է ուղարկել պարոն Բրաունի հասցեով:

Խնդրում եմ վերը նշված հարցերը դիտարկեք որպես բացառապես հրատապ: Ապագայում որեւէ գումար կարելի է ուղարկել ինձ փոխանցումով:

Ծանոթութիւններ

1. «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հոդվածը առաջին անգամ լեհերեն լույս է տեսել Վարչապետ Հրատարակող «Կյորունկի» («Ուղղութիւններ») շաբաթաթերթի 1961 թվականի նոյեմբերի 20-ի համարում: Առաջին անգամ Հայերեն լույս է տեսել «Ավանգարդ» օրաթերթի 1989 թ. դեկտեմբերի 13-ի համարում (թարգմանչուհի՝ Մարիա Գրոխուսկա):
2. Վերջաբանի Հայերեն թարգմանութիւնը տե՛ս Բոգդան Գեմբարսկի, Նամակներ աշխարհին, Երեւան, 1990, էջ 118-120:
3. Հենրի Գրեհեմ Գրին (1904-1991), անգլիացի ակադեմիկոս գրող:
4. Արչիբալդ Ջոզեֆ Կրոնին (1896-1981), անգլիացի հուշակալ գրող:

5. Բրյուս Մարշալ (1899-1987), շոտլանդացի գրող, հրապարակախոս:
6. Ֆրանսուա Մորիակ (1885-1970), ֆրանսիացի գրող, Նոբելյան մրցանակի լաուրատ:
7. Ինտերլինգվուս- ըստ էության, միջազգային ծրագրավորված, արհեստական լեզու:
8. «Բաց նամակ թուրք մտավորականներին» գրվածքը ոչ թե ինքնուրույն, այլ «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հոդվածի նոր ընդարձակ տարբերակն է:
9. Հայտնի է, Գեմբարսկին դիմել է արդյոք Զավահաուլար Ներուին, թե ոչ, սակայն որոշակի է նրա բաց նամակն առ Հնդկաստանի պրեզիդենտ Սարվապալի Ռադհակրիշնանին (տե՛ս Բոգդան Գեմբարսկի, նշվ. աշխ., էջ 33-46):

Հոդվածներ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ 1830-1831ԹԹ. ԼԵՀԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Արեւմտեւրոպական մի շարք երկրներում 1830-ական թվականներին տեղի ունեցան հեղափոխական եւ ազգային-ազատագրական շարժումներ, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 1830-1831թթ. լեհական ապստամբությունը: Այն լեհ ժողովրդի ազատագրական պայքարի կարեւոր փուլերից մեկն է, որի արձագանքները լայնորեն դուրս եկան եվրոպայի սահմաններից ու հասան անգամ ամենահեռավոր անկյունները: Այս իրադարձությունների հետ առընչություններ ունեցավ նաեւ հայոց եկեղեցին:

Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Նիկոլայ I-ը 1828թ. մարտի 20-ի հրամանագրով Երեւանի ժամանակավոր վարչությունը փոխարինեց Հայկական մարզով: Կովկասի կառավարիչ Իվան Պասկեւիչը ձգտում էր մարզում անմիջապես մտցնել ռուսական վարչակարգ: Նա ձեռնամուխ եղավ հայոց եկեղեցու ներքին հարցերի կարգավորմանը եւ ռուսական կայսրությունում նրա տեղի ու դերի որոշմանը: Որոշակիորեն բարձրացնելով կաթողիկոսական գահի նշանակությունը եւ նրան շնորհելով որոշակի արտոնություններ, Ի. Պասկեւիչը միաժամանակ անմիջականորեն վերահսկում էր հայոց եկեղեցու գործունեությունը: Նա ջանում էր մարզից հեռացնել հայ ինքնավարական բաղձանքների բոլոր գաղափարակիրներին, այդ թվում՝ նաեւ հոգեւորականներին: Այդպես նա վարվեց, մասնավորապես, հայ ինքնավարական կարկառուն դեմքերից մեկի՝ Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ Ներսես արք. Աշտարակեցու հետ: Ի. Պասկեւիչը հայոց Եփրեմ կաթողիկոսին 1828թ. մայիսի 17-ին հղած նամակում առաջարկում էր Ներսես արք. Աշտարակեցուն ազատել իր պաշտոնից եւ ուղարկել Բեսարաբիայի թեմի առաջնորդ¹:

Եփրեմ կաթողիկոսը փորձեց ընդգրկմանալ դրան, բայց ի վերջո հարկադրված եղավ տեղի տալ²:

¹ Մաշտոցյան Մատենադարան, արխիվ Երիցյանի, թ. 156, վ. 75, էջ 1-2:

² Նույն տեղում, թ. 156, վ. 82, էջ 1-3:

Ի. Պասկեւիչը Հասով այն բանին, որ Նիկոլայ I-ի 1830թ. ապրիլի 23-ի հրովարտակով Ներսես արք. Աշտարակեցին նշանակվեց Նոր Նախիջևեանի եւ Բեսարաբիայի թեմի առաջնորդ³:

Ի. Պասկեւիչին փոխարինած Բարոն Ռոզենը գտնում էր, որ Հարկ չկա Անդրկովկասում կտրուկ արմատական փոփոխութիւններ կատարել ցարական օրենքների ու վարչակարգի Հաստատման ուղղութիւնով: Նա կողմնակից էր դրանց աստիճանական ընթացքին: Լեհական ազատագրական պայքարի տարիներին Հայոց եկեղեցին ամբողջովին հլու հնազանդ կատարեց ռուսական իշխանութիւնների հրահանգները:

Նիկոլայ I-ի՝ 1831թ. Հունվարի 25-ի հրովարտակը լեհական ապստամբութիւնը ճնշելու նպատակով ոչ միայն զորահավաք էր Հայտարարում, այլեւ ռուսաց եկեղեցուն Հորդորում էր զորքի հաջողութեան համար մաղթանք կատարել⁴:

Նիկոլայ I-ի հրովարտակի համաձայն՝ օտար դավանանքների գործերի նախարար Դմիտրի Բլուզովը Հունվարի 29-ին սինոդին եւ Հայոց եկեղեցու Հոգեւոր բոլոր առաջնորդներին նամակ հղեց՝ հայտնելով կայսրի կարգադրութեան մասին: Եփրեմ կաթողիկոսին ուղղված նամակում Դ. Բլուզովը գրում էր, որ կայսրը հրամայել էր բոլոր եկեղեցիներում ընթերցել Հունվարի 25-ի իր մանիֆեստը, որից հետո մաղթանքի արարողութիւն կատարել: Նա պարզաբանում էր, որ դա պատերազմի ժամանակվա սովորական մաղթանք չի լինելու եւ հարկ չկա հաղթութիւնը հայցել աստծուց, քանզի ռուսական զորքը կռվելու է ոչ թե արտաքին թշնամու դեմ, այլ ճնշելու է ապստամբների «խռովութիւնը»¹:

Դ. Բլուզովը գրեթե նույն բովանդակութեամբ նամակ հղեց Աստրախանի Հայոց թեմի առաջնորդ Սերովբե արքեպիսկոպոսին: Նա տեղեկացնում էր կայսրի մանիֆեստի մասին, որի համաձայն ռուսական զորքերը մտնում էին Թագավորական Լեհաստան՝ «խռովարարներին հնազանդեցնելու համար»: Այդ կապակցութեամբ նա սինոդին հրահանգում էր բոլոր եկեղեցիներում կատարել մաղթանք, բայց չաղթել ռուսական զորքերի հաղթանակի համար, քանի որ նրանք ոչ թե պատերազմ են մղում, այլ նպատակ էր հետապնդում «սանձահարել խռովութիւնը»²:

Բեսարաբիայի Հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին փետրվարի 13-ին իր թեմի եկեղեցականներին տեղեկացրեց, որ «նորին կայսրական մեծութիւնը» Նիկոլայ I-ը «բարեհաճել է հրամայել» իր զորքին մտնել Լեհաստան «խռովարարներին վերահանդարտացնելու» նպատակով, իսկ սինոդը հրահանգել է բոլոր եկեղեցիներում «մոլեբնա» կատարել «ընդգեմ թշնամիաց»: Նա տեղեկացնում էր, որ ռուսաց զորքի նպատակը պատերազմելը չէ, այլ՝ «կարճելոյ զխռովարարութիւնը»³:

Սրանից հետեւում է, որ Հայոց բարձրաստիճան Հոգեւորականութիւնն անառարկելիորեն կատարում էր սինոդի կարգադրութիւնը եւ Հայոց եկեղեցիներին հրահանգում լեհական ապստամբութեան ճնշման կապակցութեամբ մաղթանքի արարողութիւն կատարել: Դրանով նրանք համերաշխութիւն էին արտահայտում ռուսաց եկեղեցու հետ եւ դրսեւորում իրենց համաձայնութիւնը Լեհաստանում կայսրի վարած քաղաքականութեան նկատմամբ: Հայոց Հոգեւոր գործիչները բնավ խորամուկ չեն լինում լեհերի պայքարի ազատագրական լինելու մեջ, որը մղվում էր Հանուն անկախութեան ու կորցրած պետականութեան վերականգման: Այդպես վարվում էր նաեւ Հայութեան ինքնավարութեան ջատագով Ներսես Աշտարակեցին: Պատճառը միայն այն չէր, որ Հայոց Հոգեւոր գործիչները ցարական Ռուսաստանի

³ Նույն տեղում, թ.-156, վ.117, էջ 1-3:

⁴ Մաշտոցյան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թ.71, վ. 258, էջ 1-6:

¹ Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թ.70, վ.4, էջ 1-4:

² Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թ. 71, վ. 281, էջ 1:

³ Հայաստանի Ազգային արխիվ, Փոնդ 54ա, ց. 1, գ. 48, թ. 15:

Հովանու տակ էին եւ ինչպես Հայոց կաթողիկոսը, այնպես էլ Ռուսաստանում Հայոց թեմերի առաջնորդները նշանակվում էին ռուսաց կայսրի հրամանագրով, որին հպատակութեան երգում էին տալիս⁴:

Խնդիրն այն է, որ Հայոց Հոգեւոր գործիչները միաժամանակ ռուսամետ կողմնորոշում ունենին եւ Ռուսաստանի Համակիրներն էին, երբ խնդիրը վերաբերվում էր նրա անվտանգութեանը: Դա ոչ միայն Հայ Հոգեւորականութեան, այլեւ արեւելահայ աշխարհիկ բազում գործիչների դիրքորոշումն էր: Նրանցից լեհական 1830-1831թթ. ապստամբութեան նկատմամբ հետաքրքրություն դրսևորած եւ ազատասիրական ձգտումներով տոգորված Խաչատուր Աբովյանը գտնում էր, որ «յուրաքանչյուր Հավատարիմ հպատակի... պարտականությունն է... Հնարավորին չափով ձգտել օգտակար լինելու այն պետությունը, որի պաշտպանությունը եւ բարեգործություններն է նա վայելում»⁵:

Այդ տարիներին ռուսամետ տրամագրություններն այնքան ուժեղ ու խորն էին, որ նույնիսկ Արեւելյան Հայաստանի ինքնավարության վերաբերյալ նախագիծ կազմած եւ այն ռուսական կառավարությանը ներկայացրած Հայ գործիչներ Խ. Լազարյանը, Կ. Արղւթյանը եւ Ալ. Խուզարեաշյանը ծրագրում էին Հայութեան ինքնավարությունը ռուսական կայսրության շրջանակներում: Նախագիծ հեղինակների կարծիքով Նիկոլայ I-ի կողմից Հայոց թագավորի տիտղոսի ընդունումը կխանդավառի ողջ Հայ ժողովրդին, կնպաստի նրանց ներհոսին դեպի նորաստեղծ Հայկական պետությունը եւ մեծ հարված կհասցնի Թուրքիային եւ Պարսկաստանին⁶:

Այնպես որ, ցարական Ռուսաստանին հայության պաշտպան եւ անվտանգութեան երաշխիք համարող արեւելահայ աշխարհիկ եւ Հոգեւոր գործիչները չէին կարող դրվատել լեհերի ազատագրական պայքարը, քանի որ այն ուղղված էր Ռուսաստանի դեմ:

Պատահական չէ, որ Հայ Հոգեւորականությունը պատրաստակամորեն իրականացնում էր կայսրական յուրաքանչյուր հրահանգ: Այսպես Դ. Բյուզովը Հայոց եփրեմ կաթողիկոսին 1831թ. Հուլիսի 27-ին հրահանգում էր կայսրի հրամանը՝ գոհաբերական մաղթանք կատարել մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի ծննդյան առթիվ⁷:

Այդ կապակցությամբ Ներսես արք. Աշտարակեցին օգոստոսի 21-ին պատվիրում էր իր թեմի բոլոր եկեղեցիներում գովաբանական մաղթանք կատարել⁸:

Հայոց բարձրաստիճան հոգեւորականությունը լեհական ապստամբության ճնշումն ընդունեց գոհունակությամբ, որի վկայությունը նրանց շնորհավորանքներն է լեհ Հայրենասերների արյունը հեղած Ի. Պասկևիչին:

Սերովբե արքեպիսկոպոսը 1831թ. Հունիսի 13-ին եփրեմ Ա. կաթողիկոսին ավետում էր, որ ինքը լուր է ստացել «գորաց մերոց ի վրա ապստամբ լեհաց» տարած «երեւելի հաղթանակի» մասին: Հայտնելով լեհերի տասնյակ սպաների ու հարյուրավոր զինվորների կորստի եւ գերեվարվելու մասին, նա նշում է. «ի կողմանե մերմե ոչ եւ այնքան կորուստները»⁹:

Նա լեհերի պարտության կապակցությամբ շնորհավորում է Ի. Պասկևիչի կնոջը՝ նրա ամուսնու՝ «նորին պայծառափայլ իշխանի Վարչական նվաճելու... անսասան հաղթանակ» տանելու եւ Վարչավայի կոմս անվանակոչվելու համար: Ըստ Սերովբե արքեպիսկոպոսի, Ի. Պասկևիչի հաղթանակի լուրը «լցեալ լիացոյց զսիրտ իմ այնպիսի անպատմելի ուրախութեամբ, այնպիսի բերկրանք», որն ինքը երբեք չի

⁴ Մաշտոցյան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, Թ. 62, վ. 25, էջ 1-6:

⁵ Խ. Աբովյան, Երկերի լրակատար ժողովածու, Հ. 8, էջ 82:

¹ Վ.Ա.Պարսամյան, Ա. Ս.Գրիբոյեդովը եւ Հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 267:

² Մաշտոցյան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, Թ. 70, վ. 38, էջ 1:

³ Նույն տեղում, Ներսես Աշտարակեցու արխիվ, Թ. 167ա, վ. 555, էջ 1:

⁴ Մաշտոցյան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, Թ. 70, վ. 13, էջ 1:

ապրել: Նա Պասկելիչի Հաղթանակը Համարում է «մեծագույն սխրագործություն, ...քաղցր ու սրբազան պարտավորություն»⁵:

Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Կարբեցին 1831թ. հոկտեմբերի 14-ին շնորհավորում է «պայծառափայլ» իշխան Ի. Պասկելիչին «ընդգեմ թշնամիաց» տարած «փառավոր Հաղթության», Հաջողութամբ Վարչավա մտնելու եւ «մեծավ արժանավորութամբ» Վարչավայի կոմս անփանակոչվելու կապակցութամբ: Նա շնորհավորանք է հղում նաեւ Ի. Պասկելիչի կնոջը⁶:

Ռուսական կառավարությունը ծրագրում էր Հայոց եկեղեցու դիրքն օգտագործել Արեւելահայաստանում իր դիրքերն ամրապնդելու եւ Հայության զանգվածների վրա ազդեցություն նվաճելու համար: Ռուսական պետական գործիչները ճիշտ էին հասկացել Հայ եկեղեցու դերը Հայության կյանքում: Ռուսական արտաքին քաղաքական շահերը պահանջում էին, որպեսզի Հայ եկեղեցին ոչ միայն կայսրության հենարանը դառնա, այլեւ նախկինի պես վայելի ողջ Հայության վստահությունը: Այդ մասին Դ. Բլուգովը բացահայտ գրում էր Ի. Պասկելիչին⁷:

Նպատակ ունենալով Հայոց եկեղեցին դարձնել իր քաղաքական լուրջ հենարանը, կայսրը եփրեմ Ա. եւ Հովհաննես Կարբեցի կաթողիկոսներին, ներսես արք. Աշտարակեցուն, Հովհաննես արք. Գառնակերյանին եւ Սերովբե վարդապետ Կարնեցուն պարզեւատրեց պետական բարձր շքանշաններով¹:

Նիկոլայ I-ը 1836թ. մարտի 11-ի հրամանագրով հաստատեց Հայոց եկեղեցու կանոնադրությունը, որը կանոնակարգում էր նրա ներքին կյանքի տարբեր բնագավառները: Թեպետ, կանոնադրությունը սոսկ եկեղեցական փաստաթուղթ չէր, այլեւ Ռուսաստանի կազմում ապրող Հայության համար ազգային-մշակութային առանձնաշնորհում էր, այնուամենայնիվ Հայ եկեղեցին դրվում էր «թագավոր կայսեր ամենաողորմած Հովանավորության ներքո»: Իր այդ կարգավիճակը Հայոց եկեղեցին դրսեւորեց նաեւ 1848-1849թթ. հունգարական ազգային-ազատագրական պայքարի տարիներին:

Նոր Նախիջևեանի Հայոց հոգեւոր կառավարությունը 1849թ. հունիսի 2-ին թարգմանաբար տպագրեց ռուսաց կայսրի մանիֆեստը՝ Ավստրիայի կայսրին օգնության գնալու եւ Տրանսիլվանիայում ապստամբությունը ճնշելու մասին ու այն առաքեց բոլոր քաղաքների ու գյուղերի եկեղեցիները՝ «վասն ծանուցանելու ընդհանուր բնակչոց ընդ պատերազմին»:

Հոգեւոր կառավարությունը հոկտեմբերի 10-ին եկեղեցիներին հրահանգում էր ավետել Հունգարիայում «ապստամբությունն ու խռովությունը խաղաղվելու» եւ ռուսական «Հաղթական գորաց» տուն վերադառնալու լուրը³:

Բեսարաբիայի Հայոց թեմի առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոսը Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն 1849թ. օգոստոսի 31-ին գրում էր, որ Հունգարիայում ռուսաց բանակի Հաղթության պատվին բոլոր եկեղեցիներում մաղթանքի արարողություն է կատարվել⁴:

Այս ամենը վկայում են այն մասին, որ ցարական Ռուսաստանի կազմում Հայոց եկեղեցին անվերապահորեն դրվատում էր ցարիզմի քաղաքականությունը եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ճնշելիս:

Ֆելիքս Մովսիսյան
պատմական գիտությունների

⁵ Նույն տեղում, թ. 71, վ. 276, էջ 1:

⁶ Նույն տեղում, թ. 70, վ. 105ա, էջ 1-2; վ. 105բ, էջ 1-2:

⁷ Հայ ժողովրդի պատմություն, Հ. 5, Ե., 1974, էջ 213:

¹ Մաշտոցյան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսին դիվան, թ. 61, վ. 760, էջ 1; թ. 61, վ. 776,

² Հայաստանի ազգային արխիվ, Փոնդ 54 պ. ց. 1, գ. 294, թ. 3:

³ Նույն տեղում, Փոնդ 54պ. ց. 1, գ. 294, թ. 7:

⁴ Մաշտոցյան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թ. 149, վ. 687, էջ 1-3:

АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ И ПОЛЬСКОЕ ВОССТАНИЕ 1830-1831гг.

РЕЗЮМЕ

Среди революционных и национально-освободительных движений 1830-их годов в Западно-европейских странах, особое место занимает польское восстание против царской России, за независимость и восстановление “старинных границ” Польши 1772 года. Царь отказал выполнить требования Польского Сейма.

25 января 1831 года, Николай Первый был объявлен лишенный трон Польшы. В тот же день Царь издал манифест о мобилизации войск и об их вхождении в Польшу.

Эти события коснулись и армянской церкви.

Феликс Мовсисян

Кандидат исторических
наук

АРМЯНСКАЯ ШКОЛА ГРУЗИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX И НАЧАЛЕ XX ВЕКА

Во второй половине XIX века на территории Грузии открываются армянские школы, имеющие начальный или средний уровень. В 1879 году в Тифлисской и Кутаисской губерниях было 66 только начальных и церковно – приходских школ с 2659 учащимися¹.

В 1881 году в Тифлисской губернии насчитывалось 80 армянских духовных училищ, где обучались 4120 человек, а преподавали 217².

Армянские школы Грузии содержались на средства церкви, армянской общественности и частных благотворителей.

Во второй половине XIX века число армянских школ неуклонно увеличивалось, и что примечательно, армянские школы фактически были во всех армянонаселенных уездах, городах и селах.

В армянских школах Грузии подавляющее большинство учащихся составляли дети торговцев и ремесленников. Дети богатых и знатных родителей обучались в государственных школах. В некоторых государственных заведениях, открытых в начале XX века были и национальные отделения. Так например, армянские отделения были в 5-ой мужской Тифлисской гимназии (1905-1921), в Ахалцихской мужской гимназии (1910-1918), в Тифлисском Михайловском ремесленном училище³.

Развитие армянской школы в Грузии, особенно во второй половине XIX века было обусловлено потребностями жизни и эпохи, социально – экономическими преобразованиями.

¹ Гагуа В. Народное образование в Грузии в послереформенный период XIXв. (на груз. яз.) Тбилиси, 1969г., с.58.

² ЦГИА Грузии, ф. 17, оп. 1, ед. х. 871, л. 24,25.

³ Челидзе К., Очерк истории среднего специального образования в Грузии, Тбилиси, 1981, с. 57.

Видя развитие армянской школы передовые грузинские педагоги не настраивались враждебно, а старались пользоваться замеченным передовым и всячески старались защищать новое и передовое в школе братского народа.

Подчеркнуто дружелюбное отношение к армянской школе, педагогам, проявляла передовая грузинская газета “Дрозба”, которая считала необходимым пользоваться передовым опытом армянской школы.

Редактор “Дрозба” Иван Мачабели был хорошо знаком с историей армянского народа, его культурой и охотно представлял страницы издаваемой им газеты под статьи об армянской жизни. Так в статье “Об армянской школе” Н. Николадзе пропагандирует рвение армян в вопросе образования с целью вызвать такое же стремление среди своих соплеменников”⁴.

Позитивное отношение к армянской школе мы видим и в статье “Армянская церковь”. Я. Гогебашвили, где описывается система армянских духовных учебных заведений⁵.

В статье “У каждого явления свои цели” дается высокая оценка учителю тифлисской реальной гимназии, который знал ряд европейских языков, составил грамматику армянского языка. Вывод автора статьи таков: учебно – материальные условия и постановка обучения в армянских школах лучше, чем в грузинских. “ В Кутаиси армян мало. Среди них мало имущих, - писал он, - но глаз радуется, глядя на армянскую школу (2 – х этажное каменное здание)”⁶. Эта школа была построена на пожертвования 180 дворов армян и многих грузин⁷.

Действительно, образованных педагогов-армян в государственных школах было немало, чего не скажешь о национальной школе, где уровень подготовки учителей находился в таком плачевном состоянии, вследствие чего, как писал “Мшак” в 1889 году “сегодня обычное явление, когда винодел становится педагогом, экономист-учителем”⁸.

Исключение составляли школы Нерсисян, Гаянян, Мариамян-Овнян и некоторые другие, где образовательный ценз учителей был высоким. Одной из насущных проблем в школьной жизни армян была проблема школьного учебника. Оригинальных учебников, особенно для старших классов, не считая армяноведческих дисциплин, фактически не было. Более или менее благополучно обстояло дело с учебниками для начальной школы.

В 50-ые годы XIX столетия на школьной арене появились учебники армянского языка известных педагогов Ст. Назарянца, Р.Патканяна, М.Патканяна и др.

В 1869 году была издана “Инструкция по обучению армянскому письму и чтению” С.Мандиняна, в основе которой лежал звуковой метод обучения грамоте.

В дальнейшем появились популярные учебники: “Родное слово” Г.Агаяна и “Лусабер”, составленный С.Д.Лисицианом совместно с О.Туманяном и Левонем Шантом.

⁴ Дрозба (на груз. яз.)Тифлис, 1873, N46, с. 1.

⁵ Иверия (на груз. яз.) Тифлис, 1892, N48, с. 1.

⁶ Дрозба (на груз. яз.), Тифлис, 1882, N 118, с. 3.

⁷ Дрозба (на груз. яз.), Тифлис, 1883, N155, с. 2.

⁸ “Мшак” (На арм. яз.) Тифлис, 1889, N 6, с. 2.

К действующим в первой половине XIX века армянским школам прибавились новые. Среди них выделялись Батумская, Ацкурская, Ахалцихские школы “Варданян” и “Святого Степаноса”, школы сел Гандза, Гюмбурде, Карзах, Сатха, Сулда, Олаверд Ахалкалакского уезда, с Болнис — Хачен, Большой Шулавер Борчалинского уезда, армянская школа г. Душети, Тифлисская школа на Майдане (католическая) в районе Армянский базар, при церкви Св. Саркиса (Камоян), в с. Дахет — Хачен и Шамшулда Тифлисского уезда и др.

Батумская армянская мужская приходская школа была основана в 1879г. В конце 80 — х годов здесь училось 37 человек. С 1895 года была школой со смешанным составом. В 1907 — 1908 уч. Году была двухклассной школой с 245 учащимися.

Одной из крупных школ того времени была Ахалцихская мужская школа “Варданян”, основание которой относят к 1865 году. В 1871г. было 3 класса с 90 учащимися, а в 1877 году число учащихся достигло 152.

В то же время в Ахалцихе работала приходская школа “Св. Степаноса”. Основана была в 1869 году. В 1873 году учеников было 67. Особо хочется отметить, что эта школа имела оборудованную и богатую библиотеку. Основной книжный фонд библиотеки подарили армянские студенты Петербурга и видный поэт М. Миансарянц.

Школа с. Цухрут была основана не позднее 1873 года. Как отмечает журнал “Пчела Армении” (1873г., N 32) школа работала не полный год, так как во время полевых работ дети были вместе с родителями⁹. Школа в 1881 году имела одного учителя и 39 учеников. В 1908 году была смешанной школой, где был 121 ученик.

Несмотря на то, что школа с. Гандза обычная, ничем не примечательная (учились всего 45 человек и преподавал 1 учитель — данные периода 1873 — 1880гг.) мы не могли ее не упомянуть, так как это село — родина великого армянского поэта, поборника дружбы народов, в том числе армянского и грузинского, Вагана Терьяна.

С начала 70 — х годов школа была и в одном из крупных сел Ахалкалакского уезда — Гюмбурде, где в 1909 году обучалось 75 учеников.

Крупнейшим селением Ахалкалакского уезда был Карзах, где по данным 1915 года было около трех тысяч (3000) жителей. В начале 70 — х годов XIX века здесь действовала армянская школа, имея 1 учителя при 35 учениках. К 1881 году количество учеников возросло до 60 человек при 2 учителях.

Довольно многочисленными были и школы с. Сулда и Олаверд того же Ахалкалакского уезда. В первой в 1914 году учились 101 человек, а во второй в 1881 году было 60 учеников.

Село Болнис — Хачен — родина великого армянского писателя и педагога Газароса Агаяна, где он получил первоначальное образование. Но обучался он не в местной школе (эта школа открылась в начале 80 — х годов XIX в. А Г. Агаян первоначальное образование получил в 40 — х годах) а, наверное у местного священника. Школа здесь работала неритмично (это было свойственно большинству армянских школ в силу проводимой царским правительством политики угнетения национальной школы), с большими интервалами (так, если большинство армянских школ, закрытых в 1885 году в 1886 году уже работали,

⁹ Худоян С. Школы восточных армян в /1830-1920гг., (на арм. яз.), Ереван, 1987, с.509.

то школа в селе Болнис — Хачен возобновила работу лишь в 1894 году)¹⁰. В начале века она была трехлетней начальной школой, где число учащихся в 1914 году достигло 88-и.

Другим крупным армянонаселенным центром этого региона было село Большой Шулавер, где было несколько армянских школ.

В 1858 году архиепископ Саргис Джалалян начал в селе Б. Шулавер строительство школьного здания. Благодаря тому, что местный врач Романос Надирян взял расходы на себя, обязуясь оплачивать их ежегодно, школа открылась в том же году.

В 1873 году было 50 учеников и 3 учителя. В 1888 году было 133 ученика и 5 учителей.

С 1905 года школа имела смешанный состав.

По данным на 1907 — 1908 уч. год здесь училось 510 человек, из которых 290 — мальчики, а 220 — девочки.

В селе Ахалкалаки (Горийский уезд) жили выходцы из Арцаха и Гандзака, которые фактически не говорили на родном языке. Выпускник школы Нерсесян О. Галстян начал бесплатно обучать армянскому, русскому и грузинскому языкам¹¹, воспитывать сельских детей обоего пола до открытия здесь армянской приходской школы. В 1873 году в школе учились 52 человека обоего пола. С 1912 года школа со смешанным составом, где в 1914 году учились 74 человека и преподавали 3 учителя.

В конце 50 — х годов XIX в. В Сурами была открыта мужская приходская школа. В 1877 году в школе было 33 ученика. В 1881 году местный житель Джимшир Джашидян построил великолепное здание для местных мужской и женской школы. Что особенно примечательно, местные учителя бесплатно получали квартиру, топливо и слугу. В 1908 — 1909 уч. году здесь учились 104 человека, из коих 50 — девочки.

В XIX веке Цхинвали так же был одним из крупных армянонаселенных поселений Грузии. Здесь были 2 армянские школы: мужская и женская. Мужская была основана в 1868 году, а женская — в 1881 году. В начале 90 — х годов, благодаря крупным пожертвованиям (Мариам Паповяниц — 2000р., а Заал Оганян 540 квадратных сажень земли) в Цхинвали началось строительство нового здания для Цхинвальских женской и мужской школы¹².

Мужская и женская армянские приходские школы были и в другом армянонаселенном центре Грузии — Душети. Мужская школа основана в 1882 году, а женская в 1886г. С 1909 года была двухклассная школа со смешанным составом, где обучались 21 девочек и 13 мальчиков.

Одной из старейших церковных школ Тифлиса была школа армян — католиков на Майдане, которая основана в 1854 году. В 1873 году в этой школе учились 70 человек и преподавали 3 учителя. В 1892 — 1893 учебном году стала двухклассной школой со 143 — мя учениками.

¹⁰ ЦГИА Республики Армения, ф. 35, оп. 1, ед. х. 74.

¹¹ “Арагат” (на арм. яз.), Эчмиадзин, 1870, с. 73.

¹² Лео “Тридцатилетие Армянского благотворительного общества на Кавказе” (на арм. яз.), Тифлис 1911, с. 208.

В 1868 году княгиня С. Кирекян на свои средства основала в Тифлисе, в районе называемом “Армянский базар” мужскую приходскую школу, которая в 1871 году имела 25 учеников и 3 – х учителей¹³.

Армянская приходская Св. Геворга школа Камоян была основана в начале 80–х годов XIX века. В 1888–1889 уч. Году в школе учились 106 человек, из которых 93 были детьми торговцев и ремесленников¹⁴.

Еще в начале 70 – х годов в селе Дагет – Хачен Тифлисского уезда, действовала армянская мужская приходская школа. В 1873 году имела 10 учеников. В 1907–1908 уч. Году здесь была одноклассная школа с 2 учителями и 77 учениками, из которых 11 девочек. В 1908–1909 уч. Году число учащихся достигло 106 – и человек.

На основе “халфайской” школы с. Шамшулда (Тифлисский уезд) в 1879 году была создана приходская школа.

В 60–е 80–е годы армянские школы открывались и армянскими благотворительными организациями и на средства г. Тифлиса. Так в интервале 1862–1883 годов “Тифлисское армянское благотворительное общество” открыло в разных районах (Кукия, Авлабар, Навтлуги и др.) г. Тифлиса 6 школ.

В 1880–1882 гг. на средства г. Тифлиса содержалось 5 школ, из которых одна воскресная и одна торговая¹⁵...

По статистическим данным картина начального школьного образования в 4 армянских епархиях Закавказья рисуется в следующем виде: из 109200 детей школьного возраста 28819, т.е. около 25% обучались в армянских школах, число коих простирается до 332; общее же число обучающихся армян как в министерских, так и в церковно-приходских школах равняется 51135, т.е. около 50%¹⁶.

По данным 1908 года в начале XX века в Тифлисе кроме школ Нерсесян и Мариамян-Овнян действовали 15 церковно-приходских школ с 1503 учащимся, из которых 331 мальчика, а 1172 девочки; работало 65 учителей. Вне Тифлиса, в Грузино-Имперетинский епархии было 48 начальных школ, училось 8721 учащихся, преподавало 155 учителей¹⁷.

В 1919-1920 учебном году по данным “Национального совета армян Грузии” среди армян в Грузии действовало 45 низших и 5 высших начальных школ с 5019 учащихся, средних школ было 3 с 487 учащимся; работало 219 учителей: 49 с высшим образованием, 38 – со средним специальным и 132 со средним образованием¹⁸.

Во второй половине XIX века число армянских школ на Кавказе, как это видно на примере Грузии, увеличилось, что создало возможность большому числу армянских детей получить хоть какое – то образование.

Паргев Геворкян
кандидат педагогических

¹³ ЦГИА Грузии, ф. 17, оп.1, ед. х. 674, л.10.

¹⁴ “Педагогический листок” (на арм. яз.), Тифлис, 1889, N2, с. 10.

¹⁵ “Дроэба” (на арм. яз.), Тифлис, 1882г., N 175, с. 1.

¹⁶ Записка об армянских школах (сост. А.Харузин и А.Петров),С-Петербург,1911, с. 86.

¹⁷ “Нор дпроц” (на арм. яз.) Тифлис, 1908, N 2, с. 73.

¹⁸ “Нор хоск” (на арм. яз.) Тифлис, 1920, N 6, с. 3.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ
ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿՋԲԻՆ**

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում բերված են զանազան տվյալներ վիրահայ դպրոցների թվի, աշակերտների եւ ուսուցիչների քանակի վերաբերյալ, նշված են վիրահայ դպրոցի բարերարների անունները:

Հատուկ ընդգծված է վրաց հասարակայնության, մանկավարժների դրական վերաբերմունքը վիրահայ դպրոցի նկատմամբ:

Պարզեւ Գեւորգյան
մանկավարժական գիտությունների
թեկնածու
Քարմիլե Վիրաբյան

**ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ 1876թ.
ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆԸ**

1853-1856թթ. Ղրիմի պատերազմով Արեւլյան հարցի պատմությունը թեւակոխեց մի նոր շրջան: Ռուսաստանը, որ Դանուբի, Ղրիմի եւ Կովկասյան ռազմաճակատներում կռվում էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Թուրքիայի եւ Սարդինիայի միացյալ դաշինքի դեմ, այս պատերազմում պարտություն կրեց, եւ Թուրքիան, Եվրոպական տերությունների հովանավորությամբ, շարունակեց պահպանել իր տարածքային ամբողջականությունը:

Սակայն դա չհուսալքեց Թուրքիայի քրիստոնյա հպատակներին: Ինչպես բալկանյան ժողովուրդներն, այնպես էլ հայերը շարունակեցին ազգային-ազատագրական պայքարը: 60-ական թթ. Վառնայի ռուսական փոխհյուպատոս, բանաստեղծ Ալեքսանդր Օլիսինը գրում էր, որ Բալկանյան թերակղզու «ազգությունների ընդհանուր վերածնունդը ազգեցություն է գործել նաեւ այստեղի հայերի վրա... Նրանք արդեն թեւակոխել են ազգության վերածննդի, այսպես ասած, առաջին փուլը»:¹

Զեյթունի 1862թ. զինված ապստամբությունը, ժողովրդական ելույթներն Արեւմտյան Հայաստանում, ապստամբությունները Չեռնոգորիայում (1862), Կրետում (1866-1868), Բոսնիայում եւ Հերցեգովինայում (1875), Բուլղարիայում (1876), ինրպես նաեւ միջազգային հակասությունները Մերձավոր Արեւելքում, էլ ավելի խորացրին Արեւելյան հարցի ճգնաժամը, որն անպայմանորեն լուծում էր պահանջում: Դեպքերի տրամաբանական զարգացումն ինքն էր թելադրում պայքարի հետագա ուղին ու միջոցները:

Ապստամբությունը բուռն թափով հասունանում էր հատկապես Բուլղարիայում:

«Եկեղեցական հարցը» որն այստեղ ծնունդ էր առել դեռեւս 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, առեւտրա-արդյունաբերական բուրժուազիայի զարգացման հետ մեկտեղ, հետզհետե ավելի էր ծավալվում՝ վերաճելով քաղաքական պայքարի: Այն ուղղված էր հունական հոգեւորականության դեմ եւ նպատակ ուներ ստեղծելու հունականից անկախ բուլղարական եկեղեցի²:

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 513:

² История Болгарии, т. 1, с. 247-258:

Այս պայքարում էլ Բուլղարիայի եւ Կ.Պոլսի Հայ Հոգեւորականներն ու ամբողջ Հայ բնակչութիւնը բուլղարներէ հետ էին: Ռուշչուկում եկեղեցական շարժման եւ ցույցերի կազմակերպիչներէ մեկէ՝ Գանգովյանի մասին իր զեկուցադրերից մեկում նշում է տեղի ուստական Հյուպատոսը³: Հայերն ու բուլղարները միասին խափանում էին բուլղարական եկեղեցում հունարեն տարվող ժամերգութիւնը, այն կազմակերպում էին Հայկական եկեղեցում՝ բուլղարներն լեզվով: Հօգուտ բուլղարացիներէ, այս շարժմանը արձագանքել են ժամանակի Հայ պարբերական մամուլը, բարձր հոգեւորականութիւնը՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարք Մ. Խրիմյանի գլխավորութեամբ, Հայ առաջադեմ Հասարակական-քաղաքական շրջանները⁴:

Պոլսահայ տպագրիչներէ Զանքերով այստեղ հրատարակվում էին բուլղարներն լեզվով բազմաթիվ դրքեր, տարեգրքեր ու ամսագրեր, որոնք պրոպագանդում էին բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարները: Հայ տպագրիչներէ թարգմանո Տիվիթճյանը, որը Կ.Պոլսի բուլղարական առաջին տպարանի հիմնադիրն ու տնօրէնն էր, լույս էր ընծայում նաեւ անլեզու գրականութիւն, ինչպէս նաեւ կոչեր ու թուղթիկներ եւ ինքն էլ տարածում Բուլղարիայում⁵:

Չնայած հունական հոգեւորականութեան եւ թուրքական իշխանութիւններէ ընդգրկմանը, շարժումը 1870թ. ավարտվեց բուլղարացիներէ Հաղթանակով: Ստեղծվեց հունականից անկախ եկեղեցական կենտրոն՝ Էկզարխատ, Էկզարխի գլխավորութեամբ եւ հոգեվոր խորհուրդ՝ Սինոդ: Բուլղարական Էկզարխութիւնն առաջինը ճանաչեց Մ.Խրիմյանը⁶:

Թուրքիայի ուստական դեսպան Ն.Պ.Իգնատեւին Հասցեագրված մի զեկուցագրում խոսվում է Կ.Պոլսում բուլղարական Էկզարխ Անտիմի բուլղար եւ Հայ հոգեւորականներէ, բուլղարական եւ Հայկական ուսումնարաններէ սաների եւ բնակչութեան կողմից ցույց տրված ճոխ ընդունելութեան մասին⁷: Նրա ճանապարհը «զարգարել էին դրոշներով, կանաչով ու ծաղիկներով⁸...» Զեկուցագրի հեղինակը եզրակացնում է, որ Անտիմին մնում էր «կամ հրաժարվել Էկզարխութիւնից, կամ բախվել հույներէ հետ»⁹:

Ինչպէս ցույց տվեց նրա հետագա գործունեութիւնը, բուլղարական Էկզարխն ընտրեց երկրորդ ուղին՝ միացավ ժողովրդին եւ պայքարեց թուրքական իշխանութիւններէ եւ հունական հոգեւորականութեան ճնշումներէ դեմ:

Պայքարի այդ տարիներին Բուլղարիայում ծնունդ առավ ու ճեւաւորվեց հեղափոխական դեմոկրատներէ մի սերունդ, որի պայծառ ներկայացուցիչներն էին Գեորգի Ռակոյսկին, Լյուբեն Կարավելովը, Վասիլ Լեւսկին, Խրիստո Բոտեւը եւ ուրիշներ, որոնք չէին կարող լով ազգային եկեղեցու ստեղծումն ազգային անկախութեան բավարար միջոց համարել: Այդ միջոցը նրանք համարում էին միայն զինված պայքարը: Նրանցից շատերը, դեռեւս մինչեւ հեղափոխութիւնն ու պատերազմը, աքսորվեցին կայսրութեան փոքրասիական նահանգները, ենթարկվելով անլուր գրկանքներէ: Այդպիսի աքսորավայրեր էին դարձել նաեւ Արեւմտյան Հայաստանի մի շարք բնակավայրեր, որոնցից Հայտնի է Դիարբեքիրը (Տիգրանակերտը): Սկսած 1862թ., այստեղ աքսորված բուլղար հեղափոխականներէ առաջին քարավանը 30-ից Հասավ 200 մարդու եւ մինչեւ 1978թ.՝ Բուլղարիայի ազատագրումը, բուլղար ժողովրդի լավագույն զավակները խոշտանգվեցին տաժանակրութեան մեջ¹⁰:

³ АВПРИ, ф. Посольства в Константинополе, д. 21826/1866/, лл. 16-21.

⁴ С.В.Овнанян –Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине 19-го в.,сс. 72-75.

⁵ Հայ ժողովրդի պատմութիւն, Հ. 5, էջ 514:

⁶ «Արաքս», Սոֆիա, 1929, N 110:

⁷ АВПРИ, ф. Посольства в Константинополе, д. 2188/1872/, лл. 111-114.

⁸ Նույն տեղում, թ. 111:

⁹ Նույն տեղում, թ. 113:

¹⁰ С.В.Овнанян, Из истории армяно-болгарской дружбы, “ИФЖ”, с. 303.

Դիարբեքիի Հայերի եւ, Հատկապես, քաղաքի Հայոց Հոգեւոր առաջնորդների միջնորդութեամբ եւ գաղտնի ու բացահայտ բազմազան օգնութիւններով, Հաջողվում է որոշ չափով թեթեւացնել նրանց մի մասի տանջանքները, երաշխավորութեամբ ազատել բանտից ու պահել իրենց տներում: Նրանցից մեկին՝ Փիլիպոս Նաճառյանին՝ իր եղբայրական օգնութեան համար, Խրիստո Բոտեւը հրապարակավ շնորհակալութիւն է հայտնել՝ անվանելով նրան «բարի ու գթասիրտ մարդ», «բարեգործ ծերունի»¹¹:

1870թ. բուլղարական Հայդուկային ամբողջ շարժման բովով անցած Վասիլ Լեւսկու եւ ռուսական Հեղափոխական-դեմոկրատների գաղափարներով սնված Լյուբեն Կարավելովի ջանքերով ստեղծվեց Հեղափոխական կոմիտե, որը պիտի պայքարեր երկու թշնամիների դեմ՝ «թուրքական կառավարութեան- որպէս քաղաքական թշնամու, եւ հունական հոգեւորականութեան- որպէս հոգեւոր թշնամու»¹²:

Հեղափոխական տրամադրութիւններն արագ հասունանում էին ամբողջ Բալկաններում: Հերցեգովինիայի եւ Բոսնիայի ապստամբութիւնների ալիքը թափանցել էր Բուլղարիա: 1875թ. սեպտեմբերին տեղի թուրքերի կողմից վայրենաբար խեղդվեց Ստարա-Չապորայի ապստամբութիւնը: Իրանից հետո բուլղարները սկսեցին պատրաստվել Համաժողովրդական ապստամբութեան:

Այս իրադարձութիւնների ժամանակակից ու ակնատես Արիստակես Տեւկանցը գրում է. «1875 թվականն անմոռանալի տարեգիր մի է համայն աշխարհի համար. հետեւապէս նույն Հայաստանի համար յուր ազդեցութիւնն եւ վերաբերութիւնն ունի անշուշտ. նույն տարին յուր ընդերաց մեջ չորս հարյուր տարիէն ավելի մթերված խռովութիւններուն կճած մոմի մը ծայրով կդպնար ի հերսեք (Հերցեգովինա) եւ ի Պոսնիա (Բոսնիա), յորմէ վառն ու ծավալը բղխել ու սփռել, որուն անմիջապէս Սերվից (Սերբիա) ու Սեւ Լեռն (Չեռնոգորիա) օգնեցին...»¹³

Բալկանյան ժողովուրդներն այս անգամ ոտքի էին ելել միմիայն Հաղթելու վճռականութեամբ, եւ ապստամբութեան ղեկավարները կոչ էին անում. «Եթէ հրանոթ չկա, ժողովուրդը թող մահակներով ելնի պայքարի»¹⁴:

Ամենանշանակալիցը 1876թ. ապրիլյան ապստամբութիւնն էր Բուլղարիայում: Եվ չնայած ապստամբները վաղօրոք նախապատրաստել էին այն՝ հավաքել զենք, զինամթերք, սարքել ինքնաշեն հրանոթներ, սակայն դրանք քիչ էին, իսկ ապստամբներն՝ անփորձ զինվորական գործին: Չհաջողվեց մշակել ապստամբութեան վերջնական պլան: Նախատեսվել էր ապստամբութիւնն սկսել մայիսի 1-ին, սակայն բռնկվեց այն հանկարծակի, ապրիլի 20-ին՝ Կոպրիվչտիցում, մատնութեամբ սկսված ձեռքակալութիւնների պատճառով: Շուտով այն ընդգրկեց հսկայական տարածք՝ սպառնալով դառնալ համաբալկանյան հեղափոխութիւն, սակայն մայիսի 20-ին Խրիստո Բոտեւը 175 հոգուց բաղկացած խմբի ջախջախումով ավարտվեց՝ խեղդվելով արյան մեջ: Սպանվեց բուլղարական ազգային-ազատագրական շարժման ղեկավար Խրիստո Բոտեւը: Թուրքերը կոտորեցին մոտավորապէս 30 հազար բուլղարացիների, հարյուրավոր բնակավայրեր ջնջվեցին երկրի երեսից¹⁵:

Պահպանվել են տեղեկութիւններ հեղափոխութեանը ակտիվորեն օժանդակած Հայերի մասին: Նրանցից էր բուլղար լուսավորիչ-բանաստեղծ Նայդեն Գերովի մոտ բարեկամ, պլովդիվցի հայտնի վաճառական Արթին Գեղիկովը, հայտնի նաեւ Խոջա Արթին կամ Մոսկով Արթին (ռուսական Հասարակական շրջաններին մոտ կանգնած

¹¹ Կ.Հ.Ճինգոզյան, Հայ-բուլղարական կապերի պատմութիւնից (19-րդ դար), էջ 60:

¹² История Болгарии, т. 1, с. 271-272.

¹³ Արիստակես Տեւկանց, Այցելութիւնն ի Հայաստան, 1878թ., Երեւան 1985թ., էջ 17:

¹⁴ История Болгарии, т. 1, с. 280.

* Ըստ այլ աղբյուրների զոհվեց 45 հազար մարդ: Այդ մասին տես Զ.Կիրակոսյան, Բուլղարական դիվանագիտութիւնը եւնպատակը (19-րդ դ. 70ական թթ.), էջ 27:

¹⁵ История Болгарии, т. 1, сс. 276-292.

լինելու համար) անուաններով: Սրբեդնոգորսկի ապստամբության ժամանակ Արթին Գեդիկովին հաջողվում է փրկել կախաղանից 52 բուլղար հեղափոխականների¹⁶:

Պլովդիվի պետական պատկերասրահում պահվում է Գեդիկովի դիմանկարը, որը, ըստ Կ.ձինգոլյանի ուսումնասիրությունների, նկարել է ապստամբության օրերին թուրք զաչիճների ձեռքից նույնպես Արթինի ջանքերով փրկված բուլղար անվանի նկարիչ Ստանիսլավ Դոսպեևսկին¹⁷: Ենթադրում ենք, որ Արթին Գեդիկովի ծառայությունները սրանով չեն սահմանափակվել: Նայդեն Գերովը Ռուսաստանում կրթություն ստանալուց հետո վերադառնալով Բուլղարիա, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հանձնարարությամբ Պլովդիվում բացել էր ուսական հյուպատոսություն եւ նշանակվել հյուպատոս¹⁸: Նրա պարտականություններից մեկն էլ ուսական արքունիքին հավաստի լուրեր ուղարկելն էր: Եւ քանի որ պաշտոնական գործակալների միջոցով միշտ չէ, որ հնարավոր էր թուրքական իշխանությունների ու Եւրոպական դեսպանների գործունեություն մասին ճիշտ եւ թարմ լուրեր ստանալ, այդ նպատակով օգտվում էին նաեւ տեղացի վստահելի անձանց ծառայություններից: Կարծում ենք, որ Արթին Գեդիկովը, օգտագործելով իր հեղինակությունն ու լայն ծանոթությունը, նման ծառայություններ մատուցել է նայդեն Գերովին:

17 բուլղար երիտասարդների է կախաղանից փրկել իսաչեր Վարդազարմյանը՝ Պետրուշտիցա գյուղի զինված ապստամբության ճնշման ժամանակ: Բուլղարիայի ազատագրումից հետո, 1879թ. Պետրուշտիցա գյուղի ավագների խորհուրդը նրան պաշտոնական շնորհակալություն է հայտնել¹⁹:

Արեւելյան Հայաստանի եւ Թիֆլիսի Հայերը Մոսկվայի ու Պետերբուրգի սլավոնական կոմիտեների միջոցով, որն ի դեպ միակ թուլյատրերի ճանապարհն էր, դրամական օգնություն էին ուղարկում բուլղար ապստամբներին: Ինչպես հաղորդում է «Մշակը», Հայերը Թիֆլիսում կազմակերպում էին վճարովի երեկոներ, համերգներ, թատերական ներկայացումներ, դասախոսություններ, զբոսանքներ, հանգանակություն էին անում եւ ստացված ամբողջ դրամն ուղարկում բուլղարացիներին: Մեկ անգամ ուղարկված դրամն, օրինակ, կազմել է 1698 ռուբլի²¹: Սլավոնական կոմիտեներն այդ դրամով ոչ միայն անհրաժեշտ իրեր էին գնում ապստամբների համար, այլեւ զենք ու զինամթերք²²: Քանի որ այդ կոմիտեները համարվում էին բարեգործական կազմակերպություններ, կառավարությունը նրանց գործողությունների համար պատասխանատվություն չէր կրում եւ թույլ էր տալիս ազատ գործել:

Ապրիլյան ապստամբության ճնշումից հետո կենդանի մնացած եւ ձերբակալությունից խուսափած բուլղար հեղափոխականների մի մասն անցավ Ռուսիայի ու Սերբիա, որտեղ հասունանում էին Թուրքիայի դեմ պատերազմական տրամադրությունները:

Արամ Խաչատրյան

УЧАСТИЕ АРМЯН В ВОССТАНИИ В 1876 ГОДА В БОЛГАРИИ

¹⁶ Կ.ձինգոլյան, նշվ. աշխ., էջ 56, նաեւ Ս.Վ.Օվնանյան նշվ. աշխ. էջ 89, Ա.Գ.Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ դադթականության պատմության, Հատոր Բ, էջ 118:

¹⁷ Կ.ձինգոլյան, նշվ. աշխ., էջ 56:

¹⁸ Ս.Նիկիտին, Возникновение Московского славянского комитета, “Вопросы истории” 1947, N 8, стр. 52.

¹⁹ Ս.Վ.Օվնանյան նշվ. աշխ. էջ 89:

²¹ «Մշակ», 1876, 26 օգոստոսի:

²² Վ.Ի.Վինոգրադով, Русско-турецкая война 1877-1878гг. и освобождение Болгарии, М. 1978, с. 76-77.

РЕЗЮМЕ

После Крымской войны в 1853-1856гг. история Восточного вопроса, вступила в новый этап. Турция, под покровительством Европейских государств, продолжала сохранять свою территориальную целостность. Но это не обезнадееживало христианских подданных Турции. Как балканские народы, так и армяне, продолжали национально-освободительную борьбу. В этой связи, самым значительным событием стало апрельское восстание 1876 года, в Болгарии.

Сохранились сведения о тех армянах, которые активно участвовали в этой революции. Болгары с уважением и благодарностью помнят их имена: Хачер Вардазарян, Артин Гедиков (он самый Ходжа Артин), Оганес Аладжаджян, Геворк Рушчукян и другие.

Армяне Восточной Армении и Тифлиса, с помощью славянских комитетов Москвы и Петербурга, посылалы денежные переводы болгарским повстанцам.

Арам Хачатрян

Հ. Յ. ԴԱՇԵՆԱԿՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ 1891-1895 ԹԹ.

1890 թվականի ամռանը ձեռավորված Հայ Յեղափոխականների Դաշնակցության առաջնահերթ խնդիրներից մեկը՝ Արեւմտյան Հայաստան մուսթ գործելու համար Պարսկաստանի /ներկայումս՝ Իրանի Իսլամական հանրապետության/ Հյուսիս-արեւմտյան հատվածում՝ Ատրպատականում անհրաժեշտ մարզուժի եւ գեների կուտակման առաջադրանքն էր: Պարսկաստանի, մանավանդ՝ Ատրպատականի նշանակուլթյունը գիտակցել եւ արժեւորել էին դեռեւս 1870-1880-ական թվականների Հայ ազատամարտի գործիչները, առաջին հերթին՝ Արսեն Թոխմախյանը, իսկ Բաֆֆին իր «Կայծերում» արդեն պատկերել էր Ատրպատականից Արեւմտյան Հայաստան անցնող առաջին Հայդուկների նախատիպերին: Ուստի ՀՅԴ ձեռավորումից քիչ անց՝ 1890թ. հոկտեմբերին Թիֆլիսում սկիզբ է առնում երիտասարդների հավաքագրումը՝ Պարսկաստան եւ նրա վրայով Արեւմտյան Հայաստան անցնելու համար: Այդ կապակցութեամբ Թիֆլիսի ոստիկանապետը նահանգապետին ուղղված 1890թ. նոյեմբերի 17-ի զեկուցագրում նշում էր, որ արդեն հոկտեմբեր ամսին տեղեկութեւններ Պարսկաստանի վրայով Թուրքահայաստան ուղարկելու համար Հայ երիտասարդների հավաքագրման մասին: Նա հայտնում էր, որ «Էջմիածնի մյուսնորհնութեւնից հետո իսկապես սկսեցին Թիֆլիս ժամանել ինչ-որ անձնավորութեւններ, որոնք շրջելով բացառապես հայերի մեջ, հասցրին նախապատրաստել 20 մարդու՝ մի ջոկատի մեջ մտնելու համար. ընդ որում նախատեսվում էր այդ մարդկանց ուղարկել դեռեւս մինչեւ ձմեռը, բայց շնորհիվ եղանակի փոփոխութեւնի, երիտասարդների մեկնելու հարցը հետաձգվեց մինչեւ գարուն»¹:

Այս նախապատրաստութեւններին զուգահեռ, ՀՅԴ-ն արդեն 1890 թվականի վերջին Ատրպատական ուղարկեց իր ներկայացուցիչ Տրգրան Ստեփանյանին՝ առաջին գործիչների ոչ մեծ խմբի հետ միասին: Այդ խմբի մեջ, որը 1891թ. հունվարի 10-ին Ջուղայից անցավ Պարսկաստան, մտնում էին նաեւ Թորոսը /Հովսեփ Արղուլթյան կամ Կնյազ/², Ջալաղը /Երվանդ Բաբերյան/, ժամագործ Մկրտիչը, մշեցի Մարգարը եւ Ասատուրը³:

¹ Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիւ, ֆ. 17, ց. 2, դ. 706, թ. 30:

² Հովսեփ Արղուլթյան-Կնյազին, նույն ինքը՝ Թորոսին, չպետք է շփոթել Հովսեփ Արղուլթյան-Իշխանին, ինչպես նաեւ մեկ այլ Թորոսին՝ Գալուստ Ալոյանի հետ: Կնյազ- Թորոսը 1880-ականներին մտերիմ հարաբերութեւններ ունէր Քրիստափոր Միքայելյանի հետ, երբ վերջինս

Ատրպատականում կուսակցութեան առաջին ներկայացուցիչ՝ գանձակեցի Տիգրան Ստեփանյանը Արաքսն անցնելուց հետո Ալեքսանդրապոլցի ժամագործ Մկրտիչի հետ ուղեւորվում է Թավրիզ, իսկ նրա մյուս գործընկերները՝ Սալմաստ: ՀՅԴ առաջին գործիչները հանդիպում եւ մտերիմ հարբերութեւններ են հաստատում Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Ստեփաննոս եպս. Մխիթարյանի /Արաբո/ հետ, որը հայտնի էր կաթողիկոսների ու բողոքականների դեմ իր անհաշտ պայքարով եւ ըմբոստ բնավորութեամբ: Սակայն, Ատրպատականում ՀՅԴ կազմակերպական կառույցը ձեւավորելու ուղղութեամբ գործադրվող հետեւողական ջանքերին սկսեց վնասել այն փաստը, որ այս երկրամասում կուսակցութեան լիազոր-ներկայացուցիչ նշանակված Տիգրան Ստեփանյանն իր բնավորութեան գծերով՝ միանձնյա ղեկավար դառնալու հավանութեւններով հակասութեւններ ու տարաձայնութեւններ առաջացրեց ինչպէս դաշնակցականների, այնպէս էլ տեղի հայութեան մեջ: Տիգրան Ստեփանյանի բնավորութեան այդ գծերին, որի համար Քր. Միքայելյանը նրան սովորում էր «մալիկի գեներալ», գումարովեց նաեւ գործելակերպի հարուստ եւ ոչ միշտ գաղտնապահ բնույթը: Պատահական է, որ արդեն 1891թ. սեպտեմբերի 7-ին Թիֆլիսի նահանգապետը ոստիկանապետին եւ նահանգի գալաուպետերին ուղարկված հրահանգում նշում էր, որ Մոսկվայի տեխնիկական ուսումնարանից հեռացված Տիգրան Բեգլարի Ստեփանյանը գտնվելով Պարսկաստանի Դիլման քաղաքում, պաշտոնապէս զբաղեցնում է հայկական դպրոցի ուսուցչի պաշտոնը, բայց իրականում «...հանդիսանում է հայկական շարժման միջոցներն ուժեղացնելու համար Ռուսաստանից՝ Պարսկաստանի վրայով, Թուրքիա մարզկանց, գեների եւ դրամի տեղափոխման գործակալ»¹:

Տիգրան Ստեփանյանի բնավորութեան ու գործելակերպի խոցելի կողմերը կարող էին մեծապէս վնասել Ատրպատականում ծավալված ակտիվ գործունեութեանը, եթէ սկսած 1891 թվականից՝ 1-2 տարվա տարբերութեամբ, այնտեղ չհայտնվէին դաշնակցական այլ գործիչներ, որոնք Ատրպատականը եւ առաջին հերթին՝ Թավրիզը արագորեն դարձրին կուսակցութեան ուժերի ու միջոցների կուտակման երկրորդ խոշոր կենտրոնը՝ Թիֆլիսից հետո: Նկատի ունենալով այդ հանգամանքները, արդեն 1892-ի ամռանը կայացած ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը Տիգրան Ստեփանյանին զրկեց կուսակցութեան ներկայացուցչի լիազորութեւններից, բայց միաժամանակ՝ իր ընդունած ծրագիր-կանոնագրով Թավրիզի կուսակցական մարմնին շնորհեց Բյուրոյի կարգավիճակ: Տիգրան Ստեփանյանից հետո Ատրպատական ժամանած գործիչների մեծ խմբի մեջ առանձնացավ Ժնեւի Համալսարանի Հասարակական գիտութեւնների բաժինը կրսատ թողած եւ 1891-ին Թավրիզի Լիլավա թաղամասի Հայկազյան-Թամարյան երկսեռ դպրոցի տեսչութեւնը ստանձնած Հոնան /Հովնան/ Դավթյանը /Նանոյան/, որը հետագայում դասվել է Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի ու Ռոստոմի կողքին՝ որպէս նրանց հավասար մեծութեւն²: «Դաշնակցական ուխտի ամենէն մաքուր, հին, գաղափարական...»³ գործիչներից մեկի՝ Հոնան Դավթյանի շուրջը Թավրիզում համախմբվեցին եւ ՀՅԴ Թավրիզի կոմիտեն, իսկ հետագայում՝ Բյուրոն ձեւավորեցին ուսուցիչներ Յովսէփ Արղությանը /Իշխան/, Սաթենիկ

«Նարոզնյա վոլայի» շարքերում էր, բայց սկզբնական շրջանում ակտիվորեն մասնակցելով ՀՅԴ կառույցների ձեւավորման գործին՝ Պարսկաստանում, Անդրկովկասում /Երեւան/ եւ Կ.Պոլսում, հետագայում նա դառնում է սովորական պաշտոնյա՝ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան մեջ: Ավելի մանրամասն տե՛ս Սամսոն, Յովսէփ Արղութեան Կնեազ /Թորոս/, «Հայրենիք» ամսագիր, 1946, թիվ 2, էջ 76-78:

³ Տե՛ս Ռ. Սեւեան, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, «Հայրենիք» 1937, թիվ 6, էջ 74:

¹ Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 17, ց. 2, դ. 706, թ. 24:

² Ավելի մանրամասն տե՛ս Յոնան Դաւթեան, Հատոր Ա., խմբ. Խաթակ Տեր-Գրիգորեանի, Աթէնք, Հրատարակութիւն Հ.Յ. Դաշնակցութեան, 1988:

³ Միքայել Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Հատոր առաջին, Պարիզ, 1932, էջ 110:

Մատինյանը /Օրիորդ Ծաղիկ/, Սարգիս Օհանջանյանը /Ֆարհատ/, Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը /Հետագայում՝ Նիկոլ Դոման/ եւ ուրիշներ: Քանակով փոքր, բայց գաղափարա-բարոյական որակներով բարձր այդ խումբը բեկում մտցրեց Ատրպատականում ՀՅԴ ծավալած աշխատանքների մեջ: «Չկային մասնաւոր, անհատական շահեր. մարդիկ ապրում էին հարագատ եղբոր պէս, միմեանց հետ կապուած ընկերական վեհ, քրիստոսաւանդ սիրով»⁴, - հետագայում գրում էր Սարգիս Օհանջանյանը: Թավրիզում ձեւավորվեց յուրահատուկ «դաշնակցական-կոմունա», այսինքն՝ բոլոր ուսուցիչների ուսուցիչները մեկտեղվում եւ ծախսվում էին բոլորի համար հավասար կերպով՝ միջոցներ խնայելով նաեւ կուսակցական առաջադրանքների եւ Թավրիզի կրթական-լուսավորական գործն առաջ տանելու համար: Դաշնակցական-ուսուցիչների ծավալած բուռն կրթական-լուսավորական գործունեութունը եւ նրանց անձնական բարեմասնութունները կարճ ժամանակամիջոցում հանգեցրին մի կողմից՝ Թավրիզի կրթական-լուսավորական ու հասարակական-քաղաքական կյանքի աննախարհեպ աշխուժացմանը եւ մյուս կողմից՝ ՀՅԴ հեղինակութեան բարձրացմանը: Ժամանակակիցները վկայում են, որ Սաթենիկ Մատինյանը, Հովսեփ Արզուլթյանը եւ ողջ ուսուցչական խումբը վտանգելով իրենց կյանքը ոչ միայն անհաշտ պայքար էին ծավալել Թավրիզում երեխաների գոհվելու պատճառ դարձող՝ համաճարակների տարածման դեմ, այլեւ գիշերներով հերթափոխի էին կանգնում Լիլավայի հայկական մասի խաչմերուկներում՝ արգելելու համար մարդկանց երթեկեկութունը վարակված փողոցներում¹: Դասախոսութունները, թատերական ներկայացումները, երեկոյթները, բարեգործական ձեռնարկները՝ հայ կանանց մասնակցութեամբ, արթնացրել էին Թավրիզի հայութեանը: Հայրենասիրութեան, առաջադիմութեան եւ կանանց իրավունքների պաշտպանութեան գաղափարները, որոնց քարոզչութեան գործում աչքի էր ընկնում հատկապես Հոնան Դավթյանը, մի յուրահատուկ գաղափարական հեղափոխութուն էին առաջացրել Ատրպատականի կենտրոնում:

Մտավորական այս ուժերին զուգահեռ, Ատրպատական էին ժամանում նաեւ Ռուսաստանից Պարսկաստան գեներալ տեղափոխման, վերանորոգման եւ Արեւմտյան Հայաստան անցկացնելու գործը կազմակերպելու համար նախատեսված մարտական գործիչներ: Նիկոլ Դոմանի հետ միասին վերջիններիս շարքերը համալրում էին Վարդանը /Սարգիս Մեհրաբյան/, Սեւքարեցի Սաքոն /Սարգիս Ծովիանյան/, Ֆարհատը /Սարգիս Օհանջանյան/ եւ ուրիշներ: Անհրաժեշտ էր լուծել երկու հիմնական խնդիրներ՝ ա/ տեղում ստեղծել գեներալ տեղափոխման ու հրացանի առանձին մասերի հավաքման արհեստանոց, բ/ կազմակերպել գեներալ տեղափոխման գործը Ռուսաստանից՝ Պարսկաստանի վրայով, դեպի Վասպուրական:

Արդեն 1891-ին ՀՅԴ-ն Թավրիզում՝ Ջաբախանա կոչվող վայրում հաստատեց իր արհեստանոցը: Այդ գործի կազմակերպման մեջ վճռորոշ դեր խաղաց Ատրպատական անցած Ռոստոմը /Ստեփան Զորյան², որի հրավերով նույն 1891-ին Թավրիզում հայտնվեցին նաեւ դաշնակցական առաջին զինագործները՝ Ռոստոմի եղբայր Արիստակես Զորյանը /Կարո/, Ալ. Քաթանյանը եւ ուրիշներ: Նրանք կարողացան Թավրիզի այլ արհեստանոցների կողքին երկու խանութներ վարձել, որոնք փոքր դռնով կապված էին մեկը մյուսի հետ: Հենց Ռոստոմի եղբոր՝ Կարոյի

⁴ Սարգիս Օհանջանյան /Ֆար-Հատ/, Իմ յիշատակարանը, «Հայրենիք» ամսագիր, 1942, թիվ 1-2, էջ 61:

¹ Ի. Յակովբեանց, Լիլավայի հայոց բարեգործական ընկերութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1962, թիվ 6, էջ 28:

² Որոշ հեղինակների կարծիքով «Խարխալ» զինագործարանը հիմնվել է նախքան Ռոստոմի ժամանումը, որը Ատրպատական է անցել սոսի 1892 թվականին: /Տե՛ս Ռ. Սեւեան, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, «Հայրենիք», 1937, թիվ 6, էջ 76: Սակայն, կարծում ենք, չնայած իր նկատմամբ ցարական ոստիկանութեան հաստատած աչալուրջ վերահսկողութեանը, Ռոստոմը Ատրպատականում եղել է եւ՛ 1891-ին, եւ՛ 1892-ին, ընդ որում՝ 1891-ին անգամ հասցրել է Թավրիզում որոշ ժամանակ աշխատել որպէս ուսուցիչ: Տե՛ս Սամսոնի յուշերը, «Հայրենիք», 1923, թիվ 10, էջ 85:

առաջարկով էլ արհեստանոցը կոչվեց ՀՅԴ «Խարիսխ» զինագործարան: Համաձայն Սամսոնի /Ստեփան Թադևոսյան/ վկայությամբ, «Խարիսխ» զինագործարանի հիմնումից հետո Ալ. Քաթանյանը կարճ ժամանակից հետո վերագործավ Կովկաս, ուստի «Արհեստանոցում մնում են Կարոն, Երվանդը եւ մի աշակերտ՝ Ռուբեն անունով, որը դերիկցի էր եւ այնտեղի գառնարածը: Նրան արհեստանոց է ուղարկում զինագործութիւն սովորելու համար Սեւ-Քարեցի Սաքօն»³: Ալ. Քաթանյանին շուտով փոխարինում է դարսեցի Միհրանը /Էքմեքչյան/, որն աշխատեց շուրջ երկու տարի: Ռուսաստանի Տոլւա քաղաքից գեների եւ նրա մասերի տեղափոխումը կատարվում էր «Նադեժդա» տրանսպորտային ընկերության միջոցով: Բազում վտանգներով լի այդ գործի կազմակերպումը իրականացնում էին ՀՅԴ Երեւանի կոմիտեից՝ Գալուստ Ալոյանը իր եղբոր Ալեքսանդր Ալոյանի եւ Ալ. Քաթանյանի միջոցով՝ հաճախ օգտագործելով անգամ Ռուսաստանից-Պարսկաստան մաքսանկենդութեամբ գրազվող Շուշիի թափարների ուժերն ու հնարավորութիւնները: Սակայն 1892թ. մարտի 23-ին Թիֆլիսում տեղի ունեցած խուզարկութիւնից հետո ցարական ոստիկանութիւնը արգեն հունիսի սկզբներին ձերբակալում եւ 2 տարով Ստավրոպոլ է աքսորում Ալ. Քաթանյանին ու Ալ. Ալոյանին¹: Բայց դա ամենեւին էլ չընդհատեց «Խարիսխ» զինագործարանի աշխատանքը: Պատահական չէ, որ 1893-ի վերջերին Թիֆլիսից՝ «Դրոշակի» խմբագրութեանն ուղղված իր նամակում Սիմոն Զավարյանը տեղեկութիւն էր հայտնում այդ ժամանակ արգեն ժնեւում գտնվող Ռոստոմին՝ նրա եղբոր Արիստակես Զորյանի մասին. «Արիստակեսը վերցրած էր հետը 28 փութ ապրանք եւ 80 ու.։ Հիմա էլ հեռագրում է 20 ու. անյապաղ ուղարկել Ձ /Զուլա-Գ.Խ./: Նա էլ իր գործարանովը քանդեց մեզ...»²: Այդ 28 փութ «ապրանքը» հրացանի տարբեր մասեր էին, որոնք Թավրիզում բերվելու էին մարտական վիճակի: Նման ծավալ եւ հաճախականութիւն ունեցող գեների ու զինամթերքի փոխադրումները չէին կարող աննկատ մնալ ցարական Ոստիկանութեան ղեկարտամենտից, որի հավաքած տեղեկութիւնների հիման վրա Ռուսաստանի արտգործնախարարութեան Ասիական ղեկարտամենտը 1895-ի օգոստոսի 18-ին հայտնում էր արտգործնախարար Ն. Կ. Գիսին՝ Թավրիզում գոյութիւն ունեցող գեների արհեստանոցի մասին՝ Միքայել Տեր-Իսայանցի գլխավորութեամբ³: Բայց չնայած դրան, Պարսկաստանում հաստատված «Խարիսխ» զինագործարանի աշխատանքները ոչ միայն չէին ընդհատվում, այլեւ ընդարձակվում էին: Սամսոնի վկայությամբ «1895-ի դեկտեմբերին Թավրիզ է գալիս Թորոսը /Գալուստ Ալոյանը- Գ. Խ./ իր հետ բերելով մի քանի արհեստաւորներ-Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցն աւարտած Բագրատ Յովհաննիսեանին /Պարսկաստանցի Պետրոս/ եւ Մարգարին՝ Փոքր Թորոս կեղծ անունով, որ զինագործ էր եւ մի տարի մնալով՝ հեռացաւ: Դեռ 1894թ. արհեստանոցում աշխատում էր Գանձակեցի Լեւոնը. Թորոսը գառնում է գլխաւոր վարպետ եւ Պարսկաստան անցած տղաների շարքից աշակերտներ է ընդունում, որոնց թիւը հասնում է 12-ի»⁴:

Ատրպատականում հաստատվելու եւ Ռուսաստանից գեների տեղափոխման ու վերանորոգման գործը բնականոն ընթացքի մեջ դնելու հետ զուգահեռ ՀՅԴ-ն ձեռնամուխ եղավ նաեւ դեպի Արեւմտյան Հայաստան՝ Վասպուրական թափանցելու համար գեների, զինամթերքի ու մարդուժի կուտակման հեռակետեր եւ ուղիներ որոնելու գործին: Այդ առումով դեռեւս Բաֆֆին էր իր «Կայծերում» ուղարկութիւն

³ Սամսոն, Հ. Յ. Դ., «Խարիսխ» գործարանը, «Դրոշակ», Փարիզ, 1930, թիվ 11-12, էջ 321:

¹ Տե՛ս Государственный архив Российской Федерации, Д.П., 5-ое делопр., ф. 102, 1892г., д. 163, л. 8:

² Սիմոն Զավարյան. մահուան եօթանասունամեակին առթիւ, Բ. հատոր, Պէյրութ, Համազգայինի վահէ Սէթեան տպարան, 1992, էջ 18:

³ Տե՛ս АВПРИ, ф. “Миссия в Персии”, оп. 528, “А”, 1895 г., г. 1816, л. 64:

⁴ Սամսոնի յուշերը, գրի առւա Ն. Հանգոյց /Նիկոլ Աղբալյան/, «Հայրենիք» ամսագիր, 1923, թիվ 10, էջ 83:

դարձրել պարսկա-թուրքական սահմանի վրա գտնվող պատմական Զարեվանդի Ս. Աստվածածին վանքի՝ Դերիկի ռազմավարական նշանակությունը վրա: Մինչ այդ, սկսած 1880-ականների վերջերից, Վանից Ատրպատական երթեկեկող արմենական գործիչները, ինչպես նաև Հայ ազատամարտի առաջին նահատակ Վարդան Գալոշյանը հաճախ կանգ էին առնում Դերիկում: Սակայն Դերիկը վերջնականապես Հայդուկների հենակետ դարձավ 1890 թվականին, երբ վանեցի երեք երիտասարդներ՝ Սիբիրի աքսորից Պարսկաստան փախած ղարաբաղցի Մովսես Իշխանյանի /որոշ աղբյուրներում՝ Մովսես Միքայելյան⁵/ առաջնորդությամբ մտան վանք, ծեծեցին ու դուրս քշեցին այնտեղ ապաստանած եւ Հայոց սրբավայրը ամբարի վերածած մի պարսիկի, սկսեցին վերանորոգել պատերի փլված մասերն ու կարգի բերել հինավուրց մենաստանը⁶:

Ատրպատականի Հայոց առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարյանը իր 1890թ. հոկտեմբերի 10-ի գրույթյամբ թույլ տվեց Սալմաստի շրջանի գործակալ տեր Հովհաննեսին՝ Մովսես Իշխանյանին նշանակել Դերիկի տեսուչ եւ կառավարիչ: Երբ տեսուչը համար հաջողությամբ սկսված գործը, Հայ ազատամարտի հնագույն գործիչ Բագրատ վարդապետ Թավաքալյանը /Ջաքի/, որն արդեն ՀՅԴ ձևավորման շրջանում անմնացորդ կերպով նվիրվել էր նորաստեղծ կազմակերպությանը, դիմեց կաթողիկոսական տեղապահ Երեմիա եպիսկոպոսին՝ խնդրելով իրեն նշանակել Դերիկի Ս. Աստվածածին վանքի վանահայրուհի: 1891թ. անցնելով Պարսկաստան՝ Բագրատ վարդապետը անմիջապես ձեռնամուխ եղավ վանական տնտեսությունը կարգի բերելու գործին, որպեսզի կարողանա ուխտավորների անվան տակ ընդունել Վասպուրական անցնող ու վերադարձող Հայդուկներին: 1892-ին «վարդապետի ծառայի» անվան տակ այստեղ հաստատվեց Սեւքարեցի Սաքոն. «92 թիվն էր,- գրում է նա իր ինքնակենսագրություն մեջ,- եկավ ինձ մոտ Քոթոթը /Ռոստոմը- Գ.Խ./: Ինձ ուղարկեց Դերիկի վանքը Ջաքիի մոտ: Այնտեղ էր եւ Պետոն»⁷: Այսպիսով, արդեն 1892-ին Դերիկը ժամադրավայր էր դարձել Վասպուրականում ՀՅԴ ներկայացուցիչ Պետոյի /Ալեքսանդր Պետրոսյան/ եւ Ատրպատական ժամանած Ռոստոմի համար: Այստեղ էին պատսպարվում նաև Վանում հետապնդումներից խուսափող, ինչպես նաև՝ գեներ տեղափոխելու նպատակով Սալմաստի ճամբան բռնող արմենական-Հայդուկները Փանոս Թերլեմեզյանը, Արմենակ Եկարյանը եւ ժողովրդական վրիժառուներ, շատախցի անբաժան ընկերներ՝ Չաթոն ու Շերոն, որոնք այրել էին իրենց տունն ու ունեցվածքը Հայրենի Կանթեթ գյուղում, որպեսզի մինչև կյանքի վերջը պայքարեն քուրդ հարստահարիչների դեմ:

Հայ Հայդուկների՝ Դերիկում հաստատվելու արդյունքում թուրքիայից Պարսկաստան անցնող քուրդ ասպատակները զրկվեցին իրենց խիստ անհրաժեշտ ճանապարհներից, որոնց հանդուցակետը Հենց Զարեվանդի ս. Աստվածածինն էր: Այդ պատճառով, նրանք դիմեցին հաճախակի հարձակումների, որոնցից մեկի հետևանքով 1892-ի մայիսին զոհվեց Մովսես Իշխանյանը: Նոր հարձակումներին դիմակայելու համար հարկավոր էր ամրացնել վանքը եւ մեծացնել նրա պաշտպանների թիվը: Այդ առիթով վեճեր ծագեցին դաշնակցականների ու արմենականների միջև, որոնցից առաջինները գտնում էին, որ պետք է ամուր պարիսպներ կառուցել, իսկ արմենականների կարծիքով՝ անհրաժեշտ էր եղած միջոցների հաշվին ամրապնդել ու բնակեցնել վանքին հարող գյուղը: Ի վերջո, սկսվեց պարիսպների շինարարությունը, որն իր վրա հրավիրեց տեղի թուրքական Հյուսիսային ուղղությունը: Այդ կապակցությամբ արմենականները քննադատում էին դաշնակցականներին՝ պարսպի շինարարությունը սկսելու համար, իսկ վերջիններս էլ իրենց հերթին պնդում էին, որ արմենականները «... հակառակ մեր մարդու՝ Հայր Ջաքիի կամքին, պարսպին այնպիսի ձեւ էին տվել, որ իր վրայ դարձրեց տաճիկ կառավարություն

⁵ Տե՛ս նաևակ Պարսկաստանից, «Մ շակ», 1892, 11 հունիսի, թիվ 65, էջ 3, 13 յունիսի, թիվ 66,

⁶ Յուշեր Արմենակ Եկարեանի, խմբագրեց Լ. Աճեմեան, Գազիրե, 1947, էջ 27:

⁷ Սեւ-Քարեցի Սաքոի ինքնակենսագրությունը, «Դրօշակ», 1929, թիւ 12, էջ 276:

ուչադրուեթիւնը...»²: Սակայն, մինչ դաշնակցականներն ու արմենականները վիճում էին իրար հետ, Դերիկի պարսպների հարցն աղմուկ բարձրացրեց նաեւ Ռուսաստանում: Դեռեւս 1892թ. սեպտեմբերի 16-ին՝ Պարսկաստանից ստացված տեղեկութւոյնների հիման վրա, Ռուսաստանի արտգործնախարարութեան Ասիական ղեկարարամենտը զեկուցում էր, որ թուրքական զեսպան Հուսեյն Հուսնի փաշան մանրամասն տեղեկութւոյններ է հաղորդել թուրքական սահմանի մոտ գտնվող Դերիկ գյուղում պարսկահայերի կողմից ամրացված վանքի կառուցման մասին՝ ընդգծելով այն փաստը, որ այդ աշխատանքներն «...իրականացվում են Ռուսաստանից ժամանած հոգեւորականի ղեկավարութեամբ եւ վերահսկողութեամբ»³: Սկիզբ առած երկարատեւ դիվանագիտական գրադրութւոյնից հետո 1892թ. նոյեմբերի 8-ին Ազրբեջանում /Ատրպատական-Գ.Խ./ Ռուսաստանի գլխավոր Հյուպատոսութւոյնը հաղորդում էր Սալմաստում իր գործակալ Աբդուլ-Մեջիդի զեկուցյն այն մասին, որ 1892թ. նոյեմբերի 5-ին վանքի դեռեւս կիսատ վիճակում գտնվող բոլոր նոր շինութւոյնները ավերվեցին Սալմաստից ժամանած Իսա Խանի եւ Հաջի Իսմայիլ Խանի կողմից¹: Դրանից հետո վանքի պարսպների շինարարութեան հարցին նորից ընթացք տալու համար Բագրատ վարդապետ Թավաքալյանը մեկնեց Թավրիզ, վանքում մնացած արմենականները հեռացան, իսկ դաշնակցականները ցերեկը փախչում էին սարերը, գիշերը՝ վերադառնում Դերիկ, քանի որ Պարսկաստանի պաշտոնյաները նրանցից անցագրեր էին պահանջում:

Մինչ այդ, Դերիկի վարդապետի անձով սկսել էր հետաքրքրվել ցարական կառավարութւոյնը, որի պահանջով 1893թ. աշնանը նորնախը կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը հետ կանչեց Բագրատ վարդապետ Թավաքալյանին: Վերջինս վանքի կառավարիչ նշանակեց Սեւքարեցի Սաքոյին, իսկ այնտեղ պահվող զենքի, ձիերի եւ այլ իրերի ցուցակը՝ հանձնեց իր դաշնակցական ընկերներին՝ Բարսեղ Գրիգորյանին եւ երվանդ Ղազարյանին /Հովսեփ Արղության/: Վարդապետի հեռանալուց հետո «ուխտավորների» վիճակն ավելի ծանրացավ, քանի որ թուրքական իշխանութւոյնները շրջակայքի քրդական ցեղերին հրահրում էին հարձակումներ գործել Դերիկում բնակվող հայուկների վրա: 1894-ի ամռանը, երբ վանքում էր գտնվում ՀՅԴ Թավրիզի Բյուրոյի անդամների մի մասը, Վանի կուսակալ Բահրի փաշայի հրահանգով Դերիկը պաշարվեց քրդերի ու թուրքական կանոնավոր հեծելազորի կողմից: 1894թ. հուլիսի 21-ի առավոտյան սկսվեց հարձակումը: «Մենք թվով 17 հոգի էինք եւ բաժանվել էինք չորս տեղ, - վերհիշում է Սեւքարեցի Սաքոն,- իսկ քրդերը՝ 4-500-ից ավելի համիդէի զինվորներ, 50 հոգի էլ սուլթանի ձիավորներ: Կովի ժամանակ օրիորդ Ծաղիկը հավաքել էր մոտը վանքի կանանց, նրանք փամփուշտ էին սրբում եւ բաժանում կովողներին»³: Չնայած հակառակորդի հսկայական գերակշռութեանը, համիդէի քրդերը եւ կանոնավոր հեծելազորը, որոնց սահմանի մյուս կողմում սպասում էր Վանի Բահրի փաշան՝ հայուկների գլուխները ստանալու համար, չկարողացան կոտրել Դերիկի պաշտպանների համառ դիմադրութւոյնը: Կովի վճռական պահին Սեւքարեցի Սաքոն փչեց իր շեփորը եւ «ուխտավորները» սկսեցին երգել: Դերիկի կամարների տակ հնչեց «Մեր հայրենիքը»: Հարձակվողները հետ նահանջեցին՝ հասցնելով միայն իրենց հետ քշել կրակոցներից ցաք ու ցրիվ եղած վանքի անասունները:

1894թ. սեպտեմբերի վերջին, Դերիկից Վասպուրական մեկնեց Ատրպատականում ձեւավորված ՀՅԴ առաջին զինատար խումբը՝ սկիզբ դնելով մեկը մյուսից ավելի հերոսական, արկածներով լի անցումների, զենքերի փոխադրութեան եւ

² Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. առաջին, Պոսթըն, 1934, էջ 104:

³ АВПРИ, «Миссия в Персии», опись 528, «А», 1896г. д. 636, л. 11.

¹ Նույն տեղում, թ. 20:

² Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. առաջին, էջ 130-131:

³ Սեւ-Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը, «Դրօշակ» 1929, թիւ 12, էջ 278:

նույնքան վտանգավոր հետդարձերի տարեգրութեանը: Պետոյի /Ալ. Պետրոսյան/, Վարդանի /Սարգիս Մեհրաբեյան/, Ոսկան Զաղոյի /Ստանիկ Զաղոյան/, Իշխանի /Հովսեփ Արղութեան/ եւ Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանի գլխավորութեամբ տեղի ունեցած այդ հաջորդական անցումների շնորհիվ ՀՅԴ-ն գեներալապետական Վասպուրականի իր խմբերի համար: Հենց այդ անցումներից մեկի ժամանակ Բողազ-Քեսանի կռիվներում ցուցաբերած անօրինակ խիզախութեան համար մեծ հայդուկապետ Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը քրդերի կողմից անվանակոչվեց՝ Ընդմիջտ ստանալով Նիկոլ «Դուման» պատվանունը:

Ատրպատականում ՀՅԴ գործունեութեան մասին են վկայում Ռուսաստանյան կայսրութեան արտաքին քաղաքականութեան արխիվի «Առաքելութեան Պարսկաստանում» ֆոնդի երեք վավերագրերը, որոնք մեր կողմից առաջին անգամ են դրվում գիտական շրջանառութեան մեջ:

Գեւորգ Խուդինյան
պատմական գիտությունների
թեկնածու

ДЕЯТЕЛЬНОСТЬ А.Р.Ф. ДАШНАКЦУТЮН В АТРПАТАКАНЕ (1891-1895 гг.)

РЕЗЮМЕ

Для проникновения в Западную Армению уже в начале 1890-х годов А. Р. Ф. Дашнакцутюн создал в северо-западной провинции Персии (современный Иран) Атрпатакане сильную и разветвленную организацию, которая занималась пропагандой среди местного армянского населения идеи освобождения Западной Армении, организовала перевозку оружия и боеприпасов из России, а также организовала в городе Тавризе подпольную мастерскую по ремонту оружия. После первого съезда А. Р. Ф. Дашнакцутюн летом 1892 г. Тавриз стал вторым центром партии вслед за Тифлисом, потому что здесь находилось Бюро А.Р.Ф.Д. А на персидско-турецкой границе опорным пунктом А. Р. Ф. Дашнакцутюн стал монастырь Дерик, откуда начиная с 1894 года отряды фидаинов организовали перевозку оружия в Западную Армению (Васпуракан).

Գեւորգ Խուդինյան
кандидат исторических
наук

Հավելված 1

ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԳԻԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ԴԵՐԻԿ ԳՅՈՒՂԻ
ՎԱՆՔԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

16 սեպտեմբերի 1892 թ.

N 3381

Его Высокоблагородию А. Н. Шпейеру
Милостивый Государь Алексей Николаевич

Турецкий Посоль при Высочайшем Дворе уведомил Министерство иностранных дел, что по полученным его Правительством сведениям, персидские армяне приступили в настоящее время к постройке в селении Дирик, по близости турецкой границы, против Хакяри, укрепленного монастыря, который будет окружен толстыми стенами, с бойницами. Согласно сообщению

Хусейн Хусни Паши, постройка означенного монастыря производится под наблюдением и руководством священника, прибывшего из России.

Сообщая Вамъ о вышеизложенном, имею честь покорнейше просить Васъ благоволить сделать распоряжение о проверке степени основательности означенного сообщения Турецкого Посла и о последующем не оставить Министерство уведомлением.

За Директора Азиатского
Департамента МИД

Ռուսաստանյան կայսրության արտաքին քաղաքականության արխիվ,
Ք. «Առաքելություն Պարսկաստանում», ց. 528, «Ա», 1896 թվ. դ. 636, թ. 11:

Հավելված 2

**ՔԱՂՎԱԾՔ ՍԱԼՄԱՍՏՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ ԱԲԴՈՒԼ-ՄԵՋԻԴԻ
ՋԵԿՈՒՑԱԳՐԻ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ՕՐԻՆԱԿԻՑ**

29 Ռեբրուս Սանի 1310թ.
/8 նոյեմբերի 1892թ/

В дополнение моего донесения, препровожденного на усмотрение В-его Пр-ва на прошлой неделе, об армянском монастыре близ сел. Дирек, имею честь сообщить, что вследствие телеграммы Велиагда на имя Иса-Хана Серхэнга и Хаджи Исмаил Хана, Наиб-уль-Хукумья г. Салмаса, несколько дней тому назадъ все новые постройки этого монастыря были разрушены ими до основания с помощью рабочих и всадников, которые, по окончании работ, тотчас же возвратились в Кухня-шехр (старый Салмас).

Ռուսաստանյան կայսրության արտաքին քաղաքականության արխիվ,
Ք. «Առաքելություն Պարսկաստանում», ց. 528, «Ա», 1896թ. դ. 636, թ. 20:

Հավելված 3

**ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՍԻԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԴԻՐԵԿՏՈՐԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ե. Կ.
ԲՅՈՒՑՈՎԻՆԻ ԹԱՎՐԻՋՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆԱԳՈՐԾԱԿԱՆ
ԱՐ ՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՌԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

18 օգոստոսի 1895 թ.

N 256

Милостливый Государь Евгений Карлович

В дополнение к секретной телеграмме отъ 7- го Июня сего года, имею честь уведомить Ваше Пр-во, что, по доставленным мне Департаментом Полиции сведениям, в Тавризе существует оружейная мастерская, во главе которой стоит армянин Микаэль Теръ- Исаиян, и что на производящиеся в пределах Империи денежные сборы здешними армянскими агитаторами закупаются в большом количестве ружейные стволы и другие боевые материалы,

которые затем доставляются в Тавриз для обработки в тамошней мастерской, а затем тайно переправляются в обработанном виде в Турецкую Армению, где готовится, будто бы, восстание против Оттоманского Правительства.

Директор Азиатского
Департамента МИД

Ռուսաստանյան կայսրութեան արտաքին քաղաքականութեան արխիվ,
Ֆ. «Առաքելութիւն Պարսկաստանում», ց. 528, «Ա», 1895թ, գ.1816, թ. 64:

ՌՌԻԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ. ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ռուբեն (Մինաս) Տեր-Մինասյանը ծնվել է 1881 թ. մայիսի 7-ին (Հին տոմարով) Ախալքալաքում¹: Հինգ տարեկան էր նա, երբ մահանում է հայրը, որը ուսման արժեքը գնահատող մարդ էր եւ երազում էր իր երեխաներին ուղարկել բարձր ուսում ստանալու: Բազմանգամ ընտանիքի բեռը ընկնում է Ռուբենի մոր եւ ավագ եղբոր՝ Հարությունի ուսերին: Հետագայում Հարությունը Ռուբենին պատմում է. «Մայրս եւ ես որոշեցինք ձեզ մեծացնել այնպես, որ բնավ որք չզգաք, մեր տունը սուգի եւ ողորմութեան տուն չդառնայ, եւ բնավ չհասկնաք մեր հոր բացակայությունը: Դրա համար ամեն ինչ թողինք եւ ձեր գլխուն կանգնանք»²: Եվ իրոք, թե Ռուբենը եւ թե մյուս երեխաները մեծանում են՝ առանց գաղափար ունենալու գրկանքի մասին:

Իր նախնական ուսումը Ռուբեն Տեր-Մինասյանը ստանում է ծննդավայրի եկեղեցական-ծխական երկդասյան դպրոցում, որն ավարտում է 1885թ.³: Ախալքալաքում մանուկ Ռուբենն ապրում էր հայտնի «Խաս Բախչայի» փողոցում: Այս փողոցի վրա Տեր-Մինասյանների ընտանիքի կեղքին ապրում էին Օհանջանյանների, Իգիթխանյանների, Դեմիրճոլյանների ընտանիքները: Օհանջանյաններից Համազասպը, Արմենը, Սաթենիկը, Իգիթխանյաններից Հովհաննեսը (Քաջազնունի) հետագայում աչքի ընկնող կուսակցական դեմքեր դարձան: Դեմիրճոլյաններից (Դեմիրճյան) Դերենիկը համալրեց հայ գրականության դասականների համաստեղությունը:

Ահա այս միջավայրում է դաստիարակվում եւ մեծանում Ռուբենը: Տակավին 12 տարեկան հասակում նա իր մի քանի դպրոցական ընկերների հետ (նրանց թվում նաեւ Եկատերինոզարից հայրենի քաղաք վերադարձած 11-ամյա Արտաշեսը (Զիլինգարյան)՝ հետագայի դաշնակցական գործիչ Ռուբեն Դարբինյանը⁴) փորձել է անցնել Արեւմտյան Հայաստան՝ օգնելու սուլթանական տիրապետության տակ տառապող հայրենակիցներին⁵: Որքան էլ զավեշտական թվա, դպրոցականների այս քայլը մեծ

¹ Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 53, ց. 2, գ. 371, թ. 7 շրջ.-8: Անհատականալի պատճառով գրականության մեջ նրա ծննդյան թվականը նշված է 1882 թ.:

² Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 6, Երեւան, «Ազնա»1990, էջ 13:

³ ՀԱԱ, ֆ. 312, ց. 2, գ. 1627, թ. 2:

⁴ Մելքոնյան Ա., Զաւախքցիները արեւմտահայ ազատագրական պայքարում, «Հայրենի Զաւախք», Պէյրուսի, «Ազգակ», 2002, էջ 99:

⁵ Հետագայում, երբ օսմանյան սահմանադրության հռչակումից հետո Ռուբենը լինում է Պոլսում, հանդիպում է իր դպրոցական ընկերուհուն՝ Սաթենիկ Օհանջանյանին (Համո Օհանջանյանի քրոջը), վերջինս Ռուբենին հիշեցնում է իրենց ծիծաղելի մանկական «արշավանքի» մասին՝ երգելով իրենց ծաղրելու համար հնարած երգը. «Մէկ չետվեու բարութ, մէկ չաթլաղուզով, ուրսթուփին գրպանս Հայաստան կ'երթամ» (տես՝ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 6, էջ 199):

իրարանցում է առաջացրել տեղական իշխանութիւնների շրջանում: Գործով սկսել է զբաղվել գավառապետը: Սաթենիկ Օհանջանյանի վկայութեամբ դժվարութեամբ է հաջողվել փրկել դպրոցը փակելուց: Չհավատալով, որ միջադեպը պատահիների մտահաղացման արդյունք է, այն կազմակերպելու մեջ ուստիկանութիւնը փորձել է մեղադրել դպրոցի տեսուչ Խաչատուր Դիւանյանին եւ ուսուցիչներին¹:

Ծխական դպրոցից հետո Ռ. Տեր-Մինասյանն ընդունվում է էջմիածնի Գեւորգյան ձեմարան²: Այստեղ նա ընկերական կապերով կապված էր վանեցիների հետ եւ նրանց պատմութիւնների ազդեցութեան տակ Վանն իր համար ներկայացնում է «աշխարհի դրախտը», իսկ վանեցիները՝ «հայոց սիրտն ու հոգին»³: Սակայն հետագայում, ինչպես իր հուշերում գրում է Արամ Մանուկյանը. «դէպքերը այնպէս դասավորուեցին, որ թունդ «վանեան» Ռուբէնը գնաց Մուշ»⁴:

1900 թ. Ռ. Տեր-Մինասյանը «յոյժ գովելի վարուք» ավարտում է Գեւորգյան ձեմարանի դասարանական բաժինը⁵: Այնուհետեւ կարճ ժամանակով ծառայում է Բաքվում նավթային ընկերութիւններից մեկում: Ապա ինը ամիս կամավոր զինվոր է լինում Ախալցխայում, որից հետո 1902 թ. Համո Օհանջանյանի հանձնարարականով մեկնում է Բաթում⁶: Այդ ժամանակ Ռուբենը նոր էր մտել ՀՅԴ շարքերը: Համո Օհանջանյանի որոշումը պայմանավորված էր նրանով, որ երիտասարդ դաշնակցական Ռ. Տեր-Մինասյանի համար «սթաժ ընելու յարմար վայրը Պաթումն է»⁷:

Ռ. Տեր-Մինասյանը Բաթումում գործում է այնտեղի դաշնակցական մարմնի անդամ Ալյոշայի տրամադրութեան տակ եւ նրա ցուցմունքներին համաձայն: Ռուբենի վրա մեծ է եղել վերջինիս ազդեցութիւնը: Պատահական չէ, որ նրան համարում է «իր առաջին դասատուն»⁸: Իսկ Ալյոշայի գաղափարները հիմնականում հետեւյալներն էին.

ա) ազգային հարցի լուծման ճանապարհով պետք է գնալ դեպի ընկերավարութիւն,

բ) Դաշնակցութեան մեջ առաջ եկող աջ եւ ձախ թեւերը պետք է «գուսան եւ թափին»,

գ) ազգային միութիւնը պետք է վեր լինի դավանական, կրոնական եւ այլ խտրականութիւններից,

դ) լեզուների տարբերութիւնը (օտարախոս հայերի առկայութեան հանգամանքը) չպետք է դառնա ազգային միասնութեան քայքայման պատճառ,

ե) չկա ազգութիւն առանց հայրենի հողի⁹:

Բաթումում հայերը քաղաքի բնակչութեան մոտ կեսն էին, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում այնտեղ տեղափոխված ախալքալաքցիները: Իր համաերկրացիներից մի քանիսի հետ Ռուբենին է վստահվում արեւմտահայ զինական խմբերի համար միջոցներ հայթայթելու պատասխանատու գործը¹⁰:

Կարճ ժամանակ Բաթումում մնալուց հետո Ռուբեն Տեր-Մինասյանը գնում է Մոսկվա եւ ազատ ունկնդիր գրվում Լազարյան ձեմարանում¹¹, հաջողութեամբ հանձնում է հասունութեան քննութիւնը եւ այդ վկայականով ընդունվում է Տոմսկի Բազմարվեստական ձեմարանը, որը, սակայն, կիսատ է թողնում:

1903թ. Մոսկվայից գալիս է Թիֆլիս՝ Արեւմտյան Հայաստան անցնելու մտադրութեամբ:

¹ Մեղքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 100:
² ՀԱԱ, ֆ. 312, ց. 2, ք. 1627, թ. 2:
³ Աստուածատրեան Ա., Ռուբէնը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1965թ., ապրիլ, էջ 20-21:
⁴ Արամը, Երեւան, 1991, էջ 154:
⁵ ՀՀԱ, ֆ. Պ-312, ց. 2, ք. 1627, թ. 11:
⁶ Ռուբէն, նշվ. աշխ., Գ. 1, էջ 358:
⁷ Նույն տեղում, էջ 359:
⁸ Ռուբէն, նշվ. աշխ., Գ. 1, էջ 379:
⁹ Նույն տեղում, էջ 380:
¹⁰ Մեղքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 100-101:
¹¹ Աստուածատրեան Ա., նշվ. աշխ., էջ 25:

Նույն տարվա վերջին Ռուբեն Տեր-Մինասյանը ՀՅԴ Բյուրոյի Հանձնարարությունում գնում է Կարս եւ ներկայանում Կարսի շրջանի Կենտրոնական Կոմիտեի ներկայացուցիչ Հակոբ Ջրիինգարյանին, որին եւ հանձնում է ՀՅԴ Արեւելյան Բյուրոյի անդամ Համբարձում Մհերյանի (Համո Օհանջանյան) գրած հետեւյալ նամակը. «Գալիս է նամակաբերս: Հանձնարարում ենք նրան օգտագործել եւ վարժեցնել»¹:

Ընդհանրապես Կարսն այն վայրն էր, որտեղ սկսնակ հեղափոխականները Երկիր անցնելուց առաջ վարժվում եւ «փորձության էին ենթարկվում»: Կարսի միջավայրում՝ այդ «հեղափոխական հնոցում», նորընծա դաշնակցական Ռուբենը կարող էր «եփվել եւ դուրս գալ թրծված ու հղկված»: Երկիր գնացող գործիչները ենթարկվում էին առանձին կանոնների, որոնցից գլխավորներն էին՝ չպետք է ունենաս քո սեփականությունը, կապերդ պետք է կտրես աշխարհիկ կյանքից, քո ընտանիքից եւ վայելքների չպետք է մասնակցես, պետք է լինես քո եւ ընկերոջդ ծառան, լեզվով, շարժումներով պետք է լինես պատշաճ, համարձակ եւ հպարտ²: Ռուբենը նույնպես ենթարկվում է այս կանոններին:

Մինչեւ Ռուբեն Տեր-Մինասյանի Կարս գալը, նույն նպատակով այստեղ էր եկել Արամ Մանուկյանը (Սերգեյը) եւ այն աստիճան էր «թրծվել ու հղկվել», որ տեղի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն նրան, իր կամքին հակառակ, թույլ չէր տվել Երկիր անցնելու, այլ պահել էր Կարսում իբրեւ ուսուցիչ-դաստիարակ «նորելուկ դաշնակցականների» համար: Կարսում Ռուբենը հենց Արամի մոտ էլ ստանում է իր առաջին հեղափոխական մկրտությունը: Այստեղ նա զբաղվում է շրջիկ գործունեությամբ: Գյուղերում վարում է կուսակցական ժողովներ, կապ է պահպանում Կենտրոնական Կոմիտեի եւ ժողովրդի միջև:

Ելնելով ցարական դատական համակարգում տարածում գտած կաշառակերությունից Հանգամանքից, ինչպես նաեւ դատական գործը վարելու վճարովի լինելուց՝ ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեն հայերին արգելել էր պետական դատարաններում դատվելը: Դատաստանական գործը եւս վարում էր ՀՅ Դաշնակցությունը, որը դա իրականացնում էր ձրի եւ շատ ավելի անաչառ, այնքան անաչառ, որ իրենց միջեւ ծագած վեճերը լուծելու համար կենտրոնական կոմիտեն էին դիմում նաեւ այլ ազգերի ներկայացուցիչները³:

Ռուբեն Տեր-Մինասյանը եւս գործուն մասնակցում էր դատական գործերի քննարկմանը եւ վճիռների կայացմանը: Կարսում նա ակտիվ մասնակցում է նաեւ դպրոցական գործի ծավալմանը: Իր հուշերում Ռուբենը գրում է, որ երախտապարտ է Հովսեփ Տեր-Դավթյանին եւ Համո Օհանջանյանին, որ իր հեղափոխական գործունեության արշալույսին իրեն գործողեցին Կարս, որը համարվում էր հեղափոխական դաստիարակության կենտրոնատեղի:

Կարսում յոթ ամիս մնալուց հետո, 1904թ. Ռուբենը Արամ Մանուկյանի հետ գալիս է Ալեքսանդրապոլ: Այդ ժամանակ Ալեքսանդրապոլում ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովից հետո տեղի էր ունենում ՀՅԴ կովկասյան մարմինների եւ մարտական պատասխանատուների ընդարձակ խորհրդակցություն, որով կենսագործվում էին Ընդհանուր ժողովի որոշումները՝ Սասուն օգնական ուժեր եւ զինամթերք հասցնելու ուղղությամբ⁴: Այստեղ նա հանդիպում է կոփված հեղափոխական Երկաթին (Արմենակ Լեւոնյան): Վերջինս նրան առաջարկում է իր հետ գնալ Խլաթ, սակայն Ռուբենը որոշել էր գնալ Վասպուրական:

Ալեքսանդրապոլում էլ որոշվում է Ռուբեն Տեր-Մինասյանի կուսակցական կյանքի հետագա ընթացքը: Արամ Մանուկյանը հայտնում է նրան, որ ինքը պիտի վերադառնա Կարս, իսկ Ռուբենը պիտի գնա Երեւան: Հաջորդ օրը երկու նամակներով, որոնք Արամ Մանուկյանը եւ Սիմոն Զավարյանը ուղարկում էին Երեւանի

¹ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 39:

² Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 57:

³ Նույն տեղում, էջ 67:

⁴ Նույն տեղում, էջ 124:

Կենտրոնական Կոմիտեի անդամ Սարգիս ՕՀանջանյանին, եւ զինամթերքով լի արկղերով Ռուբենը Գյումրիից գնում է Երեւան¹:

Երեւանում նա հանդիպում է Նիկոլ Դումանին (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան): Վերջինս կարգում է Ռուբենի բերած նամակները, մի քանի խոսք փոխանակելուց հետո հասկանում նրա՝ Վան գնալու արամազրությունը եւ Հայտնում, որ նրան իր հետ կտանի:

«Ես առանց գիտենալու, թէ ուր կտանի, երջանիկ կզգայի այդ պատուերի համար: Այն, ըստ երեւոյթին, այդ նկատեց եւ իմ տեղը պատասխանեց. «Ուրէմն համաձայն ես: Խնդիրը փակուած է: Այսօր մինչեւ երեկոյ ազատ ես, երեկոեան կգաս հոս կքնիս եւ առտուն կմեկնինք: Ոչ ճամփու դնող պիտի լինի, ոչ ալ պիտի հասկցվի գնալու ժամը եւ օրը: Գնայ գործիդ», - գրում է իր հուշերում Ռուբենը²:

Այն օրերին Դաշնակցութեան մեջ ղեկավար եւ շարքային ընկերների փոխհարաբերությունների տեսակետից հետաքրքրական է Արամի եւ Դումանի վերաբերմունքը դեպի շարքայիները եւ վերջիններիս վերաբերմունքը՝ կուսակցական ղեկավարների խոսքի ու կարգադրությունների նկատմամբ³:

Ռուբենը Նիկոլ Դումանի հետ գնում է Պարսկաստան: Սահմանամերձ Արաբլու գյուղում մի քանի օր սպասելուց հետո նա գնում է Խոյ, որտեղ ծանոթանում է Դաշնակցական Խեչոյի (Խաչատուր Ամիրջան) հետ, եւ այդ օրվանից մինչեւ վերջինիս մահը, որը Արամի վկայութեամբ տեղի էր ունեցել Ռուբենին փրկելու համար⁴, նրանք հավատարիմ ընկերներ են մնում:

Խոյում Ռուբենը դժվարութեամբ կարողանում է մտնել Վան գնացող Նիկոլ Դումանի խմբի մեջ, որի մեջ էին նաեւ Դաշնակցական Խեչոն, Սարբազ Խեչոն, Գիծը (Թադեոս Ամիրջան), ինտելիգենտ Սարգիսը⁵: 1904 թ. հունիսին 17 հոգուց կազմված խումբը ճանապարհ է ընկնում: Սակայն թուրք-պարսկական սահմանի մոտ Թազի կոչված վայրում խումբը պաշարվում է թուրք-քրդական ուժերի կողմից եւ մարտի է բռնվում: Ենտրհիվ Նիկոլ Դումանի, խումբը կարողանում է ճիշտ կողմնորոշվել եւ փրկվել կոտորվելու վտանգից ու դուրս գալով պաշարման շղթայից, վերագառնում է պարսկական սահման:

Թազիի կռիվը Ռուբենի մարտական մկրտությունն էր: Նա իրեն դրսեւորում է քաջի նման: Այս կռիվը չափազանց մեծ ազդեցութուն է ունենում Ռուբենի վրա եւ նրա կյանքում դառնում շրջադարձային: Նա հեռանում է «նահատակվելու» գաղափարից՝ գերադասելով գործը եւ նրա արդյունքը:

Նիկոլ Դումանը որոշում է Երկիր անցնելու անհաջող փորձ կատարած խմբի անդամներին անմիջապես հեռացնել Խոյից ու Սալմաստից եւ ուղարկել Թավրիզ: Սակայն Ռուբենը Նիկոլ Դումանին խնդրում է, որ բացառութեան կարգով իրեն թողնել տա անցնել սբ. Թադեոս Առաքյալի վանք, այնտեղից էլ՝ Վան: Սբ. Թադեոս վանքը կարեւոր դեր էր կատարում հեղափոխական գործի համար, թեեւ այն մեկուսացված, ճանապարհներից դուրս ընկած մի ճգնարան էր: Վանքում տեղեկութուններ էին հավաքվում սահմանի երկու կողմերից եւ այդ տեղեկությունների հիման վրա Երկիր էին ուղարկվում զենք, զինամթերք, զինվորական խմբեր, գործիչներ: Ռուբենը

¹Նույն տեղում, էջ 239:

²Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 252:

³Արամը Ռուբենին Ալեքսանդրապոլից ուղարկեց Երեւան՝ առանց նրան հայտնելու թե ինչ նպատակով էր դա անում, իսկ Ռուբենը, թեեւ Արամի հետ ուզում էր վերագառնալ Կարս, լուսն ու ենթարկվեց նրան: Նրանց հարաբերություններն արդեն այնպես էին, որ Ռուբենը առանց քաշվելու կարող էր հարցնել Արամին իր Երեւան գնալու նպատակի մասին, բայց այդ բանը նա չարեց: Դա կուսակցութեան մեջ տիրող ավանդութունն էր, երբ ղեկավար ընկերը կարգադրութուն էր անում շարքային ընկերը՝ առանց բացատրութեան: Նմանապես, երբ Երեւանում Նիկոլ Դումանը Ռուբենի հետ ունեցած կարճ հարցուփորձից հետո եզրակացնում է, որ նրան իր հետ կտանի, Ռուբենը լուռ համաձայնվում է՝ առանց զիտենալու թե ուր է տանելու:

⁴Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 275:

⁵Մալխաս, Ապրումներ, հ. Ա, Պէյրութ, «Համագլխային» 1956, էջ 41, հմտ. Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, Երեւանի համալս. հրատ., 1992, էջ 342:

պատրաստվում է անցնել Վան: Այստեղ նա Վանից Կոմսի (Վահան Փափազյան) ստորագրութեամբ նամակ է ստանում, որով վերջինս օգնութիւն էր խնդրում, քանի որ Երկրի եւ մասնավորապէս Սասունի վիճակը շատ ծանր էր¹:

Իր պատասխան նամակում Ռուբենը բացատրում է, որ սահմանային խիստ Հսկողութեան պայմաններում Անդրկովկասը դժվար թե կարողանա օգնութիւն Հասցնել Երկրին, եւ եթե այդ ուղղութեամբ փորձեր էլ լինեն, ապա դրանք պիտի ձախողվեն եւ նոր գոհերի առիթ տան:

Վանից ստացվում է շատ չոր ու խրատական պատասխան. «Նախ թող Երկիր գայ գործերուն եւ մեր գործունէութեան ծանոթանայ, հետոյ իր կարծիքը եւ թելադրանքները արտայայտե»²: Ռուբենը հետագայում ընդունում է այդ նամակի տեղին լինելը³:

Պարագաների թելադրանքով Ռուբենը վերադառնում է Անդրկովկաս: Կարսում նա տեղեկանում է, որ Կարսի իր ընկերների մեծ մասը սպանվել է սահմանային կռիվների ժամանակ: Այստեղ ուսուսական իշխանութիւնները խտացրել էին Հսկողութիւնը ազգային-հեղափոխական շարժումների նկատմամբ: Ռուբենին եւս փորձում են ձերբակալել, սակայն նա կարողանում է խուսա տալ եւ անցնել Թիֆլիս:

Թիֆլիսում ՀԅԴ Բյուրոն որոշում է Ռուբենին որպէս գործիչ գործուղել Բաթում: Բաթումում Ռուբենը մասնակից է լինում կառավարական ուսու լրտեսի ահաբեկմանը⁴, ապա անցնում կուսակցական կազմակերպչական աշխատանքների: Նրան հաջողվում է որոշ չափով հաշտեցնել Բաթումի կազմակերպութեան մեջ գոյութիւն ունեցող երկու հոսանքները:

Սակայն մի դեպքի պատճառով Ռուբենի համար ծանր վիճակ է ստեղծվում⁵: Նա այլեւս անհնարին է համարում իր մնալը Բաթումում, վերադառնում է Թիֆլիս, եւ խնդրում իրեն ազատել Բաթումում գործելու պարտականութիւններից, քանի որ որոշել էր Երկիր անցնել: Սակայն մինչեւ Երկիր անցնելը Ռուբենը մասնակցում է մի կարեւոր գործի նախաձեռնութեան:

Դեռեւս Ռուբենի՝ Բաթումում եղած ժամանակ բարձրացված էր Սուխում-Սոչիի հայ գաղթականների հարցը: ՀԅԴ Բյուրոն նախատեսել էր նրանց վերաբնակեցումը Հայաստանին մոտ շրջաններ: Ռուբենը կողմ է լինում այդ տեսակետին եւ որպէս վերաբնակեցման համար տարածք առաջարկում է Պարսկաստանի Հեր եւ Զարեւանդ գավառները: Մոտ 30-40 հազար գաղթականների վերաբնակեցումը այս շրջաններում անհամեմատ պիտի հեշտացներ կապը Վասպուրականի հետ: Ահա այս նպատակով էլ Ռուբենը Սուխում-Սոչիի հայ գաղթականութեան ներկայացուցիչների հետ գործուղվում է Պարսկաստան: Ավզքում վերաբնակեցման ուղղութեամբ տարվող նախապատրաստական աշխատանքները իշխանութիւնները Օսմանյան Թուրքիայի Հյուսիսարեւմտի ճնշման տակ հրաժարվում են նախապէս խոստացած աջակցութեանից: Եվ Ռուբենը ստիպված է լինում հրաժարվել «բազա» ստեղծելու ծրագրից: Նրա ընկեր-ներկայացուցիչները վերադառնում են Կովկաս, իսկ ինքը մնում է Սալմաստում՝ իրագործելու Երկիր անցնելու նախապէս

¹Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 338:

²Փափազեան Վ. (Կոմս), Իմ յուշերը, հ. Բ, Պէյրութ, «Համազգային», 1952, էջ 313:

³Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 340:

⁴Նույն տեղում, էջ 384-385:

⁵Ռուբենը կազմակերպելով Մանթաշովի գործարանի բանվորներին, նրանց համոզում է գործադուլ հայտարարել եւ հավելավճար պահանջել: Գործադուլը երկար է տևում, իսկ բանվորների փողերը սպառվում են: Նրանք դիմում են Ռուբենին՝ խնդրելով փոխառութիւն տալ մինչեւ գործի ավարտը, մինչեւ որ կարողանան ստիպել գործարանատիրոջը՝ դիջելու եւ Հավելումներ անելու: Ռուբենը իր մոտ եղած կուսակցական դրամից տալիս է 5000 ուսու լրտեսի փոխառութիւն, մի բան, որ նա կարող էր անել միայն կենտրոնական կոմիտեի որոշումով: Սակայն Ռուբենը վստահ էր, որ փոխառնաբար տրված դրամը ետ պիտի ստանար: Սակայն որոշ մարդկանց կողմից սադրանք է հրահրվում, թե իբր Սասունի համար հավաքված դրամը բաժանում են բանվորներին (տես՝ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 386):

ընդունած իր որոշումը¹: Եվ 1905թ. նրան վերջապես հաջողվում է թուրք-պարսկական սահմանի վրայով անցնել Վասպուրական:

Այսպիսով՝ մտահոգվելով սեփական ժողովրդի ճակատագրով, ինչպես նաև հրաժարվելով բարեկեցին կյանք վայելելու իր ունեցած հնարավորությունից, Ռուբեն Տեր-Մինասյանը մտնում է հայ-ազգային ազատագրական շարժման հորձանուտ, որտեղ նա իրեն յավազույն կողմերով է դրսևորում: Ռուբենը նվիրումով է իրականացնում իր վրա դրված հեղափոխականի առաջին պարտականությունները, որը հիմք պետք է հանդիսանար հետագայում ազգային-ազատագրական շարժման ղեկավարների կողմից ավելի մեծ վստահության արժանանալու համար: Անցնելով Արևմտյան Հայաստան, նա տեղի ժողովրդի թուրքական բռնակալությունից դեմ մղվող պայքարի առաջամարտիկներից էր լինելու:

Խաչատուր Ստեփանյան

Рубен Тер-Минасян: первый опыт борьбы

РЕЗЮМЕ

Рубен Тер-Минасян, рожденный в состоятельной семье, еще с детства был озабочен судьбой своего народа. Получив образование сначала на родине, а потом в России, он посветил себя армянскому национально-освободительному движению. Став членом АРФ Дашнакцутюн, Рубен Тер-Минасян осуществляет революционные задания в Карсе и Батуми. Несмотря на первой неудачной попытке проникнуть в Еркир Западную Армению, он не отчаивается. Позднее ему тем не менее удастся пересекать турецко-персидскую границу и ступить на землю Западной Армении, где он в дальнейшем должен был взять на себя руководство героической борьбой местного народа против турецкого деспотизма.

Хачатур Степанян

¹ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 2, էջ 13:

**ՀԱՅ-ԱՂԻՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԻՃԵԼԻ ՀԱՐՑԵՐԸ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1919Թ.
ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ**

Անկախութեան հռչակումից հետո, հայ-ադրբեջանական տարածքային վիճելի հարցերի նկատմամբ կողմերի դրսեւորած անհամաձայնութիւնը՝ 1919թ. սկզբին, Հանգեցրեց նրանց միջեւ նոր լարվածութեան: Ադրբեջանի կառավարութեան 1919թ. հունվարի 15-ի՝ Շուշիի, Ջանգեզուրի, Զիբրայիլի եւ Զիվանշիրի շրջաններում, հանձինս գեներալ նահանգապետութեան, իր իշխանութիւնը հաստատելու մասին որոշումը ցույց տվեց, որ Ադրբեջանը մտադիր չէ հրաժարվել Ղարաբաղին ու Ջանգեզուրին բռնի ուժով տիրելու իր ծրագրերից¹: Ավելին. վերջինս հավակնում էր նաեւ Հայկական այլ տարածքների, մասնավորապէս՝ Կարսին (քանի որ «շրջանի ազգաբնակչութիւնը կազմված է գերազանցապէս մուսուլման տարրերից») եւ Երեւանի նահանգի հողերի մի մասին (ըստ Վրաստանում Ադրբեջանի ներկայացուցիչ Զաֆարովի «Երեւանի նահանգի վիճելի մասերի հարցը պետք է վճռի անդրկովկասյան հանրապետութիւնների համագումարը»)²:

Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնն իր հերթին, սեփական մոտեցումներ ունէր տարածքային վիճելի հարցերի նկատմամբ: Երեւանում Անգլիայի ներկայացուցչի այն հարցին, թե չէ կառավարութիւնը որ շրջաններն է իր անբաժանելի մասը համարում, վերջինս պատասխանել է. Երեւանի ամբողջ նահանգը, Կարսի ամբողջ շրջանը Թիֆլիսի նահանգի հայկական գավառները եւ Գանձակի նահանգի մի մասը (ներառյալ Ղարաբաղը, Ջանգեզուրը, Ղազախի գավառի հարավային մասը³): Վերոհիշյալ տեսակետը տեղ գտավ նաեւ 1919թ. փետրվարի 25-ին, Փարիզի հաշտութեան կոնֆերանսին ներկայացված «Հայկական պահանջներում»⁴: 1919 թ. սկզբին, Հայաստանի իշխանութեանը դեռեւս չէր տարածվում նշված տարածքներից՝ Կարսի ամբողջ շրջանում, Թիֆլիսի նահանգի հայկական գավառներում, Գանձակի գավառի մի մասի վրա եւ Երեւանի նահանգի՝ Նախիջևան ու Շարուր գավառների վրա (բացառութեամբ մի քանի գյուղերի)⁵:

Բացի սահմանային վիճելի հարցերից, կողմերի միջեւ գոյութիւն ունեին նաեւ այլ չլուծված խնդիրներ: Դրանց լուծման համար, Վրաստանի կառավարութիւնն առաջարկեց Անդրկովկասի հանրապետութիւնների միջեւ գումարել կոնֆերանս: Ինչպէս Հայաստանը, այնպէս էլ Ադրբեջանը, համաձայնեցին մասնակցել

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 244, թ. 1:

² «Մշակ», Թիֆլիս, 1919, հունվարի 5: «Արեւ», Բաքու, 1919, ապրիլի 30:

³ «Արեւ», Բաքու, 1919, ապրիլի 26:

⁴ «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ. (քաղաքական պատմութիւն)», փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Երեւան, 2000, էջ 89:

⁵ «Արեւ», Բաքու, 1919, ապրիլի 26:

կոնֆերանսին⁶: Ադրբեջանի արտգործնախարար Խան-Խոյսկին առաջարկեց բոլոր վիճելի հարցերը լուծել ըստ համաձայնության: Վերջինիս չկայանալու դեպքում դիմել արբիտրաժի օգնությանը⁷: Ըստ Հայաստանի կառավարության, տարածքային վիճելի հարցերի լուծումը պետք է կատարվի ոչ թե ընդհանուր կոնֆերանսում, այլ երկկողմանի բանակցությունների միջոցով: ՀՀ կառավարությունը գտնում էր, որ Հայ-վրացական (Ախալքալաք-Բորչալու) տարածքային վիճելի հարցերը պետք է լուծվեին առանց Ադրբեջանի մասնակցության, իսկ Հայ-ադրբեջանական հարցերը՝ առանց վրացիների մասնակցության:

1919թ. ապրիլի 27-ին, Վրաստանի արտգործնախարարության շենքում, բացվեց կոնֆերանսի առաջին նիստը: Հաստատվեց կոնֆերանսի աշխատակարգը, ինչպես նաև, Հետագա նիստերի ընթացքում, կազմվեցին մի շարք հանձնաժողովներ, որոնք ձեռնամուխ եղան կոնֆերանսի օրակարգ մտած հարցերի վերաբերյալ որոշումների նախագծեր մշակելուն⁸:

Կոնֆերանսին մասնակցող յուրաքանչյուր կողմի պատվիրակությունը տարածքային վիճելի հարցերի վերաբերյալ ուներ իր տեսակետը, որը խիստ տարբերվում էր մյուս կողմերի մոտեցումներից: Այդ իսկ պատճառով, կոնֆերանսում տիրում էր միմյանց նկատմամբ անվստահության մթնոլորտ եւ անզիջում տրամադրվածություն: Դրա մասին է վկայում, կոնֆերանսի ավարտից հետո, ՀՀ պատվիրակության ղեկավար Ս.Տիգրանյանի՝ Հայաստանի կառավարությանը ներկայացրած հաշվետվությունը: Մասնավորապես, տարածքային խնդրում, գրում է Ս.Տիգրանյանը, «Ախալքալաքի ողջ գավառը, Բողչալուի Հյուսիսային մասը, փաստորեն կարծես թե իրավորեն Վրաստանին է պատկանում: Մենք պահանջեցինք, որ այդ շրջանների որոշ մասեր Հայաստանին հանձնվի: Ղարաբաղն անգլիացիները տվել են Ադրբեջանին (ինչպես որ Շարուր-Նախիջևանը տվին մեզ), սա այնտեղ ունի իր վարչությունը, իր գործը: Հայերը պահանջում են, որ իրենք հեռանան»⁹:

Կոնֆերանսի ընթացքը ցույց տվեց, որ Վրաստանն ու Ադրբեջանը բացառապես մի հարցում էին հայերի աջակցությունը որոնում: Դա իրենց անկախությունը ճանաչել տալու եւ միահամուռ ուժերով պաշտպանվելու խնդիրն էր: Սակայն, հայկական պատվիրակությունը հայտարարեց, որ ինքը կառավարությունից հրահանգ ունի. այդ խնդրին կարելի է անդրադառնալ միայն տարածքային վիճելի հարցերի՝ փոխադարձ համաձայնությամբ կարգավորելուց հետո: «Անկախության պաշտպանության համար միահամուռ ասպարեզ գալու համար պետք է, որ տարածքային վեճեր չլինեն»,- հայտարարեց Ս.Տիգրանյանը¹⁰:

Կոնֆերանսի աշխատանքների ժամանակ, եղավ մի պահ, երբ վրացիները եւ ադրբեջանցիները հայերի հետ փոխհամաձայնության գալու միտումներ ցույց տվեցին: Դա տեղի ունեցավ մայիսի կեսերին, երբ Փարիզից վերադարձավ վրացական պատվիրակության սուրհանդակը եւ կողմերի համար բերեց ոչ նպաստավոր տեղեկություններ: Վրացական ու ադրբեջանական պատվիրակությունները հայկական կողմին առաջարկեցին հանդիպել եւ համաձայնության գալ տարածքային վիճելի հարցերում, ինչին հայերը համաձայնեցին: Սակայն, վրացիների հետ բանակցությունները վերջացան անարդյունք, իսկ ադրբեջանցիները, հակառակ իրենց կողմից արված առաջարկությանը, մինչեւ վերջ խուսափեցին հայերի հետ բանակցել տարածքային վիճելի հարցերի շուրջ¹¹:

Կոնֆերանսի տարածքային վիճելի հարցերի կարգավորման հանձնաժողովը գլխավորում էր Ն.Ռամիշվիլին: Այդ հարցերի քննարկման ժամանակ, վրացիներն ու

⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, ք. 100, թ. 31:

⁷ «Աշխատավոր», Թիֆլիս, 1919, ապրիլի 2:

⁸ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, ք. 111, թ. 49:

⁹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, ք. 207, թ. 59:

¹⁰ «Աշխատավոր», Թիֆլիս, 1919, հունիսի 7:

¹¹ Ս.Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993, էջ 367:

ադրբեջանցիները պահանջեցին, որ տարածքային վիճելի հարցերը լուծվեն բոլոր կողմերի մասնակցությամբ¹²: Ստացվում էր, որ Լոռու, Ղարաբաղի եւ Ախալքալաքի վիճելի խնդիրները պետք է լուծվեին վրացիների, ադրբեջանցիների ու ղաղստանցիների ձայների մեծամասնությամբ: Այդ առաջարկը մերժվեց հայկական պատվիրակության կողմից: Կոնֆերանսի մայիսի 30-ի նիստում, Ադրբեջանի պատվիրակության անդամ Խ.Խասամեդովը ներկայացրեց տարածքային վիճելի հարցերի լուծման վերաբերյալ իրենց մոտեցումը, ըստ որի՝ 1. վիճելի կարող են հանդիսանալ այն տարածքները, որոնք սահմանակից են այդ տարածքները վիճարկող հանրապետություններին, 2. տարածքային վիճելի հարցերի լուծման հիմքում պետք է լինի այդ տարածքի բնակչության ազատ ինքնորոշման սկզբունքը, 3. եթե վիճելի է մի այնպիսի տարածք, որը տնտեսապես եւ պատմականորեն կապված է սահմանակից անվիճելի շրջանների հետ, ապա հանրաքվեին մասնակցելու են նաեւ այդ անվիճելի շրջանների բնակչությունը: Ադրբեջանական կողմի ներկայացրած տեսակետներն ամբողջությամբ բացահայտում էին Հայկական տարածքների նկատմամբ իրենց նվաճողական քաղաքականությունը: Մասնավորապես, առաջարկելով բնակչության ազատ ինքնորոշման իրավունքը, մեր կարծիքով, ադրբեջանցիները նկատի ունեին Շարուր-Նախիջևանը, որտեղ մահմեդական տարրը մեծամասնություն էր կազմում եւ համաձայն էր ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Իսկ երրորդ կետի մասին կարելի է ասել, որ այն վերաբերում էր առաջին հերթին Ղարաբաղին, որտեղ մեծամասնություն կազմող հայ բնակչությունը կողմ կքվեարկեր Հայաստանին միանալու հարցին: Դա կանխելու նպատակով էր, որ ադրբեջանական պատվիրակությունը նման վիճելի տարածքների ճակատագիրը ցանկանում էր լուծել հարեւան շրջաններում հանրաքվե անցկացնելով: Ստացվում է, որ Ղարաբաղի ճակատագիրը պետք է որոշեր ոչ թե Ղարաբաղի բնակչությունը, այլ հարեւան ադրբեջանաբնակ շրջանները, որոնց հետ Ղարաբաղն ուներ տնտեսական կապեր: Հասկանալի է, թե նման հանրաքվեն ինչ հետեւանք կունենար:

Տարածքային վիճելի հարցերի վերաբերյալ հայկական պատվիրակության տեսակետը ներկայացրեց Ս.Տիգրանյանը: Ըստ այդմ, Անդրկովկասի հանրապետությունների կողմից վիճարկվող տարածքների պատկանելության հարցը պետք է լուծվեր ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա: Այսինքն, եթե տվյալ տարածքում գերակշիռ էր հայերի թիվը, ապա այդ վիճելի տարածքը պետք է ընդգրկվեր Հայաստանի կազմում, վրացիների դեպքում՝ Վրաստանի եւ ադրբեջանցիների դեպքում՝ Ադրբեջանի¹³:

Այսպիսով, հայ-ադրբեջանական տեսակետներն ամբողջովին հակադիր էին: Մինչ կոնֆերանսը շարունակում էր իր աշխատանքները, Ադրբեջանը չէր հրաժարվում Հայաստանին ներկայացրած տարածքային իր պահանջներից: Ադրբեջանի վարչապետ Խան-Խոյսկին 1919թ. մայիսի 6-ին Երեւանի իրենց ներկայացուցչին ուղարկած հեռագրում հրահանգում էր բողոքել «Ադրբեջանի շրջան՝ Գեսգեյի շրջան գործեր ուղարկելու դեմ»¹⁴: Նույն ոճով էր գործում նաեւ Փարիզի կոնֆերանսի շրջանակներում գործող ադրբեջանական պատվիրակությունը:

Կոնֆերանսի մեկամսյա աշխատանքներն էական առաջընթաց չապրեցին: Արմատական ոչ մի հարցի վերաբերյալ համաձայնություն չկայացվեց¹⁵: «Այն բացմաթիվ հանձնաժողովները, որոնք ստեղծվել էին կոնֆերանսի ժամանակ, մի խոսելացավով վարակված՝ ժողովատեղեր են, հազար ու մի անգամ ասված, լսված ու կրկնված ընդհանուր մտքեր ու տեսակետներ: Իսկ աշխատանքն ու որոշ գրական հետեւանքը բնավ բացակայում է», - գրում էր «Աշխատավորը» մայիսի 23-ի իր

¹² Ս.Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երեւան, 1993, էջ 367:

¹³ «Наше время», Баку, 1919, 3 июня.

¹⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 44, մաս 1, թ. 53:

¹⁵ Ս.Վրացյան, նշվ. աշխ., էջ 367:

խմբագրականում¹⁶: Կոնֆերանսի նման ընթացքը Հայաստանի պատվիրակությանը բերում էր այն համոզման, որ կոնֆերանսից դրական արդյունքներ ակնկալելն անիմաստ է:

Կոնֆերանսի հունիսի 9-ի նիստում հայտարարվեց մեկ շաբաթվա դադարի մասին: Մինչ կողմերի միջև բանակցություններ էին ընթանում ընդհատված կոնֆերանսի աշխատանքները վերսկսելու համար, Ղարաբաղի շուրջ ստեղծված քաղաքական լարումը հասավ իր գագաթնակետին: Բնականաբար, նման պայմաններում խոսել կոնֆերանսի աշխատանքների վերսկսման մասին, անիմաստ էր եւ կոնֆերանսը հետաձգվեց անորոշ ժամանակով:

Այսպիսով, անդրկովկասյան հանրապետությունների 1919թ. կոնֆերանսը չկարողացավ լուծում տալ միջպետական կարեւորություններ կայացնող առաջնակարգ խնդիրներին (հատկապես տարածքային վիճելի հարցերին)՝ դրանք թողնելով անորոշ վիճակի մեջ:

Յուրա Գուլյան

պատմական գիտությունների
թեկնածու

АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКИЕ ТЕРРИТОРИАЛЬНЫЕ СПОРНЫЕ ВОПРОСЫ НА КОНФЕРЕНЦИИ ЗАКАВКАЗСКИХ РЕСПУБЛИК В 1919г.

РЕЗЮМЕ

Армяно-азербайджанские территориальные споры, так и не разрешившиеся в течении 1918г., в начале 1919г. внесли новое напряжение в армяно-азербайджанские отношения. Азербайджан не собирался отказываться от армянских территорий, в частности от захватнических планов по отношению к Карабаху и Зангезуру. Республика Армения не имела намерений уступить претензиям Азербайджана. Созванная в апреле 1919г. конференция закавказских республик имела цель, в числе множеств задач, разрешить территориальные вопросы, одним из которых был армяно-азербайджанский. Имея совершенно разные подходы по территориальному вопросу, стороны не смогли найти общий язык, в связи с чем вопрос остался на мертвой точке.

Юра Гулян

кандидат исторических наук

¹⁶ «Աշխատավոր», Թիֆլիս, 1919, մայիսի 23:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԻՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 1945-1965 ԹԹ

1945-1965թթ. գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում առանձնահատուկ կարեւորվում էր տեխնիկական զինվածութայն աճը, որը սակայն, Հայրենական մեծ պատերազմի տարիներին խիստ կրճատվել էր: Հետպատերազմյան շրջանում անհրաժեշտ էր վերականգնել եւ ամրապնդել գյուղատնտեսության տեխնիկական բազան: Այսպես՝ եթե 1940թ. Հանրապետության 38 ՄՏԿ-ներում հաշվվում էր 1555 տրակտոր, 288 կոմբայն եւ 730 բեռնատար ավտոմեքենա¹, ապա 1945թ. գյուղատնտեսությանը սպասարկում էին ընդամենը 1105 տրակտոր, 119 բեռնատար ավտոմեքենա²: Այդ ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկվել էին դեռեւս 1944-1945թթ.: Արդեն 1945-1948թթ. Հանրապետություն ներմուծվեց 117 տրակտոր³, 1949 թ.՝ 134 տրակտոր⁴: Բավական է նշել, որ 1950թ. Հանրապետության 46 Մեքենատրակտորային կայաններում(այսուհետեւ ՄՏԿ) հաշվվում էր 1303 տրակտոր, 295 կոմբայն, 251 բեռնատար ավտոմեքենա⁵: Այնուհանդերձ 1950թ. գյուղատնտեսության տեխնիկական զինվածութայնը չէր հասել 1940թ. մակարդակին: Նման պայմաններում կոլտնտեսութայնների շուրջ 20%-ը չէին սպասարկվում ՄՏԿ-ների կողմից⁶: Տրակտորային պարկի թերհագեցվածութայնը ազդում էր մեքենայական աշխատանքների քանակի վրա: Այսպես՝ եթե 1940թ. ՄՏԿ-ները կատարել էին 63000 հա դարնանացան, ապա 1948թ. կարողացան կատարել միայն 51000 հա⁷: Նման իրավիճակում գյուղատնտեսության մեքենայացման պետական առաջադրանքները անհիմն կերպով շարունակաբար աճում էին: 1949թ. ՄՏԿ-ների պլանը նախատեսվեց ավելացնել 79 հազ. հա-ով, սակայն տրակտորային պարկի Հնարավորութայնները թույլ տվեցին ավելացնել միայն 30 հազ. հա-ով⁸: Տրակտորային պարկի զգալի մասը ենթարկվել էր թե՛ ֆիզիկական, եւ թե՛ բարոյական մաշվածութայն: Հատկապես մեծ էր անիվավոր տրակտորների մաշվածութայնը, քանի որ նրանցից 599-ը ներմուծվել էին մինչեւ 1937թ.⁹:

¹ Բ.Օհանջանյան, Հայաստանի բանվոր դասակարգի եւ գյուղացիության դաշինքի պատմությունից, Երեւան, 1970, էջ 62:

² Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, Երեւան, 1960, էջ 172:

³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ) ֆ. Կ-1, ց. 29, գ. 90, թ. 433:

⁴ Նույն տեղում, գ. 269, թ. 49:

⁵ Советская Армения за 40 лет (стат. сборник), Ереван, 1960, էջ 114:

⁶ ՀԱԱ, ֆ. Կ-1 ց. 30, գ. 229, թ. 58:

⁷ Նույն տեղում, ց. 29, գ. 90, թ. 434:

⁸ Նույն տեղում, գ. 269, թ. 49, , ց. 30, գ. 230, թ. 276:

⁹ Նույն տեղում, ց. 30, գ. 230, թ. 77:

ԽՄԿԿ կենտկոմի (այսուհետև ԿԿ) 1947թ. փետրվարյան պլենումից հետո փոփոխություններ մտցվեցին ՄՏԿ-ների եւ կոլտնտեսությունների ու մթերոլ կազմակերպությունների հարաբերություններում: Փոխվեց ՄՏԿ-ների աշխատանքի գնահատման կարգը: Այն կատարված էր համարվում մեքենայական աշխատանքների ժամանակին կատարելուց եւ բնավարձի հանձնումից հետո միայն: Դրանով պետությունը ցանկանում էր ՄՏԿ-ներին պատասխանատու դարձնել գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման, պետական առաջադրանքները կատարելու գործում: Սակայն այդ միջոցառումները սպասված արդյունքը չտվեցին: 1947թ. վերջում ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը, քննարկելով ՄՏԿ-ների աշխատանքի վիճակը, նշեց, որ շարունակվում են ագրոնոմական ժամկետների խախտումները, կոլտնտեսությունների հետ պայմանագրերը ձեւական բնույթ են կրում: Այդ պատճառով էլ կոլտնտեսությունները խուսափում էին ՄՏԿ-ների կողմից կատարվող աշխատանքից: Ինչպես նշվում էր 1948թ. Կառավարության հատուկ խմբերի կողմից անցկացրած ստուգումների հաշվետվություններում, կոլտնտեսությունների ղեկավարները, վախենալով հակապետական տրամադրություն արտահայտելու մեջ մեղադրվելուց, խուսափում էին բացահայտորեն քննադատել ՄՏԿ-ների աշխատանքում տեղ գտած թերությունները¹:

Գյուղատնտեսության մեքենայացման անբավարար վիճակը պայմանավորված էր նաեւ տեխնիկայի վերանորոգման առաջադրանքների պարբերական թերակատարմամբ: 1945թ. տրակտորների վերանորոգման պլանը կատարվել էր 70,2, իսկ կոմբայններինը՝ 17,6%-ով: Դա հիմնականում պահեստամասերի անբավարար ձեռք բերման հետեւանք էր: Նույն թ. նախատեսված 78 Հազ. ուղբլու փոխարեն ՄՏԿ-ներն անվճարունակության հետեւանքով կարողացել էին ձեռք բերել 37 Հազ. ուղբլու պահեստամասեր կամ նախատեսվածի 48%-ը²: 1946թ. վերանորոգման պլանը կատարվեց 60%-ով: Վերանորոգման ենթակա 1040 տրակտորներից վերանորոգվել էր 625-ը³: 1950թ. տեխնիկայի վերանորոգման պլանը կատարվել էր՝ տրակտորներինը 84,8, կոմբայններինը 61%-ով⁴:

Լուրջ թերություններ կային նաեւ վառելիքի մատակարարման գործում: Այսպես օրինակ՝ 1946թ. դարնան մեքենայական աշխատանքների համար նախատեսված 3273 տոննա վառելիքի փոխարեն տրամադրվեց 454 տոննա⁵, Իսկ 1950թ. նախատեսված 3840 տոննայի փոխարեն տրամադրվեց 1076 տոննա: Դա ոչ միայն ՄՏԿ-ների անվճարունակության, այլ նաեւ անհրաժեշտ վառելիքային պահեստների բացակայության հետեւանք էր⁶:

Ինչպես նշվում էր 1948թ. ՄՏԿ-ների աշխատողների առաջին հանրապետական խորհրդակցությունում գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացմանը բացասաբար էր անդրադառնում նաեւ մեխանիզատորական կադրերի սակավությունը: 1947թ. դարնանը, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշմամբ, պահանջվում էր բերքահավաքի աշխատանքին ընդգրկել նաեւ ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում աշխատող մեխանիզատորներին: Անհրաժեշտ թվով մեխանիզատորական կադրեր պատրաստելու նպատակով հանձնարարվում էր կարճատեւ դասընթացներ կազմակերպել: Նույն թ. այդ դասընթացներում պատրաստվեցին 200 տրակտորիստ, 30 կոմբայնավար, 30 վարորդ, 60 վերանորոգող բանվոր, որոնք, սակայն հիմնականում աշխատանքի էին անցնելու խորհրդատնտեսություններում⁷:

¹ Գ.Մ. Գեղամյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական

² ՀԱԱ, ֆ. Կ-1, ց. 26, գ. 42, թ. 12:

³ Նույն տեղում, ց. 28, գ. 212, թ. 16:

⁴ Նույն տեղում, ց. 31, գ. 130, թ. 35:

⁵ Նույն տեղում, ց. 26, գ. 42, թ. 15:

⁶ Նույն տեղում, ց. 30, գ. 229, թ. 9:

⁷ Գ.Մ. Գեղամյան, նշվ. աշխ., էջ 35-36:

Տեխնիկական գինվածության բնագավառում հատկապես լուրջ առաջընթաց արձանագրվեց 1950-1953թթ.: Այդ ժամանակահատվածում ՄՏԿ-ները ստացան 26 մլն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ ու սարքավորումներ⁸: 1953թ. Հանրապետության 53 ՄՏԿ-ներն արդեն ունեին 2744 տրակտոր, 703 կոմբայն, 1615 բեռնատար ավտոմեքենա, 1031 շարքացան, 680 խոտհնձի մեքենա, 40 եգիպտացորենի կոմբայն եւ այլ գյուղատնտեսական գործիքներ: Բոլոր տրակտորների հզորությունը 1945թ. 29.3 հազ. ձիաուժից 1953թ. հասավ 48.9 հազարի⁹: Ամբողջ տրակտորային պարկում հատկապես արագ էր աճել դիզելային տրակտորների տեսակարար կշիռը: Եթե 1949թ. այն կազմում էր 8, ապա 1953թ. հասավ մինչեւ 69%-ի: Եթե մինչեւ 1950թ. անասնաբուծությունն ընդհանրապես մեքենայացված չէր, ապա 1953թ. գործում էին անասնապահությանը սպասարկող 5 մեքենա անասնապահական կայաններ: Մոտ 45%-ով աճեց նաեւ ՄՏԿ-ների կողմից գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման աստիճանը: Այսպես՝ եթե 1945 թ. կատարվել էր հացահատիկի գարնանացանի 6, աշնանացանի 19, բերքահավաքի 12 եւ սիլոսացման 24%-ը, ապա 1953 թ. մեքենայացված էր հացահատիկի գարնանացանի 47, աշնանացանի 62, բերքահավաքի 51 եւ սիլոսացման 77%-ը¹:

Այնուհանդերձ եղած տեխնիկական արդյունավետ չէր օգտագործվում: Բավական է նշել, որ 1953թ. գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման պլանը կատարվեց ընդամենը 76.6%-ով: ՄՏԿ-ները նույն տարում տվեցին 1465 հազ. ռուբլու վառելիքի գերաժախտ, իսկ դեբիտորական պարտքերը կազմեցին 440 հազ. ռուբլի²: Ստիպված կառավարությունը պարբերաբար ստուգումներ էր իրականացնում ՄՏԿ-ներում: Այսպես օրինակ՝ 1952թ. դեկտեմբերի 20-ին անցկացրած ստուգումներից բացահայտվեց, որ ՄՏԿ-ների զգալի մասը գյուղատնտեսական աշխատանքից հետո տեխնիկական չէին տեղափոխում հավաքակայաններ: Մի շարք ՄՏԿ-ներում չկային վերանորոգման համար համապատասխան արհեստանոցներ, ծածկված տարածքներ, որի հետեւանքով տեխնիկական ձմռան ընթացքում չէր պահեստավորվում: Դեռեւս մեծ չափերի էին հասնում տեխնիկայի ապահովակետավորման եւ խոտանման դեպքերը: Օրինակ՝ Արթիկի ՄՏԿ-ում վերջին տարիներին ապահովակետավորվել էր 2 կոմբայն, 1 հնձիչ, 3 կուլտիվատոր, 3 սերմացան: Դեռեւս 1951թ. ապահովակետավորված 5 շարքացանը եւ 7 կուլտիվատորը գտնվելով անծածկ տարածքում աստիճանաբար խոտանվում էին³:

Գյուղատնտեսության նախարարության գյուղմեխանիզացիայի վարչությունը, հաշվի չառնելով ՄՏԿ-ների իրական պահանջները, մեխանիկորեն վերանորոգման պլաններ էր կազմում եւ մեծ ուշացումներով իջեցնում ՄՏԿ-ներին: Ավելին, պլանավորվում էր վերանորոգել այնպիսի տեխնիկա, որը չկար տվյալ ՄՏԿ-ում: Օրինակ, 1953թ. պլանավորված էր Արտաշատի ՄՏԿ-ում վերանորոգել Ս6 կոմբայն, որից այդ ՄՏԿ-ն գուրկ էր⁴:

Շարունակվում էր մեխանիզատորական կադրերի պատրաստման եւ տեղաբաշխման անբավարար գործընթացը. եթե 1940թ. ՄՏԿ-ներում աշխատում էին 2322 տրակտորիստ, 219 կոմբայնավար, 176 ավտովարորդ, ապա 1953թ., տեխնիկայի շոշափելի աճի պայմաններում, ՄՏԿ-ներում աշխատում էին 3166 տրակտորիստ, 453 կոմբայնավար, 412 ավտովարորդ⁵: Մեխանիզատորների անբավարար քանակի

⁸ Նույն տեղում, ՀԱԱ, ֆ. Կ-1, ց. 37, դ. 43, թ. 29:

⁹ Сельское хоз. Арм. ССР, (стат. сборник), Ереван, 1961, էջ 11:

¹ Վ.Մ. Գրոյան, Հայաստանի գյուղատնտեսության մեքենայացումը 40 տարում, Երեւան, 1961, էջ 34:

² Ա.Ա. Տիտանյան, Ս.Ա. Հարությունյան, Դրվագներ Հայաստանի գյուղատնտեսության զարգացման պատմությունից, Երեւան, 1966, էջ 87:

³ ՀԱԱ, ֆ. Կ-1, ց. 32, դ. 123, թ. 43:

⁴ Նույն տեղում, ց. 34, դ. 92, թ. 15:

⁵ Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, էջ 173:

Հետեւանքով բերքահավաքի ամենաեռուն շրջանում հարյուրավոր մեքենաներ անգործութեան էին մատնվում: Ակնհայտ է, որ խոսք լինել էր կարող երկհերթ աշխատանքի վերաբերյալ, որը, չնայած բազմաթիվ որոշումներին, գործնականում անհնար էր իրականացնել:

ԽՄԿԿ ԿԿ 1953թ. սեպտեմբերյան պլենումն անդրադառնալով տարիներ շարունակ արտադրվող խիստ ցածր կարողություններով եւ սահմանափակ հնարավորություններով գյուղատնտեսական մեքենաներին, նշեց, որ դրանք չեն համապատասխանում գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության ժամանակակից հնարավորություններին: Խնդիր դրվեց յուրացնել գյուղատնտեսական մեքենաների այնպիսի նոր տեսակների արտադրությունը, որոնք կբավարարեն գյուղատնտեսության զարգացման պահանջները: Պլենումից հետո շոշափելի աշխատանք կատարվեց Հանրապետության ՄՏԿ-ները նոր տեխնիկայով հագեցնելու ուղղությամբ: Արդեն 1958թ. ՀԽՍՀ ՄՏԿ-ներում կային 3444 տրակտոր, 1134 կոմբայն, 3374 բեռնատար ավտոմեքենա: Բոլոր տրակտորների հզորությունը կազմում էր 92,3 հազ. ձիաուժ: Մեքենայական պարկի քանակական աճի շնորհիվ աճեց նաեւ 100 հա ցանքատարածության հաշվով տեխնիկական զինվածությունը: Եթե 1953 թ. այն կազմում էր 63, այդ թվում՝ մեխանիկական շարժիչներին՝ 53 ձիաուժ, ապա 1958 թ. կազմեց համապատասխանաբար 170 – 164 ձիաուժ¹:

Բարձրացավ նաեւ գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը: Հաջողվեց ամբողջովին մեքենայացնել բամբակի եւ շաքարի ճակնդեղի ցանքերը, հացահատիկի ցանքսի, ցելի եւ ցրտահերկի 82, բերքահավաքի 65, սիրտացման 90%-ը²: Մեքենայացման ենթարկվեց նաեւ անասնապահական ֆերմաների աշխատատար գործընթացների մի մասը: Այնուամենայնիվ, դեռեւս մեքենայացված չէին տեխնիկական կուլտուրաների եւ այգեգործության աշխատատար գործընթացները: Չէին արմատավորվել մեքենայական աշխատանքների առաջատար եղանակները՝ հացահատիկի նեղշար, խաչածեւ ցանքը, անջատ բերքահավաքը, տեխնիկական կուլտուրաների, հատկապես ծխախոտի միջշարային մշակման մեքենայացումը: ՄՏԿ-ները հիմնականում բավարարվում էին սովորական դարձած վարի, ցանքսի եւ կոմբայնով բերքահավաքի աշխատանքներով: Անդրադառնալով այդ խնդրին ՀԿԿ 18-րդ համագումարը պահանջեց հաղթահարել գյուղատնտեսական կուլտուրաների մշակութային առաջվոր մեթոդների թերագնահատումը եւ մշակութային գործընթացի մեքենայացման նկատմամբ ձեւական վերաբերմունքը:

Շարունակում էր անբավարար մնալ մեխանիզատորների պատրաստման եւ տեղաբաշխման հարցը: 1953թ. գյուղ ուղարկվեցին մոտ 4 հազար մեխանիզատորներ, սակայն գյուղից նրանց մասսայական հոսունությունը հետեւանքով՝ 1956թ. 1953թ. համեմատությամբ մեխանիզատորների թվի աճը կազմում էր 601 մարդ³: Մեխանիզատորական կադրերի պատրաստման վրա բացասաբար անդրադարձավ նաեւ ՀԽՍՀ նախարարների խորհրդի 1958թ. մարտի 21-ի որոշումը, ըստ որի՝ Գյուղատնտեսության Մեքենայացման ուսումնարանի (որն ուներ շուրջ 330 ուսնկնդիր) տարածքը հատկացվում էր Սարքաշինական գործարանին: Փաստորեն խախտվում էր մեխանիզատորների պատրաստման աշխատակարգը⁴:

Ծայրահեղ անբավարար էր աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության միջոցառումների իրականացումը: Ինչպես նշվում էր Գյուղատնտեսության նախարարության 1955թ. մարտի 8-ի որոշման մեջ, միայն 1954թ. տեղի էր ունեցել տեխնիկայի շահագործման խախտումների 28 դեպք, որոնցից 14-ը մահացու դեպքեր էին. ընդհանուր առմամբ տուժել էր 56 մարդ⁵:

¹ Народное хоз. Армянской ССР (стат. сборник), Ереван, 1961, էջ 140:

² Նույն տեղում:

³ Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, էջ 173:

⁴ ՀԱԱ, ֆ. Կ-1, ց. 38, դ. 53, թ. 21:

⁵ ՀԱԱ, ֆ 694, ց. 1, դ. 33, թ. 8-9:

Շարունակվում էին չհիմնավորված ապահովագրություններն ու գույքագրությունները: Դեռեւս մեծ էր չհիմնավորված գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծումը: Այսպես օրինակ, 1956թ. Աբովյանի եւ Հոկտեմբերյանի շրջաններում ստացել էին եգիպտացորենահավաք կոմբայններ, սակայն գործադրման ասպարեզ չունենալու հետեւանքով՝ անգործութեան էին մատնվել:

ԽՍՀՄ-ի ԿԿ 1958թ. փետրվարյան պլենումը «Կոլտնտեսային կարգի հետագա զարգացման եւ Մեքենա-տրակտորային կայանները վերակազմելու մասին» որոշման համաձայն՝ նպատակահարմար դատվ փոխել կոլտնտեսութունների արտադրատեխնիկական սպասարկման գոյութուն ունեցող կարգը: Որոշման մեջ նշվում էր, որ ՄՏԿ-ները վեր են ածվել վարձակալների, դարձել են ավելորդ օղակներ եւ արգելակում են տեղական ռեզերվները ամբողջովին օգտագործելու կոլտնտեսութունների նախաձեռնութեան ծավալումը: Նախատեսվում էր ՄՏԿ-ների տեխնիկական վաճառել կոլտնտեսութուններին: 1958թ. մարտի 31-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանը այդ միջոցառմանը տվեց օրենքի ուժ:

ՀԿԿ ԿԿ եւ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1958թ. ապրիլի 25-ի համատեղ որոշմամբ հանրապետութունում ՄՏԿ-ները վերակազմվեցին Նորոգման Տեխնիկական կայանների: Այդ որոշմամբ, տնտեսապես թույլ կոլտնտեսութուններին սպասարկելու նպատակով, պահպանվեցին Ադրի, Ագրիգեկովի, Ամասիայի, Ալաբաղի, Մանթաշի, Ղուկասյանի, Կրասնոսելսկի եւ Թալինի ՄՏԿ-ները: Ճիշտ է, կային մի շարք օբյեկտիվ պատճառներ (հողի նկատմամբ երկու տեր, բնավարձի մեծութուն եւ այլն), որոնք պահանջում էին վերակառուցել ՄՏԿ-ների աշխատանքը, սակայն վերը նշված միջոցառման իրականացումը, նրա հասկանալիությունը բացասաբար անդրադարձավ գյուղատնտեսական արտադրութեան եւ հատկապես տնտեսապես թույլ կոլտնտեսութունների ֆինանսատնտեսական գործունեութեան վրա: 1958թ. նոյեմբերին դեռեւս գործող 8 ՄՏԿ-ները եւս լուծարվեցին: Կոլտնտեսութունները ստիպված էին դրամական սուղ միջոցներ հատկացնել գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար: Արգեն իսկ 1959թ. հունվարի 1-ին նախկինում ՄՏԿ-ների կողմից սպասարկվող 780 կոլտնտեսութուններից կարողացան տեխնիկա գնել միայն 606-ը: Նրանց վաճառվեց 1863 տրակտոր, 568 հացահատիկային կոմբայն, 1401 գուլթան, 1155 շարքացան, 332 կալսիչ, 418 խոտհնձի մեքենա, 15 սիլոսի եւ 6 եգիպտացորենի կոմբայն եւ մի շարք այլ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ: Վաճառված տեխնիկայի ընդհանուր արժեքը կազմում էր 65326 հազ. ռուբլի, որից նոր տեխնիկայի արժեքը՝ ընդամենը 3751 հազ. ռուբլի: Սակայն կոլտնտեսութունները փաստացի կարողացան վճարել միայն 40151 հազ. ռուբլի: Մնացած մասի վճարումը հետաձգվեց ըստ տարիների¹:

Մինչեւ ՄՏԿ-ների լուծարումը անհրաժեշտ էր կոլտնտեսութուններում լուծել կարգերի եւ վերանորոգման արհեստանոցների ապահովվածութեան հարցը: Բացի այդ, հանրապետութեան լեռնային ռելիեֆի պայմաններում նպատակահարմար էր համեմատաբար փոքր եւ մեծ շարժունակութուն, օգտագործման բարձր գործակից ունեցող մեքենաներ վաճառել: Սակայն փաստ էր, որ այդպիսի մեքենաներ դեռեւս չէին արտադրվում:

1959-1965թթ. Հայկական ԽՍՀ գյուղատնտեսական ձեռնարկութունների տրակտորային պարկը աճեց 213%-ով, բեռնատար ավտոմեքենաներինը՝ 175%-ով: Տրակտորների քանակը 1958թ. 3444-ից 1965թ. հասավ 7156-ի, կամ աճեց 3712 միավորով՝ նախատեսված 6860-ի փոխարեն: Հացահատիկային կոմբայնների քանակը նույն ժամանակամիջոցում համապատասխանաբար 1134-ից հասավ 1574-ի կամ աճեց 440 միավորով՝ նախատեսված 1000-ի փոխարեն: Իսկ քարշող ուժի ընդհանուր հզորութունը 92.3 հազ. ձիաուժից հասավ 200.9 հազարի²: Տեխնիկական գինվածութեան աճի շնորհիվ նվազեց նաեւ բանող անասունների տեսակարար կշիռը:

¹ ՀԱԱ, ֆ. Կ-1, ց. 39, դ. 94, թ. 1-4:

² Народное хоз. Арм. ССР в 1965г. (стат. ежегодник), Ереван, 1966, էջ 140:

Այն 1958 թ. 3.7%-ից 1965 թ. նվազեց մինչև 2%: Աճեց նաև տեխնիկական գինվածութային ցուցանիշը. 1965 թ. յուրաքանչյուր 100 Հա վարելահողի հաշվով այն կազմում էր 232 ձիաուժ, իսկ գյուղատնտեսական արտադրության մեջ յուրաքանչյուր աշխատողի հաշվով՝ 4.2 ձիաուժ հզորություն:

Գյուղատնտեսության տեխնիկական գինվածութային աճը նպաստեց մեքենայացնելու հացահատիկի ցանքսի բոլոր աշխատանքները, բերքահավաքի 85, տեխնիկական եւ բանջարաբուստանային կուլտուրաների միջնարային մշակման աշխատանքների 64, խոտհնձի՝ 24%-ը: Բայցեւայնպես դեռևս մեքենայացված չէին խաղողի, շաքարի ճակնդեղի, եգիպտացորենի, կարտոֆիլի եւ պտղատու ալգիների մշակման աշխատատար մի շարք գործընթացներ: Դա արդյունք էր այն բանի, որ 1959-1965թթ. մեքենայական պարկի կարողությունների՝ շուրջ երկու անգամ աճի պայմաններում մեքենայացված աշխատանքների ծավալն աճեց միայն 24%-ով¹:

1959-1965թթ. նախատեսվում էր նաև մեքենայացնել անասնաբուծության աշխատատար գործընթացների զգալի մասը: Սակայն 1963 թ. ՀԿԿ ԿԿ որոշման մեջ նշվեց, որ դեռևս չկա գեթ մեկ կաթնա-անասնապահական տնտեսություն, որն ամբողջովին մեքենայացված լիներ²: Այնուամենայնիվ, արդեն իսկ, 1965 թ. ամբողջովին մեքենայացված էր 32 անասնապահական ֆերմա: Նույն թվականին լրիվ մեքենայացված էին անասունների ջրամատակարարման 63%-ը, այդ թվում՝ ավտոմոնցների միջոցով 23, ներֆերմային տրանսպորտի 40, կովերի կթի 17%-ը³:

Սակայն արտադրողական ուժի զարգացումը համաչափ չէր ընթանում պետական եւ կոլտնտեսային հատվածում: Այսպես՝ 1965թ. ցանքատարածությունների 100 Հա-ի հաշվով կոլտնտեսություններում հաշվվում էին 247 ձիաուժ, իսկ խորհրդային տնտեսություններում՝ 339 ձիաուժի էներգետիկ կարողություններ: Մեկ կոլտնտեսությունն ընկնում էր միջին հաշվով 7, իսկ խորհրդային տնտեսություններին՝ 15 տրակտոր: Փաստորեն կոլտնտեսային հատվածը ֆոնդագինվածության քանակով մոտ 1.5 անգամ գիշում էր խորհրդային տնտեսությունին⁴:

Գյուղատնտեսության մի շարք բնագավառներում մեքենայացման աշխատանքների ցածր մակարդակը պայմանավորված էր տեխնիկայի անարտադրողական օգտագործմամբ, ինչպես նաև շատ դեպքերում տեխնիկայի չհիմնավորված ներմուծմամբ: Այսպես, 1965 թ. գյուղատնտեսությունը սպասարկող տրակտորային պարկը բաղկացած էր 72% թրթուրավոր եւ 28% անիվավոր տրակտորներից⁵: Սա հանգեցրել էր անիվավոր տրակտորների օգտագործմամբ շարահերկ կուլտուրաների պլանների պարբերական թերակատարմանը: Տրակտորային պարկի կառուցվածքային անհամամասնությունը հանգեցրել էր նաև թե՛ տարեկան եւ թե՛ հերթափոխային արտադրանքի զգալի իջեցմանը: Օրինակ՝ 1965թ. մեկ տրակտորի հերթափոխային աշխատանքը 1958թ. համեմատությամբ կրճատվել էր 40%-ով, կամ՝ 2.5 Հա-ից նվազել էր 1.5 Հա-ի: Մեքենաների օգտակար աշխատանքի ժամանակը կազմում էր 60%:

ՄՏԿ-ների լուծարումից հետո փաստորեն, գյուղատնտեսության տեխնիկական սպասարկումը կազմակերպող ընդհանուր կենտրոն չկար: Ծիշտ է, տեխնիկայի տնօրինողը կոլտնտեսություններն էին, սակայն նրանք առանձին-առանձին չէին կարողանում պատրաստել մեխանիզատորական նոր կազրեր: Կոլտնտեսություններից շատերում չկային վերանորոգման սեփական արհեստանոցներ: Գյուղատնտեսության

¹ Ա.Ա. Տիտանյան, Ա.Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 146:
² Հ.Մ. Ութմազյան, Հայաստանի Կոմկուսը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար մղվող պայքարում, Երևան, 1974, էջ 263:
³ Հայաստանի գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հարցերը, Երևան, 1966, էջ 67:
⁴ Народное хоз. Арм. ССР в 1965г., էջ 140:
⁵ Գ.Հ. Խաչատրյան, Աշխատանքի գիտական կազմակերպումը կոլտնտեսություններում եւ սովորակներում, Երևան, 1972, էջ 52:

մեքենայական պարկի գործունեությունը կանոնակարգելու, միասնական վերահսկողություն, վերանորոգում եւ մատակարարում իրականացնելու նպատակով գյուղատնտեսական տեխնիկան, պահեստամասերը, հանքային պարարտանյութերը եւ այլ նյութատեխնիկական միջոցներ վաճառելու, գյուղատնտեսական ձեռնարկություններում մեքենաների վերանորոգումն ու շահագործումը կազմակերպելու նպատակով ԽՄԿԿ եւ ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի 1961թ. փետրվարի 20-ի որոշմամբ ստեղծվեց «Գյուղատնտեսիկա» համամիութենական միավորումը: Նույն թ. կազմակերպվեց նաեւ «Հայգյուղատնտեսիկա» հանրապետական միավորումը: Միավորմանը հանձնարարվեց սպասարկել գյուղատնտեսական ձեռնարկությունների մեքենայական պարկը, ինչպես նաեւ իրականացնել գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումն ու շինարարությունները¹: Սակայն այդ միջոցառումը չնպաստեց գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգման գործի կարգավորմանը: Հատկապես մեծ էր վերանորոգման արհեստանոցների կարիքը: Ձգալիորեն նվազել էին վերանորոգման կայանները: Այսպես, եթե ՄՏԿ-ների արտադրական տարածքը 1958թ. կազմում էր 39.5հազ. քառ. մետր, ապա 1965թ. Հայգյուղատնտեսիկայի համակարգում կար 24.4հազ. քառ. մետր արտադրական տարածություն²: Արտադրական բազայի հագեցվածությունն նման ցածր մակարդակի պայմաններում Հայգյուղատնտեսիկան սպասարկում էր միայն 247 գյուղատնտեսական ձեռնարկությունների³: Մնացածը վերանորոգվում էր գյուղատնտեսական ձեռնարկություններում մեխանիզատորների ուժերով: Սակայն 1965թ. միայն 21 կոլտնտեսություններ եւ 60 խորհրդատեսություններ ունեին տիպային արհեստանոցներ եւ տեխնիկական սպասարկման կետեր, 260 տնտեսություններ զուրկ էին հատուկ արհեստանոցներից, իսկ 400-ը՝ անգամ մետաղ մշակող հաստոցներից: Ակնհայտ էր, որ նման պայմաններում կիրառվում էին վերանորոգման անհատական ցածր արտադրողական մեթոդներ: Նման իրավիճակում, 1965թ. թերակատարվեցին տրակտորների վերանորոգման պլանի 32, կոմբայնների՝ 43, ավտոմեքենաների՝ 56%-ը⁴:

Հանրապետության մի շարք տնտեսություններ դեռեւս գյուղատնտեսական տեխնիկայի համար ապահովված չէին բարեկարգված ավտոտնակներով ու սրահներով: 1964թ. դրությամբ գյուղատնտեսական տեխնիկայի պահպանման համար բոլոր տիպի ծածկած սրահների տարողությունը բավարարում էր միայն 30%-ով:

Գյուղատնտեսության զարգացման գործում առանձնահատուկ կարեւորվում էր աշխատար գործընթացների համալիր մեքենայացումը: Այն իրականացնելու կազմակերպչական ձեւերից մեկը մեքենայացված օղակների ու բրիգադների կազմակերպումն էր: 1963թ. կազմակերպվեցին համալիր մեքենայացված 46⁰, 1964թ.՝ 66, 1965թ.՝ 90 օղակներ: Սակայն պետք է նշել, որ ստեղծված օղակների չափսերը հեռու էին օպտիմալ լինելուց: Ստեղծված մեքենայական օղակները դեռեւս չափազանց քիչ էին, չկային համալիր մեքենայացված բրիգադներ: Միայն 1965թ. «Հայգյուղատնտեսիկա» միավորումը վերցրեց 300 կոլտնտեսությունների ու խորհրդատեսությունների համալիր մեքենայացման պարտականությունները: Կազմակերպվեցին տեխնիկական սպասարկման 33 կայաններ՝ 65 բրիգադներով⁵:

ՀԽՍՀ լեռնային պայմաններում գյուղատնտեսության համալիր մեքենայացման համար հարկավոր էր հաշվի առնել մի շարք գործոններ: Նախ՝

¹ ՀԱԱ, ֆ. Կ-1, ց. 41, դ. 125, թ. 74:

² Հ.Մ. Ութմազյան, նշվ. աշխ., էջ 260:

³ Բ. Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 144:

⁴ Հ.Մ. Ութմազյան, նշվ. աշխ., էջ 260:

⁵ Բ. Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 135:

⁶ Տրակտոր-դաշտավարական բրիգադների աշխատանքի փորձը Հայաստանի կոլտնտեսություններում, Երևան, 1963, էջ 9:

⁷ Հայաստանի գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հարցերը, էջ 92-93:

տեղանքի ռելիեֆը Հնարավորություն էր տալիս գյուղատնտեսական տեխնիկան լայնորեն օգտագործել միայն մշակելի հողատարածությունների 44%-ում (որոնք ունեին մինչև 10% թեքություն): Հողատարածությունների մոտ 25%-ում (որոնք ունեին մինչև 20% թեքություն) տեխնիկայի օգտագործումը բավականին դժվար էր, իսկ երբեմն էլ՝ ուղղակի անհնար: Մնացած տարածությունները, որտեղ գյուղատնտեսական տեխնիկան ընդհանրապես չէր օգտագործվում, կազմում էր ամբողջի 31%-ը (այն ուներ 20%-ից բարձր թեքություն): Ռելիեֆի կտրվածության, ձորերի ու բարձունքների հաջորդականության պատճառով լեռնային շրջանների հողատարածությունները մեծ մասամբ բազկացած էին փոքր հողակտորներից: Վարելահողերի միջին չափը հանրապետությունում կազմում էր 2,8հա:

Հանրապետության հողերի բնորոշ առանձնահատկություններից էր նրանց քարքարոտությունը: Գյուղատնտեսության մեջ օգտագործվող հողերի մոտ 31,5%-ը քարքարոտ էր, այդ թվում՝ վարելահողերի 11,3, խոտհարքերի 12,3 եւ արոտավայրերի 53,9%-ը: Դրանք զգալիորեն ազդում էին մեքենատրակտորային պարմալ նորմալ շահագործման վրա: Մեքենաները հաճախակի էին պարապուրդ տալիս կոտրվածքների, ժամկետից շուտ մաշվելու եւ այլ խախտումների պատճառով: Մեքենա-տրակտորային բազայի ցածր որակական ցուցանիշների հետեւանքով մեխանիզատորների աշխատանքում դեռեւս հաղթահարված չէին արտադրական աղմուկը, ցնցումները: Ինտենսիվ աղմուկի եւ ցնցումների տակ իջնում էր նրանց աշխատունակությունը, վնասվում էր առողջությունը:

Շատ մեքենաներ ու մեխանիզմներ դժվար էին կարգավորվում, դժվարությամբ էին տեղադրվում տրակտորների, կոմբայնի, գութանի, վարող, փխրեցնող, ցանող, հնձող, կալսող սարքերն ու հարմարանքները: Թողարկվող գյուղատնտեսական տեխնիկան դեռեւս հեռու էր աշխատանքի նորմալ պայմանների բավարարման պահանջներից: Այսպես՝ նշանակալի ֆիզիկական ջանք էր պահանջվում մեքենաների լծակային կառավարումից օգտվելու համար: Հետեւաբար գյուղատնտեսության համալիր մեքենայացման իրականացումը կապված էր լուրջ դժվարությունների հետ: Սրա հետ մեկտեղ, եւ՝ աշխատավարձի, եւ՝ կենցաղային մի շարք այլ խնդիրներ ստիպում էին մեխանիզատորներին թողնել գյուղատնտեսությունը:

Արամայիս Կոխլիկյան

ТЕХНИЧЕСКОЕ ОСНАЩЕННОСТЬ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В АРМЯНСКОЙ ССР С 1945-1965гг.

РЕЗЮМЕ

В статье представлен уровень технического насыщения в производстве сельского хозяйства в изучаемый период. Обсуждаются ряд причин недостатков и упущений, нашедших место в сфере технического обеспечения и текущей эксплуатации, особенно степень недостаточной насыщенности тракторного парка, физического и морального износа, которые отрицательно действовали на количество сельскохозяйственных механизированных работ. Налицо также серьезные недостатки в сфере существенного ухудшения финансово-технического состояния колхозов из-за плохого обслуживания сельского хозяйства со стороны МТС, а также из-за поспешной ликвидации МТС.

В сфере технического обеспечения сельского хозяйства особое внимание уделялось подготовке и переподготовке механизаторских кадров, а также освещению причин утечки кадров из сельскохозяйственного производства.

Повышение производительности сельскохозяйственного производства в значительной степени было обусловлено также организацией механизации комплекса. Однако в этой сфере были игнорированы ряд факторов. Организованные размеры звеньев и бригад были далеко не оптимальные: малые размеры земельных участков, рельеф местности, каменность, трудности текущей эксплуатации техники и т.д.

Арамаис Кохликян

Հաղորդում

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Մերոպ Մաչտոցի անվան Մատենադարանում, ի թիվս շատ բաժինների, գործում է Արխիվային կամ դիվանական վավերագրերի բաժինը, որի հավաքածուն կազմում է շուրջ 300000 միավոր: Այդ հավաքածուն հրատարակված եւ չհրատարակված նյութերի ամբողջությունն է, որն ունի հայագիտական մեծ նշանակություն: Վաստակաշատ մտավորականության աշխատանքի արդյունքում, արխիվային բաժնի հավաքածուում հավաքվել եւ կենտրոնացվել են դիվանական վավերագրեր, որոնք կարգի են բերվել, մշակվել, ծանոթագրվել: Շատ վավերագրեր պատռված ու քրքրված վիճակում են. դրանք հնարավորինս նորոգվում են, տեղավորվում հատուկ ծրարների ու թղթապանակների մեջ:

Հավաքածուում անգնահատելի պատմական, հասարակական եւ մշակութային արժեք են ներկայացնում Կաթողիկոսական դիվանը (ավելի քան 42.000 միավոր), Լազարյան ֆոնդը, անվանի հայագետների եւ հոգեւորականների թողոնները (Խրիմյան Հայրիկի, Ներսես Աշտարակեցու, Մաթեոս Իգմիրլյանի, Կիլիկիայի կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի ֆոնդերը), կոնդակները, այլ լեզուներով ավանդված փաստաթղթերը, նամակները, ուսական ցարի, պարսկական շահի ու թուրքական սուլթանի հրովարտակները:

Մատենադարանի ձեռագրատանն ու արխիվային բաժնում պահվող փաստաթղթերի ուսումնասիրությունը, որը վաղուց կատարվում է մեզանում, նպաստավոր է եղել մեր ժողովրդի պատմության շատ կարեւոր խնդիրների պարզաբանման գործում: Դրանց հիման վրա շարադրվել ու լույս են ընծայվել բազմաթիվ մեծ ու փոքր ուսումնասիրություններ, մենագրություններ:¹

Արխիվային բաժնի վավերագրերի հիման վրա նշանավոր աշխատություններ, հոդվածներ են գրել բազմալստակ գիտնականներ Ա.Հովհաննիսյանի, Գ. Աղանյանցը, Լ. Խաչիկյանը, Վ. Գրիգորյանը, Հ. Աբրահամյանը, Հ. Փափազյանը եւ ուրիշներ:

Արխիվային վավերագրերի վերաբերյալ հսկայական աշխատանք է կատարել Մատենադարանի ականավոր գիտնական Հ. Փափազյանը: Արխիվային ֆոնդերի մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում արաբատառ (պարսկերեն, արաբերեն, թուրքերեն) վավերագրերի ֆոնդը, որտեղ պահվող շուրջ 1500 վավերագրերը հարուստ եւ բազմազան նյութ են ոչ միայն Հայաստանի եւ Անդրկովկասի, այլև ամբողջ Առաջավոր Ասիայի ԺԴ-ԺԹ դդ. սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար:²

¹Գրիգորյան Վ. Ռ: Մատենադարանի դիվանական փաստաթղթերի հավաքման, պահպանման եւ օգտագործման պատմությունից: - Եր.- Բանբեր Հայաստանի արխիվների.-1983. 2.- էջ 50:

² Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: I : Հրովարտակներ: Պրակ I: ԺԵ-ԺԶ դդ.- Կազմեց Հ.Դ.Փափազյանը: -Եր.-ՀՍՍՀ ԳԱ հրատ.-1956թ.-էջ 8:

Հ. Փափազյանը վերծանել, ուսումնասիրել, թարգմանել է Հայերեն եւ ծանոթագրել պարսկերեն վավերագրերը՝ դասակարգելով դրանք 3 խմբի.

1. շահերի կողմից տրված հրովարտականներ

2. շարիաթական- նոտարական գրասենյակներում կազմված արձանագրություններ

3. ոչ շարիաթական-նոտարական բնույթի համաձայնագրեր, պայմանագրեր, գրություններ:

Նկատի ունենալով դիվանական վավերագրերի կարեւորագույն նշանակությունը Հայաստանի, Անգրկովկասի, Մերձավոր արեւելքի պատմության, տնտեսության, քաղաքագիտության համար՝ որոշվեց վավերագրերը հրատարակել նաեւ ուղեւորների թարգմանութեամբ՝ դրանով օժանդակելով ընթերցողների առավել լայն շրջաններին:

1968թ. հրատարակվեց «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» գրքի 2-րդ հատորի 1-ին պրակը, որում հրատարակված բոլոր վավերագրերը վերաբերում են տարբեր կալվածների առուծախին, օտարմանն ու նվիրատվությանը եւ ընդհանրապես հողի սեփականության եւ տիրության հարցերին, ընդհանուր անունով դրանք անվանում են «Կալվածագրեր»:³

Դեռեւս 19-րդ դարի վերջին քահանա ազգագրագետ Գյուլտ Աղանյանը (Աղանյանց) նախաձեռնեց «Դիւան հայոց պատմութեան» 13 հատորից կազմված մատենաշարի հրատարակմանը (1893-1915թթ.), որոնք ընդգրկում էին վավերագրեր՝ կոնդակներ, նամակներ, փաստաթղթեր:

1980-ական թվականներին Մատենադարանի գիտաշխատողները ձեռնամուխ եղան «Դիւան հայոց պատմութեան» նոր մատենաշարի ստեղծմանը:

1984թ. հրատարակվեց «Դիւան հայոց պատմութեան» նոր շարքի 1-ին գիրքը, իսկ 2003թ.՝ 2-րդը, որոնք ընդգրկում են Ամենայն Հայոց Կաթողիկոս Ղուկաս Կարնեցու կոնդակները, նամակները, գրությունները:⁴

Հավաքածուում գտնվող ամենահին վավերագիրը թվագրված է 1442թ. (Գրիգոր կաթողիկոսի կոնդակը): Որոշ ուսումնասիրություններում այս կոնդակը թվագրված է «1441թ.»⁵, իսկ նոր շրջանում հրատարակված բոլոր նյութերում՝ «1442թ.»⁶:

Մատենադարանի արխիվային հավաքածուն ստեղծվել է պատմական Հայաստանի շատ վայրերից, ինչպես նաեւ սփյուռքից հավաքված վավերագրերի հիման վրա:

Կաթողիկոսական դիվանի հավաքածուում պահանվում են ինքնուրույն Վիրապի, Սաղմոսավանքի, Մուղղու, Գեղարդի, Հովհաննավանքի, Կոչավանքի, Հավուց թառի եւ այլ վանքերի վավերագրերի հավաքածուները:⁷

Բացի «Կաթողիկոսական դիվան» արխիվային ֆոնդից, գոյություն ունեն «Սինոդի արխիվային ֆոնդը», «Անհատական արխիվային ֆոնդը» եւ «Մշակութային հաստատությունների արխիվային ֆոնդը», ինչպես նաեւ բազմաթիվ այլ ֆոնդերի վավերագրեր՝ նվիրված Հայ-ուղև, Հայ-վրաց, Հայ-ադրբեջանական եւ այլ ժողովուրդների հետ ունեցած հարաբերություններին:

Դարեր շարունակ հայկական գաղթօջախներում՝ մշակութային օջախներում, պահպանվել են բազմաթիվ վավերագրեր:

Գրչության հարուստ ավանդույթներ ունեցող Պոզոլյեի Հայ գաղթօջախներում պատշաճ ուշադրություն է ընծայվել նաեւ համայնքների կանոնադրությունների եւ

³ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: II: Կալվածագրեր: Պրակ I: ԺԴ-ԺԶ դդ.: Կազմեց Հ. Գ. Փափազյանը: ԵՐ.-ՀՍՍՀ ԳԱ հրատ.-էջ 8:

⁴ Դիւան հայոց պատմութեան: Նոր շարք: Գիրք I : Ղուկաս Կարնեցի: Հատոր Բ: 1786-1792: Աշխատասեր՝ Վ. Գրիգորյան: Եր.-2003.-էջ 5:

⁵ Աղամյան Ա.: Մատենադարանի արխիվային ֆոնդերը: - Եր.- Բանբեր Հայաստանի արխիվներին.- 1973.2.- էջ 45:

⁶ Մատենադարան: ՄԲԲՀ.-Եր.-2003.-էջ 10:

⁷ Գրիգորյան Վ.Ռ.: Մատենադարանի դիվանական փաստաթղթերի հավաքման, պահպանման եւ օգտագործման պատմությունից: Եր.- Բանբեր Հայաստանի արխիվներին,- 1983, 2, էջ 47

վերադաս իշխանութիւններէց ստացված արտոնագրերի պահպանման, անհրաժեշտութեան դեպքում հայերեն թարգմանութեան գործին: Մեզ են հասել մի շարք կարեւոր վավերագրեր⁸:

Երեք ու կես դարերի ընթացքում Նոր Զուղայում, Պարսկա-Հնդկական թեմի կենտրոնում, կուտակվել են հսկայական քանակութեամբ արխիվային մեծարժեք նյութեր⁹:

Այս նյութերը եւս ունեն կարեւոր նշանակութիւն թե՛ Հայաստանի, թե՛ Հարեւան պետութիւնների պատմութեան եւ մշակույթի համար:

Դրանք հիմնականում տեղական թեմի առաջնորդարանի, եկեղեցական, համայնքային խորհուրդների, առեւտրական, տնտեսական, մշակութային կապերի մասին բազմաբնույթ վավերագրեր են:

Թեեւ Նոր Զուղայի մատենադարանի հավաքածուն այնտեղ պահվող վավերագրերի եւ նյութերի քանակով չի էլ կարելի համեմատել ՀնՍՀ Մատենադարանի նյութերի հետ, սակայն, այնուամենայնիվ, այն հայկական մշակույթի արժեքավոր օջախներից է¹⁰:

Հայ ժողովրդի աշխարհասփյուռ գիտամշակութային հաստատութիւններում պահվող հսկայական վավերագրական ֆոնդերը Հնարավոր չէ նույն տեղում հավաքել, սակայն դրանց համակարգված, փոխպայմանավորված օգտագործումը խիստ անհրաժեշտ է: Այս առումով շատ արդյունավետ է էլեկտրոնային շտեմարանների միջոցով տեղեկատվութեան հավաքագրումը եւ առաքումը:

Ելնելով բուն Հայաստանի եւ հայկական սփյուռքի պատմամշակութային առանձնահատկութիւններից՝ կարելի է ընդգծել տեղեկատվական-գրադարանային աղբյուրների ինտեգրացման հետեւյալ ուղղութիւնները.

գրադարանային եւ մատենադարանային ֆոնդերի ինտեգրացում.

ավյալների բազայի եւ տեղեկատվութեան զանգվածների ինտեգրացում¹¹:

Մեր ժողովրդի մշակութային, պատմական, քաղաքական իրադրութեամբ պայմանավորված՝ Հնարավոր չէ պատկերացնել մշակույթի զարգացումն առանց Հայրենիք-սփյուռք կապերի:

Այսօր անհնար է պատկերացնել գիտութեան ու մշակույթի պատմութիւնը, Հայաստան-Սփյուռք միասնութիւնն առանց տեղեկատու-մատենագիտական համակարգի զարգացման¹²:

Զարգացնելով այս թեզը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է սփյուռքում գտնվող բոլոր գիտամշակութային օջախների՝ վավերագրեր հավաքող եւ պահպանող կազմակերպութեան եւ Երեւանի Մատենադարանի արխիվային բաժնի ֆոնդերն ընդգրկող համընդհանուր էլեկտրոնային շտեմարան ստեղծել, որի միջոցով հնարավոր կլինի իրականացնել վավերագրերի տեղեկատվական առաքումը եւ ստացումը:

1992թ. ստեղծվեց նոր կազմակերպութիւն՝ «Եվրասիայի գրադարանային ասամբլեան», որի նպատակն է գիտութեան, կրթութեան, գրադարանային, արխիվային եւ թանգարանային գործի զարգացումը Ա.Պ.Հ երկրներում:

⁸ Գրիգորյան Վ.: Հայ գրչութիւնը Պոզուլեում: Հաղորդումներ եւ հրատարակումներ: -ԵՐ.- Լրաբեր հաս. գիտ.-1973.3.- էջ 61:

⁹ Մարտիրոսյան Հ.: Նոր Զուղայի մատենադարանը: - Եր.- Բանբեր Հայաստանի արխիվների .- 1967.1.16.- էջ 209:

¹⁰ Գրիգորյան Վ.: Հայ գրչութիւնը Պոզուլեում: Հաղորդումներ եւ հրատարակումներ: Եր.- Լրաբեր հաս. գիտ., 1973, 3 - էջ 211:

¹¹ Սուքիասյան Գ.: Գրադարանային-ինֆորմացիոն աղբյուրների սպասարկում եւ ինֆորմացիայի ինտեգրացման պրոբլեմները Հայաստանում: Թեզիսներ: ՀՊՄ Հ.-Եր.-«Մանկավարժ» հրատ.-2001.- էջ 341:

¹² Սուքիասյան Գ.: Մատենագիտական գիտութեան ավագ պրոբլեմների շուրջ: Թեզիսներ: ՀՊՄ Հ.-Եր.-«Մանկավարժ» հրատ.-2001.- էջ 342:

Ասամբլեայի նախաձեռնությունները ԱՊՀ-ի եւ մերձբալթյան երկրների ազգային գրադարանների շրջանակում գործի գրվեց «Ազգերի վավերագրերի հիշողություն» ծրագիրը, որի իրականացումը բխում է ՅՈՒՆԵՍԿՈ-ի «Աշխարհի հիշողություն» ծրագրից (1992):¹³

Այս ծրագիրը կարող է հիմք դառնալ Հայաստանում եւ սփյուռքում գործող արխիվային վավերագրեր պահպանող բոլոր Հաստատությունների Համար վավերագրերի Համընդհանուր էլեկտրոնային շտեմարան ստեղծելու առումով:

Դարերի պատմություն ունեցող Մատենադարանն այսօր էլ Համալրվում է Հնամենի վավերագրերով:

Արխիվային հավաքածուի համալրումը կատարվում է թե՛ հայրենիքի, թե՛ արտասահմանի գիտամշակութային կենտրոններից: Համալրումն իրականացվում է նաեւ նվիրատվություններով եւ գնման եղանակով:

Արխիվային բաժին մուտք գործած յուրաքանչյուր նոր վավերագիր ենթարկվում է նկարագրման եւ ծանոթագրման: Ծանոթագրությունը շատ ընդգրկուն է:

Բաժնում չկա գրացուցակ եւ քարտարան: Վավերագրերը նկարագրված են մոտավորապես 100 մատյանում: Քարտագրման այս եղանակը կոչվում է մատենային նկարագրություն:¹⁴

Նյութերը գրանցվում են ըստ տարեթվերի: Հավաքածուում կան առանձին «Անհատական արխիվային ֆոնդեր» կոչվող մատյաններ (օր.՝ Հ. Մանանդյանի, Պատկանյանների, Հայագետներ Արշակ Ալպոյաճյանի, Ն. Մառի, Յ. Կարստի եւ շատ այլ ֆոնդեր):¹⁵

Վավերագրերի նկարագրության մատենագիտական մեթոդը տարբերվում է ավանդական նկարագրության մեթոդներից: Այսպես, մատյանում նյութին Հատկացված մասը ուղղահայաց բաժանված է 6 մասի.

1. նշված է նյութի հերթական համարը:

2. ծավալուն ներկայացված է վավերագրի բովանդակությունը, իսկ ներքեւում՝ ձախ կողմում, տրված է ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, աջ կողմում՝ մեծությունը սանտիմետրերով, այնուհետեւ՝ վավերագրի ստեղծման վայրը:

3. նշված է թղթապանակի համարը

4. նշված է վավերագրի համարը

5. նշված է էջերի քանակը

6. ծանոթություն վավերագրի վիճակի եւ լեզվական Հատկանիշի հետ:

N	Վավերագրի բովանդակությունը	Թղթապանակի N-ը	Վավերագրի N-ը	էջերի քանակը	Ծանոթություն
	Կ.Բասմաջյանի նամակը էջծիածնի Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանին բեւեռային արձանագրությունների, նրանց հրատարակման, այդ մասին հոդված ունենալու «Բազմավեպում» Սմբատյանի ձեռնարկած «Տեղեկագիր»	240ա	1	2	Հայերեն ձեռագիր բնագիր քրքրված

¹³ Սուքիասյան Գ.: Գրադարանագիտության, մատենագիտության եւ տեղեկատվության զարգացման հորիզոններում: Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտ. աշխ. ժող.: Հատոր II :-Եր.- «Մանկավարժ» Հրատ.-2002.- էջ 210:

¹⁴ Կորկոտյան Բ.: Գրադարանային գրացուցակներ:-Եր.-Հայաստան.-1976.-էջ 4:

¹⁵ Աղամյան Ա.: Մատենադարանի արխիվային ֆոնդերը: Եր.- Բանբեր Հայաստանի արխիվների,- 1973, 2,- էջ 45:

Գեղարքունի ծովագարդ գավառի» գործը հրատարակելու եւ «Արարատ» ամսագրի մասին: 30/10-1896թ. մեծ. 19, 9. 12,8 Փարիզ					
---	--	--	--	--	--

Պետք է նշել, որ արխիվային բաժնում քարտարանների եւ ցուցակների բացակայությունը դժվարացնում է նյութերի հայտնաբերումը: Այսպես, եթե հայտնի չէ փաստաթղթի ստույգ տարեթիվը, ապա շատ դժվար կլինի տվյալ վավերագրի գտնելու գործընթացը. պետք է թերթվեն այդ տարեթիվով մատյանները՝ նյութ առ նյութ ընթերցելով յուրաքանչյուր ծանոթագրություն: Սակայն շուտով կիրառվող համակարգիչները կլուծեն նաեւ այդ գերխնդիրը՝ առավել արագ, կարճ ժամկետում սպառողին ներկայացնելով համապարփակ տեղեկատվություն: Էլեկտրոնային քարտարանները, որոնք կընդգրկեն վավերագրերում արժարժիղ նյութի տարրերը (էլեկտրոնային շտեմարանում՝ դաշտեր), միայն մեկ հայտնի տվյալով մի քանի վայրկյանում կհայտնաբերեն անհրաժեշտ վավերագիրը¹⁶:

Շատ նյութեր ունեն պատճենահանումներ, սակայն ընթերցողներին հիմնականում սպասարկվում են բնագրերը: Նախկինում օգտագործվող միկրոֆոտոկոպիներն արդեն հնացած են եւ կիրառելի չեն:

Սակայն այստեղ առաջանում է լուրջ խնդիր: Հաշվի առնելով Մատենադարանի արխիվային բաժնի յուրահատկությունը եւ բաժնի հավաքածուում պահվող վավերագրերի ստեղծման տարեթիվը, իսկ արխիվային վավերագրերը մեզ են հասել 15-րդ դարից սկսած, հարկ է նշել, որ բնագրերը մեծապես կտուժեն, եթե շարունակ տրամադրվեն ընթերցողներին:

Հնագույն վավերագրերի օգտագործումը պետք է հնարավորինս նվազեցնել, քանի որ շատ վավերագրեր պահպանված են բնագրերով, քրքրված են կամ պատռված: Դրանց մշտական կիրառումը կարող է կործանարար լինել, իսկ վնասվածքներն՝ անվերականգնելի:

Արխիվային հավաքածուի պահպանման նպատակով 2003 թվականից նախատեսվել է աշխատել նոր մեթոդով. յուրաքանչյուր փաստաթղթի համար պետք է ստեղծվի «անձնագիր»՝ նրանում նշելով փաստաթղթի վիճակը, տարեթիվը, մեծությունը, էջերի քանակը...

Այս մեթոդը, կարծում ենք, մեծապես կօժանդակի վավերագրերի պահպանմանը եւ չի նպաստի դրանց՝ օգտագործումից առաջացող վնասվածքներին:

Արխիվային բաժնի գրապահոցը Մատենադարանի հիմնովին վերանորոգումից հետո այժմ գտնվում է լավ վիճակում: Հավաքածուի բարեկարգման նպատակով բաժինը ստացել է ամուր ստվարաթղթե թղթապանակներ, որոնց մեջ պետք է տեղադրվեն բոլոր վավերագրերը: Արխիվային հավաքածուի լիարժեք դասավորության նպատակով գրապահոցում տեղադրվել են նոր գրապահարաններ՝ թղթապանակներին համապատասխան չափսերով:

Հավաքածուի համալրման եւ պահպանման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Վավերագրերի պահպանման նպատակով ստեղծվել է լուսավորութային, խոնավութային եւ ջերմաստիճանի անփոփոխ, կայուն վիճակ:

Արխիվային բաժինը, լինելով Մատենադարանի հավաքածուի օրգանական մասը, պահանջում է յուրահատուկ մոտեցում: Այստեղ գերակշռում է չհրապարակված եւ հրապարակված տեղեկություն զգալի զանգված, որում ներկայացված է ինչպես առաջնային (տեղեկատվություն պարունակող նյութ), այնպես էլ երկրորդային (առաջնայինի հիման վրա ստեղծված) տեղեկատվություն: Նյութերից յուրաքանչյուրը

¹⁶ Զարգարյան Տ.: Թվային գրադարաններ: -Եր.-2002.- էջ 75-76:

բնագրագիրտական Հատուկ արժեք է ներկայացնում եւ ուշագրավ է որպէս պատմական, հասարակական, մշակութային սկզբնաղբյուր:

Յուրահատուկ ձեւով համակարգված այս հավաքածուն հայագիտութեան, արեւելագիտութեան, կովկասագիտութեան, պարսկագիտութեան հսկայական աղբյուր է, որը օգտագործվում է ընթերցող լայն շրջանակների կողմից:

Նեկլի Թագեւոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ
ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՀԱՅ
ԳԱՂԹՕՁԱԽՆԵՐԻՑ)**

Պատմական հանգամանքների բերումով, ունենալով աշխարհով մեկ սփռված Հայրենակիցներ, Հայ արխիվագետների հիմնական նպատակը եղել եւ մնում է Հայաստանում կենտրոնացնել ոչ միայն երկրի ներսում ստեղծված, այլեւ սփյուռքի հայկական գաղթօջախների կրթա-մշակութային, բարեգործական եւ այլ կազմակերպությունների ու անհատների գործունեութեամբ առաջացած արխիվային փաստաթղթերն ու նյութերը:

Հայաստանին ու Հայ ժողովրդի պատմությանը վերաբերող, արտերկրներում ստեղծված արխիվային փաստաթղթերը՝ պետական կենտրոնական արխիվում կենտրոնացնելու համար, տարիներ շարունակ, հարց է բարձրացվել ԽՍՀՄ վերադաս մարմինների առաջ, բանակցություններ վարել Վրաստանի, Ադրբեջանի, Մոլդովայի, Ուկրաինայի եւ Ռուսաստանի մի քանի մարզային (Մոսկվայի, Պետրոգրադի, Աստրախանի եւ այլ) արխիվների հետ: Երբեմն դրանք տեւել են մի քանի տարի: Հայ արխիվագետները, հաղթահարելով մի շարք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ դժվարություններ, տասնամյակների ընթացքում, կարողացան հավաքել մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր եւ հարստացնել մեր արխիվային ֆոնդերը հետաքրքիր ու հազվագյուտ փաստաթղթերով:

Նախկին ԽՍՀՄ միութենական Հանրապետությունների, այդ թվում եւ Ռուսաստանի մարզերի պետական արխիվների ֆոնդերից, ինչպէս նաեւ արտասահմանյան այլ երկրներից ՀՀ պետական արխիվների Համալրման գործընթացը կատարվեց:

ՎՐԱՍՏԱՆԻՑ. 1924թ. Թբիլիսիից Երեւան է տեղափոխվում փոխարքայի գրասենյակի գործունեության մասին 59 գործ, որը վերաբերում է 1889-1917 թվականներին: 1924թ. դեկտեմբերի 6-ին, ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահությունը որոշում է Հայաստանի եւ Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ փաստաթղթերի հայտնաբերման նպատակով որոնումներ կատարել Թբիլիսիի պետական կենտրոնական արխիվում: Վրաց արխիվագետների հետ բանակցություններից հետո, այդ աշխատանքների իրականացումը Հանձնարարվում է Թբիլիսաբնակ Վ.Ենիկոլոպյանին: Վերջինիս միջոցով՝ 1926թ.-ին Թբիլիսիից ստացվել է ժանդարմական վարչության (114 գործ 1884-1907թթ.) եւ դատական պալատի (1171 գործ 1870-1920թթ.) ֆոնդերը: 1940թ. հիշյալ ֆոնդերը համալրվում են համապատասխանաբար 82 եւ 16 գործերով: 1927թ.-ին Հայաստան են ուղարկվում պետական գույքի եւ հողագործության միւստրի լիազոր ներկայացուցչության (1881-1917թթ. 363 գործ), հողագործության եւ պետական ունեցվածքի վարչության (1869-1917թթ. 357 գործ) եւ Իգդիրի մաքսային ուղեկալի (1832-1899թթ. 32 գործ) ֆոնդերը: 1951թ.-ին Թբիլիսիից Երեւան են տեղափոխվում Երեւանի օկրուգային դատարանի (1901-1912թթ. 11 գործ) եւ Երեւանի նահանգային ժանդարմական վարչության (1905-1917թթ. 3 գործ) ֆոնդերը: 1952թ.-ին վրացի մեր գործընկերները, Երեւան են ուղարկում եւս 6 ֆոնդ ընդհանուր քանակությամբ 86 գործ, այդ թվում՝ Հայկական մարզի պետկամուսնների եւ գույքի վարչության 1831-1840թթ. 76 գործ եւ այլն: 1954թ.-ին կենտրոնական պետական արխիվը համալրվում է եւս 9 ֆոնդով (1828-1901թթ.), որոնք վերաբերում են Թիֆլիս-

Կարս երկաթգծի շինարարութեանը՝ 63 գործ, Կողբի աղարդյունահանման վարչութեան գործունեութեանը՝ 159 գործ եւ այլն, ընդհանուր քանակութեամբ 243 գործ,

1956թ.-ին Երեւան է ուղարկվում Երեւանի նահանգի պետական հողերի հսկիչի 1904-1909թթ. վերաբերյալ 3 գործ, իսկ 1958թ.-ին գրաքննադատ Հարություն Սուրխաթեանի անձնական ֆոնդը՝ 231 գործ:

1961թ. սեպտեմբերի 11-ին, ՀԽՍՀ արխիվային վարչութիւնը դիմում է Վրաստանի արխիվագետներին, հայ ժողովրդի պատմութեան վերաբերյալ արխիվային ֆոնդերը Հայաստան ուղարկելու խնդրանքով: Ընդառաջելով հայ արխիվագետների խնդրանքին, վրացի մեր գործընկերները, 1962թ.-ին Երեւան են ուղարկում 31 ֆոնդ եւ 5 այլ ֆոնդերի համալրումներ՝ ընդհանուր քանակութեամբ 7886 գործ, որոնք վերաբերում են Կարսի մարզի, հայ թեմական եկեղեցու, բարեգործական կազմակերպութեանների գործունեութեանը: Ստացված գործերի մեջ առկա էին անձնական ֆոնդեր:

1963թ. Երեւան է տեղափոխվում Էրզրումի մարզի կոմիսարիատի վարչութեան ֆոնդը (1917-1918թթ.) 54 գործ: Վրաստանի պատմութեան կենտրոնական պետական արխիվից վերջին համալրումը ստացվել է 1964թ.-ին, 4 ֆոնդ՝ ընդհանուր քանակութեամբ 149 գործ, որոնք վերաբերում են Լոռու անտառապետութեան, Սարիգամիշ-Կարաուրգան երկաթգծի շինվարչութեան գործունեութեանը եւ այլն:

Վրաստանի կոմկուսի կենտկոմի կուսարխիվից Հայաստան է տեղափոխվում նաեւ Ալեքսանդր Մյասնիկյանի ֆոնդը՝ 32 գործ:

Մեր հաշվարկներով, Վրաստանի պետական արխիվներից Երեւան է տեղափոխվել 10892 գործ, իսկ ոչ պետական կազմակերպութեաններից եւ առանձին անհատներից՝ 11 գործ, 1015 լուսանկար, 24 քարտեզ, 2940 թերթ եւ 17 կգ փաստաթուղթ:

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ. 1925թ. հունվարին, ՀԽՍՀ պետական կենտրոնական արխիվը, դիմում է Աստրախանի հայկական կոմիտեին՝ տեղեկութեաններ հաղորդելու հայկական կոնսիստորիայի արխիվի գոյութեան եւ դրանք Երեւան փոխադրելու հնարավոր ուղիների մասին: Այդ մասին շուտով հանդես եկավ նաեւ «Իզվեստիա» թերթը, որի 1926թ. մարտի 30-ի համարում գրված էր, որ Համամիութենական Կենտգործկոմը որոշել է, որ այդ փաստաթղթերը պետք է հանձնվեն ՀԽՍՀ կենտրոնական արխիվին: Բանակցութեանները տեւեցին մոտ 10 տարի եւ վերջապես, 1934թ.-ին, Աստրախանից Երեւան տեղափոխվեց Կոնսիստորիայի 1793-1919թթ. գործունեութեան ընդգրկող 8181 գործ:

1961թ. սեպտեմբերի 20-ին, ՀԽՍՀ արխիվային վարչութիւնը կրկին դիմում է Աստրախանի մարզի պետական արխիվին՝ Հայաստանին հանձնելու իրենց մոտ պահվող եւ ամբողջովին հայ ժողովրդի պատմութեանը վերաբերող արխիվային ֆոնդերը: Այդ աշխատանքները կազմակերպելու նպատակով հոկտեմբերի 22-31-ը Աստրախան է գործուղվում Հայաստանի պատմութեան կենտրոնական պետական արխիվի բաժնի վարիչ Ս.Ալեքսանյանը: Գործը համապատասխան ընթացք է ստանում եւ 1964թ.-ին Աստրախանից Երեւան է տեղափոխվում եւս 7 ֆոնդ՝ ընդհանուր քանակութեամբ 6113 գործ, այդ թվում՝ Աստրախանի հայկական դատարան՝ 4005 գործ, Հայկական ընկերութեան՝ 33 գործ, Հայկական թեմական եկեղեցի՝ 11 գործ եւ այլն: Հաջորդ համալրումը Աստրախանի պետարխիվից ստացվել է 1972թ.: Ստացվել է 10 գործ, որը վերաբերում է 1794-1799թթ. Հայ համայնքի գործունեութեանը.: Պետական արխիվի ղեկավարութեան հետեւողական աշխատանքի շնորհիվ, 1989թ.-ին Աստրախանի մարզային պետական արխիվից ստացվել է եւս 109 գործ, որոնք հիմնականում Աստրախանի սուրբ Աստվածամայր, սուրբ Պողոս-Պետրոս եւ սուրբ Կույս Կատարինե եկեղեցիների չափաբերական մատյաններն են:

Այսպիսով, 1934-1989թթ. ընթացքում Աստրախանի մարզի պետական արխիվից Երեւան է տեղափոխվել 1793-1919թթ.-ի 14413 գործ:

ՄՈՍԿՎԱՅԻՑ. Ռուսաստանի երկու մայրաքաղաքները՝ Մոսկվան եւ Պետերբուրգը, կարեւորագույն դեր են խաղացել Հայ հասարակական կյանքում: Այստեղ գործել են հայ ժողովրդի նշանավոր գործիչներ, հրատարակվել են թերթեր ու

ամսագրեր, գործել են եկեղեցիներ ու դպրոցներ եւ Հասարակական այլ կազմակերպութիւններ: Եվ բնական է, որ Մոսկվայի եւ Լենինգրադի արխիվներում պահպանվում են մեր ժողովրդի հոգեւոր ժառանգութեան վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, որոնց մի մասը Հայ արխիվիստների ջանքերով այսօր արդեն հանգրվանել են Հայրենիքում: Այսպես, 1952թ. Մոսկվայից Հայաստան է բերվում Հայկական մարզի 1831-1840թթ. գործունեութեան վերաբերյալ 76 գործ եւ Վաղարշապատի գյուղացիական համայնքի վերաբերյալ՝ 1 գործ: 1955թ. ՀիՍՆ պետական արխիվին է հանձնվում 1 գործ՝ Կարսի մարզի վերաբերյալ: Հայաստանի առաջին Հանրապետութեան հռչակումից հետո, Թուսաստանում եւ այլ վայրերում, գործել են Հյուպատոսարաններ եւ ներկայացուցչութիւններ: 1956թ. ՀիՍՆ պատմութեան կենտրոնական պետական արխիվին է հանձնվում Նովոռուսիյսկի Հյուպատոսարանի 1919-1920թթ.-ի գործունեութիւնն արտացոլող 4 գործ, Թուսաստանի հարավում ՀՀ ներկայացուցչութեան 1918-1920թթ.-ի գործունեութեան մասին 6 գործ, Ազրբեջանում ՀՀ ներկայացուցչութեան 1919-1920թթ. գործունեութեան վերաբերյալ 14 գործ եւ եւս 4 գործ տարբեր ֆոնդերից՝ ընդամենը 28 գործ: 1965թ.-ին Նովոռուսիյսկի Հյուպատոսարանի գործունեութեան վերաբերյալ 6 գործ եւ Զանգեզուրի շրջանի Սիսիանի ջոկատի շտաբի 8 գործ մոսկովյան մեր գործընկերները հանձնում են Հայաստանի պատմութեան կենտրոնական պետական արխիվին, 1973թ.-ին Երեւան է տեղափոխվում եւս 1 ֆոնդ՝ 22 գործ, որը վերաբերում է Մուսավաթ կուսակցութեան Երեւանի բաժանմունքի գործունեութեանը: Այսպիսով, 1952-1973թթ.-ին Մոսկվայի պետական արխիվներից, Երեւան է տեղափոխվել ընդամենը 142 գործ՝ Հայ ժողովրդի հոգեւոր ժառանգութեան մի չնչին մասը, եւ դա այն դեպքում, երբ Հայ արխիվագետների ԽՍՀՄ գլխարխիվի կենտրոնական ֆոնդային քարտարանում 1961թ. կատարած ուսումնասիրութիւնները ցույց են տվել, որ Մոսկվայի մարզային պետական արխիվում պահպանվում են ամբողջութեամբ Հայ ժողովրդի պատմութեանը վերաբերող 7 ֆոնդ՝ ընդհանուր քանակութեամբ 6023 գործ¹:

ԼԵՆԻՆ ԳՐԱԴԻՑ. 1966թ.-ին Լենինգրադից Հայաստանի պատմութեան կենտրոնական պետական արխիվին է հանձնվել է 3 ֆոնդ. Հայ լուսավորչական հոգեւոր խորհուրդ՝ 151 գործ, Հայ եկեղեցու ունեցվածքի կառավարման խորհուրդ՝ 1503 գործ, Պետրոգրադի Հայ ուսանողների փոխօգնութեան դրամարկղ՝ 4 գործ, ընդամենը 1658 գործ:

ՆՅՈՒՍԻՍՍԱՅԻՆ ՕՍԵԹԻԱՅԻՑ. 1960թ.-ին ստացվել է Հայաստանի պաշտպանութեան մոսկովյան խորհրդի գործունեութեան վերաբերյալ 1 գործ, իսկ 1974թ.-ին Օրջնիկիձեի Հայկական եկեղեցու գործունեութեան վերաբերյալ՝ 11 գործ եւ փաստաթղթեր Երեւանի եւ Ելիզավետպոլի նահանգների ու Կարսի մարզի մասին (1904-1905թթ.) 5 կգ:

ՌՈՍՏՈՎԻՑ. Մարզի պետական արխիվում պահպանվում են մեծաքանակ արխիվային փաստաթղթեր, որոնք վերաբերում են Նոր-Նախիջևանի Հայ համայնքի գործունեութեան ամենատարբեր ոլորտներին: Ցուցաբերած հետեւողական աշխատանքի շնորհիվ, Հայ արխիվագետներին 1988թ.-ին վերջապես հաջողվում է ստանալ դրանց մի մասը՝ 916 գործ, որոնք վերաբերում են Նոր-Նախիջևանի որբանոցի, դատարանի, ուսումնական Հաստատութիւնների գործունեութեանը: Ստացված փաստաթղթերը վերաբերում են 1856-1919 թվականներին:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՅԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՑ. ՀՀ պետարխիվների Հասցեով ստացվել են 187 գործ, 166 կգ փաստաթուղթ, 269 լուսանկար, 38627 թերթ փաստաթուղթ:

ԲԵԼՈՒՍԻՍԻԱՅԻՑ. Մինսկի պետական արխիվից 1975թ.-ին Երեւան է տեղափոխվել 1889-1894թթ.-ի 4 գործ, որոնք վերաբերում են Երեւանի նահանգի գործունեութեանը, իսկ հետագա տարիներին եւս 118 թերթ փաստաթուղթ:

¹ Տես «Բանբեր Հայաստանի արխիվների» 1977թ. հ.1(47) էջ 122:

ՈՒԿՐԱՒԱՆԱՅԻՑ. 1960թ.-ին Ուկրաինայի պետարխիվից ստացվել է 2 ֆոնդ. Կ. Պոլսի խաղաղության կոնֆերանսի Հայ պատգամավորության մասին՝ 1 գործ (1918թ.) եւ Կովկասյան Հայկական հրատարակչական ընկերության գործունեության մասին՝ 15 գործ (1907-1919թթ.), ընդամենը՝ 16 գործ: Այնուհետեւ, Ուկրաինայից երեւան է տեղափոխվել նաեւ 1 գործ եւ 262 թերթ փաստաթուղթ:

Ա.ԴԻԲԵՋԱՆԻՑ. Հայաստանի պետական կենտրոնական արխիվում նյութեր հավաքելու եւ ֆոնդերն ամբողջականացնելու նպատակով, տարիներ շարունակ, բանակցություններ են վարվել Հայաստանի եւ Ադրբեջանի արխիվների միջեւ, սակայն սպասված արդյունքներն անհամեմատ փոքր են: Երկարատեւ բանակցություններից հետո, 1953թ.-ին Հայաստանի պետական կենտրոնական արխիվին է հանձնվում երեւանի նահանգային վարչության 1878-1913թթ.-ի 62 գործ, իսկ 1956թ.-ին նույն ֆոնդի վերաբերյալ, եւս 1 գործ՝ ընդամենը 63 գործ: Մինչդեռ 1961թ. նախկին ԽՍՀՄ գլխարխիվի կենտրոնական ֆոնդային քարտարանում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ադրբեջանի պետական արխիվում պահպանվում են Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ 10 ֆոնդ՝ 1111 գործ² ընդհանուր քանակով:

Հետագա տարիներին, այնուամենայնիվ, պետական արխիվի փոխտնօրեն տիկին Ա.Միրզոյանին հաջողվում է Ադրբեջանի պատմության ԿՊԱ-ից, 1983թ.-ին, երեւան տեղափոխել 486 գործ, իսկ 1984թ.-ին՝ եւս 770 գործ: Դրանք հիմնականում չափաբերական մատյաններ են, եկեղեցական կալվածքները վարձակալության տալու, առք ու վաճառքի վերաբերյալ փաստաթղթեր եւ այլն: Ադրբեջանի ոչ պետական կազմակերպություններից ստացվել են նաեւ 181 լուսանկար եւ 2136 թերթ փաստաթուղթ:

Այսպիսով, 1953-1985թթ.-ի ընթացքում Հայ արխիվագետների ջանքերով Ադրբեջանից երեւան է տեղափոխվել Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ 1319 գործ, 181 լուսանկար եւ 2136 թերթ փաստաթուղթ:

ՄՈՒԴՈՎԻԱՅԻՑ. 1961թ.-ի սեպտեմբերի 20-ին Հայաստանի եւ Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ արխիվային ֆոնդերը Հայաստան առաքելու խնդրանքով, ՀԽՍՀ արխիվային վարչությունը դիմում է մոլդովացի մեր գործընկերներին:

Համալրումն ստացվում է 1964թ.-ին ընդհանուր քանակությամբ 1848-1916թթ.-ի 75 գործ, այդ թվում՝ Քիշինեւի թեմական դպրոց՝ 1 գործ, Գրիգորիոսյուլի հոգեւոր վարչություն՝ 1 գործ, Նախիջևանի եւ Բեսարաբիայի կոնսիստորիա՝ 73 գործ: Հետագա տարիներին Մոլդովայից ստացվել է նաեւ 1 գործ եւ 5 կգ փաստաթուղթ:

ԷՍՏՈՆԻԱՅԻՑ. 1964թ.-ին ստացվել է 1 գործ՝ Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի գործունեության վերաբերյալ:

Այսպիսով, 1924-1989թթ.-ի ընթացքում Հայաստանի պատմության կենտրոնական պետական արխիվը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների պետական արխիվներից եւ ոչ պետական կազմակերպություններից որպէս Համալրում ստացել է 29616 գործ եւ 193 կգ ցրոն փաստաթուղթ, 24 քարտեզ, 1465 լուսանկար, 44083 թերթ փաստաթուղթ:

Ձգալի աշխատանք էր տարվում նաեւ Հայ գաղթօջախների հասարակական կազմակերպությունների, հաստատությունների ու նշանավոր հասարակական գործիչների մոտ եղած արխիվային փաստաթղթերը Մայր Հայրենիքի պետական արխիվներ տեղափոխելու ուղղությամբ: Այդ նպատակով, 1963թ.-ի հոկտեմբերին, ՀԽՍՀ ՊԿՊԱ-ի տնօրեն Գ. Հարությունյանը՝ նամակով դիմում է սփյուռքահայ շուրջ 260 գործիչների, ապա նամակներ հղում նյութ-Յորքում լույս տեսնող «Նոր աշխարհ» շաբաթաթերթին եւ «Լրաբեր» թերթին, կոչ անելով մեր Հայրենակիցներին՝ իրենց մոտ պահվող գիտապատմական արժեք ունեցող փաստաթղթերը հանձնել Մայր Հայրենիքի արխիվներին:

² Տես «Բանբեր Հայաստանի արխիվների» 1977թ. հ.1(47) էջ 122:

Հիշյալ միջոցառումների արդյունքները երկար սպասեցնել չտվեցին: Շուտով, ՀեՍՀ ՊԿՊԱ-ի հասցեով, աշխարհի տարբեր երկրներից՝ անհատ անձանց ու կազմակերպությունների միջոցով, սկսեցին ստացվել արխիվային փաստաթղթեր, որոնք խնամքով մշակվում, ֆոնդավորվում ու վերցվում են հաշվառման:

1957-2000թթ.-ի ընթացքում, արտերկրից եւ սփյուռքահայությունից հետ մշակութային կապերի կոմիտեի փաստաթղթեր ստացվել են 335 անգամ, ընդհանուր քանակութամբ 870 գործ, 49866 թերթ փաստաթուղթ, 32 լուսանկար, 1079 կգ փաստաթուղթ, 2437 կադր: Ստորեւ ներկայացվում է այն երկրների եւ կազմակերպությունների շրջանակը, որտեղից ստացվել են համալրվող փաստաթղթերը:

Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեից՝ 798 գործ, 349կգ փաստաթուղթ, 1 լուսանկար եւ 24893 թերթ փաստաթուղթ

ԱՄՆ-ից՝ 28 գործ, 502կգ փաստաթուղթ, 2 լուսանկար, 11162 թերթ փաստաթուղթ

Ֆրանսիայից՝ 22 գործ, 195կգ փաստաթուղթ, 16 լուսանկար, 2040 թերթ փաստաթուղթ

Ավստրալիայից՝ 0,1կգ եւ 28 թերթ փաստաթուղթ

Ավստրիայից՝ 8 լուսանկար, - 512 թերթ փաստաթուղթ

Արգենտինայից՝ 229 թերթ փաստաթուղթ

ԳՖՀ-ից՝ 2766 թերթ փաստաթուղթ

Անգլիայից՝ 0,5կգ եւ 15 թերթ փաստաթուղթ

Բրազիլիայից՝ 1 գործ

Բուլղարիայից՝ 5 գործ, 1,2կգ եւ 3697 թերթ փաստաթուղթ, 4 լուսանկար, 2437

կադր

Եգիպտոսից՝ 14,6կգ եւ 5 թերթ փաստաթուղթ

Երուսաղեմից՝ 4 թերթ փաստաթուղթ

Իրանից՝ 832 թերթ փաստաթուղթ

Իտալիայից՝ 480 թերթ փաստաթուղթ

Լիբանանից՝ 6 գործ, 2,0կգ եւ 799 թերթ փաստաթուղթ, 1 լուսանկար

Կանադայից՝ 2,5 կգ փաստաթուղթ

Հոլանդիայից՝ 165 թերթ փաստաթուղթ

Հունգարիայից՝ 0,75 կգ փաստաթուղթ

Թուրքիայից՝ 1 գործ, 2,2 կգ փաստաթուղթ

Հնդկաստանից՝ 1 գործ

Շվեյցարիայից՝ 6 գործ

Ռումինիայից՝ 1 գործ

Սիրիայից՝ 1 գործ, 3,5կգ եւ 1946 թերթ փաստաթուղթ

Ուրուգվայից՝ 175 թերթ փաստաթուղթ

Ստացված փաստաթղթերն ամենատարբեր բնույթի են: Դրանց մի մասը անձնական ծագման փաստաթղթեր են, մյուս մասը՝ արտացոլում են հայ գաղթօջախների կյանքը: Փաստաթղթերի մի սովոր խումբ էլ վերաբերում է ցեղասպանության պատմությանը, հայոց ազգային խորհրդի գործունեությանը, Փարիզի հաշտության կոնֆերանսին մասնակցած հայկական ազգային պատվիրակության գործունեությանը եւ այլն: Դրանք ունեն գիտական մեծ նշանակություն եւ լայնորեն օգտագործվում են ուսումնասիրողների կողմից հայ ժողովրդի պատմության այս կամ այն դրվագի լուսաբանման գործում:

Սոս Մարուքյան
ՀԱԱ տնօրենի տեղակալ

**ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՆ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Չնայած Հայրենական մեծ պատերազմի վերաբերյալ ընդհանուր առմամբ ստեղծվել է Հարուստ եւ Հսկայածավալ գրականություն, սակայն խորհրդահայ մշակույթի նոր բնագավառներից մեկի՝ վավերագրական կինեմատոգրաֆիստների գործունեությունը Հարցը դեռեւս առանձին ուսումնասիրություն չի ենթարկվել մեր պատմագիտության կողմից: Այդ իմաստով այս հրապարակումը մի համեստ փորձ է մասամբ լրացնելու այդ բացը: Սկսված պատերազմի պատճառով, խորհրդային միություն մյուս կինոստուդիաների օրինակով, Երեւանի կինոստուդիան եւս, իր ծրագրերում արմատական փոփոխություն կատարեց: Ինչպես խորհրդային, այնպես էլ խորհրդահայ վավերագրողների առջև մեծ խնդիր դրվեց: Կոնկրետ փաստերով ցույց տալ խորհրդային բանակի մարտիկների անօրինակ սխրանքը ռազմաճակատներում, թշնամու թիկունքում պարտիզանների ծավալած ակտիվ գործողությունները, թիկունքի բանվորների, կոլտնտեսականների, մտավորականության անձնուրաց աշխատանքը: Դա նշանակում էր «...ամբողջ աշխարհին պատմել խորհրդային ժողովրդի քաջագործությունների մասին»: Ինչպես ԽՍՀՄ մյուս հանրապետությունների, այնպես էլ Հայ կինոյի բազմաթիվ աշխատողներ պատերազմի առաջին օրերին մեկնեցին ռազմաճակատ: Դա պարզ երեւում է Անդրկովկասյան օկրուգի քաղաքական պրոպագանդայի բաժնի պետ Սալակոյին ուղղված Երեւանի կինոստուդիայի ղեկավարության ղեկուցադրից, որտեղ մասնավորապես ասված է. «Կից ուղարկում ենք նկարահանող խմբերի ցուցակը ռազմական գործողությունները նկարահանելու համար: Երեւանի կինոստուդիան խնդրում է նկատի ունենալ նշված ընկերներին եւ տալ Ձեր կարգադրությունը: Դրանք են Շահումյան Բաբկեն, Գ.Բալասանյան, Գ.Սանամյան, Ի.Եսայան, Բ.Մուրադյան, Ա.Հայ-Արտյան, Ն.Սիմոնյան, Ի.Դիլդարյան, Է.Քարամյան, Ս.Գեւորգյան, Գ.Ասլանյան»²: Խորհրդային կինոօպերատորների անձնագոհություն եւ հայրենասիրություն վառ օրինակ է Երեւանի կինոստուդիայի օպերատոր Իվան Դիլդարյանի ղեկավարած նկարահանող խմբի կատարած նկարահանումները Ղրիմի ռազմաճակատում, որը չի վրիպել ԽՍՀՄ կինոստուդիայի գլխավոր վարչության ուղարկությունից: Դա է վկայում ԽՍՀՄ կինոխորոնիկայի գլխավոր վարչության պետի տեղակալ Կոցմանի եւ խմբագիր Պոպովի՝ 1942թ. Երեւանի կինոստուդիայի սկզբնական կուսակցական կազմակերպությունը հասցեագրած շնորհակալական նամակը, որտեղ մասնավորապես ասված է. «Շտապ թողարկվող հերթական հանդեսում տեղ է գտել կինոօպերատոր Դիլդարյանի նկարահանած Ջանտար եւ Տրաֆեյ գյուղերի եւ գերիների կադրերը, որոնք անկասկած իրենցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում, հետեւաբար եւ արժեք: Այդ կադրերում կա ամենազլխավորը, մեր գործերի հարվածների հետքերը՝ հասցված թշնամուն, ռազմաճակատային միջավայրից մի դրվագ: Այդ ժապավենն առանձին հանդեսի համար բավարար չի, բայց այն իր բովանդակությամբ տարբերվում է Ղրիմի ռազմաճակատում նկարահանած մյուս նյութերից: Նկարահանված ժապավեններում կան մի շարք հետաքրքիր

¹ С. Гинзбург, История Советского кино, М., 1959, с. 9.

² Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ /այսուհետեւ ՀԱԱ./ ֆ. 704, ց. 3, գ. 66, թ. 6-7:

տեսարաններ, որոնք պատկերում են մարտի դաշտը, թշնամու կողմից թողնված գեների տեսակները, ֆաշիստ զինվորների դիրակներ եւ շենքերի փլատակներ: Այդ կադրերում լավ է տրված ռազմաճակատի ստույգ պատկերը: Ափսոս, որ աշխատանքը դադարեցվել է եւ նկարահանումները մինչեւ վերջ չեն կատարվել: Ղրիմի ռազմաճակատի կինոօպերատորները պետք է տան այնպիսի ժապավեններ, ինչպիսիք նկարահանել է կինոօպերատոր Իվան Դիրլարյանը:

Головной, вслед за штабом бригады и штабом полка, шла наша 3-я сотня. От нее выслан вперед взвод казаков под моим командованием, чтобы “расчищать дорогу” для проходящих войск от 200-тысячной массы беженцев. И каких только ужасов, каких сцен, каких всевозможных трагедий, слез, плача, горестных рыданий мы не повидали тогда там! Жуткий и незабываемый ужас и сострадание чужому горю, которого мы тогда не знали, мы ощутили только потом на себе, после революции...

Беженцы все шли и шли, не останавливаясь и ночью, к русской спасительной границе.

Конец июля. В долине Аббага нескошенная трава, сильно побурелая. Два конных полка казаков с конной батареей, свыше 2000 людей и лошадей, широко расположились биваком. К ночи на нем сплошные костры. Фырканье коней, гомон и даже песни казаков. Словно не бивак отступающих войск, а новый победный марш.

Мы, офицеры, собрались у костра, делимся впечатлениями о последних днях и недоумеваем — почему так спешно отступаем? По слухам, Халил-бей прорвался до самой Алашкертской долины. Ну и хорошо: если он прорвался так

глубоко, то прямой смысл нашей свежей и первоочередной бригаде через Арджиси ударить во фланг и тыл его войскам! Так рассуждали мы.

- Хорунжего Елисеева к командиру полка! – слышим мы возглас полковника Мигузова, вышедшего из своей палатки.

- Ну, Федор Иванович, намыливаетесь... Наверно, пошлет в ночной разъезд по Бегри-Калинскому ущелью назад, - пошутил 50-летний есаул³² Калугин, могокан полка, самый старший среди нас, кавказцев.

- Спешно иду к палатке командира полка. Он просит зайти с ним внутрь и, к моему удивлению, совершенно спокойно, как никогда, по-отечески говорит мне:

- Вот что, хорунжий... Из штаба бригады получен приказ: остановиться здесь на дневку. От полка завтра выслать с рассветом три разъезда. Одному из них – проскользнуть назад по Бегри-Калинскому ущелью и узнать, где турки. Если ущелье уже занято, то конечно, разъезду не проскользнуть ... Вы с десятью казаками обойдите ущелье с запада и лишь до половины... осторожно осмотритесь и, если обнаружите турок, спуститесь в него и вернитесь. А проходить его все не надо, - сказал и выругался по адресу высших штабов. Этим он показал, что полностью переживал то, что и его офицеры полка.

Разъезд прошел так, как приказал Мигузов. С высоких скалистых берегов глубокого ущелья, насколько хватало глаз на юг и на север, по нему частыми пятнами лежали трупы людей. Разъезд спустился вниз. Картина еще более страшная, чем она представлялась сверху. Женщины и дети, одиночками и маленькими группами, видимо семьями, устлали весь путь по ущелью. Изредка попадались мужчины-армяне у своих арб, без буйволов и разграбленных. Все взрослые – с перерезанными горлами, мужчины – со связанными назад руками, дети убиты в голову острыми молотками. Все трупы подожджены. Молодые армянки изнасилованы и застыли, умерли в позорных позах с раздвинутыми ногами и скрюченными коленями, с оголенными от юбок телами до самого пояса... Насилуя женщину, всякий курд, видимо, одновременно перерезал своей жертве горло. Картина была страшная и стыдная...

В ущелье было тихо-тихо. Молчали и казаки. И только птички, перелетая с одного берега ущелья на другой, чирикали как ни в чем не бывало, словно говоря: “А где же слава, ваша воинская слава?!”

В “Тифлисской листке” было сказано, что всех армян из Ванского района ушло в Россию около 500 тысяч человек, считая женщин и детей. Сколько же было вырезано – газета не сказала.

Из штаба бригады сообщено, что войска Халил-бея отброшены назад, по нашей бригаде приказано все же идти к Баязету. И полки, огорченные столь странным и поспешным своим маршем, совершенно не торопясь, ленивым шагом двинулись на север по знакомой долине Аббага, направляясь к Тапаризскому перевалу. Мелкие конные группы курдов на возвышенностях голых кряжей с персидской стороны созерцали наше движение, не открывая по казакам огня...

На душе было очень грустно. Так тяжело, с боями прошли большой район Турции – и теперь бесславно и ... без единого выстрела оставляем его.

Спустившись с перевала, мы вошли в так знакомую нам Баязетскую долину... /с. 128-130/

Печальная история на склонах Большого Арарата

Закаспийской казачьей бригаде приказано расположится в селе Диза, что южнее Баязета, до нового распоряжения. Настроение в полках было тоскливое,

так как мы находились в своем “исходном положении”, которое было перед Ванской операцией весной этого же года. Психологически войска любят “идти вперед” и не любят возвращаться на старые пепелища. Теперь же мы находились на абсолютно разоренной территории. Мы заскучали.

Последние армянские беженцы еще тянулись к Чингильскому перевалу³³, чтобы попасть в Россию. У подножия перевала на них напали араратские курды, немногих убили, пограбили. Убили и двух русских солдат. Командование распорядилось наказать курдов. Для этого были назначены две сотни нашего полка — 3-я есаула Лытикова и 6-я подьесаула Бабаева — и конная сотня пограничников ротмистра Королькова /кубанский казак/. Всем отрядом поручено командовать полковнику Генерального штаба Бежамбекову, родом армянину. 23 августа отряд сосредоточился у западных отрогов Большого Арарата и двинулся... /с. 132/

Под стенами Эрзерума

Взятие крепости Эрзерума принадлежит чести 1-го Кавказского армейского корпуса генерала Калитина и 2-го Туркестанского генерала Пржевальского. Оба генерала — казаки. Главное руководство операцией находилось непосредственно в руках командующего Кавказской армией генерала Юденича.../с. 157/

2 февраля 1916 года взят форт Кара — Гюбек...³⁴

Мы, конница, горим желанием стремительно рвануться вперед, к магическому для нас Эрзеруму.../с. 159/

1-й Кавказский корпус действовал прямо на запад от Эрзерума... Наш полк вошел в Аш — кала...

Стены Эрзерума остались позади нас. /с. 162/

Конная атака Мамахатун³⁵ 1-м Кавказским полком

28 июня 1916 года 39-я пехотная дивизия вновь втянулась в жаркий бой с турками...

В своей безумной и бешеной скачке полк вышел на шоссе на дорогу Эрзерум — Мамахатун и устремился к городу.

Город Мамахатун ... Это был не городок и даже не село в русском понятии. Это был маленький хуторок, раскинутый в небольшой котловине, окомленной с трех сторон горными возвышенностями. Четвертая сторона, южная, на нет сходилась к горной речке, теперь почти высохшей. Ширина этого городка в поперечнике — не более полуверсты. В нем — небольшие, дикого камня постройки без определенных улиц. Невысокая мечеть. Кругом не дерева, ни кустика. И только большое, длинное и высокое здание военного интендантства как бы говорило постороннему глазу, что это есть город и военно-административный центр.

Городок лежит к северу от шоссе. К югу, параллельно речке, круто поднимается кряж гор, занятый турками.

В Эрзинджане³⁶...

Бригада двинулась к Эрзинджану... Эрзинджан весь в садах. Прямые улицы. Европейские постройки. Масса фруктов и овощей — полное изобилие плодов земных...

Через несколько дней приказано от нашего полка выслать две сотни казаков для занятия городка Кемах³⁷, в 40 верстах юго-западнее Эрзинджана, на левом берегу Кара-су³⁸. Выступили 1-я и 4-я сотни под начальством есаула Калугина. Сотни легко выбили турок и заняли Кемах...

Это самый дальний западный пункт, где были русские войска в Турции/с. 222-225/

Ծանոթություններ

- ¹ Елисеев Ф.И., Казаки на Кавказском фронте 1914-1917, М., 2001, с. 4.
- ² Նույն տեղում, էջ 62, 65-66, 90, 91, 93-95, 108, 129-130, 139: Օսմանյան կայսրության մասին Ֆ.Ելիսեևը հաճախ գործածում է «կիսավայրենի թուրքիա» արտահայտությունը (տե՛ս նույն տեղում, էջ 96, 114):
- ³ Նույն տեղում, էջ 108-109:
- ⁴ Նույն տեղում, էջ 86:
- ⁵ Նույն տեղում, էջ 94:
- ⁶ Նույն տեղում, էջ 102:
- ⁷ Նույն տեղում, էջ 129:
- ⁸ Նույն տեղում:
- ⁹ Նույն տեղում, էջ 76, 112:
- ¹⁰ Նույն տեղում, էջ 94:
- ¹¹ Պատերազմի սկսվելուց հետո Միջին Ասիայից Կովկասյան առաջին գունդը, որի կազմում ծառայում էր եւ Ֆ.Ելիսեևը, 1914 թ. օգոստոսին ժամանում է Թիֆլիս, ապա երկաթուղով Ալեքսանդրապոլի վրայով ուղևորվում է Շահաբախ: Ծանապարհին զինվորները տեսնում են Արարատը: Ապա զորագունդն անցնում է պարսկական սահմանը եւ մարտերի մեջ մտնում այնտեղ ներխուժած թուրքերի հետ: Հոկտեմբերի վերջին կազակները Գյուլըջի Բուլաղ սահմանային կետով մտնում են Արեւմտյան Հայաստան եւ շարժվում դեպի Բայազետ, Դիազին եւ Ալաշկերտի հովիտ:
- ¹² Պեսք է կարգալ - ԿՊՕ ՅՊՕ ? Ինչպես ներկա, այնպես էլ այլ դեպքերում բնագրում եղած խոսակցական ու բարբառային սխալները չեն ուղղված:
- ¹³ Խորունժին կազակական զորքերում ամենացածր սպայական աստիճանն է:
- ¹⁴ Բայազետի գավառում Ազնոտ անունով գյուղ չկա (տե՛ս Մելքոնյան Ա., էրզրում, Ե., 1994, էջ 94-102, 165): Ամենայն հավանականությամբ խոսքը նշանավոր հինավուրց Արծափ գյուղի մասին է, որն ընկած է Ելիսեևի կողմից նկարագրված տարածքում՝ Չինգլիի լեռնանցքից Բայազետ տանող ճանապարհի վրա: Հավանաբար հեղինակը կամ քարտեզի վրա սխալ է կարդացել գյուղի անունը, կամ հետազայում՝ 1916 թ. ամռանը, երբ սկսել է գրի առնել իր հուշերը, այլ տարբերակով է մտապահել այդ տեղանունը: Պատերազմի նախօրյակին Արծափն ուներ ավելի քան 120 տուն հայ բնակիչ:
- ¹⁵ Պլաստուն – Կուբանի եւ սեւծովյան կազակական զորքերում այսպես էին կոչում պահակային եւ հետախուզական ծառայություն կատարող կազակներին:
- ¹⁶ Կարաբլիխան, որ հայտնի է նաեւ Նահին անունով, ընկած է Ալաշկերտի դաշտում, Արածանիի աջ ափին: Այժմ՝ Կարաբլխոս:
- ¹⁷ Գրականության մեջ «Արարատյան» ավելի հաճախակի անվանվել է ոչ թե Վանը գրոհող ամբողջ ռուսական զորախումբը, այլ եւ Հայոց Ազգային բյուրոյի որոշմամբ 1915 թ. ապրիլին 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ նոր ձեւավորված 5-րդ զորագնդերից ստեղծված զորամասը՝ Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) ընդհանուր հրամանատարությամբ:
- ¹⁸ Դիզա կամ Տիզա գյուղը 19-րդ դարի սկզբին Հայաբնակ էր (Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 165): Վերոհիշյալ դեպքերի նախօրեին քրդաբնակ էր:
- ¹⁹ Դրո - Դրաստամատ Կանայան (1883-1956), նշանավոր ռազմական եւ քաղաքական գործիչ:
- ²⁰ Համազասպ - Համազասպ Սրվանձտյանց (1873-1921), ազատագրական շարժման ճանաչված գործիչ:
- ²¹ Քեռի - Արշակ Գավաֆյան (1858-1916), ազատագրական պայքարի նշանավոր գործիչ: Զոհվել է 1916 թ. մայիսին Ռեւանդուզի ճակատամարտում:
- ²² Ռազմավարական նշանակություն ունեցող Թափարիզի լեռնանցքը գտնվում է Այրարատ աշխարհը Վասպուրականից բաժանող Ծաղկանց լեռների եւ Թոնդուրեկ լեռնագագաթի միջեւ:
- ²³ Սոուկ Սուն (Սաունաղբյուր, Սաունաղբյուր) Վանի նահանգի Բերկրիի գավառակի Հայկական գյուղերից էր: Ընկած էր Համանուն Սաուկ Սու գետակի ափին, Բերկրի գյուղաքաղաքից 36 կմ հեռավորության վրա, Աբաղայի դաշտում: Մինչեւ ռուսական զորքերի մուտքը բնակիչների մի մասին կոտորել էին քրդերը, մյուսները՝ հեռացել էին լեռները:
- ²⁴ Կովկասյան լեռնականները կուենակ էին անվանում իրենց մտերմագույն մարդկանց, որոնց հետ հաստատում էին ամուր բարեկամություն:

²⁵ Վանի ինքնապաշտպաններին օգնութեան հասնելու նպատակով Արաղայի դաշտ գեներալ Նիկոլաեի գործախուժմամբ եւ հայկական կամավորական ջոկատները մուտք գործեցին 1915 թ. ապրիլի վերջին:

²⁶ Բերկրի կայեն (Բերկրի բերդ) Վասպուրականի Առբերանի գավառի Հինավուրց հայկական բնակավայրերից է: Ընկած է Վանա լճից հյուսիս-արեւելք, Բերկրի գետի ստորին հոսանքի շրջանում, նրա աջ ափին: 20-րդ դարի սկզբին ունեւր ավելի քան երկու հազար հայ բնակիչ, որոնց մեծ մասը կոտորվեց Մեծ եղեռնի օրերին:

²⁷ Ելիսեեի նկարագրած վանքը Սբ. Ստեփանոսն է՝ Բերկրի գյուղաքաղաքից մոտ 5 կմ հարավ-արեւմուտք, Բերկրի գետի աջ կողմում, լեռան վրա: Ո՞րքան երկու եկեղեցի՝ ս.Աստվածածին եւ ս. Ստեփանոս անուներով:

²⁸ Զանկը Վանի նահանգի թիմար գավառակի կենտրոնն էր: Ընկած էր Վան քաղաքից 37 կմ հյուսիս, Վանա լճի ափին, Լիմ կղզու դիմաց: 20-րդ դարի սկզբին զուտ հայաբնակ էր եւ ունեւր 160 ծուխ բնակիչ:

²⁹ Այս գյուղը, որ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում, բերված է ամբողջութեամբ, առանց կրճատումների:

³⁰ Խոսքը Վանի նշանավոր կենտրոնական ինչփողան փողոցի մասին է:

³¹ Սիկոնիսը կամ Սիկինիսը Վանի նահանգի Շատախի գավառակի գյուղերից էր, Շատախ գյուղաքաղաքից մոտ 38 կմ հարավ-արեւելք, Տիգրիսի ավազանի Շամանիս գետակի ձախ կողմում: Պատերազմի նախօրյակին ունեւր մոտ 50 տուն հայ բնակիչ եւ գործող եկեղեցի:

³² Եսաուլը կազակական զորքերում հետեւակի կապիտանին հավասարազոր սպան է:

³³ Զինվորի լեռնանցքն ընկած է Մեծ Արարատի եւ հայկական Պար լեռնաշղթայի միջեւ: Այն կապում է Արարատյան դաշտը Բայազետի գավառի՝ պատմական Կոգովիտի հետ:

³⁴ Էրզրումից հյուսիս՝ դեպի Թորթում տանող ճանապարհի վրա ընկած ինչպէս Կարակոյսեկ կամ Գարակոյսեկ, այնպէս էլ Կարնո դաշտի մյուս հայկական գյուղերի բնակիչները, 1915 թ. մայիս-հուլիս ամիսների ընթացքում թուրքական զորքերի կողմից տեղահանվել էին դեպի Դերջան, Երզնկա ու այլ ուղղութիւններով եւ հիմնականում կոտորվել ճանապարհին: Հայաթափված այդպիսի գյուղերից Ելիսեեը հիշատակում է նաեւ Կարարզը, Աշկալան ու Իրիջան (տե՛ս էջ 160, 162): Կարարզը (կար Արծն) զբաղեցնում էր երբեմնի միջնադարյան վաճառաշահ Արծն քաղաքի տարածքի մի մասը:

³⁵ Մամախաթունը հայկական Դերջանն է, որը ուսուների կողմից գրավման ժամանակ՝ 1916 թ. փետրվար-մարտին, լիովին հայաթափված էր:

³⁶ Էրզնիջանը հայկական Երզնկայի, հնագույն Երիզա ավանի անվան աղավաղված տարբերակն է: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Երզնկան Էրզրումի նահանգի գավառային կենտրոններից էր: Հայերի մեծ մասը տեղահանվեց եւ կոտորվեց Կամախի կիրճում 1915 թ. հունիսին: Ռուսական զորքերն այն գրավեցին 1916 թ. հուլիսին, երբ այնտեղ գրեթէ հայ չէր մնացել:

³⁷ Կեմախը հայկական Կամախն է՝ պատմական Դարանաղյայց Անի-Կամախ բնակավայրը: Պատերազմի նախօրյակին այն Երզնկայի գավառի Կամախ գավառակի կենտրոնն էր: Ինչպէս կամախցիների, այնպէս էլ Էրզրումցիների տարագրիչների մեծ մասը նույնպէս կոտորվեց Երզնկայի եւ Կամախի միջեւ ընկած Կամախի կիրճում՝ Կամախ-բողաղիում:

³⁸ Կարա-սուն Արեւմտյան Եփրատն է:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՒ ԼԻՒԱՆԱՆՅԱՆ 1975-1987ԹԹ. ՈՉ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ (ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Ներածութիւն

Լիբանանյան պարբերական մամուլը, ինչպէս յուրաքանչյուր երկրի մամուլ, հայելին է երկրի հասարակութեան, եւ արտացոլում է հասարակական կարծիքը, միաժամանակ ձեւավորելով այդ կարծիքը եւ հասարակապետի ազդեցիկ նրա վրա:

Մեծ եղեռնից մազապուրծ ու հատկապէս Կիլիկիայից 1920-1922թթ. արտաքսվելուց հետո, հայ բնակչութեան մի զգալի մասը ապաստան գտավ արաբական Արեւելքի երկրներում, մասնավորաբար Սիրիայում եւ Լիբանանում: Այսօր, Մերձավոր

Արեւելքի արաբական երկրներում ապրում է շուրջ 150 Հազար Հայ, իսկ քննարկվող ժամանակաշրջանում ապրել է ավելի քան 250 Հազարը: Մյուս կողմից, Հայաստանն աշխարհագրականորեն անհասի մոտիկ է արաբական աշխարհին: Հետեւաբար, կարեւոր նշանակութիւն ունի Հայկական Հարցի հոլթիւնն ու Հայկական ազատագրական պայքարի 1975թ. ծնունդ առած ժամանակակից փուլի բովանդակութեան ծանոթացումը Հյուսիսայլ արաբ ժողովուրդներին: Հայերի կողմից այս ուղղութեամբ կատարված աշխատանքները, հակառակ որոշ դրական քայլերի, դժբախտաբար մնում են անբավարար առ այսօր: Հակառակ վերջին երեսուն տարիներին արաբական աշխարհում լույս տեսած արաբերեն եւ այլալեզու բազմաթիւ հրատարակութիւններ (գրքեր, գրքուկներ, պլետներ, մամուլի հոդվածներ եւ այլն), Սիրիայի, Լիբանանի եւ առհասարակ արաբական աշխարհի միջին քաղաքացին շատ բան չգիտէ Հայոց, առավել եւս՝ Հայկական Հարցի մասին: Եվ եթէ նկատի ունենանք, որ Թուրքիան եւ նրա դիվանագիտական ներկայացուցչութիւններն արաբական աշխարհում էլ նպատակասլաց աշխատանք են կատարում Հայոց պատմութիւնը խեղաթելու հարցում, էլ՝ ավելի հասկանալի է դառնում հատկապէս արաբալեզու հրատարակութիւնների, մասնավորաբար պարբերական մամուլի հրատարակումների նշանակութիւնը՝ նման նկրտումներին հակահարված տալու հույժ կարեւոր աշխատանքում:

Արաբական պարբերական մամուլում լիբանանյան մամուլն առաջնակարգ դիրք է գրավում: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ ավելի քան 125 տարվա մամուլի ավանդութիւնները, Լիբանանի աշխարհագրական դիրքը որպէս կամուրջ Ասիայի, Եվրոպայի եւ Աֆրիկայի միջեւ, տեխնիկական գերժամանակակից միջոցների օգտագործումը, բնակչութեան կրթական բարձր մակարդակը, այստեղից էլ՝ որակյալ խմբագիրների ու լրագրողների, ինչպէս եւ ընթերցողների առկայութիւնը, եւ վերջապէս, Լիբանանի պետական ժողովրդավարական կառուցվածքը: Այս վերջին գործոնի շնորհիւ, Լիբանանում մամուլն ունի բավականին ընդարձակ ազատութիւն, որով եւ լայն հնարավորութիւններ՝ ամենատարբեր հարցերի մասին անկաշկանդ արտահայտվելու եւ ազդելու հասարակական գործընթացների վրա:

Այս ուսումնասիրութիւնը Հայկական Հարցի մասին լիբանանյան ոչ Հայկական մամուլի ըմբռնումը ներկայացնելու առաջին փորձն է: Նյութերը հիմնականում հավաքել ենք 1987թ. ամռանը: Հավաքման ընթացքում բախվեցինք մի շարք լուրջ դժվարութիւնների, որոնք անկասկած իրենց հետքը թողեցին ուսումնասիրութեան որակի վրա: Հակառակ մեր ջանքերի, չկարողացանք գտնել լիբանանյան Հայկական եւ ոչ Հայկական գոնե մեկ պարբերականի արխիւ կամ գրադարան, որտեղ քիչ թե շատ հավաքված լինէին տվյալ ուսումնասիրութեան հետ առնչվող նյութերը: Եվ եթէ նկատի ունենանք, որ Հայկական Հարցին անդրադարձած մի քանի լիբանանյան պարբերականներ կարճ կյանք են ունեցել եւ/կամ ոմանց տպաքանակը շատ փոքր է եղել, ապա պարզ կդառնա, որ սույն հետազոտութիւնը հեռու է Հայկական Հարցի առնչութեամբ լիբանանյան 1975-1987թթ. ոչ Հայկական մամուլի ամբողջական տեսութիւնը տալու հավանութիւնից: Մեր աշխատանքն այս ուղղութեամբ մի փորձ է պարզապէս:

Հիմնական թեմային անցնելուց առաջ, հարկավոր ենք համարում հետեւյալ նշումները կատարել.

1. «Լիբանանյան մամուլ» ասելով հասկացել ենք լիբանանյան այն պարբերականները, որոնք լույս են տեսել թե՛ Լիբանանի տարածքում եւ թե՛ երկրի սահմաններից դուրս: Արդարեւ, 1975թ. ապրիլին սկսած քաղաքացիական պատերազմի պատճառով, մի շարք լիբանանյան պարբերականներ այլ երկրներ փոխադրվեցին, առանց սակայն դադարելու լիբանանյան մամուլի անբաժան մասը լինելուց: Այսպէս, արաբական աշխարհում մեծ կշիռ ունեցող «ալ-Հառազ» շաբաթաթերթը տվյալ տարիներին լույս է տեսել Լոնդոնում, «ալ-Մուստակբալ» եւ «ալ-Նահար ալ-արաբի ուալ-դուալի» շաբաթաթերթերը՝ Փարիզում, եւ այլն:

2. Տվյալ տարիներին, Լիբանանում լույս է տեսել շուրջ 200 անուն պարբերական, որոնցից ոչ բոլորն են լիբանանյան համարվում: Լիբանանում հրատարակված պարբերականների մի զգալի տոկոսը կազմում են ոչ լիբանանյան արաբական (հատկապես պաղեստինյան) պարբերականները: Դրանք չեն ընդգրկված այս ուսումնասիրության մեջ:
3. Ինչո՞ւ ընտրել ենք 1975-1987թթ. ժամանակաշրջանը: Բանն այն է, որ Մեծ եղեռնի 60-ամյակը նշելուն զուգահեռ, Լիբանանում ծնունդ առան եւ արտերկրի մյուս գաղթօջախներում տարածվեցին մի քանի հայկական կազմակերպություններ (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ, Հայկական ցեղասպանության արգարության մարտիկներ, Հայկական նոր դիմադրություն, Հայ հեղափոխական բանակ, եւ այլն), որոնք զինյալ գործողություններով համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրեցին Հայկական անլուծելի հարցի վրա: Հասկանալի է, որ այդ կազմակերպությունների օրրանում՝ Լիբանանում, տեղացի հասարակությունն անմասն չէր մնալու այդ հետաքրքրությունից, որն իր արտացոլումը գտավ նաեւ տեղական մամուլում:
4. Մեր ուսումնասիրության ծիրից դուրս են լիբանանահայ մամուլում տվյալ հարցի շուրջ լույս տեսած հրապարակումները, որոնք մեծածավալ են: Այն առանձին ուսումնասիրության թեմա է: 1975-1987թթ. ժամանակահատվածում - բացի տեղական նշանակության մի քանի ասորատառ պարբերականներից - Լիբանանում գործել է Հայաստառ, արաբատառ մամուլ եւ լույս են տեսել անգլերեն ու ֆրանսերեն պարբերականներ: Անգլերեն պարբերականներն են «դը Դեյլի սթար» օրաթերթն ու «Մանդել մոունինգ» շաբաթաթերթը, ֆրանսերեններն են «լ'Օրիան-լը ժուր» օրաթերթը, «Մագադեն» շաբաթաթերթը եւ «լա Բեվյու դյու Լիբան» ամսաթերթը:
5. Ուսումնասիրության մեջ ընդգրկված չեն նաեւ լիբանանյան ոչ հայատառ մամուլում հայերի հեղինակած հրապարակումները: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի.
 - ա. Ոչ հայատառ, լիբանանյան, բայց միաժամանակ նաեւ հայկական պատկանելություն ունեցող պարբերականներ¹, ինչպես նաեւ հայերենի կողքին օտար լեզուներով բաժիններ ունեցող հայկական պարբերականներ²:
 - բ. Լիբանանյան ոչ հայատառ մամուլում Հայկական հարցի մասին հայ հեղինակների ստորագրած գրություններ³:

Լիբանանյան պարբերականները Հայկական հարցին անդրադարձել են տարբեր առիթներով: Քիչ են միմիայն այս թեմային նվիրված հրապարակումները: Այդ մասին ավելի հաճախ գրվել է զինյալ պայքար մղող Հայկական կազմակերպությունների գործողություններին եւ առհասարակ հայերին նվիրված հաղորդումներում: Ըստ այնմ էլ կատարված է այս ուսումնասիրության շարադրումը:

Առաջին մաս. Հայկական հարցին, մեծ եղեռնի եւ Հայ-թուրքական հարաբերություններին նվիրված հոդվածներ

Զուտ Հայկական հարցին նվիրված հոդվածներն ու ռեպորտաժները շատ քիչ են լիբանանյան 1975-1987թթ. ոչ հայկական մամուլում: Մեծ մասամբ նրանք լույս են տեսել հայկական կազմակերպությունների հակաթուրքական եւ հակաարեւմտյան արյունոտ գործողություններից անմիջապես հետո:

Լիբանանյան ազդեցիկ շաբաթաթերթերից է «ալ-Ուաթան ալ-արաբին» («Արաբական Հայրենիք»): Հակաթուրքական հերթական գործողությունից հետո, նրա

1981թ. 168-րդ Համարում լույս տեսավ մի ծավալուն հոդված՝ Իսամ Խեյրեզդինի ստորագրութեամբ, «Հայերն ու թուրքերը - Վրեժ, որը 65 տարեկան է» հատկանշական խորագրին տակ: Սկզբում հոդվածագիրը տեղեկացնում է, որ 1973-1980 թվականների միջև ավելի քան 15 թուրք դիվանագետներ սպանված կամ վիրավորված են հայկական կազմակերպությունների կողմից: «Հայերն ի՞նչ են ուզում թուրքերից», Հարց է տալիս նա եւ փորձում ինքն էլ պատասխանել: Խեյրեզդինն անդրադառնում է Հայոց լեզվին, ներկայացնում Խորհրդային Հայաստանի սահմանները եւ ավելացնում, որ նա «խորհրդային 15 հանրապետություններից ամենափոքրն է (29.8 հազար քառակուսի կիլոմետր)՝ երկու միլիոն բնակչութեամբ. [այս տարածքը - Գ. Յ.] Համապատասխանում է Մեծ Հայաստանի տարածքի ընդամենը 0.13 տոկոսին»⁴:

«Մոնղոլները, ապա մամլյուքները, ապա թուրքերը» ենթախորագրի տակ, հոդվածագիրը ներկայացնում է Հայկական Հարցի պատմությունը, նշելով, որ այն ծագեց, երբ «որպես պետություն հայ ժողովուրդն իր անկախ պետականությունը կորցրեց: Դա տեղի ունեցավ 1326 թվականին, երբ մոնղոլները ... կործանեցին իշխող վերջին թագավորական (Ջաբարյան) հարստությունը եւ իրենց տիրապետությունը հաստատեցին Հայաստանի վրա»: Այս թվականից մեկուկես դար հետո, այսինքն 1375 թվականին, վերջին հայ տիրակալը գահընկեց արվեց Կիլիկիայի գահից, երբ մամլյուքները գրավեցին Սիս մայրաքաղաքը: Այսպիսով Հայկական անկախ պետությունը վերջ գտավ»:

Նշելով, թե «Հայաստան դարձավ անցուղի բոլոր նվաճողների համար», հոդվածագիրը Խեյրեզդինին սկսում է խոսել Անդրկովկաս-Մերձավոր Արեւելք տարածաշրջանում ռուսական ձգտումների մասին: «17-րդ եւ 18-րդ դարերում, պարսիկների եւ օսմանցիների դեմ պատերազմներից հետո ռուսները մի քանի հայկական շրջաններ գրավեցին»⁵: Քիչ անդին նա գրում է. «1877-1878թթ. Ռուս-թուրքական պատերազմը առիթ հանդիսացավ, որպեսզի Հայկական Հարցը բարձրացվի միջազգային քաղաքական հանձնաժողովների առջև: Հայերն ինքնավարություն ստանալու հույսեր փայփայեցին: Սակայն մեծ տերությունների միջև, մասնավորաբար անգլո-ռուսական մրցակցությունը պատճառ դարձավ, որ նրանք մի շարք իրավունքներ չկարողանան ստանալ: Ռուսաստանի եւ Թուրքիայի միջև կնքված Սան Ստեֆանոյի դաշնագրի 61-րդ հոդվածով⁷ Թուրքիա ընդունեց բարենորոգումներ մտցնել հայկական շրջաններում՝ մեծ տերությունների հովանավորության տակ: Այդ ժամանակից, Հայաստանը միջազգային պայքարի ասպարեզ դարձավ եւ այսպես կոչված Արեւելյան Հարցի մի մասը կազմեց:

Մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմը, Հայկական Հարցը մնաց 1878թ. Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի ծիրին մեջ»:

Այնուհետեւ Խեյրեզդին գրում է հայկական նահանգներում ինքնավարության շուրջ մեծ տերությունների բանակցությունների մասին. «1914թ. փետրվարի 8-ին կնքվեց Ռուս-թուրքական համաձայնագիր, ըստ որի՝ արեւելյան յոթ շրջանները բաժանվեցին երկու՝ էրզրումի եւ Վանի շրջանների: Որոշվեց, որ այս շրջաններից յուրաքանչյուրի վրա հսկի եվրոպացի ընդհանուր քննիչ եւ թե այդ հսկողությունն ընդգրկի [պետական - Գ. Յ.] պաշտոնյաներին, բանվորներին, վարչական գործերը. հաստատվելու էին հատուկ պառլամենտներ, յուրաքանչյուր շրջան ունենալու էր իր ապահովական ուժերը: Առաջին Համաշխարհային պատերազմը վերացրեց այս համաձայնագիրը»:

«Մեծ եղեռնը» ենթախորագրի տակ, Իսամ Խեյրեզդին տալիս է հրեշային բարբարոսությունների նախապատրաստության եւ գործադրության ընդհանուր պատկերը: Նա գրում է. «[1915թ. - Գ. Յ.] Մարտի 8-ին Ահմեդ Ջեմալ փաշան մի նամակ ստացավ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեից, որտեղ կար վերջինիս որոշումը՝ «Թուրքական հայրենիքը մաքրել հայերի պղծությունից»: Նամակի բովանդակությունից նա հասկացավ, որ թուրք պատասխանատուները որոշել են Թուրքիայի բոլոր հայերին բնաջնջել»: Հեղինակը խոսում է հայերի զինակոչի մասին ու շարունակում. «1915թ. ապրիլի 15-ին ներքին գործերի նախարար Թալաթից, պատերազմական նախարար Էնվերից եւ ընդհանուր քարտուղար դոկտոր

Նազըմից բաղկացած Երեքի խորհուրդը Հեռագիր ուղարկեց Փոքր Ասիայի կառավարիչներին եւ գավառապետներին, որտեղ ասված էր, թե կառավարութիւնը որոշել է վերջ դնել ոռոսների եւ անգլիացիների կողմից Հայերի շահագործմանը՝ «մեր ժողովրդի մեջ եղող այդ տարրը բնաջնջելու միջոցով. դա կարելի է իրականացնել նրանց արաբական անպատները քշելով՝ ըստ ձեզի տրված հրամանների... Կառավարութիւնն ու կուսակցութեան կենտրոնական կոմիտեն Հուլիսի ունեն, որ ձեր բոլոր ուժերով կօգնեք մեզ՝ այս պարտականութիւնը կատարելու համար: Իսկ այն պետական պատասխանատուն կամ պաշտոնյան, որն այս ազգային գործը բարձիթողի կմատնի եւ կփորձի որեւէ հայի պաշտպանել, կրօնի թշնամի է համարվելու եւ գաղտնի գատավարութեան է տրվելու»:

Ապա հոգվածագիրն անդրադառնում է Կ. Պոլսում Հայ մտավորականների ձերբակալութեանն ու աքսորին, գրում Հայկական նահանգների բնակչութեան տեղահանութեան, կրած չարչարանքների եւ նրանց գաղանային կոտորածների մասին: Նա նշում է. «Ըստ գերմանացի Լեփսյուսի հաշվումների՝ 1915-1916 թվականներին գոհվել է ավելի քան մեկ միլիոն հայ, 200 հազար հոգի մնացել են իրենց բնակավայրերում, 200 հազար հոգի սփռվել են Իրաքի, Սիրիայի եւ Լիբանանի միջև: Իսկ նրանք, ովքեր իսլամութիւնն ընդունելով կրօնափոխվեցին, նույնպես գնահատվում են 200 հազար հոգի»:

Ապա Իսամ Խեյրեդդին գրում է 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախութեան, Սեւրի դաշնագրով վերջինիս ճանաչման եւ 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետութիւնում խորհրդային կարգերի հաստատման մասին:

Հոգվածի մնացյալ բաժիններում («Հայերի կապը արաբական աշխարհի հետ», «Հայերի տառապանքը քաղաքացիական պատերազմում», «Հայկական քաղաքական կազմակերպութիւնները») անդրադարձ չկա Հայկական հարցին, բացի նշումներից, թե Դաշնակցութիւն կուսակցութեան «նպատակն է հայ ժողովրդի անկախ ու ազգային պետականութեան հաստատումը իր հայրենիքում... եւ հայկական «բռնագրավյալ» հողերի ազատագրումը Թուրքիայից», թե ՀԱՀԳԲ-ը «պնդում է, որ իր առաջին խնդիրը «Հայաստանի հարցն» է» եւ թե «Թուրքիայից ու Ռուսաստանից Հայաստանի ազատագրումը միայն ուժի միջոցով կիրականացվի»:

Հասկանալի է, որ դիտարկվող ժամանակահատվածում Թուրքիայի արտաքին քաղաքական կուրսի հիմնական ուղղութիւններն իրենց անդրադարձն էին ունենալու հայկական ազատագրական պայքարի լիբանանյան մեկնաբանութեան վրա: Դրա դասական օրինակը նույն «ալ-Ուաթան ալ-արաբի» շաբաթաթերթի նույն համարում տպված, Անկարայում թերթի թղթակցի ռեպորտաժն է՝ «Անկարա փնտրում է Հուլիս-կիպրացիների եւ ամերիկյան ու խորհրդային գաղտնի սպասարկութիւնների մատնահետքերը» գաղափարացուցիկ վերնագրի տակ: Ռեպորտաժն սկսվում է հետեւյալ տողերով.

«Ընթերցողն անպայման պիտի զարմանա, երբ իմանա, որ Թուրք պատասխանատուները արտասահմանում իրենց դիվանագետներին պատահած դեպքերի համար հայերին պատասխանատու չեն համարում»:

Թուրքական ամբաստանութեան մատներն անմիջապես ուղղվում են Հուլիս-կիպրացիներին մասնավորապես, եւ Հուլիսերին ընդհանրապես: Այնտեղ կան նաեւ մարդիկ, ովքեր չեն բացառում, որ ամերիկյան (Կենտրոնական հետախուզութեան վարչութիւն) եւ խորհրդային (Պետական անվտանգութեան կոմիտե) հատուկ ծառայութիւնները այս կամ այն չափով միջամտում են Թուրք դիվանագետներին թիրախ ընտրած գործողութիւններին, եւ դա արվում է «ոչ թե իրենց՝ հայերին չափից ավելի սիրելու համար», այլ՝ երկու մեծ պետութիւնների հայտնի եւ գաղտնի շահերի հետ կապված քաղաքական նպատակներով»:

Թղթակիցը գրում է Թուրք պրոֆեսոր Մուսթաֆա Սոյսալի՝ «Միլլիյեթ» օրաթերթում տպված հարցումին մասին, թե ինչո՞ւ ավելի քան կես դար հետո «Հայեր այս անհատական վրեժի գործողութիւններն են կատարում»: Թղթակիցը գրում է. «Թուրքական հատուկ սպասարկութիւններն այս գործողութիւնները կատարող

Հայկական կազմակերպությունների մասին Հսկայական թղթածրարներ ունեն», որոնց մեջ ամբարված տեղեկություններն ստացվում են «թշնամի կամ բարեկամ գաղտնի սպասարկությունների միջև տեղեկությունների փոխանակման» կամ էլ «կրկնակի գործակալների» միջոցով⁹:

Ռեպորտաժի «Թուրքերն ասում են՝ «Օսմանցիներն են պատասխանատուները»» բաժնում կարդում ենք. «Թուրքերն ընդհանրապես Համարում են, որ Հայկական Հարցն ամբողջովին վերջացած է, ինչպես վերջ է գտած կարմիր Հնդկացիների Հարցը Ամերիկայում: Նրանք մերժում են նույնիսկ Հայկական շարժման գոյությունը ճանաչումը, իսկ թուրք նոր սերունդը ոչինչ չգիտե Հայկական կոտորածների մասին:

Իսկ մտավորականներն ասում են, որ եթե Հայերի նկատմամբ «անարգանքներ» են եղել, ապա դրանց Համար պատասխանատուները օսմանցիներն են: Աթաթուրքի հիմնած նոր Թուրքիան պատասխանատու է մահացող Օսմանյան կայսրության կատարածների համար»:

Թղթակիցը մեջբերում է սենատոր Սադի Քոչաշի «Հայերը պատմության ընթացքում եւ թուրք-Հայկական Հարաբերությունները» գրքից մի պարբերություն¹⁰, որ իբր «Հայերը մեր ամենազգացարկավոր պաշին մեր դեմ շարժեցին եւ շատ թուրքերի կոտորեցին, ինչը վերջիններիս ստիպեց՝ մեկ միլիոն թուրքի սպանության որպես վրեժ մեկ միլիոն Հայ սպանել»: Թղթակիցը նշում է, որ «թուրք նոր սերունդը իր Հայերից ու պապերից լսում է հուզիչ պատմություններ թուրքերի դեմ Հայերի կատարած գործողությունների ու ջարդերի մասին. սակայն, բնականաբար, հիշողությունը կամ պատմությունը որեւէ կերպ չեն անդրադառնում Հայերի դեմ թուրքական գործողություններին ու ջարդերին»: Թղթակիցը մեջբերում է թուրքական Հատուկ ծառայությունների նախկին պետերից էրգյուն Գյոկդենիզի արտահայտությունը. «Թուրքերի նկատմամբ Հայերի մոտ թշնամությունն այստեղ [Թուրքիայում - Գ. Յ.] չկա. դա արտասահմանում է միայն»: Գյոկդենիզը հայտնում է նաեւ. «Թուրքերն առայժմ չեն մտածել վրեժ լուծել իրենց դիվանագետների համար... Սակայն եթե վրիժառուության գործողություններն սկսվեն, ապա առանց ճակատների կամ առանց ռազմական գծերի շատ բիրտ եւ խիստ գաղտնի պատերազմ տեղի պիտի ունենա, որի մեջ պիտի մտնեն թուրքերը, Հայերը, Հույներն ու Հույն-կիպրացիները»:

«Ալ-Ռևաթան ալ-արաբի» Անկարայի թղթակիցն եզրակացնում է. «Թուրքական Հայրենիքի արեւելյան մասերից Հայկական պահանջը նախապես, եւ հարավ-արեւելյան մասերից քրդերի պահանջը ներկայիս, դիմակայվեց եւ դիմակայվում է թուրքական չափազանցված մոլեռանդությամբ, որը Հասավ Հայերին գրեթե հիմնովին ոչնչացնելու աստիճանին՝ պատերազմի ժամանակ իբր ուսուցիչ կողմից հրահրվելու պատրվակով: Թուրքերը, եւ Հատկապես գյուղացիները, շատ են ազդվել ու ազդվում կրոնական ազդակից, որն իր դերը կատարում է նման իրադրություններում:

Ընդհանրապես, թուրքերը չեն ուզում եւ չեն թույլատրում ցեղական կամ կրոնական մեծ փոքրամասնության, որ զարգանա ու բարգավաճի այնքան, որ Հայրենիքի միասնության կամ թուրքական տիրակալ բնույթին համար վտանգ ստեղծի»:

Այս ռեպորտաժում ուշագրավ է այն փաստը, որ տպագրվել է Մեծ եղեռնի տարիներին Հայերի զանգվածային կոտորածների վայրերի տեղադրությամբ մի քարտեզ: Առավել Հատկանշական է այն, որ քարտեզում նորհրդային Հայաստանի տարածքում են ցույց տրվել նաեւ Լեռնային ու Դաշտային Ղարաբաղը, Նախիջևանը, Բորչալուն, Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը...

Մեծ եղեռնի 65-ամյակի առթիվ, Լիբանանում գործող «Սիրիական ազգայնական սոցիալական կուսակցություն»¹¹ (ծանոթ՝ «դոմի» անունով) պաշտոնաթերթ «Սաբահ-ուլ-խեյր – ալ-Բինա՝ա» («Բարի լույս – Շինարարություն») շաբաթաթերթին իր 1980թ. 58-րդ համարում մի ընդարձակ հոդված է տպել՝ նվիրված Մեծ եղեռնին եւ Հայկական Հարցին՝ «Հայկական կուսակցությունների համախմբումը սպասում է Հողերի վերադարձին» ընդհանուր խորագրի տակ: Հոդվածի «Կուսակցությունների համախմբումի հաղորդագրությունը» բաժնում տպագրվել է Մեծ եղեռնի 65-ամյակի

առթիվ Հայկական ավանդական երեք կուսակցությունների Համատեղ Հայտարարությունը, որտեղ, ի միջի այլոց, ասվում է, թե թուրքական պետությունը «պատմական սխալ» գործեց, կարծելով թե բնաջնջման միջոցով կարող է «Հայկական Հարցը թաղել»: Հայտարարությունն ավարտվում է վճռական հաստատումով. «Մեծ ոճիրը չի՝ մոռացվելու մինչև կգա այն օրը, երբ Հայ ժողովուրդը կվերստանա թուրքիայի բռնադրամած իր հողերը»:

«Միլիոն նահատակների հիշատակը» բաժնում նշված է. «Հայերն իրենց անկախությունը կորցրին սկզբում Մայր Հայրենիքում՝ 11-րդ դարում, ապա Հայկական Կիլիկիայում՝ 14-րդ դարում: Հետեւաբար, դարմանալի չէ, որ ջարդերն ու փորձանքները վերջին դարերին ուղեկից են եղել Հայ ժողովրդի կյանքին: Սակայն, այն ինչ ծրագրվեց ու գործադրվեց արյունածարավ Օսմանյան պետության ղեկավարության կողմից Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին՝ երբեք իր նմանը չի ունեցել մարդկային պատմություն մեջ»: Թերթը նշում է, որ աշխարհի բախտը որոշող պետությունները, սակայն, հաշվի չառան Հայերի իրավունքներն ու «վնասներ կրած անմեղ մարդկանց չհատուցին»:

«Հայկական Հարցը մինչև Առաջին Համաշխարհային պատերազմը» բաժնում, սիրիական ազգայնականների պաշտոնաթերթը տալիս է Հայկական Հարցի պատմականը: Ասվում է, որ Արեւմտյան Հայաստանի Հայ ազգաբնակչությունը ապրում էր ծայրահեղ վատ կենսապայմաններում: «1877-1878թթ. Ռուս-թուրքական պատերազմը լավ առիթ ծառայեց, որպեսզի Հայկական Հարցը բարձրացվի միջազգային քաղաքական կոնֆերանսի առաջ. հետեւելով լիբանանյան քայլին, Հայերը նպատակ ունեին ինքնավարություն ստանալ¹²: Իրականում, այս փորձի շրջանակները չէին անցնում թուրքերի հետ Համահավասար իրավունքներ ու պարտականություններ պահանջելուց: Սակայն, մեծ տերությունների պայքարը եւ, մասնավորաբար, անգլո-ռուսական մրցակցությունը մի շարք իրավունքներ ձեռք բերելու Հայերի փորձի ձախողման պատճառ դարձավ: Մյուս կողմից, ըստ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի, թուրքիա ընդունեց բարենորոգումներ մտցնել Հայկական շրջաններում՝ մեծ տերությունների հսկողության տակ:

Մինչև Առաջին Համաշխարհային պատերազմը, Հայկական Հարցը սահմանափակվեց 61-րդ հոդվածի շրջանակներով¹³: Այսուհանդերձ, Օսմանյան կառավարությունը գործնական ոչ մի քայլ չկատարեց իր պարտավորությունները կատարելու ուղղությամբ: Կայսրությունը բացարձակ իշխանությամբ կառավարել սկսած սուլթան Աբդուլ-Համիդ Բ-ը Հայերի դեմ կազմակերպված Հայածանքի ու սպանությունների քաղաքականություն որդեգրեց»:

Անանուն հոդվածագիրը, մերժելով թուրքական պաշտոնական պատմագրության այն խեղաթյուրված տեսակետը, թե Հայերի նկատմամբ թուրքերի որոշ կոշտ միջոցառումները պայմանավորված էին Հայերի ապստամբական գործունեությամբ, ճիշտ հակառակն է ապացուցում: Նա նշում է, որ Համիդյան բռնություններն իրենք ծնունդ տվեցին Հայկական հեղափոխական կազմակերպություններին: Աբդուլ-Համիդ կրկնակի թափով շարունակեց բռնությունները, որոնց գագաթնակետն եղան 1894թ. Սասունի ջարդերն ու դրանց հետեւած «1895-1896թթ. Հայկական Համընդհանուր կոտորածները, որոնց զոհ գնացին 200 000 Հայեր»:

Ապա թերթն անդրադառնում է երիտթուրքերի եւ ՀՅԴաշնակցության Համագործակցությանը, Հայտնելով, որ 1909թ. ապրիլի «Հակասահմանադրական» խռովության ժամանակ Կիլիկիայում կոտորվեցին 30 հազար Հայեր: Հոդվածագիրը գրում է երիտթուրքերի համաթուրքական գաղափարախոսության մասին եւ նշում, որ հակառակ այս իրողության, հայերն իրենց հույսը շարունակում էին կապել սահմանադրության եւ երիտթուրքերի հետ՝ «ժամանակակից նոր պետություն կառուցելու» համար¹⁴: Հայկական շրջանները Հայաթափելու երիտթուրքերի քաղաքականության առաջին քայլը բալկանյան պատերազմներից հետո այնտեղ մեծաթիվ թուրք գաղթականների վերաբնակեցումն էր: Նա շարունակում է. «Այսպիսի պայմաններում, 1912թ.-ին Հայերը մի անգամ եւս դիմեցին եվրոպական քաղաքականության, որպեսզի վերջինս թուրքիային ստիպի կատարելու գոնե Բեռլինի

պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումները: Ռուսաստանը, Ֆրանսիան եւ Անգլիան հայերի պահանջների կողքին կանգնեցին, սակայն երիտթուրքերի շահերի պաշտպանի դերում հանդես եկող Գերմանիան կարողացավ մեծ չափով սահմանափակել այդ բարենորոգումների շրջանակը»:

«Առաջին համաշխարհային պատերազմը եւ թուրքերի ծրագիրը» բաժնում Հեղինակը խոսում է թուրք-գերմանական գործակցության եւ երիտթուրքերի համաթուրքական ծրագրերի մասին: Նա գրում է. «Թուրքերը հավատում էին գերմանական հաղթանակին եւ պատերազմի մեջ տեսնում ոսկի առիթ՝ իրականացնելու իրենց Հին ու սրտամոտ երազը՝ Գերմանիայի օգնությամբ եւ զենքի ուժով կործանել իրենք Կովկասի ու Թուրքեստանի թաթար, թուրքմեն, ուզբեկ եւ մզխը¹⁵ եղբայրներից բաժանող ռուսական պատնեշը խորտակել, որով Հնարավոր կդառնար նրանց հետ միասին ստեղծել թուրանական կայսրությունը, որի գաղափարական հիմքը կրոնականից ավելի կլիներ ազգայնականը:

Երիտթուրքերի տեսակետից՝ հայերն իրենց թուրանական ծրագրի իրականացման խոչընդոտներից մեկն էին, քանի որ հայերը թուրքերի հետ ազգային, կրոնական կամ մշակութային կապ չունեն»:

Ապա հոդվածագիրը լայնորեն գրում է հայերին իրենց կողմը «մահակով կամ քաղցրավենիքով» բերելու երիտթուրք պարագլուխների փորձերի մասին, որոնք հաջողությամբ չապակվեցին:

«Նախաքայլերը» բաժնում տրվում են Մեծ եղեռնի նախապատրաստության մանրամասնությունները՝ հայերի գորակոչումը, կապերի խզումը Պոլսի եւ գավառների միջեւ, եւ այլն: «...24 ապրիլի գիշերը, ոստիկանական ույժերը ձերբակալեցին Կ. Պոլսի մոտ 225 հայ երեւելիների ... ինչպիսիք էին Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Գրիգոր Զոհրապը, Հայր Կոմիտասը եւ ուրիշներ»:

«Ապանություն, տեղահանություն, նորից սպանություն» բաժնում թերթը ուրվագծում է հայկական նահանգներում հայերի կոտորածի ու տեղահանության ընդհանուր պատկերը: Այստեղ խոսվում է Օսմանյան բանակ գորակոչված հայ երիտասարդների զինաթափման ու դավադրաբար սպանություն, հայերի ունեցվածքի կողոպուտի, բռնաբարությունների եւ հարկադրական տեղահանության մասին: Թերթը գրում է. «1915թ. օգոստոսի 15-ին Ռուսաստանը, Անգլիան եւ Ֆրանսիան միացյալ սպառնալիք ներկայացրին թուրքիային՝ կոտորածներն անմիջապես դադարեցնելու պահանջով, այլապես թուրքական կառավարության բոլոր անդամները պատերազմից հետո դատարան էին կանչվելու: Թուրքիան այս սպառնալիքներին ու քննադատություններին պատասխանեց՝ ժխտելով կոտորածների ու տեղահանությունների գոյությունը...» Ապա թերթը գրում է Տրապիզոնի եւ հարակից շրջանների հայերի ծովախեղդման փաստերի մասին:

«Գերեզմաններ անապատում» բաժնում, անանուն հոդվածագիրը նկարագրում է Հայ ժողովրդի Գողգոթան Սիրիայի եւ Միջագետքի անապատներում: Այստեղ նա բերում է թվական տվյալներ. «Խարբերդից դուրս եկած 5000 հոգիանոց քարավանից Հալեպ հասավ 213 հոգի. Խարբերդից 2500 հոգիանոց մեկ այլ քարավանից Հալեպ հասավ միայն 600 հոգի: Սեբաստիայի ու Խարբերդի 18 000 գաղթականներից բազմաթիվ քարավանից Հալեպ ողջ հասան ընդամենը 150 վերապրողներ»:

Ապա Հեղինակը խոսում է Դեր-էլ-Ջորի Ռակկայի, Ռասուլ-Այնի, Իսլահիեի, Մեսքենեի անապատներում հայերի զանգվածային ցեղասպանության մասին, նշելով արաբ ժողովրդի կարեկցանքն ու եղբայրական օգնությունը տառապակոծ հայ ժողովրդին, որպես օրինակ ներկայացնելով Դեր-Ջորի արաբ կուսակալ Ալի Սուեյդի հայասիրական գիրքորոշումը:

Հոդվածի վերջում բերված են վիճակագրական հարուստ տվյալներ զոհված ու վերապրող հայերի թվաքանակի վերաբերյալ. «1915-1916 թվականներին զոհված հայերի քանակը 1 200 000 հոգի է. այս քանակը չի կարելի չափազանցված նկատել, այլ ընդհակառակը՝ իրականից էլ փոքր է, քանի որ այն հաշվի չի առնում ... բնական աճը»:

«ՍաբաՀ-ուլ-իսեյր - ալ-Բինա'ա»-ն եզրակացնում է. «Մարդկությունն ու արդարությունը շատ բանով են պարտական միլիոնավոր նահատակներին»:

Ուշագրավ է այն փաստը, որ այս հոդվածում տպագրվել են Մեծ եղեռնից երեք լուսանկար, նաև մեկ քարտեզ:

Նույն շաբաթաթերթը իր 1984թ. բազմաթիվ համարներում արաբերեն թարգմանությամբ հաջորդաբար տպեց 1950-ական թվականների վերջին Բեյրութում հրատարակված, սակայն անմիջապես մեջտեղից վերացված, Պիեռ Հեպեսի¹⁶ «Տիեզերական հանրապետությունը. Վերջին գիշերվան խրախճանքը» գրքի այն հատվածները, որոնք բացահայտում են սիոնական-մասոնական-երիտթուրքական դաշինքի առնչություններն ու նրանց կողմից Մեծ եղեռնի ծրագրավորումն ու նախապատրաստական աշխատանքները¹⁷:

Համաարաբական տարողություն ունեցող, Փարիզում լույս տեսնող լիբանանյան «ալ-Մուստակբալ» («Ապագա») շաբաթաթերթն իր 1981թ. մարտի 21-ի համարի առաջին շապիկի գլխավոր թեմա է ընտրել Հայկական Հարցը: Պարբերականը երկու էջ է տրամադրել Հայկական Հարցին եւ 1975թ. վերածնած Հայկական զինյալ ազգային-ազատագրական պայքարին՝ «Հայերի՞ ճեղագիտությունը» Հարցյան, բազմիմաստ վերնագրի տակ: Աջակողմյան թեքում ունեցող այս թերթը շատ դեպքերում ոչ ճիշտ մոտեցումներ է ցուցաբերել Հայկական Հարցին: Օրինակ, թերթը գտնում է, որ «1915թ.-ից առաջ Թուրքիայում կային 1 800 000 Հայեր, որոնց մեկ երրորդին թուրքերը տեղահան արեցին, մյուս մեկ երրորդին սպանեցին, իսկ երրորդ մեկ երրորդը մնաց ... Խորհրդային Հայաստանում»: Միայն գնահատականներ են տրվում հայկական զինյալ շարժմանը: Ըստ «ալ-Մուստակբալի» անանուն ճեղհնակի, «Հայկական ազատագրական բանակը¹⁸ ուզում է վրեժ լուծել Թուրքիայից՝ նախքան «իրենց մեծ վերագործը» Հայաստան»: սա անգիտակցաբար կամ դիտավորյալ խեղաթյուրում է, որովհետեւ ՀԱՀԳԲ-ը մինչ այդ բազմիցս հայտարարել էր, թե իր գործողությունները վրեժի լուծման համար չեն, այլ՝ նպատակ ունեն ամբողջ հայ ժողովուրդը մոբիլիզացնել հայկական բռնադատվյալ հողերի ազատագրության համար:

Մեծ մասամբ «ալ-Ուսթան ալ-արաբի» շաբաթաթերթի 168-րդ համարի «Հայերն ու թուրքերը - Վրեժ, որը 65 տարեկան է» հոդվածն է կրկնում «ալ-Ուսթան ալ-արաբի» («Արաբական շաբաթ») շաբաթաթերթի 1163-րդ, 1982թ. հունվարի 25-ի համարի հոդվածը՝ «Անցած 1981 տարում հայտնված կարեւորագույն Հարցերից մեկը՝ Հայկական Հայրենիքի Հարցը» վերնագրով¹⁹: Այն ունի երեք բաժին՝ «Բարգավաճման ժամանակաշրջաններ», «...եվ դժվար ժամանակաշրջաններ» ու «Մեծ եղեռնը», որոնցում հոդվածագիրը՝ շաբաթաթերթի Փարիզի թղթակիցներից Հաննա ալ-Ալամը տալիս է հայոց պատմությունը Օսմանյան կայսրությունում՝ ամիրաներ, փաշաներ, պետական պաշտոնյաներ (որոնց շարքին՝ Լեռնայի բանանի ինքնավարության առաջին եւ վերջին կառավարիչներ, Հայազգի Դավուդ եւ Հովհաննես Գուլումբյան փաշաները), եւ այլն, ապա՝ Թանգիմաթ, հայոց Ազգային սահմանադրություն, Աբդուլ-Համիդ Բ, Սան Ստեֆանո, Բեռլին, Հայկական կոտորածներ, երիտթուրքեր եւ Մեծ եղեռն: Հոդվածագիրը եզրակացնում է, թե այնքան ժամանակ, որ հայ ժողովուրդը կա ու Հայկական Հարցը չէ լուծված, այն բարձրացվելու է թեկուզ բռնի միջոցներով: Նա կոչ է անում Թուրքիային՝ բանակցություններ սկսելու հայերի հետ:

Լիբանանի կոմկուսի օրգան «ալ-Նիդա'ա» («Կանչ») օրաթերթն իր 1982թ. ապրիլի 25-ի համարում հրապարակեց Մեծ եղեռնի 67-ի առիթով «Լիբանանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հայտարարությունը Հայկական Հարցի եւ լիբանանահայերի պայքարի մասին»՝ «Փաշիզմի պարտությունն ու [Լիբանանի,- Գ. Յ.] բաժանման ծրագրի ձխողեցումը գրավականն են ազգային անհատականության փրկության» վերնագրով²⁰: Նրանում Հայկական Հարցին զուգահեռ, տեղ են գտել Լիբանանի քաղաքացիական պատերազմի ու երկու գերտերությունների համաշխարհային դիմակայության բազմաթիվ խնդիրներ: Փաստաթղթի բուն շարադրանքից առաջ «ալ-Նիդա'ա»-ի խմբագրությունը ծանոթագրության մեջ ասվում է նաև, որ «Հայկական Հարցն ու Լիբանանի մեջ

Հայոց պայքարը սուլյն ապրիլի սկզբին Լիբանանի կոմկուսի կենտրոնական կոմիտեի պլենումի հրամանական հարցն» է եղել: Հայտարարությունում ի միջի այլոց ասված է. «...Ձեզերի հիշատակումը ո՛չ միայն ազգային ու մարդկային պարտականություն է, այլև հիշեցում ողջ աշխարհին, թե Հայկական հարցը դեռ կա եւ նրա արդարացիությունն անվիճելի է»: Լիբանանի կոմկուսի կենտրոնական հայտարարությունը ապա խոսում է Հայերի կրած տառապանքների, Հայկական կոտորածների ու Լիբանանի Հայ զանգվածների մղած առաջադիմական պայքարի մասին: Փաստաթղթի «Հայկական ազգային հարցը պատմականորեն արդարացի է եւ նրա կարեւորությունը քաղաքականապես մեծանում է» ենթախորագրյալ բաժնում ասված է. «Հայկական հարցը որպես ազգային հարց ո՛չ միայն պատմականորեն արդարացի է, եւ նրա օբյեկտիվ ու օրինավոր արդարացիությունն ժամանցելի չէ, ...այլև դրված է որպես քաղաքական հարց, որի կարեւորությունը մեծանում է շրջանային եւ միջազգային առումներով, հակառակ Համաշխարհային Հանրային կարծիքը մոլորեցնելու եւ Հայկական հարցը աղավաղելու նպատակով հետադիմական թուրք պատմաբանների մոգոնած պատմության բոլոր խեղաթյուրումներին: Ավելին. հարցի պատմական արդարացիության կողքին, Հայկական հարցի առաջադիմական էությունը բխում է ազգերի եւ ազգությունների միջեւ Հավասարության ու նրանցից յուրաքանչյուրի ազատ, առանց ճնշման կամ բռնության ինքնորոշման իրավունքի սկզբունքից»²¹: Լիբանանի կոմկուսի ղեկավարության փաստաթուղթը նշում է, որ Իրանի շահի վարչակարգի անկումից հետո, ամերիկյան իմպերիալիզմը թուրքիան, Իսրայելի կողքին, վերածում է շրջանի իրավազրկված ժողովուրդների ազատագրական պայքարը ճնշող ուստիկանի: «Թուրքիան մեծ բանտի է վերածվում», - ասված է Հայտարարության մեջ: Լիբանանի կոմկուսի կենտրոնը շատ բարձր է գնահատում Հանուն առաջադիմության եւ դեմոկրատիայի լիբանանահայ զանգվածների պայքարը, որին նվիրված են փաստաթղթի մի քանի բաժիններ: Դրանցից «Հայ զանգվածների պատասխանատվությունն ու անելիքները իրենց ազգային ընդհանուր հարցին նկատմամբ» բաժնում մասնավորապես ասվում է. «Լիբանանահայ զանգվածները ներկա Հանգրվանում ունեն հստակ պատասխանատվություն` ...մյուսներից առաջ նրանց ուսին է ընկնում Հայ ժողովրդի պահանջների եւ ձգտումների իրականացման ուղղությամբ տարվող բազմակողմանի աշխատանքի պատասխանատվությունը. ընդ որում, Հայ ժողովրդի պատմական ու արդարացի իրավունքների եւ բռնագրավյալ հողերի հարցը դեռ Համաշխարհային հասարակական կարծիքի, տեղական ու միջազգային քաղաքական ուժերի եւ ժողովների առաջ...»: Ըստ Լիբանանի կոմունիստների` «Հայկական հարցը ինքնուրույն հարց չէ եւ կարելի չէ նրա համար առանձին լուծումներ գտնել առանց հաշվի առնելու աշխարհում մղվող պայքարը ազգային-ազատագրական, առաջադիմական ու սոցիալիստական ուժերի եւ իմպերիալիստական, ֆաշիստական ու հետադիմական ուժերի միջեւ...»: Այս տեսանկյունից էլ կոմունիստները գնահատում են Հայկական հարցի եւ Հանուն նրա լուծման պայքարի բնույթը` նրանց «լիակատար իրավացիությունը», «պայմանների հասունացման դեպքում» զինյալ պայքարը դիտելով «որպես զանգվածների դաստիարակության եւ քաղաքական գիտակցության հենվող պայքարի բարձրագույն ձև», որը Լիբանանի կոմկուսը տեսնում է «աշխարհի դեմոկրատական, առաջադիմական եւ հեղափոխական ուժերի եւ շարժումների հետ մարտական դաշնակցության եւ համերաշխության» պայմաններում, որովհետեւ պետք է հաստատել, թե «Հայկական հարցը համաշխարհային հեղափոխական շարժման անբաժան մասնիկն է»:

Այս գաղափարները առավել պարզաբանված են փաստաթղթի «Հայկական ազգային հարցի շահը պահանջում է ընդլայնել մարտական դաշինքները, ելնելով ինտերնացիոնալ սկզբունքային եւ քաղաքական դիրքերից» վերնագրված բաժնում: Ըստ լիբանանցի կոմունիստների` Հայկական հարցի լուծման համար պայքարում հայ զանգվածների «կատաղի թշնամին» իմպերիալիզմն է, «եւ առաջին հերթին` նրա գործակալը` թուրքական հետադիմությունը»: Հետեւաբար, հարկավոր է «ամրապնդել

գործակցության եւ համերաշխության կապերը շրջանի ազգային մեծ հարցերի ու շարժումների, եւ առաջին հերթին՝ արաբական ազատագրական շարժման բոլոր օղակների, մասնավորաբար պաղեստինյան հեղափոխության հետ»²²: Կոմկուսը «ենթադրում է» այդ համագործակցության մեջ տեսնել նաեւ «իր ազգային հարցի համար պայքարող քուրդ ժողովրդին, ինչպես նաեւ թուրքական հակաֆաշիստական առաջադիմական ուժերին»:

«Ինչպե՞ս կարելի է Հայկական հարցը առաջ մղել» բաժնում, Լիբանանի կոմունիստների ղեկավարությունը գտնում է, որ Հայկական հարցը «չի կարելի առաջ մղել միայն Հայ զանգվածների մասնակի ջանքերով», եւ կոչ է անում ամրապնդել համերաշխության եւ գործակցության կապերը Խորհրդային Միության եւ սոցիալիստական համակարգի երկրների հետ: Լիբանանի կոմկուսը Հայկական հարցում հատկապես կարեւորում է Խորհրդային Հայաստանի տեղն ու դերը. Հայկական հարցը «չի կարող հաջողություններ արձանագրել առանց Խորհրդային Հայաստանի իրականության եւ նրա մշտապես աճող հզորության հաշվառման»:
Լիբանանի կոմկուսի կենտկոմը եզրակացնում է, որ «Հայկական հարցի համար պայքարը երկարատեւ պայքար է եւ ամենից առաջ ենթադրում է Հայ զանգվածների դաստիարակումը»: Վերջում, լիբանանահայտությանը կոչ է արվում միասնական լինելու:

Լիբանանյան «ալ-Բայրակ» («Դրոշակ») աջակողմյան հակումներով օրաթերթին իր 1983թ. փետրվարի 12-ի համարում հրատարակել է Հայկական հարցին նվիրված մի փոքր ակնարկ՝ «Հայերի հարցն ու ազգային եւ ազգայնական ըմբռնումները» վերնագրով: Հրատարակման սկզբում տրվում է Հայաստանի աշխարհագրական դիրքը, խոսվում է Հայ եկեղեցու հիմնադրության եւ նրա խաղաղացած դերի մասին, Կիլիկիայի հայկական թագավորության եւ հայ-խաչակիր հարաբերությունների մասին: Ապա ասվում է. «Ժամանակի ընթացքում Հայկական թագավորությունը ենթարկվեց սելջուկյան եւ Օսմանյան կայսրություններին... եւ կարելի է ասել, որ Հայկական հարցն այդ ժամանակ ստեղծվեց, որովհետեւ Հայերը միշտ փայփայում են ազգային անկախ հայրենիք վերստեղծելու հույսը»: «Ալ-Բայրակ» հայտնում է, որ հայերը դարերով կոտորածների ենթարկվեցին իրենց շեշտված ուսասիրության պատճառով... Հայտնելով, թե 1915թ.-ին սկսած ցեղասպանության ժամանակ ավելի քան մեկ միլիոն հայեր են կոտորվել, թերթը շարունակում է. «Վերջին տարիներին Հայ երիտասարդներ բռնության դիմեցին ուշադրությունը Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձություններին դարձնելու եւ թուրքական կառավարության կողմից պատասխանատվության ճանաչման հասնելու համար... մինչ [թուրքերն,- Գ. Յ.] ասում են, որ ներկայի թուրքիան պատասխանատու չէ Օսմանյան կայսրության արածների համար»: Ակնարկի վերջում «ալ-Բայրակ» ասում է. «Պատմական Հայաստանի տարածքը բաժանված է թուրքիայի, Խորհրդային Միության եւ Իրանի միջեւ. հայեր սեփական հանրապետություն ունեն Խորհրդային Միության մեջ»: Ըստ թերթի, աշխարհասփյուռ հայ համայնքներին «միացնողը ազգային եւ մշակութային միասնության շատ ուժեղ զգացումներն են»:

Միրիայում իշխող «Բասս» կուսակցության համակիր լիբանանյան «ալ-Շարկ» («Արեւելք») օրաթերթը Հայկական հարցին եւ Մեծ եղեռնին նվիրված երկու ակնարկ հրատարակեց 1983թ. ապրիլին, միեւնույն շաբաթակցի՝ Նաիմ Տալհուկի ստորագրությամբ: Առաջին հրատարակումը լույս տեսավ ապրիլի 7-ին՝ «Հայերի հեղափոխությունը գուցե եւ բռնատիրության դեմ արդարացի հեղափոխություն է» պերճախոս վերնագրով: Տալհուկ գուզահեռ է անցկացնում թուրքերի ձեռքով հայերի ու արաբների կրած տառապանքների միջեւ եւ հավասարության նշան դնում 1915թ. ապրիլի 24-ի եւ 1916թ. մայիսի 6-ի միջեւ²³: Նա գրում է. «Այնքալ եւ Բուրջի կոտորածներն ու ինքն իրեն օրենքներ հրատարակելու իրավունք սահմանած Պատերազմական խորհրդի որոշումները ոչնչով չեն տարբերվում Դեր-Ջորի Հայկական կոտորածներից, որոնց հայեր մեկուկես միլիոն նահատակ տվեցին»: Ապա Տալհուկ համեմատում է մի կողմից թուրքերին ու հայերին, մյուս կողմից՝

Համապատասխանաբար հրեաներին ու պաղեստինցիներին, եւ գտնում, որ Հայերն ու պաղեստինցիները միեւնույն ճակատագրին՝ Հայրենագուրկ լինելու գոյախնայուն են դատապարտված: Ակնարկի վերջում գրված է. «[Հայաստանի,- Գ. Յ.] աշխարհագրական տարածքի երեք քառորդը գրավող Արեւմտյան Հայաստանը թուրքերի ուղղմածութեան տակ է, որոնք մերժում են իրենց Հայրենի Հողեր Հայերի վերադարձը: Տարածքի վերջին քառորդը՝ Արեւելյան Հայաստանը խորհրդային Միութեան մեջ է, որտեղ, սակայն, նրանց թույլատրված է ապրել խաղաղորեն»²⁴: Նախմ Տալհուկ բողոքում է. «Վայրենական դարերը ե՞րբ են անվերադարձ կորչելու, ե՞րբ է Հաղթանակելու իրավագրկված ժողովուրդների արգար կամքը, ե՞րբ է գալու այն օրը, երբ իրավագուրկները խաղաղորեն ապրելու են իրենց Հողի վրա եւ վերստանալու են իրենց արդարացի իրավունքները»: Տալհուկ ինքն էլ պատասխանում է Հաստատ շեշտով. «Այդ ժամանակը վաղ թե ուշ գալու է, քանի որ առանց Հայրենիքի չկա արժանապատվութիւն...»:

Համարյա նման բովանդակութիւն ունի նույն «ալ-Շարկ» օրաթերթի 1983թ. ապրիլի 22-ի համարում նույն նախմ Տալհուկի մեկ այլ հոդվածը՝ «24 ապրիլ՝ նշանավոր օրը աշխարհի պատմութեան մեջ» վերնագրով: Սկզբում Տալհուկ լայն տեղ է հատկացնում խոսելու համար իրավագրկված ժողովուրդների կրած տառապանքների մասին, ապա հարձակվում է Ջեմալ փաշայի հիշատակի վրա եւ ասում. «Սա «Թիմուրլենկի թոռները» քաղաքակրթութիւնն է. [թուրքերը,- Գ. Յ.] մարդկային արժանիքներից գուրկ են եւ սկզբունք են դարձրել ռասա-կրոնական կամ ցեղային ծայրահեղական հատկանիշները, որի հետեւանքն եղավ մի տգեղ էջ, որի սողերը գրվեցին 20-րդ դարի սկզբին»: Նա թուրքական «վայրագութեան» վկայութիւն է Հայտարարում «Դեր-Ջորում Ջեմալ փաշայի սպանած մեկուկես միլիոն Հայերին»: Այս հոդվածում եւս Տալհուկ հավասարութեան նշան է դնում Հայկական եւ Պաղեստինյան հարցերի միջեւ. «Երեկվա «Ջեմալ փաշան» այսօրվա Բեգին»²⁵ է, երեկվա Պաղեստինի հարցը այսօրվա Հայերի հարցն է. ընդհակառակը եւս ճիշտ է, քանի որ ժողովուրդների միջեւ ազգային արյունակցական կապը միացնում է ճակատագրերը... Նպատակը մեկն է՝ հողն ազատագրել նվաճող բռնակալների շահատակութիւններից»: Այս հիման վրա էլ Տալհուկ համանմանութիւն է տեսնում Դեր-Ջորի սպանդի եւ Սաբրայի, Շաթիրայի, Թեյ-Ջաթարի, Նաբաայի²⁶ եւ այլ վայրերի կոտորածների միջեւ: Ապա շարունակում է. «Եթե Հայերի հարցը մնա չլուծված, դա ո՛չ միայն կլինի քաղաքակրթութիւնն բարբառող իմպերիալիստական բոլոր պետութիւններին ուղղված ամոթանք ու մեղադրանք, այլեւ բոլոր ժողովուրդների համար դառնալու է անլուծելի ճգնաժամ...»:

Տալհուկ միանշանակորեն կողմնակից է բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքին: «Պարտագրված խաղաղութիւնը», ըստ նրա, «ինքնին ատելի ստրկութիւն է, որը չի ընդունի ամեն մի ազատ ժողովուրդ, որ հավատում է իր սոցիալական միասնութեանն ու հողի հետ կապին...»: Տալհուկ եզրակացնում է. «Հայաստանը հողն է ազատութեան ու արդարութեան միջոցով Հայրենիք կառուցելու ճգնաժամը եւ մեկ դատ ունեցող բոլոր թույլ ժողովուրդներին:

Այո՛, 1915թ. ապրիլի 24-ը նշանավոր օրն է աշխարհի պատմութեան մեջ: Իսկ որեւէ մեկը գիտե՞ այդ մասին»:

Լիբանանյան Հանրաժանոթ եւ մեծ տարածում ունեցող պարբերականներից է «ալ-Սաֆիրը» («Սուրհանդակ») առաջադիմական ուղղութեան օրաթերթը: Նա մյուս թերթերից ավելի է անդրադարձել Հայկական հարցին, միշտ դրական արտահայտվել Հայերի մասին: «Ալ-Սաֆիրը» իր 1986թ. սեպտեմբերի 26-ի համարում հրատարակեց բավականին ծավալուն մի ուսումնասիրութիւն՝ «Ակնարկներ Լիբանանում Հայկական հարցի մասին» ընդհանուր խորագրով, որտեղ Հայկական աղբյուրների կողքին օգտագործվել են նաեւ արաբ հեղինակների գրքեր: Այս ուսումնասիրութիւնը չափազանց շահեկան է, քանի որ այստեղ առաջին անգամ են օգտագործվել Մեծ Բրիտանիայի Փորեյն օֆիսի (արտաքին գործերի նախարարութեան) մի շարք փաստաթղթեր: Այսուհանդերձ, այս ուսումնասիրութիւնը եւս, մյուսների նման, գերծ չէ պատմական սխալ կամ շփոթ ստեղծող տեղեկութիւններից: Այսպես, սկզբում

խոսվում է Հակոբ Դ կաթողիկոսի գլխավորած Հայ մելիքների էջմիածնի ժողովի մասին, որի թվական է նշվել 1876-ը, փոխան 1676-ի: Անանուն Հոգվածագիրը շատ հպանցիկ ձևով է գրում Ջեյթունի 1862թ. ապստամբություն, 1877-1878թթ. Ռուս-թուրքական պատերազմի, Սան Ստեֆանոյի եւ Բեռլինի դաշնագրերի մասին: Նույնպիսի արագությամբ նա խոսում է 1894-1896թթ. կոտորածների եւ «1913թ.-ին եվրոպական տերությունների՝ Օսմանյան սուլթանին պարտադրած բարենորոգումների նախագծի» մասին: Նույնպես շատ արագ գրվում է Մեծ եղեռնի, Հայկական լեգեոնի եւ Հայերի հոսսախաբուցության մասին: Նա շարունակում է. «1920թ. մարտի 10-ին կնքվեց Սեւրի դաշնագիրը², որտեղ ճանաչվեց անկախ Հայաստանը: Սակայն, Մերձավոր Արեւելքի բաժանման շուրջ Փրանսիայի եւ Բրիտանիայի միջեւ մրցակցութունը ստիպեց առաջինին, որ օժանդակի իր թրքությամբը մոլեռանդ Մուստաֆա Աթաթուրքի շարժումին: [Փրանսիան,- Գ. Յ.] Աթաթուրքին զիջեց Կիլիկիան եւ իր ազդեցություն տակ գտնվող այլ շրջաններ՝ հուսալով ֆրանսիական մոնոպոլիստական ընկերությունների օգտին թուրքիայում առանձնաշնորհումներ ստանալ: Սրա վրա, Հայերով բնակեցված քաղաքների վրա կազմակերպված հարձակումներով, Աթաթուրքի ուժերը Կիլիկիան մաքրեցին Հայերից: Դա կատարվեց ֆրանսիական ուժերի աչքի առաջ, առանց որ նրանք դուրս իսկ չարժեքն Հայերին սպանությունից եւ տարագրությունից փրկելու համար: Դրանից հետո Հայկական հարցը հազվագեպ էր մտնում միջազգային հաստատությունների եւ արեւմտյան տերությունների հետաքրքրությունների շրջանակների մեջ. [այդ տերությունները,- Գ. Յ.] կարծեցին, որ Հայոց հարվածած մասնատվածությունը նրանց մոռացնել կտա իրենց հարցը: 1923թ. հուլիսի 24-ին կնքվեց Լոզանի դաշնագիրը, որն անտեսեց Հայկական հարցի հիշատակումն անգամ՝ հակառակ ժնեւում Ազգերի լիգայի որոշումների, որոնք սահմանում էին Հայոց համար ազգային հայրենիք ստեղծել»:

Նույն ուսումնասիրության մյուս երկու բաժինները՝ «Հայկական հաստատությունները» եւ «Լիբանանյան-Հայկական հարաբերությունները», մեր աշխատանքի հետաքրքրությունների ծիրից դուրս են մնում:

Հայկական հարցին շատ հարեւանցի է անդրադարձել Լիբանանի անգլերեն միակ օրաթերթը «դը Դեյլի սթարի» աշխատակից Ջորջի-էնն Ջեյերը իր «Հայերը դուրս են գալիս սպանդի ստվերի տակից» հոդվածում, որը լույս է տեսել 1985թ. ապրիլի 18-ի համարում: Այստեղ խոսքն առավելաբար սփյուռքահայություն հայապահպանության հարցերի մասին է, քան Հայկական հարցի կամ Հայկական ազատագրական պայքարի մասին:

Հայկական հարցին նույնպես հպանցիկ կերպով անդրադարձավ շատ կարճ կյանք ունեցած լիբանանյան «այլ-Ջուհուրիյա» («Հանրապետություն») օրաթերթին իր առաջին իսկ համարներից մեկում: Օրաթերթի աշխատակից Յուսեֆ ալ-Շիդիակը թերթի 1985թ. հոկտեմբերի 30-ի համարում ներկայացնում է ֆրանսիացի հեղինակ Ռոլան Ժակարի «Ահաբեկչության գաղտնի թղթածրարները» ֆրանսերեն, Հայկական ազատագրական շարժման նկատմամբ անհիմն զրպարտանքներով լի գրքի համառոտ բովանդակությունը: Սակայն, իր ներածական խոսքում, Յուսեֆ ալ-Շիդիակ գրվատանքով է խոսում հայոց մասին, Հայտարարելով, թե «Հայկական հարցը համամարդկային հարց է, իսկ նրա լուծման ուղղությամբ հայերի մղած պայքարը՝ արդարացի պայքար»: Ալ-Շիդիակի՝ «Հայկական պայքարը Հայաստանի վերատիրացման համար» վերնագրով ակնարկն ու գրախոսությունը լիբանանյան չափավոր աջակողմյան շրջանակների կողմից հայերին ի նպաստ եղած առաջին եւ միակ հրապարակումն է 1975-1987թթ. լիբանանյան պարբերական մամուլում:

1986թ.-ին լույս տեսնել սկսած «ալ-Ֆիքր ալ-տակադդումի» («Առաջադիմական միտք») ամենամսյա հանդեսը եւս իր առաջին համարներից մեկում հարկ է համարել անդրադառնալ հայերին եւ Հայկական հարցին: Այս գրական, սոցիալական եւ պատմական բնույթի հանդեսը արտացոլում էր Լիբանանի հիմնական ձախակողմյան կազմակերպության՝ Առաջադիմական սոցիալիստական կուսակցության տեսակետը: Հանդեսի 3-րդ համարում (դեկտ. 1987) տպագրված է «Հայերը – ժողովուրդ եւ դատ» վերնագրով տասը էջ ծավալով շատ շահեկան եւ օբյեկտիվ ու գիտական հիմքով գրված

ուսումնասիրությունը՝ սոցիոլոգ դոկտոր Ֆուլադ Շահինի ստորագրությամբ²⁸: Հոգվածը գրվել է հեղինակի՝ 1987թ. սեպտեմբերին խորհրդային Հայաստան կատարած այցելությունից հետո՝ 1987թ. հունիսին խոստովանում է, որ ինքնապատշաճ կերպով չէր կարողանում իր առաջ պարզվել են մի շարք հարցեր, «որոնք նախապես չէինք իմանում»: Նա ցավում է. «Բավարար չափով չենք անդրադարձել մի հինավուրց ժողովրդի, որը մեր կողքին է ապրում»:

Հայ ժողովրդի մասին Ֆուլադ Շահին գրում է. «Այս ժողովուրդը կրեց այնքան բաժանում, կոտորած ու զրկանք, որպիսին չի կրել ոչ մի այլ ժողովուրդ: Այս ժողովուրդը համարյա ամբողջովին ոչնչանալու էր, եթե արաբական աշխարհի եւ այն ժամանակ դեռեւս ցարական Ռուսաստանի իր հարեւանների կարեկցանքը չլիներ»:

Հրապարակման առաջին՝ «Հայերը առանձնահատուկ ժողովուրդ են» վերնագրով բաժնում՝ Ֆուլադ Շահին «ալ-Ֆիքր ալ-տակադգուլմի»-ի ընթերցողներին ծանոթացնում է Հայաստանի աշխարհագրությունը, հայոց լեզուն եւ հավատալիքները, հայկական արվեստն ու ինքնապատշաճ կերպով գիտատեխնիկական առաջընթացը: «Հայերը որպես դատ» բաժնում, հոգվածագիրը երեք էջ է հատկացրել Հայկական հարցին: Նա գրում է. «Հայ դատ ասելով հասկանում ենք, որ գոյություն ունի Հայկական հարց կոչվող մի հարց: Այս գործույնյա, հզոր եւ քաղաքակիրթ ժողովուրդը շարունակում է սփռված մնալ աշխարհի բոլոր կողմերում, իսկ Հայաստանի մեծագույն մասը շարունակում է մնալ թուրքական տիրապետության տակ. դա ավերակ մի շրջան է 1915թ.-ին պատահած սարսափելի կոտորածից հետո, որին զոհ գնացին ավելի քան մեկ միլիոն հայեր»:

Ֆուլադ Շահին անմիջապես անդրադառնում է փրկությունը ուսուցիչների օգնությամբ ստանալու հայերի երազին ու գրում. «Իր աշխարհագրական դիրքին պատճառով, Հայաստանը միշտ էլ իրեն է ձգել ուսուցիչներին, պարսիկներին եւ թուրքերին: 1828թ.-ին ցարական Ռուսաստանը իրեն կցեց Արեւելյան Հայաստանը՝ 1827թ.-ին երեւանը պարսիկների ձեռքից ազատագրելուց հետո կնքված մի պայմանագրի հիման վրա²⁹: Այս պայմանագիրը դռները լայն բացեց ուսուցիչների եւ հայերի միջեւ իսկական համագործակցության համար, որը երկար ժամանակ ունեցել էր իր նախընթացները: Սակայն, ցարական Ռուսաստանը միմիայն իմպերիալիստական նպատակներով կցեց Կովկասյան շրջանները (Հայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանը) եւ ոչ թե ժողովուրդներին ազատագրելու եւ նրանց ինքնուրույն ճակատագիրը իրենց իսկ կողմից որոշելու նպատակով:

Սակայն, 1917թ.-ին Ռուսաստանում տեղի ունեցած [Հոկտեմբերյան,- Գ. Յ.] սոցիալիստական մեծ հեղափոխությունը Լենինի բերանով մեջտեղ բերեց ազգերի ինքնորոշման իրավունքը... Այսպիսով, 1920թ. նոյեմբերի 29-ին ստեղծվեց Հայաստանի խորհրդային իշխանությունը...»:

Ֆուլադ Շահինի կարծիքով, «Հայերի մի փոքր հատվածը բավարարվեց Հայաստանի այս փոքր մասով, մինչդեռ մնացյալ մասը կոտորածներից փախչելով սփռվեց աշխարհի բոլոր կողմերը»:

Հոգվածագիրը ինքնապատշաճ կերպով հայտարարում է հայերի «սրբավայրը» եւ շարունակում. «24 ապրիլի հիշատակը անմար մնաց յուրաքանչյուր հայի սրտում... Նրանք այդ օրը նշում են... աշխարհին հիշեցնելու համար, որ այս ժողովուրդն ունի անկորնչելի մի հարց՝ թուրքիայում առ այսօր անապատի վերածված հայրենիք վերադարձը: Եթե խորհրդային Հայաստանը նրանց հողեղե՛ն սրբավայրն է, ապա ամբողջ տարվա ընթացքում ձյունածածկ Արարատ լեռը մնում է նրանց երկրորդ սրբավայրը, որն այսօր գտնվում է բռնազավթյալ Արեւմտյան Հայաստանում:

Սակայն, հակառակ հայրենի հողի այսքան փոքրացման, հայ ժողովուրդը հույսը չի կորցրել եւ սպասում է միջազգային իրադրության եւ ուժերի հավասարակշռության փոփոխության, որպեսզի կարողանա իր մեծ հայրենիքը վերստեղծել»:

«Հայերը արաբական աշխարհում եւ Լիբանանում» վերջին բաժնից հետո³⁰, Ֆուլադ Շահին եզրակացնում է. «Իրենց ինքնությունն ու միասնությունը փնտրող ժողովուրդների համար՝ հայ ժողովուրդը ընդօրինակելի տիպար է մնում»:

Երկրորդ մաս.

Հայկական Հարցը լիբանանահայուլթյանը վերաբերող Հոդվածներում

1975թ.-ին սկսած լիբանանյան քաղաքացիական պատերազմում Հայերի Հետ կապված որոշ իրադարձութլուեններ դարձան առիթ, որպեսզի լիբանանյան պարբերական մամուլի էջերում երեւան լիբանանահայուլթյանը նվիրված հրապարակումներ, որոնցում անդրադարձեր կան նաեւ Հայկական Հարցին: Այս ուսումնասիրութլուեյան մեջ չենք անդրադառնում 1976թ.-ին, Հայաչատ Բուրլ Համմուդ թղամասի Հարեւան Նաբաա թղամասում լիբանանցի եւ պաղեստինցի առաջադիմականների կոտորածի ամիսներին լիբանանյան որոշ թերթերում («Բեյրութ», «ալ-Մուհարրեր», եւ այլն) հրապարակված եւ Հայկական Հարցի Հետ միայն շատ Հեռավոր առնչութլուեն ունեցող նյութերին³¹:

1978-1979 թվականներին լիբանանյան ֆաշիստական «քրիստոնեական» ուժերը Հակահայկական գրգռութլուեններ հրահրեցին, որոնց գոհ գնացին մի քանի տասնյակ անմեղ Հայեր: Նպատակը մեկն էր՝ ճնշել Հայ Համայնքի վրա, որպեսզի վերջինս դուրս գա իր որդեգրած աշպես կոչված «գրական չեզոքութլուեյան» քաղաքականութլուեյից եւ աջակողմյան ուժերի կողքին մասնակցի քաղաքացիական պատերազմին: Ռազմական գրգռութլուեններն ուղեկցվեցին տեղեկատվական հրահրումներով: Այսպես, անկանոն պարբերականութլուեյամբ մի քանի Համար լույս տեսած, «Լիբանանյան փաղանդներ» (Փալանդիստ) կուսակցութլուեյան «Պատերազմական խորհրդի քաղաքական շաբաթաթերթ» «ալ-ՋաբՀա»-ն («Ճակատ»)՝ իր առաջին իսկ Համարի (11 . 09 . 1978) առաջին էջում տպագրեց մի հրահրիչ Հոդված՝ «Ո՞ր եք, Լիբանանի Հայեր» վերտառութլուեյամբ: Թերթը կատաղի հարձակում է գործում լիբանանահայուլթյան վրա, որն իբր «Լիբանանի իր քրիստոնյա եղբայրներին մենակ է թողել մուսուլմանների դիմաց»: Անդրադառնալով Հայկական Հարցին, անանուն Հոդվածագիրը Հավասարութլուեյան նշան է դնում Հայերի ուսամետութլուեյան եւ կոմունիստաթիրութլուեյան (!) միջեւ: «Ալ-ՋաբՀան» գտնում է, որ Հայերը դավաճանեցին «Օսմանյան Հայրենիքին», որի Համար էլ թուրքերը նրանց պատժեցին կոտորածներով ու տեղահանութլուեյամբ: Թերթը նույնպիսի պատիժ է խոստանում լիբանանահայերին՝ «եթե շուտով խելքի չգան»:

«Ալ-ՋաբՀա» թերթուկի ու նրա Հովանավորների թիկունքում կանգնած էին թուրքական Հատուկ ծառայութլուենների գործակալները³²:

Հայկական Հարցին հեռվից է անդրադառնում Լոնդոնում լույս տեսնող լիբանանյան «ալ-Հառաղես» շաբաթաթերթն իր 1979թ. Հունվարի 5-ի Հոդվածում, որը վերնագրված է «Հայեր լիբանանցիների վրա «բեռ» լինելուց մինչեւ լիբանանյան ... հաջողութլուեյան կերտման մասնակիցներ»: Հոդվածի վերջին բաժինը կրում է «Հին տեղեկութլուեններ Հայկական նոր պետութլուեյան մասին» ենթավերնագիրը: Այստեղ Հոդվածագիր Սամի ալ-Հաթթը, իր տեղեկութլուենները ԱՄՆ Հատուկ ծառայութլուեններին հղելով, զգայացուեց ծրագրի մասին է խոսում: Ըստ նրա, ԱՄՆ-ն շահագրգռված է թուրքիայի էթնիկ փոքրամասնութլուենների պահպանումով, որպեսզի թուրքիայի բաժանման կամ երկրում սոցիալիստական վարչակարգի Հաստատման դեպքում կարողանա ինրահրային Միութլուեյան սահմանների վրա պահպանել իր ռազմաբաղաները: Այս ամերիկյան ռազմավարութլուեյան մեկ օղակն էլ, ըստ Հոդվածագրի, թուրքիայի արեւելյան շրջաններում Հայկական Հակակոմունիստական պետութլուեյան ստեղծման գաղափարն է:

Հակահայկական թշնամական բովանդակութլուեյամբ մի Հոդված լույս տեսավ «լը Ռեվեյ» («Արեւածագ») ֆրանսերեն օրաթերթի 1979թ. սեպտեմբերի 17-ի Համարում: «Լիբանոս» կեղծանունով ստորագրութլուենը կրող «Հայերն ու ... Լիբանանը» Հոդվածը Հաջորդ օրը թարգմանաբար լույս տեսավ Փալանդիստների «ալ-Աամալ» («Աշխատանք») օրաթերթում՝ «Հոդվածի կարեւորութլուեյանն ու ճշմարտութլուեյանը համար»,- ինչպես նշված է «ալ-Աամալի» խմբագրութլուեյան ներածականում: Այս գրութլուեյան հրապարակումը երկու օրաթերթերում՝ համընկնում էր Փալանդիստների եւ

նրանց աջակողմյան դաշնակիցների հակահայկական մի նոր գրգռություն հետ: «Լիբանոս» մտերմաբար եւ թուրքավարի խորհուրդ է տալիս հայերին՝ «Անցյալն անցած է»: Նա նշում է, որ դեպի Լիբանան հայերի գաղթի պատճառները երեք կոտորածներն են. «Առաջին կոտորածը գործադրվեց կարմիր սուլթան Աբդուլհամիդի իշխանության օրոք՝ 1895-1896թթ.-ին, երկրորդը կազմակերպեց երիտթուրքերի «առաջադիմական» (!) կառավարությունը 1915թ.-ին» [չակերտներն ու զարմացական նշանը հոգովածագրի են, - Գ. Յ.]: Իսկ երրորդը պատահեց 1921թ.-ին, երբ Միացյալ Նահանգների եւ Մեծ Բրիտանիայի հորդորի հիման վրա Փրանսիան առանց նախագրուչացման հեռացավ Կիլիկիայի շրջանից, որը գրավել էր 1919թ.-ին, թողնելով նրա քրիստոնյա բնակիչները՝ հայերն ու քաղաքացիները իրենց ճակատագրին, ավելի ճիշտ՝ Մուստաֆա Բեմալի ղեկավարած թուրքական «վերածննդի» անգուցե յաթաղանին»:

Այս պատմական պտույտից հետո, «Լիբանոս» սկսում է իր մաղձը թափել հայության վրա: Վկայակոչելով Տանն Կիլիկիո կաթողիկոս Նորեն Ա-ի մեկ ելույթը Հոռմի պապի կողմից ընդունելության ժամանակ, հոգովածագիրը գրում է. «Պատրիարքը՝ Լիբանանը չհիշատակեց որպես անցուղի կամ իր համայնքի ժամանակավոր կեցության վայր, այլևս որպես «նոր հայրենիք», այսինքն՝ «վերջնական հայրենիք»³⁴:

Լիբանանյան ֆաշիստների եւ աջակողմյանների հակահայկական ելույթները զգալիորեն մեղմացան (գոնե առերևույթ) 1980-ական թվականներին: Դա իր արտացոլումն ստացավ նաեւ մամուլում: Իրա մի արտահայտությունն է աջակողմյան «Լիբանանյան ճակատի» մաս կազմող Ազգային ազատական կուսակցության պաշտոնաթերթ «Սաուլ ալ-հարար» («Ազատականների ձայն») օրաթերթի 1982թ. փետրվարի 5-ի համարում հայկական մշակույթին նվիրված մի հոդվածը: Այստեղ, մի շարք ուրիշ հարցերի կողքին, հայկական հարցն էլ սխալ է մեկնաբանվել: Անանուն հոդվածագիրը, չգիտես ո՞րտեղից քաղելով իր տեղեկությունը, հայտնում է, որ Հայկական հարցը Կիլիկիայի ազատագրության եւ հայոց այնտեղ վերադարձի հարցն է:

Լիբանանի էթնիկ փոքրամասնություններին նվիրված իր հոդվածաշարքի 3-րդ հոդվածը (16 . 04 . 1984) լիբանանյան շիալական կենտրոն-աջ թեքումով «ալ-Շիրաա» («Առազատ») շաբաթաթերթը հատկացրեց լիբանանահայության: Ուսումնասիրողը՝ Դահեր Շահադեն հարց է տալիս, թե ինչո՞ւ «լիբանանահայերը ... նաեւ Հայաստանի հայեր են»: Նա էլ տալիս է պատասխանը, հայտնելով, որ «խորհրդային Հայաստանը կազմում է նրանց իսկական հայրենիքի մեկ վեցերորդ տարածքը» ու հայտնում, որ իրենց հայրենիքից արտաքսվելուց հետո, հայերը, որտեղ էլ լինեն, միշտ հույս ունեն ազատագրված հայրենիք վերադառնալու:

Լիբանանյան աջակողմյան «լը Բեվեյ» ֆրանսերեն օրաթերթը Մեծ եղեռնի 70-ամյակի առթիվ, 1985թ. ապրիլի 24-ի համարում մի հոդված հատկացրեց հայերին: Այն վերնագրված է՝ «Հայկական սփյուռքը – Հինգ աշխարհամասերում սփռված 2 միլիոն հոգի»: Հոդվածագիրն ակնհայտորեն չի ցանկանում խորանալ Հայկական հարցի էություն մեջ եւ բավարարվում է հայտնելով, որ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին հայեր ջարդի ենթարկվեցին Օսմանյան կայսրության մեջ, որի հետեւանքով էլ գաղթեցին հայրենի վայրերից, որով եւ ծնունդ առավ ժամանակակից հայ սփյուռքը:

Համարյա նման բովանդակություն ունի աջակողմյան «Մագազեն» ֆրանսերեն շաբաթաթերթի 1987թ. փետրվարի 21-ի համարում «Հայերը» վերտառությամբ լույս տեսած հոդվածը: Հոդվածագիրը քիչ թե շատ անդրադառնում է հայոց լեզվին, մշակույթի տարբեր բնագավառներին եւ այլն, սակայն խուսափում է խոսել Հայկական հարցի մասին՝ բավարարվելով հիշատակել Մեծ եղեռնն ու Կիլիկիայի պարպումը:

Աշխարհի ազգային-ազատագրական եւ հեղափոխական շարժումների հարցերում մասնագիտացած «ալ-Տասադդի» («Դիմակայում») շաբաթաթերթը 1986թ. վերջից սկսեց հրատարակել այդ շարժումների մասին մի ընդարձակ հոդվածաշար՝ «Թղթածրար» խորագրի տակ: Պարբերականի 28-րդ համարի (14 . 03 . 1987) առանցքային թեման հայերն ու Հայկական հարցն էին: Հրապարակման վերնագիրն

էր՝ «Հայերը Լիբանանում՝ հավատարմութեան եւ պատկանելութեան միջեւ»։ Հողվածն ունենր երկրորդ վերնագիր՝ «Հայերը պատմութեան ընթացքում: ողբերգութեանից մինչեւ ազգային հարցը»: Այս հրատարակման նյութերը, գրեթե առանց բացառութեան, արտատպվել են ՀԱՀԳԲ-ի արաբերեն «Արմինիա» պաշտոնաթերթից, հետեւաբար, որպէս հայկական տեսակետի համարյա նույնական արտացոլում, սույն հրատարակումը գանց ենք առնում այս ուսումնասիրութեան մեջ:

Լիբանանի հայկական համայնքի մասին գրելիս՝ այս կամ այն չափով Հայկական հարցին անդրադարձել են նաեւ լիբանանյան մի շարք ուրիշ պարբերականներ³⁶:

Երրորդ մաս.

Հայկական հարցը հայկական ազգային-ազատագրական կազմակերպութեաններին նվիրված հողվածներում

Դիտարկվող 1975-1987թթ. ժամանակահատվածում լիբանանյան եւ առհասարակ համաշխարհային պարբերական մամուլի էջերում հայկական նյութերի մեծագույն մասն առնչվում է 1975թ. ծնունդ առած հայկական զինյալ գաղտնի կազմակերպութեաններին, մասնավորաբար Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակին: Այս երեւոյթն ունի իր տրամաբանական բացատրութեանը. այս կազմակերպութեաններին ամենաակտիվ գործունեութեանը ծավալվեց հենց այս ժամանակաշրջանում, մասնավորապէս 1975-1984թթ. տասնամյակում: Նրանց բիրտ, հաճախ էլ արյունալի գործողութեաններն էին, որ հայկական հարցը վերաթարծեցին միջազգային ասպարեզում: Ոչ պակաս գործոն է այդ գաղտնի կազմակերպութեաններին վերաբերյալ զգայացունց տեղեկութեաններ ձեռք բերելու որոշ լրագրողների հետեւողական, երբեմն հիվանդագին աստիճանի հասնող ձգտումը:

Հայկական զինյալ կազմակերպութեաններին անդրադառնալիս կամ նրանց ղեկավարների ու անդամների հետ հարցազրույցներում, լիբանանյան պարբերականները հաճախ գրել են նաեւ հայկական հարցի մասին: Այս թեման ինքնին առանձին ուսումնասիրութեան առարկա կարող է լինել, հատկապէս եթե նկատի ունենանք հրատարակումների բավականին պատկառելի ծավալը: Սույն ուսումնասիրութեան մեջ մենք կսահմանափակվենք ընդամենը մի քանի հրատարակումներով, որոնք, ըստ մեզ, առավել ակնառու են ու հետաքրքրական:

«Ալ-Մաուկեֆ ալ-արաբի» («Արաբական դիրքորոշում») շաբաթաթերթն իր 53-րդ համարի (5 . 10 . 1981) առաջին շաբաթի նվիրել է Հայերին: Շաբաթի վրա տպվել էր «Ալ-Մաուկեֆ ալ-արաբի» հայկական գաղտնի բանակի օպերացիաների շտաբում» զգայացունց արտահայտութեանը: Շաբաթաթերթի Փարիզի թղթակից Կասեմ ալ-Հադին իր հաղորդման մի մասը հատկացրել է երկու շաբաթ առաջ Փարիզի թուրքական հյուպատոսարանի գրավումն իրականացրած «Վան» գործողութեան: Այսուհանդերձ, ալ-Հադի նշում է, որ հայ երիտասարդութեանը ստիպված է եղել գննքի դիմելու, քանի որ «նրանք գտնում են, որ հայկական հարցի արծարծման խաղաղ միջոցները անարդյունավետ են»: Նա եզրակացնում է, որ «սոցիալիստական Ֆրանսիան գտնվում է հայկական ուժին դեմ հանդիման»: Թղթակիցը նախատեսում է հայկական նոր հարձակումներ եվրոպայում, մասնավորաբար՝ Ֆրանսիայում:

Համարյա նույն օրերին, «Վան» գործողութեան մասին մի լայնածավալ հողված է տպագրել Փարիզում լույս տեսնող լիբանանյան «ալ-Բիֆազ ալ-արաբի» («Արաբական պայքար») շաբաթաթերթի աշխատակից Շարբել Լուբնանը (թիվ 173-856, 11. 10. 1981), «Հայկական գաղտնի բանակն ու Փարիզի գործողութեանը» վերտառութեամբ: Հողվածագիրը, սակայն, չի անդրադառնում հայկական հարցի բուն էութեանը, եւ բավարարվում է հայտնելով, թե հայոց պայքարը նպատակ է հետապնդում թուրքական գրավման տակ մնացած հողերի ազատագրումը: Լուբնան ավելի շուտ գրում է ՀԱՀԳԲ-ի մարտավարական խնդիրների մասին, եզրակացնելով, որ

«ԱՍԱԼԱ-ն փոխել է իր մարտավարութունը եւ «Խփի՛ ու փախի՛» սկզբունքից անցել է ուղղակի հարձակման»:

Դեպքից երկու ամիս հետո իսկ, «ալ-Ուաթան ալ-արաբի» շաբաթաթերթին անդրադառնում էր «Վան» գործողութիւնը, ավելի շուտ՝ հայ-ֆրանսիական հարաբերութիւնների վրա վերջինիս հնարավոր անդրադարձներին (թիվ 250, 27. 11 – 3. 12. 1981): Թղթակից Մուհիբ Ղազզիի այստեղ ավելի շուտ նկարագրում է ՀԱՀԳԲ-ի գործունեութիւնը, քննարկում նրա մարտիկներից Դմիտրիու Զորջիուի³⁷ հարցը: «Սերիան» վերնագիրը կրող հատուկ սյունակում տրվել է ՀԱՀԳԲ-ի իրականացրած գործողութիւնների ցանկը: Այս հրապարակման մեջ Հայկական հարցը հիշատակվում է միայն որպէս խթան այդ գործողութիւնների՝ առանց մտնելու այդ հարցի էութեան մեջ:

Լոնդոնում լույս տեսնող լիբանանյան «ալ-Հաուադես» շաբաթաթերթը եւս իր մեկ համարի (12 . 02 . 1982) շապիկն ու բազմաթիվ էջեր նվիրել է ՀԱՀԳԲ-ին: Թերթի թղթակիցներից Զեքի Շեհաբ հանդիպում է ունենում ՀԱՀԳԲ-ի ղեկավարներից մեկի հետ: Վերջինս, ի միջի այլոց, հայտարարում է. «Հպարտանում ենք Նորհրդային Հայաստանով, սակայն մեղադրում ենք նրան հայկական պայքարի նկատմամբ ցուցաբերած անտարբերութեան համար... Թուրքական վարչակարգն է մեր հիմնական թշնամին. մեր պետութեան սահմանները վավերացրել է 1920թ. Լոզանի դաշնագիրը³⁸»: Նա ավելացնում է. «Գործակցելու ենք քրդերի եւ որոշ արաբների ու թուրքերի հետ: Ուժեր ունենք Ամերիկայում եւ կպեր՝ ֆրանսիացի պատասխանատուների հետ»: ՀԱՀԳԲ-ի անանուն ղեկավարը շարադրում է իր տեսակետները Հայկական հարցի մասին, որոնք, որպէս հայկական տեսակետներ, դուրս են մեր ուսումնասիրութեան թեմայից:

Լիբանանյան ազդեցիկ «ալ-Սաֆիր» օրաթերթին էլ իր 1982թ. մայիսի 15-ի համարում տպել է նման մի հարցազրույց: Համիդե Նասնաս այնտեղ գրում է, որ ՀԱՀԳԲ-ի համակիր Հայկական ժողովրդային շարժումից իրեն հայտնել են, թե «մեզ պաղեստինցիներին միացնող շատ կետեր կան. մեր եւ նրանց թշնամիները մեկն են... Սիոնիզմի հիմնադիր Թեոդոր Հերցելը սուլթան [Աբդուլ-Գ. Յ.] համիդին առաջարկել է փոխան Պաղեստինը հրեաներին տալու, օգնել նրան կազմակերպելու հայերի գանգվածային կոտորածներ»: ՀԱՀԳԲ-ի պատասխանատուի արտահայտութիւնները «ալ-Սաֆիրի» թղթակցի հետ հարցազրույցում՝ գանց ենք առնում վերոհիշյալ պատճառով:

Զարմանալիորեն, Հայկական հարցին անդրադարձ չկա «ալ-Ուաթան ալ-արաբի» 1983թ. օգոստոսի 11-ի համարում տպված հոդվածում, որն ունի երկար եւ զգայացունց վերնագիր՝ «Բեյրութից Թեհրան՝ ո՞վ է շարժման մեջ դնում հայկական բրտութիւնը - Հակոբ Հակոբյան «մահացավ» իսրայելական ներխուժման ժամանակ եւ հարուժիտն առավ մի արաբական երկրում»: Տարօրինակ է, որ ընդամենը մի քանի օր առաջ, Լիսաբոնի թուրքական դեսպանատան Հայ հեղափոխական բանակի գրավման փորձից եւ Անկարայի էսեմբողա օդանավակայանում ՀԱՀԳԲ-ի «Կարին» անձնասպանական գործողութիւնից հետո, այս թերթը անտեսել էր այս որակական գործողութիւնները եւ իր ուշադրութիւնը սեւեռել ՀԱՀԳԲ-ի հիմնադիր-ղեկավար Հակոբ Հակոբյանի անձի վրա...

«Ալ-Ուսբուհ ալ-արաբի» շաբաթաթերթին իր 1247-րդ համարի (5. 09. 1983) շապիկի թեման վերնագրել է «Հայեր - Բարկութեան սերունդը», իսկ իր էջերում հրապարակել հայկական թեմայով երկու հոդված: Առաջինը վերնագրված է՝ «Հայաստանից Բուրջ Համուդ - Նպատակները միասնական, սակայն ուղիները տարբերակված ժողովուրդ»: Հոդվածագիր Մարուան Հազզազ ավելի շատ գրում է հայ մարտիկների, մասնավորաբար ՀԱՀԳԲ-ի գործողութիւնների մասին: «Հայերի պատմութիւնը» ենթաբաժնում նա համառոտ կերպով ներկայացնում է Հայկական հարցը, այն համարելով «Հայրենիքի ազատագրութեան եւ այնտեղ վերադարձի հարց»: Նա իրավացիորեն նշում է, որ 19-րդ դարի 70-ական թվականներից մինչեւ այսօր Հայկական «արդար հարցը» չի լուծվել՝ միջազգային մրցակցութիւնների պատճառով:

Ապա նա գրում է Համիդյան եւ երիտթուրքական Հայկական կոտորածների մասին: Հաղագր էր Հոգվածն ավարտում է «Փակ ճանապարհը - SOS» հատկանշական ենթավերնագիրն ունեցող սյունակով, որտեղ Համոզմունք է հայտնում, թե Հայկական Հարցը մոտիկ ապագայում լուծելի հարց չէ:

Նույն շաբաթաթերթը նույն Համարի իր մշտական «Թղթածրար» բաժինը եւս Հատկացրել է Հայկական թեմային: Այն վերնագրված է՝ «Լիսաբոնում թուրքական դեսպանատան խմբակի անդամներից մեկի հայրն ասում է. «Մեր պապերը մեզ Համար զոհվեցին եւ մենք զոհվում ենք դալիք սերունդների համար»: Այստեղ արտահայտված մտքերը, որպես Հայկական տեսակետ, նորից զանց ենք անում:

Փարիզում հրատարակվող, սակայն համաարաբական նշանակութուն ունեցող «ալ-Մուստակբալ» լիբանանյան շաբաթաթերթն իր 1984թ. մայիսի 12-ի Համարի «Տանուկ տված Հարցեր» խոսուեն խորագրով շաբթի 10-րդ հրատարակումը նվիրել է Հայկական Հարցին: Հոգվածն այդպես էլ վերնագրվել է՝ «Հայերը - Կես Հայրենիքով ժողովուրդ եւ առանց գաղտնիքների բանակ»: Անանուն հեղինակը, հակառակ խորագրին, փոխանակ քննարկելու Հայկական Հարցը, գրեթե ամբողջովին գրում է ՀԱՀԳԲ-ի գործունեության մասին, իսկ հրատարակման՝ պատմական տվյալներ պարունակող «Անկախության երազը» եւ «Հաղթանակի պայմանները» բաժինները ողողել է պատմական սխալ տեղեկություններով ու գնահատականներով. օրինակ, Հնչակյանները հայտարարվում են «Հայկական պաշտոնական կոմունիստներ»³⁹...»

Հայկական նյութերով ու հատկապես հայկական ազատագրական պայքարին նվիրված հրատարակումներով լիբանանյան պարբերական մամուլում առանձնանում է «ալ-Տասադգի» շաբաթաթերթը: Դա պատահական չէ, որովհետեւ, ինչպես նշեցինք, այս պարբերականը գրում էր միայն ազգային-ազատագրական պայքար մղող ժողովուրդների եւ շարժումների մասին: Շատ քիչ են այս պարբերականի այն համարները, որոնցում հայերի մասին որեւէ նյութ չլինի: «Ալ-Տասադգին» արդեն իր երկրորդ համարում (28. 08. 1986) հրատարակեց «Ալ-Տասադգին» «Վան» գործողության հերոսների հետ - «Վան» գործողությունն իրագործեց իր քաղաքական ու զինվորական նպատակները» վերնագրով հարցազրույցը: Վերնագրից իսկ հստակ է դառնում պարբերականի դիրքորոշումը հայկական պայքարի կողքին: Շաբաթաթերթը հատուկ սյունակի տակ տալիս է գործողության չորս մարտիկների կենսագրությունները: Այս հարցազրույցն ու հաջորդ համարում (թիվ 3, 4. 09. 1986) լույս տեսած՝ «Հայկական գաղտնի բանակի՝ ԱՍԱԼԱ-ի հետ. Հարցեր չունենք Սովետական Հայաստանի ղեկավարության հետ» վերնագրով հարցազրույցը, որպես հայկական տեսակետներ, դուրս են այս ուսումնասիրության շրջանակներից: Առանձնակի հետաքրքրություն է առաջացնում 10-րդ համարում (23. 10. 1986), «Իմպերիալիզմի դեմ պայքարի աստղերն աշխարհում» խորագրով մշտական բաժնի հերթական ուսումնասիրությունը, որը նվիրված է ՀԱՀԳԲ-ին: Հոգվածն ունի «Հայերը - Ժողովուրդ եւ դատ» ենթավերնագիրը: Կես տպագրական մամուլ ծավալով հրատարակման մոտ կեսը հատկացվել է Հայկական Հարցի պատմությանը: Անանուն ուսումնասիրողը գտնում է, որ Հայկական Հարցը ծագել է այն օրը, երբ Հայ ժողովուրդը կորցրել է իր պետականությունը: Նա գրում է պարսիկների եւ թուրքերի լծի տակ հայերի կրած տառապանքների մասին: Նա հայտնում է, որ Ռուսական կայսրության հզորացման զուգահեռ, Հայոց մեծերը իրենց փրկությունը մեծ մասամբ կապեցին Ռուսաստանի հետ: Ապա Հոգվածագիրը գրում է ռուս-թուրքական եւ ռուս-պարսկական պատերազմների, թուրքմենչայի, Սան Ստեֆանոյի եւ Բեռլինի դաշնագրերի մասին: Լայն տեղ է հատկացվել Մեծ եղեռնի նկարագրությանը: «Ալ-Տասադգին» թուրքական բռնատիրությունից Արեւմտյան Հայաստանի ազատագրության համար պայքարը համարում է «արդարացի» եւ հավատում այդ պայքարի հաղթական ավարտին: Ապա շաբաթաթերթը մանրամասն գրում է ՀԱՀԳԲ-ի ծննդի պատճառների, նրա կատարած գործողությունների, գաղափարական հիմնական Հայեցակետերի մասին:

Հայկական Հարցին անդրադարձած բազմաթիվ այլ նյութեր կան Հայկական ազատագրական պայքարին նվիրված լիբանանյան պարբերական մամուլի այլ անունների տարբեր համարներում⁴⁰:

Չորրորդ մաս.

Հայկական Հարցը լիբանանյան մամուլի Հայկական լուրերում

Լիբանանյան պարբերական մամուլը Հայկական Հարցին երբեմն անդրադարձել է կամ նրան ակնարկել է նաև Հայերին առնչվող տարբեր լուրերի կապակցությամբ:

Լիբանանյան մամուլում լույս տեսած Հայկական լուրերը կարելի է դասակարգել երկու խմբերում.

1. Հայկական Հարցի հետ որեւէ առնչություն չունեցող լուրեր:
2. Հայկական զինյալ կազմակերպությունների գործողությունների կամ նրանց այլ գործունեության մասին լուրեր:

Տվյալ ժամանակահատվածում, երկրորդ խմբի լուրերը գրավել են առյուծի բաժինը լիբանանյան մամուլի Հայկական նյութերի մեջ: Այս լուրերի, ինչպես նաև ընդհանրապես Հայկական լուրերի առատությունը աչքի է ընկնում համարաբարական նշանակության, կենտրոնամետ «ալ-Նահար» («Օր») օրաթերթը⁴¹:

3. Մեծ եղեռնի հիշատակումների մասին լուրեր⁴²:
4. Շվեյցարիայում Հայկական Համագումարների եւ Աթենքում Հայ ժողովրդի հետ միասնականության համագումարների մասին լուրեր⁴³:
5. Հայկական Հարցին հետ առնչվող զանազան լուրեր⁴⁴:

Եզրակացություն

Լիբանանյան ոչ Հայկական պարբերական մամուլի Հայկական նյութերի ուսումնասիրությունն ու վերլուծումը թույլ է տալիս կատարելու հետեւյալ եզրակացությունները.

1. Մինչեւ Հայկական ընդհատակյա կազմակերպությունների երեւան գալը, լիբանանյան ոչ Հայկական մամուլը շատ քիչ էր անդրադառնում Հայ դատին եւ Հայոց ցեղասպանությանը⁴⁵: Դիտարկվող 13 տարիներին լիբանանյան ոչ Հայկական մամուլում Հայկական Հարցի շուրջ լույս տեսած նյութերի քանակը բազմապատիկ գերազանցում է նույն մամուլում հետեղեռնյան ժամանակաշրջանում մինչ այդ լույս տեսած նյութերի քանակին:
2. Որպես ընդհանուր օրինաչափություն կարելի է նշել, որ գրեթե բոլոր պարբերականները, Հայկական Հարցին ու Հայոց պատմությանն անդրադառնալիս, թույլ են տալիս թվականների, Հայկական անձնանունների եւ տեղանունների անճշտություններ: Դա պայմանավորված է արաբերեն լեզվի հնարավորությունների՝ հայերենի հետ համեմատած սահմանափակությամբ, մուտքագրողի սխալներով, որոշ հոգվածագիրների՝ նյութի նկատմամբ անլուրջ, ընթերցողների՝ Հայկական կազմակերպությունների գործողություններից հետո ծագած հետաքրքրությունը ամեն կերպ ու արագորեն բավարարելու մոտեցումով, եւ, հատկապես, հոգվածագիրների ձեռքի տակ այս մասին արաբերենով կամ նույնիսկ ուրիշ օտար լեզուներով գրականության բացակայությամբ կամ խիստ պակասով: Այդ տարիներին, հիմնական գրականությունն ու աղբյուրները եղել են Հայերեն, որոնք թարգմանվել են պատմության բավարար գիտելիք չունեցող, հաճախ էլ՝ պատահական մարդկանց կողմից: 1986-1987թթ. այս ուսումնասիրության համար նյութեր հավաքելու ժամանակ, լիբանանյան գրեթե բոլոր պարբերականների խմբագիրները դժգոհում էին թե՛ լիբանանահայ կազմակերպություններից եւ թե՛

- Խորհրդային Հայաստանի պատկան մարմիններից, որոնք ոչինչ են մատակարարում իրենց: Մեր պրպտուումների ընթացքում Հանդիպեցինք ընդամենը մեկ փաստի, երբ հայրենի մի դիտնական հրապարակվել է Լիբանանի ոչ հայկական մամուլում, այն էլ՝ ոչ հայկական հարցի մասին⁴⁶:
3. Մամուլի լիբանանցի հեղինակների մոտ չկա միասնական մոտեցում թե՛ Մեծ եղեռնի ժամանակային ու տարածքային ընթացումների, թե՛, մասնավորաբար, «Հայկական հարց» հասկացությունից մասին: Նշվում են ցեղասպանությունից ժամանակային տարբեր տարեթվեր ու տարածքներ, զոհերի քանակի ամենատարբեր թվեր, իսկ «Հայկական հարց» հասկացությունից թե՛ ծագումն են թե՛ բուն այդ եզրույթի սահմանումն ունեն տարբերություններ: Օրինակ, մինչ մի հեղինակ համարում է, որ Հայկական հարցը ծագել է Հայ ժողովրդի կազմավորման հետ, մեկ ուրիշը նրա ծննդի տարեթիվ է համարում Կիլիկիայի հայոց թագավորության անկումը 1375թ., ուրիշներ այդ տարեթիվը նշում են Սան Ստեֆանոյի դաշնագրի տարեթիվը՝ 1878թ., եւն.: Մեր դիտարկումները ցույց են տվել, որ այս խառնաբերությունը հետեւանքն է նույնիսկ Հայկական միջավայրում տվյալ ժամանակաշրջանում (դժբախտաբար՝ մինչեւ օրս) առկա համընդհանուր շփոթ իրադրություն, երբ նույնիսկ ակադեմիական շրջանակներում իրենց հստակ ձեւակերպված պատասխանները չեն ստացել այս խնդիրները:
 4. Հրապարակումներում իրեն հստակ զգացնել է տալիս սուբյեկտիվ գործոնը: Թուրքիայի հարաբերությունները արաբական երկրների, Իսրայելի, ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ, նաեւ՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմում հայերի «Դրական չեզոքություն» քաղաքականությունից գոհ կամ դժգոհ տեղական կողմերի դիրքորոշումներն իրենց անդրադարձն են տվել տեղական մամուլում՝ Հայկական հարցի մեկնաբանությունների մեջ: Ընդհանուր վերջածո՝ աջակողմյան եւ համակիր մամուլը բացասաբար, հաճախ էլ՝ թուրքական պետական դիրքորոշումներն հիշեցնող ձեւակերպումներ է տվել Մեծ եղեռնի պատճառներին եւ Հայկական հարցին, մինչդեռ նույն հարցերի մասին մոտեցումները դրական, հայամետ արտահայտություններով են ներկայացվել լիբանանյան ճախակողմյան մամուլում:

1988թ. սկսած, լիբանանյան մամուլը ավելի հաճախ անդրադարձավ Հայկական հարցին՝ կապված արցախյան շարժման, արցախյան ազատամարտի եւ արցախյան հիմնահարցի կարգավորման հետ: Այդ հրապարակումների հետազոտությունը առանձին ուսումնասիրությունից թեմա է:

Այդուհանդերձ, ցավով պետք է արձանագրել, որ հակառակ Լիբանանում առկա ընդհանուր առմամբ հայամետ վերաբերմունքին, հայությունն առ այսօր չի կարողացել ըստ արժանվույն օգտագործել լիբանանյան ոչ հայկական մամուլը՝ իր արդար դատի պրոպագանդան գործում:

Գեւորգ Յազըճյան,

պատմական գիտությունների թեկնածու

Ծանոթություններ

¹ Այդ պարբերականներն են եղել ՀԾԴ Զավարյան ուսանողական միությունից հրատարակած «Զավարյան ուրբիլ» անգլերեն, անկանոն պարբերականությամբ շաբաթաթերթը, ՀԱՀԳԲ-ի պաշտոնաթերթ «Հայաստանի» արաբերեն տարբերակ, անկանոն պարբերականությամբ «Արմինիա» թերթը (ուլյս է տեսել 1984թ.-ից) եւ ՀԱՀԳԲ-ի համակիր Հայկական ժողովրդային շարժում կազմակերպության պաշտոնաթերթեր «Մուշը» (անգլերեն), «Վանը» (ֆրանսերեն) եւ «Կարինը» (թուրքերեն):

² 1980-1984թթ. բազմալեզու հրատարակություն էր ՀԱՀԳԲ-ի «Հայաստանը»: Արաբերենով գրություններ կան ՀԺՇ Լիբանանի մասնաճյուղի «Երկաթե շերեփ» պաշտոնաթերթի առաջին թիվ 0, 1983 համարում:

³ Դրանցից են ՀՅԴ ղեկավարներից Հրաչ Տասնպետյանի «Հայկական հարցը» հոդվածը «ԴՊրիան-ը ժուր» ֆրանսերեն օրաթերթի 1980թ. ապրիլի 24-ի` հայտնական նվիրված բացառիկ-հավելվածում, նույնի նույնանուն հոդվածը նույն թերթի 1985թ. ապրիլի 24-ի համարում, ՀՅԴ Լիբանանի գործիչ Հրաչ Պետոյանի հոդվածաշարքը «զը Դեյի սթար» անգլերեն օրաթերթում (5-9 ապրիլի, 1984թ.), կոմունիստ հասարակական գործիչ եւ գրող Գառնիկ Ազգարյանի մի շարք գրությունները Լիբանանի կոմկուսի «ալ-Նիդա'ա» օրաթերթում եւ այլն:

⁴ Խորհրդային Հայաստանի բնակչության թվաքանակը առնվազն մեկ միլիոնով նվազեցված է, իսկ 0.13 տոկոսով հեղինակը շփոթել է Մեծ Հայքի եւ Խորհրդային Միության տարածքները:

⁵ 1326 տարեթիվը սխալ է, պետք է լինի 1226. իսկ Զաքարյանները, թեեւ միջնադարյան որոշ աղբյուրներում հիշատակվում են որպես «թազավոր», հայ պատմագիտության մեջ որպես թագավորական հարստություն ընդունված չեն:

⁶ 17-րդ դարում ուսաները Հայաստանից որեւէ շրջան չեն գրավել:

⁷ Հեղինակը հայտնապես շփոթում է Սան Ստեֆանոյի դաշնագիրը Բեռլինի վեհաժողովի որոշումների հետ: Այս սխալը հեղինակն ուղղում է մի քանի տող հետո:

⁸ Հեղինակը սխալվում է. ՀԱՀԳԲ-ը բազմիցս հայտարարել է, թե Խորհրդային Հայաստանը հայկական ազատագրված հողամաս է համարում:

⁹ Այս հաստատումն իրոք ուներ որոշակի հիմքեր: Դրա ապացույցը ՀՅԴ-ի հիմնած «Հայկական ցեղասպանության արդարություն մարտիկների» գլխավոր պատասխանատու Աբրահամ Աշճյանի առեւտրական էր Բեյրութում 1982թ. վերջին օրերին, իսկ հաջորդ տարիներին` ՀԱՀԳԲ-ի եւ ՀԺԾ-ի մոտ տասը ակտիվիստների սպանությունը Լիբանանում ու եվրոպայում` լիբանանյան, իսրայելական եւ այլ գաղտնի սպասարկությունների գործակցությունները:

¹⁰ Sadi Kocas, Tarihi Boyunca Ermeniler ve Turk-Ermeni Niskileri, Ankara, 1967, s. 202.

¹¹ Այս կուսակցության նպատակակետը Մեծ Սիրիայի ստեղծումն է, որի մեջ մտնելու են այսօրվան Իսրայել-Պաղեստինի, Հորդանանի, Լիբանանի, Սիրիայի, Իրաքի եւ Բուսնիայի տարածքները, Կիպրոսը, Սինայի թերակղզին եւ Թուրքիային բռնակցված Ալեքսանդրետի սանձակն ու Կրիկիան: Վերջինիս հիման վրա, այս կուսակցությունն ունի շեշտված հակաթուրքական կողմնորոշում:

¹² 1860թ. Լեռնալիբանանում գրուզների կողմից մարտնի քրիստոնյաների կոտորածից հետո, մեծ տերությունների միջամտությամբ, Լեռնալիբանանն ինքնավարություն ստացավ Օսմանյան կայսրության կազմում` քրիստոնյա կառավարիչով:

¹³ Այս շարադրանքից հստակ երեւում է, որ «Սարահ-ուլ-Իսկեր - ալ-Բինա'ա»-ի հոդվածագիրը գրեթե բառացիորեն արտագրել է «ալ-Ուսթան ալ-արաբի»-ի 168-րդ համարի որոշ տողերը:

¹⁴ Հոդվածագրի այս հաստատումը ճիշտ է միայն ՀՅԴ-ի համար եւ ոչ թե ամբողջ հայության: Հայտնի է, որ գոնե Հնչակյան կուսակցությունը բարեփոխման որեւէ հույս չէր կապում երիտթուրքերի հետ:

¹⁵ Բացահայտ սխալ է. պետք է լինի` զրզզ (կիրզիզ):

¹⁶ Բուն անունով` Պետրոս Միմոնյան. տե'ս Ռաֆֆի Պեյլերյան (Գեւորգ Յազըճյան). «Ջնջեք սփյուռքահայ պատմագրության «սպիտակ բիծերը» - Պիեռ Հեփես», «Սփիւռք», ամսաթերթ, Բեյրութ, թիվ 18, դեկտ. 1990, էջ 9-11:

¹⁷ Գրքի արաբերեն լիակատար թարգմանությունը` «Սիոնիզմը եւ նահատակ ժողովուրդները» խորագրով, լույս տեսավ 1990թ. վերջին` լիբանանյան «Դար էլ-Նիդալ» հրատարակչությունից` Մուֆիդ Առնուկի թարգմանությամբ, գործակցությամբ իր էզվար եղբոր. տե'ս Արփի (Գեւորգ Յազըճյան). «Ազգային-մշակութային լուրեր - նոր հրատարակություններ», «Սփիւռք», թիվ 17, նոյ. 1990, էջ 23, նաեւ` Հ. Գ. (Գեւորգ Յազըճյան). «Հարցազրույց սուրիացի մտավորական Մուֆիդ Առնուկի հետ», «Սփիւռք», թիվ 18, դեկտ. 1990, էջ 6-8:

¹⁸ Հեղինակն իհարկե նկատի է ունեցել Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակին:

¹⁹ Իսկապես էլ, նախորդ` 1981 տարում համաշխարհային հանրության ուշադրությունը գրավեցին հայկական հակաթուրքական զինյալ գործողությունները, մասնավորաբար սեպտեմբերի 24-ին ՀԱՀԳԲ-ի «Եղիա Քելշիջյան» անձնասպանական կոմանդոյի չորս մարտիկների կողմից Փարիզում թուրքական Հյուսիսատոսարանի գրավման «Վան» գործողությունը:

²⁰ Մեր հավաստի տեղեկություններով, թե' հայտարարության նախաձեռնումը եւ թե' հայտարարության շարադրանքը հիմնականում կատարել է Լիբանանի կոմկուսի Հայկական կազմակերպության ղեկավարներից, «Կանչ» հայերեն շաբաթաթերթի մշտական հրատարակագիր, բանաստեղծ եւ հասարակական-քաղաքական գործիչ Գառնիկ Ազգարյանը:

²¹ Ժամանակագրականորեն առաջ անցնելով հայտնենք, որ նույն Լիբանանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն, առաջին քարտուղար Ժորժ Հաուրի, Քաղբյուրոյի կից Հայկական վերին մարմինն ու առհասարակ Լիբանանի կոմկուսը նույնիսկ չբարեհաճեցին իրենց Երեւանի

կազմակերպութեան պատասխանել, երբ վերջինս 1988թ. դարնանը Հատուկ տեղեկագրով դիմեց իրենց՝ ազգերի ինքնորոշման սկզբունքից ելնելով դիրքորոշվել արցախյան Հարցի առթիվ. Տեղեկագիրը տե՛ն «Երկաթէ շերեփ» ամսաթերթ, Բեյրութ, Հունիս 1988, էջ 23-28:

²² Այս փաստաթղթի Հեղինակումից տարիներ առաջ, դեռևս 1975թ.-ից, սերտ գործակցութեամբ էր Հաստատվել ՀԱՀԳԲ-ի եւ պաղեստինյան մի շարք կազմակերպութեանների միջև. Հետագա տարիներին, այդ գործակցութեանն ընդլայնվելու էր դեպի քրդական, բասկական, իրլանդական եւ այլ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքար մղող կազմակերպութեանները:

²³ 1916թ. մայիսի 6-ին, Ջեմալ փաշայի հրամանով, տասնյակներով արաբ մտավորականներ կախաղան Հանվեցին Բեյրութի Բուրջ եւ Դամասկոսի Մերջե կենտրոնական հրապարակներում եւ Սիրիա-Լիբանանի Օսմանյան կառավարչի նստավայր Ալեյ ավանում (Լիբանան):

²⁴ Հոգիածագիրն անշուշտ զանց է առնում այն փաստը, որ Արեւելյան Հայաստանի մաս կազմող Նախընթացում, ԼՂԻՄ-ում եւ մյուս տարածքներում Հայերի նկատմամբ բռնութեանների Հետևողական քաղաքականութեան է տարվել:

²⁵ Մենահիմ Բեգին՝ Իսրայելի վարչապետ 1977թ.-ից: Նրա վարչապետութեան օրով Իսրայելը 1982թ.-ին ներխուժեց Լիբանան եւ գրավեց մայրաքաղաք Բեյրութը: 1948թ. Պաղեստինի Դեյր Յասին գյուղում տասնյակներով խաղաղ պաղեստինցիների կոտորած Բեգինի հրամանով, 1982թ. օգոստոսին, Իսրայելի Հետ գործակցող «Լիբանանյան ուժեր» ծայրահեղ աջակողմյան-ֆաշիստական զորամիավորման զինյալները Հազարավոր պաղեստինցիների կոտորեցին Բեյրութի պաղեստինյան Սարբա եւ Շաթիլա գաղթականներում:

²⁶ Բեյրութի մերձակա Թել-Չաթար պաղեստինյան գաղթականները լիբանանցի աջակողմյանների դեմ ծանր մարտերից Հետո ընկավ 1976թ.-ին: Նույն թվականին ընկավ նաև պաղեստինցիներով եւ լիբանանցի շիաներով խիտ բնակեցված Նաբաա արվարձանը: Երկու վայրերի անկումից Հետո, նրանցում սարսափելի ջարդեր տեղի ունեցան:

²⁷ Սերի գաշնազիրը կնքվել է 1920թ. օգոստոսի 10-ին:

²⁸ Հաջորդ տարի՝ 1988թ.-ին, ԱՄԿ-ի «Դար ալ-Տակադդումիյա» հրատարակչությունից լույս տեսավ ԱՄԿ-ի անդամ, պատմագիտութեան դոկտոր Սալեհ Չահրեդդինի նույնանուն՝ «Հայերը – Ժողովուրդ եւ դատ» արժեքավոր մենագրությունը: Հետագա տարիներին, դոկտ. Չահրեդդին լույս բնծայեց նաև մի շարք գրքուկներ եւ մենագրություններ՝ նվիրված Հայ դատին եւ նրա մասնիկ Արցախի հարցին:

²⁹ Խոսքը 1828թ.-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրի մասին է: Պատմական ճշգրտութեան տեսանկյանց հարկավոր է այստեղ նշել, թե Արեւելյան Հայաստանի Հյուսիսային եւ արեւելյան որոշ շրջաններ Թուսաստանին միացել էին դեռևս 19-րդ դարի առաջին երկու տասնամյակներում:

³⁰ Այս բաժնի նյութը մեր ուսումնասիրության Հետ չի առնչվում:

³¹ Այդ թերթերում հակահայկական նյութերի երեւալուն առիթ ծառայեց ՀԹԴ կուսակցության զինյակների մասնակցութեամբ Նաբաայի կոլվներին՝ լիբանանյան աջակողմյան ուժերի կողքին:

³² Իսկութեան մեջ, թերթը անպաշտոն օրգանն էր «Լիբանանը օտարներից ազատագրելու ճակատ» կոչվող կազմակերպության, որը ծանոթ էր Լիբանանի մուսուլմանաբնակ շրջաններում ակնված ավտոների միջոցով կատարած ջարդերով:

³³ Դա մեկ անգամ եւս ապացուցվեց 1979թ. ամռանը, երբ պայթեցվեց Մեծ եղեռնի զոհերի Հիշատակին, Բիկֆայա գյուղում գտնվող Կիրիկո կաթողիկոսի ամառնային նստավայրում կանգնեցված բրոնզե հսկա արձանը:

³⁴ Արաբները շատ հաճախ Հայոց կաթողիկոսներին պատրիարք են անվանում:

³⁵ Լիբանանը Հայերի «միակ հայրենիք» Հայտարարեց նաև Լիբանանի խորհրդարանի անդամ Խաչիկ Պապիկյանը տարիներ ետք «ալ-Նահար ալ-արաբի ուալ-դուալի» շաբաթաթերթին տված իր մեկ հարցազրույցում: Լիբանանը Հայոց վերջնական հայրենիք, «նոր հայրենիք», «երկրորդ հայրենիք» եւ նման ապագային դիրքորոշումներով Հայտարարութեանները տարեցտարի ավելանում են լիբանանահայկական միջավայրում, ապացույցը գաղթօջախի ուժացման Հոյովութի արագացման:

³⁶ Այդ հրապարակումներից են՝ «Դեպքերը Լիբանանում «Հայկական Հարց հարուցել են», «ալ-Անուար» («Լույսեր») օրաթերթ, 28 . 05 . 1979. «Հայերը Լիբանանում – Պատերազմում գրական չեզոքութեամբ բաժանման դեմ, լրիվ հասկացողութեամբ արաբների հարցերի նկատմամբ», «ալ-Ուաթան ալ-արաբի» շաբաթաթերթ, թիվ 168, 1980թ. «Միջին արեւելյան փաստաթղթեր – Լիբանանի Հայերը բրիտանական արտաքին գործերի նախարարութեան փաստաթղթերում, «ալ-Թադամոն» («Միասնականութեամբ») շաբաթաթերթ, 7. 04 . 1984. «Փաստաթղթեր – Սիրիայի եւ Լիբանանի պատմութեամբ ըստ ֆրանսիական արտաքին գործերի նախարարութեան

փաստաթղթերի, թիվ 8՝ Թուրքիայի Հայերը բերեցին կոմունիզմը Լիբանան եւ Սիրիա», «ալ-Հաուադես» («Իրազարձություններ») շաբաթաթերթ, թիվ 1454, 14. 09. 1984, եւ այլն:

³⁷ Մոնթե Մեկքոնյանի անունը նրա կեղծ կիրարկման անձնագրում: Այս անվան տակ նա ձեռք բերեց Փարիզում 1981թ.: Նրան Ֆրանսիացիներից ազատելու համար ՀԱՀԳԲ-ը (Հատկապես՝ «Օրլի» խմբակ անվան տակ) դիմեց մի շարք գինյալ գործողությունների, որոնց ճնշման տակ Ֆրանսիական իշխանություններն ստիպված եղան Մոնթե Մեկքոնյանին ազատ արձակել եւ Բեյրութ արտաքսել:

³⁸ Թղթակիցը Հայտնապես շփոթել է Սեւրի եւ Լոզանի դաշնագրերի թվականները: Այս մասին թերթը ճշտում հրատարակեց իր հաջորդ 1982թ. փետրվարի 19-ի համարում:

³⁹ Առանց Հայկական Հարցի խորքը թափանցելու Հայկական պայքարի մասին գրելով եւ Հատկանշվել Հատկապես Եվրոպայում լույս տեսնող լիբանանյան պարբերականները: Վերջիններս, ազդվելով եվրոպական մամուլից, համարյա միշտ Հայկական պայքարը ներկայացրել են որպես ահաբեկչութուն, եւ այդ պայքարի ազգային-ազատագրական բնույթը ծածկելու համար ընդհանրապես խուսափել են Հայկական Հարցն ըստ էության ներկայացնելու պարտավորությունից, այսպիսով ավելի շուտ կատարելով քաղաքական պատվեր, քան իրականացնելով լրատվամիջոցի՝ որպես անաչառ ամբիոնի իրենց գործառույթը:

⁴⁰ Տե՛ս, օրինակ, «ալ-Սաուրի» («Հեղափոխական»), Սոցիալիստական աշխատանքի արաբական կուսակցության պաշտոնաթերթ, շաբաթաթերթ, թիվ 278, սեպտեմբեր 1986թ.:

⁴¹ Հայկական լուրեր եւ բովանդակում հետեւյալ պարբերականների ստորեւ նշվող համարները.

- «ալ-Նահար», օրաթերթ.
1978թ. - 10 նոյեմբերի, 14 նոյեմբերի:
1979թ. - 13 հոկտեմբերի:
1980թ. - 14 հունվարի, 13 հոկտեմբերի:
1981թ. - 4 հունվարի, 6 փետրվարի, 5 մարտի, 6 մարտի, 11 մարտի, 29 ապրիլի, 25 սեպտեմբերի, 26 սեպտեմբերի, 15 նոյեմբերի, 16 նոյեմբերի, 18 նոյեմբերի, 20 նոյեմբերի, 22 նոյեմբերի, 9 դեկտեմբերի, 10 դեկտեմբերի, 11 դեկտեմբերի, 21 դեկտեմբերի:
1982թ. - 18 հունվարի, 22 հունվարի, 29 հունվարի, 30 հունվարի, 10 ապրիլի, 21 հուլիսի, 27 հուլիսի, 29 հուլիսի, 27 օգոստոսի, 28 օգոստոսի, 8 սեպտեմբերի, 9 սեպտեմբերի:
1983թ. - 23 հունվարի, 24 հունվարի, 1 մարտի, 10 մարտի, 17 մարտի, 21 մարտի, 25 հուլիսի, 26 հուլիսի, 27 հուլիսի, 28 հուլիսի, 30 հոկտեմբերի:
1984թ. - 25 հունվարի, 26 հունվարի, 1 փետրվարի, 2 փետրվարի, 3 փետրվարի, 31 դեկտեմբերի:
1985թ. - 21 փետրվարի, 4 մարտի, 16 ապրիլի, 21 ապրիլի:
1986թ. - 1 հունիսի:
- «ալ-Սաֆիր», օրաթերթ
3 հունվարի 1976թ., 13 նոյեմբերի 1981թ., 17 նոյեմբերի 1981թ., 11 դեկտեմբերի 1981թ., 18 դեկտեմբերի 1981թ., 21 հունվարի 1982թ., 22 հունվարի 1982թ., 19 փետրվարի 1982թ., 1 հունիսի 1982թ., 8 օգոստոսի 1982թ., 27 օգոստոսի 1982թ., 17 հոկտեմբերի 1982թ., 26 մայիսի 1983թ., 23 հուլիսի 1983թ., 24 հուլիսի 1983թ., 15 սեպտեմբերի 1983թ., 30 մայիս 1986թ., 6 օգոստոսի 1986թ.:
- «ալ-Տասադդի», շաբաթաթերթ, թիվ 7, 8, 9, 10, 17, 22, 24, 25, 35:
- «ալ-Դասթուր», շաբաթաթերթ, 25 հուլիսի 1983թ.:
- «ալ-Անուար», օրաթերթ, 26 հունվարի 1982թ., 3 փետրվարի 1982թ., 9 օգոստոսի 1982թ., 10 օգոստոսի 1982թ.:
- «ալ-Լիուա՛ա», օրաթերթ, 17 նոյեմբերի 1981թ., 18 հունվարի 1982թ., 27 ապրիլի 1982թ., 29 հուլիսի 1983թ.:
- «Սաուրի ալ-հարար», օրաթերթ, 4 դեկտեմբերի 1981թ., 14 հունվարի 1982թ., 6 օգոստոսի 1982թ.:
- «ալ-Աամալ», օրաթերթ, 17 նոյեմբերի 1981թ., 14 հունվարի 1982թ.:
- «Բեյրութ», օրաթերթ, 10 հուլիսի 1975թ.:
- «ալ-Մուհարրեր», օրաթերթ, 25 հոկտեմբերի 1975թ.:
- «Սաուրի ալ-Շադիլա», օրաթերթ, 6 մայիսի 1982թ.:

⁴² Տե՛ս, օրինակ, «ալ-Նահար», 24 ապրիլի 1979թ., 25 ապրիլի 1979թ., 25 ապրիլի 1982թ., 22 ապրիլի 1983թ., 25 ապրիլի 1983թ., 22 ապրիլի 1984թ., 22 ապրիլի 1985թ., 24 ապրիլի 1985թ., 25 ապրիլի 1985թ.։ «Ալ-Սաֆիր», 25 ապրիլի 1982թ.։ «Ալ-Նիդա՛ա», 24 ապրիլի 1985թ.։

⁴³ Տե՛ս «ալ-Նահար», 17 հուլիսի 1983թ., 22 հուլիսի 1983թ., 23 հուլիսի 1983թ., 24 հուլիսի 1983թ., 25 հուլիսի 1983թ., 13 հուլիսի 1985թ.: «Ալ-Տասադդի», թիվ 40, 6 հունիսի 1987թ.:

⁴⁴ Տե՛ս «ալ-Նահար», 21 ապրիլի 1981թ., 5 սեպտեմբերի 1982թ., 5 հոկտեմբերի 1982թ., 8 հոկտեմբերի 1982թ., 8 հունվարի 1983թ., 29 մարտի 1983թ., 4 մայիսի 1983թ., 8 մայիսի 1983թ., 22 հունիսի 1984թ., 14 փետրվարի 1985թ., 23 փետրվարի 1985թ., 5 ապրիլի 1985թ., 6 ապրիլի 1985թ., 23 ապրիլի 1985թ., 28 ապրիլի 1985թ., 6 մայիսի 1985թ.: «Ալ-Նահար ալ-արաբի ուալ-գուալի», 22 հոկտեմբերի 1979թ., 5 մայիսի 1985թ.: «Ալ-Անուար», 23 մարտի 1983թ.: «Ալ-Աամալ», 29 մարտի 1983թ., 15 փետրվարի 1985թ.: «Ալ-Մաֆիր», 26 մայիսի 1983թ.: «Լ'Օրիան-լը ժուր», 16 հունիսի 1984թ., 24 ապրիլի 1985թ.: «Ալ-Նիդա"ա», 19 հունիսի 1987թ.: «Ալ-Մաուկեֆ ալ-արաբի», 14 դեկտեմբերի 1981թ.: «Ալ-Հաուադես», 25 մայիսի 1984թ.: «Ալ-Ուաթան», շաբաթաթերթ, 11 փետրվարի 1978թ.: «Ճեմեհիր Լուբնեն», շաբաթաթերթ, 4 փետրվարի 1978թ.: «Լա ուելյու դյու Լիբան», ֆրանսերեն ամսաթերթ, 14 հունվարի 1978թ., եւն., եւն.:

⁴⁵ Դրանցից հիշարժան է հատկապես «ալ-Մադինա» («Քաղաք») ամսաթերթը, որն իր 1974թ. թիվ 14, ապրիլյան համարն ամբողջությամբ նվիրել էր Հայ դատին, հայոց ցեղասպանությանը եւ լիբանանահայուլթյանը:

⁴⁶ Նիկոլայ Հովհաննիսյան, Ինչո՞վ են զբաղված Հայ արաբագետները, «ալ-Լիու"ա», օրաթերթ, 30 հունվարի 1983թ.:

Արխիվային գործ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-Ի 2003Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու տարին՝ 2003 թվականը, Հայ արխիվագետների Համար առանձնահատուկ եւ նշանակալի ժամանակաշրջան էր. շարունակվեցին ու տրամաբանական ավարտին հասցվեցին նախորդ՝ 2002թ. սկսված Համակարգի բարեփոխման, օպտիմալացման ծրագրային միջոցառումները:

2003թ. երրորդ քառորդի կեսերին (օգոստոս), ՀՀ կառավարության Համապատասխան որոշումներով, ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի

նախարարութեան կազմում Հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործող արխիվային գործի գործակալութիւնը վերակազմավորվեց նույն նախարարութեան աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման, իսկ Հանրապետութեան Հինգ կենտրոնական պետական արխիվները միաձուլման ձեւով վերակազմակերպվեցին «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպութեան (այսուհետեւ՝ ազգային արխիվ), մարդպետարխիվները՝ ազգային արխիվի մարզային մասնաճյուղերի, իսկ դրանց նախկին մասնաճյուղերը՝ ազգային արխիվի ներկայացուցչութիւնները: Արդյունքում՝ ՀՀ արխիվային գործի ոլորտը ներկայումս ընդգրկում է ազգային արխիվը եւ նրա տասնմեկ մարզային մասնաճյուղերն ու երեսուն տարածքային ներկայացուցչութիւնները:

Հատկանշական է, որ վերոհիշյալ բարեփոխումների իրականացումն ու ազգային արխիվի կայացումն ընթացել են առանց ցնցումների ու խաթարումների, ոլորտի նորմալ կենսագործունեութեան պայմաններում եւ բարենորոգումների պատեհաժամ լինելու կարեւորութեան ընկալումով: Ակնհայտ է նաեւ, որ ձեռնարկված փոփոխութիւնների շնորհիվ ունեցած ֆինանսական միջոցների կենտրոնացումն եւ ըստ այդմ դրանք ավելի արդյունավետ ու նպատակաուղղված օգտագործման Հնարավորութիւնն եւս ընձեռվեց: Բավական է փաստել, որ անցած տարում արխիվային գործի ոլորտի օպտիմալացման արդյունքով խնայված ֆինանսական միջոցների Հաշվին բարձրացվեց համակարգի զգալի թվով աշխատողների աշխատավարձը՝ միջինը 40%-ով:

2003թ. ոլորտում աշխատանքներն ընթացել են ըստ Հաստատված նպատակային ծրագրային առաջադրանքների՝ նախանշված ներքոհիշյալ Հիմնական ուղղութիւններով.

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄՎԱԿԵՐՊՈՒՄ

1.1. Ի կատարումն ՀՀ կառավարութեան 2002թ. դեկտեմբերի 26-ի որոշման սահմանված կարգով մշակվել եւ ՀՀ կառավարութիւնն է ներկայացվել «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

1.2. Հաշվետու ժամանակաշրջանում արխիվագետների ուժերով մշակվել, Հաստատվել եւ գործողութեան մեջ են դրվել ոլորտի գործունեութեան որոշակի ընթացակարգեր (փաստաթղթերի պահպանութեան ապահովման, օգտագործման կազմակերպում եւ այլն) կանոնակարգող գերատեսչական չորս նորմատիվ իրավական ակտ: Միաժամանակ ծրագրված միջոցառումներ են իրականացվել՝ կապված ազգային արխիվի եւ նրա մարզային կառույցների (մասնաճյուղեր, ներկայացուցչութիւններ) համալրման աղբյուր-կազմակերպութիւնների արխիվների կազմակերպման գործընթացի կանոնակարգման, դրանցում առկա փաստաթղթերի պահպանութեան վիճակի ու ծավալների մասին պետական վիճակագրութեան (ձեւ 3 ԳԱ) անցկացման, ինչպես նաեւ այդ առնչութեամբ ՀՀ վարչապետի 2002թ. փետրվարի 2-ի նամակում բարձրացված հարցերին լուծումներ գտնելու հետ:

1.3. Իրականացվել են գործողութեան գաղափարային արխիվի մարզային կառույցներ, դրանցում գործունեութեան թեմատիկ եւ համալիր ստուգումներ անցկացնելու նպատակով: Նշված գործողութեան արդյունքում՝

ա) ազգային արխիվի տասը մարզային մասնաճյուղերում եւ երեսուն ներկայացուցչութիւններում ստուգվել է իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հարցումների (թեմատիկ ու սոցիալ-իրավական բնույթի) կատարման վիճակը եւ արդյունքներն ի մի բերվել ամփոփ տեղեկանքում: Ոլորտում այդ աշխատանքները կանոնակարգելու եւ միօրինականացնելու նպատակով մշակվել եւ հիշյալ օղակներին են տրվել հարցումների գրանցման (Հաշվառման) միասնական ձեւի մատյաններ եւ գործնական խորհրդատվութիւններ անցկացվել ու ցուցումներ են տրվել դրանց վարման կարգի շուրջ.

բ) անցկացվել է Արարատի մարզային մասնաճյուղի 1997-2002թթ. գործունեութեան համալիր ստուգում: Արդյունքներն ամփոփվել եւ քննարկվել են

այսօր արդեն նախկին գործակալության պետի տեղակալի մոտ անցկացված խորհրդակցությունում:

դ) կազմակերպվել են ՀՀ արխիվային Հավաքածուի փաստաթղթերի կարգավորման աշխատանքները Համապատասխան Հանրապետական մարմինների (սոցիալական ապահովագրության հիմնադրամ, բաշխիչ էլ. ցանցեր եւ այլն) տարածքային ենթակառուցվածքներում:

1.4. ՀՀ առանձին պետական մարմինների (պաշտպանության նախարարություն, արտգործնախարարություն, Հիդրոօդերեւութաբանական վարչություն, գլխավոր դատախազություն եւ այլն) իրականացվել է մեթոդական ու գործնական աջակցություն՝ դրանցում արխիվների կայացման (չափորոշիչ-մեթոդական փաստաթղթերի, ճյուղային ցանկերի, կանոնակարգերի կազմում եւ այլն) արխիվային գործի եւ ՀՀ արխիվային Հավաքածուի Համապատասխան Համալիրների (փաստաթղթերի) դեպոզիտոր (ավանդատվական) պահպանության կազմակերպման հետ կապված, ինչպես նաեւ ոլորտին վերաբերող այլ հարցերում:

1.5. Ազգային արխիվի տնօրեն Ա.Վիրաբյանը Իրան, Բելառուս եւ Իտալիա կատարած գործուղումների ընթացքում Հանդիպումներ է ունեցել այդ երկրների արխիվների ղեկավարների հետ, մշակվել եւ ընթացքի մեջ են Համագործակցության ծրագրերը:

1.6. Գործնական հանդիպումներ են անցկացվել ՀՀ-ում ՌԴ դեսպանության մշակութային կցորդի եւ Հունաստանի դեսպանի հետ, փոխպայմանավորվածություն է ձեռք բերվել արխիվային գործում երկկողմանի Համագործակցության զարգացման, Համատեղ միջոցառումների անցկացման խնդիրների շուրջ:

1.7. Կազմակերպվել ու անցկացվել է տեսագործնական սեմինար-խորհրդակցություն ազգային արխիվի մարզային կառույցների աշխատողների համար:

2. ՀՀ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՄՈՒԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2.1. 2003թ. աշխատանքային ծրագրով նախատեսված էր վերանորոգել (վերականգնել) 169440 թերթ արխիվային փաստաթուղթ: Փաստացի վերանորոգվել (վերականգնվել) է 171.325 թերթ, այդ թվում ազգային արխիվի Համապատասխան ստորաբաժանումների կողմից՝ 143.389 թերթ, մարզային կառույցներում՝ 27936 թերթ: Ծրագրային առաջադրանքը գերակատարվել է 1885 թերթով, որից 1666 թերթը մարզերի բաժնեմասն է կազմում: Վերանորոգման գծով կատարողական արդյունքները զգալիորեն բարձր են Լոռիում (2200 թերթ, 1450-ի փոխարեն), Գեղարքունիքում (1420-ի փոխարեն 2000 թերթ), Տավուշում (800 թերթի փոխարեն՝ 1600 թերթ) եւ Վայոց ձորում (600-ի դիմաց՝ 2000 թերթ): Փաստաթղթերի վերանորոգման ծրագրային ցուցանիշների իրականացումն ոչ լրիվ չափով են ապահովել Երեւանի քաղաքային, Արարատի, Արագածոտնի եւ Սյունիքի մարզային մասնաճյուղերը:

2.2. Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրված 21458-ի փոխարեն կարվել-կազմապատվել են 27.977 գործ (այդ թվում ազգային արխիվում՝ 11.880 գործ, մարզերում 9578 գործ): Առաջադրանքը զգալիորեն գերակատարվել է (130,4%) ազգային արխիվում (4175 գործով) եւ Շիրակի (ավելի քան 7000-ով), Արագածոտնի (400 գործով), Գեղարքունիքի (402-ով) մարզային մասնաճյուղերում:

2.3. Գործերի արկղավորման տարեկան առաջադրանքը կատարվել է աննշան թերացումներով: Նախատեսված 51585-ի դիմաց փաստացի արկղավորվել են 51.185 գործ (կատարողականը՝ 99,4%): Ծրագրային ցուցանիշի կատարողականը զրոյական է Երեւանի քաղաքային մասնաճյուղում, թերի՝ Արմավիրի (60%), Արագածոտնի (20,7%), Վայոց ձորի, իսկ նկատելիորեն բարձր՝ Արարատի (ավելի քան 3 անգամ) եւ Կոտայքի (ավելի քան 2 անգամ) մարզային մասնաճյուղերում: Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի մասնաճյուղերում արկղավորման առաջադրանք չի նախատեսվել ու չի

կատարվել, բացառությամբ Տավուշի: Ի դեպ, վերջինս արկղավորել է 921 գործ, իսկ Լոռին եւ Գեղարքունիքը կապոցավորել են համապատասխանաբար 350 եւ 3364 գործ:

2.4. Տարվա ընթացքում ստուգվել է շուրջ 193.400 արխիվային գործերի առկայությունը եւ ապահովագրական ֆոնդի ավելի քան 605 հազար կազմ միկրոժապավենների տեխնիկական վիճակը: Միաժամանակ կատարվել է ժապավենների պրոֆիլակտիկ մշակում՝ հատուկ լուծույթով մեխանիկական մաքրման միջոցով:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է ավելի քան 40 հազար գործի շիֆրավորում, մոտ 14 հազար պիտակների լրացում ու փակցում, ավելի քան 4200 գործի ախտահանում եւ 225,5 հազար թերթի համարակալում:

Արխիվապահոցներից մատակարարվել (բաժիններ, լաբորատորիա, ընթերցասրահներ) են շուրջ 77 հազար գործ եւ նույնքան էլ ետ ընդունվել ու վերատեղադրվել ի տեղի:

3. ՀՀ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ

3.1. ՀՀ-ում արխիվային գործի զարգացմանը նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ էապես աճել է ՀՀ արխիվային հավաքածուի քանակական կազմը, որը ներկա գրույթյամբ կազմում է երեք միլիոնից ավելի:

2003թ. ՀՀ արխիվային հավաքածուն համալրվել է 43804 գործավարական (ծրագրով՝ 25.900գ.), 1144 գիտատեխնիկական (ծր.՝2000գ.) եւ 175.340 թերթ (ծր.՝ 57400թ.) անձնական ծագման փաստաթղթերով (ցրոն), որոնք ամբողջությամբ սահմանված կարգով մուտքագրվել ու հաշվառվել են: Գործավարական փաստաթղթերի համալրման տարեկան առաջադրանքն իրականացվել է մոտ 170%-ով, անձնական ծագման փաստաթղթերինը՝ գերակատարվել է շուրջ 3 անգամ, գիտատեխնիկականինը, ընդհակառակը՝ թերակատարվել է 856 միավորով:

Քննարկվող ոլորտում ընթացիկ տարվա ձեռքբերումները զգալիորեն գերազանցում են նախորդ՝ 2002թ. մակարդակները: Գործավարական գործերի գծով 2003-ի կատարողականն անցած տարվա ցուցանիշի ավելի քան կրկնակին է, անձնական ծագման փաստաթղթերինը՝ մոտ երկակին: 2002-ի համեմատությամբ հաշվետու ժամանակաշրջանում գրեթե կիսով չափ նվազել է համալրված գիտատեխնիկական բնույթի միավորների ծավալը, որը մասամբ նաեւ պայմանավորված է արխիվների կենտրոնական մասնաշենք (Հր.Քոչարի 5) նախկին ԳՏՓ ԿՊԱ-ի տեղափոխման հետ կապված աշխատանքների բավական ձգձգումով: Ինչհետեւ, համալրման տարեկան առաջադրանքի միջինը բավական բարձր է՝ շուրջ 188%:

3.2. Տարվա ընթացքում ոլորտի մասնագետների ուժերով փորձաքննությամբ արժեվորվել է 69982 գործ (ծրագրով՝ 35425), որից 5500-ը գործավարական բնույթի են, մոտ 15 հազարը՝ անձնակազմի վերաբերյալ: Տարեկան առաջադրանքի իրականացումն ապահովվել է 198,3%-ով:

Ավելացնենք, որ փաստաթղթերի փորձաքննությամբ արժեվորման գծով բավական բարձր է մարզային մասնաճյուղերի կատարողական ցուցանիշը՝ 49381 գործ (ծր.՝ 25425), ինչու՞մ առավել ակնհայտ են հատկապես Շիրակի (20462գ.), Լոռու (5232գ.), Արագածոտնի (2313գ.), Գեղարքունիքի (6314գ.) եւ Վայոց ձորի (2603) արդյունքները: Փորձաքննությամբ արժեվորման արդյունքով ոչնչացման են առանձնացել ավելի քան 18700 գործնական նշանակությունը կորցրած եւ (կամ) գիտապատմական արժեք չունեցող գործ:

3.3. 2003թ. արխիվային մասնագետների ուժերով ՀՀ արխիվային հավաքածուի համալրման երեք տասնյակից ավելի աղբյուր կազմակերպություններում կարգավորվել են 13.421 գործավարական եւ 6286 անձնակազմի վերաբերյալ գործեր (ծրագրով՝ 16.150 գործավարական գործ): Ազգային արխիվում եւ նրա մարզային կառույցներում հաշվետու ժամանակաշրջանում գիտատեխնիկական մշակման են ենթարկվել 25.265 չկարգավորված գործավարական գործեր (ծր. 13848գ.) եւ 56.631

Թերթ անձնական ծագման ցրոն փաստաթղթեր (ծր.՝ 229000թ.), արդյունքում ձեռավորվել են անձնական ծագման 1278 գործ: Անձնական ծագման ցրոն փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման առաջադրանքի իրականացումն ապահովվել է մոտ մեկ քառորդ մասով: Խոսքն, անշուշտ, ավարտուն արդյունքների մասին է: Բայց բավական ծավալով անձնական ծագման ցրոն փաստաթղթեր էլ մշակման ընթացքում են եւ մոտ ժամանակներում դրանց ավարտից հետո նշված բացը բնականաբար կլրացվի եւ ստեղծված իրավիճակը ինքնաբերաբար կշտկվի:

Ոլորտի ներսում եւ համարման աղբյուրներում կատարված կարգավորման (մշակման) աշխատանքների արդյունքում ձեռավորված գործերի (ավելի քան 30.000) ցուցակները սահմանված կարգով քննարկվել եւ հաստատվել են ՄՓՀ-ի կողմից:

Ընդգծենք, որ միայն սոցապ Հիմնադրամի համակարգում կարգավորված մշտական պահպանման գործերի թվաքանակը կազմել է ավելի քան 2300 միավոր, անձնակազմի վերաբերյալ գործերինը՝ 475 միավոր: Նշված համակարգի կարգավորված միավորների թվակազմում բավական մեծ ծավալ են կազմել Հատկապես երկարաժամկետ պահպանության առանձնացված գործերը (ավելի քան 135 հազար):

4. ՏեղեկԱՏՈՒ-ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ

4.1. Հաշվետու տարում նպատակաուղղված աշխատանք է տարվել արխիվային (գործերի) ցուցակների կատարելագործման ու վերամշակման ուղղութայամբ: Իրականացվել է 15139 գործավարական (ծր.՝ 25776) եւ 22789 անձնակազմի վերաբերյալ (ՀՔՓ բաժին) գործերի ցուցակների կատարելագործում-վերամշակում: Գործավարական գործերի ցուցակների վերամշակման-կատարելագործման ծրագրային ցուցանիշը զգալիորեն թերակատարվել է՝ շուրջ 30 տոկոսով (կատարողակ՝ 69,8%): Ընդ որում, ազգային արխիվի ՀՔՓ բաժինն իր մասով ծրագիրն ի կատար է ածել 57,6%-ով, մարզային կառույցները՝ 82,1%-ով: Մարզային կառույցներից Հատկապես ցածր են Երեւան քաղաքի, Արմավիրի, Տավուշի, Կոտայքի փաստացի արդյունքները (Համապատասխանաբար՝ 122 գործ, 70 գործ, 1943 գործ, 497 գործ):

4.2. 2003թ. ավտոմատացված տեղեկատու-որոնողական համակարգի ստեղծման նպատակով ոլորտում կազմվել է 21579 համակարգչային քարտ, մուտքագրվել՝ 57300-ը: Ծրագրային ցուցանիշներն (69715 եւ 68000ք.) իրականացվել են համապատասխանաբար 31 եւ 84%-ով:

Ի դեպ, թերակատարված ծավալը (48236 քարտ) ամբողջութայամբ բաժին է ընկնում ազգային արխիվին: Մարզային կառույցներից քարտագրում նախատեսել ու 100 քարտի գերազանցումով իրականացրել է միայն Երեւանի քաղաքային մասնաճյուղը: Մնացած մասնաճյուղերում հասկանալի պատճառներով նման աշխատանք չի ծրագրավորվել ու չի իրականացվել: Պատաստվել է 1 տեղեկատու եւ ֆոնդերի ուղեցույցի համար 100 բնութագիր:

5. ՀՀ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱՇՈՒԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

5.1. Հաշվետու տարում ոլորտը ժամանակին ու Հիմնավոր պատասխանել է իրավաբանական եւ ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ արտասահմանից) ստացված 7516 սոցիալ-իրավական բնույթի եւ 130 թեմատիկ հարցումների (ծրագրով՝ համապատասխանաբար 5374 եւ 207), ասել է, թե սոցիալ-իրավական բնույթի հարցումների ծրագրային առաջադրանքը գերակատարվել է 2142-ով, իսկ թեմատիկ հարցումներինը, ընդհակառակն, 77-ով թերակատարվել (թեմատիկ հարցում հասկացողութայան սխալ մեկնաբանման պատճառով):

Ազգային արխիվի համապատասխան ստորաբաժանման կողմից ծրագիրն իրականացվել է ըստ նշված տեսակների՝ համապատասխանաբար 257,2 եւ 10 տոկոսով, մարզային կառույցները՝ 132,0 եւ 122,6 տոկոսով: Ոլորտի մասշտաբով ծրագիրն ի կատար է ածվել 139,8%-ով: Մարզային կառույցներից այս առաջադրանքների դժով ձեռքբերումներն ավելի ցայտուն ու զգալի են Շիրակում (2170 հարցում-պատասխան),

Գեղարքունիքում (927), Արմավիրում՝ (349), Արագածոտնում (441), Կոտայքում (364), Տավուշում (771):

5.2. Արխիվային հետադարձ տեղեկատվության օգտագործմամբ համակարգի արխիվագետների կողմից պատրաստվել ու հրատարակվել (հեռարձակվել) են շուրջ չորս տասնյակ հոդված-հաղորդումներ («Միքայել Պապաջանյանի դիվանագիտական գործունեությունը», «Երեւանի օդանավակայանը», «Ս.Մարինե եւ Ամենափրկիչ եկեղեցիների պատմությունը փաստաթղթերում», «Արխիվային հրատարակումներ» եւ այլն) եւ կազմակերպվել երկու տասնյակին մոտ թեմատիկ բնույթի ցուցահանդես-ցուցադրություններ՝ նվիրված տարվա կարեւորագույն տարելիցներին ու հիշարժան անցքերին:

5.3. Հրատարակվել է «Բանբեր Հայաստանի արխիվների» Հանդեսի երկու համար եւ փաստաթղթերի երեք ժողովածու («Հայերի կոտորածները Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներում, 1918-1920թթ.», «Հայաստանի պետական բանկի պատմությունը, 1893-2003թթ.», «Անտոն Քոչինյան») ու յոթ հավաքածու («Արամ Խաչատրյան-100», «Երեւանի պետական կոնսերվատորիա-80», «Հակոբ Քոչարյանի նամակները Համո Օհանջանյանին», «Լիբանանահայ դաղթօջախ», «Միհրան Տամատյանի զեկուցագրերը Կիրիկիայի ներքաղաքական գրություն մասին» եւ այլն):

5.4. Տարվա ընթացքում ոլորտն ունեցել է 379 ուսումնասիրող, որոնց մատակարարվել է 12598 գործ, թերթի 297 լրակազմ եւ 116 բյուքս միկրոժապավեն (պատճեն):

Ընդհանուր գծերով այսպիսին են ՀՀ արխիվային ոլորտի 2003թ. գործունեության հիմնական արտադրական արդյունքները՝ ըստ ծրագրավորված ավանդական ուղղությունների՝ որոնք Հիմք են տալիս միանշանակ ոլորտի մեկ տարվա գործունեությունը գնահատելու բավարար: Նշենք, որ ծրագրված առաջադրանքների շուրջ կեսն իրականացվել է զգալի գերակատարումներով (թերակատարումներն առկա են մի քանի հիմնական ցուցանիշների կատարողականներում: Ոլորտի ծրագրային առաջադրանքների (հիմնական ցուցանիշների գծով) միջին կատարողականը կազմել է 110 տոկոսից փոքր ինչ ավելի:

6. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային արխիվի կայացմամբ վերջինիս ամրացվեցին նախկին գործակալության հաշվեկշռում հաշվառված բոլոր շենք-շինությունները, որոնց ընդհանուր մակերեսի (19845քմ) 80%-ից ավելին արխիվապահոցներ են: Շուրջ քսան տարի է, ինչ գրանք չեն վերանորոգվում, եւ պայմանները դրանցում նկատելիորեն շեղվել են նորմատիվային պահանջներից:

2003թ. ընթացքում բավական բազմատեսակ ու մեծածավալ վերանորոգչական աշխատանքներ են իրականացվել ոլորտի շենքային տարածքների բարեկարգման ու պայմանների բարելավման ուղղությամբ: Վերագործարկվել են ջեռուցման լոկալ համակարգերը (Հր.Քոչարի 5 հասցեում գտնվող մասնաշենքերում), նորոգվել-նորացվել են այդ մասնաշենքերի էլեկտրահոսանքատար գծերը, կոյուղի-սանհանգուցյանները եւ ընձեռված հնարավորությունների սահմաններում բարեկարգվել աշխատասենյակները եւ առաջին անհրաժեշտությունների օժանդակ տարածքները: Անշուշտ, դրանցով չի սահմանափակվում այս առումով մեր մտահոգությունների շարքը: Նման վերանորոգչական աշխատանքների կարիք կա նաեւ ոլորտի ամրացված մյուս շենքային տարածքներում եւ հատկապես ազգային արխիվի ստորգետնյա արխիվադարաններումվով պետք է նշենք, որ իր տեսակի մեջ եզակի այս կառուցյալ, որ նախատես:

Ոլորտի առջեւ ծառայած անհետաձգելի հիմնախնդիրներից է նաեւ շուրջ երեսնամյա վաղեմություն ունեցող հակահրդեհային, պահպանական-ազդանշանային, օդափոխիչ եւ եղած մյուս համակարգերի նորացման, ինչպես նաեւ արխիվային գործի ավտոմատացման նպատակով նոր տեխնոլոգիաների ներդրման օրակարգային պահանջը, որի լուծումը նույնպես պետական աջակցություն ու դրամաշնորհային

ներդրումների հետ է կապված: 2003թ. այս ուղղութեամբ որոշ քայլեր ձեռնարկվել են. ձեռք են բերվել ոլորտի կարիքների համար առաջին անհրաժեշտութեան նյութեր, որոշ սարքավորումներ, այդ թվում՝ համակարգիչներ: Ներկայումս արխիվն իր տրամադրութեան տակ ունի մեկուկես տասնյակից ավելի համակարգիչներ, սպասվում է նաև մի նոր ոչ մեծ խմբաքանակ եւ: Այդուհանդերձ այդ ձեռքբերումները բավարար չենք կարող համարել, քանզի պահանջները շատ ավելին են ու հրամայական: Այս հարցում նույնպես ոլորտը պետական ու բարեգործական ծրագրերի աջակցութեան կարիքն ու ակնկալումներն ունի:

Վերակառուցված ու նորոգ արխիվային ոլորտը որոշակի դժվարութեաններ ու մտահոգութեաններ ունի նմանապես կադրային առումով: Կամա-ակամա իրականացվող տեղաշարժերն ու զարգացումները հանգեցնում են սերնդափոխութեան՝ վաստակած հանգստի գնացողներին արժանի հերթափոխի համալրման, ներդրվելիք նոր տեխնոլոգիաների կիրարկման համար անհրաժեշտ մասնագետ-կադրերի ընտրութեան հետ կապված հարցերի լուծման հրատապութեամբ: Դրանք հիմնահարցեր են, որոնց լուծման համար ներկայումս ուղիները բազմազան են, պարզապես հնարավորութեաններ պետք է ստեղծել:

Արխիվային ոլորտի ֆինանսավորման պատկերը վերջին երեք տարվա կտրվածքով ուրվագծվում է ներքոհիշյալ բաղադրիչ ցուցանիշներով. 2001թ. տարեկան բյուջեն կազմել է 115 մլն. 800,3 հազար դրամ, իսկ միջին աշխատավարձը (325 աշխատողի հաշվով)՝ 8797 դրամ: 2002թ. տարեկան բյուջեն թեպետ շուրջ 1.3 միլիոնով 2001թ. մակարդակից պակաս է եղել, այդուհանդերձ տարեկան աշխատավարձի ֆոնդի նվազում տեղի չի ունեցել եւ շուրջ 700 դրամով բարձրացվել է միջին աշխատավարձի չափը (կազմել է 9498 դրամ), որի համար հիմք է հանդիսացել որոշ թվով հաստիքների կրճատման արդյունքում խնայված գումարը:

Նշված ուղղութեաններով վերընթացն առավել զգալի է 2003թ. արդյունքներով: Հաշվետու ժամանակաշրջանում համակարգի աշխատողների (293 հոգի) աշխատավարձի ֆոնդը փաստացի (առանց արտաբյուջետային մուտքերի) կազմել է 53մլն. 644,8 հազար (տարեկան բյուջեն՝ 111 մլն. 723,1 հազար էր) դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 15257 դրամ: Այս առումով առավել ոգեւորիչ ու հուսադրող են նաև 2004թ. կանխագծումները եւ ակնկալիքները՝ միջին աշխատավարձը ելակետային տվյալներով կազմում է 17756 դրամ, ինչը 2001թ. մակարդակի շուրջ կրկնակին է:

**Կազմակերպական-մեթոդական
աշխատանքների եւ միջազգային
կապերի բաժին**

ՇՎԵՑՑԱՐԻԱՅԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Շվեյցարիան վաղուց ի վեր, ամենատարբեր բնագավառների մասնագետների ուսումնասիրութեան օբյեկտ է: Տնտեսական մոդելը՝ հիմնված կառավարման եւ արտադրութեան առավելագույն ապակենտրոնացման վրա, ազատ ձեռներեցութեան զարգացումը, ապահովել են այդ երկրի կայուն տեղն արտաքին եւ ներքին շուկայում: Շվեյցարիայի պետական կառույցը պահպանում է ինքնակառավարման ավանդական գծերը, որոնք որոշակիորեն ազդում են երկրում արխիվային գործի կազմակերպման վրա: Յուրաքանչյուր կանտոն^{*}, ինքնուրույն կառավարում է իրեն եւ թակա տերիտորիայի արխիվային ցանցը, իրենից ներկայացնելով արխիվային գործի ապակենտրոնացված կազմակերպման բնորոշ դեպք:

Շվեյցարիայի համադաշնութեանը կազմված է 26 կանտոններից, փաստացի ինքնուրույն պետութեաններից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական

^{*} Շվեյցարիայում տարածքային դաշնային միավոր

սահմանադրութիւնը, իշխանութիւնների կառուցվածքը, օրենքների ժողովածուն, կրթական համակարգը:

Շվեյցարիայում արխիվային ծառայութեան կառուցվածքն արտացոլում է նրա պետական կառուցվածքը, որին համապատասխան, հասարակական կամ հանրային արխիվները կարելի է դասակարգել հետեւյալ մակարդակներով՝

1. Շվեյցարիայի դաշնային (ազգային) արխիվ
2. Կանտոնների արխիվներ
3. Քաղաքային արխիվներ
4. Համայնքների արխիվներ

Շվեյցարիայի հանրային արխիվների գործունեութիւնը եւ արխիվային գործը կարգավորում են 1925 թվի սեպտեմբերի 2-ի հատուկ օրենքով, որի հիման վրա մշակվել են կանոնակարգեր, որոնց առանձին դրույթներ ընդունելի են ամեն առանձին կանտոնում գույութիւն ունեցող պաշտոնական արխիվների առանձնահատկութիւնների ու կազմակերպման համար: Այդ օրենքով որոշվում է հանրային արխիվների ստատուսը հասարակութեան եւ պետութեան մեջ, նրանց հիմնական գործառութիւններն ու խնդիրները: Կանոնակարգերով հաստատվում է արխիվների համալրման հաշվառման, նկարագրման, դասակարգման, պահպանութեան կազմակերպման եւ փաստաթղթերի օգտագործման աշխատանքների ընդհանուր կարգը:

Շվեյցարիայի դաշնային արխիվը պատմական փաստաթղթերի խոշոր կենտրոն է, այն ստեղծվել է 1798 թվին, Շվեյցարական միացյալ հանրապետութեան հռչակումից հետո, գտնվում է Բեռն քաղաքի մայրաքաղաքում եւ հայրենի պատմական գիտութեամբ զբաղվող հետազոտական հաստատութիւն է:

Դաշնային արխիվը երիտասարդ է իր փաստաթղթային ֆոնդերի կազմով եւ բովանդակութեամբ, քանի որ չունի Շվեյցարիայի պատմական վաղ դարաշրջանի իսկական նյութեր եւ պահպանում է փաստաթղթեր, որոնք վերաբերում են երկրի զարգացման ավելի ուշ շրջանին (18-րդ դարի վերջին):

Շվեյցարիայի պետութեան պատմութեան բացը լրացնելու պատմական փաստաթղթեր հավաքագրելու ուղղութեամբ, արխիվի աշխատակիցները որոնողական աշխատանքներ են տանում ոչ միայն Շվեյցարիայում:

Դաշնային արխիվում պարտադիր պահպանութեան ենթակա են համադաշնութիւն բոլոր պաշտոնական փաստաթղթերը (դաշնային խորհուրդ, ազգային ժողով), որոնք այստեղ են բերվում դրանց փաստացի անհրաժեշտութեան սպառումից հետո: Համալրման աղբյուրներ են հանձնաժողովները, դեպարտամենտները, ազմինիստրացիաները, որոնք համապետական հարցեր են լուծում:

Մշտական պահպանութեան ենթակա են նաեւ դիվանագիտական ակտերի բնագրերը եւ միջազգային պայմանագրերի վավերացման փաստաթղթերը: Արխիվները համալրվում են նաեւ երկրի պետական, քաղաքական, հասարակական գործիչների անձնական ծագման փաստաթղթերով: Դաշնային արխիվը մասնավոր ֆոնդերով կանոնավոր համալրումը սկսվել է 1954 թվից: 1967 թվին, դաշնային արխիվը եւ շվեյցարական արխիվագետների միութեան կողմից կազմվել է անձնական ծագման ֆոնդերի ձեռագրերի առաջին ցուցակը:

Հարստագույն ձեռագիր ժառանգութեան եւ անձնական ծագման ֆոնդերի պահպանողներ են նաեւ գրադարանները: Ինչ վերաբերում է անձնական ծագման արխիվային փաստաթղթերի պահպանման տեղին, ապա շվեյցարական արխիվագետները գտնում են, որ ձեռագիր ժառանգութիւնն առաջին հերթին պետք է պատկանի այն հաստատութիւններին, որոնք ունեն դրանք գնահատող մասնագետներ: Այդ հիմունքով, պատմութեան, գրականութեան, մշակութի, ինչպես նաեւ գավառագիտութեան վերաբերյալ փաստաթղթերը պետք է պահպանվեն ազգային եւ համապատասխանաբար շրջանային գրադարաններում, այն դեպքում, որ բազմաձագում ֆոնդերը, որոնք ունեն արտաքին եւ ներքին քաղաքականութեան հարցերի մասին փաստաթղթեր, պետք է ընդունվեն դաշնային կամ

Համապատասխանաբար՝ կանտոնների արխիվներ: Սակայն ընդունված Հստակ կարգ գոյություն ունի եւ ավանդատուները կամ նվիրատուները շատ դեպքերում, ինչպես նաեւ մեր Հանրապետությունում, նախընտրում են իրենք որոշել փաստաթղթերի պահպանման տեղի ընտրությունը: Դրա համար էլ շվեյցարական արխիվագետներին չի հաջողվում հասնել այն բանին, որ Հստակեցվի փաստաթղթերի բաշխումը՝ արխիվների եւ գրադարանների միջեւ:

Կանտոնային, քաղաքային եւ համայնքային արխիվները մեծ մասամբ միջին դարերի պատմության ու մշակույթի աղբյուրներ են պարունակում:

Կանտոնային կամ պետական արխիվներն ընդգրկում են տվյալ կանտոնի տարածքում գոյություն ունեցող նախկին Հանրապետությունների եւ իշխանության ինստիտուտի փաստաթղթերը: Նրանք պետական պահպանության են ընդունում օրենսդիր մարմնի, կատարողական եւ դատական իշխանությունների փաստաթղթերը, որոնք իրավական ուժ են ունենալու առանձին կանտոնում, հանրապետությունում:

Քաղաքային արխիվները կազմակերպում են իրենց գործնական նշանակությունը կորցրած եւ պատմական արժեք ներկայացնող փաստաթղթերի մշտական պահպանությունը, որոնք առաջանում են տեղական ինքնավարության իշխանության մարմինների՝ քաղաքային ծառայությունների կառավարումն իրականացնող գործունեությունից:

Համայնքային արխիվները, կամ համայնքների արխիվները (Շվեյցարիայի բոլոր կանտոնները բաժանված են համայնքների) համակենտրոնացնում են քաղաքապետարանների, մագիստրատների եւ հաստատությունների գործերը, որոնց իրավասության մեջ մտնում են տեղական կառավարման բոլոր հարցերը: Այսպիսով, հանրային արխիվներ՝ պահպանության են ընդունվում վարչա-կառավարչական եւ գործավարական փաստաթղթեր՝ արձանագրություններ, բարձրագույն պետական իշխանությունների նիստերի սղագրություններ, քաղաքապետների եւ ազմինիստրացիաների հաշվետվություններ, որոշումներ, կառավարության կարգադրություններ, օրենսդիր իշխանությունների ակտեր եւ այլն:

Փաստաթղթերի նախապատրաստումը եւ հանձնումն արխիվի պահպանությանը, բարդ գործընթաց է, որն իր մեջ ներառում է 5 փուլ՝ գործերի հաստատում, նախնական ընտրություն, դասակարգում, մշտական պահպանության ենթական փաստաթղթերի ընտրություն, փաստաթղթերի ընդունում համապատասխան արխիվ, ցուցակի կազմում եւ դասակարգման ամրապնդում: Փաստաթղթերի հետ աշխատանքի առաջին երկու փուլերն իրականացվում են այն կազմակերպությունների արխիվների աշխատակիցների կողմից, որոնց գործունեությունից դրանք առաջանում են: 3-րդ փուլն անց է կացվում այն արխիվների ներկայացուցիչների հետ համատեղ, որոնց վերաբերում են այդ կազմակերպությունները: Հաջորդ փուլերն իրականացվում են անմիջականորեն հանրային արխիվներում: Պետական կազմակերպությունների եւ հանրային արխիվների միջեւ գոյություն ունի կապ, որն արտահայտում է փաստաթղթերի դասակարգմանը, դրանցման համարների շնորհմանը, դրանց ընտրությանը՝ մշտական պահպանության ընդունելու համար միատեսակ մոտեցում ցուցաբերելով:

Հանրային արխիվները մատչելի են ուսումնասիրողների համար, թեպետ այստեղ գոյություն ունի փաստաթղթերի որոշ տեսակների օգտագործման սահմանափակում, կախված դրանց ստեղծման ժամանակից, ծագման բնույթից: Դաշնային արխիվի սովորական գործերը կարող են բացվել օգտվողների համար, միայն 35 տարի դրանց ավարտից հետո, իսկ քաղաքացիական եւ քրեական գործերի ընթացքն արձանագրող փաստաթղթերը եւ առձեռնական բնույթի տեղեկությունների բովանդակությունը՝ դատական որոշման ընդունումից 100 տարի հետո:

Դաշնային կառավարությունն իրականացնում է կառավարումը միայն Բեռնի դաշնային արխիվի միջոցով, որտեղ պահպանվում են Շվեյցարիայի հանրապետության (1798-1803թթ.) եւ դաշնային կառավարության փաստաթղթերը՝ սկսած 1848թ.-ից: Շվեյցարիայում ոչ մի դաշնային օրենք կամ օրենսդրական ակտ չի ընդունվում, որը թույլ տա կանտոնային արխիվների գործունեությանը՝ ազգային

վարչական մարմնի միջամտություն: Հանրապետության օրենսդրությամբ չի նախատեսվում նաև որեւէ փաստաթղթի հանձնումը շրջանային արխիվից՝ դաշնային: Պահպանելով իրենց անկախությունը, կանտոնային արխիվները, իրենց հերթին, չեն խառնվում ավելի քան 300 քաղաքների ու համայնքների արխիվների կառավարմանը: Նրանց նկատմամբ հսկողությունը՝ կանտոնային արխիվների կողմից, կրում է խորհրդատվական-հանձնարարական բնույթ: Պետական հսկողությունից ու հաշվառումից դուրս են գտնվում ընտանեկան, հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների, արհմիությունների, ֆիրմաների, աղումների եւ այլ արխիվներ:

Անկախ են գործող եկեղեցական հաստատությունների արխիվները, որոնք ղեկավարվում են կանոնիկական իրավունքի գրավոր կարգադրություններով:

Չնայած տարբեր կանտոնների հաստատությունների եւ ինստիտուտների փաստաթղթերի հետ տարվող աշխատանքների մեթոդների ու մոտեցումների տարբերություններին, Շվեյցարիայում հանրային արխիվներն իրենցից կուռ համակարգ են ներկայացնում՝ որի շրջանակներում գոյություն ունեն պրոֆեսիոնալ գործունեության համաձայնեցվածություն եւ որոշակի համակարգում:

Համակարգումն իրականացվում է շվեյցարական արխիվագետների ընկերության կողմից, որը հիմնադրվել է 1922թ., արխիվագետների համագործակցության, ստեղծագործական շփումների պարզեցման, իրական օգնություն ցուցաբերելու նպատակով:

Ընկերությունը շատ բան է անում արխիվագետների կարիքները հոգալու, նրանց հեղինակության եւ կարգավիճակի բարձրացման համար հասարակության ուշադրությունը գրավելու ուղղությամբ: Արխիվների հին արխիվապահոցների վերակառուցման, նոր մասնաշենքերի կառուցման, տեխնիկական հագեցվածության հարցերով զբաղվում է պետական արխիվներին օգնության ընկերությունը, որն իր խորհրդակցություններում պարբերաբար լսում է գործող կոմիտեի գեկուցումներն երկրի արխիվային հաստատությունների վիճակի եւ կարիքների մասին: Ընկերությունը ստեղծվել է 1970 թվի ապրիլի 14-ին:

Շվեյցարիայի արխիվների համակարգում հարկ է եղել նշել նաև բազմաթիվ մասնավոր արխիվները՝ անձնական, ընտանեկան, ձեռնարկությունների, ֆիրմաների: Տերերը որոշում են իրենց փաստաթղթային ծառայությունների կառուցվածքը, փաստաթղթերի պահպանության պայմանները: Ընդհանուր պաշտոնական արխիվային ծառայությունից միանգամայն մեկուսացված են բանկերի, հիմնարկների, արդյունաբերական միությունների, ֆիրմաների գիտատեխնիկական արխիվները:

Շվեյցարիայի գիտատեխնիկական արխիվները չի կարելի կոչել համակարգ. նրանք կապված չեն մեկը մյուսի հետ, թույլ են փոխազդում արխիվային ինստիտուտների հետ՝ փաստաթղթերի հետ տարվող աշխատանքների ընդհանուր մեթոդների եւ սկզբունքների մշակման, դասակարգման հարցերը համաձայնեցնելու համար:

Ֆիրման հազվադեպ կարող է հանրային արխիվին առաջարկել պահպանության վերցնել իր ֆոնդերից որեւէ մեկը: Նման արխիվներն ուսումնասիրողների համար քիչ մատչելի են: Փաստաթղթերի պահպանության ժամկետների հարցը որոշում է ֆիրմայի տերը: Ֆիրմաների արխիվների պատմական արժեքը գնահատելու հնարավորություն մասնագետներին չի տրվում, պետական մարմինների կողմից ամեն մի հսկողություն արխիվների գործունեության նկատմամբ հակասում է մասնավոր սեփականության մասին օրենքներին, չնայած խոսքը գնում է վաղուց փաստացի նշանակությունը կորցրած փաստաթղթատարության մասին:

Երբ տնօրենությունը հասկանում է ճյուղի պատմության համար փաստաթղթերի կարևորությունը, ֆիրմայում ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ՝ հետադարձ հիմնավորումով փաստաթղթերի լիարժեք պահպանությունը կազմակերպելու, ԳՏՓ-ի դասակարգման, նկարագրման, հաշվառման հարցերը մշակելու համար: Այդպիսին է Սիրա-Գալի քիմիական արդյունաբերության խոշոր կոնցեռնի 1758 թվին հիմնված արխիվը: Շատ ավելի հաճախ, ձեռնարկությունների

պատմական արխիվները կամ փաստաթղթա-տեղեկատվական բաժնի, կամ էլ գրադարանի հավելուկն է, որտեղ գիտա-տեղեկաու փաստաթղթերը գտնվում են ցրոն վիճակում եւ դրանց մասին հիշում են ֆիրմայի ստեղծման տարեկիցը նշելու ժամանակամիջոցում՝ ժողովածու պատրաստելու, կամ էլ հուշեր գրելու համար:

Շվեյցարիան այսօր արդյունաբերութեան բազմաթիւ տարողունակ ճյուղերի զարգացման բարձր մակարդակ ունեցող պետութիւնն է: Բայց միշտ չէ, որ այդպես է եղել: Արդյունաբերութիւնը մասնագիտացել է արտագրանքի որոշակի տեսակների թողարկման ուղղութեամբ, ինչպես օրինակ՝ ժամագործութեան, ուր 18-րդ դարի վերջին եւ 19-րդ դարի սկզբին արդեն գործում էին տասնյակ մանր ձեռնարկութիւններ: Այդ պայմաններում ԳՏՓ-ի ի հայտ գալը երկար ժամանակ մնում էր առանձին գործարարների ձեռքում, որպես անձնական սեփականութիւն, ընտանեկան արխիւի մաս: Դրա համար էլ գիտա-տեխնիկական փաստաթղթերի արխիւներն որպես կառուցվածքային ստորաբաժանումներ չէին ստեղծվում: Մրցակցութեան հարցերը թույլ չէին տալիս ձեռնարկատերերին կազմակերպել հատուկ պահուցներ՝ տեխնիկական եւ տեխնոլոգիական փաստաթղթերի համար, որոնք խնամքով պահպանվում էին, քանի որ արդյունաբերական շարժումի օբյեկտ էին:

ԳՏՓ-ի նման վիճակ պահպանվում է նաեւ այսօր, մանավանդ երբ դա վերաբերում է նոր ստեղծված տեխնիկայի օբյեկտների, տեխնոլոգիական պրոցեսների արդիականացման մասին տեղեկատվութիւն պարունակող փաստաթղթերին: Արդյունաբերութեան զարգացման հետ կապված, խոշոր կոնցենտրացիան եւ արտասահմանում նրանց բազմաթիւ մասնաճյուղերի ի հայտ գալու հետ, աճում է ԳՏՓ-ի ծավալը: Այս պայմաններում էլ ֆիրմաների կառուցվածքներում անհրաժեշտութիւն է առաջացել հատուկ ստորաբաժանում ստեղծելու, որը կըբաղվի ԳՏՓ-ի հավաքագրումով: Այս տեսակի փաստաթղթերի պահպանութիւնն իրականացվում է ինչպես ձեռնարկութիւնների արխիւներում, այնպես էլ թանգարաններում ու գրադարաններում: Պատմական ԳՏՓ-ի որոշակի մասը (հիմնականում քարտեզներն ու ծրագրերը) պահպանվում է դաշնային, կանտոնային, քաղաքային եւ համայնքային արխիւներում: Ինքը՝ «գիտա-տեխնիկական արխիւներ» տերմինը, պայմանական բնույթ է կրում, քանի որ «մաքուր» արխիւներ, ուր միայն գիտական կամ տեխնիկական փաստաթղթեր են պահպանվում, Շվեյցարիայում չկան: Որպես կանոն, դրանք ընդգրկված են որպես ինքնուրույն մաս, որտեղ ԳՏՓ-ի հետ միասին պահպանվում են վարչական եւ կազմ-հրահանգչական փաստաթղթատարութիւն:

Առանձին շվեյցարական արխիւներ ձգտում են կենտրոնացնել համադաշնութեան մասշտաբով կոնկրետ հիմնախնդիրների վերաբերյալ ԳՏՓ-ի պահպանութիւնը: Այդպիսին է Հնագույն մասնագիտացված տնտեսագիտական արխիւլը: Արխիւլը հիմնադրվել է 1910 թվի Հոկտեմբերի 12-ին՝ Բազելի կանտոնային իշխանութիւնների կողմից, որի խնդիրն է փնտրել եւ հավաքագրել արդյունաբերական ձեռնարկութիւնների գործունեութեան մասին տեղեկատվութիւնը (այդ թվում նաեւ ԳՏՓ): Այստեղ պահվում են երկրի տնտեսութեան մասին փաստաթղթերը, սկսած 18-րդ դարի կեսերից, ինչպես նաեւ ընդարձակ նյութեր միջազգային տնտեսագիտութեան մասին:

Շվեյցարական տնտեսագիտական արխիւլը Յյուրիխում՝ նախկին սոցիալական գրականութեան կենտրոնը, հիմնադրվել է 1906 թվի Հունիսին: Արխիւլը հաշվում է հարյուր-հազարավոր սոցիալ-դեմոկրատական ամսագրերի, տարբեր երկրների թերթեր, ողջ շվեյցարական սոցիալիստական հրատարակութիւնները, տնտեսագիտական եւ վիճակագրական նյութերը:

Խոսելով Շվեյցարիայի արխիւլային հաստատութիւնների մասին, պետք է նշել միջազգային կազմակերպութիւնների արխիւները, որոնք գործում են համադաշնութեան տարածքում՝ Ժնևում: Դրանք 14-ն են: Մի շարք այդպիսի կազմակերպութիւնների արխիւների աշխատակիցներ համագործակցում են շվեյցարական արխիւագետների հետ, մասնակցում են նրանց պրոֆեսիոնալ

խորհրդակցություններին, կոնֆերանսներին: Մեծ թվով միջազգային կազմակերպություններ ստեղծվել են ՄԱԿ-ին կից: Բոլոր փաստաթղթերը միջազգային կազմակերպությունների սեփականություն են եւ մշտապես պահպանվում են նրանց արխիվներում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Շվեյցարիայի դաշնային արխիվը 1956 թվին մտավ արխիվների միջազգային խորհրդի կազմի մեջ:

Դաշնային արխիվը հանդես է գալիս որպես «Արխիվում» ամսագրի մշտական թղթակից, որը արխիվների միջազգային խորհրդի օրգան է:

Դաշնային արխիվի իրավասությունն է վերաբերում 19-րդ դարի 70-ական թվականներին սկսած Շվեյցարիայի պատմության վերաբերյալ արտասահմանյան արխիվներում ու գրադարաններում եղած փաստաթղթերի պատճենումն ու պահպանումը: Նախապատվությունը տրվում է դիվանագիտական գործունեության պատմության աղբյուրներին: Հին ֆոնդերի զգալի բազմությունները հաջողվեց լրացնել շնորհիվ ազգային ֆոնդի կողմից ցուցաբերած աջակցության: Այսպիսով հավաքվել է Հարսբուրգների եւ ուրիշների պատմության վերաբերյալ փաստաթղթերի մեծ մասը:

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Շվեյցարիան չունի արխիվագետների պատրաստման դպրոց: Արխիվային մասնագիտություն, ապագա արխիվագետները ստանում են համալսարաններում՝ պատմության, իրավունքի, տնտեսագիտության ամբիոններում: Այսպես. Բազելի համալսարանում մի կիսամյակի ընթացքում, դասախոսություններ են կարդացվում արխիվագիտության մասին: Մյուս բոլոր համալսարաններում, դասախոսություններ կարդալուց բացի, սեմինարներ են անցկացվում եւ կազմակերպվում այցելություններ արխիվներ:

Մեծ մասամբ, գիտելիքները խորանում են պրակտիկայի գործընթացում, առանձին դեպքերում՝ արտասահմանյան ուսումնական հաստիք հաստատություններում՝ Փարիզի հին ձեռագրերի դպրոցում, Վիեննայի պատմության ինստիտուտում, Գերմանիայի արխիվային դպրոցներում՝ Մարբուրգում եւ Մյունխենում:

**Էլլա Բադադյան
Վարդիթեր Մանգասարյան**

ԼՐԱՏՈՒ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

2004թ. մարտին լրացավ բազմավաստակ ճարտարապետ եւ հնագետ Թորոս Թորամանյանի 140 ամյակը: Հայաստանի ազգային արխիվի ցուցասրահում հոբելյանի առթիվ կազմակերպվել էր ցուցահանդես: Ցուցադրված էին ինչպես Թորամանյանի կենսագրական, այնպես էլ նրա գիտական գործունեությանը վերաբերող փաստաթղթեր:

Ազգային արխիվի տնօրեն Ա.Վիրաբյանը, հանգամանորեն խոսելով Թ. Թորամանյանի մասին, նշեց, որ անխոնջ գիտնականը, հաղթահարելով նյութական դժվարությունները, ուսումնասիրել է Անիի ավերակները, Շիրակի, Արագածոտնի ու բազմաթիվ այլ ճարտարապետական հուշարձաններ, մասնակցել է Զվարթնոցի պեղումներին եւ կատարել եռահարկ շինությունների վերակազմությունը: Թորամանյանի գրեթե երկու հազար անուն գիտական ուսումնասիրություններն ու

աշխատութեանը, Հատակագծերն ու լուսանկարները Հայ ճարտարապետութեան վերաբերյալ, հիմք են հանդիսացել Վիեննայի արվեստի պրոֆեսոր Յ.Ստրիգովսկուն, 1919թ. հրատարակելու «Հայկական ճարտարապետութիւնը եւ եվրոպան» երկհատոր աշխատութիւնը:

1918թ. թուրքերի հարձակման հետեւանքով, թորամանյանը նորից մեծ ողբերգութիւն է ապրում, կորցնելով իր հավաքած նյութերը՝ գրականութիւն, գծագրերը, ողջ արխիւը, ֆոտոշարձերի: Սակայն դժվարութիւններն ու ճակատագրի հարվածները չէին կարող ընկճել նրան:

Լինելով Հայ ճարտարապետութեան մեծ նվիրյալը, թորամանյանը ընտրվել է ՀնՍՀ հուշարձանների պահպանութեան նորաստեղծ կոմիտեի անդամ:

Երախտագարտ Հայ ժողովուրդը ըստ արժանվուն է դնահատել թ.թորամանյանին: Երեւանում նրա անունով փողոց կա: Նրա աճյունը հանգչում է Կոմիտասի անվան պանթեոնում:

Ցուցահանդեսին հրավիրված էին ճարտարապետներ, արվեստագետներ, լրագրողներ:

ՀՀ մշակույթի եւ երիտասարդութեան հարցերի փոխնախարար Գ.Գյուրջյանը եւ ՀՀ ճարտարապետների միութիւնից Մ.Մինասյանը իրենց ելույթներում նշեցին թ.թորամանյանի մեծ դերն ու նշանակութիւնը Հայ ճարտարապետութիւնը ողջ աշխարհին ներկայացնելու գործում:

* *
*

2004թ մայիսի 19-ին տոնական ու մարդաշատ էր Հայաստանի ազգային արխիւը: ՀԱԱ Երեւանի պետական հումանիտար քոլեջի հետ համատեղ, կազմակերպվել էր մեծ ցուցադրութիւն՝ նվիրված հումանիտար քոլեջի պատմութեանը, ուր ներկայացված էին փաստաթղթեր՝ քոլեջի ստեղծման օրից մինչեւ մեր օրերը: 125 տարի առաջ (1879թ.), Երեւանում ծրագրվեց ստեղծել ուսուցչական սեմինարիա, որի պաշտոնական բացումը կայացավ 1881թ: Հրավիրվածները մեծ հետաքրքրութեամբ ծանոթացան սեմինարիայի կրթական եւ վարչա-կազմակերպչական հարցերին վերաբերող փաստաթղթերին, սեմինարիայի սաների ավարտականների, առաջադիմութեան ցուցակների, մանկավարժական աշխատանքների կազմակերպման ամփոփագրերի եւ հաշվետւութիւնների հետ: Իր գոյութեան երկարամյա տարիների ընթացքում հումանիտար քոլեջի անվանումը պարբերաբար փոփոխվել է: Խորհրդայնացումից հետո այն դարձել է ուսումնարան, հետագայում՝ ուսական մանկավարժական ուսումնարան: 1954թ հոկտեմբերի 27-ին ՀնՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ գրող Ն.Օստրովսկու ծննդյան 50 ամյակի կապակցութեամբ, ուսումնարանը կոչվել է նրա անունով: 1999թ. այն սկսել է կոչվել Երեւանի Պետական հումանիտար քոլեջ:

Այս ցուցադրութիւնը տարբերվում էր նախորդներից իր առանձնահատուկ ձեւավորմամբ՝ ցուցադրված էին այսօրվա հումանիտար քոլեջի սաների գեղանկարները, գորգերը, ազգային ոճով պատրաստված տիկնիկները եւ ձեռքի ալլ աշխատանքներ: Բազմազան երգացանկով Հյուրերին դիմավորում էր քոլեջի սաներից կազմված երգչախումբը:

Ողջույնի խոսքում քոլեջի պատմութիւնը ներկայացրեց ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը: Քոլեջի տնօրեն Հ. Հակոբջանյանն անդրադարձավ ուսումնական Հաստատութեան այսօրվա աշխատանքներին: Ներկաներին ողջունեց նաեւ ՀՀ կրթութեան եւ գիտութեան փոխնախարար Ա.Ավետիսյանը: Հրավիրված էին մանկավարժներ, դասախոսներ, արվեստագետներ, համայնքատիրութեան եւ մի շարք հեռուստաալիքների ներկայացուցիչներ:

* *
*

ՀԱԱ 2004թ մայիսի 26-ին կազմակերպված ցուցահանդեսը նվիրված էր Հայաստանի երեք հանրապետությունների կայացմանը: Ցուցադրված էին պատմական մեծ արժեք ներկայացնող փաստաթղթեր, որոնց մի մասին շատերն առաջին անգամ էին ծանոթանում: Ցուցադրված փաստաթղթերի թվում էին ՀՀ առաջին կառավարության եւ խորհրդարանի անդամների ցուցակը, Վրացյանի, Քաջազնունու, Մանուկյանի, Հախվերդյանի, Կարճիկյանի եւ այլոց լուսանկարները, Բաթումի Հայ-թուրքական դաշնագիրը, Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը: Առանձնակի հետաքրքրություն առաջացրին Մ. Սարյանի Հանրապետության դրոշի տարբերակների էսքիզները, Գ.Նժդեհի երկերի երկհատորյակները, Ս.Կասյանի ստորագրությամբ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հոչակագիրը, ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը, 1920-1923թթ. Հայաստանի Կառավարության ցուցակը:

Ցուցադրված էին խորհրդայնացման առաջին տարիների մի շարք դեկրետներ, որոնցից կարելի է նշել 1924թ. դեկրետը՝ հայերենը որպես պետական լեզու ընդունելու, բանկերի, անտառների ազգայնացման մասին, պետական դրոշի հիմնի եւ զինանշանի վերաբերյալ:

Փաստաթղթերից հարկ է առանձնացնել Հայաստանի եւ Ադրբեջանի հեղկոմների համատեղ համաձայնագիրը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության անբաժանելի տարածք ճանաչելու մասին: Խորհրդանշական էր Ի.Ստալինի ստորագրությամբ բնագիր փաստաթուղթը, որի հիման վրա հետագայում հազարավոր հայորդիներ աքսորվեցին ու գնդակահարվեցին:

Ցուցահանդեսի երկու ցուցափեղկ նվիրված էր Հայաստանի անկախության հռչակմանը: Բազմաթիվ ցուցադրված ուղերձներ վկայում էին արտասահմանյան մի շարք երկրների կողմից ՀՀ-ի անկախության ճանաչման փաստի մասին:

ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը ներկայացրեց Հայաստանի անցած ուղին 1918թ մինչեւ մեր օրերը: Հրավիրվածներից արտահայտվեցին ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Վ.Բարխուդարյանը, Մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Գ. Գյուրջյանը, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Ա.Մելքոնյանը:

ՍԱՆ ԴՐՈ ԲԵ ՀԲՈՒԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (1934-2004)

Կյանքի 70-ամյակը չբոլորած՝ հունիսի 5-ին վախճանվեց Հայաստանի արխիվային գործի ճանաչված ներկայացուցիչ Սանդրո Բեհբուդյանը:

Հայաստանի ազգային արխիվը Ս.Բեհբուդյանի մահով ծանր կորուստ կրեց: Կյանքից հեռացավ արխիվի 45 տարվա անընդմեջ ու եռանդուն աշխատողը, իր գործի խորագիտակն ու անխոնջ նվիրյալը: 1957թ. սկսելով իր աշխատանքային գործունեությունը՝ որպես էջմիածնի հոգեւոր ճեմարանի գրադարանապետ, Ս.Բեհբուդյանը, մինչեւ իր կյանքի վերջին օրը, անմնացորդ նվիրումով, սրբազան մղումով, մանրազնին պրպտողի անդուլ եռանդով, անբաժան մնաց զիր ու գրականությունից, մագաղաթից ու արխիվային փաստաթղթերից եւ խորին համբերությամբ ու անպատիւր շահագրգռությամբ լուսաբանեց իր ուսումնասիրությունների արդյունքները, որոնք էական ավանդ ունեցան արխիվագիտության, ապա նաեւ հայ եկեղեցու տարեգրության մեջ:

1960 թվականից, որպես կրտսեր գիտաշխատող, աշխատանքի անցնելով ՀԽՍՀ կենտրոնական պետական արխիվում՝ Ս.Բեհբուզյանը 45 տարի՝ մինչև իր կյանքի վերջին օրը, մնաց արխիվի մշտական ու նվիրյալ աշխատողը:

1973-2003թթ., 30 տարի շարունակ Ս.Բեհբուզյանը եղել է արվեստի, գրականության եւ մամուլի փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի անփոփոխ տնօրենը՝ յավագույն կերպով համատեղելով հմուտ արխիվագետի եւ ղեկավարի հատկանիշները: Աշխատանքի նկատմամբ ունեցած մեծ շահագրգռության, կազմակերպվածության ու գործընկերների նկատմամբ բարի ու կարեկից վերաբերմունքի համար Ս.Բեհբուզյանը ձեռք էր բերել արժանի հարգանք եւ հեղինակություն, իսկ իր վաստակի ու տարիքի համար՝ հարգված վետերանի համբավ:

Ս.Բեհբուզյանը էական ներդրում ունի հայ եկեղեցու պատմության, մասնավորապես նրա շատ ու շատ էջերի ուսումնասիրման, լուսաբանման եւ հրատարակման գործում: Նա հայ եկեղեցու ճշմարիտ նվիրյալն էր, նրա քարոզիչն ու առաքելության ջատագովը: Ամբողջ գիտական կյանքում կապված լինելով հայ եկեղեցուն, նրա գործունեությանը եւ գաղափարների տարածմանը՝ նա գրել է հայ եկեղեցու պատմությանը վերաբերող գրքեր, բազմաթիվ հոդվածներ: Ս.Բեհբուզյանն է կազմել «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» բազմահատորյակը, որի տասը ծավալուն հատորներն իրականություն են, իսկ երեքը գտնվում են հրատարակման փուլում:

Նա սիրելի ու պատվախնդիր ամուսին, հոգատար հայր եւ անփոխարինելի ընկեր էր:

Սիրելի եւ անմոռանալի ընկերոջ անունն ու հիշատակը հավերժ կմնան Հանրապետության արխիվագետների եւ ընկերների հիշողության մեջ:

Հայաստանի ազգային արխիվ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆՇԱՆԱՎՈՐ ՏԱՐԵԼԻՑ - ԱՐԽԻՎԻ 80 ԱՄՅԱԿ

	- ՀՀ մշակույթի եւ գիտության գործիչները Հայաստանի ազգային արխիվի հոբելյանի մասին -----	3
<i>Կիրիմյան Ալբերտ</i>	- Հայաստանի արխիվային գործի 80 տարին---	7
<i>Մարտիրոսյան Մարինե</i>	- Արխիվային գործի հիմնադիրը՝ Խաչիկ Սամվելյան-----	23
	- Հայաստանի Հանրապետության արխիվային գործի տարեգրությունից (1986-2003 թթ.) -	31

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

<i>Միրզոյան Սոնյա, Ղազրյան Ալվարդ</i>	- Նիկողայոս Աբունցի գեկուցումը՝ ալլազգիների համագումարում (նոյեմբեր 1905թ.) -----	34
<i>Սահակյան Ռուբեն</i>	- Վանի քաղաքապետարանի վերահսկիչ Իսահակ Տեր-Ղազարյանի հաշվետվությունը -----	38
<i>Եփրեկյան Արմինե</i>	- Հայաստանի Հանրապետության իշխանություն տարածումը Նախիջևեանում 1919թ. -	44
<i>Բաբաջանյան Վանիկ</i>	- Հայ ժողովրդական կուսակցության հուշագրերը կոալիցիոն նոր կառավարություն ձևավորելու մասին (նոյեմբեր 1920թ.) -----	57
<i>Ղազարխեցյան Վլադիմիր</i>	- Ակսել Բակունցի կուսակցականության հարցի շուրջ -----	60
<i>Մանգասարյան Վարդիթեր-Բաղդասարյան Ռոբերտ</i>	- Կոմպոզիտորը պատասխանատու է -----	76
	- Կարեն Միքայելյանը արվեստի ու գրականության հայ եւ ռուս գործիչների բնութագրերում 1940թ. -----	83
<i>Հովսեփյան Էմմա</i>	- Էջեր Ավետիք Իսահակյանի նամակագրությունից -----	86
<i>Պողոսյան Շուշան</i>	- Մեծ կոմպոզիտորի 100-ամյակը -----	94
<i>Բաղալյան Արմեն</i>	- Աֆրիկյան երկրների Հայկական համայնքները եւ նրանց կապերը Խորհրդային Հայաստանի հետ 1945-1985թթ. -----	102
<i>Հովհաննիսյան Պետրոս</i>	- Հեռավոր աստղի լույսը՝ Բողբան Գեմբարսկի -----	117

ՀՈՒՎԱԾՆԵՐ

<i>Մովսիսյան Ֆելիքս</i>	- Հայոց եկեղեցին եւ 1830-1831թթ. լեհական ապստամբությունը -----	121
<i>Գեւորգյան Պարգեւ, Վիրաբյան Քարմիլե</i>	- Հայկական դպրեցները Վրաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին եւ 20-րդ դարի սկզբին -----	125
<i>Խաչատրյան Արամ</i>	- Հայերի մասնակցությունը Բուլղարիայի 1876թ. ապստամբությանը -----	130
<i>Խուզրինյան Գեւորգ</i>	- Հ.Յ.Դաշնակցության գործունեությունն Ատրպատականում 1891-1895թթ. -----	134
<i>Ստեփանյան Խաչատուր</i>	- Ռուբեն Տեր-Մինասյան. Պայքարի առաջին փորձառությունը -----	142
<i>Ղուլյան Յուրա</i>	- Հայ-ադրբեջանական տարածքային վիճելի հարցերն Անդրկովկասի Հանրապետությունների 1919թ. կոնֆերանսում -----	148
<i>Կոխլիկյան Արամայիս</i>	- Խորհրդային Հայաստանի դյուրատնտեսության տեխնիկական զինվածությունը 1945-1965թթ. -----	152

ՀԱՂՈՐԳՈՒՄՆԵՐ

<i>Թագեւոսյան Նելլի</i>	- Մատենադարանի արխիվային հավաքածուի վերլուծությունը -----	160
<i>Մարուքյան Սոս</i>	- Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման պատմությունից (Խորհրդային հարապետություններից եւ հայ դադլթօջաններից) -----	165
<i>Տոնեյան Ումրշատ</i>	- Խորհրդահայ վավերագրական կինեմատոգրաֆիան Հայրենական պատերազմի տարիներին -----	170

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<i>Մելքոնյան Աշոտ</i>	- Ուշագրավ աշխատություն. Ֆյոդոր Ելիսեեւ «Կազակները Կովկասյան ճակատում 1914-1917» -----	174
<i>Յազըճյան Գեւորգ</i>	- Հայկական հարցը լիբանանյան 1975-1987 թթ. ոչ հայկական մամուլում -----	192

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

	- Տեղեկանք «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2003 թ. գործունեության արդյունքների մասին -----	216
<i>Բաղադյան Էլլա, Մանգասարյան Վարդիթեր</i>	- Շվեյցարիայի արխիվային կառույցների համակարգը ----	222

ԼՐԱՏՈՒ

<i>Ցուցահանդեսներ</i>	- -----	227
<i>Սանդրո Բեհրուդյան Հիշատակին</i>	- -----	229

С О Д Е Р Ж А Н И Е

ЮБИЛЕЙНАЯ ДАТА – 80 ЛЕТИЕ АРХИВА

	- Деятели культуры и науки РА о юбилее Национального архива Армении -----	3
<i>Киримян Алберт</i>	- Архивное дело в Армении за 80 лет ---	7
<i>Мартиросян Марине</i>	- Основоположник архивного дела – Хачик Самвелян -----	23
	Из летописи архивного дела Республики Армения(1986-2003 гг.). --	31

ПУБЛИКАЦИЯ ДОКУМЕНТОВ

<i>Мирзоян Сося, Казиян Алвард</i>	- Доклад Никогайоса Адонца читанный на съезде инородцев (ноябрь 1905 г.) -----	34
<i>Саакян Рубен</i>	- Отчет Исаака Тер – Казаряна – контролера градоначальства г. Вана --	38
<i>Еприкян Армине</i>	- Распространение власти Республики Армения в Нахичевани в 1919 г. -----	44
<i>Бабаджанян Ваник</i>	- Меморандум армянской народной партии о формировании нового коалиционного правительства (ноябрь 1920 г.) -----	57
<i>Казахеян Владимир</i>	- О вопросе партийности Акселя Бакунца -----	60
<i>Мангасарян Вартитер</i>	- Композитор ответственен -----	76
<i>Багдасарян Роберт</i>	- Карен Микаелян в характеристиках армянских и русских деятелей литературы и искусства (1940 г.) -----	83
<i>Овсепян Эмма</i>	- Страницы из переписки Аветика Исаакяна -----	86
<i>Погосян Шушан</i>	- 100 – ление великого композитора ---	94
<i>Бадалян Армен</i>	- Армянские колонии в Африканских странах и их связь с Советской Арменией 1945-1985гг. -----	102
<i>Оганесян Петрос</i>	- Свет далекой звезды – Богдан Гембарский -----	117

СТАТЬИ

<i>Мовсисян Феликс</i>	- Армянская церковь и польское восстание в 1830-1831 гг. -----	121
<i>Геворкян Паргев, Вирабян Кармиле</i>	- Армянские школы в Грузии во второй половине 19-го века и начале 20-го век -----	125
<i>Хачатрян Арам</i>	- Участие армян в восстании 1876 года в Болгарии -----	130
<i>Худинян Геворк</i>	- Деятельность А. Р. Ф. Дашнакцутюн в Атрпатакане (1891-1895 гг.) -----	134
<i>Степанян Хачатур</i>	- Рубен Тер-Минасян: первый опыт борьбы-----	142

<i>Гулян Юра</i>	- Армяно-азербайджанские территориальные спорные вопросы на конференции Закавказских республик в 1919 г. -----	148
<i>Кохликян Арамаис</i>	- Техническая оснащенность сельского хозяйства Советской Армении в 1945-1965 гг. -----	152

СООБЩЕНИЯ

<i>Тадевосян Нелли</i>	- Анализ фонда архивного отдела Матенадарана -----	160
<i>Марукян Сос</i>	- Из истории комплектования архивного фонда Республики Армения (из советских республик и армянских колоний) -----	165
<i>Тонеян Умршат</i>	- Армянская советская документальная кинематография в годы Отечественной войны -----	170

РЕЦЕНЗИЯ И ИСТОЧНИКОВЕДЕНИЕ

<i>Мелконян Ашот</i>	- Примечательный труд—Федор Елисеев “Казачи на Кавказском фронте 1914-1917” -----	174
<i>Язчян Геворк</i>	- Армянский вопрос в неармянской ливанской печати в 1975-1987 гг. -----	192

АРХИВНОЕ ДЕЛО

	- Справка о результатах деятельности Государственной некоммерческой организации “Национального архива Армении” в 2003 г. -----	216
<i>Бададян Элла, Мангасарян Вартигер</i>	- Система архивных структур Швейцарии -----	212

ХРОНИКА

Выставки документов -	1227
Памяти Сандро Бейбудяна-	1229

Ի գիտութիւն Հեղինակների եւ ընթերցողների

«Բանբեր Հայաստանի արխիվների» գիտագործնական Հանդեսն ընդգրկված է ԲՈՂ-ի կողմից հաստատված «Դոկտորական եւ թեկնածուական ատենախոսութիւնների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարեւոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիութեան համար:

Հողվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող
հապավումները:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
«Հայ արխիվագետների հասարակական կազմակերպություն»:
Հասցեն՝ Երեւան - 33, Հրաչյա Քոչարի - 5, հեռ. 225-355:
Գրանցման վկայականը N 03Ա.055485:
Տրված 02.08.2002թ.
Թողարկման պատասխանատու՝ Արմեն Բաղալյան:
Ստորագրված է տպագրության 2004 թ. օգոստոսի 12-ին:
Տպաքանակը՝ 200: Տարածվում է անվճար:
Չափսը 70x100^{1/16}:

«Գրիգ տպագրատուն» ՍՊԸ տպարան: Երեւան, Վ. Վաղարշյան 12 «Ա.»: